ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԵԼԱ ԻԼԼԵՇ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՏԻՍԱՆ ԻՈՑԵՐԻ ՄԵՋ

Վ Ե Պ

II յեվ III հատոր

ՊԵՏՀՐԱՏ 1934 ՑԵՐԵՎԱՆ

35-Ա
Ա 2914
894.511
Ի-33

19 NOV 2011

ԲԵԼԱ ԻԼԼԵՇ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՏԻՍԱՍՆ ԲՈՑԵՐԻ ՄԵՋ

II ՅԵՎ III ՀԱՏՈՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1934

74.069

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ
ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
Հեղինակ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. ՄՑԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

69575-68

Պատ. խմբագիր՝ Յե. Զաբենց Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանց
Էյան II հատորի թարգմ. Ս. Բաբիյան, III հատորի թարգմ.
Վ. Տեր. Առաքելյան Սրբագրիչ՝ Ա. Ցերիցյան Պատվ. 1436,
Գլավլիտ 8180 (բ), հրատարակ. 2609, տիրաժ 2,500։
հանձնված է արտագր. 11/VI 1933թ. ստորագրված է
տպագր. 23/II 1934թ. պետհրատի տպարան, Ցերևան

ՆԱԽԱԲԱՆ

Շտապ. գաղտնի

ՊԵՐՋԿԱՐՊԱՏՅԱՆ ՌՈՒՍԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԴԻՎԱՆԱՏԱՆԸ

Բ. Բաժանմունք

ՈՒԺԳՈՐՈԴ ՔԱՂԱՔԻ ՎՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻՑ

Հաղորդում եմ, որ սեպտ. 9-ից սահմանն ապօրինի կերպով անցնելու համար կալանքի տակ է առնված վարձանագործ աշակերտ Պետրոս Կովաչը՝ ծնված Նամեն ավանում, որը մասնակցել է Կարույխի կառավարության որով Նամեն ավանում դյուղատնտեսական ապստամբություն կազմակերպելու գործին, որն այսպես կոչված խորհրդային հանրապետության որով ծառայել է կարմիր բանակում և ներկայումս վնասվում է Բուդապեշտի չրջանային դատախազության կողմից՝ մեղադրվելով սպանության և պլնված թալանի գործերում։

Աչքի առաջ ունենալով, որ հիշյալ Պետրոս Կովաչը հայտնի չե վոչ թե միայն Նամեն ավանի ու չրջակայքի դյուղացիության, այլ մասամբ նաև Բերեզասի և Մունկաչի բանվորներին, և ոգտվում է վորոշ քաղաքական աղդեցությամբ, վոստիկանապետը նպատակահարմար կհամարեր հիշյալ Պետրոս Կովաչի կատարած վոճիրների գործը հետագայում քննելը դադարեցնել, նմանապես նկատի ունենալով նրա Նամեն ավանի քնակիչ դյուղակադրվելը, այսինքն՝ իբրև չեխոսլովակական հպատակ, մերժել նրան հունգարական իշխանության հանձնելը,— այն պարագայիր պայմանով, որ հիշյալ Պետրոս Կովաչը կլընդհատե իր ամեն տեսակ հարաբերությունները բոլշևիկ տարրերի հետ և դիմում կտա մոնելու չեխոսլովակական տոցիալ-դեմոկրա-

ական կուսակցության Մերձկարպատա–ռուսական անկլեյվ մեջ լրջև անդամ: Ընդ ամին պետք է նկատի առնել և այն հանգամանքը, որ՝ ըստ վոստիկանապետի կատարելապես վստահելի աղբյուրներից ստացած տեղեկությունների, հիշյալ Պետրոս Կովաչը այսպես կոչված հունգարական խորհրդային հանրապետության ժամանակ հայտնի չեր միշտ ամենաչափավոր գործողություններով և բանվորների մեջ ագիտացիա չեր անում ստեղծված ղրուիյունը դեմոկրատիզմի վոգով լուծելու համար:

Աչքի առաջ ունենալով, որ Պետրոս Կովաչի գործն մասնակցությունը սոցիալ–դեմոկրատական կուսակցության աշխատանքում քաղաքական դպալի ոգուտներ կրերիր, դիմում եմ նահանգապետի պաշտոնատան Բ. բաժանմունքը՝ պարոն մայոր Բոժոչին՝ վոստիկանապետի առաջարկությանը չտալ կեղծով և գործնականորեն ընդառաջ գնալու բուռն միջնորդությամբ, որպեսզի հիշյալ Պետրոս Կովաչը նշանակվի իրրև վճարովի աշխատող սոցիալ–դեմոկրատական կուսակցության տեղական կազմակերպության մեջ:

Վոստիկանապետ՝ ԱԿՈԼԻԶԱՆԻ

Ուժգորոդ, 1920 թ· փետրվարի 12–ին:

Գաղվածք Մերձկարպատյան Ռուսիայի պինվորական նահանգապետ գեներալ Գարիի դեկուցումից՝ ուղղված Ֆրանսիական բանակի գլխավոր հրամանատարի քաղաքական վարչության:

... 172–րդ №–ը կրող գաղտնի հրամանի 4–րդ կետում յնդաձ կարգադրության վերաբերյալ, պատիվ ունիմ հայտնելու հետևյալը·

Ցես իմի չեմ մոռանում բանվորական չարժման նշանակությունը պատերազմի ղեպքում և ոգտագործել եմ իմ տրամադրության տակ եղած բոլոր քաղաքական, նյութական և բարոյական միջոցները, որպեսզի բանվորական չարժումը ուղղեմ, ինձ հանձնված չրջանում, պատշաճ հունով: Իմ ջանքերը կատարյալ հաջողություն են ունեցել: Բելա Կունի հիմնած՝ այսպես կոչված կոմունիստական կուսակցության վերջին մնացորդները ցրված են, իսկ ինձ հանձնված չրջանում աշխատող՝ բանվորական միակ կազմակերպությունը—չեխո–սլովակական սոցիալ–դեմոկրատական կուսակցությունը— դոնվում է ամեն տեսակետից կատարելապես հուսալի մի մարդու ղեկավարության տակ, մի նախկին սոլդի, վորն առաջ պարոն մայոր Բոժոչի վոստիկանատանը հունգարական Բաղավորական խորհրդական եր:

Այն դեպքում, յերբ ինձ հանձնված չրջանը ռազմաճակատի թիկունքային գոտի դառնա, սոցիալ–դեմոկրատական կուսակցությունը և իմ ղեկավարության տակ գտնվող ժանդարմները նկարագրանան լիովին ապահովել բանվորների որինական վարքը՝ չրջանով անցնող պինվորական մասերի և ռազմաբեռների վերաբերմամբ:

Անհրաժեշտ եմ համարում մինչև պատերազմական դրության հայտարարվելը ավելացնել գաղտնի ֆոնդը այն մասով, վոր նշանակված է բանվորական չարժումը պաշտպանելու համար, դարձնելով այն՝ ամսական 7500 կրոն:

Ուժգորոդ, 13 փետրվարի 1920 թ·

Գաղվածք ընկեր Ս.–ի նամակից, ընկեր Լ.–ին:

Պավել Իպատանկին բարեհաջող կերպով հասավ: Չինգ որ հանդստանալուց հետո, նա այսոր սկսեց աշխատել: Վորովհետև չինարարական արդյունաբերության մեջ մեծ կենդանություն կա, անհրաժեշտ են համարում, վոր անհապաղ ուղարկվեն նո՛ր չինարար քանվորներ: Լեհական ակցիաները գնելու համար մեր նյութական միջոցները չափազանց աննչան են:

Ուժգորոդ, 14 փետրվարի 1920 թ·

ՍԱՐՍԱՓՆԵՐԻ ՎԵՄԸ

Պետրոսն ելի մի անգամ ուշադրությամբ զննեց իրան հանձնրված անցագիրը: Նրա մեջ դեռ աղոտ հույս եր չորում, վոր տեսողությունը խաբում է իրան:

— Դու այս ... լո՞ւրջ ես անում. — չվոխված դիմեց նա Գայդուչին:

— Իսկ ինչո՞ւ վոչ: Ամենալուրջ կերպով:

— Ինչպե՞ս ճանապարհ պիտի ընկնեմ իսպանական անցագրով, յերբ իսպաներեն վոչինչ չգիտեմ:

— Անհոգ յեղիր,— ժպտաց Գայդուչը,— ազնիվ սահմանակիններից ավելի չգիտեն: Այն ել կա, վոր դու ճամբա յես ընկնում միայն յերեկոյան: Մինչ այդ կսովորես աղգանունդ, իսկ այդ արդեն մի բան է: Մազերդ սեվ են, կաղնի յուղ կքսես — նրանք բոլորովին կսեվանան, աչքերդ ել սեվ են, մի լայնեղր գլխարկ կդնես, կդառնաս իսկական իսպանացի: Իսկ վխտաես զերմաներեն...

— Բայց յես զերմաներենն ել վխտաս-պռատս գիտեմ:

— Հենց այդ ել լավ է: Ո՞վ է տեսել, վոր իսպանացիք լավ խոսեն զերմաներեն:

Պետրոսը ուսերը թոթվեց, ե՛լ չվիճեց. կուսակցությունը հրամայո՛ւմ է. — և ճանապարհի վողնրի հետ միասին՝ անցագիրը կոխեց դրպանը:

Ճանապարհորդության յերկու որվա ընթացքում մի քանի անգամ ստուգեցին նրա վաստաթղթերը, և վոչ մի անգամ իսպանական անցագիրը, վոր թխված եր Վիեննայի «Կաֆե Համբուրգում», կասկած չծագեցրեց:

— Ձի՞շտ է, վոր ձեզ մոտ՝ Իսպանիայում, սիգարները կարժեն յե դնել առանց կարտերի.—տեղեկություն խնդրեց նրանից չինակարմիր մազերով՝ կարճքիթ վահմիստրը:

— Այո...

— Ցերջանի՛կ Իսպանիա... ցուլամարտ... Այո, այո... վահմիստրը սրտաբեկ հառաչեց, և՝ յերբ Պետրոսը հյուրասի-

քեց նրան ավատրնական փուչ պապիրոսով, վորը չոր խոտով եր լցված, սակայ անվերջ շնորհակալություն հայտնել:

Իր ճանապարհորդության յերկրորդ որը Պետրոսն այնքան հանգստացել եր, վոր վճռեց նույն իսկ հանել իր գլխից իր գլխից ամենից ավելի խալանական մասը — լայնեզր սև գլխարկը:

Ունդվար — Ուժդորոդ:

Ունդվարը հունգարական մի աննշան քաղաք եր, իսկ Ուժդորոդը՝ Մերճկարպատյան Ռուսիայի մայրաքաղաքը: Այնուամենայնիվ ռուսական մայրաքաղաքի վաղույնեներում նույնպիսի ցեխ ու անկարգություն է, ինչպես հունգարական ոիբրապետության ժամանակներում. զանազանությունը միայն այն է, վոր այժմ այնտեղ ավելի հաճախ են աչքի ընկնում գինովորները: Սպանները կրում են իտալական կեպի և խոսում չեխերեն: Կառավարչական շենքերի վրա՝ հունգարական թուղի տեղ՝ չեխական առյուծն է:

Պետրոսը Սեկերեչի հասցեն պիտեր: Սայլավարի վախճակը, վոր լծված եր մի կեղտոտ, քրքրված կառքի, նրան տեղ հասցրեց: Սեկերեչը տանն եր և յերբ Պետրոսը մտավ, արդուկում եր իր վարտիքը:

— Ինչո՞ւ դու ինձ չզիմավորեցիր յերկաթուղու կայարանում:

— Ինչո՞ւ ե պետք, վոր մեզ մեկտեղ տեսնեն:

Սեկերեչը միայն անդրադարձրեց, բայց նույն իսկ այդ գլխության մեջ ապշեցնում եր իր չքով. լայքայված վոտնամաններ, պինդ ոսկրված չապիկ, մետաքսե փողպատ: Ասենք՝ ոսկերով մատները հաճախ մոցնում եր այդ անսովոր զարդարանքի տակով և մոլեգին քաշում եր նրան:

— Հանվիր, Պետրոս, և սկսիր լվացվել... Գայդոշը յերեկ հայտնեց քեզ, վոր դու բուրժուական լրագրող եմ: Քեզ նույնպես հայտնի պետք է լինի, վոր դու շատ վատուց զղջացել եմ այդ բանի համար, վոր—մասամբ պատանեկական անմտության, մասամբ ել սակրմամբ — ծառայել եմ յերկու բոլշևիկ: Ցնա հրատարակեցի հայտարարություն «Ուժդորոդի լրագրում». յերբ դու կարդամ այդ քեզ, կ'լ բացատրություններ պետք չեն լինի:

Սեկերեչը ձանձով կարդաց իր հայտարարությունը:

— Բոլշևիկներ ... մոլորվել և ... պատանեկական գյուրավատահություն... Զղջում... Ուղղում...

— Ցնվ նրանք հատատացի՞ն ամբողջ այդ բանդագուշանքին — հարցրեց Պետրոսը զարմացած:

— Ինչպես տեսնում ես: Ցնս չեխական կառավարությանը աջակցող հունգարական լրագրի աշխատակից եմ,— ինչանակի՝ ինձ հավատում են: Այստեղ առանձին պայմաններ են: Այսպիսի բաների մասին, յես յեթե կարդայի, կյանքումս չեյի հավատալ:

— Իսկ յե՞ս: Ի՞նձ ել, ուրեմն, պետք պիտի լինի այդպիսի հայտարարություն անել:

— Ամենևի՛ն: Դա բանը ավելի բարդ է:

— Մի՞թե յես պետք է խոսանացու դեր կատարեմ:

— Ինչո՞ւ: Այդ խոսանական պատմությունից ել հիմար բան չի կարելի հնարել: Այջողվի՛ց, դե՛հ, լա՛վ:

Բայց չի կարելի նրան վոչ չարունակել, վոչ կրկնել: Ճիշտ է, այս տխմար հանրապետության մեջ մինչև յերկինք են բարձրացնում հաղթող յերկրի ամեն մի քաղաքացու կամ հատատատուն վարյուտայով չեզոք պետության յուրաքանչյուր քաղաքացու, բայց այնուամենայնիվ վախել չե Բուդապեշտի մետալագործին խափչիկ արքայուկի դերում հանդես գալ ... Այստեղի ընկերները հեռավոր չատ ունեն:

Սեկերեչը մոլեգնորեն քաշեց իր ոճիքը, հանեց Պետրոսի համար մաքուր չապիկ և ապա սկսեց հագնել իր վարտիքը: Հարթելով թաց խոզանակով չիկակարմիր մազերը, նա նայեց իր վրա հայելում և՝ դոհ յերեսով՝ գլխով արավ իրան: Հանկարծ նա չուռ յեկավ թափով դեպի Պետրոսը...

— Կա՛ց, մի՛ հագնիր մաքուր չապիկդ:

— Ինչո՞ւ:

— Ե՛հ, առհասարակ ասենա, վոր լվացվելիդ ... Նորից հագիր կեղտոտ չապիկդ և, ամենից առաջ, տուր ինձ անցագիրդ:

«Կաֆե Հաբսբուրգում» պատրաստված խոսանական անցագիրը, վորն այնպիսի հպարտությամբ Գայդոշը հանձնել եր Պետրոսին և վորն այնքան հարգանք եր ներշնչել չեխ սահմանապահներին, — այդ հիանալի խոսանական անցագիրը կես րոպե մեջ Սեկերեչի փոքրիկ վառարանում մի բուռը մոխիր դարձավ:

Պետրոսը նետվեց մահճակալի վրա: Նա միայն այժմ զգաց, թե վո՛ր աստիճան հոգնած եր: Սեկերեչն զբաղվեց թեյով և չուռաով եմայլված կաթսայի մեջ ջուրը յեռաց:

Սենյակն ուներ յերկու լուսամուտ: Սպիտակացրած պատերի վրա կախված էին Մասսարիկի և Վիլսոնի պատկերները: Սեղան, յերկու աթոռ, փոքրիկ դարակ դրքերի համար և չորերի մի մեծ պահարան, վորն այս սենյակին այնպես էր հարմարվում, ինչպես ահագին կոշիկները յերեխայի վոտիկներին: Յերկաթե փոքրիկ վառարանիկում ուրախ ճարճատում են ածու մանր կոտրտված կտորներ: Նրա սև պատերի վրա վորոշվել են կրակի բոսորագույն տենդային բծերը:

— Թեյը պատրաստ է, — ասաց Սեկերեչը, — ահա հաց և շաքար: Մնա անկողնում, յես ամեն բան կտամ քեզ ապե՛ր.... Յերբ կուտես և մի քիչ կհանգստանաս, — չարունակեց կարճատեվ լուռթյունից հետո, — կգնաս վոստիկանատուն ցուցակագրվելու:

— Մի՞թե այդ բանը այդքան հեշտ է.— զարմացավ Պետրոսը: — Յես ինձ իսկույն թռչուն կտան ազատել ապրելո՞ւ:

— Ո՞վ: Այդ խոզե՞րը: Այդ դղվելի վոհմակը միայն մտածում է, վոր չուտով դուրս գալ այստեղից ամեն մի որինավոր մարդու:

— Ուրեմն ինչպե՞ս պիտի լինի այն ժամանակ:

— Կե՛ր, Պետրոս: Ամեն բան քիչ-քիչ կիմանաս ... Այդպես ուրեմն. կերթաս վոստիկանատուն և կասես աշխատել, վոր դու հունգարական բոլշևիկ ես և փախել ես այսինչ բանտից, դիցուք՝ Մեչկոլցից: Ինչ կձերբակալեն: Ապա կսկսեն անցկուրթյուններ հավաքել քո մասին: Յես կհոգամ այն բանի մասին, վոր տեղեկուրթյուններն ինձանից հարցնեն: Իսկ յերբ վոստիկանապետ Ակուլիչանին կիմանա, վոր դու քաղաքական մի կարևոր դեմք ես, նա իսկույն ծրագիրներ կհղանա քո վերաբերմամբ: Առաջ նա կառաջարկե քեզ ծառայելու վոստիկանուրթյան մեջ, կսկսե թախանձել, հորդորել, սպառնալ: Իսկ յերբ կհամոզվի, վոր դու անհողդողդ ես, կբռնվակռանա նրանով, վոր դու կմտնես Բոժոլի կուսակցուրթյան մեջ: Դրանով էլ դուք կվերջացնեք ձեր գործը:

— Վո՞ր կուսակցուրթյան մեջ.— հարցրեց Պետրոսը զարմացած:

— Սոցիալ – դեմոկրատական բանվորական կուսակցուրթյան մեջ, վորը պարոն մայոր Բոժոլի դեկավարուրթյան տակ է աշխատում:

— Վոչի՛նչ չեմ հասկանում:

Սեկերեչը նայեց ժամացույցին և ըստ յերևույթին՝ համոզվելով, վոր դեռ բավականին ժամանակ կա, գոհունթյամբ ղժռեց աթոռակ: Աթոռը մահճակալին մոտեցնելով, նա դրեց նրա վրա մի քանի պաղպրոս և մի տուփ լուցկի, թեյ ածեց Պետրոսի համար, իսկ հետո սկսեց լուռ անցուդարձ անել սենյակում: Վեց քայլ առաջ, վեց քայլ՝ հետ: Ժպտում է, ճոճում գլուխը և քաշում է ոձիքից այնպես, վոր քիչ է մնում տեղից վերցնե: Պետրոսը հոգնած է, և նրան դժվար է իր մտքերը կարգավորել: Յերկու որ առաջ վիճենայումն եր, յերկու որ՝ խսպանացու դերում— ճանապարհին, այժմ այստեղ՝ իր հայրենի դյուղից մի քանի ժամ ճանապարհի վրա ... Սեկերեչը, վորն առաջինն է ուզղել նրան բոլշևիզմի ճանապարհի վրա, ասում է մի այնպիսի բան, վորը նույն իսկ հանաքի համար չափազանց անհավանական է: Յեվ ասում է ամենալուրջ դեմքով ... Պետրոսը կուսակցուրթյունից հրաման ստացավ ամեն բանում հետևելու Սեկերեչի ցուցմունքներին ... Սեկերեչը հագել է լայքայված վոտնամաններ...

— Աղնիվ խոսք, — արտասանեց՝ վերջապես՝ Սեկերեչը, — նույնիսկ սկսելը անհարմար է կարծես. դու ինձ՝ պարզապես՝ չես հավատա: Իսկ ասել չես՝ այնուամենայնիվ՝ պարոնական եմ, վորովհետև դու մեր աշխատանքում վոչինչ չեր հասկանա: Այս բոլորը չատ հին անցքեր են և մի տեսակ դուրս են ընկել պատմուրթյունից բոլորովին: Յոթը-ութ տարի առաջ վոչ վոք, դուք, չեր էլ հասկանա նրանց նշանակուրթյունը, իսկ այժմ, տասնուչորս թվականից հետո, ո՞վ պիտի հետաքրքրվի այդ հին գործերով: Պարզ բան է՝ վոչ ոք ... Բայց մենք—մենք իրավունք չունենք նրանց աչքաթող անելու, իսկ դու՝ Բոժոլի կուսակցուրթյան ատյաք քարտուղարդ՝ պետք է բերանացի պիտանաս նրանց, ինչպես կոմունիստական մանիֆեստը, աղնիվ խոսք...

Սեկերեչը խոսելով չարունակում եր մատ գալ սենյակում: Վեց քայլ՝ առաջ, վեց քայլ՝ յետ: Նա մատ եր գալիս և ձեռքով այնպիսի չարժումներ եր անում, կարծես թե մեծ ամբոխի առաջ եր խոսում: Այս կողմից Պետրոսն արդեն պիտեր նրան: Սեկերեչը սիրում եր ճառախոսել, վորի մեջ՝ ասենք՝ զարմանալի մի բան չկար — լեզուն բերնի մեջ ազատ եր չարժվում:

— Աղնիվ խոսք ... Այդպես ուրեմն՝ կսկսեմ այն կետից,

վոր Բժոշ մայորը ծնված է այստեղ՝ Ունգվարում և իսկական ռուսին է: Նրա հայրը հուն-կաթոլիկ քահանա էր և ծառայում էր յեպիսկոպոսի մոտ: Իր վորդուն՝ քո ասպատ առաջնորդին՝ նա ուղարկեց Բուդապեշտ՝ համալսարանի իրավաբանական բաժնում սովորելու: Ծեր Բժոշը հունգարական բարի հայրենասեր էր, իսկ նրա վորդին պանսլավիստ ազիտատոր դարձավ: Նա Թողեց մորուք և յերկայն մազեր, — մի խոսքով, դարձավ իսկական առաքյալ: Բուդապեշտում նա այնտեղի սլավյան վառ և ռուսին ուսանողների առաջնորդն է յեղել: Համալսարանն ավարտելուց հետո,—այդ ինը-տասը տարի առաջ էր—նա Ունգվար չվերադարձավ, այլ գնաց Պարիզ: Պարիզից նա ուղղվեց Կիյով, Կիյովից Սանկտ-Պետերբուրգ, այնտեղից՝ Մոսկվա, և ամեն տեղ, ուր վոր նա լինում էր, կարդում էր զեկուցումներ և գրում հոդվածներ այն բանի մասին, թե ինչպիսի սոսկալի լուծի տակ են ապրում Ավստրո-Հունգարիայի սլավոնները: Պետք է խոստովանել նրա արժանիքը. նա լավ և գրում և խոսում. ամեն տեղ նա մեծ հաջողություն ունեցավ: Նրա զեկուցումների մասին տպվում էին ամբողջ հոդվածներ ռուսաց ամենամեծ լրագրներում, և հանդեսներից չասելը տպում էին նրա պատկերը: Բժոշը, չատ դեղեցիկ էր դեմքով, և դեռ այժմ էլ նա դեղեցիկ տղամարդ է: Չգիտեմ թե ինչպես՝ նրան հաջողվեց մի զառամյալ մեծ իշխանուհու վստահությունը շահել և կոմս Բոբրինսկու անձնական քարտուղարը դառնալ: Դու պետք է դիտես, վոր կոմս Բոբրինսկին ռուս իրրեզենատալի*) ներշնչողն էր, մի ձգտման, վորն ուղղված էր Ավստրո-Հունգարիայի դեմ: Այդ աշխատանքում՝ Բժոշից ավելի լավ մի ոգնականի մասին չէր կարող. ծնվել և Ունգվարում, սովորել Բուդապեշտում, հավատարատեստ ստացել բուհում և ուկրաինական, հունգարական, գերմանական և ֆրանսական լեզուներին, գիտե Գալիցիան և Մերձկարպատյան Ռուսիան այնպես, ինչպես իր հինգ մատները ... Մի խոսքով՝ կոմս Բոբրինսկու համար Բժոշը մի իսկական գանձ էր: Մոտավորապես 1912 թ. վերջին կամ 1913-ի սկզբին, մանավանդ 1913 թ. գարնանը— դու, Պետրոս, այդ բանը հիշել չես կարող, դու այն ժամանակ դեռ փոքր էիր—հունգարական ժանդարմները հարյուրներով էին ձերբակալում ռուսին գյուղացիներին: Նրանց մեղադրում էին այն բանի մեջ, վոր խրախուսում են համային Ռուսիայի գարին: Հիմքե՞ր:

*) Իրրեզենտա—ձգտում հայրենիքին միանալու:

Գյուղացիների մոտ գոան ուղղափառ ագիտատորներ գարի պատկերով: Ագիտատորները մեծ քանակությամբ հասցվում էին Գալիցիայի վրայով Մերձկարպատյան Ռուսիա, իսկ գյուղացիներին մատանիներով Մարամարոշսիգետ քաղաքի բանտն էին դնում: Այս ագիտատորների պատմությունը նույնպես մի քանի պարզաբանության կարոտ է: Դու՝ յերևի՝ գիտես, վոր ռուսիններն հունկաթոլիկներ են, բայց հազիվ թե ձեզ, ընկերներս, հայտնի լի,—արդեն բարձր ձայնով հառում էր Սեկերեչը, դառնալով անծանոթներին,—հազիվ թե ձեզ հայտնի լի, վոր հուն-կաթոլիկ դավանանքը դլուխ է բերված Հաբսբուրգյան կառավարության ձեռքով: Ռուսիններն ուղղափառ էին, իսկ ուղղափառության կենտրոնը Մոսկվան էր: Հասկացա՞ք, ընկերներս: Հուն-կաթոլիկ տերտերները կռվում էին իրրեզենատալի դեմ, իսկ ժանդարմները պաշտպանում էին հուն-կաթոլիկ յեկեղեցին ուղղափառ ագիտատորների կործանիչ ազդեցությունից: Հուն-կաթոլիկ տերտերը ամեն մի ժանդարմից ավելի ոգտակար էր: Յերբ պետք էին լինում պլեմպրներ, յերբ պետք էին լինում հարվեր ... Կարո՞ղ ես յերևակայել, Պետրոս, ինչպիսի սեր էին վայելում հուն-կաթոլիկ տերտերները ռուսին գյուղացիների մեջ: Աղնիվ խոսք ... Ասենք չհավատամ: Ռուսաստանում մեծ ազդակ բարձրացավ մի զառամյալ իշխանուհու չուրջը, վոր նպաստում էր Մարամարոշսիգետում «հերձվածողների» դեմ: Վորպեսզի փքեն նրան ավելի սաստիկ՝ կոմս Բոբրինսկին ուղարկեց Իվան Բժոշին Պարիզ՝ զեկուցումներ կարդալու այն հալածանքների մասին, վորոնց յենթարկվում են Հունգարիայի սլավոնները: Այն ժամանակ, վորը դրանից հետո կատարվեց, դու, Պետրոս, ուղղակի չես հավատա, աղնիվ խոսք, չե՞ս հավատա: Ճիշտն ասեմ՝ յերեք այդ բանն ինձ պատմելին, չես ինքս էլ չեյի հավատա... Ուրեմն՝ Բժոշը մեկնեց Պետերբուրգից, բայց Պարիզ չժամանեց: Ճանապարհին անհայտացավ: Նրան վնասելին ռուսները, վնասեցին Ֆրանսիացիները, վորքե դրեն նրան վնասելու համար զաղտնի խուզարկիչների ամբողջ հրոսակներ — բոլորը դեր յեղավ. նա՝ ասես՝ ջուրն էր ընկել: Ռուսաց լրագրները բավականին թափանցիկ կերպով ակնարկում էին այն բանի մասին, վոր այդ՝ ավստրիական գործակալներն են նրա հետ հաշիվ տեսել, — ուրիշ ոչինչ: Լրագրները վոչքում էին նրա մահը սպային չրջանակում զետեղված հոդվածներում:

Սեկերեչի պատմության սկզբում Պետրոսը կռվում էր քեզ

հետ, բայց հետո նրա քունը բոլորովին վախավ: Նրան խանդաղրում էր կենտրոնանալ միայն այն համառ միտքը, որ Սեկերեչը ծաղրում է իրան, ուրախանալով այն առիթին, որ իր ներեվակայությանը կարող է ազատություն տալ:—

— Տասնուչորրորդ թվականի գարնանը,— չարունակեց Սեկերեչը,— սկսվեց Մարմարոշխիեսի դատական գործը: Դուք հասկանում եք, ընկեր, որ հունգարական լրագիրները ռուսահանների հետ չէին մնում. նրանք վողրում էին, թշնամացնում դատապարտվածներին, արյուն էին պահանջում՝ ինչ որ էլ լինի: Բայց նրանց բոլոր ջանքերը դուր էին գնում. դատարանը չէր դանում վոչ մի, իսկի վոչ մի ապացույց այն բանի, որ ռուսին գյուղացիները վորևե հույսեր դրած լինեին ռուս ցարի վրա: Ինչպես էլ որ լինի՝ այն ժամանակներում մեկին դատապարտելու համար դեռ պետք էին վորևե ապացույցներ: Այն ինչ՝ կոմս Բոբրինսկին հղացավ մի փայլուն միտք, կամ՝ որ ավելի հավանական է, մեկը այդ միտքը նրան ասեց: Բայց, այսպես թե այնպես, կոմս Բոբրինսկին գնաց ավստրիական դեսպանի մոտ Պետերբուրգում և հայտնեց նրան, որ կամենում է ցուցմունքներ տալ Մարմարոշխիեսի դատաստանատան: Նա խնդրեց իրա վունք՝ այնտեղ դիմելու և ապահովություն այն բանի, որ ցուցմունքներ տալուց հետո կարողանա անարգել կերպով վերադառնալ Ռուսաստան: Դեսպանը հեռագրեց Վիեննա, և չերը բարեհաջող պատասխան ստացվեց, կոմս Բոբրինսկին ճանապարհ ընկավ դեպի Մարմարոշխիես: Դատարանում նա հայտնեց, որ Ռուսաստանը վոչ մի հարաբերություն չունի ռուսին գյուղացիների հետ և պատրաստակամություն հայտնեց ցույց տալու ամենի խոսքով,— իսկ եթե նրա՝ իրրև ռուսահպատակի՝ համար այդ բավական չհամարվի, նույնիսկ չերդումով,—որ դատապարտվածները վոչ մի ժամանակ վոչ մի հարաբերություն չեն ունեցել ռուս կայսրության հետ: Դատարանը թույլ տվեց նրան չերդվելու, բայց պահանջեց նույնպես, որ կոմսը մինչև չերդումը կրկնե իր ցուցմունքները մի վկայի ներկայությամբ, որը չի հարցաքննված: «Մեծադուն հաճույքով», սիրալիր կերպով հռժարվեց կոմսը: Կոմս Բոբրինսկին առհասարակ հայտնի չեր իր նուրբ սիրալիրությամբ.!. Դե՛հ, իսկ մնացյալի մասին դա արդեն գլխի՛ չես ընկնում՝ իհարկե:

— Ամենևին:

— Դու, կնշանակի, չերբեք չես կարդացել սարսափներ

վեպերը ... Դատարանի նախագահը կարգադրեց դատական կատարածուին «հրավիրեցեք պարոն Բոժոչ վոստիկանապետին»: Մի քանի րոպեյից կոմսի կողքին կանգնած էր հունգարական թագավորական վոստիկանապետ՝ կապիտան Իվան Բոժոչը: «Պարոն դատավորներ,— սկսեց նա,— հաղիվ թե վորևե մեկին այնպես լավ ծանոթ է ցարական կայսրության իրրեզենտական կազմակերպությունը, ինչպես ես: Կոմս Բոբրինսկուն հանձնված՝ արտաքին գործերի նախարարության բաժինը չես գիտեմ այնպես, ինչպես իմ գրպանը»...—

Սեկերեչը լռեց և կանգ առավ Պետրոսի առաջ:

— Այդ բանը՝ պետք է հասկանալ՝ ինքդ ես հնարել,— մի քիչ անվստահ արտասանեց Պետրոսը:

— Դե՛հ, ինչ ես ասում.—վիրավորվեց Սեկերեչը: Հնարելու ժամանա՛կ ունեմ: Մենք ապրում ենք խելացնոր պատմություններում, հանաքի ժամանա՛կ է: Բոլորը, ինչ որ ես պատմեցի, իսկական ճշմարտություն է առաջին խոսքից մինչև վերջինը ... այդ նույնքան հավաստի է, որքան և այն, որ նախկին վոստիկանապետ Բոժոչը ներկայումս տեղային սոցիալ-դեմոկրատական կազմակերպության գլուխ է դառել և քո ապագա առաջնորդն է: Ձեվ մի ձեվացրու այդպիսի հիմար դեմք, Պետրո՛ս,—այս դեռ ծաղիկներ են, պատուհներն էլ հետո կլինեն:

Պետրոսը նայեց անկողնի ծայրը և՝ չնայելով Սեկերեչի խոհրդին՝ ապուշ և գրված դեմքով նայում էր իր առաջ:

— Ինչպե՞ս Բոժոչը սոցիալ-դեմոկրատ դարձավ,— ասրտասանեց նա վերջապես:

— Ռուսին գյուղացիների դատապարտումից հետո նա նշանակվեց վոստիկանական խորհրդական, պատերազմի ժամանակ աշխատում էր հակահետախուզման մեջ, Ավստրո-Հունգարական միապետության տապալումից հետո ծառայեց Գալիցիայում, Ուկրաինական ժողովրդական հանրապետության պետավորական նախարարության մեջ, իսկ չերը Գալիցիան գրավեցին լեհերը, նա վերադարձավ Ունգվար— և հենց ժամանակին: Իսկապես դրանից ավելի ժամանակին չէր կարող լինել: 1919 թ. ապրիլի վերջին չեխերը և ռումինները հետ մղեցին հունգարական կարմիրներին Տիսսայի մյուս կողմը և ռումինական չերկիրը ազատ գարձավ: Պարոն մայոր ... Վո՛չ, ավելի լավ և բոլորը կարգով պատմեմ: Ազատության գործը ինչ որ չէր հաջողվում: Ձերռուսին գյուղացիներն իմացան, որ չեխ «չեղբայրները» պատ-

բասավում են վերադարձնել հանդգնարարական մադնատներին և հրյա գործարանատերերին, նրանք պարզապես մատնեցին պանսլավիստ յեղբայրության մեծ դաշափարը և— ձեռքերով ու վոտքերով, զերանդիներով ու յեղաններով—սկսեցին բզդզքել Իրանց ազատության դեմ: «Լենին ... Բելա Կուն ... հողի բաժնում...» ահա թե ինչի մասին էլին չընդում բոլոր անկյուններում: Զուր էլին նրանց ձեռում ազատարարները,— չէլին ազնում վոչ մարակները, վոչ բանտը: Լեգեոներները, դինվորական դիկտատուրա, գեներալ Պարլ,— այս բոլորը քիչ յեղավ, իսկ դժգոհությունը միշտ աճում եր ու աճում: Ձեվ ահա ազատել հանդես և գալիս Իվան Բուժոշը: Մայորն ամբողջ դիշեր դրուցում եր գեներալ Պարլի հետ, իսկ մի չարաթ հետո սոցիալ-դեմոկրատական դրոշակը պարզեց:

Պետրոսը դեռ ևս վարոշ վախով կասկածում եր. արդյոք իրան չէ՞ն խարում: Այնուհետև, նա համարձակվեց հարցնել.

— Դեհ, հապա ի՞նչ են ասում Բուժոշի մասին հին սոցիալ-դեմոկրատները:

— Դու ավելի լավ և հարցրու, թե ո՞ւր են նրանք, այդ սոցիալ դեմոկրատները: Նրանց մի մասը Հանդարտյան բանտերումն է, մյուսը Իլավայի բանտում, վոմանք մեր կողմն են, վոմանք էլ Բուժոշի: Ռուսինական հողի վրա մինչև հեղափոխության կարգ հինդ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն, այժմ նրանցից մեկը ռուսինական հողի վրա չկ ... Մի խոսքով՝ դուպլեի աշխատանքը մարդ Բուժոշի, ընկեր Ռուժոշի մոտ: Մարդը մի համալիշ, շատ սիրելի մարդ է: Մեր հարաբերությունների նրա հետ հիանալի չեն, չնայած՝ մտերմական: Մեզ ծանոթացրեց իմ սրտակից ընկերը, վոտիկանապետ կապիտան Ակուլիչանին: Ակուլիչանովի մասին էլ ամբողջ մի պատմություն կարելի է գրել, բայց նրա մասին — մի ուրիշ անգամ: Հենց նրա մոտ եմ չես այժմ շտապում: Բայց դու, տեսնում եմ, ուշադիր հոգնած ես— հանգստացիր, իսկ յերեկոյան կգնաս վոտիկանատուն: Մինչև չես էլ վերադառնում, տանից դուրս մի գար: Ձեմե դուռը պարանն՝ մի շարժվիր: Տանը՝ քեզանից զատ՝ վոչ վոչ չկա· տիրը նստած է իլավայում, ուրուհին մանուֆակտուրա չե ծախում — կվերադառնա միայն յերեկոյան դեմ:

Այս ասելով՝ Սեկերեչն ուղղում եր հայելու առաջ իր վոզոպատը: Հետո առավ դվնարիկը, բայց իսկույն դեն նետեց, կարծես խայթվել եր նրանից:

— Ի՞նչ, ի՞նչ յեղավ· — վեր թռավ Պետրոսը:

— Ապուչնի՛ր· — կատաղած բղավեց Սեկերեչը: — Ապուշնի՛ր·— կրկնեց նա՝ արդեն քիչ կամացուկ և մեկնեց Պետրոսին մի կտոր թղթի կտոր:

— Այս չարաթվա ընթացքում՝ սա չորրորդն է,— ավելացրեց նա ազնիվաբար ձայնով, սրտաբեկ ճաճելով գլուխը:

Պետրոսը նայեց թղթին:

Ցերեք տող՝ դրոշ մեքենայով տպագրված:

«Պրոլետարնե՛ր բոլոր յերկրների, միացե՛ք:

Կեցցե՛ պրոլետարական դիկտատուրան:

Մահ մատնիչներին»:

— Ձեմ հասկանում, թե ինչ է նշանակում այս ... ինչո՞ւ այդպես վատաղեցիր:

— Ի՞նչ է նշանակում այս·— կրկնեց Սեկերեչը, վորին նորից վերադարձել եր սովորական խրատական տոնը:—Այդ, յեղբայրս, նշանակում է, վոր քաղաքում, մերից զատ, աշխատում է նաև մի զաղանի կազմակերպություն: Այդ, իհարկե, շատ ախորժելի բան է, բայց շատ անդուր է, վոր ինձ մատնիչ են համարում և սպանում են ինձ —ճիշտ է՝ միամտությամբ, բայց էլի սպանում են: Իսկ ամենից անախորժ բանը այն է, վոր ինձ ամենևին չի հաջողվում նրանց հետքը գտնել: Դեհ, ասենք, հետո կիմանաք: Առայժմ վատարանի կրակը վառ պահիր, հանդրստացիր և ինձ սպասիր:

Ցերեկոյան Պետրոսը գնաց վոտիկանատուն, իսկ հինգերորդ որը ծանոթացավ Իվան Բուժոշի հետ:

ՄԱՐԻԱՆ

Բուժոշ ամարանոցը կանգնած է հենց Ունդ գետի ափին: Նրա կարմիր կղմինտրե կտուրը արդեն հեռվից յերևում է սլաքատուռ ծառերի դեռ մերկ ճյուղերի միջից: Նրա չուրջը ձգվում է ապիտակացրած՝ չուգունե վանդակապատ, վորն իր յերկայն՝ շուրջ ծայրերը մղում է դեպի յերկինք:

Պետրոսը զանգահարում է: Ներսից պատասխանում է չան հաջողը: Հանկարծակի՝ ասես զետնի տակից՝ Պետրոսի առաջ բսնում են յերկու ահագին զայլախեղդ զամբռ և սկսում են մռլեզնորեն հաչել:

— Հանդի՛ստ, Կորնե՛լ Պատկերին, Սամուե՛լի ...

ԳՐԱԴԱՐԱՆ
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР
9 5 3 + 5 . 9 8
Гос Библиотека
ZOOIT-Арм ССР
им. К. Маркса
ՄԱՐՔՍԻ ԱՆ.ՎԱՆ

Սամուելին և Կունը.— յերկու գայլխեղդ գամփռ— սպեղբը չարժելով, քծնում են զանգահարության պատճառով դուրս յեկած աղջկա առաջ, բայց վերջինս, նրանց վրա ուշադրության չդարձնելով, համառ հայացքով պիտում է Պետրոսին չուզունի վանդակապատից:

— Դուք յեղբո՞րս եք վնասում:

— Ես վնասում եմ ընկեր Բոժոչին:

— Նա տանը չե:

— Թուլլ կտա՞ք, վոր նրան սպասեմ:

Աղջիկը կրկին անգամ պիտում է Պետրոսին՝ վոտքից մինչև գլուխ: Պետրոսն էլ ուշադրությամբ նայում է այդ վայելչակազմ, բարձրահասակ, սևաչյա աղջկանը: Նա կանգնած է նրա առաջ առանց վերարկուի և գլխարկի, բայց գլխով, մի թևին, գորշագույն պզնատ և տուֆլինները հագած: Նրա կարճ խուզված, կապտավուն–սև մազերը փայլում են արևին:

— Կմրսե՛ք, — ասում է Պետրոսը, յերբ վոխադարձ գլուխը չափազանց յերկար է տևում:

Աղջիկը քիչ կարմրում է, բայց չի վշտանում: Ժպտալով Պետրոսին, նա դարպասը բաց է անում և յերկու ձևոքով բռնում է շների վզակապերից:

— Հանգի՛ստ, կո՛ւն: Լռի՛ր:

— Դուք, ի հարկե, ընկե՞ր եք,— հարցնում է նա, յերբ մտնում են նախասենյակը, վորի պատերից կախված են մարալների յեղջյուրներ:

— Այո, յես փախել եմ Հունգարիայից: Իմ անունն է՝ Պետրոս Կոմաչ:

— Իսկ իմը՝ Մարիա Բոժոչ: Հանեցեք ձեր վերարկուն և ներս մտեք ... Ի՞նչ նորություն կա Հունգարիայում:

— Դեհ ... Ինչպես ասեմ...

Սառնաձնասենյակի մեծ, բոլորովին բաց լուսամուտներից վաղ գարնան արևը հեղեղում է իր շողերը: Վառարան, վորի մեջ փայտերն են ճարճատում, ժանդրա–կարմիր պղոզ, կարմիր կաշյա բազկաթոռներ, լայն, հասարակ դրասեղան, բարձր, ընդարձակ պահարան դրքերի համար: Պատերից կախված են Մասարիկի, Վելսոնի, Մարքսի և մեծ, կախված ընչացքներով մի ուկրաինացու պատկերները: Պետրոսը աչքերը չի հեռացնում վերջին պատկերից:

— Նստեք, ընկեր:

Պետրոսը նստում է, իսկ որիորդը չարունակում է կանգնած մնալ:

— Ի՞նչ կյիք անում խորհրդային իշխանության ժամանակ,—հարցնում է աղջիկը քննիչի ձայնով:

— Աշխատում եյի:

— Հասկանալի յե, բայց ի՛նչ բան եյիք անում:

— Հըմ...

Սեկրետը նախապատրաստել եր Պետրոսին՝ վորքան ավելի բազեկամաբար նրան հարցուփորձեն՝ այնքան ավելի հանդուգն պետք է ստել: Մարիան հարց ու փորձում եր բավականին բարյացակամորեն, և Պետրոսը չեր պատրաստ ստել, յեթե աղջիկը սպասեր նրա պատասխաններին: Բայց նախքան նրա բերան բանալը՝ Մարիան արդեն հաջորդ հարցն եր տալիս:

— Իսկ Սամուելին դուք դիտեյի՞ք:

— Պատահել է, վոր տեսել եմ նրան:

— Իսկ խոսել նրա հետ — չե՞ք խոսել:

— Վոչ... Ինչի՞ մասին պիտի խոսեմ նրա հետ:

Որիորդը ուսերը թոթվեց և արհամարհական ձևով ուղղեց շրմունքները: Վոչինչ չասաց, բայց իր ամբողջ պատկերով աշխատեց ցույց տալ, վոր այդպիսի պատասխանը հիմար է համարում: Պետրոսը քիչ չվոթվեց: «Սիրուն աղջիկ է»—մտածեց նա: Բայց նրան չվոթեցնում եյին վոչ թե նրա դեղեցկությունը կամ արհամարհական ձևով ուղղված շրմունքները, այլ անսպասելի կերպով ծագող զգացումը, վոր այդ տեսակետը, մութ աչքերով աղջիկն իրան հիշեցնում է մեկին, շատ է հիշեցնում, — բայց վո՞րին, այդ բանը նա, կուզես սպանիր, չեր կարողանում մտաբերել:

Որիորդը նստեց դրասեղանի մոտ: Պետրոսը լուռ եր և, վորպեսզի չնայե աղջկան, աչքերը հառեց մեծ ընչացքներով ուկրաինացու վրա: Վերջապես՝ աղջկան, ըստ յերևույթին, ձանձրացրեց լռությունը, և նա նորից սկսեց հարց ու փորձը:

— Բելա Կունին դիտեյի՞ք:

— Մի անգամ տեսել եմ:

— Ինչպե՞ս է նա:

— Ինչպե՞ս ասեմ ձեզ ... Բոլորովին նման չե ձեր չանը, վորին դուք մկրտել եք նրա անունով:

Մարիայի դեմքը կարմրեց: Նա այնպիսի թափով վեր թռավ, վոր Պետրոսին թվացրեց այս րոպեյիս իր դեմքին կխփե:

Բայց վոչ, Մարիան արդեն չի բարկանում, դեմքի կարմիրը անցնում է և աչքերը մտերմաբար են նայում Պետրոսի վրա: Նա թիկին է տալիս բազկաթոռի մեջքին և վերցնելով դրասեղանից տուփը՝ մոտեցնում է Պետրոսին:

— Ծխեցեք, ընկեր:

Պետրոսը ծխեց պապիրոսը: Աչքառում էր անտարբեր ձևանալ, և այնուամենայնիվ կրծոտեց պապիրոսի մունդշտուկը:

«Ի՞նչ ախմախ եմ,— մտավ վատաբանում էր իրան,— արժանի չեմ, վոր ինձ թակեն: Ինձ մատնում եմ գլխո՛վ և միայն վճռամիներ եմ շահում... կփշացնեմ այն ամենը, ինչ վոր Սեկրետարը արավ: Ոհ—ոհ—ոհ...»:

Նա ծուռ նայեց Մարիայի վրա:

Աղջիկը կաղնած էր դրասեղանի յեռանը, նայում էր վոչ թե Պետրոսի, այլ սեղանի վրա և յերկու ափսեակ, մի քիչ յերկար ածիլի աստամներով խածում էր ներքևի ալ, լիքը շրթունքը:

Լռություն...

Վոչ մի հնչյուն չի մտնում սենյակը՝ բացի լուսամուտներից փողաքիվը— խաղալիք պետության փոքրիկ մայրաքաղաքը— լուռ է:

Ծանր լռությունն անվերջ կտեվեր, յեթե Իվան Բոժոչը սենյակ չմտներ:

— Բարե՛վ ձեզ...

Բարձրահասակ, լայնաթիկն, շատ դեղեցիկ մի ուլամարդ: Մաքուր սափրված, Թուխս դեմք՝ ինչպես Թուխս է լինում գնչուի դեմքը, խոշոր, սև, կրակոտ աչքեր, խնամքով՝ հարթ սանրված, խիտ, սև մազերում տեղ—տեղ վայրում են արծաթ թելեր: Նա հագել է բարձր կոշիկներ, բրիչի և ֆրանսիական սպարտակի տարազի առժուրկա:

— Բարե՛վ՝ ձեզ, ընկեր Կովաչ: Ձես պետք է, վոր դուք սիրով դաք: Ներեցե՛ք ուշացածիս համար. յես զննելու Պարիի մոտ էի... Մարիա, հյուրասիրեր ընկերին կոնյակով: Թույլ տվեք, իմանալու ընկեր, ուղղակի, ըստ գինվորականի, անցնել գործի: Ձես ձեզ խնդրեցի գալ ինձ մոտ, վորպեսզի առաջարկեմ ձեզ աշխատել ինձ մոտ կուսակցության մեջ: Սակայն, պետք է ձեզ ասեմ, կատարյալ անկեղծությամբ, ըստ գինվորականի— խնդրեմ՝ համեցեք մի ըմպանակ,— այո, պետք է ասեմ անկեղծությամբ— այդ իմ պարտականությունն է,— վոր սոցիալ—դեմոկրատական

կուսակցության մեջ յեղած աշխատանքը շատ և շատ ծանր գործ է: Մենք ապրում ենք գինվորական դիկտատուրայի ժամանակ, և մեր կուսակցությունը մխակն է, վոր աշխատում է օրինական կերպով: Մեր թշնամիներն անհամար են: Նախ և առաջ՝ հունգարական մագնատները: Նրանք դիտավորություն չունեն՝ լ հարկն՝ հաշտվել այն բոնի հետ, վոր ռումինական յերկիրն ազատվել և հաղարամյա լուծից: Ե՞լի մի բաժակ, ընկե՛ր: Ջե՞ք կամենում: Դե՛հ, այդ դեպքում՝ մի պապիրոս... Այդպես ուրեմն, հունգարական մագնատները... Բայց ամենից վատն այն է, վոր իրանք բանվորներն էլ վոչ մի ոգնություն չեն ցույց տալիս: Նրանք կատաճոտ են, գյուղացիներն էլ նո՛յնպես: Ռուսինները— դուք տեսնում եք՝ յես խոսում եմ չիտակ—ռուսին բանվորներն ու գյուղացիները, շա՛տ, շա՛տ անքաղաքակիրթ են, շատ հետամնաց, ուստի և կատաճոտ են... Բացի դրանից՝ նրանք վարակված են բոլշևիկական պրոպագանդայով: Բոլշևիկական պրոպագանդա, այո—այո, բոլշևիկական պրոպագանդա...

—Վողորմած, ո՞ւր են այստեղ բոլշևիկները: Իլավայո՞ւմ...

Քրոջ խոսքերից Բոժոչը ցնցվեց, կարծես հենց նրա ականջի մոտ ատրճանակ արձակած լինեին: Նրա դեմքը վառ կարմիր ներկվեց, ինչպես քիչ առաջ Մարիայինը:

— Յեթե մի բան չես հասկանում, լավ է լուռ կաց,— խստությամբ կտրեց նա քրոջ խոսքը:

Մարիան լուռ: Ներքևից շրթունքն ուռցնելով՝ նա չարունակեց լուռ կանգնած մնալ դրասեղանի մոտ:

Բոժոչը քիչ ժամանակ անց ու դարձ եր անում սենյակում:

— Յեթե՛ նրանք Իլավայում լինեին: Բայց, սատանան նրանց տիաե, թե վո՛րտեղից են նրանք յեկնում: Կարծես դետնից են բրսնում, խանգարում են մեզ աշխատել, խրախուսում են ռեակցիային... Այո, այո, նրանց ամբողջ աշխատանքը մխայն Մորտիի և մխալեատականների՛ ոգտին է: Ահա դու՝ մարիա, ասում ես, թե բոլշևիկները նատած են Իլավայում: Իսկապե՞ս: Տասն ամիս անցավ այն որից, յերբ հունգարական կարմիրները հեռացան ռումինական յերկրից, բայց մի չարաթ չէ անցնում առանց այն բանի, վոր նորից նրանց հետ չդրաղվես: Մերթ դյոջագյինները, մերթ... Այ, հենց այսոր, վոսոխկանության բռնեց չորս բոլշևիկ—ցրվում էին հեկտոգրաֆագիր թերթիկներ: Ահա քեզ— Իլավայո՛ւմ:

Բոժոյն արագ, մեկը մյուսի յետևից, խմեց յերկու ըմպանակ կոնյակ: Սենյակում լուռթյուն ուրեց: Պետրոսը հայացք ձգեց Մարիայի վրա— նա նորից խածում եր շրթունքները:

— Այո, այսոր Ակուլիչանին բռնեց չորս հոգի: Ցրվում էլին հանրապետությանը և մեզ՝ սոցիալ-դեմոկրատներիս: Հիմա՛ր պրովոկացիա: Հունգարական որինակից հետո այդ բոլորն խիկ վտանգավոր չե, բայց ելի անախորժ բան ե, մանավանդ մեզ՝ սոցիալ դեմոկրատներիս: Դեհ, մենք նրանց ցո՛ւյց կտանք: Մենք պրանից ավելիներն ենք տեսել...

Այժմ խոսելու հերթը Պետրոսին հասավ: Նա սկսեց պատմել իր անցյալի մասին, յերբ ինքն ել դեռ ծառայում եր բոլշևիկներին: Նա՛ չգիտնա, թե ինչ ե բոլշևիզմը: Ցեվ նա հաստատ գիտե, վոր այսուհետև, մտնելով սոցիալ դեմոկրատական կուսակցության մեջ, նա ամեն մի բոլշևիկի մեջ պետք ե տեսնե իր մոխերիմ թշնամուն: Թող միայն խառնվեն, թող միայն փորձեն...

Բոժոյը՝ բառն ցնցելով՝ սեղմեց նրա ձեռքը:

Մարիան անչարժ կանդնած եր դրասեղանի մոտ: Նեկրքևի շրթունքը նա մի քիչ առաջ եր տվել:

***

Սեկերեչը լուռ լսում եր Պետրոսին:

— Դու լա՛վ արեր այդ,— ասաց նա վերջապես:— Միայն դժուշացիը այդ որիորդից: Զգիտեմ ինչու, բայց այդ սատանան ինձ դուր չի գալիս: Ամեն տեղ իր քիթն ե խոթում:

— Գտնվել են սպառնացող թերթիկների հեղինակներն ել,— չոր-չոր արտասանեց Պետրոսը— նրան չատ դյուր չեկավ Սեկերեչի տունը: Վոստիկանությունն այսոր ձերբակալել ե չորս ընկերների:

— Գիտեմ: Վաղը նրանց ուղարկում են Կոշիցա՝ դատախազի մոտ: Ինձ չաջողվեց խոսել նրանց հետ, բայց յես համոզված եմ, վոր սպառնացողները նրանք չեն: Ակուլիչանին ինձ ցույց տվեց նրանց թերթիկները—լուրջ աշխատանք ե:

— Իսկ յեթե նրանք չեն, հապա ո՞վ ե:

— Մի յերրորդ կազմակերպություն ել ե աշխատում:

Մի քանի վայրկյան Սեկերեչն անընդհատ նայում եր Պետրոսի դեմքին, հետո, խելագարի պես, հարձակվեց վրան և մի քանի թերթիկ դուրս բերեց: Տինդրըն սկսեց համեմատել նրան այն թերթիկների հետ, վորոնց պահում եր իր ծոցատետրում:

— Ճիշտ և ճիշտ նույնն ե: Դեհ, այժմ ամեն ինչ պարզ ե:

— Ի՞նչն ե պարզ—կատարյալ տարակուսանքով վերցրեց Պետրոսը:

— Դու միայն Բոժոյի՛ մոտ յեղար:

— Այո՛, միայն այնտեղ:

— Մարիա Բոժոյն ե,— ասաց Սեկերեչը:—Այդ նա՛ յե սպառնում: Անկասկած՝ նա՛ յե:

— Պրովոկա՞ցիա յե,— հարցրեց Պետրոսը, զարմանքից նույնիսկ կակազելով:

— Զգիտեմ, դուցե՛... Բայց՝ դուցե և համոզմունքից: Զավակաց անմիտ բան ե պրովոկացիայի համար: Բոժոյի ընտանեքում այդպիսի բաներ չեն կարող լինել: Վոչ, այդպես անմիտ կարելի յե գործել միայն համոզմունքից: Մյուս կողմից՝ ի՞նչ համոզմունքներ կարող են լինել Բոժոյի ընտանեքում: Այստեղ ինքը սատանան վոտքը կկոտրե: Պետք ե զգույշ լինել:

Պետրոսի վրա տաքություն յեկավ: Բոժոյ, սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխ, Սեկերեչի ծրագիրներ, ամբողջ այդ հմայք, վոքրիկ յերկիրը, Մարիան Բոժոյ— վոչ, դրանք անկարելի, բոլորովին անհամանատական պարմաններ են... Մարիա Բոժոյ...

— Այդ աղջիկը սովորել ե Բուդապեշտում, հենց այդ ժամանակ կատարվել ե հեղափոխությունը, նա հափշտակվել ե—պրոլը գիտե, թե այդ ինչպես ե յեղել: Ե՛հ, միայն թե կանայք դործի մեջ չխառնվեն... Ինձ վոչ մի լրտես չի խաբի: Ակուլիչանիի հետ յես խաղում եմ, ասես մի աղայի հետ... Բայց յերբ գործ ունես ինոջ հետ,— սոսկալի դժվար, սոսկալի վատ գործ ե այդ անլեզայ աշխատանքը: Այ, յեթե բաց կոխի լինի, մասսա... Ցեթե յես կարողանայի կանդնել քաղաքային տան պատշգամբում, յեթե մենք ղինված կռվի դիմելինք... Բայց կանայք, կանայք...

Պետրոսը ձգվեց մահճակալի վրա: Բոժոյին այցելելը նրան չատ եր հոգնեցրել: Սեկերեչը սենյակում անց ու դարձ եր անում: Նա բացեց յուսամուտը, վառարանի մեջ վառ գցեց և նորից սկսեց չափել սենյակը քայլերով: Ըստ յերևույթին նա սաստիկ ջղայնանում եր, հանեց փողպատը և ոձիրը, հետո հանեց նաև պի-

ջակը, և ելի չարունակում եր քայլել: Ցերկաթե փոքրիկ վառարանը չիկնել, բոլորովին կարմրել եր:

— Տիմար կյանք: Մի անգամ ևս, թեկուզ մի անգամ հանդես գալի մատաղների առաջ՝ աշկարա...

Իոսիֆ Սեկերեչը գյուղական հբյա ուսուցչի չորրորդ որդին եր: Մանկության ժամանակ նա յերազում եր բժիշկ դառնալ և յերազում այնպե՛ս եր տեսնում իրան, ինչպես դիտեր քեռուն— Սվալյավայի բժշկին— կաշյա չորում: Ունենալով ինը հոգի յերեխա՝ Իոսիֆի հայրը ստանում եր տարին ինը հարյուր դուլդեն ռոճիկ: Ցերբ Իոսիֆը տասը տարեկան դարձավ, նրան մտցրին Բերեգասոի ուսումնարանը: Նա կերակրվում եր բարի մարդկանց մոտ, մայրը հերթով կարկատում եր նրա համար իր մեծ յեղբայրների հին զգեստները, և այսպիսով՝ նա անցավ գիմնազիայի հինգ դասարանները: Նա միշտ առաջին աշակերտն եր և իր ցնորքներում իրան տեսնում եր արդեն մոչ թե իրրև սովորական բժիշկ, այլ մայրաքաղաքի պրոֆեսոր: Բայց մահը տեղեկացավ՝ յերևի՝ որ փոքրիկ Սեկերեչը այդպիսի յերկաթե համառությամբ պատրաստվում է իր հետ կռվելու, և ննջեցյալն սարքեց նրան: Ցերբ հինգ դասարանի ավարտման վկայականի հետ միասին նա ստացավ նվեր՝ տասը կրոն մոսկով, հեռագիր ստացվեց մորից, որը տո՛ւն եր կանչում նրան— հոր թաղման: Ուսման գործը վերջացավ: Նա մինչև այդ ժամանակ էլ տանից ոգնություն չեր ստանում, բայց այժմ արդեն նա՛ պետք է փող ուղարկեր տուն, որպեսզի ոգներ փոքր յեղբայրներին կրթելու: Ցերեք մեծ յեղբայրներից յերկուսն արդեն մեռել եյին բարակացավից, իսկ յերրորդը նստած եր այդ ժամանակ զորանոցում՝ «կայսերական ուսելիք» ճաշակելով: Իոսիֆին ուղարկեցին Բուդապեշտ՝ հաշվապահական յերեքամսյա ընթացքն անցնելու: Ավարտելով այդ ընթացքը՝ նա աշխատանք ստացավ Բերեգասոում ամսական քառասուն գուլդենով: Աշխատում եր նա որը տասը ժամ, իսկ գիշերները սովորում եր: Հաստատության վիճակական ստանալու քննություն տվեց՝ լրիվ կոմմնակի՝ և նորից դնաց Բուդապեշտ: Այստեղ նա կես տարի մի կերպ ապրում եր դասերով: Ցերբեմն ուսման վճարը պակասում եր, իսկ փողերն ուղարկում եր տուն: Իոսիֆը աստիճ սոված եր մնում և վերջապես ուժասպառ յեղավ: Նրան նեղացնում եյին մոչ թե թոքերը, ինչպես մնացյալ յեղբայրներին, այլ սիրտը: Պետք յեղավ թողնել համալսարանը և վերադառնալ Բերեգասո իրրև հաշվապահ: Այժմ նա վաստակում եր արդեն յոթանասուն գուլդեն: Բուդապեշտից նա բերեց իր հետ սոցիալիստական մի քանի գրքուկ: Բերեգասում նա՝ ըստ յերևույթին՝ միակ մարդն եր, որ կանոնավոր կերպով կարդում եր գերմանական սոցիալիստական հանդեսներ: Այն առևտրական տունը, ուր նա ծառայում եր, նրան ուղարկեց մի տարով Ոսա՝ ստուգաձամչակման: Այնտեղ նա սովորեց ռուսներեն և ծանոթացավ Ոսա Կոլմինի հետ: Այդ՝ պատերազմի յերրորդ տարումն եր: Ողջ Կոլմինի հետ միասին նա անցավ ցեմմերվալդի ծրագիրը: 1916 թվին Իոսիֆի յերեք փոքր յեղբայրներն ընկան Ղոռնցո գետի ռազմաճակատում— մեկը մյուսի յետևից, համատար ժամանակամիջոցներում, նույն հաջորդականությամբ, ինչպես վոր ծնվել եյին: Բրեստ-Լիտովսկի խաղաղության բանակցությունների ժամանակ տեղի ունեցած գործադուլին Իոսիֆ Սեկերեչին ձերբակալեցին: Հեղափոխությունը վերադարձրեց նրա ազատությունը: Դիկտատուրայի ժամանակ նա աշխատում եր կուսակցության քարտուղարության մեջ:

Նա դժգոհ, չիկակարմիր մազերով, պեպենոտ մի ջահել է: Աչքերի տակ՝ կապույտ շրջաններ: Նա քանվոր եր, բայց արտաքինին նայելով՝ նրան քսան տարուց ավելի չի կարելի տալ:

— Ի՞նչ պատահեց քեզ հետ, Իոսիֆ,— հարցրեց Պետրոսը:

— Վոչինչ, պարզապես՝ ջղայնանում եմ:

— Այո... Գլխավորի մասին յես դեռ չեմ ասել,— ասաց Պետրոսը:— Բոժոյն ինձ բացատրեց սոցիալ-դեմոկրատական կուսակցության դրությունը: Իհարկե՝ նա շատ բան զարդարեց, բայց նույնիսկ նրա խոսքերից դուրս է գալիս, վոր առհասարակ սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, իսկապես, գոյություն չունի:

— Մենք նրան կկատմակերպե՞նք,— բացականչեց Սեկերեչը:— Միայն հույս դիր վրաս— մենք նրան կկատմակերպե՞նք: Ցեմ նա ուրախ ու բարձր ծիծաղեց:

ԱԶԱՏՎԱԾ ՅԵՐԿԻՐԸ

Աշշալույսին Պետրոսը նստած դնացք, և Մունկաչը դեռ նո՛ր, նո՛ր եր զարթնում, յերբ նա արդեն քայլում եր յերկաթուղու կայարանից Զբինի փողոցով, ուղղվելով դեպի գլխավոր հրապարակը: «Ասող» հյուրանոցի համարը աստիճ տաքացրած եր վառարանով: Պետրոսը արագ լվացվեց և դուրս յեկավ՝ քաղաքը տեսնելու:

Արդեն ձյունը հալվել եր, խոնավ եր: Ցեխոտ մայթերով փողոցները համարյա անմարդ եյին: Պետրոսին պատահեցին յերկույել ուկրաինացի գյուղացիներ՝ ծանր մուշտակներ հագած, մի քանի հրյա՝ լապտերդակներ հագած, որոնք խորհրդավոր կերպով բան եյին փոխանակում իրարու, և գիշերապահի պահակախումբը: Ոտնաթմբները բաց եյին, բայց թվում եր, թե մարդիկ խոսքի եյին յեկել այդ որը վոչինչ չգնելու— ժողովուրդ վոչ մի տեղ չեր յերևում: Ուստի ավելի աստիճ զարմացրեց Պետրոսին այն արտասովոր կենդանությունը, որ կար քաղաքային տան առաջի հրապարակում. խմբակներ ճմճմացող, ձեռքերով շարժումներ անող հրյանների, որոնք հագած եյին լապտերդակներ և թավշյա մորթեպոլորք գդակներ:

— Ի՞նչ և պատահել այստեղ,— հարցրեց Պետրոսը հրյաններից մեկին:

— Հարյուր տասներկու,—հուզված չչնջաց մարդը:

— Ինչ բան:

— Ճիշտ և, ճիշտ... Վերջին տեղեկությունը Յուրիխից... Դոլլարը—հարյուս տասներկու, ֆունտը—հիգհարյուր տասնուհյոթը:

Պետրոսը չուռ յեկավ, որ հեռանա, բայց հետո միտքը փոխեց, կոբեց—անցավ հրապարակը՛և յերկաթուղու թումբի կողմը դնաց: Յերկաթուղու գծի մյուս կողմում սևին եյին տալիս դաշտեր, տեղ-տեղ յերևում եյին կիսահալ ձյունի կեղտոտագորշ բծեր:

Յերկաթուղու գծի և խճուղու միջև, ավելի սրակաս, քան կես ժամում անցնելու տարածություն, մենավոր բլրի լրա յերևում եր մի դղյակ՝ Ռակոզի տոհմական դղյակը:

Գավառակալը Պետրոսին ընդունեց ժամի տասին: Նա նրան սպասում եր:

— Մենք արդեն ամեն բան գիտենք,— հայտնեց նա դոհ ժպիտով:

Գավառակալը մի ամրակազմ, խարտյաշ մարդ եր, վայելուչ հագված, աշխույժ մարդ եր: Վեր դնացած քիմի վրա կպել եր յեղջյուրե շրջանակով ակնոցը: Պետրոսի հետ խոսելիս՝ նա իր մեծ, գորշագույն—կանաչ աչքերով քննողաբար և մի քիչ անվստահորեն անաղում եր նրա դեմքը և զգեստը: Պետրոսի գալուն նա այնպես ուրախացավ, ասես հին մտերմին տեսած լիներ,— հենց այդպես եյ արտահայտեց իր միտքը: Ցեվ նույնիսկ արտարաց խոսակցության ժամանակ, որ ուրախ և վոչ այնքան Պետրոսի գալուն, որքան այն բանին, որ նա սոցիալ դեմոկրատ և:

— Ժամանակ և, վաղուց ժամանակ և... Վերջապես կկպչենք գործի: Ցես ասում եմ «կկպչենք», մենք կկպչենք, որովհետև, թող հայտնի լինի ձեզ, իմ ջահել բարեկամ, որ յես եյ սոցիալ դեմոկրատ եմ: Այո, այո, դեռ հին ժամանակների սոցիալ դեմոկրատ: Մինչպատերազմյան պատմական ապրանք, հի-հի-հի՛: Կնչանակե՝ դուք ուզում եք միասին կազմել: Լավ, շատ լավ: Հաջորդ կիրակի որը: Լա՞վ: Մինչև միասինը մենք, հնչանակե, դեռ ամբողջ տասնամեկ ո՞ր ունենք... Հիանալի՛: Կարող եք հանգիստ լինել, դուք ժամանակ չեմ կորցնի, վոչ: Առաջուց կարող եմ խոստանալ, որ դավառակալի վարչության բոլոր ծառայողները—հիսուներկու հոգի— այո, բոլոր հիսուներկուն, ինչպես մի հոգի, կմտնեն սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության մեջ: Ցերկաթե Ֆոնդ՝ այսպես ասած: Ինչպե՞ս յերջանիկ պետք է լինեք դուք, Քանկադի՛ն ընկեր: Ինչպե՞ս յերջանիկ և այժմյան սերունդը: Այո՛ն, ամեն բան դուք պատրա՛ստ եք ստանում: Հիսուներկու մարդ մի անգամի՛ց: Տե՛ր աստված, մի մտածես, ինչքան մեզ ժամանակին պետք եր լինում աշխատել, որ դրավեյինք հիսուներկո՛ւ մարդ... Խնդրում եմ ձեզ՝ ընկեր մայորի առաջ իմ ամենաանկեղծ հարգանքի հավատիքը վկայել: Հայտնեցեք նրան, որ յես ամեն, ամեն բան ինքս կպատրաստեմ...

Փողոցներում մարդիկ չատացել եյին: Ավելի հաճախ պատահում եյին սպաներ:

***

Ճաշից հետո Պետրոսը, ինչպես Սեկերեչը պատվիրել եր, համարյա վոչ մի տեղ դուրս չեկավ: Ժամի յերեքին զարկին նրա դուռը:

— Մտեք:

— Ընկեր կոմա՞ն եք:

— Այո՛:

— Ինձ կոչում են Միկլոշ Լակատոս: Ընկեր, ձեզ, յերևի նախազգուշացրին...

Ներս մտնողի արտաքինը ճշտությամբ համապատասխանում եր Սեկերեչի նկարագրության, բայց Պետրոսին թվաց, որ նա նրան արդեն հանդիպել և մի տեղում: Ցեվ որքան չատ եր նայում

նրա վրա, այնքան ավելի զորեղանում էր այդ համոզմունքը: Այցելուն էլ իր զարմացած հայացքը հառել էր նրա վրա: Նա տատանվում էր, բայց ամենաանհանգիստ առաջինը նա՛ ճանաչեց Պետրոսին:

— Ընկեր,— բացականչեց նա՝ հուզված,— չե՞ք ճանաչում:

Այդ ժամանակ Պետրոսը ճանաչեց ուսանող-կապրալին, որը կես տարի առաջ իրան և Անտալֆին ուղեկցել է Բիմատոմբատի բանտից Կոչկայի բանտը:

— Ցնծե՛ք դուք այն ժամանակ չխրատեցիք մեզ դեն նետել մեր փաստաթղթերը,— ասաց նա, սեղմելով Լակատայի ձեռքը,— կես այժմ այստեղ չէիք լինի:

— Իսկ մյուս ընկերը, մեծ քթովը, որը Մոսկվայում էր կռվել, ո՞ւր է նա հիմա:

Պետրոսը վհատվելով պատասխանեց մի անհասկանալի բան: Լակատան նորից չհարցրեց: Մտանահգելով չարժման՝ նա չուտով տեղորեկ էր այն բանին, որ նման հարցերը կրկնել կարելի չէ:

Պետրոսը մանրամասն կերպով ծանոթացրեց նրան Սեկերեչի ծրագրին:—Ցնա դեռ այն ժամանակ արտահայտում էի իմ վախը, որ ժողովուրդն այդ բանը չի հասկանա:

— Ի՞նչը չի հասկանա:

— Այն, որ կեղծ սոցիալ դեմոկրատները հանցավոր են հունգարական դիկտատուրայի խորտակման գործում, ել ինչպե՞ս ենք մենք հիմա առում. կեղծ ուզում եք նոր դիկտատուրա, մտեք սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ: Ո՞վ այդ բանը կհասկանա:

Այդ միակ հնարավորությունն է մասսաների մեջ մտնելու և նրանց կազմակերպելու համար,—կրկնեց Պետրոսը՝ Սեկերեչի հիմքը:

— Գուցե այդ այդպե՛ս է, չատ կարելի չե: Բայց ժողովուրդը կերրեք չի հասկանա, թե ինչու ձախ ականջը պետք է աջ ձեռքով քորել: Մեր ժողովուրդը հասկանում է միայն պարզ խոսքեր: Ծեծիր նրան,— այդ նա հասկանում է: Կոզոպաիր նրան,— նույնպես հասկանալի չե: Բայց այդ բանը...

Պետրոսը սկսեց դարդացնել նրա առաջ իր մտքերը, բայց նրան ամենևին չաջողվեց համոզել ուսանողին, որ Սեկերեչի ծրագիրը միակ հնարավորն է:

— Մեր ժողովուրդը սիրում է պարզ խոսքեր,— կրկնում էր Լակատան:

Պետրոսը հաղորդեց նրան պետք հրահանգները, և Լակատան խոստացավ հանձնել նրանց՝ ուր հարկն է:

— Ի՞նչպես եք կարծում, կկարողանա՞նք մենք կազմակերպել ամեն ինչ այնպես, որ փորձանքի մեջ չընկնենք: Կլռե՞ն մերոնք: Լակատան պատասխանեց մի չարժումով, որը ոչ թե միայն հանգստացնող էր, այլև զարմա՞նք արտահայտող, թե՝ ի՞նչպես կարելի չե կասկածել դրա մասին:

— Ո՞ւր եք աշխատում,— հարցրեց Պետրոսը, չերը Լակատան պատրաստվում էր հեռանալ:

— Սվալ՝յավայում:

— Առաջի սղոցարանո՞ւմ:

— Ոչ, քիմիական գործարանի վերակազմման գործում: Աչխատանքին հետևում են դինամորներ և ապաներ:

***

Բերեգասում՝ հենց յերկաթուղու կայարանին կից Կոնտի ապրյուսի գործարանն է կանգնած: Նրա յերեք ծխնելույզները լուռ նայում են պարզ, կապուտակ յերկնքին, որը մի կիլոմետր հեռու՝ հարավակողմում՝ արդեն հունգարական հարթության վերևն է տարածվում: Գործարանը չի բանում, և կյանքը նկատում է միայն նրա գրասենյակում—այնտեղ սահմանի պահպանության գլխավորն է կենտում: Կայարանում խիստ վերատուգում է սահմանված: Ամեն մի քայլի՝ դինամորներ, ժանդարմներ: Այն փոդոցը, որը տանում է դեպի քաղաքի կենտրոնը:— Անդրաչեի՝ ասֆալտած փոդոցը՝ Բերեգասի պարծանքը— բոլորովին մեռած է:

Միայն փոդոցը ճնշում է: Պետրոսը գոնե քայլերով գնում է այդ փոդոցով: Գուցե՝ նույնիսկ մոչ իր փոդոցի յուրքյուրը, այլ մանկության հիշողություններն են նրան ճնշում: Այստեղ, կայարանապետի տանը, նա լողնոց էր դրել և վեց ժամ աչխատանքի համար առացել էր քսան կրեյցեր և կարագ քսած հացի մի կտոր: Այ այնտեղ ապրում էր Նեմեչը, իսկ մոտը կայարանապետի տան առանցն է:

Նախկին տեսքն է պահպանել նաև կոմիտետական վարչության չենքը: Միայն դարպասի մոտ հունգարական հուսարի փոխարեն հսկում է չեխ լեգեոները՝ իտալական համազգեստ հագած:

Գավառակալը մի բարձրահասակ, բարեկազմ մարդ է՝ փոքրիկ ընչացքով և դեղեցիկ, խաժ աչքերով: Նրա գլխավերևում մագերը

նոր են, իսկ ընդհանրապես նա առանձնապես ջահել է և դիմա-
դիման տեսք ունի: Ներա շարժումները՝ արագ են և ճարպիկ՝ ա-
խուժ: Ոտաելիս՝ նա մի ոտքին մերթ աջքին է դնում, մերթ
խաղում է նրա հետ, սև, մետաքսե-թելից բռնած: Նա նստած է
նույն առանձնատնյակում, ուր Պետրոսը մի տարի և երեք ամիս
առաջ բանակցում էր կառավարչական կոմիսար Նեմիչի հետ:
Գուցե բազկաթոռն էլ, վորի վրա նա նստած է, նույնն է:

Գավառակալը քաղաքավարի չի, բայց շատ հեռու չի աշնքան
սիրալիր լինելուց, վորքան նրա՝ Մոսկվայի ընկերն է:

— Հըմ...— ասում է նա համբերությամբ լսելով Պետրոսի
փաստերը, վորոնց նա ներկայացրեց վատ դերմանեներեն:— Վատն-
դավոր խաղ է...

—Խաղ չե և վտանգավոր չէ:

— Վոր այդ խաղ չէ, այդ ես դեռ ընդունում եմ: Բայց ինչ
վերաբերում է վտանգին... վախել հարկավոր եմ համարում դի-
մել Պարիի իմաստության, բայց ես էլ, պարոն, այդ դործե-
լում նորամարժ չեմ: Ձես դիտեմ, թե ինչ բան է քաղաքականու-
թյունը— ես ծառայել եմ կայսերական զորքում և կերևնակու ժա-
մանակներում նույնպես չեմ նստել՝ ձեռքերս ծալած: Ընդամենը
ես տարի չի, վոր ես Ռուսաստանից եմ տեկել: Հավատացեք, ինձ
հայտնի չի, թե ինչ բան է բանվորական չարժումը: Իսկի չեմ կաս-
կածում, վոր դուք՝ սոցիալ դեմոկրատները, անձնվեր կոմմունակից-
ներ եք դեմոկրատական հանրապետության: Բայց ինձ արդեն դեպք
չեղել է աշխատելու մենշևիկների հետ՝ ռուս սոցիալ դեմոկրատ-
ների հետ: Դրանք ագնիվ, խելոք, վստահելի մարդիկ էլին, վորոնք
անկեղծ կերպով ատում էլին խորհրդային իշխանությունը,— իսկ
ի՞նչ չահ կար նրանց ատելությունից: «Միայն դեմոկրատիայով
կարելի չե կռվել բոլշևիկների դեմ», կրկնում էլին նրանք, հար-
յուրներով, հազարներով դրավելով բանվորներին: Իսկ ի՞նչ ստաց-
վեց: Բանվորներն որինական կերպով, մեր աչքերի առաջ, համար-
յա մեր ոգնությամբ կազմակերպվեցին, իսկ յերբ զգացին իրանց
ուժը, ուղղակի քշեցին իրանց գեկավարներին: Սրանց չոգնեցին
բոլոր իրանց բարի դիտավորությունները: Դեհ, մնացյալը դուք
դիտեք... Սոցիալ դեմոկրատիայից ավելի հիմար, ավելի արիա-
ծախնդիր բան չկա,— այս բանը ձեզ ասում եմ ես՝ Բերեզաոսի
չրջանի գավառակալս: Ի՞նչ կարող ես անել, բանվորը միշտ բան-
վոր է մնում: Դո՞ւք էլ բանվոր եք: Ներեցեք, այդ դեպքում...

Ձես, ասենք, մի վատ բան չասի նրանց մասին... Մի խոսքով,
չատ ափսոսում եմ, բայց այստեղ, սահմանին անմիջապես մոտիկ,
ես միտինգ թույլ տալ չեմ կարող:

— Գեներալ Պարին...

— Ձիլճե՛նք, վոզորմած տեր: Ձես թույլ չեմ տալիս:

— Մենք կբողոքենք ձեր վճռի դեմ:

— Խնդրեմ, այդ ձեր իրավունքն է: Բայց յեթե դուք իսկական
հանրապետականներ եք, հավիտ թե կբողոքեք: Դուք հաստատում
եք, վոր միտինգը լավագույն դենքն է հունդարական իրերեվնոտայի
դեմ: Իսկ ես ձեզ հայտնում եմ— և պատրաստ եմ հաստատել այդ
սպայական խոսքով—վոր իրերեվնոտայի դեմ ժանդարմների մի ջո-
կատամասն՝ անհամեմատ ավելի զորեղ դենք է, քան ամեն տեսակ
միտինգ: Ո՛ր, ժանդարմնե՛րը.— նրանց վստահել կարելի չի: Բայց
ձեզ... Ներեցեք, ես նպատակ չունեմ ձեզ վիրավորելու, բայց...
Այ դուք, որինակ, ինձ չդիտեք: Վո՞րտեղից դուք կարող եք ի-
մանալ, վոր ես իսկական հասարակապետական եմ և վոչ թե
զաղանի միապետական: Ձես էլ ձեզ չդիտեմ: Ավելի ճիշտ՝ ձեր մա-
սին դիտեմ այն, վոր միայն ութ ամիս առաջ դուք դեռ գործող
բոլշևիկ էլիք: Այժմ ինքներդ դատեցեք· հասարակապետության
լավ ծառա կլինելի ես, յեթե դեմոկրատիայի պաշտպանությունը
ձեզ հանձնելի:

«Հիմար մարդ չե,— մտածեց Պետրոսը:— Սատկե՛ր նա»:

— Այդ դեպքում, պարոն գավառակալ,— ասաց նա՝ վեր կենա-
լով,— ես ձեր վճռի դեմ բողոքում եմ: Բարեհաճեցեք հաստատել
այդ բանն ինձ գրավոր կերպով:

— Ձեմ բարեհաճի, մի հուսաք,— պատասխանեց գավառակա-
լը, նույնպես վեր կենալով, և մեկից ավելացրեց.— Դուք յի՞րը
եք մեկնում:

— Ի հարկե՝ այսօր:

— Գնացքը մեկնում է յերեկվա ժամը չորսին: Իսկ մինչև այդ
դուք ի՞նչ եք մտադիր անելու:

— Ի՞նչ է, ես ձերբակալվա՞ծ եմ:

— Վոչ, բայց ես չեմի կամենա՝ մինչև յերեկվա չորս ժամը
պահել ձեզ վոստիկանության հսկողության տակ:

— Ձես ուղում եմ տեսնվել մորս հետ:

— Լավ:

Գավառակալը գլխով արավ և մոտացավ մեկնել ձեռքը:

***

Դարպասի մոտ Պետրոսը քիչ մնաց զարնվեր մի բարձրահասակ, չքնղ պարոնի, որն ուղղվում էր դեպի կոմիտետական վարչությունը:

— Պետրո՞ս:

Պետրոսը մեկից նույնիսկ չճանաչեց Անտալֆիին: Սա պինդ դրկեց նրան:

— Դու ինչպե՞ս ես այստեղ ընկար — դրեթե միաժամանակ կարցրին նրանք յերկուսն էլ:

— Գիտե՞ս ինչ...

Զգիանալով, թե ինչ ասե, Պետրոսը միայն թոթվում էր ուսերը:

Անտալֆին նայեց ժամացույցին:

— Այժմ յես՝ դժբախտաբար՝ մի վայրկյան ժամանակ չունեմ: Ինձ սպասում է դավատակալը, ուշանալ չեմ կարող: Հիմա մամի տանտերիուհից անցել է տասը րոպե, ուղիղ ժամը մեկին կհանդիպենք «Եմկե» կաֆեյում: Լա՞վ:

— Լավ, կգամ,— քիչ անվստահ պատասխանեց Պետրոսը:

«Սա ինչպե՞ս է այստեղ ընկել» հարցնում էր նա ինքն իրան: Սակայն այդ բանի համար շատ էլ յերկար ղուխթ չցավացրեց. գավառակալի մերժումը մեծ հարվածե էր: Գլուխը կախած՝ նա դանդաղ քայլեց իրան լավ ծանոթ ճանապարհով— վերկելի կրա ձգված կաֆուրջով, հետո դեպի ձախ մինչև ունիատական յեկեղեցին, իսկ ապա՝ դեպի ալջ:

Նա շատ էր ուրախանում, որ չուռով պիտի տեսնվեր մոր հետ, բայց նրա ուրախությանը միանում էր մի թեթև վախ:

Տանուհինդ ամիս է, որ նա չէ տեսել մորը, չէ ստացել նրանից տեղեկություն և ինքը չէ գրել վոչ մի անգամ: Իսկ ինչպիսի՛ տանուհինդ ամիսներ եյին դրանք...

Քեռու բակի դարպասը դոց է: Պետք է յերկար ժամանակ խրխիել, մինչև վոր բանան: Ցերևում է մի պինդոր: Պետրոսը դեմատներեն լեզվով հարցնում է, այստե՞ղ է արդյոք իր քեռին: Չինովորը բութ հայացքով նայում է նրա վրա և վոչինչ չէ պատասխանում: Պետրոսը կրկնում է իր հարցը, բայց պինդորը չշրկացնելով վակում է դարպասը: Պետրոսը՝ չվարած՝ չարունակում է կանգնած մնալ փողոցում:

Հարևան տան մեջ ապրում է հրյա-հրուչակավաճառ Գարոտ-

մանը: Նրա տան կխաբաց վեղկերի արանքից՝ մեկը Պետրոսին ձեռքով է անում: Մոտենալով՝ նա ճանաչում է լուսամուտի առաջ կանգնած կնոջը՝ Գարամանին, վորը հաճախ հյուրասիրում էր նրան մանկության որերին կարկանդակի կտորով:

Պետրոսը զուր է ցույց տալիս նշաններով, վոր ուզում է մտնել—լուսամուտը չի բացվում: Պառավն ինչ վոր բան է ասում: Նրա խոսքերը չեն լսվում, բայց յերբ նա մի քանի անգամ կրկնում է վորևե խոսք, Պետրոսը հասկանում է շրթունքների շարժումներից:

— Իլավա... Իլավա...

— Քեռի՞ս:

Պառավը գլխով է անում:

— Ինչի՞ համար:

— Բոլշևի՛կ է:

— Քեռի՞ս,— զարմանում է Պետրոսը:

Գլխի ճկումով հաստատվում է այդ (գլխի դրական շարժում):

Պետրոսը ցույց է տալիս գլխի շարժումով, վոր ուզում է տունը մտնել:

— Վոչ, վոչ,— ճոճում է պառավը գլուխը:

— Իսկ մա՞յրս: Ո՞ւր է մայրս:

Մեծ դժվարությամբ նրան աջողվում է հասկանալ պատասխանը.

— Շոլոմ Բլյաուի մոտ է:

— Գինեվաճառի՞ն:

— Այո՛:

Շոլոմ Բլյաուի տունը գտնվում է Անդրաշի փողոցում. նրա դարպասը բոլորովին բաց է. բակից հենց այդ պահին դուրս են յելնում յերկու փուրգոն՝ զարեջրով: Սալահատակը դղրդում է մեկ լեներուրդյան հսկայական, ծանրատար ձիերի ծանր, մազոտ ամբակների տակ: Ցերը դարպասը փակվում է յերկրորդ փուրգոնի յետևից, Պետրոսն արդեն բակումն է:

Տակառներ, դատարկ կիսատակառ, լարդված աղյուսի մի մեծ կույտ:

— Ո՞ւր,— հարցնում է նրան մի կաղ ծերունի, վորը՝ թվում է՝ տալլատան պիտի լինի:

Պետրոսն ասում է, վոր վինատում է մորը:

Ծերունին անկարեկից նայում է նրա վրա: Վոչ մի մխոք չի հենզանացնում նրա կարմիր կոպերով մութ աչքերը:

Պետրոսը կրկնում է հարցը, և ծերունին՝ ի պատասխան դլխով անելով՝ մտնում է տուն: Պետրոսը մնում է մենակ: Ժամանակն անցնում է: Հանկարծ Պետրոսին սիրում է մի անխմանալի՝ յերեխայական վախ: Նա թափով վերցնում է մի աղյուս և սեղմում է իրան իրրև միակ հուսալի դենք: Վերջապես՝ խելքի դալով՝ դեն է ձգում այն:

— Պետրո՛ս... Պետրո՛ս...

Փոքրիկ, կենճռոտած պառավը լալիս է նրա կրծքին: Պետրոսը քնքուշ գրկում է նրան, համբուրում և հուզված՝ խոսքեր է փընտռում:

«Ծերացել է քան տարով», մտածում է նա, և նրա աչքերը լցվում են արցունքներով:

Պառավը կատարում է ձեռքերը, լաց է լինում և գլուխը մի կողմ դարձնում, տես չէր վատահանում նայել վորդու վրա:

Ծոհանոցում Պետրոսը սկսում է պատմել իր մասին. մի քիչ չփոթելով խոսում է անցած տարվա անցքերի մասին, այն բանի մասին, թե ի՛նչ է արել, ինչպե՛ս է ապրել, ինչպես է այժմ ապրում—խոսում է, խոսում և լռում է միայն այն ժամանակ, յերբ նկատում է, վոր մայրն այլևս չի լսում նրան:

— Նրան ժանդարմները ձերբակալեցին, տարան...—վնթիկնթում է պատավը:

Պետրոսին սկսում է թվալ, վոր նրա սիրտը խփում և հենց կոկորդի մի անդում:

— Ո՞ւմ ձերբակալեցին.— հարցնում է Պետրոսը:

— Պարոն Բլյատուին, բարի պարոն Բլյատուին: Դեչերը յեկան նրա մոտ և վերցրին:

Պետրոսը չփոթված նայում է նրա վրա: Տասներկու—տասներեք տարեկան ծատատող աղջկա հայտնվելը նրան չփոթություն դուրս է բերում:

— Ձե՞ք հանաչում,— հարցնում է աղջիկը:

Պետրոսը դարմացած նայում է նրա վրա: Ծաժգուն աչքեր, կարճլիկ՝ խարտյաշ մազերի հյուս, անհամարձակ ժպիտ թարմ շրթունքներին: Պետրոսը վոչինչ չէր կարողանում հիշել: Աղջիկը ինչ վոր բան է թոթովում, հիշում Նամեն ավանը: Պետրոսն ուսերն է թոթվում և ցրված նայում է նրա՝ ցրտից կարմրած քորիկ

վտաքերին: Վորպեսզի վերջ դնե նրա բացատրություններին, նա ձևացնում է, իբրև թե հիշել է.

— Իհարկե, իհարկե... ճի՞շտ է, վոր պարոն Բլյատուին տարան ժանդարմները:

— Տարան,— վախկոտ չչունջով պատասխանում է աղջիկը:

— Բայց ի՞նչ պատճառով.— զարմանում է Պետրոսը:

— Նա, ասում են, աշխատում եր Նորտիի համար:

— Նա, ասում է,ն աշխատում եր Նորտիի համար:

— Վոչ, նա դրագրություն ուներ Լենինի հետ: Ցեվ Բելա Կունի հետ:

— Չի կարող պատահել:

Աղջիկը դնում է Պետրոսի առաջ մի տխուր ապուր: Պետրոսը ձեքենայաբար բերանն է տանում գդալ գդալի յետևից:

Վերջացնելով ուտելը, նա վեր է կենում: Մայրը հանում է ջրջապդեստի գրպանից իր մեծ, քառանկյունի վանդակավոր թաշկինակը: Նրա մի ծայրը հանդուցյց ունի: Դողացող ձեռքերով նա քակում է հանդուցյցը և, մնաս բարևի ժամանակ, Պետրոսի ձեռքն և դնում թղթե կրոնան:

— Վաղո՞ւց են ձերբակալել քեռուս.— հարցնում է Պետրոսն աղջկան, վորը դուրս է յեկել նրան ճամբելու մինչև դարպաս:

— Վաղուց, դեռ աշնանը... Ցես այն ժամանակ այնտեղ եյի ծառայում: Նրան մատնեց ամազ վարժեկը՝ պարոն Պետրուչեվիչը: Այժմ պարոն Պետրուչեվիչն աշխատում է վոստիկանատանը:

— Այդպես, այդպես... Իսկ տան մեջ ո՞վ է ապրում:

— Լեգեոներները:

«Այդ, այդ ել վերջացրինք...» մտածում է Պետրոսը, յերբ նրա յետևե չրխկոցով փակվում է դարպասը:

Նա սկսեց անհետաքրքիր թափառել դատարկ փողոցներում: Նրա յետևից՝ քան քայլ հեռավորության վրա, առանց հետ մնալու քայլում եր մի մարդ՝ պինվորականի կեցվածքով, վոտքից գլուխ սև հագված: Հենց Պետրոսը կանգ եր առնում, նա ել եր կանգ առնում, իսկ յերբ Պետրոսը առաջ եր շարժվում, նա ել նույնպես շարունակում եր իր ճանապարհը:

Պետրոսն ուղղվեց դեպի յերկաթուղու կայարանը և սկսեց մտն գալ այնտեղ պինվորների մեջ: Յերկու ժամվա ընթացքում, վոր մնում եր մինչև գնացքի մեկնելը, չորս անգամ ստուգեցին նրա քղթերը:

Ցերբ նա արդեն վոտքը դրել եր վագոնի աստիճանիկի վրա, յեռանից մեկն ամուր գարկեց նրա ուսին:

— Խաբեցիր ինձ,—ասաց Անատոլին դառնությամբ:

— Ախ, հավատա...

Պետրոսը փնտռում եր մի բացատրություն:

— Բերեք իմ պատուսակն այստեղ՝ յերրորդ կարգը,— պատվիրեց Անատոլին բեռնակրին և նստեց Պետրոսի կողքին:

Ներանք կուպեյում մենակ եյին:

— Խաբեցիր ինձ,— ասաց Անատոլին դառնությամբ:

Դու իսկի քո ընկերներից ավելի լավ չես: Նույնիսկ չնչին բանի մեջ ձեզ վստահել չի կարելի:

Պետրոսն սկսեց ստել անինա, պատմեց, թե ինչպես և ապրում, ինչ և անում, ինչ ծրագիրներ ունի: Ստեց, ստեց առանց կմկմոցի: Անատոլին՝ աչքերը մեծ-մեծ բաց արած՝ նայում եր վրան: Սկզբում նա լսում եր լուռ, հետո փայլող դեմքով, սկսեց նրա հետ համաձայնվել:

— Իհարկե, իհարկե... Շա՛տ լավ: Այո՛, այո՛:

— Իսկ դո՞ւ,— հարցրեց Պետրոսը:

— Ես՞: Ես այժմ եկ, հասկանալի յե, ճանապարհորդում եմ համաշխարհային հեղափոխության գործերով:

— Ի՞նչ ես դու անում:

— Մատակարարում եմ զենքեր, ռումբեր և վինվորական պիտույքներ լեհական բանակի համար,— չհուսնջով արտասանեց Անատոլին:

Պետրոսը զարմացած նայեց նրա վրա: Նա նույնիսկ ակամա հեռու քաշվեց նրանից, նրա մոքումն եկ չեր անցնում, վոր Անատոլին կարող և այդքան ստորանալ: Անատոլին փայլում եր:

— Զարմացա՞ծ ես: Հա՞... Նույնիսկ՝ յերևի՝ զատապարտում ես ինձ: Ինչ արած, այդպե՛ս եք դուք: Աանենք՝ հույս ունեմ՝ դու այլևս այն հիմար հայացքին հավատարիմ չե՞ս մնացել, վոր հաշխարհային հեղափոխության գործին կարելի յե ծառայել միայն մի կերպ և միայն վատ: Այո, այն, ինչ վոր ես հիմա անում եմ, այդ անսովոր բան և, այդ նո՛ր և, այդ հանճարե՛ղ և: Իսկ համաշխարհային հեղափոխության ես դրանով բերում եմ, հավատա՛, ավելի՛ ոգուտ, քան թե ամբողջ հունգարական կոմունիստական գովելի կուսակցությունն եր ամբողջ կազմով: Այո, կրկնում

եմ, յես գնում եմ մատակարարում լեհական բանակին... Բայց ինչպե՞ս գնամ:

Անատոլին հանեց թաշկինակը և սրբեց ճակատի քրտինքը: Թաշկինակից հափրուկի սաստիկ հոտ եր գալիս:

— Սոսկալի չոգ և: Ձմեռը չեյին վառում, ա՛յժմ վառում են: Ցնվ ինչպե՞ս գնամ հոտ... Դեհ, չհղվե՛մ: Այդպես ուրեմն՝ յես գնում եմ մատակարարում լեհական բանակին: Բայց ինչպե՞ս գնամ: Յես մատակարարում եմ վինվորական պիտույքներ: Բայց ինչպե՞ս: Յես արդեն ասի— յես ծառայում եմ համաշխարհային հեղափոխության գործին— ծառայում եմ, ինչպես կարող եմ, իմ հասկացողության բոլոր ուժերով, իմ բոլոր ընդունակություններով: Իսկ այդ մի բան կնշանակե՞: Ինձ վոչ վխլսոնը, վոչ կլեմանսոն չեն խաբի— յես նրանց համար բելա Կունը չեմ... Ուրեմն՝ լեհական բանակը ծառայում և հակահեղափոխության նպատակներին: Այդ ինստ և: Այդպես չի՞, պարոն լեհեր: Դեհ, Անատոլին կհոգա՛ ձեր մասին: Ցես նրանց մատակարարում եմ զենքեր, ռումբեր, վինվորական պիտույքներ: Փուչ զենքեր, անպետք ռումբեր, փտած կոշիկներ, վորոնց կարելի յե կրել յերկու որից վո՛չ ավելի: Դեհ, ուրե՞մն...

— Ցես քեզ՝ ինչ վոր կատարելապես չեմ հասկանում:

— Չե՞ս հասկանում, կամ՝ գուցե՝ չե՞ս ուզում հասկանալ:

Անատոլին ակնդետ նայեց Պետրոսի ուղիղ աչքերի մեջ:

— Լսիր, Պետրոս, յես քեզ վստահանում եմ,— սկսեց նա հանդիսավոր կերպով, արտասանելով խոսքերը համարյա վանկ-վանկ, և հետո չարունակեց, ցածացնելով ձայնը՝ չլսնջալու չափով.— վոչ մի բոպե մի մոռանար, վոր իմ գաղտնիքը համաշխարհային հեղափոխության գաղտնիք և, հետևաբար...

Նա խորհրդավոր կերպով մատը շրթունքներին դրեց և ավելի մոտեցավ Պետրոսին: Մի քանի վայրկյան նա խորհում եր:

— Այդպես ուրեմն,— խոսեց նա,— դու, պարզ բան և, գիտես, վոր չկան ուրիշ այնպիսի խաբեբաներ, ինչպես վինվորական մատակարարողները: Նույնիսկ մնալով ազնիվ մարդիկ՝ նրանք կարող եյին չահել ահագին փող, բայց հարցի այդպիսի վճիռ այդ արիականների նույնիսկ մտքո՛վ չէր անցնի: Ամեն մեկը յերազում եր հարստանալ միանգամից, մի չարաթվա մեջ միլիոնատե՛ր դառնալ: Սկզբում նրանք գոհանում եյին ներանով, վոր մատակարարում եյին վատ տեսակի նյութեր, քան թե պայմանավորված եր: Իսկ

յերբ նրանք համոզվեցին, վոր կաշառքի ոգնությամբ այդ գործն հաջողվում է, քիչ-քիչ լրացան ա՛յն ստիճան, վոր սկսեցին մատակարարել թղթե ներբաններով կոշիկներ, թնդանոթներ, վորոնք չեյին արձակում, այլ պայթում եյին, ուժանակ, վորը չեր պայթում և այլն: Ուր ել չլիներ, խակ Ամատրիայում իսկապես կարելի յեր, դողանալ հին, լա՛վ ժամանակում: Բայց այդ սրիկաները նույն իսկ ամեն տեսակ ավատրիական չափից ավելի անցան: Ավատրիացիներին— ինչու մեղքը ծածկել— մի քանի անգամ կարդին ձեծեցին, բայց վորովհետև ավատրիական գեներալները՝ չնայած իրանց ամբողջ հիմարության՝ խելք ունեցան հանցանքն ուրիշների վրա ձգելու, ուստի անոպատելի կերպով բռնվեցին բանակին մատակարարող մի տասնյակ մարդիկ: Ներանց բանտ դրին տա՛ր, տասնութ հինգ տարով ամեն մեկին—այն ժամանակներում այդպիսի դատավճիռները հազվադյուտ բան չեյին: Իսկ թղթե ներբաններով կոշիկները, թեպետև չինած ուժանակը և կավե կոնսերվները գրավեցին: Մի հրաշքով— տեղնուտեղը գեներալին անցնելի յես, յերեք տարի գործի յեռևում չեր թաղնվում մի ճարպիկ գործիչ,— մի հրաշքով ամբողջ այդ գրավված բարիքը չոչնչացրին, այլ՝ ընդհակառակը՝ խնամքով պահեցին վիեննայի մոտ: Հենց մինչև պատերազմի վերջը լանդշտուրմիստները պահպանում եյին այդ տարօրինակ պահեստարանը: Մնացածն արդեն դժվար չե հասկանալ: Անատոլիի վոչ թե միայն քիմն ե յերկայն, այլև հոտառությունը, փառք աստուծո, վատ չե: Նա պահեստարանը գտավ, նայեց մեջի յեղածը, գնեց եժան գնով և այժմ ամբողջ այդ փուչ բանը մատակարարում ե լեհական բանակին: Բանի-բանի գեներալներ և յենթասպաներ նրա միջոցով գլպտաններն պետք ե լցնեն: Իսկ Լենինը կարող ե հանգիստ քնել: Ծեր Անատոլին կհոգա այդ բանի մասին, վոր լեհական բանակը կարմիրներին մեծ վնաս չպատճառե՛: Բայց, սիրելիս, այս լուրջ գործ ե, յես քեզ պինվրական գաղտնիք եմ վստահում:

— Իսկ դու կարծում ես՝ լեհերը կհարձակվեն Վորշուլդների վրա:

— Կարծո՞ւմ եմ... Գիտե՛մ: Վիեննայում՝ բորսայում և «Կաֆե Հաբսբուրգում» արդեն բոլոր ճնճղուկները են ճռվողում: Գրյունբերգերը՝ վեյսի անհրաժեշտը գրավ եր գալիս յեքեքը մեկին դեմ, վոր պատերազմը կիրճի դեռ մինչև մայիսի մեկը:

— Հետաքրքրական ե... Բայց ասա ինձ,— չարունակեց Պետրոսը կարճ լռությունից հետո, դեռևս բռնվելով ինչ-վոր հուզից,— մեկը քո աշխատանքի մասին գիտե՞:

— Դեհ, ինչպե՛ս չգիտենալ: Դու կարծում ես, թե յես այդպիսի գործի մեջ կմտնեմ անհատակա՞ն կարգով: Ջեմ ել մտածի այդպիսի բան անել: Իմ ծրագիրները գիտեն իմ ընկերը վեյսը, Գրյունբերգերը և յերկու՝ ավատրիական պաշտոնաթող սպա: Գիտեն նաև յերկու լեհ: Վախենալու բան չկա, վոր լեհերը դուրս կտան. նրանց համար իրանց գլուխն ավելի թանգ ե: Վեյսի վերաբերմամբ յես նույնպես հանգիստ եմ: Այ Գրյունբերգերը— սա իմ սրտովը չե, ուղիղն ասեմ: Առաջարկել՝ այսպիսի խոշոր գործում, չնչին գումարի գրազ կաֆեյում...

Եվ Պետրոսը վոչ մի կասկած չուներ:

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց նա:

— Մունկաչ: Մինչև Զատ ճամբաներս մեկ ե: Բայց ասա, խնդրեմ, սիրելիս, այս կողմերում մերոնցից մեկը կա՞: Յես հարցնում եմ նրա համար, վոր յերեք մեկին վող պետք ե... Հա՛, ի միջի այլոց, դու ինքդ կարիք չունե՞ս:

— Ամենևին,—չտապեց պատասխանել Պետրոսը:— Մերոնցից այստեղ եվ վոչ վոք չկա:

— Գիտես, մտերիմս, իսկապես՝ քո տեղն եվ չե այս: Թո՛ղ դու այդ հիմար սոցիալ-դեմոկրատիան և քարտուղա՛ր մտիր ինձ մոտ: Յես քեզ խոշոր մեծատուն կդարձնեմ: Ապահովացնում եմ քեզ ամիսը հարյուրհիսուն... դոլար, ի հարկե: Իսկ հետո, յերբ պատերազմն սկսվի, կստանաս կրկնակի: Կապ կպահես Վիեննայի, Ունգվարի, Բերեգասի և Մունկաչի միջև: Ջե՞ վոր դինվորական բեռները դնալու յեն Մունկաչ—Լավոչնե—Լվով գծով: Ուրեմն՝ եվի մի անգամ, սկզբում ոռճիկը հարյուրհիսուն դոլար: Հո՞ժ ես:

— Վոչ, ձեռք քաշի: Այդպիսի աշխատանքի համար յես պետքական չեմ:

— Ջնչին բան ե, կտովրես,— սկսեց համոզել նրան Անատոլին:

Բայց նրա ամբողջ պերճախոսությունը դուր կորավ—Պետրոսը հավատարիմ մնաց սոցիալ-դեմոկրատիային:

Ջաի կայարանում նրանց պետք յեղավ սպասել մի ավելորդ ժամ:

— Գնանք, նայենք սահմանը,— առաջարկեց Անատոլին:

— Գնանք:

Հունգարական սահմանը կայարանից հեռու չէր գրեթե մեկ ու կես կիլոմետր, բայց չէին անցել նրանք նույնիսկ հարյուր քայլ, չէր նրանց կանդնեցրին:

— Ո՞ւր:

Անտալֆին պատասխանի տեղ ներկայացրեց իր անցագիրը. նա ճանապարհորդում էր ֆրանսիական անցագրով:

Զեխ չինովնիկն կանդնեց խիստ ուղիղ և պահով ավելց:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿՅԱՆՔ

Արևի շողը վռնդեզոծում է Մարիայի աչ ացրը:

Բոժոչը՝ վոտքերը լայն տարածած՝ կանգնած է վառարանի առաջ: Կես ծխված սիգարն անդադար մարում է նրա բերնին, և նա, յուշկին լուցկու չեռից վառելով, մոռանում է կրակը կպցնել սիգարին: Ցերը լուցկին՝ մինչև վերջը վառվելով, այրում է նրա մատերը, նա ամբողջ ուժով նետում է վառարանը և չարունակում է կրծել սիգարի պաղ կտորը:

Պետրոսը դիմում է մերթ Մարիային, մերթ Բոժոչին:

— Անհրաժեշտ է, անպայման անհրաժեշտ է, և միևնույն ժամանակ կարուկ կերպով, դուրս գալ Բերեզասի դավաճակալի դեմ:

— Բա՛ց լուսամուտը, Մարիա: Ժամանակ է, իսկապես, դադարել վառելը:

— Ձե՞ վոր ինքդ վառեցիր:

Բոժոչը ձեռքով չարժում է անում, ցույց տալով, թե այդ նշանակություն չունի:

Մարան ողը խուժում է սենյակը:

— Այս հարցը,— նորից սկսում է Պետրոսը,— կարևոր է ամեն կոմիից: Նախ՝ պրինցիպիալ տեսակետից— գործը վերաբերում է դեմոկրատիային: Ինչ վերաբերում է գործնական նկատառումներին...

— Չի կարելի րիսկ անել, գործը կարող է վերջանալ պարտությամբ,—ընդհատում է նրան Բոժոչը:

— Պարտությա՞մբ,— գարմացած վեր է ձգում հոնքերը Պետրոսը:— Բայց մինչև այդ բանն առհասարակ կարելի՞ է: Դեմոկրատիական հանրապետություն... Առաջին նախարարը— սոցիալ-դեմոկրատ, ընկեր Տուսսարը...

— Սպասեցեք,— նորից ընդհատում է նրան Բոժոչը,— բանվորական չարժումը դուք, կարելի է, գիտեք ել, բայց բարձր քաղաքականությունից բան չեք հասկանում: Դուք աչքից բաց եք թողնում, վոր մենք դեներալ Պարիի ձեռքերում ենք:

— Մինչև վորոչ ժամանակ,— պատասխանում է Պետրոսը,— առ այժմ դեռ թույլ ենք: Իսկ յերբ մենք զորանանք...

— Այն ժամանակ դեներալ Պարին կլինի մեր ձեռքերում,— խիստ արտասովոր ձայնով վերջացնում է Մարիան նրա փոխարեն:

— Դեհ, դեռ գո՛ւ... բարկացած կանչում է նրա վրա Բոժոչը և վոտքը խփում է հատակին:

— Այժմ կլռեմ,— ասում է Մարիան,— այս րոպեիս... Ձեզ միայն ուզում եմ ասել, վոր Պարին գնահատում է քեզ, քանի վոր քո կուսակցությունն ուժ է համարում: Բայց հենց վոր նկատե, վոր դու թույլ ես, կքշե քեզ, ինչպես անպետք ծառայի:

«Հիմա նա կհարձակվի քրոջ վրա», մտածում է մի պահ Պետրոսը, բայց Բոժոչը չարունակում է լուռ մնալ և միայն խածում է սիգարը բոլորովին: Մարիան ձայնով արտահայտեց այն միտքը, վորն արդեն վաղուց Բոժոչին հասցրել էր դիմացավել: Ցեթե կուսակցությունը բանվորական չի—նա դեներալ Պարիի ինչի՞ն է պետք: Իսկ յեթե նա դառնա իսկական բանվորական կուսակցություն, արդյոք նա Բոժոչի կուսակցությո՞ւն կմնա: Իսկ յեթե նա՝ Բոժոչը ձեռնմուխ չլինի իսկապես կազմակերպելու բանվորներին, արդյոք դուրս չի՞ գա, վոր մի ուրիշը...

— Իմ գլուխը ցավում է,— ասում է Բոժոչը, չիմանալով քունքը:— Նույնիսկ յեթե չցավեր ել, չի կարելի այսպես, թուղթիկ կերպով, կարևոր հարցեր վճռել: Բերեզասի դավաճակալին յես լավ գիտեմ: Նա պինդ մարդ է: Կպի՛ր նրան,—գործը կհասնի մեծ ատուր ու դմփոցի: Իսկ չե՞ վոր մենք, սոցիալ-դեմոկրատներս, խաղաղ ժողովուրդ ենք, այնպես չե՞:

Ցեվ նա ժպտում է լարված ժպիտով:

Մարիան դուրս է գնում՝ ներքևի չրթունքը: Պետրոսը թոթվում է ուսերը:

— Վաղը մենք կդառնանք այս խոսակցությանը,—ասում է Բոժոչը, մեկնելով ձեռքը Պետրոսին,— իսկ այժմ ինձ պետք է գնալ նահանգապետի զրասենյակը:

— Իմանը ծնված չէ բանվորական առաջնորդ լինելու համար,—ակռում է Մարիան, Պետրոսի հետ մենակ մնալով:— Ցեթե նա նույնիսկ առանց վորևե զգալու մարքի աներ իր զոր-

ծը, նա այդ էլ վատ կանեը: Բանվորական չարժումը խորթ է նրա համար, նա չի հավատում, որ բանվորները խիստ ուժ են: Նա համոզված է, որ ամբողջ բանվորական չարժումը նրա ալջող, թեպետ և վոչ բոլորովին ազնիվ դաղափարն է: Ցեթե Մերձկարպատյան Ռուսիայում գոյություն ունենա բանվորական չարժում, նա կծագի վոչ թե շնորհիվ Իվանի, այլ նրան հակառակ:

Պետրոսը բարձրացնում է Մարիայի վրա պարտացած հայացք:

Նա զգում է, որ իրան մեծ վտանգ է սպառնում: Նա պինդ աեղմում է շրթունքները, ասես վախենալով, որ ակամա մի անզգույշ խոսք չթռչի նրանցից:

— Ուրեմն՝ ինչպե՞ս,— հարցնում է Մարիան:

Պետրոսն ուսերն է թոթվում միայն:

— Ի՞նչ է, խոսելու ընդունակությունից զրկվե՞լ եք,— չարունակում է աղջիկը:— Թե՞ ձեր գլուխն էլ սկսեց ցավել:

— Գլուխ՞ք,— արտասանում է Պետրոսը դանդաղ, կշռելով ամեն մի խոսքը,— ինձ այդ խոսակցությունը չափազանց անախորժ է: Ցես իրավունք չունեմ ձեզ հետ այնպես խոսելու, ինչպես ձեր հեղբայրն է ձեզ հետ խոսում, իսկ մյուս կողմից, տես սակայն եմ շատ վճռական կերպով բողոքելու այն բանի դեմ, որ դուք այդպես խոսեցինք մեր կուսակցության առաջնորդի մասին:

Մարիան քրքջում է խլացուցիչ ձայնով: Ծխծաղից ցնցվելով,— ինչպես Պետրոսին թվաց՝ ծխծաղը քիչ արհեստական էր,— նա թաթով ընկնում է կաշվե բազկաթոռի վրա:

— Իմաստը... ձեր առաջնո՞րդն է.— ասում է նա՝ դադարելով ծխծաղել:

— Այո:

— Մի խոսքով՝ դուք սոցիալ-դեմոկրատ եք և հավատում եք Մերձկարպատյան Ռուսիայի սոցիալ-դեմոկրատիական կուսակցության:

—Իհարկե:

— Դուք կամ հիմա՛ր եք, կամ սու՛տ եք:

Պետրոսը վեր է ցատկում և սենյակից դուրս է գալիս: Նա-խասենյակում՝ նախ քան դռնակը հաղնելը, նա նրա մի կից դուրս է բերում թղթիկը, և, առանց նայելու դնում է իր գրպանը:

Բակում նրա յետևից հասնում է Մարիան:

— Ներեցեք ինձ, ընկեր, տես բնավ չեյի կամենում ձեզ վրդովեցնել...

Նա ձեռքը մեկնում է Պետրոսին:

Պետրոսը մի պահ տատանվում է և հետո Մարիայի ձեռքն է դնում դղակում գտած թղթիկը:

Մարիան կարմրատակում է, և հետ է փախչում՝ դեպի տուն:

Հաջորդ որը Բոժոչը հայտնեց Պետրոսին, որ նա բողոք չի՛ ներկայացնի Բերեգասի գավառակալի վճռի դեմ:

***

Մի քանի օրից որ առաջ Պետրոսը գնաց Մունկաչ: Այն-տեղ նրան աջողվեց հավաքել մի բուռը՝ մինչհեղափոխության սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամների— մնացած-ները ցրվել էին ամեն կողմ:

— Կգանք, ընկեր, հետո կտեսնենք:

Մի քանի նշանակված եր կիրակի առավոտյան, բայց Սե-կերեչն արդեն յերկուշաբթի որից գտնվում եր Մունկաչում:

Մի քանի լուրը քաղաքում ահագին հուզում եր առաջ բերել:

Հունգարացիները հայհոյում էին չեխերին. Մատարիկը բոլշևիկ է, գեներալ Պարին ծախվել է Լենինին, իսկ գավառա-կալը— ուղղակի ջհո՛ւդ է: Չեխերը— Մունկաչում նրանք բոլորը, մինչև վերջինը, պետական կամ քաղաքային ատենդանավորներ ան, հետևաբար, բոլորը, իրանց արհեստի դորությամբ, դեմոկ-բատներ են— սատկիկ չկոթվեցին:

Գործարաններում խաղաղ եր— բանվորները տրամադրված եին անվատահ: Պետրոսին ոգնեց դեպքը. վոստիկանությունը բռնեց յերկու բանվորուհի ծխախոտի գործարանից,— նրանք՝ երբեմն թե՝ խաում էին, թե ուսանքն արդեն Գալիցիայում են: Գավառակալը նրանց բաց թողեց, բայց այդ ժամանակ լուր տա-բածվեց, թե հունգարական սպիտակները հարձակում են պատ-րաստում չեխերի վրա և թե վերջիններս մտադիր են բանվորներին դինելու: Առաջին անգամ ինը, տասն ամսվա մեջ գործարանն-բում տեղի էին ունենում, նույնիսկ աշխատանքի ժամանակ, խոսակցություններ քաղաքական նյութով:

Կահ-կարասիքի գործարանում մեկը ցրվում եր բոլշևիկա-կան թերթիկներ: Ցոթը բանվոր վոստիկանատուն բերին, բայց վորովհետև նրանք բոլորն էլ միևնույն ցուցմունքները էին

տալիս, մերժելով ամեն տեսակ մասնակցություն այդ գործում, նրանց նույն չերեկոյան ազատ թողին: Վոչ վոք չգիտեր, թե ո՛վ եր թուղթն իր ղրկանը ղրել: Ձերբակալումներից հետո բոլորը ռուս ելին կացել կարծես, բայց ընկերների ազատվելը լեզուները բացեց:

— Նայենք, ինչ կլինի...

Ուրբաթ առավոտյան Ունդվարից Մունկաչ հասան լեհ ռեվոլյուցիոներների չերկու ջոկատամաս՝ պողպատե սաղավարտներով:

— Տեսա՞ր... Վախեցա՞ն չեխերը...

անում:

Փողոցներում ամբողջ ժամանակ չորջում եյին դիչերային ձկտվոր պահակախմբեր:

Շարաթ առավոտյան հունգարական հարուստները լուր տարածեցին, թե գավառակալն արդեն ել մխիթնդը: Ցերկաթուղային արհեստանոցների բանվորները ժողով կազմեցին և պատգամավորություն ուղարկեցին գավառակալի մոտ բողոքի համար: Փոդոգում պատգամավորությունը հանդիպեց ծխախոտի գործարանի առանումեկ բանվորների— նրանք վերադառնում եյին գավառակալի մոտից:

— Ամեն բան կարգին է, ընկերներ: Արգելման մասին խոսք ել չի յեղել:

— Իսկ մենք չգիտեյինք, վոր ծխախոտի գործարանն ել...

Ծխախոտի գործարանի բանվորները նեղացան:

— Հետո կտեսնենք, թե մեզանից ո՛վ է խսկական...

Ուրբաթ յերեկոյան «Ասող» հյուրանոցի դահլիճը դրեթե դատարկ է: Միայն յերկու փոքրիկ սեղան է բռնված: Մեկի առաջ նստած են մի քանի տեղացի վաստակավոր, իսկ հետևում, անկյունում, տեղավորվել են Պետրոսն ու Սեկերեչը: Պետրոսը չեր ուզում դնալ, բայց Սեկերեչը կարևոր համարեց ցույց տալ, վոր իրանց— բուրժուական լրագրողին և սոցիալ-դեմոկրատական կուսակցության աշխատավորին— չեն վրդովեցնում վոչ չուրջկալները, վոչ զինչերաչրջիկ պահակախմբերը:

Նիհար, կոպացած, ալևոր ազատավորը հորանջում է, թիկն աված դռան շրջանակին: Նա զզված է ու կեղտոտ, ինչպես ինքը ճաչարանի դահլիճը: Ցեթե քաղաքում լիներ վորևե կարգին հյուրանոց և կարգին ճաչարան, վոչ վոք, վատաոջիներից զատ, չեր ապրի «Ասողում» և չեր ոդավի նրա խոհարարային արվեստի պատուղներից: Բայց «Ասողը» պատկանում եր կոմս Շեններոնին, խոկ չեխական Մունկաչում պրուսական կոմսը համարվում եր վոչ պակաս նշանավոր անձ, քան հունգարական Մունկաչում (կես մլիոն խոշ հողը դեմոկրատական հանրապետության մեջ ել մնում է կես մլիոն), այդ պատճառով քաղաքը Թուլլավության չեր ել մտալիս չինելու մի կարգին հյուրանոց և կարգին ճաչարան: Ասում «Ասողը» դուր չի գալիս, նա Մունկաչ Թող չեր:

Մթություն, դարշահոտություն...

— Դու այս կեսում անաչառ չես,— ասում է Պետրոսը:— Ցես չեմ հասատատում, վոր նրան կարելի յե վստահել բոլոր մեր գաղտնիքները, բայց յես հրաժարվում եմ հասկանալ, թե ինչու նրան չի կարելի ոգտագործել աչխատանքի համար: Խելացի, կրթված աղջիկ է, մասնակցել է Բուդապեշտում արմատական ուսանողության չարժման մեջ, կուսակցության մեջ չի ընդունվել վո՛չ իր հանցանքով...

— Ցեվ, բացի այդ, քեզ չատ է դուր գալիս...

— Այդ սրան չի վերաբերում: Բեզ հայտնի յե, վոր դես մինչև իմ նրա հետ ծանոթանալը, նա՝ իր վրա վերցնելով վախճու բիսկը՝ տարածում եր կոմունիստական թերթիկներ: Թերթիկները, ճիչտ է, չատ լուրջ չեյին, բայց չի կարելի ժխտել, վոր նրա դիտավորություններն ազնիվ են: Ցես գիտեմ չատ ընկերներ, վորոնք դուրս են յեկած բուրժուական միջավայրից, և չեմ կարող հասկանալ, ինչու հենց նրա վերաբերմամբ դու այնպես բացառիկ կերպով կասկածոտ ես:

— Ցես նրա հետ վոչ մի գործ չունեմ, —առարկում է Սեկերեչը,— բայց անվստահությունը դեպի Բուժոչի ընտանիքը՝ դա, այսպես ասած, կուսակցական պարտք է: Ցեվ գործն խոկի չի վոխվում այն բանից, վոր Մարիա Բուժոչն ազնիվ դեղեցիկ և սիրուն աղջիկ է... Գնանք քնելու, Պետրոս: Սպասավո՛ր, ստացե՛ք իր որիորդ է...

Ներհուղ սպասավորը ցնցվում է և դժգոհությամբ նայում է Սեկերեչին. նրան՝ յերևում է՝ դուր չի գալիս, վոր իր նրանց համեմատեցին: Նա յերկար ժամանակ բաց ու խուփ է անում աչքերը, մտածելով այն բանի մասին, թե արդյոք սխալ չի՞ լսել: Հայտնի չէ, թե ինչպես կվճռեր նա իր կասկածները, յեթե այդ բանի համար նրան ժամանակ ունենար: Բայց անսպասելի ներքոյի՝ մուտքի դուռն ազմուկով բացվում է բոլորովին և զահ-

լիճ են մտնում յերկու դնչուռ, արծաթե արեղով ասեղնագործված՝ կարմիր բաճկոնակներ հագած և ջութակները ձեռքերում: Նվագելը վոչ մի րոպե չընդհատելով՝ նրանք խիստ ուղիղ կանգնում են մատաքի յերկու կողմերում: Սպասավորը յեռանդագին պլուխ և տալիս դուռն առաջ— և ահա, վերջապես, դնչուների յեռանից հայտնվում է նրանց տերը:

Դահլիճ է մտնում, մի պարոն, դեղին կոշիկներով և կաշվե դեղին չոր հագած, վորտրըգական կանաչ գլխարկը ծոծրակին՝ իր յեռանից սանձից բռնած նետս մտցնելով մի հիանալի, դորշագույն, կլոր խաբերով մատակ ձի:

— Ռոդային չաքա՛ր կտաս,— հրամայում է նա սպասավորին և, կանգ առնելով, դահլիճն է դիտում:

Նա վոտքերի վրա բոլորովին հաստատ չի կանգնած— արդյոք կոնծած է, թե՞ նրա խաչր կազմվածքն անչափ ծանր է նրա կարճ, ծուռ վոտքերի համար: Հազիվ թե չիտում է նա ողում չանկաշվե մարակը, վորը նրա ձեռքին է, յերբ փառասիրաննների բրոնած սեղանիկը վայրկենապես ազատվում է: Վերարկուները՝ քայլելիս հագնելով, փառասիրանները չասպով հետևում են հետևի դռնից:

Ներս մտնողը հետ է նայում և դանդաղ գալիս է դահլիճի մեջտեղը: Այժմ չահի լույսը նրա վրա յե ընկնում: Նրա դեմքն անագազգնձի գույն ունի, ընչացքները փոքր են, սևացրած, մազերը մութ են, աչքերը՝ սև, շրթունքները՝ կարմիր, մաոա: Մազերի փունջը, վորը դուրս է ընկել գլխարկի տակից, իջնում է նրա ձախ աչքի վրա:

Հարևանցի հայացք ձգելով Մաոսարիկի պատկերի վրա, նա աչհամարհանքով թքում է, հետո, ձախ ձեռքը գրպանը կոխելով, իսկ աջով մարակը ճոճելով, սկսում է համառ կերպով նայել Սեկերեչի վրա: Սպասավորը չաքարով պնակը դնում է մարմարիոնե սեղանիկի վրա և վախկոտ կերպով մոտենում է այն ճիու հենց դնչին:

— Դո՛ւրս, ջհուդնե՛ր,— աղաղակում է հանկարծ վորտրըգական գլխարկ հագած մարդը և անհաստատ քայլվածքով ուղղվում է դեպի Սեկերեսը:

Նրա սեղանիկից մի քանի քայլ հեռու նա կանգ է առնում:

— Դու ջհո՞ւդ ես,— հարցնում է նա, ցցելով մարակը Սեկերեչի կողմը:

— Ի՞նչ լինչ,— վեր է ցատկում Սեկերեչը:

Լուսթյան: Մի քանի յերկու ջութակներ ցավագնորեն ճնշճնջացնում են մուտքի մոտ:

— Դո՛ւրս,— մռնչում է, վերջապես, վորտրըգական գլխարկով մարդը և մարակով ցույց է տալիս դուռը:

Նախ քան Սեկերեչը ժամանակ է ունենում հարձակվելու ներս մտնողի վրա, ե՛լ դրա կարիքը չի պատվում. մի քայլ առաջ անցնելով՝ Պետրոսը ձախ ձեռքով բռնում է մարակից, իսկ աջ բռունցքով ուժգին զարնում է թուխ դեմքին: Ցնորվելով՝ կաշվե չոր հագած մարդը հազիվ է կարողանում բռնել սեղանից և վոտքերի վրա կանգնած մնալ:— Մարակը մնում է Պետրոսի ձեռքերում: Գնչուները շարունակում են ճնշճնջացնել, սպասավորը չքանում է:

Կաշվե չորով մարդը, դժվարությամբ հաստատվելով անհնազանդ վոտքերի վրա, աչքերը չռած, նայում է Սեկերեչի վրա և անհավանությամբ ճոճում գլուխը:

— Ինչո՞ւ իսկույն չասիր, վոր դու մեծատուն ես,— ասում է նա թլվատ լեզվով:— Ե՛յ, սպասավո՛ր, գինի՛ բեր. մի դյուժին. ու չարժվի՛ր մի քիչ, տե՛ս...

Նա նորից դառնում է դեպի Սեկերեչը.

— Թույլ տվեք ներկայանալ... Ցես Դանի Զիկին եմ:

Հաջորդ վայրկենին նա արդեն նստած է նրանց սեղանիկի առաջ:

— Պետք է, իսկապես, բացատրել ձեզ իմ վարքը,— սկսում է նա,— բայց հունգարական մեծատունն առանց խոսքերի էլ կհասն

փող և ստանում, թող փորձե ինձ չլսել, ահա թե ինչ կստանա ինձանից:

Ցեվ Դանի Զիկին, աթոռից վեր կենալով և կես թեքվելով, յեռևի մասով և դառնում Սեկերեչին:

— Այ թե ինչ կստանա այն ժամանակ... Դեհ, ձեր կենացը,— ավելացնում է նա, վերցնելով բաժակը:— Նվագեցե՛ք, դնչուներ:

Ցերկու դնչուները առանց այն էլ նվագում են հենց սեղանի մոտ: Թուլլ, տկար, ցածրահասակ՝ նրանք՝ հագած կարմիր բաճկոնակները, նման են արկղաձև յերգեհոնների վրա նստած կապիկների:

— Ցեռանդո՛վ նվագեցեք, դնչուներ:

Դնչունները ճնգճնգացնում են, իսկ Դանի Զիկին յերգում է.

Եժա՛ն է քո արյունը, չքավո՛ր:
Կվաստակես պղնձի մի դրո՛շ—
Ցեվ ծախսել նրան չես կարող...

— Հերի՛ք է,—կտրում է հանկարծ յերաժշտությունը Դանի Զիկին:—Գնացե՛ք: Նվագեցեք Ռոզային: Սպասավո՛ր, դնչուներին դինի՛:

— Միթե չեխերը պարոննե՞ր են,— նորից դառնում է նա Սեկերեչին:— Նրանք պարոններ չեն, այլ դեմոկրատներ են: Ո՞վ է դեմոկրատ: Նա, ով ուժ չունի, ով համարձակություն չունի: Ահա՛ բանը: Մինչև յե՞րբ չեխերն այստեղ դեմոկրատիա պիտի թաղան: Մինչև վոր մենք այդ համբերո՞ւմ ենք: Բայց յերկար չպետք է չարունակվի այդ բանը: Կամ մադյարները կամ ռուսները հետ կքշեն նրանց, գրողի մոր մոտ, բայց այստեղ նրանք չեն մնա: Այդպես... կամ ռուսները, կամ մադյարները... խմենք, յեղբայրներ: Իսկ ո՞վ այդ բանը կանե. ռուսները թե՞ մադյարները —կվճռեն կուլտուրայի հարցը: Վորի՞ կուլտուրան առավելություն կունենա... Հենց այդ— կուլտուրայի առավելությունը, կուլտուրայի առավելությունը...

Մի րոպե հետո նա արդեն խոմփում է, գլուխը սեղանի վրա թնդած:

***

— Հիմար բան արինք, վոր այնտեղ մնացինք,—ասաց Պետրոսը, յերբ նրանք իրանց համարում դանվեցին:

— Թերևս,—համաձայնում է Սեկերեչը:—Ինձ նույնն են սովորեցրել, ինչ վոր քեզ. ծածուկ աշխատանքի ժամանակ խոշոր փողերը մանրացնել չի կարելի, չի կարելի կրել սև ակնոցներ և փողոցում: Բայց Դանի Զիկին այդ ծրագրով կանխատեսված չէր, և յես զոհ եմ, վոր ինձ դեպքը բերեց հանդիպելու այդպիսի մի յերևույթի: Մի մտածի՛ր. մի կտոր՝ չկեղծված միջնադարյան կյանքի— և ո՞ւր: Ամերի պահաս, քան թե յերեք հարյուր կիլոմետր տարածության վրա խորհրդային սահմանից: Դեհ, արի քննենք, վազը դժվար որ պիտի լինի:

— Վաղն էլ, մյուս որն էլ:

— Վաղվա որից յես մի քիչ վախում եմ,—ասաց Սեկերեչը, անկողնում պառկելով:— Լավատես հիմարություններ չաներ...

Պետրոսը չպատասխանեց. նա արդեն քնում եր:

ՌԱԿՈՑԻ ՏՈՀՄԱՅԻՆ ԴՊՑՅԱԿԸ

Շաբաթ որը, նախաճաշիկից հետո, Սեկերեչը խնամքով սափրըվեց և դնաց դրոսնելու:

Պետրոսն ելի մի ժամի չափ նստեց գրքի առաջ, ձեռացնելով, թե կարդում է: Նա իրան հանդիստ չեր դգում: Ժամի յերեքին նա էլ հագավ վերարկուն և դուրս յեկավ: Կանդ առնելով խանութների լուսամուտների առաջ, նա, առանց չտապելու թափառում եր գլխավոր փողոցում, դնաց Ունգվարի լրագրի համարը և աչքի անցրեց նրան՝ քաղաքային տան առաջ դտնվող հրապարակը կարել—անցնելով: Ցրված հայացքով դես ու դեն նայելով՝ նա դնաց դեպի յերկաթուղու թունելը: Նա չդիտեր, թե ինչպես սպասե ժամանակը:

Ճանապարհը թաց է, մածուցիկ ցեխը կպչում է վոտնամանները: Պետրոսը քայլելիս վեր է բարձրացնում վոտքերը և ուժգին շարժումներով թոթափում է վոտնամաններից կպած ցեխերը, վորոնք վեր են թռչում և ծանր չրխկում են գետնին: Ճանապարհի աջ կողմով ձգվում են կանաչին տվող դաշտեր, վորոնք հեռվում յեղերված են խեղդողի այգիներով, ձախ կողմում, ուր պետք է լինեն կարպատները, թանձր մշուշ է փռվում դաշ-

տերում: Եվ բլուրը չի յերևում, բայց Ռակոցի տոհմային դղյակը դեռ բարձրանում է մշուշե քողից վեր: Ոդն անշարժ է և մշուշի ծովը չի շարժվում:

Ճանապարհը պատում է դեպի դղյակը:

—«Եժա՛ն է քո արյունը, Հքավո՛ր: Կվաստակես պղնձե մի դրոշ...»—յերգում է ինքն իրան Պետրոսը, մտածելով Ռակոցի մասին:

Ռակոցի տոհմը... Ֆրանց Ռակոցի...

Տասը տարուց ավելի կռիվ մղեց Ֆրանց Ռակոցին Հաբսբուրգների դեմ: Նրա զորքն եյին կազմում հունգարական, ուկրաինական և ռումինական գյուղացիները: Հողերը պատկանում եյին մի ժամանակ Ռակոցիին—այժմ պատկանում են նրան մատնողների սերունդներին: Իսկ ազնվականնե՞րը: Վոչ վոքից վոչինչ չլսած, վոչինչ դրա մասին չկարդացած՝ Պետրոսը գիտե՛ր սարկայն, հաստա՛տ գիտեր, թե ինչ յեղան այդ հերոսական, վոտաբոբիկ և պատառոտուն շորերով գյուղացի մարտիկները: Տերերը յերկուհարյուր տարի առաջ եվ ավելի լավ չեյին, քան թե այժմ:

Եժա՛ն է քո արյունը, Հքավո՛ր...

Նույնիսկ նրանց յի՛րգը դողացան տերերը: Ռակոցիի պատառոտուն շորերով զորքի զառն զանգատն այժմ յերգում են տերերը,— նրանք, վորոնք արյուն են խմում և բանտերի մեջ նետում Ռակոցիի հերոսների սերունդներին—կարմիր գինվորներին: Հունգարական, ուկրաինական, սլովակական բանվորներին և գյուղացիներին:

Եժա՛ն է քո արյունը, Հքավո՛ր...

Մոայլ կերպով դեպի յերկինքն է բարձրանում Ռակոցի դղյակը: Ցհա՛գ նշավակեցին նրան Հաբսբուրգները, այդ «արծվի բույնը» տաժանակիր բանտ դարձնելով: Այժմ նա դատարկ է, և միայն ուրվականներ են ապրում նրա մեջ: Այո, այն ժամանակից, յերբ Մուննկաչին տեր յեղան չեխերը, ուրվականները բնակվեցին դղյակում: Ցերեկ՝ «հուրուցինները»՝ թավշե պղակներ և դեղին կոշիկներ հագած, իրանց ախկիններվի հետ՝ մետաքսե և թավշե պչեսաններ հագած, այնտեղ «հունգարական շուրջպար» են պարում... խաղաղ յեղանակին, արշալույսին, մինչև Մուննկաչ լսվում և դարբինների լայը: Այդ Ռակոցիի հերոսները վոդբում են չարաբաստիկ Հունգարիան...

Եժա՛ն է քո արյունը, Հքավո՛ր...

Կամուրջի յետևում, կամարի տակ, կանգնած է Լակատոան:

— Ամեն ինչ կարգին է:

Ներքև տանող սանդուխքի մոտ հսկայական հասակով մի մարդ մեկնում է Պետրոսին իր ահագին ձեռքը:

— Ձե՞ս ճանաչում, ինչ է:

Կիսախավարում Պետրոսը չի ճանաչում հսկայի դեմքը: Միայն այն ժամանակ, յերբ նա պապիրոսն է քաշում, կրակը մի պահ լուսավորում է նրա կարմիր չրթունքները՝ կախված, սև բնչացքների տակ:

— Վոչ, չեմ ճանաչում...

— Միխաիլ Տիմկո՛ն եմ: Ա՞յժմ ել չես հիշում: Ցես Միշու՛ն եմ: Քո քեռին ինձ քշեց, յերբ յես քեզ հետ սկսեցի հաճախել Բանվորական տունը...

— Միշո՞ւն ես:

Մինչ նրանք իջնում են սանդուխքով, Տիմկոն մի քանի խոսքերով կամուրջ է ձգում այդ ինը տարվա անջատման վրայից: Սվալյավայի գործարանը, գինվորական ծառայությունը, դատիցյական ռազմաճակատը, գերությունը, Կրասնոյարսկը, կարմիր պարտիզանական ջոկատը, Կոլչակի դեմ մղած կռիվները, Իրկուտսկի ապստամբությունը, Վլադիվոստոկի ինտերվենցիան, Ամուրի ճակատամարտերը, Ցերեկու ամիս առաջ բախտը նորից հայրենիք բերեց ինձ: Կնոջս ինձ հետ բերի Ռուսաստանից...

Տիմկոյի դեմքի վրա՝ ջրհորի ծայրը դրված հանքահորայինի լապտերի լույսն է ընկնում: Միշուն Պետրոսից միայն մի տարով մեծ է, բայց առաջուստ նրան կարելի յե տալ ամբողջ տասը տարուց ավելի:

— Ա՛յո, յեղբայր, մարդերի վրա չեմ քննել...

— Ցե՛ս ել,—պատասխանում է Պետրոսը, զգալով, վոր նրա ձայնը իրան մի քիչ դիպավ:

— Գիտեմ, քո մասին ամեն բան գիտեմ: Բայց գիտե՞ս, Պետրո՛ս, մեկին պարելը հեշտ է, մյուսին ավելի դժվար է: Ինձ ավելի դժվար է:

Պետրոսը նայում է չուրջը: Մի րոպե նրա ուշադրությունն է գրավում նշանավոր ջրհորը: Սոսկալի՛ խորություն: Կարելի յե հաշվել մինչև հարյուր, նախ քան ձգված քարը ջրի մեջ կընկնի: Մանկության ժամանակ Պետրոսը շատ է վազել նրա մոտ, մեջը քարիկներ նետել, իսկ հետո ջրհորը սեսել է յերազում և արթ-

նացել է լացով: Այժմ ջրհորն արդեն այնքան յերկյուղալի չի թվում: Նեղ լուսամուտիկները՝ յերկաթե վանդակով՝ մուշտակներով են վարագուրել, և ջրհորի ծայրը դրված՝ հանքատային յերկու լապտերներն աղոտ կերպով լուսավորում են ամբողջ հրապարակը: Պատերը ծածկված են խոնավության նման վայլերով:

Հավաքվել են մոտ քսան մարդ: Բանվորներ և գյուղացիներ: Սեկերեչը հենվում է ջրհորի յեզրին:

— Դուք պիտի ասեք, քեռի Ֆեդոր:

— Ահա այդպես...

Ծերունի Բոչկայը կանգնած է՝ գլուխը թեքած՝ կարծես վախենում է, վոր գլխով չպարկվի մթում կորչող առաստաղին: Ձախ ձեռքով նա բռնել է ուսերին ձգած բրդոտ մուշտակից, աջով քաշում է յերկայն ընչացքները: Պատի վրա չարժվում է նրա վիթխարի սյուները:

Ցերկու տասնյակ գլուխ դարձվում են դեպի ծերունին: Դեղջկական կոպիտ տաշված գլուխներ: Միայն մի քանի դեմքերից յերևում է՝ այդ մարդկանց ձեռքերը վոչ թե հող են փորում, այլ մետքենային են ծառայում:

— Ահա այդպես, ընկերներ... կասեմ միայն, վոր այսոր առաջին անգամ հավաքվել ենք մենք Մերձկարպատյան Ռուսիայի բոլոր անկյուններից, վորպեսզի կազմենք միջազգային— մեր ընչա հասկացիը— յերրորդ միջազգային կոմունիստական կուսակցություն: Զբաղմունքների բարի հայրը՝ Լենինը, վորը նստած է Մոսկվայում, ասաց. «վերցրու հարուստներին հողը»: Միայն ճիշտ հասկացիը. այդպե՛ս էլ ասաց նա— մի՛ խնդրիր, այլ վերցրու... Այդպես պատմիրեց մեզ հաղորդել Լենինը, այդպես են արել նրանք և Մոսկվայում, սա նրանց ասածը...

Ծերունի Բոչկայը, կանգ առնելով, մի պահ չփոթված դիտում է լսողներին, իսկ հետո հանկարծ փայլող դեմքով դառնում և Սեկերեչին, ասես նոր է նրան տեսել: Ձեռքը նրա ուսին դնելով՝ նա հպարտությամբ վեր է բարձրացնում իր ամուր գլուխը:

— Ահա նա, մեր ընկեր Սեկերեչը: Ահա նա, Լենինի հրամանատարը: Նա ձեզ լավ կասե, թե յերբ, ինչ, ինչպես...

Սեկերեչը խոսում է հունգարերեն, իսկ Տիմկոն թարգմանում է նրա ճառը ռուսերենի և ուկրաիներենի մի խառնուրդով: Թարգմանում և նախադասություն նախադասության յեթե: Լսողները հավանորեն գլխով են անում—ամեն բան հասկանալի յե նրանց համար, ամեն բան նրանց սրտովն է:

— Միջազգային Ռուսաստան... Յերրորդ ինտերնացիոնալ... Բոլշևիկական հողային ծրագիր... Լենին... Համաշխարհային հեղափոխություն...

Բայց ահա Սեկերեչը սկսում է խոսել մերձավոր հարցերի մասին, և այստեղ—վե՛րջ միտքանության: Տիմկոն չարունակելով թարգմանել, սկսում է տեղն ու տեղը առարկել նրան:

— Յեթե մենք տանենք մասսաներին սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ,—ասում է նա—ի՞նչպես մենք կբացատրենք նրանց, թե ինչ է III Ինտերնացիոնալը, ի՞նչ է պրոլետարիատի դիկտատուրան:

— Մասսաներին մոտենալու միակ հնարավորությունը,— պատասխանում է Սեկերեչը,— նրանց սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ քաշելն է: Յերբ մենք նրանց կազմակերպենք, այն ժամանակ կկարողանանք խոսել բաց կերպով, իսկ մինչև այդ կոմունիստական լոզունգների տակ աշխատում է միայն անլեգալ կուսակցությունը:

— Յեթե մենք կազմակերպենք սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, մեղ, վաղ թե ուշ, նրա միջից դուրս կձգեն, և մենք այն ժամանակ վերջնականապես կկտրվենք մասսաներից: Ամենեն չեմ հավատա, վոր Բոժոլը չգիտե, թե մենք ովքեր ենք:

—Գուցե և գիտե: Բայց հուլս ունի ոգտագործելու ձեզ իր նպատակների համար: Միանգամայն հավանական է, վոր նա միտք ունի հենց այդպես վարվելու, ինչպես վոր դու ասացիր. մեղ դուրս կձգեն, յերբ մենք գլուխ կբերենք մեր աշխատանքը: Բայց մեր խնդիրը հենց նրանումն է կայանում, վոր մեղ դուրս ձգել չտանք: Ջե՛ վոր մե՛նք պիտի կազմակերպենք մասսաներին— մեր ձեռքերում կլինեն բոլոր հենակետերը...

— Իսկ յեթե մեղ նուիրիակ դուրս չձգեն, մենք միևնույնն է, չատ բան ձեռք չենք բերի: Մեկի ափանջին կկանչենք. «Մտե՛ր սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ», իսկ մյուսին. «Դորձի՛ր սոցիալ-դեմոկրատաբար»... Հասարակ բանվորը կամ գյուղացին վո՞րտեղից հասկանա այդ բանը:

Ներկա յեղողներից չատերը դժվարությամբ միայն հասկանում են, թե վեճի եությունն ինչումն է: Նրանք զարմացած նա-

յում են Տիմկոյի վրա, վորը հուզմունքից ձեռքերն է շարժում ուղում: Լակատան էլ նրա կողմն է բռնում:

Կամաց-կամաց մյուսների լեզուներն էլ են բացվում: Մի քանիսը մոռացում են այսպես, մյուսներն՝ այնպես: Մեծամասնությունը գանում է, վոր Տիմկոն չատ բանում իրավացի չե, բայց Սեկերեչի ծրագիրն այնուամենայնիվ վատահելի չե. Մերձկարպատյան Ռուսիայում վերջնականապես կարգ հաստատելու համար պետք կլինեն վոչ թե հարյուրավոր մարդիկ, այլ չատ հազարներ, իսկ չշուկով այդ հազարները մինչև վերջին դատաստանը չեն հավաքի: Սեկերեչը, բացի դրանից, խոստանում է, վոր սոցիալ-դեմոկրատական մեծ կուսակցության կողքին դոյություն պիտի ունենա և փոքրը—իրը... Սա, հանդիստ կաց, կսովորեցնեն, թե չերբ և ուր պետք է գնալ: Այո, Սեկերեչի ասելով, Ռուսաստանում էլ այդպես վարվեցին...

— Այս բանը, ընկերներ, պետք է հաշվենալ. Ռուսաստա՞մ: Զգալի մեծամասնությունը քվեյարկում է Սեկերեչի առաջարկությունը:

— Լավ չի դուրս դա այդ բանը,— նկատում է Լակատան քվեյարկությունից հետո:

— Դուռ, ինչպես և մենք բոլորս, քո խոսքն ասիր,— խոտիվ կանգնեցնում է նրան Բոչկայը:—Մի անգամ վոր վճռեցինք, այժմ քո գործն է՝ լռել:

Կուսակցության քարտուղարը պիտի լինի Սեկերեչը: Ընդրում են կենտրոնական կոմիտե յոթն անդամներից: Ձայների մեծամասնություն ստանում է Պետրոսը: Սեկերեչի պնդումով ընդրում են նաև Տիմկոյին:

Նիստը փակվում է: Մարում են լապտերը և մթության մեջ վեր են մագլցում՝ դեպի դղյակի բակը:

Ցերեկոն խաղաղ է: Ցերկնակամարը լի չե աստղերով: Ամբրերով, յերկ-յերկու, յերեք-յերեք հոգի, խարխափելով դուրս են պալիս խճուղու վրա:

— Առանց տեր ասածու էլ յոլա կգնար, չէ՞, քեռի Ֆեդոր.— հանաք է անում Սեկերեչը:

— Սպասիր,— պատասխանում է Ֆերունին ցած ձայնով,— ամեն բան իր հերթն ունի...

Սեկերեչը, Պետրոսը և Տիմկոն դղյակից դուրս յեկողներից վերջիններն են: Նրանք դեռ յերկար ժամանակ անց ու դարձ են անում Բատոխոնում: Համարյա ամբողջ ժամանակը Սեկերեչն է խոսում, Տիմկոն միայն յերբեմն մի-յերկու խոսք է կցում:

— Սվալյավայի քիմիական գործարանն աշխատում է լայն թափով,— հաղորդում է Տիմկոն, յերբ նրանք արդեն քայլում են խճուղով:

— Թունավոր գազե՞ր է պատրաստում.— հարցնում է Սեկերեչը:

— Այո՛: Բայց քիչ ուրախություն պիտի բերեն նրանք այն ղորքերին, վորոնք այդ գազերը պիտի արձակեն...

Լուսնի լույսով Մունկաչի դղյակը հեքյաթական է թվում:

***

Առավոտյան ժամը յերեքին Մունկաչ է ժամանում Վոլոցկոյ յեկած գնացքը: Լուսանում է: Փողոցներն ամայի յեն, քաղաքը քնած է: Վարագուրված լուսամուտներն ասես փակված աչքեր լինեն: Ինքնաթափ, առավոտյան ցրտից կծկվելով, դանդաղ ընթանում են մարդիկ Զրինի փողոցով դեպի զվխավոր հրապարակը: Դանդաղ, ծանր քայլերի խուլ ձայնը խանգարում է փողոցների լռությունը: Ցերբեմն մի լուսամուտի վարագույրն է բացվում, յերևում է մի զլուխ և իսկույն թաղնվում: Գլխավոր հրապարակով դանդաղ ընթանում են հինգհարյուր-վեց հարյուր մարդ: Բանվորներ և գյուղացիներ: Տղամարդիկ, կանայք, յերեխաներ: Մեծամասնությունը Սվալյավայից է և Պոլենայից: Տիմկոն և Լակատան աշխատում են, վոր սվալյավացիները բոլորը մի խումբ լինեն, բայց այնքան էլ հեշտ չե կարգ հաստատելը:

Ռուսինները հագել են մաղոտ մուշտակներ և տրեխներ: Հունգարացիները՝ սև չորեր և բարձր կոշիկներ: Բայց պատահում է այնպիսին, վորին զգեստից էլ չես ճանաչի. մեկը հագել է մուշտակ և կոշիկներ, մյուսը՝ տրեխներ և մաղյարական կարճեցրած պխարկ: Հերթ բատրակները հագել են՝ անդրավարտիքի մատները կոշիկների ճաերի վրայից բաց թողած վարտիքներ և յեհական հնատարազ մորթե գդակներ: Գործարանայինները հագնված են քաղաքի մարդու պես: Կանայք փաթաթված են թաշկինակներով, յերեխաները հագնված են պատահածին պես: Ցեթե մեկը հագել է զինվորական հին զգեստ, նրան մխայն խոսակցությունից կարելի չե ճանաչել—ուսային է, հունգարացի,

թե հրյա, և այն էլ վոչ հաստատ. վորևե փայտահատ այնպե՛ս է խառնում բոլոր յերեք լեզուն, համեմելով իր խոսակցությունը ռուս և սլովակական խոսքերով, վոր ինքը տերն աստված իր ձեռքերի արարածներին չի ճանաչի, ինքը տերն աստված, վորին, իր մոր և ազգականների հետ միասին, առանձնապես հաճախ են տիրում այսոր հունգարացիները.— այն բանի համար, վոր հնազրել և այսպիսի ցո՛ւրտ առավոտներ:

Կարգ սահմանել չի հաջողվում բոլորովին, բայց քիչ-քիչ գլուխները մեջ ելի կազմվում և մի բան, վորը կարգն և հիշեցնում. բոլորին, ինչ մուշտակներ էլ նրանք կրեին, ինչ լեզվով էլ խոսեին իրար հետ, բոլորին զբաղեցնում է մի միտք, բոլորը բռնավառվում են մի ցանկությամբ: Ում պետք է հող, մտածում է. «Ե՛հ, լա՛վ է հողը կոմսի կալվածամասերում...»: Ամեն գործարանատերը քրտինքն է քամում, նա հիշում և կարմիր ժամանակները: Այս իսկ քաղաքում, այս հրապարակում, արդեն յեղել են ժողովները— նույնպես խոսվել է հողի, գործարանների մասին: Կուսակցությունը Բելա Կունը Ռուսաստանից բերեց: Նա կոչվում էր մերթ սոցիալ-դեմոկրատական, մերթ կոմունիստական, մերթ նորից սոցիալ-դեմոկրատական: Ի՞նչ պիտի լինի այսոր: Վոչ վոք չգիտե: Ցեվ մե՛կն էլ՝ այս դանդաղ քայլող ամբոխում իրան հավիվ չի տալիս, թե ինքը ի՛նչ է ուզում: Բայց բոլորը միասին հաստատ գիտեն, այնպես, ինչպես նա այժմ է, ավելի չարունակվել չի կարող: Հունգարիայում ամեն բան այլ տեսակ էր, Ռուսաստանում այժմ էլ այլ տեսակ է: Իսկ վաղը, դուցե... Դեհ, յեթե վոչ վաղը, ուրեմն վաղը չէ մյուս որ... Լենինը...

— Բայց հիանալի որ դուրս յեկավ, տաք...

— Այո:

Բայց ահա և գլխավոր հրապարակը: Քաղաքային տան առաջ չարվել է գեղջկական սայլերի մի ամբողջ չարան: Հրապարակի մեջտեղում խարույկներ են վառում— տաքանալու և ճարպ տապակելու համար, իսկ չարը՝ ավելի մեծ հանդիսավորության համար: Իրար յետևից լայն բացվում են հրապարակին նայող լուսամուտները, բայց և իսկույն փակվում են: Իշխեցրած վարազուցները յետև հայհոյում են Լենինին, հայհոյում գեներալ Պարիին: Այդ առավոտ պակաս բաժին չհասավ նաև Բելա Կունին:

Ժամը ինն էր մոտ ամբողջ հրապարակը զոռևորված և սայլերի չղթայով— բաց և թողնված միայն յերկու անցք: Նվագում և

պինվորական որկեստրը, վորը Վարպալանկից է յեկած: Հունգարական, ուկրաինական և չեխական ժողովրդական յերգերն իրար են հետևում: Մի քանի տակտ Ինտերնացիոնալից, և հետո նորից սլովակական թախծալից ժողովրդական յերգ: Ամբողջ հրապարակը լի է ժողովրդով: Ուշի մնացածները խմբով կանգնած են սայլերի ոգակի յետևում:

Քաղաքային տանը նույնպես մեծ կենդանություն կա: Քաղաքապետի առանձնասենյակում Կիբիլլովը, Բերեգասի գավառակալը վիճում և Մոնկաչի գավառակալի հետ: Վոստիկանապետը, ավստրիական բանակի նախկին շտաբ—րոտմիստր, յեռանդով հա՛ յե ասում Կիբիլլովի ասածին: Տերը նայում է յերկու վիճողների վրա, ճղնում և տալ իր դեմքին բարեհոգի արտահայտություն և մեծարում է հյուրերին կոնյակով:

— Վոչ,— ասում է Կիբիլլովը,— յես նրանց Իլյաս չեյի ուզարկի: Դրանք անվնաս գիժեր են և վոչ թե լուրջ թշնամի: Այ սրանք, ներքևինները,— գլխով է անում դեպի լուսամուտի կողմը,— սրանք ուրիշ բան են, իսկ նրանք...

Հարևան սենյակում հավաքվել է սոցիալ-դեմոկրատական կուսակցության ամբողջ գլխավոր շտաբը: Իվան Բոժոչն իր հետ բերել է Մարիային: Բերեգասից ժամանել է մի փայտագործ բանվոր՝ Տամաչ ազգանունով: Կոշիցայից յեկել է մի խմբագիր՝ ցածլիկ, կլորիկ, չիխահեր մարդ, ծեր, փորձված առաջնորդ այն տեղի սոցիալ-դեմոկրատների: Սևկերեչը զբաղվեց նրանցով:

Պետրոսը զրույց է անում Տամաչի հետ: Մարիան նայում է լուսամուտից՝ հավաքված բազմության վրա: Նա սաստիկ հուզված է: Աչքերը փայլում են տենդոտ կերպով: Տամաչը կարդում է այն թղթիկները, վորոնց վրա նկատողություններ է արել:

— Կարող եք յերեսակայել,— դառնում է հանկարծ Բոժոչը Սևկերեչին,— այսոր վոստիկանությունը նորից բռնել է դավադիրների մի վոհմակ: Բոան յերե՛ք հոգի: Ժողով են սարքել դղյակում...

Սևկերեչը չարունակում է կանգնած մնալ բաց բերնով:

— Ի՞նչ:

Պետրոսին թվում է, թե նա սխալ է լսել: Նա սաստիկ կարմրում է:

— Ի՞նչ:

— Ինչո՞ւ այդ բանը ձեզ, ընկերներ, զարմացնում է այդպես:

Մեր վոտնիկանությունն խիստպես հիանալի չի աշխատում, բայց դրանից՝ այդ հաստատվությունները—ուղղակի դժվար է հավատալ,— ժողով են սարքել Հոբոյի ճայների տակ: Այդ, հասկանալի բան է, Դանի Զիկիի վայրենի հնարքն է, «Թող իբրև թե, հիմար չնիները կարծեն, թե ղղյակում տեսիլներ կան»: Բայց այս անգամ նրանք բռնվեցին: Հունգարական յերկու սպա, Մունկաչի նախկին քաղաքապետը, Բերեզասի դեղագործը, մի քանի կալվածատեր,—բոլորը հունգարական մեծեր: Խելքի մոտ բան է. գիշեր ժամանակ գաղտնի ժողո՞վ սարքել ղղյակում: Դանի Զիկիին բերին հարբած դրության մեջ: Վոչինչ, Իլավայում կլրջանա: Հիմա՛ր բոմանտիկա...

— Սարսափելի հիմար բան է,— չոտպում է համաձայնել Սեկերեչը:— Ղղյակում գաղտնի ժողո՛վներ գումարել...

— Դեհ, այդ բանը հենց մեր ոգտին է,— գոհ ձայնով չարունակում է Բոժոչը:— Այսոր յես հարցը կսրեմ հունգարական իրերեզնատայի վրա: Դեմոկրատիան սպիտակ տերրորի դեմ է: Բանվորական մասսաները կողմնակից են դեմոկրատիայի: Այդ ապուշ Զիկին մեզ ոգնեց: Ձեռները գոհ կմնան մեզանից:

— Իսկ բանվորնե՞րը,— հարցնում է Պետրոսը:

— Բանվորներին մենք արդեն դրավեցինք: Նայեցեք փողոցին: Առաջին կոչից մի ամբողջ բանակ հավաքվեց: Այս որվանից հուսակցությունն ահռելի ուժ է:

— Բանվորները յեկել են նրա համար, վոր մի բան են սպասում ձեզանից:

— Նրանք իրանց սպասածից ավելի կստանան: Ցես կպահանջեմ, վոր հունգարական ավազանիներին վինաթափ անեն և մեկուսացնեն, և յեռանդուն բողոք կներկայացնեմ սպիտակ տերրորի դեմ Հունգարիայում: Ջարդ ու փշուր պիտի անեմ Խորտիին և առհասարակ հունգարական հակահեղափոխությունը:

— Դեհ, իսկ այստեղի գործերի նկատմա՞մբ:

— Դեմոկրատիա—ահա լոզունգը: Կտեսնեք, ինչպիսի՛ վոգևորություն կլինի:

Ցեվ Բոժոչը գոհությամբ չփում է ձեռքերը:

***

Մխիթարը բաց է անում, քաղաքային տան պատշգամբի վրա կանգնած, Բերեզասի պատգամավոր Տամաշը: Նրա յետևում կանգնած է Բոժոչը, իսկ քիչ հեռու՝ բաղրիկին հենվել է Կոշիցայի պատգամավորը: Մարիան և Պետրոսը հետ են քաշվել դեպի պատշգամբի հեռավոր անկյունը:

Դեպի դահլիճ տանող դուռը բաց է— այնտեղ չարվել են մագիստրատի բարձր աստիճանավորները, ժուրնալիստներ և մի քանի ժանդարմի սպաներ:

Ժողովուրդն այնպես է լցրել հրապարակը, վոր թվում է, թե նա բոլորովին ծածկվել է խայտաբղետ ծլանքներից կարված ռուսական գեղջկական վերմակով:

Խոսքը տրվում է Իվան Բոժոչին:

Բոժոչն առաջ է անցնում: Հանում է գլխարկը: Նա հագել է բաց դույնով սյուրտուկ և վառ կարմիր գույնով՝ աչքի խփող փողպատ: Բարձր բաղրիկը կիսով չափ մինչև ծածկում է նրա բարեկազմ, մկանեղ կերպարանքը:

Նախ քան սկսելը, նա լայն կերպով տարածում է ձեռքերը, ասես ուզում է ամբողջ ժողովուրդը, այստեղ հավաքված բոլոր չքավորներին իր գիրկն առնել: Ժողովրդին թվում է, թե նրա առաջ չքավորների առաջնորդն է:

Դեռ մի խոսք չասած՝ Բոժոչն արդեն հափշտակեց լսողներին: Խուլ, անվստահ աղմուկ, հետո յերկու-յերեք բացականչություն— և ահա արդեն ամբողջ հրապարակը խլացուցիչ կերպով աղաղակում է և մոլեգնում... Հաղարավոր գլուխներ են թուչում ոդի մեջ:

— Բոժո՛չ... Բոժո՛չ... Բոժո՛չ...

Իրան Բոժոչին հափշտակում են այդ անընդհատ ովացիանները: Կարմրելով՝ նա վառվող հայացքն անցընում է մոլեգնող բազմության վրայից: Նա փնտռում է մտքեր, խոսքեր, վորոնք մասսաների ցանկություններին պատասխանեին... Ցեվ յերբ ովացիաներն այդքան յերկար չտևեցին, նա այդ խոսքը գտավ և կասեր: Բայց վոր չափով վոր աղաղակները դանդաղ լռում են, Բոժոչը կամքի լարումով ճնշում է փորձությունը: Վոչ, նա իրան կտիրե, նա չի խաբի նրանց, վորոնք իրան ուղարկեցին այստեղ:

— Բոժո՛չ... Բոժո՛չ... Բոժո՛չ...

Եվս մի քանի ուշացած «կեցցե՛» և հետո—լռություն:

Բազմությունը լռված սպասում է:

— Հարգելի՛ ընկերներ:

Բոժոչի ձայնը սուր կեղտով ճեղքում է լռությունը:

— Ձևխռովչական դեմոկրատիա... սոցիալ-դեմոկրատիա... ձևխռովչական դեմոկրատիա... հունդարական ավազանների պրովոկացիա... Բոլշևիկների վնասող աշխատանքը...

Բոժոչը խոսում է ասած բոլշևիկից վոչ ավելի, և ահա հրապարակի ձախ անկյունում տրտունջ է ծագում, առաջ— թույլ՝ ինչպես մատաղաչ սաղարթի տրտունջը թեթև քամու շնչի տակ:

— Ձևխռովչական դեմոկրատիա... Հունդարա-ջհուդական բոլշևիկական սուր աերրոր...

Տրտունջը սաստկանում է, աճում, բռնում ամբողջ հրապարակը, ձայնակցում Բոժոչին, ինչպես կոնտրաբասը դնչուական նվագախմբում ձայնակցում է առաջին ջութակին:

— Ձևխռովչական դեմոկրատիա... Ռուսական հեղափոխության անանկության:

— Հողի բանն ինչպե՞ս է,— կանչում է հանկարծ մի ձայն հրապարակի կենտրոնից:

— Բոլշևիկները հո՛ղ են տալիս.— միջամտում է կանացի մի ճչող ձայն:

— Հո՛ղ... հո՛ղ... հո՛ղ...— մռնչում է ամբողջ հրապարակը:

Բոժոչը դժգունում է: Նա գլուխը քաշում է դեպի ուսերը, ինչպես մոտեցող ռումբի աղմուկը լսող դինվորը: Նա կծում է շրթունքները: Հետո նորից բաց է անում դերիվը:

— Ընկերնե՛ր.— ճղնում է նա ավելի բարձր ձայնով ծածկել բազմության հազարաձայն մռնչյունը:— Ընկերնե՛ր: Ճեղքայրնե՛ր: Բոլշևիկական պրովոկացիան...

Ավելի խոսել նրան չի հաջողվում:

Գուցե՝ լսեցին խոսքը, գուցե՝ միայն զգացին այն, սակայն ժողովուրդն այլևս լսել չի ուզում, չի ուզում այլևս լսել:

— Հո՛ղ... հո՛ղ... հո՛ղ...

Թվում է, թե մի բերան է կանչում, մի մեծ բերան, վորից այս տարի առաջին անգամ վերցրել են կողպեքը:

— Լե՛նինը... Լե՛նինը...

Բոժոչը դեռ փորձում է խոսել, բայց նրա հետևում, քաղաքային տան սենյակում, Բերեզատի դավատակալը և գինվորական վոստիկանության պետերն արդեն գործում են:

— Լե՛նինը... Լե՛նինը...

Հրապարակի յերկու կողմից՝ ասես պետնի տակից՝ բռնում են ժանդարմների յերկայն շղթաները: Սվիններ, սաղավարտներ:

— Լե՛նինը... Լե՛նինը...

Ճերը ժողովուրդը նկատում է ժանդարմներին, սվինները փայլում են արդեն հենց սայլերի մոտ: Ժանդարմների յեռակից շարժվում են վոստիկանները ռեմինե բրերով: Առջևում քաղքային տունն է, յեռանում «Աստղ» հյուրանոցը՝ վայր իջեցրած, յերկաթե փեղկերով, յերկու կողմից— ժանդարմներ:

— Ո—ո—ո՛հ...

Հրացանների կոթերն աշխատում են: Խուլ ձայնով հնչում են ռեմինե բրերի հարվածները:

— Ո—ո—ո՛հ... Ո—ո—ո՛հ...

Այժմ միայն չորս հոգի յեն մնացել պատշգամբում: Առջևից —Բերեզատի դավատակը, յետևը— Բոժոչը, Մարբան և Պետրոսը:

Դավատատակը՝ ձեռքերը խաչած՝ մարել է: Նրա դեմքը անշարժ է, միայն աչքերը քննում են հրապարակը:

Մարբան հենվել է պատին: Մի պահ նրան թվում է, թե հիմա ուշաղնաց կլինի, բայց նա տիրում է իրան և սաստիկ ցանկանում է դավատակալի վրա նետվել: Պետրոսը բռնում է նրա իրանը և թույլ չի տալիս: Մարբան փորձում է կանչել, բայց Պետրոսն ափով սեղմում է նրա բերանը: Մարբան խրում է ատամները նրա ափի մեջ, ձեռքի վրա արյուն է յերևում, բայց Պետրոսը ձեռքը չի քաշում:

— Ո—ո—ո՛հ...

Անկասելի վողբը խլացնում է Պետրոսին: Ինչո՞ւ ժամանակ կորցնել ատամեղ Մարբայի հետ, յերբ այնտեղ... Նա բաց է թողնում նրան և արագ ներս է մտնում:

Մարբան նետվում է նրա յետևից:

***

Իվան Բոժոչը՝ մեռելի պես դժգույն՝ փակ աչքերով պառկած է բազմոցի վրա: Սեկերեչը ջրով թաթախում է նրա քունքերը և ցածր ձայնով մի բան է համոզում նրան:

Մարիան մի քանի քայլ է անում դեպի խեղաթյուրը՝ բայց հետո մեկից չուռ է գալիս և մոտենում Պետրոսին:

— Ի՞նչ պիտի լինի հիմա,— կլսաձայն ասում է նա:

— Նրանք սկսեցին, մենք կշարունակենք,— պատասխանում է Պետրոսը չշուռվելով:

Սենյակը լի է ժողովրդով: Մի քանիսը հոգատարված են Բոժոլի մոտ, ուրիշները, խմբակներ կազմած, դատում են անցքերի մասին:

Հրապարակը մաքրված է,— բարձր ձայնով հայտարարում է Կիրիլլովը, մոնելով պատշգամբից: Վերջին միտինգն այս կերկրում վերջացավ: Հուսով եմ, որ յերեկ գիշերվա և այս առավոտվա փորձից հետո կառավարությունը իրրև կանոն կընդունի բոլորին կասկածի տակ պահելը: Այսուհետև բոլորը կասկածելի յեն, մեկն այսպես, մյուսն այնպես, առանց աստիճանների և դրությունների խտրության:

— Կնշանակե դուք եք, պարոն գավառակալ,—ասում է Մարիա Բոժոլը:

— Ցես եք,— ասում է Կիրիլլովը:

Մունկաչի գավառակալը, աչքերը չռած, կանգնած է սենյակի մեջտեղում և՝ չփոթված՝ յեղունգներն է կրծում: Բերեզոսկի գավառակալը, միաքիսակի հետ խաղալով, մի վորոշ ժամանակ լուռ, ժպտալով, դիտում է վախեցած ընկերին, իսկ հետո դանդաղ ուղղվում է դեպի Պետրոսը: Բայց նախ քան նա կարողանում է բանալ բերանը, նրա և Պետրոսի միջև բռնում է Սեկերեչի կերպարանքը:

— Ցես դիմում եմ ձեզ, պարոն գավառակալ, մի խոնարհ խնդրով «Ունդվարի թերթի» կողմից: Լայն հասարակության չափազանց հետաքրքրական կլինի իմանալ ձեր կարծիքը տեղի ունեցած անցքերի մասին: «Մեծ մարդու կարծիքը»,— այսպիսի վերնագրի տակ յես կկամենայի, յեթե թույլ կտայիք, հրապարակել այս ինտերվյուն...

— Լայն հասարակություն...— ասում է գավառակալը, աչքաթաթով անտարբեր ձևանալ:— Լայն հասարակություն... Լավ, յեթե այդ ել դեմոկրատիայի ոգուն է— չեմ առարկում:

Նա դեռ խոսքը չէր վերջացրել, յերբ դուռը բացվում է և դինվորական վոստիկանության գլխավորը՝ շեմքից՝ բարձր ձայնով ծանուցանում է Մունկաչի գավառակալին, վոր միտինգը ցրելու ժամանակ վիրավորված է քսանինը մարդ. նրանցից տասնչորսին պետք յեղավ ուղարկել հիվանդանոց:

Փողոցներն ամայի յեն: Սահեն տեղ լեգեոներների շրջիկ պահակախմբեր: Խառուղիներում ձիավոր վոստիկաններ, Ցերկովտունը «Ապաղ» հյուրանոցից, Պետրոսին և Սեկերեչին յերկու անդամ կանգնեցնում են:

***

Իրանց համարն ընկնելով՝ Սեկերեչը մեկից կորցրեց եր ամբողջ անձնազսպությունը: Նա նետվեց մահճակալի վրա և գլուխը թաղեց բարձերի մեջ: Պետրոսը լուռ անց ու դարձ եր անում սենյակում: Սեկերեչի մարմինը ջղաձգաբար ցնցվում եր, ասես նա լալիս եր: Մոտենալով նրան, Պետրոսը վերցրեց նրան՝ ինչպես մի յերեխայի, և թիկունքի վրա դրեց: Սեկերեչը նստեց մահճակալի վրա:

— Սոսկալի՛ յե,— հառաչեց նա,— սոսկալի՛ յե...

— Մենք, կնշանակե, սխալ ճանապարհի վրա յենք: Այդպե՞ս չե, Իոսիֆ:

— Վոչ, այլ ճանապարհ չկա: Սահեն բանից յերևում է, վոր լիհերը չուռով կհարձակվելն Խորհուրդների վրա: Այս փոքրիկ յերկրից Գալիցիա յեն տանում յերեք ստրատեգիական գծեր, անհուն նշանակություն ունեցող գծեր: Պետք է ի՛նչ ել վոր լինի մասսաներին վոտքի վրա դնել...

— Մի խոսքով՝ ուրիշ ճանապարհ չկա՞,— խստիվ կանչեց Պետրոսը:

Սեկերեչը զարմացած նայեց նրան:

— Ինչո՞ւ յես կանչում: Ցես արդեն ասի, վոր այլ ճանապարհ չկա:

— Իսկ յեթե չկա, ձեր կին մի լիներ, գործդ արա և քիթդ մի կախիր:

Սեկերեչը դեմքը կնճռեց, ասես քացախ եր խմել և կլտամբ թողական կերպով ճաճեց գլուխը: Բայց հանկարծ ժպտաց հանգիստավոր ժպտով, վեր թռավ և գրկեց Պետրոսին:

— Դու իրավացի յես, ընկերս: Շնորհակալություն քեզ,— յես ինձ կտիրեմ...

***

Ծառայողը ձեռնց Պետրոսի սենյակի դուռը: Բոժոջը խընդրում է նրան վայր իջնել՝ ընդհանուր դահլիճը:

Կորիդորներում արդեն ելևէջ ու վառվռում: Ճաշարանի դահլիճը գաղարկ է, բռնված է միայն մի սեղանիկ. նրա առաջ նստած են Բոժոջը՝ քրոջ հետ, Բերեզասի դավառակալը և մի քանի սպա: Բոժոջի դեմքը թունդ կարմիր է: Պետրոսի հետ խոսելիս՝ նա մի պահ ձեռքից չի թողնում դինով բաժակը,

— Ձես այժմ մեկնում եմ Բերեզաս,— ասում է նա,—բայց վաղը կեսորին կվերադառնամ: Խնդրեմ՝ յեկեք այդ ժամին ինձ մոտ: Մինչև իմ վերադառնալը վոչինչ մի ձեռնարկեք. այսորվա դեպքից հետո պետք է կրկնակի զգուշություն: Ձես ուզում եմ և պիտի անեմ ամեն բան ինքս:

Պետրոսը լուռ թեքում է գլուխը:

— Յանկալի կլիներ, յեթե նաև պարոն Սեկերեչը մեզ հետ գնար,— առաջարկում է Բերեզասի դավառակալը:

Բոժոջը հավանության նշան է անում գլխով:

— Ունդվարի գնացքն արդեն մեկնեց, ուստի յես ընկեր Կովաչին հետս կառնեմ՝ ավտոմոբիլով, հայտնում է Մարիան:— Ձես Ունդվար եմ գնում, կես ժամից կշարժվենք:

***

Լեռն ի վեր— լեռն ի վայր...

Ճանապարհն անցնում է բլրոտ տեղերից:

Ավտոմոբիլն անաղմուկ սլանում է խճուղով, վորն անցրել են սարատեգիական նպատակներով: Ցերկինքն ամպոտ է, միայն ավտոմոբիլի լապտերները լույս են ձգում ճանապարհի վրա:

Լեռ ի վեր— լեռն ի վայր...

Հիմուն կիլոմետր, վաթսուն, յոթանասուն... Թիկն տված կաչվե կահույք բարձերին՝ Մարիան և Պետրոսը լուռ են:

— Պետրոս,— հնչում է հանկարծ Մարիայի ձայնը:

Պետրոսը զարմացած նայում է նրա վրա, մինչև այժմ Մարիան նրան ընկեր եր կոչում:

— Տեսնո՞ւմ եք, Պետրոս, յես իրավացի եյի: Ժողովուրդը սրամտրված է հոդուտ բոլշևիկների: Նրան պակասում է միայն

մի առաջնորդ: Իսկ այն, վոր դուք բոլշևիկներ եք, դիտեմ մեյան իշխանությունը, ժողովուրդը դրա մասին գլուխ էլ չի ընկնում:

— Իսկ յեթե իշխանությունը դիտեմ այդ, ի՞նչպես է հանդուրժում:

— Մինչև այժմ համբերել են նրա համար, վոր ձեզ վնասակար չեն համարել: Հունդարական սպիտակներից նրանք ավելի յեն վախենում և նպատակ ունեն ձեզ ոգտագործելու իրրեև ուժայլ դեմ կռվելու համար: Բայց թե նրանք ինչ կձեռնարկեն այսորվա դեպքից հետո—չգիտեմ: Բերեզասի դավառակալը ձեզ համարում է բոլշևիկների գլխավոր լիազոր: Սեկերեչին նա համարում է: Ի մեջի այլոց՝ յես էլ յերկար ժամանակ Սեկերեչին դավաճան եյի համարում: Նրա արտաքինն այնպես է, վոր նրա մասին կարելի յե մտածել ամեն բան, ինչ վոր ուզես...

Պետրոսը մի տեսակ ժպտաց:

—Մի բարկանաք անկեղծության համար,— ասում է Մարիան, ավելի մտերիկ նստելով:— Ձես նրա համար խնդրեցիք ձեզ ինձ հետ գալ, վոր նախազգուշացնեմ ձեզ. Բերեզասի դավառակալը պատրաստվում է ձեզ ձերբակալելու և Հունդարիային հանձնելու: Ձեր տեղ նա նշանակում է Սեկերեչին: Զգիտեմ, թե դուք ինչ պետք է անեք:

Պետրոսը չարունակում եր լուռ մնալ:

— Պետք է գնալ մասսաների մեջ և ուղղակի ասել նրանց. թող վերցնեն հողը: Ո՞վ նրանց կխանգարե: Զինվորնե՞րը, ի՞նչ է: Զե՞ վոր նրանք անհամբեր սպասում են, թե յերբ հաչիվ պիտի տանեն իրանց սպանների հետ: Ի դեպ, լսեցի՞ք վերջին նորությունը: Բեսլինում հակահեղափոխություն է, սպիտակ գնդերը քաղաք են մտել: Հետաքրքիր յե: Այդ՝ հեղափոխության աղաղնչան կլինի: Իսկ դուք գիտե՞ք, թե ինչ բան է հեղափոխությունը Գերմանիայում: Ցեղե՞լ եք յերբևիցե Գերմանիայում: Այնտեղ կարելի յե ճանապարհ կտրել ժամերով, և ամեն տեղ ճանապարհը յեղերում են զորձարանային ծխնելույզները: Այհա թե ինչ հարձակում կլինի, յերբ քսան միլիոն գերմանացի բանվորներ ռուսների հետ անցնե՞ն Ռեյնը: Քսան միլիոն բանվորներ... Իսկ դո՞ւք: Դուք քնա՞ծ եք... Թեև յես գիտեմ, թե ովքեր եք դուք, այնուամենայնիվ հարմար տեսիլած եմ մտածել, վոր դուք գաղտնիներ եք: Վախկոտնե՞ր...

— Դուք տեղ հասաք, ընկեր Մարիա: Մեքենան կարող եք ուղարկել, կես վոտքով էլ կերթամ:

— Մի գնաք դեռ, Պետրո՛ս,— աղերսագին ասում է Մարիան, երբ մեքենան մեկնում է:— Մանենք ներս, քիչ խոսենք:

— Ե՞լի պիտի հայհոյեք:

— Վոչ, էլ չեմ անի:

***

— Դուք, Պետրոս, սխալվում եք, երբ մտածում եք, վոր ես միայն նրա համար եմ բոլշևիկ, վոր սիրում եմ յեղբորս: Այդպես չե՝—ինչի՞ համար սուել նրան: Ընչին մարդ, վորը չունի վորևե համոզմունք, վոչ մի նշանակություն չունի: Իսկ ես հեղափոխական եմ ծնվել: Մենք ապրում ենք պրոլետարական հեղափոխության դարաշրջանում—սոսկականորեն այդ բանն ինձ համար բոլորովին պարզ է: Մեր ժամանակում հեղափոխականը բոլշևիկ չլինել չի կարող... Այս բանը սա՞րդ է ձեզ համար: Տասնևութը թվականին ինձ Բուդապեշտում կուսակցության մեջ չընդունեցին այն պատճառով, վոր իմ հայրը քահանա էր, իսկ յեղբայրը—վոսոիկանական սպա: Իսկ այստեղ ես կաշխատեմ տասը հոգու տեղ... Թեյ կամենո՞ւմ եք, Պետրոս:

Մինչ Մարիան սպիրտայեռի հետ է, Պետրոսը լուռ դիտում է նրան: Նա միայն այժմ է նկատում, վոր սև հոնքերը միանում են նրա քթի վերը—այդ բանը դեմքին այնպիսի վճռականության արտահայտություն է տալիս: «Զարմանալի չե,—մտածում է նա,—թե վորքան այս թուխ, վճռական դեմքը հիշեցնում է խաժուժն աչքերով Դրազայի քնքուշ գծերը»...

— Ի՞նչ կլինի ձեզ հետ, Պետրոս, յեթե ձեզ մատնեն: Ձեզ պետք է փախչել...

Արդեն լուսանում էր, երբ Մարիան ճանապարհ էր դնում Պետրոսին մինչև դարպասը: Տուն գալով, Պետրոսը չորերը չհանած, ընկավ մահճակալի վրա:

ԳԵՆԵՐԱԼ ՊԱՐԻ

— Դեհ, յեթե այդ ապուշն էլ հանճար է...

Գեներալ Պարին բարկացած գետին նետեց Ֆրանսիայից գնա նոր ստացված լրագիրը:

— Յեթե այդ ապուշն էլ հանճար է...

Մերձկարպատյան Ռուսիայի զինվորական դիկտատորը շատ հասկանալի էր: Համաշխարհային պատերազմի շրջ տարվա ընթացքում ֆրանսիական գեներալները, մեկը մյուսի յետևից, ձեռք էին բերում համաշխարհային անուն, վերկում էին հայրենիքը և ճնշված ժողովուրդների դրծը, և միայն իրան չհնարկայացավ մի դեպք՝ վորևե պարզ, բայց չտեսնված համարձակ քաջագործությամբ գրելու իր անունը համաշխարհային պատմության մեջ: Յեվ ահա, չե՞ք կամենում արդյոք... Պատերազմը վերջացավ, նա մնացել է այստեղ՝ այս անպիտան յերկրում, մինչդեռ Փոքր Ասիայում այն ծեր ապուշը նորից վերկում է ֆրանսիան:

Գեներալը վայր ճկվեց, վերցրեց լրագիրը, բայց հայացք ձգելով առաջին թերթին, նորից շպրտեց նրան: Մի քանի րոպե նա՝ մտքերի մեջ՝ կանգնած մնաց մեծ, մինչև հատակը հասնող հայելու մոտ: Այնտեղից նրա վրա նայում էր մի բարեկազմ, մկունքոտ, ալեվորած, շատ տգեղեցիկ մի զինվորական, վորը ճախ ձեռքը դրել էր դրպանը, իսկ աջը՝ տուժուբրակի առաջին և յերկրորդ կոճակների մեջև, ինչպես այդ բանը կարելի յե տեսնել Նապոլեոնի պատկերների վրա:

— Գարշելի...—ասաց զզվանքով, ինքը լավ չգիտնալով, թե այդ ում է վերաբերում:

Նա իրան շատ դժբախտ էր զգում: Այո, համաշխարհային պատմությունը մոռացավ իրան, և պատերազմը, խաղաղությունը, ամբողջ աշխարհը—ամեն—ամեն բան կարգավորվում է վոչնչը, ինչպես նա յենթադրում էր: Այո...Զենական զինվորականն նախախոհմությունը ամեն որ նվազում է ֆրանսիական ազգային հիմնը, մեծ հեղափոխության հիմնը: Մերձկարպատյան Ռուսիայի վարչության չենքի վրա ծածանվում է ֆրանսիական յեռագույն դրոշակը: Ցեվ սակայն գեներալն զգում էր, վոր մեծ հեղափոխության կամ կայսեր զինվորները այլ կերպ եյին կանգնած իրանց գրաված կամ ազատած հողերի վրա, քան թե ինքը: Վոչ, նա բոլորովին այլ կերպ էր յերևակայում այս ամենը: Նա չգիտեր, թե սխալն այստեղ ինչո՞ւմն է, բայց վոր նա կա՛, գրանում կասկած չկար:

— Համաշխարհային պատմություն...

Նա յերկու անգամ սեղմեց զանգի կոճակը: Դուռն առանց

ազմուկի բացվեց և նույնպես առանց ազմուկի նորից փակվեց։ Թիկունքը փակ դռան դարձրած, խիստ ուղիղ կանգնած էր գեներալի աղյուսանոցը։ Նրա կրծքին յերիվներանդվում էին պատվանշանների ժապավենիկները։ Լայն ապին կարում–անցնում էր նրա արևատ ճակատը վերից վար։

Գեներալը մի քանի վայրկյան մոռայլ նայում էր կապիտանի դեմքին։ Նա փափաքում էր մի անախորժ բան ասել նրան, բայց վոչ մի հարմար բան միտքը չէր գալիս, ուստի և նա ատիպեց իրան ժպտալ և՝ մոտենալով կապիտանին՝ ձեռք մեկնեց նրան։

— Բարի լույս, կապիտան։ Ինդրում եմ ձեզ, հանել ինձ համար, գաղտնի դրագրության միջից, բեկեչի գործը։

— Լսում եմ, ձերդ գերազանցություն։

Գեներալը անհամբերությամբ բացեց մի մեծ, թեև վոչ չափազանց հաստ, ծրար և հանեց նրա միջից բեկեչի զեկուցագիրը։

Նա հաշվեց էջերը. ամբողջ տասնութը էջ։ Կարդալու ամենայանկությունն մեկից կորավ։

Այդ բանը արդեն յերեք անգամ էր կրկնվում։ Յերեք անգամ նա բաց էր անում, իսկ հետո նորից կնքում, առանց կարդալու, բժիշկ բեկեչի զեկուցագիրը։

Հունգարական քաղաքական վոստիկանության զեկուցագիրը միշտ միջացնում էր գեներալի տրամադրությունը։ Այժմ՝ չորրորդ անգամ՝ կարդալ ուզելով, նա նորից սկսեց վոստիկանական զեկուցագրից։

Իրան բժիշկ բեկեչ կոչող անձի մասին աջողվեց հավաքել հետևյալ՝ բոլորովին անվիճելի՝ փաստերը...—

Այն անձը, վորը իրան բժիշկ բեկեչ է կոչում, 1918 թվի գեկտեմբերից մինչև 1919 թվի ապրիլը, Իվան Բեսկե անունով, Գեորգիևյեվի հայտարարած գալիցիա–ուկրաինական ժողովրդական հանրապետության բանակում ծառայել է դնդապետի աստիճանով։

1915 թվի վեհտեմբերից մինչև 1918 թվի նոյեմբերը հիշյալ Իվան Բեսկեն՝ Թադեուշ Տատաժինսկիյ անունով՝ ծառայել է նախ իբրև ինտենդանտի փեղփերել, իսկ հետագայում իբրև ինտենդանտի լեյտենանտ լեհական լեգեոնում, վորը գտնվում էր գնդապետ Պիլսուդսկու հրամանատարության տակ և մտնում էր ավստրո–հունգարական բանակի կազմի մեջ։

1912 թվից մինչև 1915 թիվը նա՝ նույնպես Տատաժինսկիյ

անդամանունով, հիվանդապահ էր կենինգի մասնավոր բուժարանում՝ Լվով քաղաքում։

1908 թվից մինչև 1912 թիվը նա գտնվում էր Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում։ Այս յերկրում անցրած նրա կյանքի մասին հավաստի տվյալներ առանալ չաջողվեց մինչև այժմ։

Մինչև Ամերիկա մեկնելը, այսինքն մինչև 1908 թիվը, նա սափրիչի յենթամարպետ էր Զերնովից քաղաքում...

Գեներալը մեկն ի մեկ անգամ զրույց ստալ բժիշկ Բեկերեչի հետ։ Վեց չարաթ առաջ նա ընդունեց այդ ուկրաինցուն, վորը յեկել էր նրա մոտ հանձնարարական նամակներով՝ Կոչիցայի գինվորական վոստիկանատան դլխավորի կողմից։ Ունկնդրությունը տևեց մի քանի ժամ։ Գեներալը յերկար զրուցեց Բեկեչի հետ— ավելի ճիշտ՝ Բեկեչը խոսեց գեներալի հետ։

Ամբողջ ծրարները նա մշակել է մանրամասնորեն։ Ամբողջ քառասուն–միլիոն ժողովուրդը... Անկասկած՝ Բեկեչը արդեն կլիներ նրա վոստահելի մարդկանցից մեկը, նույնիսկ՝ գուցե՝ նրա աջ ձեռքը, յեթե չլիներ այդ հիմար՝ վոստիկանական զեկուցագիրը։ Իսկ այժմ գործը վորոշ չափով փափուկ էր ներկայանում։ Գնդապետ, ֆելդֆերել, սափրիչ... իր մամռոտների մեջ այս կետին հասնելով, գեներալը ակամա նայեց իր աջ ձեռքին, վորը սեղմել էր սափրիչի ձեռքը։ Նայեց, ասես ուզելով համոզվել, արդյոք դպած չե՞ սապոնի փրփուր այդ՝ խնամքով պահված, յերկայն մատերին։

Նա խոշոր քայլերով մի քանի անգամ անցավ հատ, կարմիր դռդրդի վրայից, հետո, մոտենալով գրասեղանին, ջղայնորեն խթեց բեկեչի գործը ծրարի մեջ։ Նա արդեն պատրաստվում էր դռնդահարելու, բայց դրա կարիքը չդգացվեց, վորովհետև մոտավ ադյուտանտը և հայտնեց մայոր Բուժոչի գալը։

Բարկությունից՝ գեներալ Պարին մոռացավ աթոռ առաջարկել իր հյուրին։

Բուժոչը՝ չփոթված՝ կանգնած էր մեծ գրասեղանի մոտ, գեներալի առաջ, վորը նստած էր թավշե բազկաթոռի վրա։ —Ձես արդեն յերեկ յերեկոյան Բերեգսասում հայտնեցի ձեզ իմ կարծիքը,—սկսեց գեներալ Պարին,—և ստածիս ավելացնելու բան չունեմ։ Ձես դժգոհ եմ, շատ դժգոհ եմ սոցիալ–դեմոկրատական վյոսակցությունից։ Դուք վոչ մի բանով, բոլորովին վոչ մի բանով բոլշևիկներից լավ չեք։

— Ձերդ գերազանցություն, դուք վիրավորում եք մեզ— ասաց Բոժոլը՝ ձայնը քիչ բարձրացնելով:

— Ցես հավատում եմ միայն փաստերը: Ձի՞շտ է, որ դուք միխինզ եք սարքել: Ձի՞շտ է, որ այդ միխինգում դժոխքանել եք Լենինին: Ձի՞շտ է, որ ժանդարմները, սախլված են յեղել պիմել գենքի:

— Ճիշտ է:

— Ել ի՞նչ եք ուզում: Ձե՞ք ուզում արդյոք, որ յես համբերեմ, դեռ փոդերով ել ողնեմ բոլշևիկական կուսակցության կազմակերպող աշխատանքին: Ի՞նչ կասեք դրան:

Բոժոլը, ատամները սեղմած՝ կանգնած եր գեներալի առաջ: «Հանգիստ, հանգիստ» համոզում եր նա իրան և արագ մտածում եր այն մարդերը, որոնց Սեկերեչը յերեք անգամ կրկնեց նրան ավտոմոբիլում Բերեզոսսկի և Ունդվարի ճանապարհին:

— Ուրեմն ինչպե՞ս:

— Ձերդ գերազանցություն...—ասեց Բոժոլը, բայց գեներալը կարեց նրա խոսքը:

— Ինչո՞ւ չեք նստում, մայոր.—հարցրեց նա շատ սիրալիր ձևով:—Ինդրեմ՝ պապիրոս ծխեցեք, կամ՝ դուք՝ սիգա՞ր կկաճենայիք:

Բոժոլը ընտրեց ֆրանսիական մի պապիրոս արծաթե մունդշտուկով և, մինչդեռ լուցկիների հետ եր—այդ չեխական անպիտան լուցկիները ամենևին չեն վառվում,—և դանդաղ վառում եր պապիրոսը, նա կարողացավ մի կերպ կարգի բերեր իր մտքերը:

Յերբ գեներալը խոսում և նրա հետ այդպիսի յեղանակով... Նա նայեց գեներալի վրա, հետո պատի վրա փակցրած Մասսարիկի մեծ պատկերին, խորունկ ներս քաշեց պապիրոսի ծուխը, դուրս թողեց և միևնույն ժամանակ խոսեց.

— Ցես լիովին հասկանում եմ Ձերդ գերազանցության յերկյուղը և ինքս ել մեծ չափով զգում եմ այդ: Բանվոր դասակարգի և գյուղացիության հարձակողական ուժը իսկապես սոսկալի չափեր է ընդունում, և պետք է մի բանի ձեռնարկել: Մենք պետք է ձեռներեցությունը մեր ձեռքն առնենք: Բայց ի՞նչ պետք է անենք մենք, Ձերդ գերազանցություն: Մեր առաջ կա յերկու ճանապարհ. ռուսական և գերմանական: Ռուսական ճանապարհը՝ դա բանվորական չարժման վայրագ ճնշումն է: Հետևանքը—պրոլետարական դիկտատուրա, չեկա, աղնվականության և բուրժուա-

պիայի վոչնչացում, կուլտուրայի կործանում: Գերմանական ճանապարհը՝ դա դեմոկրատական բանվորական լեգալ չարժումն է: Բանվորները կարող են կազմակերպվել անպատիժ և բաց կերպով, ուստի դաղանի կազմակերպությունը նրանց համար չունի ձգողական ուժ: Նրանք ամեն որ լսում են և լսելով, տոդորվում են այն բանի համոզմունքով, վոր քայլ առ քայլ, դանդաղ ճանապարհով, մոտենում են սոցիալիզմին, վոր այդ պատճառով չկա վոչ մի կարիք գնված ապստամբության և քաղաքացիական կռիվ: Հետևանքը՝ հանրապետություն, վորի դեմ հարկավ թե պետք է առարկել: Բայց դուք, նույնիսկ... Ձե՞ վոր ձեզ, ձերդ գերդաստանցություն, հայտնի չե, վոր Բերլին մտել են հուսալի դորքեր: Հավատացեք, ամենաճիշտ, ամենազորեղ գենքը բոլշևիզմի դեմ՝ այդ, ձերդ գերազանցություն, սոցիալ-դեմոկրատիան և:

Բոժոլի ընտիր ֆրանսերենը ամեն անգամ զարմացնում եր և գեներալին:

Բայց այսոր գեներալը առանձնապես վատ եր տրամադրված: Այսոր նրան զրգռում եր նույն իսկ այն, վոր այդ ամբարտավան մուժիկը համարձակվում և այնպես լավ ֆրանսերեն խոսել:

—... Ձեզ, վերջապես, վոչ մի րոպե չի կարելի մոռանալ, վոր և՛ հունգարական և՛ լեհական իրերիզենտայի դեմ չկա ավելի լավ գենք, քան թե սոցիալ-դեմոկրատիան: Այնտեղ՝ սպիտակ սերբոր, այստեղ՝ ազատություն, դեմոկրատիա: Հենց այդ պատճառով Պրագայում իշխանության գլուխ և անցած սոցիալ-դեմոկրատական կառավարությունը: Հենց այդ պատճառով ընկեր Տուսսարը առաջին նախարար և: Ձերդ գերազանցություն, դուք պետք և դիմնաք...

— Դիտեմ,—ընդհատեց նրան գեներալը,—դիտեմ, վոչ և պետք, վոչ:

Աչքերը խրեց Բոժոլի դեմքին: Նա վեր կացավ: Գեներալը զարմացած նայեց նրա վրա:

— Դուք դեռ նույնիսկ չասիք, պարոն մայոր, թե ինչքան և պետք, իսկ արդեն պատրաստվում եք հեռանալու:

Բոժոլը նորից նստեց: Նա չնայեց գեներալի վրա և, չսպասելով նրա հրավերին, նոր պապիրոս վերցրեց:

— Իմ կառավարության թույլտվությամբ յես ավելացնում եմ ռումինական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ամսական նպաստը, բայց դուք պետք է հիշեք, պարոն մայոր, վոր բոլ-

չևիզմը, որ ամեն մի գործողություն՝ գեթ հեռավոր կերպով բոլշևիզմը հիշեցնող,—հանցանք է, ապստամբություն: Դուք ինձ պատասխանում եք ամեն մի խռովարար խոսքի համար: Ցես վճռում եմ, վճարում եմ լավ, բայց լավ փողի համար պահանջում եմ լավ աշխատանք: Մենք իրար հասկացանք, պարոն մայոր, այնպես չե՞:

Մայորին ազատ թողնելիս, գեներալը նորից մոռացավ նրան ձեռք մեկնել:

Բոժոչի հեռանալուց հետո, գեներալը նորից ձեռք առավ ֆեյերի զեկուցագիրը և համարյա կես ժամ ծանոթանում եր նրա հետ: Կարդալով, նա գոցեց դրասեղանի արկղում և հետո յերկու անգամ սեղմեց սեղանի զանգի կոճակը:

— Գնդապետ, խնդրեմ՝ բերեք ինձ վոսաիկանական վեկուցագիրը Անտալֆիի մասին:

Սպասելիս՝ նա ջղայնությամբ պարնում եր մատիտով սեղանին:

— Քառատուն միլիոն մարդ,—մրմնջում եր նա:—Զորահավաքի դեպքում այդ չորս միլիոն զինվորից ավելի՛ յե...

«Սպասի՛ր մի քիչ, սպասի՛ր... Ցես քեզ ցույց կտա՛մ...» համոզում եր իրան մայոր Բոժոչը, յերբ լծնում եր սանդուխքով:

Բայց հենց վոր նա դանվեց փողոցում, պայծառ արևը և զարնանային քամին մեկից դգաստացրին նրան:

«Ի՞նչ ցույց կտաս: Ի՞նչ: Գեներալն ունի իշխանություն, իսկ դո՞ւ... Դեհ, սպասիր միայն, սպասիր...»:

— Գիտեք, ընկեր Կոմաչ,—ասում եր նա մի քառորդ ժամ հետո,—բոլորովին սրտաբաց պիտի խոսեմ ձեզ հետ, բայց, իր հերթին, ձեզանից էլ կպատարյալ սրտաբացություն եմ սպասում: Ցերեկվա մխինդից հետո յես միտք ունեյի—ինչպե՞ս այդ բանը արտահայտեմ—ազատել ձեզ պատասխանատու աշխատանքից: Ցես ձեր բարեխղճության մեջ չեմ կասկածում, բայց մխինդի հետևանքները սաստիկ անմանարիեցին ձեզ: Մի մաղ եր մնացել, վոր կուսակցությունը խորտակվի: Ուրեմն, իմ առաջին միտքն եր ազատել ձեզ սպագա աշխատանքից—Բերեզասի զավառակալն էլ պնդեց այդ բանը: Բայց յես միտքս փոխեցի: Ցես չեմ ուզում անարդարություն արտահայտել վոչ ձեր, վոչ կուսակցության վերաբերմամբ: Դուք ազնիվ աշխատող եք և կուսակցության պետք եք: Բայց եւի մեկ առաջվա՝ շատ կարևոր և պատասխա-

նատու պաշտոնում՝ ձեզ չի կարելի: Սմալյավայում, լեռնային չրջանում, պետք է ուժեղ քարտուղար: Ցերե դուք խոստանում եք ինձ չձեռնարկել վոչ մի ինքնուրույն քաղաքական քայլ և կապ մտերմացնել այնտեղի բանվորներին բացառապես անտեսական կռվի համար, աշխատավարձը ավելացնելու կռվի համար, այն ժամանակ...

— Ո՛վ պիտի լինի իմ հաջորդը:

— Լրագրող Սեկերեչը...ա՛հ, իսկապես, չե՞ վոր դուք հին մտերիմներ եք... Սեկերեչն այսոր մտավ կուսակցության մեջ... Մի խոսքով՝ դուք համաձա՞յն եք Սլավյավայում քարտուղար լինելու:

— Համաձայն եմ—պատասխանեց Պետրոսը քիչ մտածելուց հետո:

— Շատ լավ, շատ լավ: Շնորհակալություն ձեզ, ընկեր Կոմաչ:

Բոժոչը ջերմ կերպով սեղմեց Պետրոսի ձեռքը:

Հույս ունեմ՝ դուք հաջողությամբ կաշխատեք: Կուսակցությունը պետք է մասսայական ազդեցիկ կուսակցություն դառնա:

***

— Հեշտ գործ չեր,—ասում եր Սեկերեչը:—Ամբողջ մի ժամ համոզում եյի Բոժոչին: Բայց ավելի դժվար եր գործը Բերեզասի զավառակալի հետ: Անզգամը գլո՛ւխ ունի: Ասատանան պիտի, թե ինչու համար՝ նա քեզ առանձնապես կասկածում է: Պետք յեր ոչնչացնել բառի բուն մտքով կաշառել նրան...

— Կաշառե՞լ...

Պետրոսը զարմանքից բերանը բացեց:

— Վոչ փողով, ի հարկե: Ցես նրան «մեծ մարդ» կզարձնեմ: Նրան պետք է բեկլամա, լրագրի բեկլամա: Այդ հիմարն ուզում է ամբողջ աշխարհի առաջ դառնալ «մեծ մարդ»: Նա կարծում է, թե գեներալ Պարլին կհանդուրժի իր կողքին մի այլ մեծություն: Պիտի գովեմ նրան, մինչև վոր Պարլին սկսե խանդել: Այժմ նա մեզ համար գեներալ Պարլից ավելի վտանգավոր է: Նա չի մոռանա այն բոլորը, ինչ վոր տեսել է Ռուսաստանում: Նա հո գիտե, թե ինչ է բոլշևիզմը: Եյ ի՞նչ, կգովեմ նրան, մինչև վոր ատեկի:

ԱԼԱՎՅԱՎԱ

Անտառախիտ կարպատներ: Փոքրիկ քաղաքիկ Սվալյավա: Հովիտն սկսել է կանաչել: Լեռնալանջերը ղարչնագույն են, ամբողջ բարձր՝ անտառների մութ կանաչն է: Նրանից էլ բարձր—լեռնագագաթների փայլուն, ձյունե ծածկոցը: Տեղ-տեղ, ասես ծաղրելով բարձունքների անմատչելիությունը, նրան բծախորում է գործարանային ծխնելույզների գորշ ծուխը: Սվալյավայի յերեք ծխնելույզները անդադար ծուխ են արձակում:

Գործարանի շուրջը տախտակե բարձր պատ կա, որը մինչև յերկաթուղու կայարանն է հասնում. այնտեղից ուղու դիծը ուղիղ մինչև գործարանի բակն է տանում: Այդ դիծը անցկացված է հաճախարհային պատերազմի ժամանակ, նույն թվականներին էլ ինքը կայարանն է մեծացել: Բազմաթիվ՝ պահեստի ճանապարհներ, որոնք ժանգոտում են, այժմ անպետք՝ բեռնե ուժը ճանապարհները—այդ բոլորը պատերազմի ծնունդ են: Բայց նեղդիմ յերկաթուղին, ծուռուկ չոգեշարժով, որը քաշում է վագոնները մինչև Պոլենա գյուղը, չնայած և պատերազմից առաջ: Նրանով անտառից գործարան են բերում հսկայական ծառեր:

Յերկաթուղու կայարանում Պետրոսին դիմավորում է Տիմկոն: Առայժմ նա կտեղավորե նրան իր մոտ, կուր բնակարան և աշխ: Այստեղ կլինի կուսակցության քարտուղարության:

Փողոցներում Պետրոսին անտզում են վոտքից մինչև գլուխ: Հագնված է ինչպես քաղաքացի, գնում է Տիմկոյի հետ,—ո՞վ կարող է լինել այդ: Պետրոսը զարմացած նայում է շուրջը: քաղաքիկը այնպիսի տեսք ունի, կարծես թե պատերազմը դեռ չաբունակվում է: Տղամարդկանց մեծամասնությունը հագել է զինվորական պատառոտուն վերարկուներ, կոշիկների տեղ է ծառայում վոտքի թաթի չուրջը փաթաթված քարանե լաթը:

Խեղճություն, կեղտ:

— Իսկ դու ո՞յլ բան եյիր սպասում.—հարցնում է Տիմկոն:—Ջե՞ր որ պատերազմը իսկական արբայություն եր այժմյան պայմանների հետ համեմատած: Փողը չարժե տասներորդ մասը պատերազմի ժամանակվա արժեքի: Իսկ այստեղ, որքան էլ կրոնան ընկած լինի, դեռ ևս տասնում են տասնութերորդ թվականի աշխատավարձը առանց որևե ավելացման:

— Այդ դեպքում՝ ինչով եք գոյություն պահպանում:

— Լավազույն ապագայի հույսով:

Առանձին կանգնած կավածեփ անակ բարակ տախտակի կտրով—մի աենյակ և խոհանոց կավե հատակով—ահա Տիմկոյի ամբողջ բնակարանը: Ցեվ այն էլ նրա ձեռքն է ընկել վոչ ուղիղ ճանապարհով: Շրջանային կառավարչի գրադիրը հալրա ման է գալիս այն մուշտակով, վորը Տիմկոն բերել է իր հետ Մոսկվայից: Գրադիրը լռում է դրա մասին վոչ պակաս, քան ինքը մուշտակը, բայց դործն արված է, բնակարանը կա՛:

Տիմկոյի կինը՝ Ոլգան՝ Ուրալից է: Բարձրահասակ, կարմիր, խարտյաշ մազերով: Ուրալից մինչև կարպատ ամբողջ ճանապարհը անցել է վեցամսյա յերեխայի հետ: Յերեխային հիմա հերակրում է և չչի կաթով, և Ոլգան արդեն մի չարաթ է աշխատում քիմիական գործարանում: Յերեխային նայում է Նատաշան:

Նատաշան էլ Ռուսաստանից է ընկել Սվալյավա: Նրա ամուսինը՝ պատերազմական գերի՝ Սարատովից մինչև Մունիախ է յեկել նրա հետ:

— Սպասիր այստեղ,—ասել է նա նրան յերկաթուղու կայարանում,—հիմա կբերեմ սայլապան:

Նատաշան սպասում է մի ժամ, յերկու ժամ, իսկ ամուսնու հետքը չկա ու չկա:

Մունիախի վոստիկանապետը ուղարկել է մենակ ձգված կնոջը մինչև սահմանը, բայց վորովհետև լեհերը հրաժարվել են նրան ընդունել, իսկ այն փողերը, վորոնք ձեռք եյին բերված Նատաշայի աղիքը աճուրդով ծախելուց, հերիք չեյին՝ նրան Գերմանիայից անցնելու համար, ուստի նա այստեղ էլ մնաց: Տիմկոյի կինը աստան ավեց նրան իր մոտ և մեծ դժվարությամբ նրա համար տեղ գտավ գործարանում: Իր հայրենիքում Նատաշան աշխատում եր գլխարկների արհեստանոցում, իսկ Սվալյավայի գործարանում պետք են բանվորի դորեղ ձեռքեր: Շուտով Նատաշան չդիմացավ և հիվանդացավ: Այժմ նա ամբողջ որեր, վոտքերը տակը ծածկած և թաշկինակով փաթաթված, նստած է վառարանի մոտ: Նա փոքրիկ է և փխրուն: Նա ունի նեղլիկ դեմք, մեծ, մութ, վախեցած աչքեր և կապտավուն-սև մազեր, վորոնք բաժանված են մազի գծով և հետև են տանրված:

Ոլգան վառարանից առնում է հնդկացորենի փլավով պուտուկը: Ցերեխան՝ է պատիվ Լենինի՝ կոչվում է Վլադիմիր. նա անհանգիստ է—նրան տանջում է առաջին ատամը: Անդադար նրան որորելով՝ Ոլգան աշխատում է վառարանի մոտ:

— Թեյ չեփիր, Նատաշա:

Տախտակի մեծ սեղանի վրա՝ առանց սփռոցի՝ դրվում է կավե մի մեծ ապուրաման: Կերոսինի փոքրիկ լապտերիկը հազիվ է լուսավորում. Ուղտն, վորը անկյունում կիսաձայն նանիկ է ասում յերեխային, չի յերևում:

Կրակի լույսը սենյակով նայում մտածմունքով Գոնդան, վորն աշխատում է Բզուկ-չոգնչարժի վրա, խոսում է ազմուկով, վատաբանելով բուրժույներին: Նա չուռ ավեց այն նստարանը, վորի վրա, նրանից զատ, նստած էին Պետրոսը և Նատաշան: Նրա բռունցքը մահակի պես է: Ամեն մի նախատասուքյունից հետո նա խլացուցիչ ձայնով խփում է նրան սեղանին, այնպես վոր անոթները դնդղնդում են և վեր-վեր ընկնում:

— Կամա՛ց, Սաենան,—հանդստացնում է նրան Տիմկոն:— Դեռ ժանդարմները աշխարհից չեն վերացել:

— Վախեցա, եղի՛, նրանցից: Մեզ մոտ դեմոկրատիա յե—ամեն մեկը կարող է քեֆ խմել, յեթե փող ունի: Սեղանին էլ խփել կարելի յե, քանի դեռ դատական կատարածուն չի վերցրել:

Մեքենավար Գոնդան ունի սև, խոզանակակերպ մազեր և խաժ դուրն աչքեր, վորոնք հսկայական են, ինչպես կրծքի յերեխայի աչքերը: Նա կրում է դինոմորի վարտիք և բանվորի կապույտ բլուզ: Նրա մասին հայտնի յե, վոր նա կարդում է լրագրեր և նույնիսկ գրքեր: Նա դիտմամբ պոռոտախոսում է և ապտիտ, վորպեսզի իրան «չատ էլ պետուն» չհամարեն:

— Տաքացրու էլի մի թեյնաման, Նատաշա:

Ծերունի Բոչկայի դալով՝ խոսակցությունը լուրջ նյութերի վրա յե դառնում:

— Աշխատավարձ... կազմակերպություն... դործադուլ...

— Աշխատավարձ... սով... բանվորական՝ առաղձի սղոցան... նեղդիծ յերկաթուղի... քիմիական դործարան...

— Հունդարական կրոնա... չեխական կրոնա... հոսած աչյուր... պարտքեր... աշխատավարձ... կազմակերպություն...

Բոչկայը պոլենացի փախստական յե՝ մենավոր ծերունի: Նրա կինը մեռած է, բոլոր յերեք վորդիքը դոհվել են ռազմաճակատում: Ինքը Բոչկայը յերկու անդամ բանտ է նստել: Առաջին անդամ՝ դեռ հունդարական ժամանակներում: Նրա մոտ դատն ուներն ազատագիրք: Զենթերի ժամանակ՝ մշտական խոսակցություններ համար այն բանի մասին, վոր չեխական «յեղբայրները»

հունդարական պարոններից ավելի հեռու պիտի դնան: Նա մի լավատեղյակ ծերունի յե՝ հսկայական հոսակով և ահագին գլխով: Նրա վոտքերը, համեմատելով յերկայն իրանի հետ, շատ կարճ են, ուստի թվում է, թե նա վոչ թե քայլում է, այլ դնում է գինվորական քայլերով: Կերակրի որվանից, յերբ տեղ ունեցավ միտինգը, նրա գլուխը կասկած է. մի քիչ ավելի թուլ դանդ չեր գիմանա այն հարվածին, վորը ծերունու ծոծրակին իջեցրել եր մի մեծ ուռուցք:

— Հին ժամանակները դուցե մեկին հարուստը այնքան պարտքեր կարող եր անել, վորքան յես այժմ արել,—ասում է նա, հատելով իր խոսքը ընտիր հայհոյանքով:—Տասնուչորս ժամ եմ աշխատում որվա ընթացքում... կառնես գործարանի խանութում ալյուր, քիչ բակլա, նավթ և ծխախոտ—մեկ էլ տեսար, ոռճիկ ստանալու ժամանակ վոչ միայն մի պղնձե գրոշ չես ստանա, այլ դեռ պարտքդ մեծացավ մի չարաթվա մեջ: Սկզբում դեռ հաշվում էի, իսկ հետո ձեռք քաշեցի. թող աերն ասուված հաշվե: Մեկ-նաբյին ե. նա պետք և վճարե:

— Մի՞թե ամբողջ Պոլենան այդպես և ապրում:

— Դու հարցրու, մենակ Պոլենա՞ն ե... Իսկ Սվալյավա՞ն, իսկ Դամբոչանլի՞կը, իսկ Ոսա՞ն, իսկ Գի՞զվեզը, իսկ Վո՞լոզը: Փողը կառնես միայն այն ժամանակ, յերբ վաղոցում դանես:

— Կամ յերբ վորպղողություններից փոքրիկ բաժին կընկնի—չե՞, քեռի Բոչկայ,—ժպտալով ասում է Գոնդան:

— Ինչ կա վոր, այն էլ աշխատանք ե,—չփոթված ասաբիում է Բոչկայը, կարմրելով, ինչպես ջահել աղջիկ:—Ինչո՞վ աշխատանք չե: Նույնիսկ շատ ծանր աշխատանք ե...

Հյուրերի հեռանալուց հետո, յերկու կինները յերեխայի հետ գնացին խոհանոց: Տղամարդիկ մնացին քննելու սենյակում: Աշխատն ե մի այլ մուշտակը, իսկ ծածկվելու համար նրանք կաղնե տեղ՝ նրանք առին մուշտակը, վորը ձեռքերին մի այլ մուշտակ—ծեր Բոչկայի վորդու մուշտակը, վորը նա բերել եր կուսակցական քարտուղարության «կահավորելու համար»:

Պետրոսը քնել չեր ուզում: Յերկար ժամանակ նրանք նստած էին նստարանի վրա,—միայն մարեցին լապտերը. նավթը թանկ ե, և դանելն էլ հեշտ չե:

— Գրողը տանի, ինչպե՞ս հասանք մենք այս որին:

— Նույնպես, ինչպես և ուրիշները: Նախ Ռումինիայի դեմ-

վոմբը...Ու–ո՛ւհ, ի՛նչ լավ եյին ծեծում... Հետո չեխերը: Սրանք առանց յերկար խոսքի—բանա, Իլահա: Զեյին ծեծում, խակ վեց չարաթվա մեջ յերկու հոգու մեռցրին: Իսկ ինչքան ժողովուրդ «յեղբայրները» մինչև արյուն վազելը ծեծեցին—հաշվել կարելի չե: Այս փոքրիկ յերկիրը շատ բան կրեց տասնըչորս Թվականից սկսած...

Առաջին որն սկսվեց անաչող: Տիմկոն կնոջ հետ առավոտից դնացին աշխատելու, խակ Նատաշան, վոր պետք ե տան գործերը տեսներ, հանկարծ լրան վատ դդաց: Սկսեց գանգատվել, վոր գլուխն ու սիրտն են ցավում: Կծկվեց և լալիս եր՝ վշտացած յերեխայի պես:

Վերջիվերջ Տիմկոն ել դարձնեց և նույնպես լաց յեղավ: Պետրոսը կանգնել եր չփոթված, չգիտեր, թե ի՛նչ աներ: Բարեբախտաբար, լացը լսելով, վազեց յեկավ դրացի կինը՝ մարմնեղ, քառասուն տարեկանի չափ, հագին գինվորի մահուդից կարած չուքա, տանը գործած չոպիկ և դունավոր թաշկինակ՝ կապած այնպես, ինչպես կապում են յերիտասարդ կանայք:

— Դեհ–դեհ, հոգյակ,—հունդարերեն հանդստացնում եր նա Նատաշային,—մի լաց լինիք, սիրելիս...Թողեց–դնաց անպիտանը, ի՞նչ կարիք այդքան ցավելու: Յեթե չհամեցավ, ձդեց, չարժե նա այն բանին, վոր այդպիսի դեղեցիկ կին նրա համար լա: Դեհ, հոգյակ, սրբեցեք արցունքները: Յերեխային նա առավ ձեռքերի վրա, խակ Պետրոսի վրա բարկացավ:

— Ի՞նչ ես կանգնել, հողիս, բերանդ բացած: Լավ և ոգնեյիր մարդուն փորձանքի մեջ:

— Յեթե յես գիտնայի, թե ինչպես...

— Յեթե յես գիտնայի՛, յեթե գիտնայի՛... հեքիմ կին պետք և համ բժիշկ:

— Լավ և բժիշկ,—ասաց Պետրոսը:

— Դեհ, այն ժամանակ վազիր, կանչիր հուսավ: Նոր բժիշկը կենում և այստեղից չորրորդ տան մեջ—կվճանաս կարմիր կարից: Տախտակիկ ել կա տան վրա:

Սպիտակացրած, ախորժելի տեսքով, կարմրակուռ տնակի դարպասի վրա ճիշտ վոր կա պղնձե տախտակիկ: Նրա վրա ուկրաիներեն և հունդարերեն գրված ե.

Դոկտոր Ռևիչ—բժիշկ-մասնագետ

Բժիշկը առավոտյան սուրճն ե խմում:

— Գալիս եմ, ի՞նչպես չգամ,—փաղաքշական ժպիտով ասում և նա կոտրված հունդարերեն լեզվով:

Նա արագ խմում և սուրճը—և արդեն պատրաստ և:

Նրա գեմքը լիքն և, քիչ ուռածի պես, մաքուր սափրված: Կարապաչ մազերը տեղ–տեղ սպիտակին են տալիս: Նա հագել և մուխի կապույտ, լավ կարված զգեստ, սև, մետաքսե փողպատ, դարչնագույն վոտնամաններ: Լայն վերարկուն վրան ձգելով, նա առնում և գլխարկը և արծաթե գլխով գավազանը:

Լայն, յեղբայրե չընչանակով ակնոցե ապակիների հետևից նա հառել և ուշադրությամբ Պետրոսի վրա իր խոշոր, գորշ աչքերը:

— Գնացինք:

Պետրոսը արագ քայլում և ճոռնմկ մինչով, այնպես վոր ցեխը թռչում և բժշկի վրա: Սա կշտամբանքով նայում և Պետրոսի վրա, բայց նա լուռ և:

Նատաշային հետ նա սկսում և խոսել ուսերեն, մխիթարում և նրան, ինչպես մի յերեխայի, պաղ ջուր և խմցնում և նրա ճակատին դնում և պաղ կոմպրես: Վոլոդյային առնում և ձեռքերի վրա և հանդստացնում և:—

— Դեռ կդան, տղաս, լավ ժամանակները,—ասում և նա, որբելով նրան,—կապրես ավելի լավ աշխարհում, քան թե այն, վորի մեջ ծնվեցիր: Դրան կարող ես հավատալ, մի անգամ վոր այդ բանը քեզ ասում և Բևիչ քեռիդ:

— Իսկապես ի՞նչ և պատահել նրան, հարցնում և Պետրոսը հունդարերեն:

Կնոջը սմուսին և հարկավոր, սմուսին,—պատասխանում և Բևիչը:—Մի սմբակավոր ուսուսակ կամ ուկրաինցի: Բայց, հակառակ դեպքում, հունդարացին ել վնաս չունի:

Պետրոսն ուզում և վճարել, բայց բժիշկը փողից հրաժարվում և:

— Դեղատոմս չեմ գրել,—հանաք և անում նա:

***

Տիմկոն կնոջ հետ, ճաշին տուն վերադառնալով, վառարանը գտնում և չվառված: Ոլգան կպչում և գործի: Այդ կինը արագ և վարպետությամբ ամեն բանի գլուխ և յելնում. վառում և վառարա

նը, մաքրում դեռնախնձորը, կեբակրում յերեխային, վոխում պաղ կոմպրեսները նատաշայի ճակատին և դեռ ժամանակ և գըտնում խոսելու Պետրոսի հետո։ Նա նրա հետ հունդարբերեն և խոսում։

— Դուք մեր լեզուն վո՞րտեղ եք սովորել,—հարցնում և Պետրոսը։

— «Ինտերնացիոնալիստների» մոտ։

— Ո՞ւր։

— Ուրալում և Սիբիրում, հունդարացի կարմիրներից։ Ես այնտեղ «ինտերնացիոնալիստների» դնդում եյի ծառայում։ Աստեղ եր ծառայում և իմ վոլոդենկան,— ավելացնում է նա, ձիու ծաղերով, և իրան և սեզմում յերեխային։—Ձմեռները ամառվա պես չեյի, բայց եյի ձիուց չեյի իջնում։ Այնեն մի հրացան կոչ-ովի պետք եր։

— Ճիշտ և,— պլիով և անում Պետրոսը։

— Դե՛հ, ահա ճաչն էլ պատրաստ և։ Դու քաղցած չե՞ս, ինչ և, Նատաչա։ կեր, կեր, լավ դեռնախնձոր և՝ պղպեղով։ Չես ու-

***

Փարտե կամուրջին մոտենալով՝ մեքենան դանդաղեցնում և ընթացքը։ Մյուս ափին ճամբան սասիկ ծռվում և և Սվալ-յեղան այլևս չի յերևում։ Ճանապարհը դնում և նեղ ձորով՝ յերկու ուղղաձիգ լեռների միջով։ Այս մասում մեքենավարը քիչ դործ ունի, և Գոնդան ծխում և պապիրոս։

— Տես,— ցույց և տալիս նա ձեռքով դեպի հեռուն,— ահա այնտեղ կանդնած եյին հունդարացի կարմիրները։ Վերևից հարձակվում եյին ռումիններն, և այնտեղից էլ՝ ճախից՝ նո՛ւյնպես։

— Աստեղ ռումինները կախեցին ծերունի Ոսադյային,—ցույց և տալիս նա քիչ հեռու՝ բարձր, մենակ կանդնած կաղնու վրա։

— Այս բլրի պակ քանըչորս հոդի չե թաղված, քանըչորս ուկրաինացի—մուժիկ։ Ներանց տասնուչորս թվին կախեց դեներալ Գաֆին նրա համար, վոր իրեն թե ռուսներին եյին ապատում։

— Այն կողքի թևքամած խաչը տեսնո՞ւմ ես։ Այնտեղ յեղբայրական գերեզման և։ Տասնուհինգ թվին աստեղ այրեցին խոլբայից մնացած՝ բոլշևիկ պետվորներին։

— Իսկ ահա, աստեղ նայիր, այս կլոր բլրին... Նույնպես յեղբայրական գերեզման և։ Յերեք հազար ուկրաինցի պետվորներ

էն պահած այստեղ։ Տասնուինը թվի մայիսին նրանք վախանձ-լեհերից այստեղ։ Կարծում եյին, թե այստեղ դեռ հունդարական կարմիրներն են, և յեկան՝ ասես իրանց տունը։ Ռումիններից նրանց թույլ ավին մոտենալու՝ զնդակ անցնելու տարածության վրա, իսկ հետո սկսեցին մոտիկից ջրել նրանց՝ զնդացիրներից։ Յերկու չարաթ անթաղ մնացին։ Մի քանի յերբ քամին մինչև Սվատյավա սկսեց հասցնել դիակների հոտը, ռումինական զնդապետը ջնեց ժողովրդին՝ դիակները թաղելու։

Պետրոսը լուռ և։ Նա սարսափով նայում և դեպի այն կողմը, վորտեղ ցույց և տալիս Գոնդան։

— Մի նայի՛ր...

Բլուրները, խաչերը, ծառեր։

Պետրոսը պապիրոսի ծուխը նձրս և քաշում խորունկ, ծխում և մեկը մյուսի յետևից։

— Պոլենայում նրանք զնում են Գոնդայի մոտ— սպասելու Տիմկոյին, վորը պետք և գա հաջորդ զնացքով։

Գոնդայի կինը, փոքրիկ, ժիր, խարտյաշ մազերով մի լեհուհի, հյուրասիրում և Պետրոսին արևածաղկի բոված սերմերով։

— Ե՛լ վոչինչ չկա տանը — բողոքները տարածում և Գոնդան։

Գոնդայի կինը խոսում և միայն լեհերեն, Պետրոսը նրան պատասխանում և հունդարերեն։ Նրանք ամենևին չեն կարողանում իրար հասկանալ, և փոքրիկ կինը վարակիչ կերպով ծիծաղում և։

Նրանից նչե ոճառի հոտ և գալիս, նրա մազերի մեջ յերևում և խաժդուն ժապավենիկ, բայց փոքրիկ վոտքերին հագել և մեծ, ներքևից մեխեր զարկած՝ զինվորի կոշիկներ։

Նա յերդում և լեհական մի ուրախ յերգ և ծանր կոշիկներով դոփում և դեռնին։

Պատի վրա—սրբերի պատկերներ։

— Լենինը ահա թե վորտեղ և,— ցույց և տալիս Գոնդան սրբի գուկի վրա և հանցավոր ժպտով մերկացնում և սպիտակ, ամուր ատամների յերկու չարք։

— Ցերբևիցե կհանես այնտեղից,— ժպտալով պատասխանում և Պետրոսը։

Լեհուհու ուրախ տրամադրությունը վարակում և և յերկու

տղամարդկանցը: Պետրոսի դեմքից չէր չքանում ժպիտը, ճանապարհի ծանր տպավորությունը գրեթե անցել է: Այժ՝ փչաուերև վոստերով զարդարված, համեստ կահավորված սենյակը նրա վրա ազդում է առանձնապես թարմացնող կերպով:

Տիմկոն գալիս է յերեկոյան դեմ մյան: Ելի մի ընկերի ուղասելով՝ Սվալյավայից, բոլորը մյասին գնում են Ծերունի Բոչկայի մոտ: Ավելի լավ տեղ, ժողովի համար, չի ել կարելի պանել— անտառի խորքում, ուր վոչ մի չուն չի մանի:

Բոչկայի խրճիթում հավաքվել է, բացի Պետրոսից, ևս ութը մարդ· չորսը՝ Սվալյավայից, յերկուսը՝ Պոլենայից և յերկու վայտահատ: Բոլորն ել ղեռ են՝ սատիկ նեղքին ուժ: Վերջին տարինևրում այնքան անգամ նրանք պարտություն են կրել, այնքան չարչարվել, վոր վերջնականապես կորցրել են իրանց հավատը դեպի սեփական ուժերը և ոդնություն են սպասում մյայն դրսից: Հունգարական կարմիրներ, ռուսներ... Առաջինները գնացին, մյուսները դեռ չեն յեկել: Ցավ վոչ վոք չբերից թեթևություն չքավորներին... Իսկ աղքատությունը հաստավ մինչև այսոր: Դեռ, այժմ, արդեն այժմ...

— Ահա նա, Լենինի համբավաբերը,— չչունջով պարզում է Բոչկայը յերկու վայտահատներին:

Ներանցից մեկը՝ խճճված մաղերով մի ուկրայնացի, խաչ է հանում:

— Ուրեմն ինչպե՞ս պիտի անենք, յեղբայրներ:

— Ահա... Զգիտես, թե ինչից սկսես: Ցեթե դուրս հանենք մյը բոլոր փորձանքները...

— Հերթո՛վ ավելք, հերթո՛վ:

— Ոսսայում պատրաստվում է դործադուլ...

— Դեհ, չուտով ել տանուլ կտաք նրան,— խկուկն կտրում է խոսքը Գոնդան:

— Ցեթե տանուլ տանք, դործարանը կայրենք:

— Իսկ հետո ինչո՞վ պիտի ապրենք: Մոխիրը պիտի հավաքենք, ըո՞նչ է:

— Պետք է վճարը վոչ պահաս, քան յերեք անդամ մեծացնել: Այն ել չատ բանի չի բավի: Իսկ պարտքերը՝ ջնջել:

— Կքչեն մեզ, յեթե այդքան ուզենք:

— Կքչե՞ն: Հապա թո՛ղ փորձեն.— կանչում է Բոչկայը:— Մերկ ձեռքերով կխեղդեմ Շաեյնին, վերատեսչին, այդ քոսոտ չանը...

— Դեհ, ղեհ,— հանգստացնում է նրան Գոնդան:— Մենք, ծերունի՛, այստեղ հավաքվել ենք գործի մասին խոսելու:

Բոչկայը լռում է և՝ արմունկները սեղանի վրա հենելով, գլուխը վայր է բերում ձեռքերի վրա: Ալևոր մազերի փնջերն ընկնում են նրա ճակատի վրա:

Պետրոսը լուռ է: Զարմացած աչքերով անաղում է նա կանդնած ութը մարդկանց: Ինչ առաջվա նրա ուրախությունը բոլորովին չկա: Նրանք ազմկում են բռունցքներով, կրճտում են ատամներով, ամենևին յելք չեն գտնում այս փակուղուց: Կավե կարճ չիբուխների ծուխը գրեթե լռիել է և նավթե փոքրիկ լամպերի աղոտ լույսը: Պետրոսը դժվարությամբ է զանազանում ընկերների դեմքերը:

— Ցեթե այդպես, պարզ կերպով, պահանջներ ներկայացնենք, մեր վրա կսկսեն ծլծաղել, իսկ յեթե դործադուլ անենք— քաղցից կմեռնենք: Այո, գլուխը տանի, սա մի խնդիր է... Ցեթե ժամանակին նստեյի Մոսկվայի կուսպլրոցում, անկասկած այժմ արդեն կդիտնայի, թե ինչպես պետք է դործի կոչվել: Սատանա՛ն տաներ իմ հիմար գլուխը:

— Բանն այստեղ գլխի մեջ չի,— ասում է վայտահատներից մեկը:— Ցեկեք, յեղբայրներ, վորոշդություն անենք: Անտառում կարմիր գազան այնքան կա, վոր տարիներ կարելի յե վորսի մասով ապրել:

Մյուս վայտահատը, նախ քան սկսելը, բռունցքը խփում է սեղանին.

— Այրե՛նք անտառը նրանց գլխին:

— Կարծում ես այրված անտառում ավելի՞ կվճարեն:

Ծերունի Բոչկայը բարձրացնում է գլուխը, թոքերով ավելի ոդ է քաշում և թափով իջեցնում է սեղանի վրա իր ծանր բռունցքը:

— Վերջապես, դուք ել արտահայտվեցեք, ընկեր Պետրոս:

Պետրոսը տանջալի կերպով ուժ է անում մի բան հիշելու: Ո՞ւր և նա այդ բանը լսել: Ումի՞ց: Բանտո՞ւմ: Կամ Պոլտավկի՞ց: Ցավ ինչպե՞ս և այդ տեղի ունեցել: Մի անգամ, Տրանսիլվանիայի մի տեղում, այդպես են վարվել ատաղձ սղոցելու

դործարանի առումին բանվորները... Դժվարությամբ և նա կարդի բերում այդ հիշողությունները: Իսկ այսօրեղ դեռ՝ դաշտը չսաղալով՝ պատվում է Մարիա Բոժոչի յերկիմն ապահայտած այն միտքը, վոր այդ մեկն դանդաղեցնում և հեղափոխության քայլը: Մարիան... Բայց մի՞թե կարելի յե չերեխացնել, յերբ դրա հնարավորությունը կա: Մի՞թե հեղափոխության խաչը կթուլանա, յեթե մարդիկ ձեռք բերեն վստահություն, վոր վո՛չ ամեն կոիվ պարտությամբ և վերջանում: Դեհ այո՛, իհա՛րկե... Պոյաեկն և այդ բանը պատմել, ռուսական ռազմաճակատը տանող ճանապարհին...

Այո՛, Պոյաեկը...

— Մի բան ել դուք ասեք, ընկեր:

— Այդ բոլորը ճիշտ է,— մտածկոտ կերպով ասում է Պետրոսը:— Գործադուլը մենք տանուլ կտանք, կասկած չկա: Գործադուլին ել այրել չի կարելի: Վոչ մի դեպքում: Պետք է, ընկերներ, կազմակերպել սաբոտաժ, մասսայական սաբոտաժ...

Հունգարիերեն չիմացողների համար միանգամից յերեք մարդ թարգմանում են Լենինի համբավաբերի խոսքերը: Բացի Տիմոյից և Գոնդայից՝ «սաբոտաժ» խոսքը վոչ վոքի ծանոթ չե— և այնուամենայնիվ նրա գործած ազավորությունը մեծ է: «Ահա՛ նա,— վառվում է տանջված մարդկանց հույսը,— ահա նա՝ ոդնությունը... Այդ ինքը սար... ինչպե՞ս կոչեց նրան Լենինի համբավաբերը»:

— Ի՞նչ... Ինչպե՞ս...

— Սաբոտաժ, մասսայական սաբոտաժ: Գործադուլ չենք անի, բոլորս կմնանք մեր տեղերում, բոլորը առաջվա պես գործի դուրս կդան, բայց գնացքը կշարժվի ավելի դանդաղ և ավելի դանդաղ կպատի մեքենայի շարժիչը, ավելի թույլ կվառե կացինը և ավելի դանդաղ կրնկնի կտրված ծառը...

— Դեհ, հետո՞:

Մարդիկ հիասթափված լուռ են նայում: Լենինի համբավաբերից նրանք սպասում էին ավելի կարևոր, ավելի ծանրակշիռ խոսք:

— Դեհ, հետո՞:

— Ահա բոլորը: Վարչությունը կրավարարի ձեր բոլոր պահանջները, յեթե ամեն մի անիվ ավելի դանդաղ պտտի, քան թե առաջ, և քանի դնա—հետզհետե դանդաղ ու դանդաղ...

— Այո, յեթե մեկն այդ անիվը հատկանար,—ասում է ծերունի Բոչկայը:

— Անիվ մոտ մարդ է կանգնած:

— Մարդ... Անվերջ չարչարանքներից մարդու խելքն ել չի հորանում: Զարնել նա դեռ կարող է, ջայց մի անսակ չափել, կշռել... Վոչ, այդ մեր բանը չե:

— Բայց չե՞վոր պետք է անել,—ասում է Գոնդան, հուզված չինելով իր ճակատը:—Ցնվ կանե՞նք.—համարյա աղաղակելով Բոչկում և նրա բերնից:

— Մե՞ր մարդկանց հետ.—կասկածով զլուխ է յերերում Բոչկայը:

— Մե՞ր մարդկանց հետ:

— Դեհ, մեկ ել պատմիր, յեղբայր, թե ինչպե՞ս նա այդ բանը քեղ պատկերացնում:

Ծխախոտի ծխի միջից հազիվ պլպլում է նավթի լապտերիկի կարմիր լույսը: Կես դիշերի մոտ է, յերբ ծերունի Բոչկայը, թեթևության չունչ քաշելով, վեր է կենում սեղանի առաջից:

— Կանե՞նք.—ասում է նա:

— Ժամանակ է չարժվելու,—պատռնում է Տիմկոն Պետրոսին:—Մինչև Սվալյավա յերկու ժամվա չափ ճամբա կա:

— Նախ քան այդպիսի ճանապարհ սկսելը,—ասում է Բոչկայը,—դուք պետք է մի քիչ բան ուտեք: Ցնս հաց չունեմ, բայց կայ,—դուք պետք է մի քիչ բան ուտեք: Ցնս հաց չունեմ, բայց կայ մի կտոր՝ կովի պաղ միս...

— Վորսի՞ միս.—ժպտում է Գոնդան:

— Այո, յեղբերս... Զուգեց յերևի, անպիտանը իզուր կորչել կոմսի անձեռնմխելի հողի վրա...

ՅԵՐԿԻՐԸ ՏԱՏԱՆՎՈՒՄ Ե

Նեղ ուղու չողնչարժը դեպի Սվալյավա պատվելու ժամանակ բերդներից դուրս յեկավ: Փորձանքը մեծ չե, բայց ամեն բան կարելիներից դուրս յեկավ: Փորձանքը մեծ չե, բայց ամեն բան կարգի բերելու համար պետք յեղավ մի քանի ժամ: Ցերեք յերկայն սայրանքատար դնացք կանգնած ելին այդ ժամանակ առանց չարժվելու: Շրջանի կառավարիչը սկզբում համոզեց, հետո սկսեց վեճ: Շրջանի կառավարիչը սկզբում համոզեց, հետո սկսեց վեճ: Մարդիկ աչխատում ելին քրտինքի մեջ թափանչել և սպասնալ

քինան կանեք առավ, իսկ այն պահեստարանի բանալին, ուր կայլին նոր փոկերը, չարի պես դուրս յեկավ, վոր գանվում եր պահեստարանի կառավարչի ոգնականի մոտ, իսկ սա դեռ առավոտյան Մունկաչ եր մեկնել: Սատան գիտե, թե այդ ախմարը ո՛ւր եր դրել բանալին: Ինչո՞ւ չհանձնեց մի ուրիշին, քանի վոր գիտեր ճանապարհ ընկնելու մասին: Մինչև վերջնականապես պարզեցին, վոր բանալին վոչ մի տեղ գտնելու հնար չկա և մնում է միայն հոտրել պահեստարանի դուռը, այլ ևս յերեք մեքենա կանգ առան:

Ալբանքի վագոնը, վորը յեկել եր Պրագայից՝ «Շատ չոա՛պ»: «Զդո՛ւյշ», «Կրակից զգուշանա՛լ» վերնագրերով, պետք եր, ըստ վերատեսչի կարգադրության, շուտով հենց քիմիական գործարանին մոտեցնել և այնտեղ բեռը վայր բերել: Բայց այնպես դուրս յեկավ, վոր քիմիական գործարանին մոտեցրին մի վագոն յեգիպտացորեն, իսկ Պրագայի բեռը հանձնեցին Պոլենայի ուղեբաժնին: Ցերը սկսվեը հայտնի յեղավ, դնացքը արդեն վաղուց մեկնել եր, և նրան վերադարձնել կարելի չեր, վորովհետև բնականոն յեկած չոգեշարժը փակել եր ճանապարհը: Ձևական հրեատանու չտաբս-կապիտանը, վորը կարգված եր քիմիական գործարանին, ամբողջ յեղած ժողովրդի առաջ գոռում եր վերատեսչի վրա, սպառնալով նրան, վոր գործը հայտնե իշխանության: Վերատեսչը, թեև ավելի ցած ձայնով, բայց նույնպես բոլորովին աչկարա, սպառնում եր չտաբս-կապիտանին, վոր կգանգատվի նրա վրա:

Հաջորդ որը նեղ ուղու վրա ոգնա չպատահեց, բայց չտիտանց բեռնավորված դնացքը փոքրիկ չոգեշարժի ուժից վեր եր: Ցորս վագոն պետք յեղավ քակել: Շոգեշարժը հետ քաշեց նրանց մինչև ուղեբաժանը, կորցնելով դրա համար կես ժամ: Առաջին դնացքը Սվալյավա հասավ ժամ ու կես ուշ: Յերկրորդը ուշացավ ամբողջ յերեք ժամ:

Այդ որը փոկերը գործարանում կարդին եյին, բայց հանկարծակի կերպով սաստիկ խանգարվեց մեքենավարի աստիճանը և, անհետաձգելի հարկավորության համար դուրս վազելով, նա ամեն անգամ կանգնեցնում եր մեքենան: Ցուր եյին նրան առաջարկում տուն դնալ. նա չեր գնում, չուզելով վստահել մեքենան հողմանակի մի մարդու: Մեքենայի հետ տեղի ունեցած յերեկվա դեպքը նրան ստիպում եր ավելի զգույշ լինել: Ճաշից հետո արդեն չորս մեքենա աշխատում եյին ընդմիջումներով:

Ամբողջ որը զուր սպասեցին առաղձը՝ նրա մշակման տեղից: Ինչ վոր թյուրիմացությամբ ահազին կաղնիները լեռների մյուս ծոցը՝ հովիտն եյին իջեցրել:

Ցերկրորդ որը հենց առավոտից Պետրոսի մոտ յեկավ գործարանի հաշվապահը:

— Ինձ պետք է խոսել ձեզ հետ մի շատ կարևոր գործի մասին, պարոն կովաչ:

— Լսում եմ:

— Ցերես առ յերես:

Հաշվապահը գլխով արավ Նատաշայի ուղղությամբ:

— Կարող եք բոլորովին հանգիստ լինել—այդ կինը հունգարերեն վոչ մի խոսք չի հասկանում:

— Ախտուամենայնիվ...

Պետրոսն ուղարկեց Նատաշային խոհանոց:

— Լսում եմ ձեզ:

— Կասեմ կարճ և ուղղակի,—սկսեց հաշվապահը:—Գործարանի վարչությունը պատրաստ է վճարել ձեզ քսան հազար չեխական կրոն այն բանի համար, վոր դուք այսոր և յերթ հեռանաք այստեղից և ել յերբեք չհայտնվեք Սվալյավայում: Պետրոսի պատասխանն ել շատ կարճ եր: Վոչ մի խոսք չասած՝ նա այնպես խփեց հաշվապահի դեմքին, վոր նրա քթից արյուն հոսեց:

Նույն յերեկոյան շրջանի կառավարիչը ձերբակալեց Պետրոսին: Գիշերն անհայտ պատճառով վերատեսչի ոգնականի տունը հրդեհ ընկավ: Առավոտյան դեմ հրդեհը մարեցին, բայց բոլորը, ինչ վոր կրակի ավար չեր դարձել, վերջնականապես փչացել եր ջրից:

Առավոտյան Պետրոսին արձակեցին: Բնակարանում նրան արդեն սպասում եր ինժեներներից մեկը. գործարանի վարչությունը խնդրում և նրան գալ բանակցության: Վարչությունը առաջարկում և աշխատավարձի ընդհանուր ավելացում:

— Կգանք:

Պետրոսը և ուրիշ բանվոր-պատգամավոր նստեցին սեղանի առաջ:

Նրանց դեմ նստած եյին գործարանի կառավարչության յերեք ներկայացուցիչները և, իրրև անաչառ դիտող, ժանդարմի քառմիտորը:

Բոլորի անունից խոսում եր Տիմկոն:

— Ութժամյա բանվորական օր, առաջիկաների ավելացումի հաշվելով վեց ամիս առաջվանից, բոլոր պարագաների ընդում:

Վերատեսուչը չարությունից ցնցվեց:

— Քանո՞վ եք դուք, ընկե՛ր.—կանչեց նա:

Բանակցությունները կպվեցին:

Վերատեսուչը նույն յերեկո մեկնեց Ունդվար:

Հաջորդ որը Սվալյավա յեկան Բոժոչն ու Սեկերնչը:

Բոժոչը խորհրդակցության կանչեց ամեն մի համքարությունից տասը-տասներկուական բանվոր: Տիմկոն և Գոնդան ընթրելին մարդկանց: Դատարկ մնացած պահեստարանում մոտ հավաքվեց մարդ հավաքվեց:

Բոժոչը խորհուրդ եր տալիս չափավորել պահանջները:

Ցերեկ դործարանը կանդ առնի, ամբողջ շրջանը կմնա առանց աշխատանքի: Գործարանը անանկությամբ հասցնել չի կարելի:

— Իսկ քաղցած մեռնել կարելի՞ յե:

— Իսկ մեր կաշին քերթել կարելի՞ յե:

— Դո՛ւ, դո՛ւ... Դո՛ւ էլ ես ասում:

Գաղանային չարությունը խեղդում եր մարդկանց: Ցերեկ Գեորոսը և Գոնդան չմիջամտելին, Բոժոչի կողերը մի լավ պիտի տրորելին: Բոժոչը յերկրորդ անդամ խոսք ստացավ: Դժվարությամբ աջողվեց լռություն հաստատել: Բոժոչը դժգույն եր: Ամեն կողմից նրա վրա նայում եյին ատելությունից վառվող, արյունով լցված աչքեր:

— Ցես միայն նրա համար խորհուրդ ավի ձեղ չափավորել ձեր պայմանները, վոր վախում եյի՝ արդյո՞ք ույժ կունենանք կռիվը մինչև ծայր հասցնելու: Այժմ տեսնում եմ, վոր սխալվում եմ: Ընկերներ, ձեր արդարությունը պաշտպանեցեք մինչև վերջ:

Խորհրդակցությունից հետո Բոժոչը, ինչպես միշտ՝ անաջողությունից հետո, հիվանդացավ: Այնպես վատ դդաց իրան, վոր ույժ չունեցավ տուն ճանապարհվելու և ստիպված եր Սվալյավայում գիշերել: Նրան սենյակ տվին վարչության շենքում: Գեորոսը նրա մոտ կանչեց բժիշկ Բեկեչին:

Բժիշկն ուշադրությամբ քննեց հիվանդին և իսկույն անկողին դրեց նրան: Վատանդ, հայտնեց նա, իսկի չկա, բայց և հանաք անել դրա հետ վոչ մի դեպքում կարելի չե: Ցերեկ հիվանդին իր դրության վրա թեթև նայե, հիվանդությունը կարող և երկանալ:

Բեկեչն ոգնեց Բոժոչին հանվելու, ծածկեց նրան տաք: Ինքը պատրաստակամություն հայտնեց նրա մոտ մնալու գիշերվա ընթացքում, չվստահելով վորևե մեկին՝ հիվանդին խնամելու դործը: Նա ինքը ամեն մի քառորդ ժամ պիտի փոխե պաղ կոմպրեսը, վոր դրել ե Բոժոչի այրվող գլխի վրա:

Մթնեց: Բեկեչը՝ վարդուցրները վայր իջեցնելով, վառեց Լիկարական լապտերը, կանխատես ծածկելով նրան թաչիինակով, վորպեսզի վառ լույսը հիվանդին չանհանգստացնե: Ցերեկվա լուսամուտով մեծ սենյակը խորասուզվեց կիսախավարի մեջ: Ցեկվորների համար հատկացված այս սենյակի հատարակ, քիչ մաչված տարք ու կարգի մեջին՝ իրրև պայծառ մի բիծ աչքի յեր ընկնում Մասսարիկի մեծ, ամբողջ հատակով նկարված պատկերը վոսկեզոծ վայլուն շրջանակի մեջ:

Բեկեչը մոտեցրեց աթոռը հենց հիվանդի մահճակալին:

— Ցավո՞ւմ ե.—կամացուկ հարցրեց նա:

— Ցավում ե:

— Վոչինչ, կանցնի: Վատ բան ե այդ ջղային դլխացավը, բայց չուտով ել անցնում ե: Պետք ե միայն մի լավ հանդստանալ: Մի ժպտա, պարոն մայոր, յես ինքս ել շատ լավ հասկանում եմ, վոր դուք հանդստի ժամանակ չունեք: Բայց դարձյալ, իրրև բժիշկ, յես թախանձագին խորհուրդ կտայի ձեղ հանդստություն: Բայց, ինչպես ուկրաինցի ազդասեր, յես ավելի չուտ պետք ե ծանկայի, վոր դուք աշխատեիք վորքան կարելի յե չատ: Ուկրաինայի դործի համար ինչքան ել աշխատես, ելի քիչ ե: Ամեն մի ուկրաինցի ընդհանուր դործի համար քսանչորս ժամ որնական պետք ե աշխատեր...

Հիվանդը բարձրացավ անկողնում և չվարած նայեց բժշկի վրա: Բայց սա փաղաքշական համառությամբ նորից պառկեցրեց նրան, փաթաթեց և ուղղեց կողքի վերածուված կոմպրեսը:

— Ցերեկ չեք կամենում պառկած մնալ մի քանի որ, մի չարժվելք, մի խոսեք: Մի մոռանաք, վոր դուք հիվանդ եք և ձեր առողջությունը, ձեր ույժերը պահանջում են վոչ թե ձեղ, այլ ամբողջ ուկրաինական ժողովրդին:

Նրան պատասխանեց աղիողորմ մի ՚ոնքոց:

— Ա՜յո, այո,—հառաչեց Բեկեչը:—Շա՛տ ազնիվ մարդիկ զոհում են իրանց առողջությունը, չա՛տ ջահել կյանքեր վոչնչանում են մեծ դործի համար: Բայց այդ զոհերը զուր չեն: Ուկրաի-

նան կդառնա ազատ, հզոր, մեծ: Հարուստ, քառասուն միլիոն ժողովուրդ: Պարարտ սևահող, յերկաթ, ածուխ, նավթ... Հին քաղաքակրթություն: Ամենահինը Արևելյան Ցեվրոպայում... Ի սեր աստծո, մի վեր կենաք, այդ բանը կարող է ձեզ համար չտիտանց ծանր հետևանքներ ունենալ: Պահեցեք ձեր ձեռքերը վերմակի տակ: Այդպես... Վորքան յես հասկացա ձեր չվերջացրած նախադասությունը, դուք, պարոն մայոր, հարցրիք, թե ինչ կապ ունեք Ուկրաինայի հետ: Տարօրինա՞կ հարց: Այդ հարցը ամեն մի ջերմաչափից պարզ ցույց է տալիս, վոր դուք տաքություն ունեք: Մի խոսք, աղերսում եմ ձեզ, յես պատասխան չեմ սպասում իմ հարցերին: Բայց յես ձեզ հարցնում եմ. չէ՞ վոր դուք եք ռուսինական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարը, այնպես չէ՞: Շատ լավ: Իսկ ինչ գործի կարող է ծառայել ռուսինական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, յեթե վոչ Ուկրաինայի ազատության գործի համար: Կարո՞ղ են ուկրաինցի դյուզագիները չեխ ազգայնականներ լինել: Կամ հունգարացի՞ ազգայնականները: Եվ ի՞նչ կմնա նրանց: Ինտերնացիոնալի՞զմ: Այդ խոսքերով՝ բոլշևի՞զմ: Կամ թե—ուկրաինցի ժողովրդի գործը, քառասուն միլիոն ուկրաինցի ժողովրդի գործը: Ընտրեցեք:

Հիվանդը խուլ ձայնով անքաց:

Բեկեչը խեղդված քամը ձայնը նման եր յերգեհոնի հեռավոր ղողանջյունի:

Նրա դորշ աչքերը վառվում էլին, մռա, քնկոտ դեմքը կենդանացավ:

— Զեխ յիղրայրներն ազատեցին Մերձկարպատյան Ռուսիայի ուկրաինցիներին: Իսկ հետևանքնե՞րն ինչպես են: Ամենախոշոր կալվածատերը պրուսացի յե: Կալվածի կառավարիչը հունգարացի: Գավառակալը չեխ է: Գործարանի վերատեսուչը՝ ջհուդ: Արժե՞ չարունակել: Վոչ, ուկրաինական դյուզագիության աղատությունը վոչինչ չրերեց: Նա, ինչպես առաջ, տանում է իր լուծը և ամենքը զբոսնում են նրա քրտինքով: Կարպատների մյուս կողմում, Գալիցիայում, յհեների տիրապետություն է, Ավելի հետուն Որհուրդներն են... Ուկրաինական չարաբաստիկը չկա՞: ժողովրդից

Հիվանդը ծանր անքաց:

— Այո՛, նրանից չարաբաստիկը չկա, բայց էլի ապագան

նրա՛ն է պատկանում: Մոսկվա ապագան: Ամենամոսկվա: Լեհերը դրոհ կտան Որհուրդների վրա—այդ միայն մի քանի չաբաթվա հարց է: Յեթե հաղթեն լեհերը, նրանք կտիրեն Ուկրաինային: Բայց քսան միլիոն լեհերը չեն կարող հպատակեցնել քառասուն միլիոն ուկրաինցիներ: Ուստի՝ լեհերի հաղթության դեպքում, անխուսափելի յե նոր պատերազմ՝ ուկրաինա-լեհական, և այդ պատերազմից լեհերը հաղթող դուրս գալ չեն կարող: Այդպես: Իսկ յեթե հաղթեն բոլշևիկները և Լեհաստանը կորցնեն իր նշանակությունը, Անտանտան վերջապես ստիպված կլինի հասկանալու, վոր վոչ թե փոքրիկ Լեհաստանն է Ցեվրոպայի պահապանը, վոր վոչ թե Լեհաստանին պետք է առաջ քաշել բոլշևիկների դեմ, այլ քառասուն միլիոն ուկրաինցի ժողովուրդը:

— Ինձ եմ ուզում,—ապիրողրմ ձայնով արտասանեց Բոժոչը:

—Զգում եմ, վոր այժմ կկարողանայի քնել:

— Դեռ չի՛ կարելի ձեզ քնել: Առաջ պետք է ուտեք—դուք նաև յերկու հատ թերթաչ ձու և մի բաժակ կաթ: Այն ժամանակ կքնեք: Իսկ վորպեսզի ոգնեմ ձեզ՝ ժամանակը մի փիչ կրճատելու, յես ձեզ կհաղորդեմ մի բան, վորը ընդունակ է ձեզ հետաքրքրելու. գեներալ Պարին ուկրաինցի ժողովրդի մեծ մտերիմն է: Այո, այո... Բայց վորովհետև գեներալ Պարին գործի մարդ է, ուստի նա պատրաստ է փողերով ոգնելու, իսկ վորոշ չափով այժմ էլ արդեն ոժանդակում է ուկրաինական ժողովրդական գործին: Իսկ յեթե հաշվի առնենք, վոր մեր փոքրիկ յերկրից անցնում են յերկաթուղային յերեք գծեր՝ Մինչև Ցեվրոպան Գալիցիայի հետ կապող, յեթե հասկանանք, վոր ռուս-լեհական պատերազմի վիճակը վորոշվելու յե Գալիցիայի դաշտերում, յեթե ըմբռնենք, վոր մեր յերկրում միայն ձեր կուսակցությունը հարմարվում է մասսաների մոբիլիզացիայի համար,—այն ժամանակ, Իվան Բոժոչ, լուսաբը քի՛զ է պատկանում: Ուկրաինական ժողովուրդը քեզանից ազատում է վճռական խոսք: Ուկրաինցի ժողովրդի ազատության գործում մեր յերկիրը կխաղա նույն դերը, ինչպիսին խաղաց Պիեմոնտը իտալական ժողովրդի միության կռվում, և դու, Իվան Բոժոչ, դու...

Բեկեչը չվերջացրեց իր խոսքը:

Հիվանդը ծանր անքաց:

Բեկեչը թեքվեց անկողնի վրա հենց մինչև Բոժոչի ականջը:

— Գնենքրալ Պարվից ստացված փողերով,—չընջաց նա,—յես գնացի չատ գնդք: Այդ գնդքը քո արամադրության տակ է ուղած ցահիդ: Ուզբանցի ժողովուրդը՝ ազատարար պատերազմի պատրաստվելով՝ յիկել է քեզ մոտ, առաջնո՛րդ...

Հիվանդը վայրենաբար ճչաց և մի ցատկումով արդեն կանգնած եր հատակի վրա:

— Դո՛ւրս,—կանչեց նա:—Դո՛ւրս: Ա՛յս րոպեյիս դուրս:

— Բայց, ի սեր աստծո, մայոր, ձեր առողջությունը...

— Ցնս առողջ եմ: Իսկույն դո՛ւրս գնա: Ցնվ յեթե մնկ ել աչքիս յերևաս....

Կատաղությունից նրա շունչը կտրվեց... Սենյակի մեջտեղում րոպիկ կանգնած, հազած՝ միայն ավիատակեղևն, նա սպառնում եր բռունցքով՝ վախեցած, թիկունքով դեպի դուռը գնացող թժկին, և անշուշտ կխեղդեր նրան, յեթե նա չչտապեր շուտով հեռանալ:

***

Առավոտյան կանուխ Սվալյավա Թոռավ ավտոմոբիլով Մարիա Բոժոչը, վորին հեռագրով կանչել եյին հիվանդացած յեղբոր մոտ: Բայց վորքան էլ նա չտապեց, յեղբորն արդեն չզտավ. նա առավոտյան առաջին գնացքով մեկնել եր Ուենգվար:

Ցերբ Մարիան յեկավ Պետրոսի մոտ, այնտեղ հենց այդ ժամինդ սարքել, բայց չրջանի կառավարիչը թույլտվությունը մերժեց: Բացի ծերունի Բոչկայից, խորհրդակցության բոլոր մասնակցողները համաձայն եյին Գոնդալի հետ, վոր միևնույնը պետք է հետաձգել: Բոչկայը վերջ ի վերջո նույնպես համաձայնեց, բայց Մարիան ամենևին չեր ուզում այդպիսի վճռի հետ հաշտվել:

— Ցնս ձեզ ցույց կտամ, Պետրոս, թե ինչպե՛ս պետք է կըռվել:

Ցերեկոյան դեմ նա գնաց դեպի զործարանի դարպասը և, տախտակների կույտի վրա բարձրանալով, սպասում եր բանվորներին: Նա հագին ուներ մուգ զորշ, անգլիական տարազի զգեստ, գլուխը կապել եր կարմիր, կոամաչի թաշկինակով՝ դյուզգի ջահել կանանց ձևով:

— Ընկերք բանվորնե՛ր և բանվորուհնե՛ր:

Բանվորները, վորոնք ահագին խմբերով դուրս եյին գալիս զործարանի դարպասից, խևուն չրջապատեցին Մարիային:

— Ընկերներ, հերի՛ք է աղքատ մնալը: Հերի՛ք է քաղցած յինելը: Ով այսուհետև էլ անտրտունջ հաշտվի աղքատության հետ, նա պատը գլխացան է:

Խանդավառ աղաղակներ: Մարիայի դեմքը փայլում է:

— Ցեթե վարչությունը չընդհատեե իր գրվելի խաղը, գործադրանը կայրե՛նք:

Լռություն: Այժմ Մարիայի բոլոր դեղեցիկ խոսքերը գուր են հնչում: Բազմությունը լսում է լուռ և զղույշ: Տեղ-տեղ լսվում է նույնիսկ անվստահ արտունչ:

Բազմությունը լուռ է մնում նաև այն ժամանակ, յերբ վեց լեգեոները Մարիային վայր են քաշում տախտակներից. նա պաշտպանվում է նրանցից ձեռքերով ու վոտքերով, տատմներով և ցունդհներով:

Մարիան ճչում է, քացի յե տալիս, խածնում է, չանգռում:

Լեգեոներները կապում են նրա ձեռքերը և բերանը խցում կեղտոտ թաշկինակով:

Ցերբ Պետրոսը վազելով գալիս է հանպատրաստից սարքված մխինդի տեղը, Մարիան արդեն չրջանի գլխավոր վարչության մեջն է գտնվում:

Նույն գիշերը նրան տանում են Մունկաչ, վորտեղ գտնվում կայր իսկույն հրամայում է ազատել նրան: Մի չարաթից անցնում են նաև լեգեոներների բռունցքներից կոպատած տեղերը:

Համառ կռիվը Սվալյավայում չարունակվում եր:

Պոլենայում պրովոկատորին ձեռնել եյին մինչև արյուն գալը: Ժանդարմները ձերբակալեցին յերեք վայտահատների, բայց նրանք ճանապարհին փախան: Մյուս որը յերեկոյան ժանդարմին ձեռնեցին այնպես, վոր կիսամեռ արին. հետևից նրա գլխին տոպրակ անցրին—մնացածը արդեն դժվար գործ չեր: Նրա դեմքն, ի հարկե, խլեցին:

Հաջորդ որը բանակցությունները վերսկսվեցին, բայց կես ժամ հետո յերկու կողմերը արդեն չեյին խոսում, այլ մոլեգին բզավում եյին՝ իրար սպառնալով,

վերատեսուչը տեղափոխվեց Մունկաչ:

Պետրոսը բնակվեց Պոլենի անտառում:

Մեքենաները գործարանում հավիտ եյին գործում: Գնացքը չարժվում եր առանց անցորդից դանդաղ:

Գործարան եյին գալիս կանայքը:

— Եւ ինչքա՞ն պիտի սպասենք մեր փողերին: Մ՛թե այժմ եւ պիտի խաբվենք:

Յերեխաները փողոցում ձգում էին քարեր գլխաւոր ինժեների վրա և խմբով յերգում.

Սպասիր մի քիչ, չուն բուրժուա՛,
Բելա Կունը չուտով կգա...

Կռիվը չարունակվեց ևս յերեք չաբաթ: Քանի յերկուչերորդ որը սառրագրեցին կոլեկտիվ պայմանագիրը: Ութժամյա բանվորական որ, ռոճկի կրկնակի ավելացում, բոլոր պարտքերը ջնջել:

Այժմ արդեն անտառախիտ կարպատների բոլոր առաղձ սղոցելու գործարաններում սարոտաժը լիակատար ընթացք էր ստացել:

Սվալյավան լռությունը դարձավ:

Նույնիսկ հոմս Շենբորնի ահագին կալվածքի բատրակները չաչոժվեցին: Սվալյավայի անունը միշտ նրանց բերնին էր:

ՎԱՐԳԱ

Յերեկոյան ժամի վեցն է: Պեմետեյում՝ առաղձ սղոցելու գործարանում բանվորական որը վերջացել է: Դարպասի մոտ տախտակների բարձր դարսված քները կան—առաքման պատրաստ, հարթ տաշված տախտակներ են: Վերևի տախտակի վրա, վոտքերը լայն բացած, կանգնած և մի անծանոթ ջահել՝ խճճված, սև մազերով և մութ, վառվող աչքերով: Ճմռտված գլխարկը պրված և տրորված վարսիկի գրպանը: Յերը բանվորների առաջին խումբը հասնում է դարպասին, նա լայն բաց և անում ձեռքերը և դիմ ձայնով կանչում է.

— Բանվորնե՛ր: Յեղբայրնե՛ր: Յես Լենինից լո՛ւր բերի ձեզ:

Հինգ րոպեից հետո նրան լսում են մոտ յերկու հարյուր բանվոր: Իսկ ելի քառորդ ժամից ժանդարմները նրա ձեռքերին կապանք են դնում: Յորը բանվորներին, վորոնք չատ բարձր ձայնով պահանջ են դնում: Յոթ

ե կաղմակերպվել և վոչ թե բղավել: Տես, ինչպես հիանալի է աշխատում Պետրոսը Սվալյավայում: Ամբողջ վերխովինան է պարթեցրել...

— Վատահացիր ինձ: Պեմբեռլեյ ընկերները վոչ թե մեզնից ղարթնեն, այլ և պարել կսկսեն:

— Հենց դրանից ել չես վախենում եմ...

Նոտակությունը վերջացավ այն բանով, վոր Սեկերեչը Գոռտեսման–Վարդային Պեմբեռ վերադարձրեց: Այնտեղ նրան արդեն սպասում էին: Վերադարձավ նա յերեկոյան դեմ և մինչև առավոտ խոսեց վեց նախկին դերիների հետ, վորոնք վերադարձել էին Ռուսաստանից և մի քանի նախկին մարտիկների հետ՝ հունգարական կարմիր բանակից:

Ցերեկ որից հետո Պեմբեռլեյում սկսվեց մասսայական սարսափ: Բայց այսոնկ գործը այնպես հարմ չեր գնում, ինչպես Սվալյավայում: Դժբախտ դեպքերը չափազանց շատ էին: Մյուս կողմից Վարդայի այն միտքը, վոր բանվորների առանձին խմբերը մրցեն իրար հետ դանդաղ աշխատելու գործում, հիանալի աջողվեց:

Բայց Սվալյավայի անցքերը միայն բանվորները հաշվի չառան: Վարչությունն ել հաշվի առավ: Միայն Պեմբեռլեյում վոդ խոստացան վոչ թե Վարդային, այլ ուղղափառ տերտերին: Իսկ տերտերին վոդը շա՞տ պետք կեկավ:

— Ինչպե՞ս պետք չեղար: Զե՞րվոր ուղղափառ տերտերը Պեմբեռլեյում վոչ յեկեղեցի ուներ, վոչ ռոճիկ: Բանն այն է, վոր հունգ—կաթոլիկ տերտերները շատ դլխի ընկան, վոր կարլ Թագավորի պատկերի տեղ պետք է Մատարիկի պատկերը կախել: Ներանք չեխական տերության ամենահավատարիմ ծառաները դարձան, և չեխերը այժմ հալածում էին ուղղափառներին վոչ պակաս յեռանդով, քան իր ժամանակին հունգարական ավազանիններն էին այդ բանն անում: Ավելի ճիշտ՝ կուզեին հալածել: Ցանկությունը կար, բայց ուժն եր պակասում: Ուղղափառ տերտերները աչխատում էին բոլոր ուժով: Հունգ–կաթոլիկ տերտերները հենվում էին ժանդարմների վրա, իսկ ուղղափառներն սկսեցին հայհոյել չեխերին, և այս ձայնը ժողովրդին ավելի յեր համակրելի, քան պատական կատարածուի ձայնը: Հունգ–կաթոլիկ տերտերն ուներ յեկեղեցի և ռոճիկ, իսկ ուղղափառը—հավատացյալներ: Հավատ կեսից ավելին՝ իսկապես՝ աստվածությունն եր դեպի չեխերը, բայց

այդ մի առանձին նշանակություն չուներ. հավատացողները հավատացողներ են:

Այդպես ուրեմն՝ Պեմբեռլեյի աստղած սղոցելու գործարանի դանձապահը՝ պարոն Կլեյնը դնաց Պեմբեռլեյի ուղղափառ տերտերի մոտ: Տերտերը մի դեղեցիկ, բարձրահասակ, սևամորուս տղամարդ եր, վորը Մունկաչում պատվիրել եր կարել իր համար հենց այնպիսի ֆարաջա, ինչպիսին հագնում են մոսկովյան տերտերները:

Պարոն Կլեյնը վերատեսուչ Շլեզինգերի անունից հանձնեց տերտերին մի մեծ, կրծքի վրա կրելու, արծաթե խաչ և առանց այլևայլության հայտնեց նրան, թե պարոն վերատեսուչ Շլեզինգերը, ինչ է սպասում ուղղափառ յեկեղեցուց: Կես ժամից հետո համաձայնությունը կայացած եր:

Տերտերը գործի կպավ:

—Իսկապես, դու ի՞նչ դավանության ես, ընկեր Վարդա,— սկսեցին հանկարծ մարդիկ հարց ու փորձ անել:

— Ինչ դավանությա՞ն: Լուտերական, ի հարկե,—պատասխանում է Վարդան, ցույց տալով Վիեննայում կեղծված՝ ծննդյան վկայականը:

— Հըմ... Հըմ...

Տերտերն իր գործը դիտե. չի անցնում նույնիսկ մի քանի որ, արդեն ամբողջ ընկերը զբաղված է. լավ բան չի դուրս գա, յեթե ուղղափառները լուտերական մեկին կուսակցական քարտուղար ունենան: Պկղրում խոսք տրտունջը բացահայտ վրդովմունք է դառնում, յերբ սկսում են խոսել, իբրև թե Վարդան նույնիսկ իսկական լուտերական չէ, այլ միայն մկրտված հրեա: Վերատեսուչ Շլեզինգերը այդ հակասեմիտական պրոպագանդայի հոգին է:

— Ջգույշ յեղեք, յեղբայրներ: Այդ ջհուդը վատ մարդ ունի: Սարոտաժը թուլանում է: Վարչության անդամները նորից չնորհք են ստացել ճառելու:

— Ի՞նչ է այս: Ի՞նչ է կատարվում: Ցեղբայրնե՛ր... Ընկերներ...

— Լսո՞ւմ ես, Վարդա,—ասում է միաչքանի Յուրկոն՝ հսկայական հասակով վայտահատը, վոր զրկվել է ձախ աչքից Սոլնոկի կամրջի կռվում:—Լսո՞ւմ ես, պետք է մի բան անել:

— Իսկապես՝ բանն ինչո՞ւմն է:

Միաչքանի Յուրկոն ասում է առանց քաչվելու.

— Ջե՞ վոր չհուզնեն են Քրիստոսին խաչել...

— Իսկ ուրիշ հոգսեր դուք չունե՞ք:

— Բայց չե՞ վոր... Այդ անտառի բնակիչները մութ մարդիկ են:

— Դեհ, լավ,—ասում է Վարդան և ուղղակի գնում է ուղղափառ տերտերի մոտ:

Նրա գործը հաջող է. տերտերը տանն է: Նա կանգնած է թռկում, սիրով շոյելով մի մեծ, տհմիկ, խորհրդի խոզի:

— Փա՛ռք Հիսուս Քրիստոսի անվան: Ցես ձեզ մոտ եմ յեկել, ձերդ սրբազնություն: Կարևոր գործով: Դուք յերևի սրտանց կուրախանաք. ուզում եմ ուղղափառություն ընդունել:

Տերտերի խոզը գեր է և գեղեցիկ—վերատեսուչ Շլեղինգերը միայն յերկու որ առաջ նվիրեց նրան: Տերտերը՝ ֆարալյան մինչև ծնկները վեր քաշած, լվացքաջրի դույլը ձեռքին, չխոթված նայում է Վարդային:

— Այդ ի՞նչ բան եք հնարել: Հասակավոր մարդ, և ուզում եք հավա՛տը փոխել:

— Գիտե՞ք ինչ,—ասում է Վարդան հեզությամբ.—ինքս էլ հասկանում եմ, վոր այդ բոլորը հիմարություն է և միայն, բայց ի՞նչ արած... Գիշերը յերազումս տեսա մի հաստատուր, ճաղատ աուրբ և նա ինձ ասաց. «Դեհ, ընկեր Վարդա, յեթե չես ուզում ուղղակի գժոխք գնալ, խնայն ուղղափառություն ընդունիր»: Դուք հո հասկանում եք, ձերդ սրբազնություն, վոր չես վոչ մի ցանկություն չունեմ գժոխքն ընկնելու:

— Ի՞նչ է յերազը: Դատա՛րկ բան.—պատասխանում է տերտերը և վայր է դնում լվացքաջրի դատարկ դույլը:

Խոզը գունչը կոխում է դույլի մեջ, հետո հիասթափված հետ է դառնում և դժգոհությամբ խռնչում է:

— Ամո՛թ ձեզ: Ի՞մ և ուշադրություն դարձնում յերազների վրա.—արտասանում է տերտերը խրատական ձևով, ասես բեմից և խոսում:

— Ամոթը ամոթ է, ձերդ արժանապատվություն, բայց ինչ արած. հավատում եմ յերազի: Ցևվ բացի դրանից, պետք է ասեմ, վոր յես համոզմունքով եմ ձգտում ուղղափառ դավանության անցնել:

— Հալածված հավատա՛...—ասում է տերտերը, մի ձեռքով քորելով խոզի վիզը, իսկ մյուսով իր մորուքը չփնելով:—Բանտ, կալանքներ, նույնիսկ նաև մարտիրոսական մա՛հ և ոչ մեծ ուղղափառներին:

— Վոչինչ, ձերդ սրբազնություն: Արդեն և՛ վոջիլներից եմ տառապել, և՛ քոսից, և՛ դնդակ էլ է փորումս մնացել, և՛ բանտում եմ փտել—մի՞թե մարտիրոսությունից եմ վախենում...

Տերտերը թողնում է խոզին և արդեն յերկու ձեռքով չփում է մորուքը: Նա կնճռոտում է ճակատը և չփումը փոխում է լրջության:

— Հետո՞.—չոտպեցնում է նրան Վարդան:

— Ցեկեք վեց չաբաթից,—ասում է տերտերը և՝ առանց մի խոսք ավելացնելու, մտնում է իր տուն:

— Սպասիր, քո մերը...—վնթփնթում է Վարդան և հաջորդ րը նորից գնում է տերտերի մոտ—այս անգամ արդեն չորս ուժեղ մուժիկների ուղեկցությամբ:

— Մկրտության յեկանք, ձերդ սրբազնություն,—սկսում է Վարդան:

Տերտերը աչքերը լայն բացած նայում է նրա վրա:

— Ի՞նչ եք հնարել, վորդյակներ: Պետք է վեցշաբաթյա հրահանգ հավատի մեջ, յերկշաբաթյա խորհուրդ...

— Ժամանակ կորցնելու տեղը չէ, տեր հայր,—խոսքի մեջ է մտնում միայչքանի Ցուրկոն:—Մեչա ասել եմ տերտերներին, և առհասարակ աստվածապաշտ մարդկանց չեմ տարել: Սակայն, վկա յե աստված, ափսոս է, տեր-հայր, յեթե ձեր ղևսին մի փորձանք գա: Ջաեսնեմ կյանքումս կախված բուրժույի, յեթե մեկիկ-մեկիկ չփեսեմ ձեր մորուքը, ձեր՝ յերկար ժամանակ մեծ-մեծ խոսելու դեպքում:

— Ի՞նչ պետք է նրան լսել:

— Ջարդե՛լ նրա ոգին:

— Համբերություն, տղերք, համբերություն: Մի մոռանաք, վոր մենք գործ ունենք աուրբ մարդու հետ, աստծուն ծառայողի հետ: Դեհ, ինչպե՞ս պիտի լինի, տեր հայր:

Քառորդ ժամից Վարդան ստանում է մկրտության վկայական:

— Այսօրվանից յես ուղղափառ եմ,—ասում է նա նույն որը գործարանի դարպասի մոտ չարք-չարք կիսած աստղաձևերի վրա յից:—Ահա, տեսեք, մկրտության վկայականս է: Ցես արի ձեր կամեցածն ինձ պես, բայց դուք էլ հիշեցեք՝ ջուր և հաց չի ստանա պետությունից նա, ով կմոռանա, վոր ամեն մի ուղղափառի տերը Ներքին Ինտերնացիոնալն է:

***

«Թանկագին ընկեր Սեկերեչ։ Իմ ուղղափառ դառնալու որից է վեր ամեն գործ ընթանում է կարգին։ Ցեվ չես զրում եմ քեզ, իսկապես, մյայն նրա համար, որ յերեկ պատահեց անսպասելի դեպք. Պեմեռե չեկան յերկու մարդ՝ պարոնների արտաքինով, որոնք վելիկոռուսական կուսակցության ագիտատորները են, և սարքեցին մյոնդ տերտերի տան առաջ, սաստիկ հայհոյեցին հունգարացիներին, հրյաներին, չեխերին, բոլշևիկներին և լեհերին, բայց ամենից ավելի ուղրաինցիներին բաժին ընկավ նրանցից։ Ցես չգիտեյի, թե ինչպես պետք է վերաբերվել դրան, և լավ համարեցի ձեծել նրանց ինչպես հարկն է և դյուղից դուրս քշել։ Այդպես էլ արինք։ Այժմ ասում են, թե դրա համար մենք կարող ենք մի լավ տուժել։ Ցես, ճիշտ է, վախկոտներից չեմ, բայց ելի լավ կլինի, յեթե ինձ դրես, թե իսկապես ինչ են ուզում վելիկոռուսները և ինչպես վարվել նրանց հետ, յեթե նորից այստեղ խորհեն քթները. սակայն այդ բանը չեմ կարծում. բարեխիղճ կերպով մենք թակեցինք նրանց։

Իսկ ընդհանրապես, ինչպես արդեն ասի, գործերը կարգին են։

Սոցիալ-դեմոկրատական բարևներով՝
բայոնի քարտուղար՝ Վարդա»։

***

Ապրիլի յերեսունին Պեմեռեյում ստորագրվեց կոլեկտիվ պայմանագիրը՝ Սվալյավայի համաճայնության որինակով։ Մայիսի մեկին կայացավ մյոնդ. յերկուսին՝ գործարանում, յերկարատև սարսափից հետո, վերսկսեցին աշխատանքը, իսկ յերեքին վարպան Սեկերեչից հեռագիր ստացավ.

«Անհապաղ անձամբ հասցրու կոլեկտիվ պայմանագրի պատճենը Սվալյավայի կուսկոմիտեի քարտուղարության»։

— Հըմ... Ամենահետաքրքիրը կերպով Սվալյավա ինչպե՞ս հասնեմ. —հարցնում է վարդան Ցուրկոյին։

— Վոտքով կհասնես ամենաարագ կերպով և շատ շուտ։ Ցերկաթուղով քեզ պետք կլինի ավելորդ ճանապարհ անել մինչև Զաստկայարանը և այնտեղից, Մուկաչևի վրայով, մյայն ուշ յերեկոյան կհասնես Սվալյավա։ Իսկ վոտքով այդ բանը քեզանից

կմոլե, ամենաշատը, հինգ-վեց ժամ։ Ճանապարհն ուղիղ է, հնալի խճուղի, հենց այն, որը Բուդապեշտից՝ Ուժոկի վրայով տանում է Լվով։ Հին՝ ռազմական ճանապարհ է։

Ճուղու յերկու կողմից լեռներն են ձգվում։ Զախ կողմում նրանք մութ կանաչ են. այնտեղ գերակշռում են փշատերև անտառները։ Աջ կողմում դեպի հարավ, լեռները ծածկված են կաղնիների բաց դույնի կանաչով։ Մի ժամվա ճանապարհից հետո լեռների այստեղ փոխվում են բլուրների, որոնք ծածկված են խաղողի այգիներով։ Մյուս կողմում պատկերը նույնպես փոխվում է. ամեն տեղ մութ կանաչ անտառը հերթով փոխվում է կաղնիների, բարդիների և կեչիների բաց դույնի տերևներով։

Կանաչի զանազան դույների միջից կարելի յե ջոկել վայրի շաբանակենու ծաղկող փնջերը։

Փոյտիորը թխկացնում է, սլիրոլը սուլում է, սաղարթը սոսափում է։

Հանկարծ վարդայի սիրտն ուղեց յերգել.

Եժա՛ն է քո արյունը, չքավո՛ր։
Կվաստակես սղնձե մի գրո՛շ...

Յերկու ժամ քայլելուց հետո վարդան նկատում է մի բարձր չինք կարմիր կտուրով և վոքրիկ աշտարակներով։ Ելի մի քիչ—և նա կանդնած է մի չքեղ կալվածքի։ Նույն րոպեին հանդիպակաց կողմից կալվածքի դարպասին մոտենում է մի մեծ, բաց մանիշա կաղույն ավտոմոբիլ և նրա միջից դուրս է գալիս Անտալֆին։ Մինչև վոտքը հասնող՝ ճամբի վերարկու, ավտոմոբիլի գլխարկ և ավտոմոբիլի մեծ ակնոցներ։ Ցեթե Անտալֆին չխոսեր առաջինը, վարդան ամենևին չեր ճանաչի նրան։

— Բարև՛, Գոտաեսման։ Վո՞րտեղից այստեղ ընկար։

— Ա՛յ քեզ բան։ Անտա՛լֆի, վո՞ր սատանան քեզ այստեղ բերեց։

— Ցես կապալով վերցրի այս վորսորդական դղյակը։ Շինված է նա, իսկապես, վո՛չ ինձ համար, —նրան, շատ տարի առաջ, չինել է մի կոմս, պատրաստվելով հրավիրել իր մոտ վորսի Վիլհելմ կայսրին։ Բայց վորովհետև Վիլհելմն այժմյան ժամանակներում հաղիվ թե այստեղ չնորհ բերե, յես էլ վճռեցի կապալով վերցնել նրան, վոր դուր տեղը դատարկ չմնա։

— Ինչի՞ դ պետք վորսորդական դղյակը։

— Ճիշտ ասած՝ չես ինքս էլ լավ չգիտեմ: Մի բանի պետք կլինի:

Իսկ դո՞ւ այստեղ ինչ ես անում:

—Ես Վոլոցում փոխանագործ եմ: Այստեղ քիչ հեռու էլի հվմա, այստեղից յերրորդ գյուղում: Կանչել էին չայրվող պահարան կարկատելու:

— Պետրոս Կովաչն ե՞լ այս կողմերումն է:

— Ա՛յո,— ասում է Վարդան:— Աչխատում է Բերեգասում, ինչ վոր կոոպերատիվում:

— Բերեգասո՞ւմ: Իսկ չես կարծում էլի Ունդվարում...

— Կարելի չե: Ճիշտ չգիտեմ:

Մի քանի րոպեյից Վարդան մնաս բարև է ասում: Հրաժարվում է ճաչից և նուչնիսկ մի պահում նրան ավտոմոբիլով Վոլոց հասցնելու առաջարկությունից:

— Մեծ աղա չե դարձել, չարասրտությամբ նկատում է Սնատֆին:

Վարգան Սվալյավա չե հասնում ցերեկվա չորս ժամին: Պետրոսը տանը չէ—նա դեռ առավոտու չվել է դեպի Պոլենա: Ցերեկ Վարգան գալիս է Պոլենա, Պետրոսն արդեն ատերբումն է, անատուում: Գոնդան, վոր Սվալյավայից վերջին դնացքն է բերել, հրաժիրում է Վարգային իր մոտ:

— Ընկեր Կովաչն էլ ինձ մոտ պիտի գա,— ասում է նա:

Ցեվ իսկապես մի ժամից քիչ ավելի անցած գալիս է Պետրոսը:

— Գուտտեսման...

Ներանք գրկվում են արցունքներն աչքերին:

— Ինչո՞ւ դու ընկեր Վարգային անուտա չբերիր.— հարցնում է Պետրոսը Գոնդային:

— Ընկերի ճակատին չէ գրված, վոր...

— Դու իրավացի չես: Գիտե՞ս,— պատնում է Պետրոսը Վարդային,—ինչո՞ւ չեն քեզ Սվալյավա կանչել:

— Վոչ:

Պետրոսը գլխով է անում Գոնդային, սա դուրս է գնում և չուտով վերադառնում է մի հակ թերթիկներ բերելով:

Ցորը լեզվով— չեխերեն, սլովակերեն, ուկրաիներեն, ռուսերեն, հունգարերեն, գերմաներեն և լեհերեն—գրված է. խորհրդային Ռուսաստանի բոլշամիներին գենք մի՛ մատակարարեք:

— Մի՞թե բանն այդքան հեռու չե գնացել.— հարցնում է Գուտտեսմանը զարմացած:

— Դու ի՞նչ ես ասում: Թերթ չե՞ս կարդում:

— Մեզ թերթը հասցնում են միայն յերրորդ որը:

— Ա՛, կարդա...

«Մունկաչի լրագրի» առաջին էջի վրա խոշոր տառերով տպված է.

Լեհ ռազմուները ռումբեր նետեցին Կիևի վրա:

ՊԱՏԵՐԱԶՄ

Մենք կարմիր հեծելազոր ենք, և մեր մասին պերճախոս դյուցազներգուներն են պատմում:

Մերձավոր յերկու չաբաթվա ընթացքում Մերձկարպատյան Ռուսիայի սահմաններում սկսեցին լույս տեսնել տասնյուրթը նոր թերթ. հինգը՝ ամենորյա և տասներկուսը՝ չաբաթը մի անգամ: Հունգարական, ուկրաինական, չեխական, հրեական թերթ: Գոյություն ունեցող կուսակցություններից ամեն մեկը, և նուչնիսկ նրանք, վորոնք գոյություն դեռ պիտի ունենային, իր տպագիր թերթն ուներ: Ըստ լեզվի, ուղղության, քաղաքական պլատֆորմայի այդ թերթերը չուտ էլին դանազանվում, բայց մի բանի մեջ միատան էլին. լեհ-ռուսական պատերազմի հարցերում:

Բոլոր կուսակցությունները և թերթերը միատան էլին այն բանում, վոր կարպատների մյուս կողմում՝ իրանց հարևանությամբ տեղի ունեցող պատերազմը մարդկության վերջին պատերազմը պիտի լինի: Ներանք բոլորը կարծում էլին, վոր յերբ բոլշևիզմին վերջ տրվի, Ցեվրոպան հանգիստ կվերականգնվի, դրանից հետո կլինի ընդհանուր բարօրություն, վոր վաղուց և սպասվում: Թերթերից վոչ մեկը կասկածի մի նչույլ անգամ չուներ, վոր Մերձկարպատյան Ռուսիայի չարչարված ժողովուրդները, վոր Մերձկարպատյան Ռուսիայի բոլշևիկները և—ինչպես հենց իրանց առաջ, նույնպես և ամբողջ մարդկության— խոսիվ չեղոքություն պահպանելը:

Իսկ չեղոքությունը— այդ ինքն ըստ ինքյան հասկանալի չե, թեև դրա մասին չի եղ խոսվում— չի արգելում գենք մատակարարել պատերազմող կողմերին:

***

Մինչև այդ ժամանակ Մերձկարպատյան Ռուսիայում խաղաղության պահապան եր կանգնած— բայց չեխերից— միայն Ֆրանսիական զինվորական միսիան: Այժմ՝ յերկու չաբաթվա ընթացքում քաղաք եկին յեկել ամերիկական, անգլիական, իտալական և բելգիական զինվորական միսիանները: Հյուրանոցները լցվել եկին: Ճաշարաններում չամպանյան գինին հոսում եր գետի պես: Փողոցներով՝ նոր, չքեղ ավտոմոբիլների մեջ նստած՝ սլանում եկին շլացուցիչ պճնալի կանայք:

Մեկը մյուսի յետևից գալիս եկին արևմուտքից յերկայն–յերկայն գնացքներ և Մոսկվաչի, Սվալյավայի, Վերեցկեյի և Լավոչկինների վրայով գնում եկին Լվով:

Ուժգորոդում և Մոսկվաչում խանութների լուսամուտները գարդարվել եկին՝ չարված—թանկագին, ամենաընտիր բաներով, վորոնք չքացել եկին համաշխարհային պատերազմի հենց սկզբից և վորոնց անուններն անգամ պատերազմից առաջ ել ծանոթ եկին՝ միայն՝ շատ ունևոր մարդկանց:

Ամեն բան. ինչ վոր կուզես, կարելի յեր գտնել խանութներում և ամեն բանի համար ել գնորդներ գտնվում եկին:

Կեսորին հրապարակներում թնդում եկին զինվորական նվագախմբերը, հավաքելով զբոսնողների բազմություններ:

Մոսկվաչ յեկավ ռուս բալետ: Բեմը գարդարված եր չեխական աղգային և ռուսաց ցարական զրոշակներով:

Հոսում եր չամպանյան գինին: Հեղեղում փողը:

Դոլլարներ, ֆունտեր, ֆրանկներ, լիրաներ, գլոտներ, լեյաններ, կրոնաներ:

Անտառախիտ Կարպատների յերկերը դեռ այսպիսի առնախմբություններ չեր տեսել:

Ցերեժչտություն, յերգ, պարեր, խցաններով խփոտմունք:

Ցերկայն, յերկայն գնացքներ եկին սլանում Վերեցկե—Լավոչնե—Լվով ուղղությամբ:

***

ՀԵՂՋԻՆԵՈՐՀԴԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՇՏԱԲԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ, 1920 Թ. ՄԱՅԻՍԻ 7–ԻՑ

Կիյեվի շրջանում մեր մասերը՝ լուսս մայիսի 6–ի գիշերից համառ կռիվներ մղեցին թշնամու գերազանց ուժերի դեմ՝ Կիյեվից հյուսիս–արևմուտք և հարավ–արևմուտք գտնված գիրքում. յեվեկոյան դեմ թշնամուն հաջողվեց մոտենալ քաղաքի ծայրերին, և մեր մասերը, հակահարձակումներով թշնամու գրոհին դեմ տալով, համաձայն հրամանի՝ սկսեցին աստիճանաբար հետ գնալ՝ Դնեպրի ձախ ափը:

***

Հաղիվ եր լուսը բացվում, յերբ Սեկերեչին, վոր քնած եր առավոտյան խոր գնով, քարթեցրեց մի կանուխ հյուր:

— Մի բարկանաք,— սկսեց Անտալֆին,— վոր այսպես կանուխ անհանգստացնում եմ ձեզ: Բայց յես պետք է հենց այսօր նավս անհանգստացնում եմ ձեզ: Բայց յես պետք է հենց այսօր առավոտյան մեկնեմ Մոսկվաչ, իսկ այն գործը, վորի պատճառով յեկել եմ ձեզ մոտ, հետաձգել չի կարելի:

Սեկերեչը՝ բերանը մեծ բացած հորանջելով՝ զուր եր աչքերը բռունցքով տրորում, հուսալով քշել քունը, և, վերջապես, խընդրեց պատկերս:

— Նրանից կատարելապես ուշքի կգամ,— բացատրեց նա:

Անտալֆին ձգեց իր վոսկե պորտսիգարը Սեկերեչի վերմակի վրա և հետո մոտեցրեց կրակը:

— Ի՞նչ գործով, ընկեր Անտալֆի:

— Ցես, իսկապես, գործով եմ յեկել, ընկ. Սեկերեչ: Շատ կարևոր գործով:

— Հիանալի,— պատասխանեց Սեկերեչը:— Սերո՞մ ես ուզչ գործեր:

— Նախ քան սկսելս՝ թույլ տվեք, թանկագին ընկեր Սեկերեչ, մի հարց առաջարկել ձեզ: Ասեք լինճ, միայն թե սրտաբաց, ո՞ւմ համար եք դուք՝ ճիշտն ասած՝ աշխատում:

— Ինչպե՞ս թե ո՛ւմ համար: Տարօրինակ հարց: Ցես աշխատում եմ փոցիալ–դեմոկրատական բանվորական կուսակցության և «Ուժգորոդի լրագրի» համար:

— Ցես չեմ հարցնում, թե ուր եք դուք աշխատում— այդ բանը յես առանց այն ել գիտեմ: Դուք լինճ ասեք, ո՛ւմ համար եք դուք աշխատում: Հավատացեք լինճ, դատարկ հետաքրքրությունից չե, վոր յես տալիս եմ այդ հարցը:

— Հավատում եմ, անպայման հավատում եմ, ընկեր Անտալ–

ֆի: Դեհ... Ցերեկ ասեմ սրտաբաց— չես աշխատում եմ ինքս ինձ համար: Ցես ուզում եմ ապրել:

— Ուրեմն՝ դուք չէք կամենում սրտաբաց լինել ինձ հետ: Թող այդպես լինի: Բայց չես հանդես եմ գալիս բաց ճակատով: Ցես նրա համար այդ հարցը ձեզ առաջարկեցի, որ՝ այն կուսակցությունը, այն դասակարգը կամ այն ապպը, որի համար դուք աշխատում եք, չես պատրաստ եմ և կարող եմ գինել: Ցես չափազանց երկար դիտողությամբ եմ առաջնակարգ հրացաններ, ատրճանակներ, ձեռքի ռումբեր, մաս-մաս բաժանվող գնդացիրներ, վամփուշտներ, ռազմական խոհանոցներ, գինվորների կոշիկներ— նույնիսկ մանր թնդանոթներ: Ձեր կուսակցությունը, ծախսելով հնչին գումարներ, կարող է գինված ուժ դառնալ: Ցես, պարզ բան է,— առանց փողի էլ կարող էլի այդ անել, բայց՝ դժբախտաբար հանգամանքներն այնպես են, որ... չես այդ գործում տեր չեմ: Այնուամենայնիվ, ինչպիսի վաշխառու և կեղեքիչ էլ լինի իմ գործի ընկերը, ձեզ, ընկեր Սեկերեչ, իմ բոլոր ապրանքները ծրծաղելու չափ եժան կնստեն:

Սեկերեչը, որ սկզբից փիչ բարձրացել էր անկողնում, նորից ընկավ բարձերի վրա: Ծխում էր պապիրոսը, ծուխն իրար հետևից ներս քաշելով, և լուռ էր:

— Դուք չեյիք սպասում իմ կողմից այսպիսի սրտաբացություն, այնպես չէ՞.— շարունակեց Անտալֆին:— Հիմա, ևս կերկու կարճ նկատողություն: Առաջինը. այն գործարանը, որի ներկայացուցիչն եմ չես, հրացանները պատրաստում է կարճ, նրվազ փողերով, հետևաբար՝ նրանք շատ հարմար են անլեգալ կազմակերպությունների համար: Միևնույն ժամանակ՝ այս հանգամանքը բոլորովին չի պակասեցնում հարվածի անվրիպությունը: Ցերկրորդը. ամեն մի պատվերին միջնորդը ստանում է հինգ հարյուր՝ հանձնարարական: Մի՛ ընդմիջեք, խնդրեմ. չես շատ լավ դիտեմ, որ դուք, ընկեր Սեկերեչ, փողի կարիք չունեք: Բայց մի քիչ մտածեցեք ձեր ընկերների մասին: Ի՞նչ կասեին, որ ինձ համար, նրանք, որոնք սոված են հեղափոխական բարեկներում, յերեք մի որ պոտը բերեր նրանց անսպասելի կերպով մի-յերկու հազար դոլար: Ասե՛ք... Ցեվ, որպեսզի այդպիսի հրաչք կատարվի, ամեն ինչ ձեզանից է կախված, ընկեր Սեկերեչ, միայն ձեզանից: Վերջապես՝ ա՛յս էլ. մենք ընդունում ենք նաև վոչ մեծ պատվերներ: Այո, մենք կատարում ենք պատվերներ՝ նույնիսկ

մի քանի հարյուր հրացանների: Ցեվ ահա թե ինչ, ընկեր Սեկերեչ, մինչև վերջ սրտաբաց լինեմ ձեզ հետ. մի՛ կարծեք, որ չես չգիտեմ, թե ում համար եք դուք աշխատում—դուք, Պետրոսը և Պոտաեսմանը: Շատ լավ գիտեմ: Ցես գիտեմ, որ դուք ինձ ճիշտ չեք ասում, և չես նույնիսկ դրա համար չեմ վշտանում ձեզանից. չես շատ լավ հասկանում եմ, որ բոլոր տեսանելին իմ դեմ է: Բայց այդ միայն տեսանելի է: Բայց իսկությունը... Հենց այժմ չես կկարողանամ ապացուցել, որ մնացել եմ նույնպիսի հատարիմ պինվոր կուսակցության, որպիսին էի խորհրդային Ռուսաստանում և Խորհրդային Հունգարիայում: Այո, դրա համար էլ չես, գլխավորապես, ձեզ մոտ չկամ: Ցես կգինեմ կուսակցությունը, իսկ յերբ կուսակցությունը կվերցնի իշխանությունը, այն ժամանակ...Ցես, վերջ ի վերջո, յերեկվանից չե՛մ որ բոլշևիկ եմ: Ճեղաջը յեղել է: Իսկ այսուհետև մեր ճանապարհը մեկ է: Ցես ասում եմ սրտաբաց. չես առաջվա պես՝ ինձ բոլշևիկ եմ համարում, չես ձեզ տալիս եմ գինք, իսկ յերբ ժամը հասնի... դուք ինձ էլ հրացան կտաք: Նա կլինի հուսալի ձեռքերում, հավատացեք ինձ:

Մինչդեռ Անտալֆին խոսում էր, Սեկերեչն անկողնից վայր ցատկեց, հանեց դիշերվա շապիկը, սկսեց լվացվել: Իր հուզմունքի մեջ՝ նա նույնիսկ չնկատեց, որ լողանի մեջ յերեկվա՝ չմաքրված կեղտոտ ջուրը կա:

— Ի՞նչ է նշանակում ձեր լռությունը: Դուք ինձ քո՞ւմ եք: Սեկերեչը՝ շարունակելով լվացվել՝ բացատրեց չարժեց գլուխը:

— Ի՞նչ տիպի հրացաններ են.— հարցրեց նա քիչ հետո:

— Ֆրանսիական:

— Ո՞ւր եք ապրում, ընկեր Անտալֆի:

— Մոնկաչևում, «Ասպետում»:

— Լավ:

Ցերբ Անտալֆին գնաց, Սեկերեչը սկսեց շատ հագնվել:

— Սրիկա,— վրնթրնթաց նա: Ի՞նչ սուր և հիմար սրիկա: Վոր նա այդքան ընկել է բարոյապես, այդ չես դեռ կարող եմ հասկանալ, բայց վոր այդքան հիմար է դառել... Զարմա՛նք բան է:

Կեսորին նա գնաց խմբագրատուն:

— Պատերազմ է— ասաց նրան Խայոչը՝ գլխավոր խմբագիրը:— Պետք եր ավելի հաճախ դրել սրատերազմի նյութեր:

— Դուք բոլորովին լրավացի չեք, պարոն խմբագիր: Լավ կլինե՞ր, որինակ, հրատարակել մի մեծ հոդված այն բանի մասին, թե վորքան լեհերի՝ ուկրաինցիներին ճնշելը թուլացնում է լեհական բանակի ուժը:

Խմբագիրը վախեցած վեր ցատկեց: Նրա պեպենոտ դեմքը վախից դժդունեց:

— Իսեր աստուծո, պարոն Սեկերեչ,—ասաց նա, հուզմունքից կակազելով:—Դուք չերևի, ուղում եք, վոր իմ թերթը դադրեցնե՞ն: Ցեվ այն ել հենց այժմ, այսպիսի բարենպաստ իրադրության ժամանակ:

— Աստված մի արասցե,—ասաց Սեկերեչը:—Բայց, ելի, ի՞նչպիսի հոդվածներ եք ի նկատի ունեցել, պարոն խմբագիր:

— Ի՞նչպես ասեմ... Այժմ ամեն մի հոդված պատերազմի մասին հետաքրքրական է: Ձախողանց ուշադրավ կլիներ, որինակ, այն հոդվածը, վորը կբանար Ֆրանսիական զենքի հաղթության գաղտնիքը:

— Ֆրանսիական զենքի հաղթության գաղտնիքը՞.—զարմացավ Սեկերեչը:—Իսկ ինչո՞ւմն է կայանում, թույլ տվեք ձեզ հարցնել, այդ գաղտնիքը:

— Ֆրանսիական տեխնիկայո՛ւմ, պարզ բան է: Ֆրանսիական զենքերի արդյունաբերության բարձր առավելությունների մեջ: Մենք պետք է ուղղակի ցույց տանք, վոր աշխարհի ամենալավ զենքը Կրեզո-Շնայդերի հրացանն է: Այո, պարոն Սեկերեչ, դրա մասին մենք պե՛տք է գրենք:

— Արժե, արժե գրել,—դևխով արավ Սեկերեչը:—Իսկ ասեք, պարոն խմբագիր, չգիտե՞ք արդյոք, պատահաբար, Անտալֆիլ ազգանունով մի պարոնի:

— Ինչո՞ւ...դուք այդ բանը հարցնում եք.—կակազելով վեթինինթաց խմբագիրը:

— Ճիշտն ասեմ, ինքս ել չգիտեմ,—ժպտալով պատասխանեց Սեկերեչը:—Միայն չեկավ՝ չգիտեմ թե ինչու՝ այդ ազգանունը:

***

Մեքենավարը բարձրանում է շոգեշարժի վրա: Հանում է գլխարկը, վորպեսզի քրանած ճակատը սրբե: Գլխարկում գտնում է թերթիկ:

Խորհրդային Ռուսաստանի թշնամիներին զենք մի՛ հասցնեք:

Հնոցապանը կայարանում գնում է հաց: Հացը ծածկված է վոսկեթելու թղթի մեծ թերթով: Թղթի վրա յոթը լեզվով գրված է. ԼԵՀԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԿՈՎՈՒՄ Է ՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ, ԻՍԿ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲԱՆԱԿԸ—ՌԵ՛Զ ՀԱՄԱՐ

Կոնդուկտորը ձեռքը դրպանն է խոթում՝ պապիրոսի համար: Գրպանում ձեռքը դիպչում է թղթերի. ՄԻ ՀԱՍՑՆԵՔ...

Գնացքին ուղեկցող զինվորական պահպանության կեսը պատրաստվում է քնելու: Ցերբ զինվորները զարթնում են, ամեն մի հրացանի վողից նայում է սպիտակ թղթիկ: Թղթիկի վրա յոթը լեզվով գրված է. ԼԵՀԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԿՈՎՈՒՄ Է ՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ, ԻՍԿ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ—ՌԵ՛Զ ՀԱՄԱՐ:

Ցերկաթուղու արհեստանոցներում վաղ առավոտյան փակցնում են գեներալ Պարիի կոչը. ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԵՄ ՄԵՐՋՑՆՈՒՄ ԵՆ ԳԵՆԵՐԱԼ ՊԱՐԻԻ ԿՈՉԸ. ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԵՄ ՄԵՐՋՑՆՈՒՄ ԵՆ ԿԱՊՊԱՏՑԱՆ ՌՈՒՍԻԱՑԻ ԲՆԱԿՉՈՒԹՑԱՆԸ...,

Կոչի չորրը անհայտ մարդիկ վակցրել են վոքրիկ թղթիկներ. ՄԻ ՀԱՍՑՆԵՔ...

***

ՀԵՂՋԻՆԽՈՐՀՐԴԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՇՏԱԲԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՑՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՈՒ, 1920 Թ. ՄԱՅԻՍԻ 16-ԻՑ

Կիյեվի չրջանում մեր մասերը, հարձակման դիմելով, կռիվ են մղում Կիյեվից 15 վերստ տարածության վրա՝ դեպի հյուսիս-արևելք. հակառակորդը համառ դիմադրություն է ցույց տալիս: Ձերկասսը չրջանում մենք գրավեցինք Կորսուն ավանը, Ձերկասսը քաղաքից 50 վերստ հեռու՝ դեպի արևմուտք: Վասիլյարի չրջանում մեր մասերը մեզ համար հաջող կռիվ են մղում՝ վասիլյարկա կայարանից 15 վերստ հարավ:

***

Ցերկայն, յերկայն կառախումբերը հետևում են իրար Մուն-կաչի, Սվալյավայի և Լավոչնեյի վրայով դեպի Լվով: Մի-յերկու մարդատար վագոն, իսկ նրանց յետևից յերկայն, յերկայն չարք ապրանքատար վագոնների, վորոնց պահպանում են զինվորներ:

Ձախայից դուրս է գալիս մի գնացք: Կայարանից մի քանի կիլոմետր անցած՝ յերկու վագոնների միջև կոտրվում է կապիչը և

ամբողջ ապրանքատար կազմը քակվում է: Մեքենավարը չի նկատում պատահած բանը, չոգեշարժը մարդատար յերկու վագոնների հետ սլանում է առաջ, իսկ ապրանքատար վագոնները մնում են Շանսալարհի միջին: Նրանց հետևից ուղարկում են չոգեշարժ, որը նրանց հետ է բերում՝ Զապ կայարանը: Այնտեղ, յերկարատեվ չարժումներից հետո, նրանց կցում են հաջորդ գնացքին: Այդ գնացքի չոգեշարժը այդքան բեռնավորության չի դիմանում և, Մուննակչին մի քիչ չհասած, կանգ է առնում, մնում: Հետևանքը —յոթը ժամվա ուշացում:

Մուննակչի և Սվալյավայի միջև չոգեկառքը բելոներից դուրս է գալիս: Շարժումը կանգ է առնում կես որով:

Սվալյավայի և Վոլոցկի միջև վագոնը պայթում է: Շարժումը կանգ է առնում մի որով:

Ցերկային, յերկայն չարքերով կանգնած են Շանսալարհների վրա յերկայն, յերկայն գնացքները—դատարկ՝ մարդատար վագոններ, կնքված ապրանքատարներ:

Կայարաններում պինվորական բեռների ահագին քանակություններ են մնացել:

Շանսալարհներում ամեն տեղ պինվորական բեռների ահագին քանակություններ են մնացել:

Գնացքները պահպանվում են պինվորներով: Զինվորների դըրսպաններում, դևխարկներում, ծխախոտի պարկիկներում—յոթը լեզվով գրված թղթիկներ. ԼԵՀԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ...

Ի՞ՆՉ ԵՆ ՈՒՏՈՒՄ ՊԱՐՈՆ ՍՊԱՆԵՐԸ:—Ի՞ՆՉ ԵՆ ՈՒՏՈՒՄ ՉԻՆՎՈՐՆԵՐԸ:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՓԵՉ ՀՈՂ ՏՎԵ՞Ց:—ԼԵ՛ՆԻՆԸ ԿՏԱ:

Ամեն տեղ փակցրված և գեներալ Պարիի վերջին կոչը.

«Նախապատրաստվում եմ Մերձկարպատյան Ռուսիայի բնակչությանը...»

«Խախտողների դեմ...»

Ամեն տեղ փոքրիկ թղթիկներ.

ՄԻ ՀԱՄՑՆԵՔ...

ԼԵՀԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ...

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՓԵՉ ՀՈՂ ՏՎԵ՞Ց:—ԼԵ՛ՆԻՆԸ ԿՏԱ:

Այն վագոնները, որոնք նորոգման համար պահեստարան են ընկնում, այնտեղ էլ մնում են:

Ցերբ նրանց այնտեղից վերջապես դուրս են բերում, հայտնվում է, որ նրանք ավելի վատ դրության մեջ են, քան թե առաջ:

Ամեն որ՝ նոր խորտակումներ, նոր պայթումներ գծի վրա...

«Նախապատրաստվում եմ բնակչությանը...»

ՄԻ ՀԱՄՑՆԵՔ...

***

Նորին գերազանցության՝ գեներալ Պարիին, Մերձկարպատյան Ռուսիայի զինվորական նահանգապետին

Զեխոսլովակական հանրապետության զինվորական նախարարից

Նկատի ունենալով չեխական և սլովակական բնակչության սրամադրությունը, հանրապետության զինվորական նախարարը ստիպված է դիմել Ձերդ գերազանցության՝ խնդրելով ժամանակավորապես հրաժարվել պատերազմական դրության մացնելուց, իսկ բանվորական շրջանները մտած զրգռիչների վերաբերմամբ առայժմ սահմանափակվել կալանավորումով և ավելի խիստ միջոցներ գործ չդնել:

Ձերդ գերազանցության առաջարկությունը, որ վերաբերում է ռումինական յերկաթուղայիններին, մենք հետաքրքրով հաղորդեցինք ռումինական թագավորական արտաքին գործերի նախարարության՝ ռումինական թագավորական կառավարության պարիսի դեսպանության միջոցով:

Պրագա, 1920 թվի հունիսի 12-ին:

***

ՀԵՂԶԻՆԵՈՐՀԴԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՇՏԱԲԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ, 1920 Թ. ՀՈՒՆԻՍԻ 12-ԻՑ

Կիյեվի շրջանում, աջափնյա բաժնում մեր մասերը, զարդացնելով հարձակումը հյուսիսից, կռվելով վերցրին Տետերև և բոլշանկա կայարանները: Կորոստեն—Կիյեվ յերկաթուղու գծի վրա՝ Կիյեվից հարավ, մեր մասերը, շարժելով հակառակորդին Վասիլ'կովոյի մոտ, վերցրին այդ քաղաքը: Լեհերը խուճապով վախչում են՝ հետապնդված մեր զորքից: Լրացուցիչ տեղեկություններին նայելով, մեր մասերը, Դնեպրը անցնելով, մտնում

են կիյեվ։ Կիյեվի մոտ տեղի ունեցած կռիվներում Դնեպրի ձախ ափին մենք գրավեցինք ավելի քան 350 գերի, 200·000 փամփուշտ, շատ զենք, թնդանոթ, 200 վագոն և յերկաթուղային դույքի մեծ քանակություն։

Ընկ. Ստալինի հանձնարարությամբ հայտնում եմ, որ կիյեվը գրավված է մեր ղորքերով։ Ստացված տեղեկությունների համաձայն՝ հակառակորդը կիյեվը թողնելուց առաջ պայթեցրեց այնտեղ քաղաքային էլեկտրական կայարանը, Վլադիմիրսկիյ տաճարը, Լրանցքը, մարդատար և ապրանքատար գնացքների կայարանը։

Ընկ. Ստալինի քարտուղար՝ ԲՐԵԶԱՆՈՎՍԿԻՑ

***

Պետրոսը հենց կայարանումն եր, յերբ դեպի Վերեցկև գնաց առաջին գնացքը ռումին յերկաթուղիներով և ռումին զինվորների պահպանությամբ։ Պետրոսն այդ բանը անհապաղ հայտնեց Ուժղորդ՝ ընկերներին։ Սեկերեչից պատասխան գալու ժամանակ բոլոր յերկաթուղային գծերը, վորոնք դեպի Գալիցիա յեն տանում, արդեն ռումինների ձեռքին եյին։

Պետրոսն իսկույն ճամբա ընկավ դեպի Պոլենա։ Խարտուղարության պարտականությունները ստանձնեց Տիմկոն։

Վաղ առավոտյան Տիմկոյին զարթեցրին մուժիկները։ Ցնկել են խորհրդի—ավելի ճիշտ՝ բացատրություններ խնդրելու, վորովհետև նորից, ինչպես մի տարի առաջ, ժողովուրդը մնացել է անգիտության մեջ։

— Ձի՞դ ե արդյոք, վոր ռուս յեղբայրներն արդեն ջարդում են լեհերին։

— Ձի՞շտ ե արդյոք, վոր Լենինն իր ձեռքով բաժանելու յե հողը։

— Ձի՞շտ ե արդյոք, վոր Կարմիր բանակն առաջնորդում է գյուղացի Ջահելը։

— Արդյոք մինչև հունձն այստեղ կհասնե՞ն։

— Ո՞վ պիտի կախե տերերին, ռուսնե՞րը, թե մենք ինքներս։

— Ցույց կտա՞ն մեզ, թե ո՞վ արդեն պատրաստ և թոկի համար։

Տիմկոյի գլուխն ե պտտվում։ Բայց ահա լսվեց գործարանի շչակի ձայնը։ Վերջապե՞ս կարելի յե դնալ—պետք ե դնալ...

Գործարանում, ամեն մի քայլին, մերթ մի բանվոր, մերթ մյուսը մի կողմ են կանչում նրան։

— Ի՞նչպես ե հրացանների բանը, ընկեր։

— Ո՞վ պետք ե բաժանի մարդկանց ըստ անելիքի։ Ելի այնպես դուրս չգար, վոր միայն վերջին րոպեին իմանան, թե ո՛վ ինչ պետք ե անի։

***

Վարդան հաճախ չորում ե գյուղերը։ Պեմետեյի չորջակայքում աշխատելը դժվար չեր։ Այնտեղ գյուղացիները սպրում են առաջ աշխատելու դործարանի բանվորների հետ փոփոխակի— ձմեռը նրանք, մեծավ մասամբ, իրանք ել աշխատում են գործարանում կամ առաջում։ Նրանք բոլորը հափշտակված եյին աշխատավարձի մեծ կովով։ Այս տեղերում հարուստ գյուղացիների մասին միայն սևեռոսներից պիտեն։ Այստեղ ամբողջ լավ հողը կոմսին ե պատկանում։

Արշալույսին Վարդան չտապով կերավ մի կտոր ճարպ պապրիկայով, մյուս կտորը՝ մոտ մի ափի մեծությամբ՝ փաթաթեց լրագրի մեջ, դրեց գրպանը, մյուս գրպանը դրեց մի կտոր հաց և ճամբա ընկավ լեռնային չավղիկով։

Վարդան մեծացել եր քաղաքում։ Նրա ծննդավայրն Ուժգորոդն ե, վագի հրապարակը, Մոծակի կղզին։ Այնտեղ նրա համար պիչան ե, վագի հրապարակը, Մոծակի կղզին։ Այնտեղ նրա համար հետաքրքիր ե մանել գործարաններից մեկը, վոր հոտառությամբ իմանա, թե ինչ պետք ե անել։

Վարդան գյուղացիներ տեսել ե միայն ռազմաճակատում և լազարետներում։ Պատերազմի ժամանակ նա տեսել ե կործանված, հրդեհված, կողոպտված գյուղեր։ Զինվորներ, թնդանոթներ, սայլաշարքեր... Այդ գյուղերի բնակիչները քիչ եյին նմանում կանոնից ծնված մարդկանց։ Զարմանալի չե, վոր անտառապատ կարպատներում ցրված՝ վայրահատների գաստակերտներ Վարդան՝ այդպիսի «պատրաստության համար» ընդունեց իսկական գյուղերի տեղ։ Անտառի բացատում հինգ—վեց խրճիթ, մերճավոր բլրին, կես ժամվա ճանապարհի վրա, ելի յերեք—չորս հյուղակ։

Վարդան մտնում ե առաջին խրճիթը։ Մթություն, խեղդուկ

ող: Արևի պայծառ լույսը չի թափանցում փոքրիկ, պինդ իրկված լուսամուտից, որը ծածկված է տարիների ընթացքում դիզված կեղտով:

Առաստաղի՝ սարդի վոսկայնով պատած գերանի վրայից ձգված է յերկու թոկ, վորոնց ծայրերին կապված է մի կեղտոտ քաթան, իսկ սրա մեջ կայ մի մերկ յերեխա: Ցերեխան ծծում է յեղիսատացրենի գլուխը: Մի փոքրիկ, քթատ աղջիկ, վալասնեբուվ վարթաթված, անտարբեր կերպով ճոճում է այդ պարզ որորոցը: Նա վախկոտությամբ նայում է չեշտակի ներս մտած վարդան վրա և յերկչոտությամբ անցնում է որորոցի հետևը: Վարդան հարցնում է նրան՝ իր խելքին յեկած առաջին հարցը: Աղջիկը չի պատասխանում: Վարդան կրկնում է հարցը, աղջիկը սկսում է սասիկ լաց լինել և խրճիթի հետավոր անկյունում պահվում է: Մի քանի վայրկյան Վարդան կանգնած է անորոշության մեջ, հետո դուրս է բերում գրպանից ճարպը, բաց է անում և, ափի վրա դրած, պարզում է այն՝ աղջկան: Ճարպն աղջկա հայացքը քաշում է, ինչպես մագնիսը յերկաթն է քաշում: Աղջիկը բոլոր ուժով ճղնում է խլացնել լացը, այժմ նա միայն հեկեկում է, բայց յերբ Վարդան, ճարպը ելի պարզած ափին դեռ բռնած, մոտենում է նրան, նա հուսահատական ճիչ է բարձրացնում:

Վարդան ճարպը նետում է որորոցի մեջ, այնտեղ ել դնում է նաև հացը և լուռ դուրս է գալիս խրճիթից: Զգուշությամբ վտակում է իր յետևից դուռը և խորունկ ու յերանությամբ թոքերն է քաշում մաքուր ոդը: Այժմ նա թվում է իրեն թարմ կաթից քաղցր:

Մյուս խրճիթի մոտ նրան դիմավորում է չան խուտուտ հաջոցը: Կեղտոտ, ցից վոսկորներով, վախ, սպիտակ մի շուն չարությամբ աստամներն է ցույց տալիս նրան: Հաջոցը լսելով՝ խրճիթից դուրս է գալիս մի կորացած հրյա ծերուկ: Նրա մորուքը նույնպես կեղտոտ-սպիտակ է, ինչպես շան բուրդը: Նա հագել է սև, կանաչին տվող լաստերդակ և մորթե մաշված գդակ: Շան վրա ուսսերևն գանչելով՝ նա գիմում է վարդային կոտրտված գերմաներենով: Շունը, պոչը քաշած պահվում է տիրոջ յետևը, հետո յետևից զգուշությամբ խոթում է դունչը նրա՝ սպիտակ զուլպաներ անցրած վոտքերի միջով դեպի դուրս և կասկածով դիտում է անկոչ հյուրին:

— Մենք վոչինչ չունենք,— ասում է ծերուկը:—Մենք վճարիր ոդ: Արևի պայծառ լույսը չի թափանցում փոքրիկ, պինդ իրկված լուսամուտից, որը ծածկված է տարիների ընթացքում դիզված կեղտով:

Առաստաղի՝ սարդի վոսկայնով պատած գերանի վրայից ձգված է յերկու թոկ, վորոնց ծայրերին կապված է մի կեղտոտ քաթան, իսկ սրա մեջ կայ մի մերկ յերեխա: Ցերեխան ծծում է յեղիսատացրենի գլուխը: Մի փոքրիկ, քթատ աղջիկ, վալասնեբուվ վարթաթված, անտարբեր կերպով ճոճում է այդ պարզ որորոցը: Նա վախկոտությամբ նայում է չեշտակի ներս մտած վարդան վրա և յերկչոտությամբ անցնում է որորոցի հետևը: Վարդան հարցնում է նրան՝ իր խելքին յեկած առաջին հարցը: Աղջիկը չի պատասխանում: Վարդան կրկնում է հարցը, աղջիկը սկսում է սասիկ լաց լինել և խրճիթի հետավոր անկյունում պահվում է: Մի քանի վայրկյան Վարդան կանգնած է անորոշության մեջ, հետո դուրս է բերում գրպանից ճարպը, բաց է անում և, ափի վրա դրած, պարզում է այն՝ աղջկան: Ճարպն աղջկա հայացքը քաշում է, ինչպես մագնիսը յերկաթն է քաշում: Աղջիկը բոլոր ուժով ճղնում է խլացնել լացը, այժմ նա միայն հեկեկում է, բայց յերբ Վարդան, ճարպը ելի պարզած ափին դեռ բռնած, մոտենում է նրան, նա հուսահատական ճիչ է բարձրացնում:

Վարդան ճարպը նետում է որորոցի մեջ, այնտեղ ել դնում է նաև հացը և լուռ դուրս է գալիս խրճիթից: Զգուշությամբ վտակում է իր յետևից դուռը և խորունկ ու յերանությամբ թոքերն է քաշում մաքուր ոդը: Այժմ նա թվում է իրեն թարմ կաթից քաղցր:

Մյուս խրճիթի մոտ նրան դիմավորում է չան խուտուտ հաջոցը: Կեղտոտ, ցից վոսկորներով, վախ, սպիտակ մի շուն չարությամբ աստամներն է ցույց տալիս նրան: Հաջոցը լսելով՝ խրճիթից դուրս է գալիս մի կորացած հրյա ծերուկ: Նրա մորուքը նույնպես կեղտոտ-սպիտակ է, ինչպես շան բուրդը: Նա հագել է սև, կանաչին տվող լաստերդակ և մորթե մաշված գդակ: Շան վրա ուսսերևն գանչելով՝ նա գիմում է վարդային կոտրտված գերմաներենով: Շունը, պոչը քաշած պահվում է տիրոջ յետևը, հետո յետևից զգուշությամբ խոթում է դունչը նրա՝ սպիտակ զուլպաներ անցրած վոտքերի միջով դեպի դուրս և կասկածով դիտում է անկոչ հյուրին:

— Մենք վոչինչ չունենք,— ասում է ծերուկը:—Մենք վճարիր

չենք կարող: Գուցե՝ աչնանը, յերթ ամենազորն ողնե: Իսկ մինչև այդ թող հարկերը վճարե կոմսը— նա հնարավորություն ունի՛:

Վերջին խոսքերը ծերուկը կանչում է անսպասելի չարությամբ:

Շունը բարկացկոտ զոռոցով պնդում է տիրոջ խոսքերը:

— Հարկե՞ր.— զարմացած հարցնում է Վարդան: Իմ լինչ գործն են հարկերը:

— Գիտեմ, գիտեմ... Հին յերդ է այդ... Վոչ վոք վոչ մի գործ չունի, բոլորը մեղ կամենում են ամեն բարիք, իսկ վերջանում է նրանով, վոր խեղճ մարդու վերջին բարձն են խլում... Բայց սպասեցե՛ք...

Ցեվ ծերուկը, ծիծաղելի կերպով սպառնալով Վարդային վոսկրոտ, կնճռոտ բռունցքով, չտալ քայլերով խրճիթ է մտնում և խնամքով փակում է իր յետևից դուռը:

Շունը՝ սրամտած՝ կամացուկ մոտենում է Վարդային:

Մինչև հաջորդ խրճիթը մի քանի բոպեի ճանապարհ է: Մինչդեռ Վարդան մոլորեց ճամբան և այդ բանը նկատեց միայն, յերբ գլխով զարնվեց ծառի:

Վերևից նրա վրա թափվում է չոր, սուսեղնաձև տերևների անձրևը: Միայն մի քանի քայլ է նա չեղվել ճամբից—և արդեն հնարել է մի ծանր, վայրենի տեղ: Շուրջը վեր են ձգվում չորացած, մեռյալ փիճիներ: Վարդան՝ քարացածի պես՝ կանգնած է մնում տեղում և միայն մի քանի վայրկյան անցած՝ սկսում է հասկանալ, վոր չափազանց մոտիկ բուսած ծառերը սպանել են իրար: Անտառային այս յերեքայրական գերեզմանում հնչում է մի խոշոր յերաժշտություն. այդ՝ քամին է չոչափում չոր, բարակ ճանյակների պես վոստերը:

Մերձավոր խրճիթի առաջ ծալապատիկ նստած է մի կուացած պառավ: Ներա անասում բերանից ցցված է մարած կավե չիբուխը: Վարդայի բարևին երբև պատասխան՝ նա լուռ ճոճում է իր ալևոր, հայաստ գլուխը, դանդաղ վեր է կենում և խրճիթ է մտնում: Վարդան մտնում է նրա յետևից:

Ոդը տոդորված է բորբոսանքի հոտով: Կիսախավար: Անկյունում կանթեղով մի սրահներ կա: Պառավը ծունը է չոքում սրահի առաջ: Վարդան ավելի յե մոտենում—և հանկարծ բռնում է գլխից: Ամբողջ ուժով քաշեց իր մազերից, այնպես, վոր նույն

իսկ արցունքները յերևացին աչքերում: Բայց վոչ, նա քնած չէ- այն, ինչ վոր նրա առաջն է, յերազ չէր, այլ իրականություն է:

Կանթեղի յեւև սրբի պատկեր չէր: Պառավը ծունր է չոքել Լենինի պատկերի առաջ: Ցեմ լուռ աղոթում է:

Վարդան վոտքի մատների վրա աննկատելի կերպով սպրդում է իրմից:

Սկսում է վազել:

Վազում է, վազում, վազում...

Հոտառությամբ յելնում է խճուղու վրա: Հոգնածությունից նրա կոկորդը չորացել է. նստում է քարի վրա հանգստանալու: Գրպանն է կոխում դվնարկը: Քամին քրքրում է նրա մազերի սև, թանձր փունջը:

Ձախ կողմից մոտենում են սայլերը:

Առաջին սայլում նստած է սայլավարը, մյուսների ձիերը գնում են առաջինի հետքերով:

Սայլավարի դեմքը վարդային ծանոթ է թվում:

—«Գրողը տանի, ո՞ւր եմ յես նրան տեսել.— հարցնում է Վարդան ինքն իրան:— Բոլոր այդ ռուսին մուժիկները նման են իրար, ինչպես հավկիթները: Նրանցից վոչ վոք յերբեք չի լվա- նում յերեսը և ամեն մեկը պատրաստ է բոլորին սպանելու»:

Նա այդ խոսքերը լսելի ձայնով չարտասանեց, բայց նույն իսկ մենակ մտքից նա համակվում է ղղջամով: Նա կարմրում է իրա- նից ամաչելուց:

«Դեհ, ի՛նչ, սուր մարդ ես.— սկսում է կշտամբել նա ի- րան—

Ներեցեք ինձ, սիրելի, թանկագին ընկերներ... Ճշմարիտ՝ այդ բանը յես լուրջ չմտածեցի...»:

— Բարև՛.— դառնում է նա սայլավարին:

Ձիերը դանդաղ են քայլում: Վարդան գնում է առաջին սայլի կողքից: Մի քանի խոսք յեղանակի մասին— և այնուհետև նա հանկարծ դուրս է գալիս:

— Դեհ, յերկրակից, ինչպե՞ս յեղավ ձեր հողի բաժանման գործը:

Սայլապանն աչքերը մեծ բացած նայում է նրա վրա:

— Հողի բաժանման գո՞րծը... Ձեվերը հող չեն բաժանում:

— Ինչո՞ւ համար.— հարցնում է Վարդան:

— Հըմ...

Սայլապանը մի քանի րոպե մտածում է, իսկ հետո ասում է.

— Ինչպես յերևում է ռուսների որինակից, բուրժուական- դեմոկրատական հեղափոխության այս խնդիրն էլ միայն պրոլե- տարական հեղափոխությունը կարող է լուծել:

Անսպասելիությունից Վարդան նույն իսկ վեր թռավ: Մա- զերից արդեն չի բռնում—առանց այն էլ արդեն պարզ է, վոր նա խելքը կորցրել է:

— Ի՞նչ յեղավ, վոր հանկարծ վեր թռաք, ընկեր Վարդա.— հարցնում է սայլապանը:

— Ի–ի՞նչ. Ինչ ասի՞ք...

Վարդան դժվար է շնչում:

— Ցես ասի՝ ի՞նչ է այդ պատահել ձեզ հետ, ընկեր Վարդա, վոր դուք հանկարծ վեր թռաք խճուղու վրա:

— Բա դուք վո՞րտեղից ինձ գիտեք, յերկրակից:

— Գրողը տանի, ինչպե՞ս կարող եմ յես ձեզ չգիտենալ: Մի՞թե դուք ինձ չճանաչեցիք: Ցես Լակատան եմ: Պոլենայում տեսել ենք իրար՝ Գոնդալի մոտ:

— Դեհ, իհարկե, իհարկե...— թեթև չունչ է առնում Վարդան:

«Խելքս չեմ կորցրել», ավելացնում է նա ինքն իրան:

— Նստեք մոտս, ընկեր Վարդա: Միայն բրեզենտի վրա մի նստեք, այլ այստեղ՝ սայլի ուսին, իմ կողքին:

— Իսկ դուք ինչպե՞ս եք մուժիկ դարձել, ընկեր Լակատա՛:

— Ի՞նչ մուժիկ եմ յես: Ցես կուսակցական աշխատանք եմ կատարում: Կառապանի պաշտոն եմ կատարում Անտալիի և Գարդ- ման տերերի վորսորդական ղպյակում:

— Այդ բանը դուք կոչում եք կուսակցական աշխատա՞նք:

Վոչինչ չեմ հասկանում...

Լակատան պատասխանի տեղ բարձրացնում է րրեզենտը: Բրե- զենտի տակ խոտ է: Իսկ խոտի մեջ՝ ձեռքի ռումբեր:

***

Պարոն Գարամանը ջղայնորեն հետ ու առաջ է քայլում ահա- գին դահլիճում: Մուտքի մոտ կանգնած արջի խրտվիլակը ապ- շած նայում է նրա աչք ծակող մանիչակագույն փողպատին: Պա- տերից կախված են յեղջերուների յեղջյուրներ: Անկյունում՝ խոճ-

կրնային կերակրող եր վարպետ խրամբլակ: Սրջից մինչև խոպ խումբը յերեսունյոթը քայլ ե: Գարամանը արդեն մի քսան անգամ չափեց այդ տարածությունը և վոչ պակաս, քան հարյուր անգամ իր ճակատին խիեց:

— Սատանա՞ն տաներ այդ ապուշ Վեյսին:

Բացվում ե կաղնիե ծանր դուռը, և ներս ե մտնում Անատալֆին: Նա հագել ե՝ վրան ձիղ նատած վոբսորդական զգեստ, ուսին գցած յերկփող հրացան:

— Ցորհանատուն յերկուչերորդ փոխադրությունը տեղ հասավ բարեհաջող,—հայտնում ե նա:

— Վաղ թե ուշ մենք բռնվելու յենք,—հառաչում ե Գարամանը:— Առաջին և վերջին անգամ գենքի հետ գործ ունեմ...

— Այդ դո՞ւք առաջին անգամ գենքի հետ գործ ունեք.—զարմացած՝ հոնքերը վեր ե քաշում Անատալֆին:

— Ա՛յո, այդպես—առաջին անգամ: Մինչև այժմ յես վաճառում եյի միայն բևեռագրերով և սառցագրերով: Այդ մաքուր գործ եր, իսկ այս... Այստեղ յես կարծես գնդացիրների վրա յեմ քնում և սանրվում եմ ձեռքի ռումբերով: Վեյսին հե՛չտ ե կարգադրություններ անել Վիեննայից: Մի ինչը նատեր այստեղ...

— Դեհ, դուր չե, վոր յերկու հազար տոկոս չահ եք ստանում դուք: Սակայն՝ կասեմ ձեզ այն, ինչ վոր միշտ եմ ասում. անհանգստության մի չնչին հիմք ել չկա: Դուք շատ լավ գիտեք, վոր այստեղ ամեն մի քիչ թե շատ աղեցիկ մարդ չահագրգռված ե այդ գործում—կամ իբրև մասնակցող, կամ իբրև փոխադրող, կամ իբրև գնող, կամ...մի խոսքով՝ բոլորը չահագրգռված են: Ինչ ինչ վերաբերում ե գնդացիրներին, ձեզ լավ հայտնի յե, վոր այդ գնդացիրներից այնքան ել հեշտ չե արձակելը: Ցեմ միևնույն ժամանակ՝ մի մոռանաք—յերկո՛ւ հազար տոկոս:

Գարամանը լուռ ե: Նրա շրթունքները դող ժպիտից տարածվում են:

— Իմ գործերը գնում են հիանալի,—շարունակում ե Անատալֆին:—Այսոր յես գեներալի հետ վորսի յեմ գնում: Ձեզ պետք կլինի հետևել արկղների մեջ դասելուն—այսոր նորից ուղարկում ենք հինգ արկղ ուկրաինցիներին: Ներքևի շարքում—վիեննայի հրացաններ, վրան—ֆրանսիական: Ցերկու արկղ ուղարկվում և գալիցիական բոլշևիկներին—այնտեղ մենք գնում ենք բացառապես

իսկական գենք: Վեհական ժանդարմերիան կատաղ վիեննայի տասներկու գնդացիր:

— Դեհ, գիտեք, Անատալֆի, այդ անարդարություն ե,—ճոճում և գլուխը Գարամանը:—Գործի լուրջ մարդը պարտավոր ե հավասարապես ազնիվ լինել բոլոր գնդացների վերաբերմամբ: Բոլոր պատվեր ավոգները մեզ վճարում են լավ փող և նրանք բոլորն իրավունք ունեն պահանջելու... Ցես չարունակում եմ պահանջել, վոր և՛ լավ, և՛ անպակաս գենքը հավասարապես բաժանվի բոլոր գնդացներին:

— Այդ արդեն քաղաքականություն ե, Գարամանի, իսկ քաղաքականությունը ձեր գործում՝ ինձ և վերաբերում: Կարող եք հանգիստ լինել,—ամենից առաջ յես հոգ եմ տանում մեր գործի և մեր ֆիրմայի չահերի մասին: Բանի դեռ մենք բոլշևիկներին մատակարարում ենք բարեխիղճ ապրանք, մենք կարող ենք հանդիստ քուն լինել: Բայց միայն այդքան ժամանակ... Քաղաքականությունը, Գարա—իմ տարերքն ե: Դուք այդ բանի մեջ վոչինչ չենք հասկանում, իսկ յես... Այ, որինակի համար այսոր գեներալի հետ վորսի յեմ գնում:

***

Ուժգորդի և Մունկաչի լրագիրների արտակարգ հրատարակությունները հայտնում եյին ընթերցողներին՝ յերեքշաբթի լույս շորեքշաբթվա դիշերը Վոլոցկի և Վերեցկևի միջև գտնվող՝ յերկաթուղային վիանդուկը պայթեցրել են անհայտ չարագործներ:

Մարդկային գոհեր չկային:

Ցերկաթուղային յերթևեկությունը Մունկաչ—Լվով գծի վրա կանգ եր առել:

***

Վոլոցկի և Վերեցկեյի միջև գտնվող վիանդուկի ոչ ցնդելուց յերկու չարաթ առաջ՝ Սևկերեչը մի քանի որ անցրեց Պրագայում: Նա այնտեղ գնաց Բուժուչի հանձնարարությամբ, վորպես դի ծանոթանա քաղաքական ընդհանուր դրության հետ և՝ իբրև ոդամեկով լրագրողների հետ ունեցած իր կապերից, այնտեղի յերթերեսում ապեց մի-յերկու հոդված: Ցերկու-յերեք հոդված Ռուսկենսկոյի*) սոցիալ-դեմոկրատիայի աշխատանքի և այդ կուսակ-

*) 1920–1921 թ թ Մերձկարպատյան Ռուսիայի տարածված անունը:

ցութեան առաջնորդի մասին: Սեկերեչը լրագրողների մէջ մոչ մի բարեկամ մարդ չուներ: Սակայն նա տանում էր իր հետ փող, և նրա ոգնութեամբ առանց դժուարութեան հասաւ նպատակին նրանով, որ մի հին լրագիր Բոժոչին կոչեց «ռուսինական Դանտոն», իսկ մյուսը՝ «ռուսինական Վաշինգտոն»:

Սեկերեչը մի ուրիշ հանճնարարութիւն էլ ուներ, որի մասին Բոժոչը չգիտեր: Այդ հանճնարարութիւնն էլ նա կատարեց: Մի թերթում Բերեգռասի գաւառակալը կոչված էր «ռուսինական Կրոմվել» և «հանրապետութեան անվախ, անձնվեր մարդի»,—իսկ մի այլ թերթ չէր գաչվել՝ կոչել նրան «ռուսինական Նապոլեոն»: Պատկերազարդ մի չարաթաթերթում տպված էր ռուսինական Նապոլեոնի պատկերը, նրան կցված էր մի կարճ տեղեկութիւն, որը վերջանում էր այս խոսքերով. «Այդ մարդը հսկում է մեր արևելեան սահմանների վրա: Հանրապետութեան բախտը հուսալի՛ ձեռքերումն է գտնվում»:

Սեկերեչը ուներ էլի՝ մի յերրորդ հանճնարարութիւն, որի մասին չգիտին կապածում մոչ Բոժոչը, մոչ Բերեգռասի գաւառակալը: Նա պետք է բանակցեր «մարքսիստական Զախի»*) դեկավարների հետ: Իր՝ Պրագա հասնելու հաջորդ որը նա տեսնվեց նրանց պարագլուխի հետ: Դա մի խելոք, սառնարյուն, հավասարակշռված մարդ էր, որը մանրամասնաբար չափում–ձևում էր իր ամեն մի խոսքը: Նրա շարժումներն էլ հանդիստ էին, դանդա՛ղ, համաչա՛փ: Բայց նա դրավիչ արտաքին չուներ: Այդպիսի չափազանց դեր մարդիկ ամբոխի քիչ են պիտանի:

Մեծ ուշադրութեամբ լսեց նա Սեկերեչի դեկուցումը Մերձկարպատեան Ռուսիայի դրութեան մասին: Ժամանակ–ժամանակ նա քթի տակին մի բան էր վնթփնթում ինքն իրեն և գլխով անում, բայց այդ ամենը անում էր այնպիսի ձևով, որ հասկանալ կարելի չէր, արդյոք նա այդ բանը խրախուսում է, թե ոչ: Ինքը նա ոչ մի խոսք չասաց: Նա խնդրեց Սեկերեչին հաջորդ որը նորից գալ իր մոտ: Այս անգամ նա նրան առաջարկեց մի շարք հարցեր, և, լսելով Սեկերեչի պատասխանները, վերջապես խոսեց ինքը:

— Դժվար է կարծիք հայտնել այն բանների մասին, որոնց մարդ իր աչքերով չի տեսել,—ասաց նա:—Ավելի շուտ տպավորութիւն ես դուրս բերում դեկուցողի անձնավորութեան մասին,

*) Այսպես էր կոչվում Չեխո–Սլովակիայի սոց. կուսակցութեան ձախ ընդդիմադրական թևը 1919–1921 թ. թ.

քան թե դեկուցման հենց առարկայի մասին: Դուք, ընկեր, լավ դեկուցող եք... Իսկ ինչ վերաբերում է դրութեանը Ռուսինակոյում...հմ....հմ...թվում է ինձ, թանկագին ընկեր, որ դուք բոլորովին մոռացել եք այն բանի մասին, որ ժանդարմերիան և վոսիկանութիւնը յերեխայական դասարկ հնարվածքներ չեն, այլ ահարկու, շատ ահարկու իրականութիւն: Դուք մոռացել եք պետական իշխանութեան մասին: Դուք, թանկագին ընկերներ, մշտապես մի վոտքով բանտումն եք... Ցես չեմ ասում, որ պետք է վախկոտ լինել, բայց զգուշութիւնը վոչ մի ժամանակ չի խանգարում: Մենք—մարքսիստ ձախերս, կանենք ձեզ համար բոլորը, ինչ որ հնարավոր է, բայց միայն այն դեպքում, յերբ ձեր դլխին դժբախտութիւն դա: Միևնույն ժամանակ դուք պետք է գիտենաք, որ այդ «բոլորը»՝ դժբախտաբար՝ շատ, շատ քիչ բան է: Մենք ել դեռ թուլ ենք, նո՛ւյնպես սկիլդների հենց սկիլդն ենք դեռ ապրում: Մեր կազմակերպութիւնը—ձախ թևը—սոցիալ–դեմոկրատական հսկայական կուսակցութեան միայն փոքրիկ մասնիկն է: Զեխ ժողովուրդը յերկար գարեր հեծել է լծի տակ, և չեխ բանվորը չեխ բուրժուազիայի հետ այժմ ուրախանում է այն բանի համար, որ Հաբսբուրգների միապետութիւնը քայքայվեց, և ուրախութիւնից համարյա մոռանում է իր սեփական գործերի մասին:

— Պետք է նրան այդ մասին հիշեցնել,—ասաց Սեկերեչը:

Հաստ մարդը այնպես զարմացած նայեց Սեկերեչի վրա, կարծես նա արտահայտել էր յուրորինակութեամբ չլսված մի միտք: Ցես նա արտահայտել էր յուրորինակութեամբ չլսված մի միտք:

— Հմ...դեհ, նայեք,—մեղմիվ ժպտաց նա:—Ցեվ ահա թե ինչի վրա յես ուզում եմ դեռ՝ ձեր ուշադրութիւնը դարձնել, թանկագին ընկեր. մի մոռանաք, որ մեր հանրապետութեան մայրաքաղաքը Վիեննան չէ, այլ Պրագան: Իսկ դուք, յերեք չեմ սխալվում, ձեր հրահանգներն ստանում եք Վիեննայից...

— Այդ բանին ոգնելը հեշտ է,—առարկեց Սեկերեչը: Պետք է ստեղծել չեխասլովակական կոմունիստական կուսակցութիւն, և այդ ժամանակ...

— Ո, այդ դեռ շատ հեռու յե,—ձեռքով արավ հաստ մարդ... Մենք մտաղիր չենք պատը ճակատով ծակելու, ինչպես այդ... Մենք մտաղիր չենք պատը ճակատով ծակելու, ինչպես այդ քանն անում էին հունդարացի ընկերները: Վոչ, վոչ...

***

Բեյլենբերգցի ընկերը, վորը Պրագա չէր կարել Մերձկարպատյան Ռուսիայի պատգամավորի հետ տեսնվելու համար, չերեկոյան Սեկերեչին մխնդ տարավ:

Մլչին մեծ ուրախությամբ դահլիճ: Հավաքվել են չորս-հինգ հարյուր մարդիկ: Գործարանների բանվորները, բանվորուհիները: Չէչ չի պարմանում Սեկերեչը, վոր բոլորը նստած են սիռացածածկ փոքրիկ սեղանիկների առաջ: Ապատարեցա սիռացների վրա—ափսեները, սկուտեղները, չշերը: Գարեջուր, գինի, ուսկիքների հոտ և ծխախոտի ծուխ: Պատերից կախված են Մարքսի, Ենգելսի, Լասալի և Մառսարիկի պատկերները: Կարմիր դրոշակներով զարդարված բեմի վրա—չերկայն սեղան: Սեղանի առաջ նստած են հինգ բանվոր: Նրանցից մեկը ներածական կարճ խոսքով ժողովը բաց է անում: Նա խոսում է դանակների, պատառաքաղների, բաժակների ձայների տակ:

Բայց իսկույն լռություն է տիրում, չերբ բեմ է չեկնում հատատարմին առաջնորդը: Նա մեծ հեղինակություն է վայելում:

Նա առաջնակարգ հռետոր է: Սկզբ է, հետաքրքրական: Նորբ ծաղրով նա քննադատում է կառավարության քաղաքականությունը: Ցեթե չերբեմն նրա բերնից դուրս է թռչում ավելի քաղաքավարության, նա չտապում է չտկել այդ սխալմունքը, դրանից անմիջապես հետո մեծարելով նախարարների խորհրդի նախագահին՝ սոցիալ-դեմոկրատ Տուսարին՝ ընկեր անունով:

Զեկուցողը խոսում է չերկար: Լսողների հետաքրքրությունը նկատելի կերպով նվազում է: Նորից սկսում են աղմկել պատառաքաղներն ու դանակները: Ճիչ է, ճառախոսին լսում են, բայց մեկնումն ժամանակ ուտում են և խմում, չարառահայհոյելով վոչ հավանության, վոչ բողոք: Գլխավորը ուտել խմելն է, զեկուցողը չերկրորդական բան է:

— Հունգարիայում այսպիսի մի բան անկարելի կլիներ,— ասում է Սեկերեչը Բեյլենբերգցի ընկերին:

Ցերբ զեկուցողի խոսքերն արդեն հազիվ չեն լսվում դանակների և պատառաքաղների աղմուկից, հատա մարդը, ձայնը մի քիչ բարձրացնելով, ասես հարևանի՝ հիշում է Խորհրդային Հունաստանի մասին: Պատառաքաղների և դանակների աղմուկը

խլուն լռում է, ձեռքերը մնում են անչարժ—բոլոր հայացքները ուղղված են բեմի վրա: Լարված սպասում են: Զեկուցողը առաջվա պես չարունակում է քննադատել կառավարությունը: Դահլիճում տիրում է դղրդոց: Մեկը խմում է՝ բարձր ծպծպացնելով: Ճառախոսը առաջ է բերում Լենինի խոսքերը:

— Մեր ընկեր Լենինը նույնպես առաջարկում է...

Հետևի չարքերում վեր են ցատկում տեղերից, հետո բարձրանում են մլչին չարքերում—և ահա արդեն ամբողջ դահլիճը վոտքերի վրա չէ: Դեմքերը վառվում են, աչքերը փայլում: Դահլիճը ցնցվում է վոդջունի կանչերից և ծափահարություններից:

Ցեվ այստեղ առաջին անգամ Սեկերեչն ոկսում է իրան այնպես պզալ «Վոսկի Պրագայում»՝ ինչպես տանը:

Ժողովից հետո նա վոտքով դեպի տուն է ուղղվում:

Լեռան վրա՝ Մորավայի մյուս կողմում՝ ելեկտրական լույսի տակ փայլում է հին Վրաչինը*: Մորավայի ափերը մլացած են կամուրջով: Մյուս կողմը Հին քաղաքն է, այս կողմը—Նորը:

«Զարմանալի բան,—մոտածում է Սեկերեչը:—Բոլորովին Բուդապեշի՛ պես է»:

Բուդապե՛շտ... Կարմի՛ր Բուդապեշտ...

Վաղուց եր այդ, համարյա մի տարի...

Սեկերեչի կրծքից ծանր հառաչ է թռչում:

***

Ուժգորդ վերադառնալու հաջորդ որը՝ Սեկերեչը ճանապարհ չնկավ դեպի Սվալյավա: Պետրոսը, բանից դուրս չեկավ, վոր Վոլոցկեյում եր, և Սեկերեչը ճանապարհ չնկավ սայլով նրա չեռից:

— Գնանք անտառ,—առաջարկեց Պետրոսը:—Այնտեղ կկարողանք հանգիստ խոսել:

— Սայլը ավելի վատահելի չե,—առարկեց Սեկերեչը:—Ներս մեզ անկասկած վոչ վոք չի լսի:

Ցերբ սայլը, փոշու ամպեր վերցնելով, դուրս չեկավ գյուղից, Սեկերեչը սկսեց մանրամասն կերպով պատմել Պրագայի իր ապրությունները: Նա խոսում եր պատկերավո՛ր կերպով, զուսնե՛գ, թեև՛ր—Պետրոսը պարզ տեսնում եր իր առաջ «Վոսկի Պրագան», լսում եր հատատարմին առաջնորդի խնամքով կշռված խոսքերը, դրոսնում եր ձեռք ձեռքի տված Բեյլենբերգցի ճարպիկ ընկերի

*) Հինավուրց ամրոց Պրագայում:

հետ, նստած եր սեղանիկների միջին, վորոնք ծածկված էին կարմիր սփռոցներով և, մեծ պատրաստ անելով, դնում եր դեպի յերկաթուղու կայարանը, ուր...

— Հանդիպումը չատ ճարպիկ եր սարքված: Ցես հետս վերցրի նվեր—յերկու հարյուր պապիրոս: Կնոջ, կարծում եմ, կարմիր խաչի աստիճանավորի գրպանից, բայց դրա փոխարեն յես ամբողջ տասը րոպե կարողացա անարգել խոսել Կունի հետ: Դեհ, մի՛թե սա մի հիանալի դաղափար չե. Կունը, վոր Ռուսաստան և դնում՝ իրրև հայրենիք վերադարձող ռուս դերի:

Պետրոսը մինչև անգամ բերանը բացեց զարմանքից:

— Հետո, հետո,—չտապեցնում եր նա Սեկերեչին, վորն ուշանց չտատելու պատրիոն եր վառում:—Շուտ ասա, թե ինչպես սարքեցիր այդ բանը:

— Մանրամասնությունները այստեղ նշանակություն չունեն,—չոր-չոր պատասխանեց Սեկերեչը:—Լավ և գործի եյությանը հետևենք:

Վոչ, այդ հաճույքից իրան զրկել նա չեր կարող: Նա միշտ այդպես եր վարվում—դոնե աշխատում եր վարվել. նախ լսողի հետաքրքրությունն եր զարթեցնում դրավիչ պատմվածքով, մարդկանց աչող բնավորագրությամբ կամ անցքերի նկարագրությամբ, իսկ հետո, յերբ լսողը բռնկվում եր չարունակության իմանալու անհամբերությամբ, Սեկերեչը սկսում եր «գործի եյությանը հետևել»:

— Դու իրավացի յես,—պատասխանեց Պետրոսը, վորով չատ գարմացրեց Սեկերեչին:—Գործի եյությանը հետևենք: Ուրե՞մն:

— Գործի եյությունը կայանում է նրանում, վոր լեհ-ռուսական պատերազմի յելքը կվճռվի այնտեղ՝ Գալիցիայում: Ցեթե մեղ աջողվի ապստամբություն բարձրացնել լեհերի թիկունքում—հաղթանակը մերն է: Հետևաբար...

Մինչև վոր հասան Վերեցկե, խոսեցին—հասկացվեցին բոլոր հարցերի նկատմամբ: Անլեզալ կարմիր բանակ կազմակերպելն իրանց վրա յեն վերցնում Պետրոսը, Մխաչքանի Յուրկոն և նախկին չեխ լեգեոներ Նիչայը՝ Սեղլեչից: Չինովորական մասնագետը կդա Վիեննայից:

Ցերը նրանք մտնում եյին Վերեցկե, նրանց ուղղությամբ սլացավ մի ավտոմոբիլ: Ավտոմոբիլում Ֆրանսիացի յերկու սպաների միջև նստած եր բժիշկ Բեկեչը:

***

Վերադառնալով Ուժգորոդ, Սեկերեչը Իվան Բուժոչին այնտեղ չգտավ:

— Նա դեռ առավոտյան Պեմերե ուղեվորվեց: Այնտեղ յեկել է Պրագայի մի հանճնաժողով—կամ պրոֆմիություններից, կամ սոցիալ-դեմոկրատներից, ճիշտը չգիտեմ: Իվանը ծանոթացնում է նրան չրջակայքների հետ,—հայտնեց նրան Մարիան:

— Իսկ պատգամավորների անունները չգիտե՞ք:

— Վոչ: Ցեթե յես հարցնեյի, Իվանը անկասկած խորհրդավոր դեմք կաներ և կլռեր: Ինչպես վոր նա ձեզ ել մի քանի անգամ ասել է, ինձ նա համարում է դաղտնի բոլշևիկ:

— Ցեվ իրավունք ունի՞, ընկեր Մարիա,—հարցրեց Սեկերեչը:

— Կապրիք—կտեսնենք:

Սեկերեչը նստեց կաֆեյում, պահանջեց թանաք և թուղթ և դրեթե մի ժամ դրում եր հաղորդագրություններ «Ուժգորոդի լրագրին»: Այդ հաղորդագրությունները բավականին յուրօրինակ հատկություններ ունեյին:

Ահա մի քանի օրինակ.

ԼՈՑԴ ՋՈՐՋԸ ԼԵՀ-ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ինչպես հայտնի յե, մեր՝ Լոնդոնի թղթակիցը, անգլիական առաջին նախարարը չոտլանդական ընտրողներին առաջին արած իր հաշվետվության մեջ յերկյուղ արտահայտեց, վոր լեհական բանակին անկարող կլինի յերկար ժամանակ ընդդիմադրել կարմիրներին հարձակման: Լեհ բանվորներն ու գյուղացիները սկսեցին հասկանալ, վոր կարմիր բանակը կռվում է աշխարհի բոլոր աշխատավորների համար, և այդ պատճառով լեհական բանակի դինվորների ահագին մեծամասնությունը համակրում է հակառակորդին: Վատնդ կա, վոր բոլշևիկները չուտով կհասնեն Մերձկարպատյան Ռուսիայի սահմաններին և այն ժամանակ պատերազմի հետագիծը կանցնի ռուսին բնակչության վարմունքից:

Այնուհետև նկարագրելով դրությունը Մերձկարպատյան Ռուսիայում, Լոյդ Ջորջը մեծ հիացմունքով խոսեց գեներալ Պարվի մասին և Բերեզասի դավառակալի կազմակերպչական դեղեցիկ տաղանդների մասին:

ԱՄԵՐԻԿԱՑԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ԼԵՀԵՐԻ ԴԵՄ

(Մեր՝ Նյու–Յորքի թղթակցից)

Վաշինգտոնի կառավարության կարգադրությամբ ձերբակալված են նավահանգստում աշխատող յերկու հազար բանվոր՝ լեհական բանակի համար զենքեր և ռնդանոթներ փոխադրող նավերը բեռնելուց հրաժարվելու համար: Մի քանի քաղաքներում, ինչպես՝ որինակ՝ Սան–Ֆրանցիսկոյում, ղորքերը հրաժարվեցին բանվորների դեմ դուրս գալ և թերթիկներ էլին տարածում նրանց մեջ: Այդ թերթիկների նյութը մի նախադասությունից է բաղկացած.— Մի՛ փոխադրեք զենքեր Խորհրդային Ռուսաստանի թշնամիների համար:

Ամերիկացիների մեծամասնությունը, մանավանդ ունևոր մարդիկ, դատապարտում են բանվորների վարմունքը և պահանջում են մտցնել պինվորական դրություն՝ բոլշևիկ ագիտատորների հետ կռվելու համար:

Այդ հաղորդագրությունը Սեկերեչը տարավ խմբագրատուն: Նա նուիրնիկ ինքը պատրաստվում էր մտնել ռազմարան—հետևելու, որ մեկը չխլացնի իր աշխատանքը, բայց այնտեղ գնալ նրան չաջողվեց. նրան զանգահարեցին Բոժոչ ամառանոցից, որ նա անհապաղ այնտեղ գա:

***

— Ձեռ հրեշավոր չարագործագրություններին հետք գտա: Մեկը ատոր կերպով է չարն և գործ գնում սոցիալ–դեմոկրատական կուսակցության անունը: Դուք այդ բանը պետք է դիտնայիք: Ձեվ դուք այդ գիտեիք: Ձեռ այդ բանին խո՞սք չեմ դռնում.—դիմավորեց նրան Բոժոչ:

— Ինչի՞ մասին եք խոսում.—անմեղ ձևով հարցրեց Սեկերեչը, նայելով Բոժոչի կողքով՝ յերեք անծանոթների վրա, որոնք կանգնած էլին նրա յետևում:

Այդ յերեք պարոնները—յերկուսը՝ բարձրահասակ, գեր, և մեկը՝ նիհար, մի քիչ հապակով, չիլհատը—կանգնած էլին այնտեղ այնպիսի արժանավորությամբ և վեհությամբ, կարծես թագման էլին յեկել:

— Ինչի՞ մասին եք խոսում, ընկեր Բոժոչ:

— Ինչի՞ մասին: «Մի մատակարարեք զենքեր...»: Այս և սրա

նման նողկալիություններ տարածում և իմ կուսակցությունը, իմ կուսակցության գործիչներ:

— Անհավատալի՛ յե: Վրդովեցուցի՛չ է.—բացականչեց Սեկերեչը:

— Ձեվ դուք դրա մասին չգիտեի՞ք: Կուսակցության քարտուղարը չգիտե, թե ի՞նչ է կատարվում կուսակցության մեջ:

— Հասկ ինչպես կարող է լինել, որ դուք ինքներդ, կուսակցության նախագահ լինելով, մինչև այսոր դրա մասին չգիտեիք. կամ դուք՝ գուցե՝ գիտեիք, բայց դրա մասին բան չեյի՞ք ասում,—իր հերթին Սեկերեչը հարձակման անցավ:

Բոժոչի դեմքը արյունով լցվեց:

— Շատ լավ,—ասաց նա մի րոպեյի լռությունից հետո:— Շատ լավ: Զգիտեյի՞ք ուրեմն: Հավատում եմ, հավատում եմ: Հունդարական կոմունիստների անկարգությունների մասին վոչինչ չգիտեյի՞ք: Այն բանի մասին, որ հունդարական բոլշևիկները ուղարկել են այստեղ՝ Ռուսինակո՝ ամբողջ հիսուն մարդ: Զգիտեիք, որ այդ հիսուն բոլշևիկները ձեր ոգնությամբ մտել են սոցիալ–դեմոկրատական կուսակցությա՞ն մեջ...

— Ինչպիսի՛ սուտ.—արհամարհական ձևով ձեռքը թոթվեց Սեկերեչը:—Ձերեխայական հեքյաթնե՛ր:

— Ձերեխայական հեքյաթնե՞ր: Դուք, ընկերներ, լսեցի՞ք.— դիմեց Բոժոչը պերմանենին՝ յերեք համր վկաներին:—Սեկերեչը կարծում է ամեն բան: Իսկի վոչի՛նչ չգիտե: Բայց յեթե նա ժըխտում է, յես այդ բանը հիմա ձեղ կապացուցանեմ:

Բոժոչը թափով բացեց հյուրասենյակի դուռը:

— Մտեք, խնդրեմ,—բարկացած կանչեց նա:

— Մենք հո հին ծանոթներ ենք,—արտասանեց խաղաղ ձայնով, քաղցրալի ժպիտով, մյուս սենյակից հրավիրված վկան:— Սյնպես չե՞: Մի՞թե դուք ինձ մոռացել եք: Նեմեչին: Ընկեր Նեմեչին: Բերեզասի կոմիտեյի կոմիսարին:

— Սատո՛ր պրովոկատոր.—դուրս թռավ Սեկերեչի բերնից:— Սրբիկա՛: Գո՛ղ...

Նեմեչը վախեցած հետ ցատկեց: Բայց իսկույն զսպեց իրան և իր մաքուր սափրված դեմքին արհամարհելի ժպիտ դուրս բերեց: Բայց նրան յերկար ժամանակ ժպտալ պետք չեղավ:

Սեկերեչին դավաճանեցին նրա ջղերը:

Նա առաջ ցատկեց և բռունցքով ուժգին խփեց Նեմեչի դեմքին: Նեմեչը յերերվեց:

— Դո՛ւրս լմ անկց,—կանչեց Բոժոչը:—Բոլչևի՛կ...

Իման Բոժոչն այդ բառը կանչեց աննկարագրելի արհամարհանքով ևատելությամբ:

Ձերևք համր վկաները, աչքերը չռած, դիտում էլին այդ տեսարանը:

***

Ցերը Սեկերեչը հայտնվեց փողոցում, նրա կատաղությունը վոչ մեկին չհանդարտվեց, այլև աճեց: Սարսափած լինելով մեկ տեղ և յեղբայրանալ հակառակորդների հետ, նա սովորել եր զսալ իրան: Այժմ նա մեկից կորցրեց ինքնատպսությունը: Նրա սիրտը զարծում եր, ինչպես չափից դուրս տաքացրած շոգեմեքենա: Թվում եր, թե հիմա կպայթի ձեռքի ջիղը և գլուխը ջարդ ու փշուր կլինի, յեթե նա հենց տեղն ու տեղը, վայրկենապես, չհասցնե նրանց խորտակիչ, մահացու հարված:

— Սրիկանե՛ր...

Նա չեր գնում—վազում եր: Հեվ ի հեվ՝ նա թռավ իր սենյակը: Պատառոտեց, մանր կտորներ արավ իր բոլոր թղթերը և դրությունները՝ առանց նրանց բովանդակությանը նայելու, առանց մտածելու: Վառվեց լուցկին վոքրիկ՝ յերկաթե վառարանիկում, բոցը պարեց և սենյակը լցվեց ծխով:

Սեկերեչը պահվեց անկողնում և սկսեց սպասել խուզարկողներին: Նա հավատացած եր, վոր յերկար սպասելու չէ: Խուզարկողներ, վոսկիականություն, դատախազական մարմին...

Սեկերեչն արդեն տեսնում եր իրան դատավորների առաջ. յոում եր, թե ինչպես ինքն իր պաշտպանության ճառն է խոսում: Պաշտպանությո՞ւն: Վոչ, նրա ճառը մեղադրական կլինի: Դատական դատ... Այո, այդպես կկոչե նա.—Դատակարդային դատ...

Հանկարծ դուռն անցավ նրա թիկունքով: Նա վեր ցատկեց: Գնաք և հայտնել ընկերներին: Շո՛ւտ... Պետք է կազմակերպությունը խլել Բոժոչի և բոլոր այդ սրիկաների ձեռքերից: Շուտ, շուտ... Ձե վոր Գյուլյոլը և գինվորական մասնագետը պետք է գան ուղղակի նրա բնակարանը: Նրանք արդեն ճամբին են՝ յերևի.

վոչ մի վայրկյան կորցնել չի կարելի: Միայն մի վայրկյան տատանվեց նա—և հետո վճիռն ընդունված եր:

— Նա ծանր հառաչեց:

— Թող ասեն, վոր յես վախկոտ եմ... Վողջը մեկ է: Սրիկանե՛ր...

Ցերբ յերկու խուզարկողները Սեկերեչի սենյակի դռան դոյին էլին ջարդում, նա ինքը՝ ապրանքատար գնացքի չոգեմեքենայի վրա՝ արդեն մոտենում եր Պեմետեյին: Նույն յերեկոյան նա սայլով հասավ Սվալյավա և գիշերվա դեմ արդեն Պոլենայոմն եր:

Առավոտյան Գոնդան մեկնեց Ուժգորոդ:

Միաժամանակ ինը կոմյերիա ուղևորվեցին Սվալյավայից դանազան ուղղությամբ: Վորը վոտքով, վորը սայլակով, վորը գնացքով: Նրանք տանում էլին հրահանգներ ամենակարևոր կազմակերպություններին:

ՊԱՌԱԿՏՈՒՄ

Գոնդան իր ուժերին չեր վստահում: Նա վախենում եր,—ավելի ևս՝ համոզյա հավատացած եր, վոր իր տեղում չի մնա: Մի լա՛վ խորհեք. ինչքա՛ն բան և կյանքում տեսել Սեկերեչը, ինչքա՛ն սովորել, ինչքան գիտե՛ և հանկարծ նա՝ Գոնդան, Պոլենայի մեքենավարը պետք է փոխարինե նրան աշխատանքում: Մի ծանր գործ:

Նա կամենում եր հետ վերադառնալ: Մարդատար գնացքը, վորը սովորաբար հազիվ-հազ է ընթանում, այժմ չգիտես թե ինչու սլանում է խելի պես: Մինչև Ուժգորոդը մնում է ընդամենը հեռ ժամվա ճանապարհ: Ե՛հ, լավ եր վերադառնալ... Բայց յերե վոչ վոք Ուժգորոդ չգնա, այդ ավելի քիչ կլինի, քան թե այնտեղ լինի նա՝ Գոնդան... Նրանից ընկերները գոնե կիմանան գործերի դրության մասին:

Նա՝ վախեցած՝ մանկական կապույտ աչքերը հառել է վագոնի յարդված լուսամուտին:

Գոնդան իջավ գնացքից: Նա հագել եր տոնի չորը և ձեռքով առնում եր իր կանաչ՝ գինվորի անդուկը: Ուժգորոդը նա վատ եր ճանաչում, ուստի կառք վարձեց: Կառքից դուրս յեկավ նշանակված տեղից յերկու տուն առաջ: Կառավարին, վորի ձին, ինչպես յերևում եր, տառապում եր ծերության թուլությունից, նա

ավելց այնքան չատ, վոր սա սկզբում կասկածով նայեց վողերին, արդյոք նրանք կեղծ չե՞ն, իսկ հետո սկսեց բոլոր ուժով մտրակել իր հալից գցած ձիուն—չլինի թե ոխմամբ ճանապարհորդը գլխի ընկնի, վոր իրան ավելորդ է տվել:

Ցերը մթնեց, գերձակ Ֆրանս Տերեկի բնակարանում հավաքվեցին լուն ընկերը: Գոնդային այստեղ սպասում եր չատ անախորժ տեսակնկալ: Տերեկն առանց այլևայլության անցավ գործի. բոլոր ընկերներին հայտնի չե,—դրա մասին արդեն խոսում է ամբողջ քաղաքը,—վոր Սեկերեչը յուրացրել է վողերի մեծ գումար և նրանցով Հունգարիա է փախել:

Սհա նոր տպագրյալ այն բանի, դրում եր «Ուժգորդի լրագիրը»,— վոր բոլշևիկ ագիտատորները Թորաիի հանձնարարությամբ անցնում են Չեխո-Սլովակիա, վորպեսզի վնասեն և կործանեն Չեխո-Սլովակիայի դեմոկրատիան: Ուժգորդի վոստիկանությունը իր ձեռքին ունի փաստաթղթեր, վորոնք վոչ մի կասկած չեն թողնում Իոսիֆ Սեկերեչի՝ Նիկոլայ Թորաիի հետ անմիջական կապ ունեցածի մասին:

Գոնդան մի քանի խոսքով պատմեց, թե լինչ եր պատահել Սեկերեչի հետ:

Ընկերները թեթևությամբ հառաչեցին, մոտյալ դեմքերը պայծառացան:

— Դե՛հ, յերիցս անիծվա՛ծ լինեն նրանք: Լավ են հնարել...

— Բայց լինչպե՞ս դուք, ընկերներ, կարողացաք հավատալ, իրրև թե Սեկերեչը...

— Բայց չե՞ վոր նա ամբողջ ժամանակը Ակուլիչանիի հետ լաբեկամակա՛ն հարաբերության մեջ եր:

— Այդպես եր նրա ծրագիրը:

— Այդ այդպես է, բայց ելի...

Գոնդան մանրամասն կերպով հարցնում է ընկերներին դրության մասին: Գործերը, վոչինչ—ընթանում են: Այն ժամանակից, յերբ ռուսաց ռազմաճակատից սկսեցին հասնել լավ լուրեր, տղերքանց տրամադրությունը չատ բարձրացավ: Այնուամենայնիվ պահեստություններ ամեն տեղ չատ կան: Վոչ վոք չգիտե, ո՛վ կուսակցության անդամ է, ո՛վ չե,—ել չխոսած այն բանի մասին, վոր դեռ վոչ վոք չի ստացել հրահանգներ, թե լինչ է անելու ինքը, լինչ է անելու հարևանը: Ամեն մեկն աշխատում է իր ահով ու բիսկով:

Գոնդան բաժանում է հրահանգները: Կարճ, ճիշտ հրամաններ:

Նրա ձայնը հնչում է հաստատ:

Հաջորդ որը նա կապ է հաստատում չրջակա կազմակերպությունների հետ:

Յերրորդ որը բանակցում է պինվորական լիազորների հետ: Գործերն առաջ են գնում:

Գոնդան ապրում է առաղձագործի խոհանոցում: Այժմ այդ խոհանոցը չարժման կենտրոնն է, ամբողջ փոքրիկ յերկրի կենտրոնը: Ամեն բան գնում է հաջող կերպով:

***

Ցերը Ուժգորդի պատախազական մարմինը հրատարակեց Սեկերեչի ձերբակալման հրամանը, Բուժոչի ձեռքերում արդեն կային Սվալյավայի և Պեմեսեյի կուսակցական կազմակերպությունների վճիռները:

Նրանք յերկուսն ել դուրս եյին յեկել սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից:

Ցերը գեներալ Պարին ծանոթանում եր Բուժոչի վոստիկանապետ Ակուլիչանիի զեկուցումներին հետ, Բուժոչը սուացավ արդեն այդպիսի տասնումեկ վճիռ:

Գեներալ Պարիի հեռագրին Պրագայից պատասխան սուացվելու ժամանակ—պինվորական նախարարը, չեխ բանվորների տրամադրությունը աչքի առաջ ունենալով, չեր համաձայնում պատերազմական դրություն հայտարարելու,—այդ հեռագրի հետ միաժամանակ գեներալն սուացավ նաև «Պրոլետարնեպալի պաշտոնաթերթի» զեկուցումը. սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը ճեղքվել եր: Մի կողմում բոլոր կազմակերպություններն եյին, մյուս կողմում՝ կատարյալ մենակության մեջ՝ մնացել եր նրանց առաջնորդը:

Դատախազական մարմինը հետ վերցրեց Սեկերեչի ձերբակալման հրամանը: «Ուժգորդի լրագրի» խմբագրությունը խոշոր տառերով տպել եր տեղեկություն, վոր պարոն Իոսիֆ Սեկերեչի մասին տարածված լուրերը՝ Թորաիի սուտը, անիրավ գործակալների պղծելի հնարվածքներ դուրս յեկան: Խմբագրությունը սատիկ ցավում է, վոր մոլորեցնել է ավել լրան և իր հին, փորձված

աշխատակից՝ պարոն Իոսիֆ Սեկերեչից անկեղծ ներողություններ և խնդրում:

Գեներալ Պարին հրավիրեց իր մոտ «կուսակցական քարտուղար պարոն Գոնդային» մտքերի մտերմական փոխանակության: Գոնդան գնաց նրա մոտ Սելեչյի Նիչայի, Մունկաչյի մի ընկերի, Բերեգսասի մի ընկերի և Սեկերեչի ուղեկցությամբ:

Գեներալն ընդունեց պատգամավորությունը մեծ պատվով: Նա անսահման ուրախ է, որ՝ վերջապես՝ հնարավորություն ունի յերես առ յերես զրուցելու հարգելի պարոնների հետ և հայտնելու նրանց, որ ինքն իսկական և անկեղծ մտերիմ է բանվորներին: Նա կապված է անձնական մտերմությամբ՝ ֆրանսիական բանվորական չարժման հին, փորձված առաջնորդների մի ամբողջ շարքի հետ: Նա, ի հարկե, բոլշևիկ չէ, բայց վոչ մի բանով հակառակ չէ, որ բանվորները կազմակերպվեն միջազգային միաբանության հիմքի վրա: Նա ծանոթ է բանվորական չարժման հետ և գիտե, որ դոյություն ունի յերկու Ինտերնացիոնալ. արևմտյան և արևելյան: Նրա կարծիքով՝ արևմտյանը, այսպես կոչված Յերկրորդ Ինտերնացիոնալը, ներկայացնում է ավելի՝ կուլտուրական և տնտեսական ուժ, քան այսպես կոչված Յերրորդը, ուստի նա—Մերձկարպատյան Ռուսիայի բանվորական դասակարգի չահերն ի նկատի ունենալով—խնդրում է հարգելի խոսակիցներին, որ նրանք վերանորոգեն իրանց միջազգային կապը ոչ թե Յերրորդ, այլ Յերկրորդ Ինտերնացիոնալի միջոցով: Բանի որ այդ՝ դուք՝ որոշ դժվարություններ եք ներկայացնում նրանց, նա՝ գեներալ Պարին՝ ուրախությամբ իր վրա կվերցնե Յերկրորդ Ինտերնացիոնալի առաջնորդների և Մերձկարպատյան Ռուսիայի Նորակազմ Անկախ սոցիալիստական կուսակցության առաջնորդների մեջ միջնորդ լինելու դերը...

***

ՀԵՂՋԻՆԽՈՐՀՐԴԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՇՏԱԲԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ, 1920 Թ. ՀՈՒԼԻՍԻ 12–ԻՑ

Արևմտյան ռազմաճակատ: Սվենցյանըի ուղղությամբ մեզ մտաերը գրավեցին Սվենցյանըն, ըստ վորում ավարտեր են վերցված: Մերոնք չարունակում են յեռանդուն կերպով հետամուտ լինել թշնամուն հարավ-արևմտյան ուղղությամբ: Մոլոդեչնոյի ուղղությամբ մեր զորքերը յեռանդուն գրոհով գրավեցին Մոլոդեչնո: Մոլոդեչնո կայարանն այրվում է: Մինսկի ուղղությամբ մեր մասերը գրավեցին Լոդայկ չենը և, զարգացնելով հարձակումը, խիզախ գրոհով տիրեցին Մինսկին: Մոզըրի չրջանում մեր մասերը համառ կռվով անցան Պռիչ գետը և գրավեցին Կոպատկևիչի չենը և Պռիչ կայարանը: Հարձակումը չարունակվում է:

***

Գեներալ Պարիի հետ բանակցելուց հետո՝ Սեկերեչը գնաց ճաչելու: Ճաչելուց հետո՝ դարձավ տուն և գնաց զբոսնելու Ունդի ափին: Գարնան վարարումը վաղուց վերջացել եր, ջուրը քաչվել եր, և մի ափից մյուսը կարելի յեր անցնել՝ քարից քար ցատկելով:

Սեկերեչը պառկեց ափին:

— Դեռ միայն չորս և կեսն է... Հըմ...

Զանձրույթից՝ սկսեց քարեր նետել ջրի մեջ:

Հինգը քիչ անցած քաղաքի կողմից յերևաց մի մեծ, մանիչակագույն ավտոմոբիլ: Սեկերեչից քիչ հեռու մեքենան կանգ առավ. մոտորի գլխին մի վորձանք եր պատահել: Մինչդեռ շոֆերը վնասում եր վնասման պատճառը, ավտոմոբիլում նստած չենի մորուքով պարոնը դուրս յեկավ և գերմաներեն հարցրեց Սեկերեչին, թե ինչպես է կոչվում գետը: Սեկերեչը ներկայացավ, և պարոնն էլ հայտնեց իր անունը—դոկտոր Գոլդ:

Դոկտոր Գոլդը նախընթաց որը ուժգորով եր ժամանել գաղիական կարմիր խաչի հանձնարարությամբ, իսկ ներկայումս ավտոմոբիլով զբոսանք եր կատարում, վորպեսզի ծանոթանա մայոր Ֆրանսուայի չրջակայքների հետ: Իմանալով, վոր Սեկերեչը լրագրագաղ

լը։—Խոսեց՝ վերջապես՝ դոկտոր Գոլդը հունգարերեն։—Վոչ մի կենդանի հոգի մեզ չտեսավ։

— Յերբեք չի կարելի վիճնալ։ Այստեղ այնքա՜ն վոստիկաններ կան—ամեն մի բնակչի գլխին—կես դյուժին։ Բայց մորուքդ, ձիչան ասած՝ լոկապես հիանալի յե։ Յես քեզ, ազնիվ խոսք, ճանաչելու չեյի։ Այդ չի նշանակում, ի հարկե, վոր պրոպագանդայի պաշտոնատունը չի ճանաչի քեզ։ Զեխական առյուծը միայն յերկու պոչ ունի, բայց պաշտոնատունը հարյուր աչքով է։

Մանիշակագույն ավտոմոբիլը դրեթե յերեք ժամ շարունակ չրջեց խճուղով։

Սեկերեշը և դոկտոր Գոլդ-Գյուլայը խորհրդակցեցին կուսակցական գործերի մասին ամենամանրամասն կերպով։

Գյուլայը շատ դժգոհ եր։

Աղմուկ՝ շատ, իսկ մխիթ՝ քիչ— այդպես եր նրա կարծիքը։

— Մի մոռանար, վոր մենք գործը պետք է կատարենք կարճ ժամանակվա մեջ։ Համաշխարհային հեղափոխության տեմպ...

— Կարճ ժամանակ—այդ ճիշտ է։ Բայց յերեք բանը հասնի գործողությունների, մենք կսնանկանանք։

— Դու սխալվում ես։

— Կկամենայի վոր դու իրավացի՛ դուրս գայիր։ Այժմ մեզ՝ ի հարկե՝ ուրիշ բան չի մնում, բայց յերե՝ չարունակել մեր սկսածը։ Մենք կփոխենք միայն մի բան—և յես այդ բանի վրա պնդում եմ. այն ընկերները, վորոնք աշխատում են որինական կերպով, չպետք է անմիջական մասնակցություն ունենան վոչ պետական կազմակերպության աշխատանքում, վոչ Հունգարիայի հետ կապված դաշնի աշխատանքում։ Սիրով թողյ եմ տալիս, վոր պետական իշխանությունը ձեզ մոտ անփորձ է, կաշառակեր, թողյ, բայց ելի մենք իրավունք չունենք թեթևամիտ վարվել։ Գևարոսի, Մոնդանի և Նիչայի հետ յես կուզեյի զրուցել անձամբ։

— Ինչ կա վոր, այդ բանը կարելի յե սարքել։—մռայլ կերպով պատասխանեց Սեկերեշը։

— Այդ Գոնդան հիանալի ջահել է,—չարունակեց Գոլդը, չնկատելով, կամ չկամենալով նկատել Սեկերեշի դժգոհ ձայնը։— Առհասարակ այստեղի ընկերներին յես շատ եմ հավանում։

— Ցես էլ։

Գոլդը ուժգին խփեց Սեկերեշի ուսին։

— Ինչպիսի՛ կարմիր բանակ կունենանք մենք։ Այդ մորթի

ղազանին մենք մի հարվածով կնետանք Ադրիատյան ծովը։ Յերբ մտածում ես, վոր միայն մի քանի չարաթ և մնացել, և...Սեկերեշը վառվող աչքերով՝ ղրահանապես չարժեց գլուխը։

— Այլևս մի քանի չարաթ, և...

***

Նույն յերեկո Սեկերեշը նամակ ուղարկեց Իվան Բոժոչին։ Այդ նամակը Սեկերեշը չեր գրել, այլ լինքն ստացել եր։ Մի չարաթվա ընթացքում նա ստացել եր մոտ յերկու հարյուր այդպիսի նամակ։ Կուսակցական կազմակերպությունները, այլ և կուսակցությանը համակրող մարդիկ—վո՛չ բանվորներից կամ գյուղացիներից—նամակներով հավատացնում էյին նրան իրանց համակրանքները և իրանց անձնվիրությունը։

Այդպիսի նամակ նա ստացել եր նաև Մունկաչի գավառական վարչության ծառայողներից։ Նամակը կրում եր հետևյալ ստորագրությունը։

Նամակը սկսվում եր այսպիսի դիմումով.

«Մեծահարգ և անկո՛ղճ սիրելի ընկեր Սեկերեշ...»

Սեկերեշը քիչ մտածելուց հետո առավ գրելիքն, քերեց նամակի վրայից իր ազգանունը և նրա տեղ գրեց «Բոժոչ»։

Նամակն այդ ձևով ուղղելուց հետո, նա Իվան Բոժոչին ուղարկեց այն։

ԼԵԳԵՈՆԵՐՆԵՐԸ

Դեպքերը հաջորդում էյին իրար՝ անողոք և խլացուցիչ կերպով, ինչպես գարկերը չոգեհար մուրճի, վորին ավել են լրիվ ընթացք։

Սեկերեշի՝ պրոպագյից վերադառնալու որը ռումին յերկաթուղայիններն արդեն փոխադրում էյին ֆրանսիական զենքեր Լաֆուշեյի ուղղությամբ։

Նույն որը, յերբ Սեկերեշը գարկեց Նեմեշի յերեսին, Գևարոսը տեղափոխվեց Վոլոց։ Յերբ գեներալ Գարին հրավիրեց նոր կուսակցության պարագլուխներին «մտերմական զրույցի», Վոլոցի և Վերեցկեյի միջև գոնվող վիադուկը արդեն ջարդ ու փշուր յեղած՝ ընկած եր։

Պայթումի հաջորդ որը Գևարոսը յերեկոյան վերադարձավ

Սվալյավա: Տիմկոն արդեն դիտեր պատահածի մասին: Պետրոսի հետ մենակ մնալով, Տիմկոն հարցական հայացքով նայեց ընկերի վրա, կարծես ուզում եր հարցնել, թե ով և ինչպես և այդ բանն արել: Նրա համր հարցին Պետրոսը պատասխանեց.

— Ասելած վկա՝ չգիտեմ: Մեր աշխատանքը չէ: Մենք պատրաստվում ենք այդ բանը անել վաղը չէ՝ մյուս օրը:

— Ո՞վ է այդ դեպքում:

— Չգիտեմ: Գուցե՝ ուկրաինցիները:

Եվ նրանք այդ բանի մասին չխոսեցին: Կանայք պատկեցին քնելու, իսկ տղամարդիկ մնացին զատելու պատերազմի հետևանքների մասին: Ցերկու շաբաթ, ծայրահեղ դեպքում տասնևյոթը—տասնութը օր—բնավ վոչ ավելի,—և ռուսներն այստեղ կլինեն: Պետք է չսպասել, պետք է պատրաստ լինել նրանց դալուն:

Նրանք արդեն պատրաստվում եյին մահիճ մտնելու—Ոլգան վաղուց քուն եր լինում—յերբ հանկարծ տունը լցվեց Նատաշայի հուսահատական լացով: Նրա լացն ու կոծը, վորոնք նման եյին տղնուքյան կանչերի, քնած փողոցով տարածվում եյին մինչև հեռուները: Ոլգան վեր թռավ. տղամարդիկ նույնպես չսպասեցին տղնուքյան, բայց Նատաշային չեր կարելի հանդստացնել վոչ մի բանով: Ցերբ Պետրոս ուզեց նրան ջուր խմացնել, նա ճանկռտեց նրա ձեռքն այնպես, վոր արյունոտեց:

— Բժշկի հետևից պետք է դնալ,—ասաց Ոլգան:

Տիմկոն կոպիտ հայհոյեց:

— Միայն այդ փուչ կատուն եր մեզ պակաս, յես նրա... Ոլգան պաշտպանեց Նատաշային: Նրա դղրդված խարտյաշ մազերը փայլում եյին նավթի լապտերի նվազ լույսի տակ, աչքերը կայծեր եյին արձակում: Տիմկոն դերադասեց լռել:

Ցերբ Բեկեչը յեկավ, Նատաշան արդեն հանդստացել եր: Պառկած եր թիկունքի վրա, ծանր շնչելով և խոշոր, սև, անդորրեն փայլող աչքերով վախկոտությամբ սենյակը դիտելով: Ոլգան անկյունում որորում եր փոքրիկ Վոլոդյային:

— Հըմ... հըմ... Անմիտ կյանք: Դեհ, ել ի՞նչ ունես նորից, հոդիս:

Բեկեչը ձեռքը դրեց հիվանդի՝ թեթև քրտինքով ծածկված ճակատին: Հոգատարությամբ հետ տարավ նրա սիրուն սև մազերը և նրա ճակատին դրեց պաղ կոմպրես: Այդ գործը վերջացնելով, նա նստեց Տիմկոյի սենյակում, իբրև թե գիշերվա ժամի յերկուսը այցելության ամենահարմար ժամանակը լիներ:

— Վորպեսզի հիվանդը չանհանգստանա, փակիր խոհանոցի դուռը— դուցե կքնի,— ասաց նա և ծխեց սիգար, վորը պարզ ապացույց եր նրա չքաոպելուն:

Տիմկոն խոհանոցից բերեց լապտերը:

— Ի՞նչ կասեք, պարոններ, վիադուկի պայթումի առիթով,— հարցրեց Բեկեչը:—Կերևի՝ բոլշևիկների գործն է:

— Հաղիվ թե,—առարկեց Պետրոսը:—Ավելի շուտ ուկրաինցի ազգայնականների:

— Կարելի յե, կարելի յե: Բայց մի բան անվիճելի յե. կամ բոլշևիկները, կամ ուկրաինցի ազգայնականները: Ցես, ինչպես ժիլիկ, քաղաքականությունից քիչ բան եմ հասկանում, սակայն պիտեմ, վոր միայն այդ յերկու կուսակցությունները...մի խոսքով, վոր լեհերի պարտությունն ամենից առաջ ոգուտ է բոլշևիկներին և ուկրաինցիներին: Կրկնում եմ, յես քաղաքականադետ չեմ, ուստի ամենևին խելքս չի կտրում, ինչու այդ յերկու կազմակերպությունները—մինչև այժմ, չնայած իրանց շահերի ակընհայտ ընդհանրության, համաձայնություն չեն կայացրել իրանց մեջ:

— Այդ հեշտ բան չէ: Բանը յերկու ազգերի՝ ռուսների և լեհերի ընդհարման մեջ չէ, այլ այն կռվում, վոր պրոլետարիատը և դյուղացիությունը մղում են կապիտալիստների և խոշոր կալվածատերերը կմիանան լեհ պանների հետ ընդդեմ ուկրաինցի և լեհ բանվորների:

Տիմկոն հառաստեց Պետրոսի խոսքերը դլխի ազդու շարժումով: Բայց Բեկեչը տաք-տաք բողոքեց.

— Այդ տեսակետն ինձ հայտնի յե, բայց յես հավատ չեմ ընծայում այդպիսի չափազանց լմաստուն, ածելիի պես կտրող պատճառաբանություններին: Թո՛ղ յես, ինչպես ժիլիկ քիչ եմ բան հասկանում քաղաքականության մեջ, բայց ձեզ չի հաջողվի փոխել իմ կարծիքը այն բանի նկատմամբ, վոր գոնե այսօր բոլշևիկները և ուկրաինցի ազգայնականները մի ընդհանուր թշնամի ունեն: Վաղվա որը—կտեսնենք, բայց հիմա, առ այժմ, տեսությունների ժամանակը չէ: Ամեն մեկին պարզ է, վոր յերեք թշնամին ընդհանուր է, ինչանակ չահերն էլ ընդհանուր են: Ցերեք յես ունենայի գեթ մի քիչ ազդեցություն քաղաքականության վրա, յես նրանց խորհուրդ կտայի դաշն կապել բոլշևիկների հետ լեհերի դեմ:

Յետ նույնպես հեռու յամ բոչխիկներից, ինչպես դուք—ուխտաւորների աղջայնականներից, պարոն բժիշկ: Բայց, յեթե յես բոլշեւիկ լինեյի, թող ինձ գրողը տաներ, թե որ համաձայնել եյի միանալ ուրիշների աղջայնականների հետ:

— Լաւ է, որ մենք չենք վճռում այդ հարցը,— ասաց ծիծաղելով Բեկեչը:—Մինչդեռ մենք այստեղ դլուխներս ենք պատռում տարների առեղծվածների համար, գործ տնօրինողները դուցե արդեն դաշն են կապել:

— Դուցե,—պատասխանեց Պետրոսը:

— Փոխանակ տարի գործերի՝ լաւ է գրաղվենք մեր գործերով:

Բեկեչը զգուշութեամբ բացեց խոհանոցի դուռը և վոտքի մատների վրա մոտեցաւ Նատաշայի մահճակալին:

Նատաշան քնած եր:

Բժիշկը հրաժեշտ տվեց:

Յերբ Տիմկոն մարեց լապտերը, արդեն լուսանում եր:

***

Պետրոսը՝ հենց պառկեց՝ քուն յեղաւ:

Նա խոր քնեց, առանց յերազների: Հանկարծ զարթնելով, նույնիսկ մեկից չհասկացաւ, թե ո՛ւր և գտնվում: Գլուխը ծածկեց վերմակով:

— Հրացանի կոթով դուռն են զարկում,—զարմանալի հանգիստ ասաց Տիմկոն և մոտեցաւ լուսամուտին:—Լեգեոներնե՛ր.—հանկարծ կանչեց նա՝ վախեցած:—Շրջապատել են ամբողջ տունը...Լեգեոներնե՛ր...

Պետրոսը մահճից վայր ցատկեց և, լուսամուտը լայն բանալով, կախ ընկաւ դեպի դուրս:

Տան առաջ կանգնած եյին յերկու բեռնատար ավտոմոբիլ: Յերկուսի վրա էլ, առջևից և յետևից, կային մի-մի գնդացիր: Զորս կողմը՝ լեգեոներները, քանի մարդու չափ, յեթե վոչ ավելի: Հրացանները, հարվածայինների աղաւաղատները, ձեռքի ռումբեր:

Խոհանոցից լսվում եյին վախեցած Նատաշայի կանչերը: Բլդան՝ յերեխան ձեռքերին, Տիմկոյի մոտ եր:

Պետրոսը բացեց դուռը:

— Մեզ պետք է Պետրոս Կովաչը:

— Ի՞նչ գործով:

Լեգեոներները չպատասխանեցին: Հոտոտեցին ամբողջ սենյակը, ինչպես վնասող շներ և նրանցից մեկը ձեռքը դրեց Պետրոսի ուսին:

— Դո՞ւ յես Պետրոս Կովաչը:

Պաշտպանութեան մասին մտածելն ավելորդ եր: Մի պահում Պետրոսի ձեռքերը կապեցին թիկունքին, կապեցին վոտքերը վոկով և նետեցին նրան ապրանքատար ավտոմոբիլի մեջ:

Տիմկոն անչարժ կանգնած եր բայց լուսամուտի առաջ: Ոլգան արդեն ուզում եր նետվել դեպի ավտոմոբիլը, բայց նրան կոպտութեամբ հրեցին բռունցքներով:

Մի ավտոմոբիլը գնաց, և այն ժամանակ յերկրորդի մեջ ճգնեցին հուսահատորեն ընդդիմացող Նատաշային:

Լեգեոներները, ասես կատարելով մի լավ սերտած մարմնամարզական ձև, կայծակի արագութեամբ ցատկեցին ավտոմոբիլի վրա: Մոտորները թնդացին և վոչով ամպը կլանեց սլացող ավտոմոբիլները:

Յերբ աղմուկից զարթած հարևանները փողոց թափվեցին, արդեն վոչին ցրվել եր:

Տիմկոն արտրեց աչքերը, ասես քնից արթնանալով: Վերապրած հուզմունքից և վախից նրա ձեռքերն ու վոտքերը կարծես կապարով եյին լցված: Ոլգան դրեց յերեխային մահճի վրա և մոտեցավ ամուսնուն: Բռնեց նրա չափկի ոձիքից և սաստիկ ցնցեց:

— Ողնեցե՛ք...—կանչեց նա հանկարծ:

Տիմկոն մի րոպե լուռ նայում եր նրա վրա, հետո դեն հրեց Լրանից, և ինչպես վոր ե՛ր՝ կեսհագված՝ տանից դուրս վազեց: Նա վոտքի ամբողջ արագութեամբ վազեց գործարանի ուղղութեամբ:

Դարպասի մոտ նիրհող պահապանը վախեցած վեր թռավ:

— Գործարա՞ն ես գնում: Չի կարելի...

— Հրդե՛հ կա.—կանչեց Տիմկոն:

— Դու՝ դուցե՝ դինո՞վ ես:

Բայց Տիմկոյի մոտ արդեն վազելով գալիս եյին մարդիկ: Պահապանին, վորը զուր եր փորձում նրանց բան հասկացնել, ուղղակի դեն հրեցին և սլացան դեպի քիմիական գործարանը, ուր աշխատում եր դիշերային խումբը:

Մի քանի րոպե անցած չչակները սուր վոռնացին:

— Հրդեհ... Հրդեհ...

Տիմկոն զրասենյակից զանգահարեց ատելեֆոնով Պոլինա: Պետք չեղավ սպասել մի տասը րոպեյի չափ, նախ քան կանչեցին Գոնզայի փոքր յեղբորը: Տիմկոն չեր կարողանում տեղում կանգնած մնալ՝ անհամբերությունից:

— Այստեղ հրդեհ է,—կանչեց նա խողովակի մեջ, յերբ կրտսեր Գոնզան, վերջապես, ձայն հանեց: Ահազանգ խփեցեք: Սիրն մեկը, ում ձեռքն ու վոտքը առողջ են, թող իսկույն չտապե Սեկերեչի մոտ: Կացիններով և ճանկոցներով, իսկ ով զենք ունենա՝ զենքով:

— Զենքո՞վ: Դեպի հրդե՞հ.—զարմացավ Գոնզան:

— Հե՛նց այդպես—զենքո՛վ:

— Ահա՛ թե ինչպիսի հրդեհ է ձերը: Վերջապե՛ս:

Մի ժամից վոչ ուշ, Պոլինայից Սվալյավա մեկնեց առաջին գնացքը: Մարդիկ կախվել եյին նույնիսկ բուֆերներից: Բազմաթիվ կացինները և ճանկոցները գնացքին մի մեծ՝ ասեղները վեր ցցած վողնու նմանություն եյին տալիս:

Ահազանգ եյին խփում:

Յոթերորդ ժամին մեկնեց յերկրորդ գնացքը: Յերրորդը կանգնած եր պատրաստ չոգով և սպասում եր հեռու ապրող փայտահատներին: Բայց ժամը իններին մոտ, նա ել ժամանեց Սվալյավա:

***

Պետրոսին ավտոմոբիլի մեջ ձգեցին կիսամերկ: Զգեստը և վոտնամանները նետեցին նույն տեղը: Սիրն մի փոսից անցնելիս Պետրոսի գլուխը դարնվում եր ավտոմոբիլի կողքին: Լեզեոներներից մեկը, չիկակարմրին տվող մազերով, քթատ մի ջահել, խոթեց Պետրոսի գլխի տակ նրա զգեստը, իսկ վերջը, քիչ տատանվելուց հետո, հանեց իր վրայից հողաշուն վերարկուն և ծածկեց նրանով առավոտյան ցրտից դողացող կալանավորին:

Բեռնակիր ավտոմոբիլները սլանում եյին դեպի Մոսկվա:

Դղյակը փայլում եր վոսկի ցոլքով:

Քաղաքը դանդաղ զարթնում եր:

Ավտոմոբիլները գնում եյին մլջակողոցներով, խուսափելով մեծ փողոցներից: Գորշ, քարե մի տան հետևի դռան առաջ կանգ առան:

Պետրոսին, փաթաթելով լեզեոների վերարկուի մեջ, դուրս բերին ավտոմոբիլից և երի պես՝ վեր տարան:

Սեղան, աթոռ, հասարակ մահճակ: Սպիտակացրած պատեր, վանդակով լուսամուտ: Դռան վերև՝ Վիլսոնի պատկերը:

Պետրոսին նետեցին հասարակ մահճակի վրա: Բանալին կողպեքի մեջ յերկու անգամ ձայն հանեց: Պետրոսը մնաց մենակ: Սիրն մի չարժումին թոկը խրվում եր ձեռքերի մեջ, վոտքերը նվում եյին պրկող փոկերից:

Պետրոսը մեծ ճիգով չուռ յեկավ և պատկեց փորի վրա: Աթոռում եր չմտածել վոչ մի բանի մասին և քնել:

Նա չգիտեր, թե վորքան ժամանակ եր անցել, բայց արևն արդեն կարգին բարձրացել եր, յերբ նորից լսվեց բանալիի ձայնը: Ներս մտավ մի ածիլված, չիկահեր մարդ՝ պենսնեն քթին, կապույտ դգեստ և դեղին վոտնամաններ հագած:

— Ջե՞մ խանդարի, ընկեր կովաչ.—դիմեց նա Պետրոսին գերմաներեն լեզվով:

— Մինչև վոր ինձ փոկերից չազատեն, վոչ վոքի հետ խոսելու չեմ,—պատասխանեց Պետրոսը:

Անծանոթը գլխով արավ և մի բան կանչեց չեխերեն դեպի դուռը:

Լեզեոները ներս մտավ: Հրացանը պատին հենելով՝ նա քաշեց թոկերն ու փոկերը: Պետրոսը փորձեց վեր կենալ և չկարողացավ: Վոտքերն ավելի եյին ցավում, քան թե այն ժամանակ, յերբ փոկերում եյին: Նա պառկեց թիկունքի վրա և անշարժ հառեց աչքերը առաստաղին, կարծես սենյակում իրանից զատ վոչ վոք չկար: Պենսնեյով մարդը լեզեոներին դուրս ուղարկեց և աթոռը մոտեցրեց հենց մահճին:

— Թույլ տվեք հայտնել ձեզ, ընկեր կովաչ, ո՛վ լինելը. ես դոկտոր Գուբերն եմ, պրոպագանդայի պաշտոնատար պետը: Դուք դոկտոր Գուբերն եմ, պրոպագանդայի պաշտոնատար պետը: Դուք նեյիք մի քանի հարցի մասին: Պապիրոս կամենո՞մ եք:

Պետրոսը մեծ դժվարությամբ բարձրացավ մահճում: Գոքերը համառ կերպով հետևում եր նրա ամեն մի չարժման և, յերբ նա ցավից հեծում եր, ցավակցաբար ճոճում եր գլուխը:

— Մխեցեք, ընկեր կովաչ:

Նա մեկնեց նրան իր արծաթե պորտսիգարը:

— Թողեք կատակերգութիւնը, չեմ սիրում,—պատասխանեց Պետրոսը։—Ասեք չիտակ—չիտակ՝ ինչ եք ուզում։

— Այ, այդ բանը չեմ սիրում եմ,—ասաց Գուբերը և պահեց պորտախզարը։ Շատ զղեցիկ եք անում, ընկեր Կովաչ։ Հուլա ուղեմ՝ մենք այդ բոլորը չուտով կվերջացնենք։ Պատասխանեցեք ինձ մի քան չերկու հարցի։ Ո՞վ ձեզ ոգնեց պայթեցնելու Վոլոցի վիադուկը։ Ո՞ւմ հանձնեցիք դեներալ Պարլի վրա մահափորձ անելու գործը։ Հա՛, ներեցեք, մոռացա—կա նաև չերրորդ հարցը։ Գուցե դուք բարի կլինեք և կասեք ինձ, թե իսկապես չի՞րը եղիք կատարելու այդ մահափորձը։

— Դուք խելագարվե՞լ եք,—ասաց Պետրոսը արտահայտիչ կերպով, թեև ցածր ձայնով, վորովհետև նա ուշ չուներ։

— Իսկապես՝ զարմանալի չէր լինի, չէթե մենք, իմ գործը կատարողներս, խելագարվեյինք,—սիրալիր կերպով ժպտալով պատասխանեց Գուբերը։—Համառացեք ինձ, սիրելի ընկեր Կովաչ, չես այնքան ծանրաբեռնված եմ աշխատանքով և մի՞շտ գործ ունեմ այնպիսի անախորժ, կասկածելի անձերի հետ, վոր խելագարվելու պատճառ կա՛։ Բայց, փառք ասածո, իմ ջղերը պողպատե են,—նրանք ամեն բանի կդիմանան։ Սակայն՝ անցնենք գործին։

Պետրոսը նորից պառկեց մահճում և դեմքը պատին դարձրեց։

— Ընկեր Կովաչ, մի մոռանաք, վոր չես այստեղ եմ։ Ցես ձեր պատասխանին եմ սպասում։ Նախ վերջացնենք առաջին հարցը։ Ի՞նչ մարդիկ ձեզ ոգնեցին Վոլոցի վիադուկը պայթեցնելու։

— Ցես արդեն ձեզ ասացի. դուք խելագարվել եք։ Հանգիստ թողեք ինձ։

— Շատ ափսոսում եմ, ընկեր Կովաչ, վոր այդ բանը չես ամենևին կատարել չեմ կարող։ Ցես ստիճանավոր եմ և իմ պաշտոնի պարտականութիւնները եմ կատարում։ Կարող եմ ավելացնել, վոր այս անգամ չես ասացել եմ վորոշ հրահանգ. ինչ վոր եղ լինի, ինչ գնով եղ լինի ստանալ ձեզանից հիշյալ հարցերի պատասխանը։ Հասկացա՞ք, ընկեր Կովաչ։ Ինչ գնով եղ լինի։

Գուբերը սպասեց մի քանի րոպե և, համոզվելով, վոր Պետրոսը, ըստ չերևույթին, պատասխանելու միտք չունի, վեր կացավ և նորից կանչեց ժամապահին։

Մի քանի րոպե անցավ լռութեան մեջ։

Դուռը բացվեց ու փակվեց։ Պետրոսը լսեց, թե ինչպես սենյակ

մտան չերկու հոգի. մեկը, ըստ չերևույթին, զինվոր էր։ Լսվեց, ինչպես նա հրացանի կոթը հատակին խփեց։

— Նստեք, սիկին,—ասաց Գուբերը դերմաներեն, և զինվորը կրկնեց նրա խոսքերը ռուսերեն։

Պետրոսը չէր կարողանում հաղթել իր հետաքրքրութիւնը և չուռ չեկավ։ Նույն վայրկյանին նա մահճից թռավ, վոտքի կանգնեց։

Գուբերը վանդնած էր Թիկունքը լուսամուտին պարձրած։ Աթոռի վրա՝ մահճի մոտ՝ նստած էր Նատաչան։ Աթոռի չետև, հրացանի վոտքի մոտ բռնած, կանգնած էր քթատ լեգեոները։

Պետրոսին ճանաչելով՝ Նատաչան կանչեց։

— Հանգի՛ստ, սիկին,— ասաց Գուբերը դերմաներեն, և լեգեոները կրկնեց այդ խոսքերը ռուսերեն։

— Նստեք, ընկեր Կովաչ,—չարունակեց Գուբերը դերմաներեն և կողքի դրպանից հանեց դարչնագույն, կաշվե ծոցատետր։ —Հիմա կսկսենք,—ավելացրեց նա, դիտմամբ արած դանդաղ չարժումով ծոցատետրից հանելով մի թերթիկ դրոտած թուղթ։

— Դե՛հ...

Նա մոտեցրեց նամակը Նատաչայի հենց դեմքին։ Նատաչան աչքերը ձեռքերով ծածկեց։

— Լեգեոներ, պարան կուղիչկի...— ասես մոռացման մեջ զինթիմնթաց կինը։

— Այս նամակը դո՞ւք եք գրել։ կես ժամ առաջ։

Լեգեոները թարգմանեց հարց ու փորձը։

— Կուղիչկի...—չչնչաց նորից Նատաչան և դրական կերպով գլխով արավ։

— Բոլորովին ճիշտ է,—հատատեց Գուբերը։—Այդպես ուրեմն, դուք հաղորդեցիք յենթասպա Կուղիչկին, ձեր մտերմին կամ նշանածին—ասատան դիտե, թե նա ձեր ի՞նչն է—վոր Պետրոս Կովաչը մահափորձ է պատրաստում նահանգապետի համար։ Նահանգապետը, պետք է հասկանալ, դեներալ Պարլի՞ն է, չէ՞։

Ցերը Գուբերը կրկնեց հարցը, Նատաչան նորից դրական կերպով գլխով արավ։

— Ճշմարի՞տ է, վոր չերեկ չերեկո Պետրոս Կովաչը հայտնեց ազգանուններն իր բոլոր այն ընկերների, վորոնք Վոլոցկի վիադուկը պայթեցրին։ Ճշմարի՞տ է, վոր մահափորձի կազմակերպող Պետրոս Կովաչն իրան է անվանել։

Նատաշան դրական կերպով գլխով եր անում, իսկ հետո անսպասելի կերպով վեր թռչելով, վողբալով դեռին ընկավ և սկսեց յերկու ձեռքով փետել իր գլխի մազերը:

Գուբերն աշխատում եր բարձրացնել Նատաշային: Իսկ յերբ փոքրիկ կինը սկսեց պաշտպանվել յեղունդներով և ատամներով, նա մի բան կանչեց դեպի կորիդոր: Նրա հրամանով յերկու լեգեոներ բարձրացրին և տարան Նատաշային: Ձեռքի չարժումով՝ Գուբերը քիաո լեգեոներին ևենյակից դուրս ուղարկեց:

— Դեհ, ինչպե՞ս, ընկեր Կովաչ:

— Իսկ դուք լա՞վ վճարեցիք այդ թշվառ կնոջը.—հարցրեց Պետրոսը:

— Մենք առհասարակ լավ ենք վճարում,—հանդիսա պատասխանեց Գուբերը: Ուրեմն՝ ինչպե՞ս, ընկեր Կովաչ:

— Սաելու բան չունեմ:

— Սփոռս, ընկեր Կովաչ, շատ սփոռս: Կյանքը հիանալի յե, —ցնորաբար շարունակեց Գուբերը,—կյանքը հիանալի յե, իսկ դուք դեռ ջահել եք, ընկեր Կովաչ, շատ ջահել եք: Դուք, հուսով եմ, հասկացա՞ք ինձ: Ուրե՞մն:

Պետրոսը չպատասխանեց:

Գուբերը նայեց ժամացույցին:

Տասից անցել է տասը րոպե,—ասաց նա:—Տալիս եմ ձեզ տասներկու ժամ մտածելու համար, ընկեր Կովաչ: Ցերեկոյան՝ տասնից տասը րոպե անցած յես նորից կգամ: Մի բան մի՛ մոռանաք. մենք լավ ենք վճարում: Ցեմ բարեկամներիս, և թշնամիներիս: Մեր բարեկամները դանգատվելու հիմք չունեն, իսկ թշնամիները—հնարավորություն չունեն:

Պետրոսը մենակ մնաց:

Նա դեպ, վոր սիրտը խառնում է: Ցերը խառնոցը անցավ: Նրան տիրեց մի տանջալի քաղց: Նա անսահման հոգնածություն եր զգում:

Ցերեսը պատին դարձնելով՝ նա քնեց:

***

Վոլոց-Մունկաչի գնացքը Սվալյավա կայարանը հասավ ժամի տասից քիչ անց: Դեռ անիվները պտտվում էին, իսկ ժողովուրդը արդեն վագոններն եր խուժում: Կայարանի գլխավորը, համոզվելով, վոր տելեֆոնը չի գործում, իսկույն կակղցավ և հրամայեց

մխացնել գնացքին հինգ հատ դատարկ ապրանքատար վագոն: Բայց նույնիսկ ա՛յդ չոգնեց. բոլոր վագոնների ատելճանները, բուֆերները և նույնիսկ կատուրները լցված էին ավելավաճի և պոլենացի բանվորներով և կոմսի անտառների ծառ կտրողներով:

Սվալյավայի և Մունկաչի միջև գտնվում են յերեք ատաղձի սղոցարան:

Այս տարօրինակ գնացքը նրանցից ամեն մեկի մոտ կանգնեց մի ժամ, և թեպետ արդեն Սվալյավայում վագոններում ասեղ ձգելու տեղ չկար, առաջին յերկու կայարաններում գնացքի մեջ մանելու հնար դուան ևս յերկու հազար՝ կացիններով զինված անտառահատներ: Վերջին կայարանում բանվորներն արագ դատարկեցին տախտակներով բեռնված չորս վագոն, և իսկույն տեղ դնդրեվեց յերրորդ՝ ատաղձի սղոցարանի բանվորների համար:

Ցերեկվա ժամի յերկուսին մոտ Մունկաչ կայարանը հեղեղեց վեց հազար մարդ:

— Կարդո՞վ կանգնեցիք, ընկերնե՛ր: Կարդո՞վ կանգնեցիք: Տասը-տա՞սը մարդ մի կարգում:

— Մի՛ ցրվեք: Կարդո՞վ կանգնեցիք: Տասը-տա՞սը մարդ մի կարգում:

— Մի՛ ցրվեք: Ընկերներ, մի՛ ցրվեք:

— Կարգով կանգնեցի՞ք: Ֆայլեցեք...

Գյուղը, գործարանը և անտառը յեկան խաղաղ:

Մոլեգնած բազմությունը՝ արյան և վրեժի ծարավով լցված՝ ինչպես ձյան հյուս չարժվում եր Ցելենա Զրնի փողոցի ամբողջ լայնությամբ:

Բնակիչները, վոստիկանները և սպանները փախչում էին գլուխը փրկելու համար:

Փողոցը դատարկ է—փողոցը ազատ է:

Հույն-կաթոլիկական յեկեղեցուց ջղաձգաբար տարածվում եր ահազանգի ձայնը:

***

Մունկաչի կուսակցության կոմիտեյում Սեկերեչը և քարտուղար Մոնդասը խորհրդակցում են գրության մասին: Նրանք այնտեղ նստած են հենց առավոտից: Վաղը Մունկաչ և գալիս բժիշկ Գոլդը—պետք է գտնե մի տեղ, ուր նրան կարելի լիներ անարգել խոսել ամենահուսալի ընկերների հետ: Պետք է կազմել նրանց

ցուցակը: Սեկերեչը կարծում է, որ ավելի լավ է հավաքվել վոչ թե Մոսկվաչում, այլ Սվալյավայում: Այնտեղ կարող էր դալ նաև պինվորական մասնագիտը, որն ապրում է Պոլենայում: Ցավ, ինչո՞ւ ըստ ինքյան հասկանալի չէ, նույնիսկ ամենահուսալի ընկերները չպետք է պիտանան, թե ում հետ են նրանք խոսում:

Մոնդանը մի կարճահասակ, լայն թիկունքով ջահել է՝ չեկ մաղերով և կապույտ աչքերով: Ցոթը տարի նա ծառայել է իրեև նավատաի: Նա նո՛ր է սկսում պատմել Սեկերեչին, թե ինչպես կառավարության ապստամբությունից առաջ նավատաինները հավաքվում էլին գիշերները, յերբ հանկարծ նրա ուշադրությունն է գրավում մի աղմուկ: Վեր թռչելով՝ նա վազում է դեպի լուսամուտը և նրա կրծքից թռչում է կանչ: Սեկերեչը բազմության աղմուկն ու կանչերը լսելուն պես, առանց պիջակի և գլխարկի—ինչպես վոր ե՛ր—թռչում է փողոց:

— Ի՞նչ կա: Ի՞նչ պատահեց:

Մի քանդամից չորս լեզվով չորս հարյուր կոկորդից պատասխան է հասնում նրան: Բայց մեկն Պետրոսի անունն է նա առնում կանչերի այդ փոթորկից: Գովի պատրաստ բազմությունը տեսնելուն պես՝ արյունը նրա գլուխն է խփում: Նա այլևս վոչինչ չի հարցնում և բազմության գլուխն է անցնում:

— Դեպի քաղաքային տո՛ւնը:

— Դեպի քաղաքային տո՛ւնը, դեպի քաղաքային տո՛ւնը:

Զորանոցների լուսամուտներից ուսային պինվորները թաչկինակներ են ճոճում:

— Կեցցե՛ պրոլետարիատի դիկտատուրան:

Քաղաքային տան պատշգամբում բազմության են ելնում դավառակալը, վոստիկանապետը և քաղաքապահ զորքի գլխավորը— բազմաթիվ շքանշաններով մի զնդապետ:

Նրանք բազմությանը պատիվ են տալիս:

— Ցես լիովին ձեր սրամտությանը տակ եմ, պարոննե՛ր,— գլխավորում է դավառակալը բանվորների պատգամավորությանը:

Դավառակալը և վոստիկանապետն արտաքուստ հանդիստ են: Գնդապետի պետը իրան հպիվ է զսպում: Նրա դեմքը մեռելի դունատթափություն ունի: Դողում է կատաղությունից, կամ դունե՝ վախից:

— Այժմ ժամի յերկուսն է,— առանց վորևե նախաբանի ասում է Տիմկոն:— Ցերեկ ժամի հնդին Պետրոս Կովաչը, վորին հափշտակել են լեգեոներները, մեզ չվերադարձվի վողջ ու անվնաս, Մոսկվաչում վոչ մի կենդանի բուրժույ չի մնա:

Վոչ դավառակալը, վոչ վոստիկանապետը դաղափար չունեն Կովաչի հափշտակման մասին: Կապտորի պետն էլ վոչինչ չգիտե պատահած բանի մասին: Դողդողջ շրթունքներով հայտնում է նա, վոր պատրաստ է ապացի աղնիվ խոսք տալ, վոր հենց Պետրոս Կովաչ անունն առաջին անգամն է լսում:

Գավառակալը պատրաստ է անելու այն ամենը, ինչ վոր նրանից կախված է:

Կապտորի պետն իսկույն կկարգադրի պատրաստել զորանոցի խոհանոցում ճաշ ոտարազգաստանների համար:

Վոստիկանապետը խնդրում է Մոնդանին ազնել, վորպեսզի Մոսկվաչի գործարաններում կարգը չխանգարվի: Նա անհապաղ անձամբ կդնա լեգեոներների զորանոցները: Քաղաքային տան դարպասի մոտ նրան հաղորդում են, վոր Մոսկվաչի բոլոր գործարանները կանգ են առել: Լեգեոներների գլխավորը վոչ մի Պետրոս Կովկաչի մասին գաղափար անգամ չունի:

— Սպացի աղնիվ խոսք եմ տալիս ձեզ...

Գավառակալը հուսահատված է:

— Զլսա՛ծ բան...

Քաղաքային տան դիմացի հրապարակում վառում են մեծ խարույկներ: Շամփուրների վրա խորովում են չորս յեզ:

Գավառակալն ավտոմոբիլ է նստում:

— Դեպի Ուժգո՛րոդ:

Ցերբ մեքենան մտնում է Ուժգորոդ, գավառակալը սարսափած հարցնում է ինքն իրան, արդյոք չոֆերը սխալմամբ Մոսկվաչ չի վերադարձրել իրան. ճամբաբաժաններում վառված են ահագին խարույկներ: Նրանց շուրջը պառկած են բանվորներ՝ կացիններով, ճանկոցներով և կարիչներով:

Պետեանն և նրա շրջակայքները Ուժգորոդ են յեկել:

Ուժգորոդի բանվորները գործադուլ են արել:

— Պարոն գավառակալը գնեռալի՛ն է վնասում: Նորին գերապանցությունը մի ժամ առաջ ավտոմոբիլով Մոսկվաչ մեկնեց:

***

Խարույկները դեռ վառվում էին, բայց կեղևները չքացել էին: Մունկաչցիները խառնվել էին կեկվորների հետ: Հրապարակի վրա մի ազատ թիզ չէր մնացել: Բազմահազար ամբոխը սպառնալից խաղաղ էր:

Մինչև հինգ ժամը մնում էր մեկն ու կես ժամ:

Գեներալը լուսամուտի վարագույրից նայում էր հրապարակին: Նրա ձեռքը բռունցք էր դարձրել:

«Այժմ Պրագան, Բուդապեշտը և Բուխարեստը կարդում են իմ հեռագիրները, և հենց վոր այստեղ մի բան պատահի... Ռումինները՝ ճիշտ է՝ հեռու կեն, բայց հունգարական զորքերը հենց վաղն այստեղ կլինեն: Այս բանը դուցե՝ Պրագայի ճաշակով չի լինի, բայց ի՞նչ արած...»:

Նրա արհամարհանքը դեպի բազմությունը նույն իսկ մի քիչ պակասեց այն մաքից, վոր այդ ապստամբությունը նրան հնարավորություն կտա վերջապես՝ իր անունը հավերժացնել ֆրանսիական մեծ հեղափոխության հռչակավոր զորավարների ցուցակի մեջ: Աջ ձեռքը նա ակամա դրեց նշանադրեստի ծայրի կեռ կերկրորդ և կերրորդ կոճակների միջև:

— Կովաչն ասես ջուրն է ընկել, մենք նրա մասին վոչ մի տեղեկություն չունենք,—պատասխանեց նա Ուժդորոդից վերադարձած գավառակալի անհանգիստ հարցին:

Նա նայեց ժամացույցին. հնգից քառորդ պակաս:

— Ցես պետք է ճանապարհ ընկնեմ: Ամենից խելացի բանն և գնալ Բերեգսաս և հետագա դեպքերն այնտեղ սպասել:

Հրապարակում մի բան էր պատահել: Գեներալը չէր կարողանում հասկանալ, թե այնտեղ ի՛նչ է կատարվում: Նա միայն տեսնում էր, վոր պատկերը փոխվում է: Սկզբում հրապարակի մեջտեղը մի անկյունում ծագեց չարժումը՝ դանդա՛ղ, անվստա՛հ, բայց նա քիչ-քիչ աճում էր՝ տարածվելով դեպի հրապարակի մեջտեղը, խռնվող, կանչող, վազվզող մարդկանց նորանոր մասսաներ դրավելով— և հանկարծ ամբողջ հրապարակը չարժվեց, ցնցվեց և մոլեգին նետվեց դեպի պլխավոր փողոցը: Բարձրացրած ձեռնոցները ճոճվում էին, ինչպես կեղեգը՝ քամուց:

***

Պետրոսը հանկարծ զարթնեց. մեկը ցնցում էր նրա ուսը: Նրա առաջ կանգնած էր քթատ լեգեոնները:

— Ձաչ բերի,— ասաց լեգեոնները բարձր ձայնով և ավելացրեց չչուկով. մի՛ ուտեք: Հացը կարող եք ուտել:

— Թունավորվա՞ծ է:

— Վո՛չ, նրա մեջ զորեղ լուծողական կա: Պրոպազանդայի պաշտոնատան սովորական արարքն է այդ: Աստիկ թուլացնում է մարդուն:

Պետրոսն առավ հացը: Նա նո՛ր մխայն նկատեց, վոր գրեթե քսլորովին հանված է: Նրա զգեստը և վոտնամանները ընկած էին մահճի մոտ: Հացը մի կողմ դնելով՝ նա լեգեոնների ոգնությամբ հագնվեց, հետո նորից պառկեց մահճի վրա և սկսեց հաց ուտել:

Լեգեոնները զգուշությամբ փակեց իր յետևից դուռը:

— Գիտե՞ս ում ես հսկում.— հարցրեց նա չչուկով՝ դռան մոտ կանգնած ժամապահին:

— Մի բոլշևիկի:

— Այստեղի գլխավոր բոլշևիկներից մեկին: Ռուսները Լվովի մոտ են: Մեզ ամենից կսպանեն, յեթե, ասում՝ չանե, սրա հետ մի վատ բան պատահի:

— Ցես չեմ պատասխանում,—ասաց ժամապահը:—Իմ գործը հսկելն է:

— Դեհ, ո՛վ գիտե... Վախում եմ, վոր ռուսներն այդ բանին այլ կերպ չնայեին... Դու հո գիտե՛ս նրանց՝ բոլշևիկներին. ինքդ յեղել ես Սիբերում: Մի խոսքով, Միկուլիկ յեղբայր...

— Քանի վոր յես այստեղ կանգնած եմ...—ասաց ժամապահը և հրացանի կոթին ամուր զարկեց հատակին:

— Մենք պղնվությամբ կռվեցինք Սիբերում, բայց ի՞նչ ոգուտ: Սպաներն աստիճանները ձեռք ձգեցին, գավառակալները դարձան, ծխախոտի, քեռչքերի տեր յեղան, իսկ մե՞նք՝ հասարակ դինվորնե՞րս... Նորի՞ց թինդանոթի մխ լինենք բոլշևիկների դեմ:

— Նրանց մերը...— հայհոյեց ժամապահը:

Հացն ուտելուց հետո՝ Պետրոսը նորից հոգնություն զգաց: Ինեց և՝ առանց յերազների՝ խորունկ քուն յեղավ: Ցերևի՝ մինչև առավոտ կմնար քնած, յեթե կորիդորում մի հանկարծակի աղմուկ չելներ:

Զինվորի ծանր կոշիկների դոփյուն, զենքերի չաչյուն, կապիտ կանչից խռպոտած ձայներ:

Դուռն աղմուկով բացվեց: Մի պահում սենյակը լցվեց զինված լեգեոներներով:

Պետրոսը սարսափած վեր թռավ:

Շա՜տ եր նրան պատահել՝ մահի դեմքին նայել, բայց այժմ նա վայրկենապես հասկացավ· փրկություն չկա· չարչարելով պիտի մեռցնեն: Պաշտպանության մասին մտածել անգամ պետք չեր·— ի՞նչ կարող ե անել նա մենակ, անզեն՝ յերեք տասնյակ զինվածների դեմ:

Լեգեոներներն արագությամբ վերցնում են նրան և բարձրացնում ուսերի վրա:

Վայրենի, խանդավառ կանչեր: Բարձրաձայն ծիծաղ: Պետրոսը չի հասկանում, թե բանն ինչումն ե: Զինվորները քրքջում են և կոպիտ, ուժեղ ձեռքերով վաղաքչորեն, թեթև խփում են նրա ուսին: Նրանց լեզուն Պետրոսը չի հասկանում, բայց նրանց ձայնի հնչյունը··· Նրանք մտերմարար մի բան են ասում իրան, նրանք նույնիսկ խոսում են նրա հետ՝ կոտրված հունգարերենով·

— Ընկե՛ր: Բոլշևի՛կ···

Կորիդորով— սանդուխքից վար—դեպի փողոց:

Լեգեոներները պարում են Պետրոսի շուրջը՝ ինչպես խաչեղբայրները գյուղական հարսանքում:

Ցերկու—յերեք միջափողոց անցնելուց հետո, դուրս են գալիս գլխավոր փողոցը:

— Լե՛նինը···—կանչում են լեգեոներները—Լե՛նինը: Լե՛նինը:

Բաղմությունն իսկույն հասկանում ե, թե ինչ ե նշանակում լեգեոներների բերնից յելած այդ մեծ անունը: Ցեվ ահա հազարավոր խանդավառ բանվորներ խռնվում են Պետրոսին շրջապատող զինվորների շուրջը:

Բաղմության մեջ մեկը ճանաչում ե Պետրոսին:

— Կովա՛չը: Ընկեր Կովա՛չը:

Ամբոխի մռնչյունը թնդանոթների վորոտի ե նմանում:

Մարդկային հեղեղն անդուլ կերպով թափվեց գլխավոր փողոցով դեպի կուսակցական կոմիտեի շենքը:

Լեգեոներների ձեռքից դղրդյունով աղատվելով՝ Պետրոսը խառնվում ե ամբոխի մեջ: Բռունցքներով և արմունկներով նա իրան ճանապարհ ե բաց անում: Շուրջը— անչափելի ճնշում, խանդավառ կանչեր, գրգռված, փայլող դեմքեր: Ընդհանուր թափից վարակվելով՝ Պետրոսն ել սկսում ե կանչել իր թոքերի ամբողջ ուժով:

Կուսակցական կոմիտեի լուսամուտից խոսում ե Սվկերեչը: Նրա ձեռքերը լայն բացված են՝ ասես գրկախառնության համար, դեմքը գրգռումից կարմրել ե: Բաղմությունը մի խոսք չի կորցում նրա ճառից, բայց բոլորը լսված լսում են և արձագանքում են նրան խանդավառ կանչերով:

***

— Ձերդ գերազանցություն, ժամանակ ե ճանապարհ ընկնելու,— ասաց Բերեզասի գավառակալը գեներալ Պարիին:— Ժամի հնգից հինգ րոպե պակաս ե:

Ամբոխով լցված փողոցներն աչքի կերպով անցնելով և մի մեծ պատյա անելով՝ չոֆերը մեքենան հանեց Բերեզասի խճուղու վրա:

— Պրոգան, կարելի յե, շատ ել չի ուրախանա, յեթե կարգը Մունկաչում և Ուժգորոդում հաստատվի հունգարական զորքերի ողնությամբ,— ասաց գեներալը,— բայց չեիս մասերի վրա հույս դնել չի կարելի:

— Վոր խղճով ասենք, հունգարացի զինվորները, ձերդ գերազանցություն, չեխ զինվորներից ավելի սիրելի յեն ինձ,—պատասխանեց Բերեզասի գավառակալը:— Հունգարացիները կկարողանան կարգ հաստատել: Խորտիկ ապահերն այդ գործում բան հասկանում են:

— Մի չտապեք, գնդապետ, մի չտապեք: Հունգարական մասերը մենք իրավունք ունենք ազատագործել միայն այն դեպքում, յերբ համոզվենք, վոր չեխ-գործերն անընդունակ են խլրտումները հանգստացնել: Ցես չեխ հրամանատարության կատմ տասներկու ժամ ե···

—Այդքանը՝ միանգամայն՝ հերիք ե,— ժպտաց գավառակալը:— Չեխերին ավելի պետք չի՛ լինի, վոր ապացուցանեն իրանց գինվոր չլինելը:

Բերեզասում գեներալին սպասում եր այս գեկուցումը· լեգեոներներն ազատեցին Պետրոս Կովաչին: Ամբոխը հանդստացավ:

— Լեգեոներները եւ, ինչպես, հուսալի չեն,—թռավ գավառակալի բերնից:

Գեներալը կծեց շրթունքը:

***

— Ընկեր Գոնզալի առաջարկությունն անընդունելի չե: Եթե մենք հիմա առնենք իշխանությունը, հենց վաղն այստեղ կլինեն հունգարացիները, իսկ վաղը չե մյուս որը—ռումիններըե: Քանի հունգարացիները լեհերի հետ անմիջական կապ չունեն, մեր կողմից հիմարություն կլինի աջակցել այդ հարցի լուծման, վորը Անտանտայի համար դեռ անլուծելի չե: Եթե Բերեզասում, Մունկաչում եւ Հունգարիային սահմանակից շրջանում ամեն ինչ հանգիստ լինի, չեթե ապստամբությունը սկսվեց հյուսիսում, լեհաստանին ավելի մոտիկ, այն ժամանակ չենք թույլ չեն տա հունգարացիներին գալ, եւ ապստամբողները կկարողանան կազմակերպվել ուսաց կարմիր բանակին անմիջապես մոտիկ: Այժմ կոխվները տեղի ունեն Լվովի մոտ: Մի շաբաթ եւ չի անցնի, յերբ մենք, ամենայն հավանականությամբ, կլսենք թնդանոթների վորոտը: Մի շաբաթն այնքան եւ շատ ժամանակ չի եւ մենք դեռ այնքան շատ գործ ունենք անելու:

Գյուլայը հավանությամբ գլխով եր անում զինվորական մասնագետի ասածին: Գոնզան գլուխը կախել եր:

Բաղմությունը վոչինչ չլսեց նրա ճառից, այնուամենայնիվ արձագանքում եր նրա խոսքերին խանդավառ կանչերով:

***

Ցերեկոյան դեմ բանվորները պատրաստվեցին հետ ճանապարհ վելու: Գավառակալի կարգադրությամբ՝ կայարանի պետը կազմեց մի հատուկ գնացք՝ հիսուն հասարակ վագոններից: Գնացքը Սվալյավա հասավ կեսգիշերին: Առավոտյան դեմ նույն իսկ պոլենցիներն արդեն մահիճներումն եյին:

Պետրոսի ձերբակալման եւ Սվալյավայի անցքերի լուրը միայն հաջորդ որը դյուղ հասավ: Բոլոր կալվածքներում իսկույն գործադուլ արին ամբողջ բանվորները: Գործադուլին այնքան լուրջ եյին վերաբերում, վոր նույն իսկ զգաստացրին կեր տալ անասուններին: Մի քանի տեղերում աշխատանքը վերսկսեցին միայն յերրորդ, չորրորդ որը:

***

Վերադարձածների թվում Նատաշան չկար:

Կարպատների մոտ նրան այլ ևս չտեսան եւ նրա մասին վոչինչ չլսեցին: Տիմկոյի մոտ մնացած նրա զգեստը մի շաբաթ հետո առալ վոստիկանությունը եւ ուղարկեց Բերեզաս:

Ապստամբության հաջորդ որը՝ Մարիա Բոժոչը յեկավ Սվալյավա: Մտավ ուղղակի Տիմկոյի տունը:

Պետրոսը վախեցավ: Նա սիրում եր Մարիային, պնահատում եր, բայց ելի... Վոր այդ գիշերը՝ Մունկաչի միտինգից հետո այդպիսի հեռանքների կհանգեցնե, նա ամենևին չեր սպասում... Մարիան բոլորովին այլ ձևով եր հաղնվում, քան Սվալյավայի կինները, այլ կերպ եր խոսում, այլապես չարժվում: Բոլորը գիտեին, վոր նա Իվան Բոժոչի քույրն է: Ինչ կմտածեն մարդիկ, չեթե նա այս վճռական որերին այնքան թանկագին ժամանակը կորցնի կանանց գործերի համար... Նա անհանգստությամբ եր նայում մարդկանց աչքերին, ամեն րոպե կչտամբանք սպասելով:

Սվալյավացիները մի քանի որվա մեջ արդեն կարողացան շատ սիրել Մարիային: Նրանք դեռ չեյին տեսել մի կին, վորն այդ քան շատ բան գիտներ է՝ Պետրոսի պես, առավոտից մինչև գիշեր աչխատեր ժողովրդի գործի համար:

Ուզայի հետ Մարիան մտերմացավ հենց առաջին որը:

***

Հեղափոխարիրդի դաշտային շտաբի գործողությունների տեղեկատու 1920 թ. ոգոստոսի 5-ից

Վարշավայի ըայոնում մեր զորքերն ոգոստոսի 13-ին տիրեցին Ռադիմին քաղաքին, վերցնելով յերքհարյուր գերի և զանազան ավար, և կռիվ են մղում Ռադիմին—Ոկունեվ—Դեմբա կայարան ճակատի վրա՝ Վարշավայից 22 վերստ դեպի արևելք:

ՏԻՍՍԱՆ ԱՅՐՎՈՒՄ Է

Պետրոսը գիշերվա վերջին գնացքով վերադարձավ Մունկաչից: Նա շատ վատ տրամադրության մեջ եր. կենտրոնի աշխատանքը նրան չեր գոհացնում: Սեկերեչը և Գոնզան ապրում են

չուն ու կատվի պես: Գոլերը դեռ կատարելապես ծանոթ չէր տեղային պայմանների հետ, այն ինչ արդեն բոլորին թելադրում և իր կամքը: Դեհ, հետևանքներն էլ ստացվում են համապատասխան կերպով: Պետրոսը Տիմկոյին չատ է սիրում, հաղիվ թե մի ուրիշը Ռուսինահոյում նրան հարգում և այնպես, ինչպես նա,— վոչ մի, ուղղակի վոչ մի վատ բան ասել նրա մասին չի կարելի,— և այնուամենայնիվ նա՝ Պետրոսը՝ այդ աչխատանքը նրան չեր հանձնի: Վոչ մի դեպքում: Բայց, յեթե այստեղ՝ Սվալյավայում՝ մի բան պատահի, նրա բացակայությունը չատ դժալի կլինի: Ցավ ահա՝ յերեք որ է անցել նրա ճամբա ընկնելուց, և նրանից դեռ վոչ մի լուր չկա: Միակ բանը, ինչ վոր մնում է, դա՝ նրա մասին ամեն տեսակ յենթադրություն անելն է...

«Ցեթե ինձ ուղարկեյին... Ցեթե յես ճամբա դնայի...»:

— Կտեսնես,— ասաց Մարիան, վոր նրան սպասելով, դեռ չեր մտել անկողին,— կտեսնես, վոր բոլոր այդ խորամանկ վիլլեսոփայությունները կվերջանան այն բանով, վոր մենք կուչանանք: Մենք միշտ պատրաստվում ենք, միշտ կազմակերպվում, բայց վոչ մի բանի, ուղղակի վոչ մի բանի չենք ձեռնարկում. Մի գեղեցիկ առավոտ մեզ կղարթեցնեն ռուս կարմիր բանակայինները. «Բարի լույս, ընկերներ, ինչպե՞ս բարեհաճեցիք քնել»:

— Մեր կազմակերպությունը դեռ չատ թույլ է,— պատասխանեց Պետրոսը:

— Ցեթե հարյուր ղինված մարդ արշավեն Վերեցկիյից՝ կարմիր դրոշակների տակ, Լվով կհասանեն հիսուն հազար մարդ: Ինչպիսի՞ կազմակերպություն և պետք այստեղ: Կկազմակերպվենք այն ժամանակ, յերբ իշխանության գլո՞ւխ անցնենք:

***

Պետրոսին զարթեցրեց մի տարօրինակ աղմուկ: Մի քանի վայրկյան նա ականջ դրեց՝ անշարժ պառկած:

— Թնդանոթնե՛ր,— չչնջաց Մարիան՝ վեր ցատկելով:

Դուռը բացվեց: Դռան մեջ կանգնած եր Ոլգան, բորիկ, մի չապիկով, լապտերը ձեռքին:

— Թնդանոթներից են արձակում,— ասաց նա կամացուկ:

— Ռուս յեղբայրնե՛րն են: Ռուսները մոտենո՛ւմ են.— օրթոս բացականչեց Մարիան:

— Կամաց,— ասաց Պետրոսը:— Դեռ վոչինչ հայտնի չի:

Մի քանի րոպե հետո Պետրոսն ու Մարիան արդեն վազում եյին դեպի գործարան: Տների լուսամուտները մեկը մյուսի յետևից լուսավորվում եյին: Թնդանոթների վորոտը զարթեցրել եր բոլորին:

Ռուսներն են, յերևի, բայց դուցե...

— Թնդանոթնե՞ր:

— Ո՞ւր են արձակում:

— Ռուսնե՞րն են:

Փչում եր հյուսիսային սաստիկ քամի: Նա մուր եր բերում իր հետ կարպատների հետևից—այրվող գյուղերի մուրը:

— Ի՞նչ պատահեց:

Գավառային դատավորը խորհրդակցում եր Պետրոսի հետ: Նույն իսկ չեր խորհրդակցում, այլ խնդրում եր հրահանգներ: Պետրոսն ուզում եր խոսել Մունկաչի հետ տելեֆոնով, բայց տելեֆոնը չեր գործում: Մարիան հոժարեց ուղևորվել Մունկաչ: Դատավորը նրա արամադրության տակ դրեց իր սեփական կառքը: Պետրոսը հրամայեց տալ հրդեհի ազդանշան: Ժողովուրդն ամեն կողմից սկսեց վազել դեպի գործարան: Պոլենան զարթեցրին տելեֆոնով:

— Ցեկեք Սվալյա՛վա:

Լույսը բացվում եր:

Ժամի չորսին մոտ Պետրոսի մոտ հասավ մի ձիավոր: Ձին ամբողջովին փրփուրով եր ծածկված: Ձիավորը Վերեցկիյի ավագի վորդին եր: Նա բերել եր տեղեկություն Լակատայից—գատատհմանից, Լավոչնեյին:

— Ի՞նչ նոր բան, Ֆեդոր:

— Հեղափոխությո՛ւն է: Լավոչնեյում մերոնք ղինաթափ արին ժանդարմերիային: Լակատան պատվիրեց հայտնել ձեղ, վոր ամեն ինչ դնում է ինչպես պետք է: Ողնություն ուղարկեցինք, վաղը դնում ենք Լվովի վրա:

Պետրոսը մի քանի րոպե մտմտում եր:

Մարդիկ նրան չրջապատեցին սեղմ պատի պես: Ամենքը՝ շնչերը կտրած մնացին սառած անշարժության մեջ:

— Իջի՛ր, Ֆեդոր,— ասաց Պետրոսը դանդաղորեն:— Կատա՛նա թարմ ձի: Ֆանի՞ հրացան կա Վերեցկիյում:

— Ցերբ մենք յեկանք այնտեղ, մենք հաշվեցինք վաթսուն

յոթը հրացան և տասնույոթը ատրճանակ, բայց փամփուշտը բոլոր հրացաններին էլ բավի:

— Հիսուն մարդ իսկույն դուրս կգան դեպի Լավոչնե: Դո՛ւ կտանես նրանց: Կերթաս Լակատայի մոտ: Հենց այսօր հայտնեցեք ինձ դրության մասին: Ճանապարհ ընկեք անհապաղ—կամ, դուցե, ուղում ես հանգստանա՞լ:

— Ճանապարհ կընկնենք հենց հիմա:

— Բերեք այստեղ նախկին վերատեսչի՝ հեծնելու մատակ ձին,— հրամայեց Պետրոսը:

Քսան հոգի վազեցին ձին բերելու:

Տասը րոպե հետո Ֆեդորն արդեն նստած եր թամբի վրա:

Տրեխներ հագած վոտքերով զարկեց «նախկին» վերատեսչի մատակ ձիու փորի տակ: Պետրոսին դինվորական պատիվ ավեց:

Դործարանի բակում հավաքվել էլին հազար բանվորից ավելի ուկրայինացիներ, հունգարներ, հրյաներ: Արդեն մոտենում և առաջին գնացքը Պոլենայից. նա բերում է մոտ հազար մարդ: Հեռվից լսվում է նրանց յերգը: Պետրոսի դլուխը պտտվում է: Մի քանի վայրկյանի մեջ նրա աչքերի առաջից անցավ նրա ամբողջ կյանքը. արհեստանոցները— հունիսյան մեծ գործադուլը—ռուսաց ռահմանը,— Բուդապեշտի փողոցները— Ուլպեշտը— ռումինական. ռազմաճակատը...

Նա չուտով սիրեց իրան:

— Լսեցեք, ընկերներ,— սկսեց նա խուլ ձայնով:— Հեղափոխությունն սկսվեց, ավելի ճիշտ է— նա պլոմվեց— հասավ մեզ: Այժմ պետք է դործել—հանդիստ, խելոք և համարձակ: Մեր առաջին խնդիրն է— դինվել: Ցերկաթուղու կայարանում կանգնած են յերկու գնացք՝ զենքերով: Առգելյան, ընտրիր մի տասը մարդ: Այդ կազմերը պետք է անհապաղ տեղափոխել դործարանի բակը: Կվերցնենք առաջին պատահած չոդեչարժը: Դու, Րոպենատ, մի տասնյակ այլ ջահելների հետ կբռնես կայարանը, առանց իմ թույլտվության վոչ վոքի չթողնես խոսել տելեֆոնով: Գնա՛: Վերատեսչի բոլոր ձիերին այստեղ բերելը քո գործն է, Ոլեկսա: Պեմեռե և Մունկաչ կուղարկենք մի-մի ձիավոր: Դու, Կոնդերեչ, բոլոր գործարանների դարպասների մոտ կդնես պահպանություն, չորս-չորս դինված մարդ: Դու պատասխանում ես այն բանի համար, վոր վոչ մի ոտար չմտնի գործարանի չրջանը: Վարչության անդամներին ոտարնե՛ր համարել: Հասկացա՞ր: Մանդել, դու կճանապարհվես Մունկաչ: Կգտնես Մոնդանին, նա քեզ կտանի մի ընկերի մոտ, վորը տեղեկություններ է ոպասում:

Մի քանի րոպե Պետրոսը լուռ եր. նա խորհում եր և մըտքում հաչվում, արդյոք ամեն բան կարդի՞ն է: Կարծես թե վոչինչ չի մոռացել դինվորական մասնագետի պատվիրածներից:

Կես ժամից յերկու գնացք՝ ռազմամթերքներով՝ կանգնած էյին գործարանի բակում, բայց ավարի ոգուտը մեծ չեր: Մի գնացքը բեռնված եր թնդանոթներով՝ ծանր հրետանու համար, մյուսում գտնվում էյին թամբեր, կոշիկներ, ձիասարք և դինվորական այլ պիտույքներ: Հրացաններ չկային:

Անաջողությունից կատաղած բանվորները տրորում էյին վոտքերի տակ՝ դեղին, կակուղ կաչվե կոշիկները, ասես իրանց վոխը նրանցից առնելու համար: Կանայք խոխաներով տանում էյին վոտնամանները դեպի իրանց տները:

— Ով տանը զենք ունի, իսկույն այստեղ թող բերե,— կարդադրեց Պետրոսը:— Մնացածները կացիններ կառնեն: Զինված-ներին դորամասակների բաժանել՝ քառասնական մարդ ամեն մի դորամասում: Զորամասակների հրամանատարներ կինշանակեմ դորամասակում: Զորամասակների հրամանատարներ կինշանակեմ յե՛ս: Ոլեկսա, Կլեյն, Միխոկ, դասավորեցեք դորամասակները:

Մղտան ներքնահարկերի տակից նորից լուս աշխարհ յեկան հին կարճափող հրացանները, վորոնք Բելա Կունի ժամանակներից ոպասում էյին այնտեղ հիմիկվա որին:

— Ինչքա՜ն չի հասնում,— ասաց ծեր Բոչկայը: Քամին փչում է հյուսիսից, իսկ թնդանոթների ձայները լսում են հարավից՝ Մունկաչի՛ կողմից...

Մոտավորապես տասը ժամին Լավոչնեյից ձիավոր բանբեր յեկավ— նուիրակես վերեցկեցի ջահել: Նա խոսեց Պետրոսի հետ՝ առանձին:

— Բոժոչը, և մի քանի ուկրաինցի պարոններ նույնպես Լավոչնեյում են: Ինչ էլ վոր լինի՝ ուղում են գործի մեջ խառնվել:

— Իսկույն բռնե՛լ նրանց:

— Բայց չե՞ վոր նրանք ոգնում են մեզ...Խոսում են մեր ոգտին, խոսում են ուկրաիներեն...

— Ձերբակալե՛լ նրանց և, յեթե բերանները չփակեն, գըն-

դահահարե՛լ: Հասկացա՞ր: Հայտնիր Լակատային իմ հրամանը. լեթե դեթ մի ձայն հանեն, իսկույն զնդահահարել նրանց:

Ջահելն ուսերը վեր քաշեց:

— Կարող եմ ասել:

— Սվալյավայից կուղարկեմ ձեզ քան զինված մարդ:

Պետրոսն ընտրեց քան զինված մարդ— տասնուվեց վայտահատ և չորս՝ զործարանի բանվոր—և մինչդեռ տեղավորում եր նրանց յերկու սայլերի վրա, ժամանեց Սեկերեչը: Նա դժգույն եր, բայց զարմանալի հանդիստ: Ըստ զինվորականի՝ պատվ ավեց, վոչ վոքի չբարևեց ձեռք տալով: Բանվորներին դիմեց հրաժեշտի կարճ խոսքով.

Ռուս յեղբայրներին ճանապարհ ցույց տվեք:

Սայլերը շարժվեցին:

***

: Սեկերեչը, Պետրոսը, Բոչկայը և մի քանի բանվորներ Սվալյավայից և Պոլենայից խորհրդակցում եյին վերատեսչի առանձնասենյակում:

— Մունկաչից հյուսիս գանվող հողից չեխերը դուրս են բերել բոլոր զորքերը և ամբողջ ժանդարմներին: Այս գիշեր Մունկաչի մոտ տեղի ունեցին հրետանու ռազմախորձեր: Չեխերն՝ ըստ յերևույթին վախում են, վոր հունգարացիները լեհերին ոգնություն կուղարկեն Բերեզաստ— Մունկաչի վրայով: Ավելի շահավետ դրություն մենք ցանկալ ել չենք կարող: Մենք կազմակերպվում ենք Լեհաստանին սահմանակից շրջանում, իսկ հետո-յերբ ռուսները կհասնեն Վենգեկե—կսկսենք հարձակվել Հունգարիայի վրա:

— Պետք է ոգնություն ուղարկել Լավոչնե: Լո՛ւրջ ոգնություն: Խուժել Գալիցիա...

— Լեհերին այդ՝ միայն ոգուտ կլիներ: Հունգարացիներն այն ժամանակ տուիթ կունենային Ռուսինսկո խուժելու: Իսկ այսպես, ոգտագործելով հունգարա-չեխական և չեխա-լեհական հակասությունները, մենք անարգել կղինվենք:

— Իսկ լեթե լավոչնեցիներին ջարդե՞ն:

— Լավոչնեն միայն եպիզոդ է: Մենք կոչնչացնենք լեհերի թիկունքը և դրանով Գալիցիայում կանգնած կարմիր զորքերի հաղթանակը կմոտեցնենք: Իսկ յերբ ռուսները կհասնեն մեզ,— այդ բանին յերկար սպասել պետք չե,— այն ժամանակ մեր զորամասն իր առաջ կունենա պատմական մի մեծ խնդիր: Մենք կսկսենք մեր հարձակումը Հունգարիայի և Տրանսիլվանիայի վրա: Այդպես և կենտրոնական Կոմիտեյի կարգադրությունը և նույնը մեզ խորհուրդ է տալիս մեր զինվորական մասնագետը,— վազորոք կանխեց Սեկերեչն ամեն առարկություն:— Դու, Պետրոս, կմնաս այստեղ՝ Սվալյավայում: Վոլոցը և Վերեցկին նույնպես կլինեն քո հսկողության տակ: Գոլդը կլինի Ուժգորոդում, նրա հետ մնում է Մարիան: Ցես աշխատում եմ Բերեզաստում, Գոնդան Մունկաչում: Մոնդանն անցավ Պեմետե: Միայն թե Գոստեմանը զանազան հիմարություններ չանե՛: Զինվորական հարցերում քեզ կդղնեն Նիչայը և մի ուրիշ ընկեր:

Պետրոսի գլխին կարծես կացինի դուխով զարկին:

— Բայց սա անմտություն է: Մենք ձեռքից բաց ենք թողնում լավագույն առիթը:

— Դու տեսնում ես միայն Սվալյավան: Բայց Սվալյավան դեռ ամբողջ Միջին Ցեվրոպան չե՛:

— Վոչ, յես չեմ կարող այստեղ մնալ, յերբ...

— Մի՞թե այս վճռական րոպեին հենց դու, Պետրոս, կվտախտես կարգն ու դիսցիպլինան: Քեզ համար ավելի կարևոր է այն, ինչ վոր դու ինքդ ես անելու, քան թե գործի շահերը: Ազնիվ խոսք...

— Մնանք այստեղ, ընկեր Կովաչ, մնանք,— ասաց Ծերունի Բոչկայը:

Լսելով, վոր Բոժոչը գտնվում է Լավոչնեյում՝ Սեկերեչը պայրացավ:

—Ձերբակալե՛ք Բերան: Սպանել՝ ինչպես կատաղած շանը:

— Ցես արդեն, ուղարկեցի Լակատային հրաման:

— Նորից ուղարկիր: Հայտնիր, վոր այդ բանն անհրաժեշտ է:

Ցերբ Նիչայն իր ընկերի հետ հասավ Սվալյավա, Սեկերեչը մնաս բարև ասաց:

— Մի մոռանար, Պետրոս,— ասում եր նա նրան սայլից,— մի մոռանար, վոր յերբ մենք գնանք դեպի հարավ, մենք ամենքից ել առաջ կլինենք: Մենք կմտնենք Բուդապեշտ ամենքից առաջ:

Ե՛լ բարձր բռնիր գլուխդ, Պետրո՛ս: Ցանկություն՛ն: Մի

տիրիկը— հավատա ինձ, ռուսները մեր ոգնության կարիք չունեն: Ռուսնե՛րը...

Դեհ, մնաս բարե՛վ:

Ցերը Մոնդանը պեմեաե ժամանեց, վարդան սթափեցրել եր արդեն ամբողջ շրջանը:

Զինված պահպանություն, պայմանաբառեր, անցաթերթիկներ:

Ցերեսուն մարդուց կազմված վաշտը կանգնած եր՝ արշավելու պատրաստ: Նշանակված տեղն ե Լավոչնեն: Ամբողջ սպառազինությունը կազմում եյին յերկային ճողիները:

— Առա՞նց ղենքի,— զարմացավ Մոնդանը:

Վարդան նրա ականջին չչնջաց մի բան: Մոնդանն ուրախ ծիծաղեց: Վարդան գոհ դեմքով ափը ճակատին զարկեց.

— Դեռ կա՛ գլուխ ուսերիս վրա:

Մեկնող վաշտին նա արտասանեց բարի յերթի ջերմ խոսք.

— Ընկերնե՛ր: Բոլոր յերկրների պրոլետարները ձեզ են նայում: Ասիայի ճնշված ժողովուրդները, հունդարական բանտերում տառապող կոմունիստները— բոլորն սպասում են, վոր դուք ազատությո՛ւն բերեք նրանց:

Վաշտը դասավորվեց՝ չորս-չորս մարդ մի չարքում:

Առջևից, մեծ, կարմիր դրոշով, քայլում եր մի աչքանի Ցուրկոն:

Համաչխարհային հեղափոխության համար— հառա՛ջ:

Ասպաղարդ դիշեր: Ցերկնքում— վոչ մի ամպիկ:

Սմալյակա—վոլոց ճանապարհի վրա, տրեխներ հագած վոտքերից փոշին բարձրացավ սյունի պես:

— Շո՛ւտ, տղերք:

Վորքան Մոնդանը համոզեց վարդային,— վոչ վաղաքշանքով, վոչ սպառնալիքով կարելի յեղավ պահել նրան պեմեաեում: Հանդիսավոր կերպով մնաս բարև անելով տղերանց հետ, նա գնաց նրանց հետևից: Հինգ րոպեի մեջ նա հանձնեց Մոնդանին բոլոր դործերը և— նրա իղը-թողը կորավ:

— Համաչխարհային հեղափոխության համար—հառա՛ջ:

***

— Կամաց, մի խոսեք: Թող վո՛չ մի ձայն չլսվի:

Միայն անտառն եր խոսում: Հյուսիսային քամու լեզվով:

Զորամասն այնպես անսպասելի կերպով և անաղմուկ չերչատեց վորսորդական դղյակը, վոր նրա բնակիչները նույն իսկ հասկանալ դեռ չեյին կարողացել, թե ինչ վտանգ և իրանց սպասնում, յերբ արդեն ղերված եյին:

Անտալֆին զարթեց դարպասին տրված ուժգին հարվածի ձայնից:

— Ստասնան տանի, յես հո չեյի ուզում քնել:

Նա քնել եր հագված, միայն փոխելով վոտնամաններն՝ դիչերվա հողաթափների:

— Ո՞վ ե այդտեղ.— կանչեց նա՝ լուսամուտից դուրս կախվելով:

Նա տեսավ ինչ վոր մութ ձևեր: Այդ կարող եյին լինել կամ չխեր, կամ լեհեր,— բայց կարող եյին լինել և բոլշևիկներ:

— Ո՞վ ե այդտեղ.— կրկնեց նա դերմաներեն:

— Համաչխարհային հեղափոխության անունով հրամայում եմ. բացե՛ք դարպասը.— պատասխանեց Վարդան հունդարերեն:

Մի քանի րոպեյից վարդայի զորամասն արդեն մարմարիոնե սանդուղքով վեր վազեց:

Անտալֆին ճանաչեց Վարդային:

— Ի՞նչ—հեղափոխությո՞ւն.— կամացուկ հարցրեց նա:

— Շո՛ւտ, ցույց տուր՝ ո՞ւր ե ղենքը.—գոռաց Վարդան:

Անտալֆին լուռ ցույց եր տալիս ճանապարհը:

Ահագին, կաղնաչեն դահլիճը, ուր նա մացրել եր զորամասը, լցված եր փայտե չհարարուղված զազաղներով: Դահլիճ խուժած տղերքը՝ ահատած՝ հետ-հետ գնացին: Անտալֆին բացեց դատ

— Այ թե ինչպես: Շնորհակալ ենք, մենք ինքներս էլ բավական ենք: Պատրաստ գործում ոգնության պետք չէ:

Վաշտը մի քանի րոպեյի մեջ վինվեց: Մի քանիսը կախեցին վրանները յերկ-յերկու, յերեք-յերեք հրացան:

— Փամչուչաներն ո՞ւր են:

Անտալֆին գլխով արավ և ուղղվեց դեպի կորիդորի մյուս ծայրի դուռը:

Լսվեցին կանչեր:

— Իսկ այս դռներն ինչո՞ւ բաց չես անում:

— Բոլորը, ինչ վոր այնտեղ կա— անպետք բան է:

— Բա՛ց:

— Ձե՞ վոր յես ձեզ ասում եմ՝ այնտեղ միայն վատ, անպետք զենք է:

— Բա՛ց, ասում եմ քեզ:

Անտալֆին մի վայրկյան տատանվեց, հետո ուսերը վեր քաշեց և հնազանդվեց: Ընտրելով բանալի այն կապում, վոր ձեռքին եր, նա բացեց դուռը:

Բիլչ լուսավորված սենյակում կիսավաճ եյին ծղոտե ներքնակներ: Վարդան և նրա ընկերները դուրս բերին նրանց միջից գնդացիրների բաժանված մասեր:

— Դու այս բանն անպե՞տք ես կոչում: Ա՛յս: Դեհ, սպասիր, սրիկա՛: Իսկո՛ւյն սարքիր այս գնդացիրը:

— Նրան սարքել չի կարելի: Մի մասը մյուսին չի հարմարվում:

— Իսկույն կսարքես, ապա թե վոչ...

Անտալֆին թիկն ավեց պատին և խաչեց ձեռքերը: Լապտերի լույսը ընկնում եր նրա դժգույն դեմքի վրա:

— Դե՛հ... մեկ, յերկու...

— Բարի յեղեք, ընկեր Գոդդեսման, բացատրեցեք ընկերներին, վոր այդ գնդացիրներն անպետք են: Բոլորովին անոգուտ է փորձելը...

— Վո՛չ մի խոսք,— գոռում եր Ցուրկոն նրա վրա:

— Ցես ձեզ բացատրեցի, ընկերներ...

— Կանե՞ս, թե վոչ:

— Ցես հո ձեզ ասում եմ...

— Հա—ա՛, դու խուսափո՞ւմ ես:

Վարդան լուռ կանգնած եր նրա կողքին: Նա դիտեր, չեր կարող չգիտենալ, թե դրան ինչ պետք է հետևեր, բայց չշարժվեց,—վոչ Ցուրկոյին ոգնելու համար, վոչ Անտալֆիին պաշտպանելու համար: Նա չկարողացավ կշռադատել, վոր հիմա բանը միայն Անտալֆիի կյանքը չի, և յեթե առաջին իսկ վայրկյանին նա ցույց տա անվճռականություն, այնուհետև ուշ կլինի:

— Հա—ա՛, դու խուսափո՞ւմ ես:

Ցուրկոն յերկու ձեռքով հրացանի փողից բռնելով՝ բարձրացրեց նրան Անտալֆիի գլխի վերև:

— Բուրժուական չո՛ւն:

Կոթը թափով զարկեց Անտալֆիի գլխին: Անտալֆին ճչաց, արյունը հոսեց նրա դեմքով, բայց նա չընկավ: Ցերբվելով՝ մի քայլ արավ դեպի առաջ, ձեռքերով նեցուկ փնտրելով: Նույն ակնթարթում հարվածները կարկուտի պես թափվեցին նրա վրա:

Արյուն: Ուղեղի ցալքություններ: Արյուն:

Ջարդված գանգով դիակը Ցուրկոն հրամայեց լուսամուտից դուրս ձգել:

— Անղա՞մ:

Ցեվ նա թքեց դիակի յետևից:

Վարդան լուռ ու անչարժ դիտում եր այդ տեսարանը:

— Ո՞վ կարող է սարքել գնդացիրը.— վերջապես արտասանեց նա անվստահ, խռպոտ ձայնով:

Մինչ Ցուրկոն յերեք ընկերներով գնդացիրի հետ եր, մնացածները՝ կողպեքը կոտրելով՝ մտան գինու նկուղը: Տակառները դուրս բերին բակը: Բակի մեջտեղում խարույկ վառեցին:

— Ուտելիք չեն պահել խոզի՛ը: Բայց նրանց գինին հայտնի գինի յե...

— Շա՛տ համեղ է: Նրանք այդ գինին յերևի՝ և սրճի, և աստղակայի տեղ են լակել:

— Ա՛յո—ո...

Ցուրկոն համբերությամբ զբաղված եր գնդացիրով: Ցերեք չահելներից յերկուսն ամբողջ պատերազմը գնդացիրների մոտ եյին անցրել, բայց չզգնեցին վոչ համբերությունը, վոչ փորձը. գնդացիրն անկարելի յեր սարքել:

— Հո իրավացի՛ յեր չունը.— նկատեց նրանցից մեկը:

— Իրավացի յեր, աստված վողորմի հոգուն:

— Աստվա՛ծ վողորմի այդ սրիկայի հոգուն:

Լուսանում եր:

Բակի խաղյուկը համարյա մարել էր: Ջահելները՝ խմված դինուց ծանրացած՝ նիրհում էին՝ առավոտյան ցրտից ցնցվելով:

— Վե՛ր կացեք, տղե՛րք,—կանչեց Վարդան:—Հիմա ճամբա չենք ընկնում:

Վոչ վոք չշարժվեց տեղից:

Վարդան հրամայեց,— այս անդամ արդեն զարկացած.

— Վե՛ր կացեք: Շարքեր-դասավորվեցե՛ք:

— Անոթի՞ փորով:

— Սվալյավայում կուտենք:

— Իսկ մինչև Սվալյավա:

— Ուր այսքան դինի կա— և ինչպիսի՛ դինի— այնտեղ ուտելիք էլ կգտնվի: Պետք է միայն փնտռել՝ ինչպես հարկն է:

Ո՞ւր են նրանք թաղցրել ուտելիքը...

— Զկերա՞ծ ղնալ: Զքնա՞ծ:

— Զուր տեղը ժամանակ կորցնել պետք չե՛, տղերք: Ժամանակ և չարժվելու:

— Զկերա՞ծ:

— Զքնա՞ծ:

Վարդայի արյունը գլխին խփեց:

— Ցես հրամայո՛ւմ եմ.— կանչեց նա:— Ով չլսե, կհանձնվի հեղափոխակա՛ն դատական ատյանին:

— Ի՞նչ ե արածդ... Մեր վրա՞:

— Լավ ե լուռ կաց, ապա թե վոչ յես ե՛լ կխոսեմ:

Վարդան մի խլացուցիչ ապտակ հասցրեց այն վայտահատի դեմքին, վորը՝ բարձրացրած ձեռքով՝ ուզում էր իրան լռեցնել:

— Սատ՛ր հակահեղափոխական.—մռնչաց Վարդան:

Նույն վայրկյանին նա յերերվեց: Մեկը յետևից զարկեց գլխին հրացանի կոթով: Սբյունաթափվել՝ ընկավ նա արվեն սպառած Անտալֆիևի վոտքերի մոտ:

Կատաղի տուր ու դմփոց բարձրացավ:

Ցուրկոն—թեև նույնպես ճոճվում էր լման դինուց—բարձրացրեց Վարդային ձեռքերի վրա և՝ նրան ինչպես կաթնակեր յեղեխայի բռնած՝ գնաց, առանց հետ նայելու, Սվալյավայի ուղղությամբ:

Տատուչորս գինված ջահել հետևեցին նրան:

Սակավաթիվ գորամասը լուռ քարշ էր տալիս իրան խճուղով:

***

Տիմկոն չատ հպարտ էր այն վստահությամբ, վորը ցույց էր տվել նրան կուսակցությունը: Ցեթե մի բան մռայլում էր նրա ուրախությունը, այդ այն միտքն էր, վոր իր համար տուժ էր Պետրոսը:

Բայց մյուս կողմից ընկեր Գոլդը բոլորովին իրավացի չե. Պետրոսը չի խոսում վոչ ռուսերեն, վոչ ուկրայիներեն, առանց վորի այդպիսի գործում յուր գնալ անկարելի չե:

Միայն թե գիտնաս, թե այստեղ ինչ աչխատանք պիտի լինի... Գործը՝ գուցե՝ այնքան էլ կարևոր չե: Թևև յեթե Գոլդը և Սեկերեչը, յերկու այնպիսի փորձված հեղափոխականներ, համարում են, վոր նա կարևոր է և դժվար... Ի հարկե՝ մի առանձին իմաստություն պետք չե հասկանալու համար, վոր չեխերը քաղաքական այս լարված պայմաններում առանց լուրջ պատճառի չեյին կանգնեցնի յերկաթուղային չարժումը: Նրանց համար յերևի՝ կարևոր է, վոր վոչ վոք չկարողանա անցնել Ռուսինսկոյի արևելյան մասը: Իսկ յեթե այդ բանը նրանց համար կարևոր է, ինչանակե՝ մեզ համար կարևոր է անցնել այնտեղ: Ուրեմն՝ գուրս է գալիս... Դեհ, ասենք, հետո պարզ կլինի... Գնացքը լի յեր ուղեվորներով: Մեծամասնությունը գնում են Ռումինիա: Տիմկոն հետաքրքրությամբ գննում էր հարևաններին: Ռումիններն ը կարմրագույն այտերով եյին, հրյաները՝ ականջների առաջ՝ յերկայն կախված մազեր ունեյին, ռուսինները քաթանե կոպիտ պգեստով եյին, մի քանի քաղաքացի այնպիսի տեսք ունեյին, վոր ամենևին չեր կարելի հասկանալ, թե ծնունդով վո՞րտեղից են: Հարուստն ու աղքատը՝ բոլորը միատեսակ գնում եյին յերրորդ կարգի վագոնով:

— Այ ձեղ դեմոկրատիա,—ղրուցում էր մի պարոն:—Այս գծով, ինչպես հաճում եք տեսնել, միայն յերրորդ կարգի վագոններ են գնում—գալիս...

Տիմկոն աչխատում էր իմանալ, թե ո՛վ քաղաքական գործերով և ճամբա կորում, ո՛վ մաքսանենգ է, ո՛վ՝ սպեկուլյանտ: Բայց վորքան նա ջանաց, ամենևին չաջողվեց իմանալ, թե ո՛վ վո՛ր

կարդին և վերաբերում: Մինչդեռ, խորհում էր նա, այդ վոչ թե մյայն հետաքրքրական կլիներ, այլ և ոգտակար կարող էր լինել նրա համար. ճանապարհորդների թվում անշուշտ կային ընկերներ, վորոնք գնում էին Տրանսիլվանիա, դուցե և Բեսսարաբիա:

Կիրայխալում, Զեխիայի և Ռումինիայի միջև գտնվող սահմանակից կայարանում, գնացքը շրջապատեցին չեխ և ռումին պետվորները:

— Անցագրե՛ր:

Խուզարկեցին բոլորին: Կասկածելիներին ջոկեցին: Մի հրյայի արյունլվա արին:

Տիմկոյի մոտ կասկածելի բան չգտան: Բոլոր թղթերը կարգին էին—կիրայզան և յեկել Վոյտեկ Կլեյնի կոշիկեցի ձիու առևտուր անողի հանձնարարությամբ, ընդունելու մի խումբ ձիեր, վորոնք գալու էին Ռումինիայից վաղը կամ մյուս որը:

Պատահական մեքենավարի բնակարանում Տիմկոն փոխեց շորերը: Պատահական այդ որն ազատ էր, իսկ յերեկոյան նա պետք է տաներ պետվորական գնացքը դեպի Մարմարոշի արևելյան մասը: Տիմկոն կգնա նրա հետ իբրև հնոցապան:

Գնացքը մեկնեց ժամի իններին և տասնումեկին տեղ հասավ: Ճանապարհի մեծ մասն անցնում էր ռումինական հողով: Տիմկոն հրաժեշտ տվեց Պատահականին:

«Ամենադժվարն առաջս է,—մտածում էր Տիմկոն:—Տասը կիլոմետրից ավելի պետք է վտանգով գնալ: Իսկ հիմար լուսինը ասես պիտամբ ատստիկ լուսավորում է, գրո՛ղը նրան տանի»:

Յերեկի պես լուսա է: Խճուղով, վորի կողքին անկված են խնճորենիները, գնում-գալիս են դիշերաշրջիկ պահակախմբեր: Տիմկոն գրեթե ամբողջ ճանապարհը անցավ խորունկ խանդակով, ճանապարհի յեզրով: Շատ անդամ պետք յեղավ անցնել մինչև ծնկները հասնող ջրի միջով:

— Ե՛հ, մի ծխել՛...

Սկսում էր լուսանալ, յերբ նա մոտենում էր Սլատինային: Հեռվից թվում էր, թե լուսատուկներ են թռչում ծուռ, վորոշ մասը փողոցներով: Տիմկոն հասկացավ. հենց ժամանակին էր յեկել—հանքահորների բանվորները վառված լապտերներով գնում են դեպի Լյուդովիկի հանքահորը: Աշխատանքն սկսում է ժամի յերկուսուկեսին:

Դուդաշը դուրս էր գալիս դարպասից: Տիմկոյին տեսնելով՝

նա սաստիկ վախեցավ: Լապտերը սարսափելի կերպով պարում էր նրա ձեռքին:

— Վոչ վո՞ք չտեսավ: Մեզ մոտ այժմ ժանդարմների թիվը հանքահորայիններից ավելի յե:

Տիմկոն արագ փոխեց շորերը և գնաց Դուդաշի հետ, վորը տանում էր վառ լապտերը, թեև դուրսն արդեն լուսանում էր:

Հանքահորի վայրկյանը ամրոցի նման է: Անթիվ ժանդարմներ: Լեգեոներները դրել են յերկու դնդացիր—մեկն ուղղված է դյուղի, մյուսը՝ խճուղու վրա: Զինվորների գլխի վերև—մի մեծ, աղեղաձև լապտեր: Նրա լույսը դանդաղ աղոտանում է ծագող արևի շողերում:

Տախտակներից չինված ամբարձիչով, վոր շարժվում է պարանների միջոցով, հանքահոր են իջնում վեց հանքահորայիններ: Ամբարձիչի հատակի ճեղքերից յերևում է հանքահորը: Վոտքերիդ տակ՝ կարծես աստղային յերկինք է: Աստղերը դանդաղ շարժվում են: Ամբարձիչը համաչափ կերպով ցնցվում է:

— Բարի հաջողո՛ւմ: Ճամբա՛ ընկիր:

Մի պահ վողջը սուղվում է խավարի մեջ: Պաղ, հոտած մթություն: Ցավ հանկարծ—չլացնող լույս: Խոնավ, աղոտ պատերը աղեղնաձև լապտերներից պայծառ են փայլում:

— Բարի հաջողո՛ւմ:

Մինչև գոտիները մերկացած բանվորները կարճակոթ բահերով փչրում են աղի չերտերը: Աչխատում են սաստիկ կռացած կամ ծնկների վրա: Դլուխները, վզերը, թիկունքները քրտինքից փայլում են՝ ինչպես մթում կորչող պատերի աղը:

— Այստեղ վոչ մի ժանդարմ չի դա,—ասաց Դուդաշը իր ցած բառով:

Նա խմացրեց ուրիշ ընկերներին, վոր հավաքվեն «յեկեղեցու» յետև:

Մինչև հավաքվելները՝ Դուդաշը սկսեց պատմել «յեկեղեցու» մասին: Ինչքան էլ Տիմկոն հավատացնում էր, վոր «յեկեղեցու» հետ նա քիչ գործ ունի, Դուդաշը չէր հանդարտվում: Ամեն բան իր հերթն ունի—ու դեռ բոլոր ընկերները չեն յեկել: Իսկ ինչ վերաբերում է յեկեղեցուն, մի այլ այսպիսին հազիվ թե կգտնեք աչխարհի մի կեսում: Սկզբում կորեցինք խաչը—դեռ պապերիս ժամանակ էր այդ—հետո զմբեթը, պատերը, վերջապես հատակը—վոր չափով վոր հանքահորայինների կիսամերկ բանակը ծանր

կարդին և վերաբերում: Մինչդեռ, խորհում եր նա, այդ վոչ թե միայն հետաքրքրական կլիներ, այլ և ոգտակար կարող եր լինել նրա համար. ճանապարհորդների թվում անշուշտ կային ընկերներ, վորոնք գնում էին Տրանսիլվանիա, գուցե և Բեսսարաբիա:

Կիրայխալում, Զեխիայի և Ռումինիայի միջև գտնվող սահմանակից կայարանում, գնացքը չորջապատեցին չեխ և ռումին պինվորները:

— Անցագրե՛ր:

Ուղարկեցին բոլորին: Կասկածելիներին ջոկեցին: Մի հրյայի արյունլվա արին:

Տիմկոյի մոտ կասկածելի բան չգտան: Բոլոր թղթերը կարգին էին—կիրայզախ և յեկել Վոյտեկ Կլեյնի կոչիցեցի ձիու առևտուր անողի հանձնարարությամբ, ընդունելու մի խումբ ձիեր, վորոնք գալու էին Ռումինիայից վաղը կամ մյուս որը:

Պատահակ մեքենավարի բնակարանում Տիմկոն վոխեց չորերը: Պատահկն այդ որն ազատ եր, իսկ յերեկոյան նա պետք և տաներ պինվորական գնացքը դեպի Մարմարոշի արևելյան մասը: Տիմկոն կգնա նրա հետ իբրև հնոցապան:

Գնացքը մեկնեց ժամի լիննին և տասնումեկին տեղ հասավ: Ճանապարհի մեծ մասն անցնում եր ռումինական հողով: Տիմկոն հրաժեշտ տվեց Պատահկին:

«Ամենագժվարն առաջն է,—մտածում եր Տիմկոն:—Տասը կիլոմետրից ավելի պետք է վոտքով գնալ: Իսկ հիմար լուսինը ասես պիտմամբ սաստիկ լուսավորում է, գրո՛ղը նրան տանի»:

Ցերեկի պես լույս է: Ուճուղով, վորի կողքին անկված են խնձորենիներ, գնում-գալիս են պիշերաշրջիկ պահակախմբեր: Տիմկոն դրեթե ամբողջ ճանապարհը անցավ խորունկ խանդակով, ճանապարհի յեղրով: Շատ անդամ պետք յեղավ անցնել մինչև ծնկները հասնող ջրի միջով:

— Ե՛հ, մի ծխել՛...

Սկսում եր լուսանալ, յերբ նա մոտենում եր Սլատինային: Հեռվից թվում եր, թե լուսատուկներ են թռչում ծուռ, վոլորմոլոր վոդոցներով: Տիմկոն հասկացավ. հենց ժամանակին եր յեկել—հանքահորերի բանվորները վաղված լապտերներով գնում են դեպի Լյուդովիկի հանքահորը: Աշխատանքն սկսում է ժամի յերկուսուկեսին:

Դուղաշը գուրս եր գալիս գարպասից: Տիմկոյին տեսնելով՝ նա սաստիկ վախեցավ: Լապտերը սալսափելի կերպով պարում եր նրա ձեռքին:

— Վոչ վո՞ք չտեսավ: Մեզ մոտ այժմ ժանդարմների թիվը հանքահորայիններից ավելի յե:

Տիմկոն արագ վոխեց չորերը և գնաց Դուղաշի հետ, վորը տանում եր վառ լապտերը, թեև գուրսն արդեն լուսանում եր:

Հանքահորի վայրկյանը ամրոցի նման է: Անթիվ ժանդարմներ: Լեզեոնները դրել են յերկու գնդացիր—մեկն ուղղված է դյուղի, մյուսը՝ խճուղու վրա: Զինվորների գլխի վերև—մի մեծ, աղեղաձև լապտեր: Նրա լույսը դանդաղ ազատանում և ծաղող արևի շողերում:

Տախտակներից չլինված ամբարձիչով, վոր չարժվում է պարանների միջոցով, հանքահոր են իջնում վեց հանքահորայիններ: Ամբարձիչի հատակի ճեղքերից յերևում է հանքահորը: Վոտքերիդ տակ՝ կարծես աստղային յերկինք է: Աստղերը դանդաղ չարժվում են: Ամբարձիչը համաչափ կերպով ցնցվում է:

— Բարի հաջողո՛ւմ: Ձամբա՛ ընկիր:

Մի պահ վողջը սուղվում և խավարի մեջ: Պաղ, հոտած մթություն: Ցավ հանկարծ—չլացնող լույս: Վոնավ, աղտոտ պատերը աղեղնաձև լապտերներից պայծառ են վայլում:

— Բարի հաջողո՛ւմ:

Մինչև գոտիները մերկացած բանվորները կարճակոթ բահերով փչրում են աղի չերտերը: Աչխատում են սաստիկ կոացած կամ ձնկների վրա: Գլուխները, վզերը, թիկունքները քրտինքից փայլում են՝ ինչպես մթում կորչող պատերի աղը:

— Այստեղ վոչ մի ժանդարմ չի գա,—ասաց Դուղաշը իր ցած բառով:

Նա իմացրեց ուժը ընկերներին, վոր հավաքվեն «յեկեղեցու» յետև:

Մինչև հավաքվելները՝ Դուղաշը սկսեց պատմել «յեկեղեցու» մասին: Ինչքան էլ Տիմկոն հավատացնում եր, վոր «յեկեղեցուհետ նա քիչ գործ ունի, Դուղաշը չեր հանդարտվում: Ամեն բան իր հերթն ունի—ու դեռ բոլոր ընկերները չեն յեկել: Իսկ ինչ վերաբերում է յեկեղեցուն, մի այլ այսպիսին հազիվ թե կգտնեն աչխարհի մի կետում: Սկզբում կտրեցինք խաչը—դեռ պապերիս ժամանակ եր այդ—հետո զմբեթը, պատերը, վերջապես հատակը—վոր չափով վոր հանքահորայինների կիսամերկ բանակը ծանր

աչխատանքով, քրտնաղեմ՝ հետզհետե ավելի խոր եր թաղվում դետնի մեջ:

— Բարի հաջողո՛ւմ:

Ցերը բոլորը հավաքվեցին, իսկույն կպան գործի:

Առաջինը խոսեց Դուդաչը, բայց վորպեսզի ժամանակը զուր չկորցնեն՝ մնացած ուժը հանքահորաչիններն ել սկսեցին մրցելով պատմել Տիմկոյին:

— Ցերեք որ առաջ հաղարի չափ լեհ գինվորներ անցան սահմանը: Ջեն ուղում կռվել բոլշևիկների դեմ:

— Լեհեր չեն. ուկրաինններ:

— Գերմանացիներ ել կան նրանց մեջ:

— Նրանք՝ կարելի յե՝ հաղարից ավելի կլինեն: Զորաբանակը, ուր նրանց քշել, խմբել եյին, քաղաքի չափ է: Զեխերը չրջապատել են նրանց վչոտ լարով, բայց վորովհետև նրանք վոչ մի հորդորանքի չեն յենթարկվում, նրանց գրկել են սնունդից: Մատածում են. գուցե քաղցից նորից կռվել կկամենան:

— Նրանք ընկերնե՞ր են:

— Սատանա՛ն նրանց կհասկանա: Լեհերին հայհոյում են: Բայց իրանց սպաներին չեն մեղադրել:

— Նրանց սպաները գավառակալի մոտ են ապրում: Նրանք տասն են թվով:

— Մնացածները Գալիցիայումն են մնացել:

— Զինվորները սաստիկ տառապում են քաղցից: Կես հացի համար տալիս են կոշիկներ կամ վարտիք:

— Ցեվ մի քանիսը մնացել են միանդամայն տկլոր:

— Լեհերին հայհոյում են անխնա:

— Իսկ սպաները հայհոյում են Լենինին:

— Սաստի՛կ են հայհոյում:

Ե՛վ լեհերի մասին չխոսեցին—անցան սեփական գործերին:

***

Լեհ գինվորների ճամբարը չրջապատված եր փչալարերի ցանկապատով: Զորս կողմից մեծ խարույկներ եյին վառված: Խարույկների մոտ չեխ գինվոր-լեգեոներները համաչխարհային հարցերի մասին եյին դատում:

— Սիբիրում սկսվեց նույն բանից: Ցերեք դատես, վերջ ի վերջո ինչի՞ համար նրանք պետք է կռվեն:

— Ինչպե՞ս թե ինչի համար,—առարկեց մի անվստահ ձայն:

—Հայրենիքի համար:

Վո՞ր հայրենիքի: Ուկրաինցիները ամբողջ յերեք հատ ունեն, յերեք վո՛չ ավելի: Վորի՞ համար պետք է սատկեն: Ճշմարիտ, այժմ ել այդ բանի համար իրանց գլուխն են պատռում:

— Իսկ մե՞նք ինչու կռվեցինք: Մենք պատճառ ունեյի՞նք:

— Իսկ բոլշևիկները՞: Ինչի՞ համար են նրանք կռվում:

— Հողի համար...

— ՀՈՂԻ՞:

Հանդիսավոր լռություն տիրեց:

— Մեզ հող խոստացան: Ցեվ դեռ ինչպե՞ս խոստացան...

— Այո՛, խոստացան...

— Ասում են, իբրև թե Լենինը...

ԼԵՆԻՆ:—Լռություն:—ԼԵՆԻՆ...

Ճամբարում կիսամերկ գինվորները պառկած են մերկ գետնի վրա: Լուսնի փայլը հեղեղում է այդ տարօրինակ ճամբարը: Կեղտոտ ցնցոտիներ, չսափրված, հոգնած դեմքեր, կեղտոտ, բորբիկ վոտքեր: Զինվորները պառկած են իրար մոտ, համարյա իրար վրա: Ամեն մեկը հարևանի մոտ տաքություն է փնտռում:

Աստղախայլ յերկինքը պաղ ծածկոց է:

Ջեն քնում, բայց խոսելու ել ցանկություն չկա: Այստեղ և այնտեղ մեկը կիսաճայն հայհոյում է: Ցեվ ի՛նչ միտք ունի հայհոյանքը: Բաղցած փորիդ հայհոյանքն ել համ չունի:

Կես գիշերը հեռու չէ, յերբ Տիմկոյին աջողվում է՝ վերջապես, յերկարատար ցանկապատի մյուս կողմն անցնել: Նա գինվածի արած գինվորների միջին է:

«Ե՛հ, հիմա... Սատանա՛ն տանե, ինչո՞ւ յես այն ժամանակ մինչև վերջը չնստեցի Մոսկվայի կուսդպրոցում...»

***

Հաջորդ որը՝ յերեկոյան, ժամի տասին մոտ, գրեթե յերեք-հարյուր գինվոր ճամբարից փախան: Մինչև վոր հավաքեցին նրանց հետապնդելու մարդիկ, փախստականներն արդեն հեռու՝ լեռներումն եյին: Լեգեոներներն ել չատ չեյին հետաքրքրվում բռնելու գործով: Ինչի՞ յե պետք նրանց բռնել: Վորպեսզի այստեղ, աչքերի առաջ, սատկե՞ն: Հայրենիքի՞ համար: Վո՞ր հայրենիքի: Թող հասնի յեռևներից նա, ով ցանկություն ունի:

Ֆրենչ դպեսակի վրա ֆրանսիական յերեք չքանչան կրող ջահել սպայիկին, վորն անպատճառ ուղում եր կազմակերպել կամավորնելի մի խումբ՝ փախստականներին բռնելու համար, մի խլացուցիչ ապտակ հասցրին:

Փախստականները գնում եյին սարերի մեջով, լեռնային շավիղներով, բորիկ, սարն ի վեր, սարն ի վայր—յերեք որվա քաղցածությունից հետո:

— Դեհ, սպասիր, բուրժույ...

Մի քանիսը ուժասպառվում եյին, ընկնում: Ընկերները տանում եյին նրանց մինչև մերձավոր չենը և թողնում այնտեղ վայտատհատի չնորհին:

Մնացածները չարունակում եյին ճանապարհը:

— Դեհ, սպասիր, բուրժույ...

Ճանապարհին կողոպտեցին մի ջաղաց: Բուռերով կերան հացահատիկը, հում ալյուրը:

Լեռնային շավիղներով, վիրավորված՝ բորիկ վոտքերով, չոր, ծակող տերևների վրայից, լեռն ի վեր, լեռն ի վայր, ցորենի հատիկ ուտելով—դեհ, սպասիր, բուրժույ:

— Տոհունություն, ընկերնե՛ր:

Սվայյավայի կողքից անցնելով՝ Տիմկոն բերեց դինվորներին Անատոֆիի վորսորդական դղյակը:

Գիշերը դուրս յեկան—գիշերը հասան:

Տիմկոն վախենում եր, վոր դժվար կլինի Անատոֆիի ամրոցին տիրել, և շատ զարմացավ, տեսնելով, վոր ամեն բան բոլորովին բաց է:

Բակում ընկած եյին յերեք դիակ: Մի պարոն՝ վորսորդի դգեստով, ջարդված գլխով, և յերկու գյուղացի ջահել: Նրանցից մեկը պառկած եր վորի վրա՝ գլուխը դեմի մեջ խրած, կարծես այնտեղ փրկություն եր փնտրում հրացանի կոթի հարվածներից:

Դղյակի ներսն ամեն ինչ քրքրված եր:

Ուտելեղեն մոչ մի տեղ չդտան, հրացանները—նույնպես: Բայց գնդացիրներ և ձեռքի ռումբեր կային առատ:

Դողալով գիշերային ցրտից, հոգնածությունից վայր ընկնելով, դինվորները կախեցին իրանց վրա ձեռքի ռումբեր, ինչքան վոր տանել կարող եյին: Նրանց չրթունքներից թռչում եյին սոսկալի սպառնալիքներ:

Արյուն: Մահ: Կործանում...

Ալդեն լուսանում եր, յերբ կատաղությունից հալածված վաշտը չարժվեց դեպի լեհական սահմանը: Արյունով լցված աչքեր, ձեռքեր՝ ռումբերը չարժող: Շոտապող, անհավասար քայլ: Հոգնածությունից դինվորների վոտքերը ծալվում եյին, գլուխները պատվում, բայց նրանք գնում եյին, կարծես նրանց քշում եյին:

— Վա՛յ չարագործներին...

***

Սպասելը միշտ ծանր է: Դատի սպասելով՝ բանտում տանջվելը կրկնակի ծանր է: Բանտում դատավճռի ի կատար ածելուն սպասելը, յերբ մարդուն իսկապես բան էլ չկա սպասելու,—բոլորովին անտանելի յե:

«Բայց ամենից վատը,—վճռեց Պետրոսը մտքում,—այսպիսի սպասումն է: Մերոնք կռվում են մի մոտիկ տեղում, իսկ մենք պետք է այստեղ նստենք և պատրաստվենք...Զզվելի՛ բան»:

Հաջորդ որը, յերեկոյան դեմ, Մարիան ավտոմոբիլով Սվայյավա Թռավ-յեկավ: Նա կռվել եր Գոլդի հետ:

— Անտանելի՛ մարդ է: Կամ գիժ է, կամ մատնիչ: Դու մի լսիր. նա լուրջ կերպով յենթադրում է, վոր...Ուժգորդում, գիտես, լուր են տարածել, իբրև թե ռուսներին, Վարշավայի մոտ... Ցես նույնիսկ ասել չեմ ուզում: Անհեթե՛թ բան... Ցեվ Գոլդը—Գոլդը այդ բանը հնարավոր է համարում:

— Իսկ դու ումի՞ց ես լսել այդ:

— Ուժգորդում մյուս դրա մասին են խոսում: Միամի՛տ դործելաձև: Այդպիսի կարծով կարելի յե բռնել մյուս Գոլդի պես կատարյալ հիմարին:

Պետրոսը յերկու գիշեր աչք չեր փակել: Հոգնածությունից ամրողջ մարմինը նվում եր, աչքերը բորբոքվել եյին, գլուխը պատվում եր: Նա նույնիսկ չեր կարող պետքին պես գնահատել Մարիայի բերած լուրը, բայց ելի նա ընկավ նրա դիտակցության մեջ: Մեծ դժվարությամբ նա համոզեց Մարիային Ուժգորդ վերադառնալ և իսկույն ձիավոր ուղարկեց Մունկաչ՝ ճիշտ տեղեկություններ համար: Նա ինքը, առանց հանվելու, պառկեց մահճակալի վրա: «Զեմ քնի», վճռեց նա—և իսկույն խռմփաց:

Քանի նա արթուն եր, նրա մտքերը Գալիցիայումն եյին: Վարշավա, Լվով, Ստարըյ, Լավոչնե...

Ցերեկի մեջ նա Բուդապեշտումն էր:

Խորհրդային Հունգարիայի մայրաքաղաքը: Բուդապեշտ: Անդրաշխի փողոցը: Հազար ինըհարյուր տասնիններորդ թվական: Մայիս: Արևափայլ առավոտ:

Տների վրա՝ կարմիր դրոշներ: Պատերի վրա կոչեր:

— Կեցցե՛ խորհրդային Հունգարիան՝ խորհրդային Ռուսաստանի դաշնակիցը:

«Բոլորը մե՛րն է»:

«Հառա՛ջ, կարմիր բանակայիններ»:

«Պրոլետա՛ր, պաշտպանի՛ր քո իշխանությունը»:

Անհնարագրելի պայծառ է լուսավորում արևը,— պատերը, տների ճեղունները ասես բոցակայած են: Վոչ մի քամի: Այնուամենայնիվ կարմիր դրոշները ծածանվում են ինչպես հողմահար կրակի բոցեր:

«Բոլորը մե՛րն է»:

Ինչպես տարօրինակ է—Լիտոդոն հյուպատոսարակի վրա, ուր դեղը տրամվայը կորում է Անդրաշխի փողոցը,—Լիտոդոն հրապարակի վրա բելոների տեղ Տիսսան է:

Ավաղոտ ափ: Ջրի վրա ուռիները ճկում են ճյուղերը: Պետրոսը՝ բոլորովին մերկացած՝ պառկած է տաք ավազի վրա: Լավ կլիներ նեավել՝ դանդաղությամբ դեպի հարավ հոսող Տիսսայի գով, բարեհամբույր ջուրը մանել:

Բայց մյուս ափին ռումին հսկողներն են:

Ռումիննե՞ր: Ինչ պետք է նրանց այստեղ: Ռումիննե՞ր...

Մի՞թաղելի՛ է: Թե՞ ռումինները չգիտեն, վոր ամեն ինչ մերն է:

Նրանք մարդի՞կ են, թե վոչ: Ինչպե՞ս նրանք չգիտեն...

Ռումինական դերքերի մյուս կողմը հսկայական հրդեհացոլք էր: Այնտեղ գյո՞ւղ է այրվում, քաղա՞ք, թե ամբողջ յերկիր՞: Կրակը ամպերին է հասնում—այժմ ամբողջ Տիսսան կարմիր է: Վոչ թե ջուր, այլ արյուն, և վոչ թե արյուն—կրակ է հոսում Տիսսայում:

Կրակ:

Տիսսան այրվո՞ւմ է:

Պետրոսը վեր թռավ: Բանբեր: Վոչ Գալիցիայից և վոչ էլ Մոնկաչից: Պոլենայից հայտնում են, վոր Գոտտեսմանը սաստիկ տաքություն ունի: Պետք է բժիշկ: Բժիշկ Բեկեչին վոչ մի տեղ չեն գտնում: Գրողը՛ տաներ ամբողջ աշխարհը:

«Սպասեմ մինչև կեսօր,— վճռեց Պետրոսը,— իսկ հետո թող կենտրոնական կոմիտեն իր ուզածն անե ինձ հետ. յես կուզևորվիմ Լավոչնե՛»:

***

Նրան պետք չեղավ մինչև կեսօր սպասել:

Տասնումեկ ժամը քիչ անցած՝ Մոնկաչից յեկավ մի ջահել բանվոր: Նա բերեց նամակ Սեկերեչից:

«Լեհ և հունգարացի քաղաքացիները, այլ և բոլոր նրանք, վորոնք հիմք ունեն վոստիկանությունից վախենալու, պետք է անհապաղ թաղնվեն: Դու մնում ես տեղդ: Շատ, շատ դժուր յե՛ղիր: Հույս ունեմ՝ դեռ կտեսնվենք: Ցանկանում եմ ամեն բարիք:

U.»

Պետրոսը յերեք անգամ կարդաց այս նամակը, բայց նա ավելի հասկանալի չդարձավ դրանից:

— Ի՞նչ է նշանակում այս: Ինչպե՞ս հասկանալ այս բանը:

Ջահելը դեղեվում եր այս վոտքից այն վոտքի վրա և լուռ եր:

— Ջե՞ս կարողանում խոսել, ի՞նչ է:

— Սեկերեչն ասաց, վոր դու արդեն ամեն բան գիտես, ընկեր Կովաչ:

— Ի՞նչ ամեն բան:

— Ցե՛ս...յես չեմ հավատում: Ջեմ համարձակվում, չեմ վստահանում արտասանել...

— Ջարդեցին ռուսների՞ն,—խռպոտ ձայնով հարցրեց Պետրոսը:

Ջահելը վայր նայեց: Յերբ նա նորից վեր նայեց, նրանք արցունքներով եյին լցված: Պետրոսը չկարողացավ լմանալ նրանից վոչ մի խոսք:

Կես ժամ հետո հասավ մի նոր բանբեր: Այս անգամ լուրը յեկավ հյուսիսից. զորձերը վատ են... Բանբերը մի ջահել գեղջկուհի յեր: Նա ձեռքին ուներ մի գամբյուղ յելակ. յերեք ճամբին հարցնեն—նա գնում է քաղաք պատուղ ծախելու:

— Վա՛տ է: Դրանից էլ վատ չի լինի...

Նա վոչ մի նամակ չեր բերել, բայց դրա տեղ առանց հոգնելու չաղակրատում եր:

— Մի՛թե չես հեյի՛ ասում: Բոլորը, բոլորը գուշակում եյի... Նորից բոլորը յեղավ այնպես, ինչպես մի տարի առաջ: Մարդու սիրան և պատռվում, յերբ տեսնում ե այդ թշվառներին... Ջարչարված, բոլորն արյունոտ, և ընդամենը մի հարյուրի չափ են մնացել նրանք: Մնացածները բոլորն ընկել են Գալիցիայում: Վորքա՛ն այրիներ, ճչմարի՛տ աստված, վորքա՛ն վորբեր... Մի՛թե ձեր Լենինը նրանց մասին կհոգա:

Անցավ շատ ժամանակ, նախ քան Պետրոսը կարողացավ մի բան հասկանալ խոսքերի այդ հեղեղից: Մոտ հարյուր մարդ—այստեղացի և գալիցիացի—փախել են Լավոչնեյի և Վերեցկեյի վրայով և այժմ բանակ են դրել անտառում՝ Վոլոցի մոտ: Ուզում են բանակցել Պետրոսի հետ: Ցերկու անվերջ-յերկար ժամից Պետրոսը հասավ Վոլոց: Փախստականների զորամասը հանգստանում եր Թոյայի վրա:

Մարդիկ պառկած են դիակների պես: Ձկան վոչ դրոշներ, վոչ զենքեր: Շատերի գլուխները, վոտքերը, ձեռքերը կապված են կեղտոտ կտորներով: Կեղտոտ լաթերից դանդաղ կաթում և արյունը:

Լռություն: Թափված տերևներ—այստեղ՝ դեղին, այնտեղ՝ արծաթե կամ ժանգոտ-կարմիր, և նրանց մեջից՝ վառ-կանաչ տերևներ:

Լռություն: Պետրոսի ճայն տալը լսելով՝ վերջապես՝ վեր են կենում յերկու մարդ: Նրանցից մեկին Պետրոսը ճանաչում է. Վերեցկեյի ավագի վորդին է:

Պետրոսը՝ գլուխը կախած՝ լսում է նրա պատմությունը:

Թվում է՝ հենց հիմա՝ չդիմացած՝ վայր կընկնի:

— Իսկ Տիմկո՞ն.—կամացուկ հարցնում է նա:

— Նա էլ...

— Իսկ Լակատո՞ն:

— Դեռ յերեկ մեզ հետ եր քայլում: Ձեռքը զնդակով ծակեցին: Էլ չեմ հիշում, թե ո՛ւր մեղանից յետ մնաց:

Քիչ-քիչ վեր են կենում այլևս մի քանի ջահել: Իրար հետ մրցելով, պատմում են Պետրոսին, թե բոլորն ինչպես և տեղի ունեցել:

Պետրոսի աչքերում ամեն ինչ պտտվում է... Անտառ: Լեհ զինվորներ: Դոշ, տանջված դեմքեր: Պատառոտված, արյունոտ դգեստներ, ուկրաինցի, հրյա, հունգարացի մուժիկներ...

Նա կծեց շրթունքը: Ձգալով բերնի մեջ արյուն՝ նա զսպեց իրան:

— Այստեղ կմնաք մինչև հետագա կարգադրությունները: Մի քանի ժամից Սվալյավայից կուղարկեմ հաց, միս և վիրակապ նյութեր: Մենք բժիշկ չունենք—ձեզ կուղարկեմ դեղագործին: Գիշերը հսկողներ դրեք: Առավոտյան կլինեմ ձեզ մոտ:

Պետրոսի հրամանով դեկավարությունն իր վրա յե առնում վերեցկեցի Ֆեդորը:

Պետրոսն իսկույն ճամբա յե ընկնում: Վոլոցում վարձում է սայլ:

— Շո՛ւտ, դեպի Սվալյա՛վա: Ֆչիր ամբո՛ղջ արագությամբ: Ջիլերդ մի՛ խնայիր:

Սվալյավայից քիչ հեռու լեգեոներները կանգնեցնում են սայլը: Պետրոսին՝ չղթայված՝ տանում են, Սվալյավան մի կողմ թողնելով, դեպի Մունկաչ, իսկ այնտեղից, մի ժամ հետո, ավտոմոբիլով տանում են Բերեզասս:

***

ՀԵՂՋԻՆԵՈՐՀԴԻ ԴԱՇՏԱՑԻՆ ՇՏԱԲԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ, 1920 Թ. ՈԳՈՍՏՈՍԻ 22-Ի

Բրեստլիտովսկի բայոնում մեր զորքերը համառ կռիվներից հետո թողին Բրեստ-Լիտովսկը: Վլոդավայի մոտ մեր զորքերը, պահելով հակահարձակումների, պահում են հակառակորդին այդ քաղաքից 15 վերստ հեռու տարածության վրա՝ դեպի արևելք:

ՇԻՆՈՒՆ ՅԵՎ ԻՐԱԿԱՆԸ

Լեհաստանի արտաքին գործերի նախարարը հեռագիր ուղարկեց Պարիզ:

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարը հեռագրեց Պրագա և Վարշավա:

Ցորս որից հետո Ուժգորոդ յեկավ մի խառն հանձնաժողով՝ կազմված—Ֆրանսիացի, չեխ և լեհ սպաներից: Հանձնաժողովի նախագահը Ֆրանսիացի գեներալ եր: Ցեկածների համար ագատեցին ամբողջ «Թագ» հյուրանոցը:

Հանձնաժողովի տասնումեկն որևէ աշխատանքի հետևանքն էին վեց արձանագրություններ:

Նրանցից յուրաքանչյուրը մենք առանձին բերում:

1.

Գեներալ Պարիի ցուցմունքների արձանագրությունը

Տասն ամսվա ընթացքում յոթ ամսվա ընթացքում Գալիցիայում տեղի ունեցող անցքերին, դիանալով, որ լեհ-ռուսական պատերազմի դեպքում լեհական բանակին ռազմամթերքներ մատակարարելու գործը կկատարվի Մերձկարպատյան Ռուսիայի և Գալիցիայի վրայով: Բնակչության ուշադրությունը գլխավորապես իշխանության աշխատանքներից հեռու պահելու համար, յոթ—Ֆրանսիական հանրապետության վինիվորական նախարարի դիտությամբ—միջոցներ ձեռք առավ Մերձկարպատյան Ռուսիայի հողի վրա սոցիալ-դեմոկրատական կուսակցություն ստեղծելու համար և վերջապես հասցնում էլի կանոնավոր կերպով բարոյական և նյութական ոգնություն: Յոթը հունգարական բոլշևիկների գաղտնի գործունեության պատճառով սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը ճեղքվեց, յոթ պահանջեցի Պրագայի կառավարությունից՝ «ձախի», այսինքն՝ բոլշևիկների ղեկավարներին հանձնել գլխավորապես—դաշտային դատարանի: Իմ առաջարկությունը չեին կառավարությունը մերժեց և դրանով վերջնական վրա յե ընկնում անցքերի հետագա ընթացքի պատասխանատվությունը:

Բժիշկ Բելեչն առաջին անգամ յեկավ ինձ մոտ այս տարվա հունվարին Կուչիցե քաղաքի գլխավորական վոստիկանատան պետի հանձնարարական նամակով: Յես նրա հետ տեսնվեցի յերկու անգամ: Նա ինձ խնդրեց պաշտպան լինել գալիցիական ուկրաինական ազգային չարժման: Իր խնդիրը նա ներկայացրեց գրավոր հայտարդի ձևով: Յես հավաքեցի քաղաքական վոստիկանության միջոցով տեղեկություններ բժիշկ Բելեչի անցյալ կյանքի մասին և՝ տեղեկությունների հետ ծանոթանալուց հետո՝ Բելեչի խնդիրը բոլորովին մերժեցի: Այնուամենայնիվ յես պետք համարեցի—այսպես ասած՝ մարդասիրության տեսակետից—փրկել Բելեչին, վորպես նախկին սպայի, տառապյալ ազգասիրությունից: Այդ պատճառով, և միայն այդ պատճառով, յես՝ ամերիկական նվեր-

ներից հոգուտ գործազուրկների՝ բաժին հանեցի Բելեչին այնքան, վորքան պետք եր համեստ գոյության համար: Այդ ոգնությունը կրում եր, ի հարկե, զուտ բարեգործական բնույթ և զուրկ եր քաղաքական վորևե առատից:

Յերբ՝ չնորհիվ չեխ կառավարության թուլության գրեթե աշխարհա գործող բոլշևիկ ագիտատորների աշխատանքի հետևանքով խափանվեց Մերձկարպատյան Ռուսիայից Լվով ռազմամթերքներ տեղափոխելու գործը, յես ռումինական կառավարության հետ պայման կապեցի՝ այդ գործը ռումինական յերկաթուղայինների միջոցով կատարելու մասին: Բացի դրանից յես համաձայնության կայացրի հունգարական սահմանային պահպանության հրամանատարության հետ այն բանի մասին, վոր Մերձկարպատյան Ռուսիայի հողի վրա բանվորական ապստամբություն ծագելու դեպքում հունգարական աղգային գորքերը պետք է մասնակցեն նրան ճնշելու գործին: Վոլոցկի վիճակի պայթումից հետո յես ռազմամթերքների տեղափոխումը կազմակերպեցի այնպես, վոր նա կատարվեր Ռումինիայի վրայով:

Յերբ լինճ հայտնի դարձավ, վոր լեհական սահմանակից շրջանում ծագել և բոլշևիկական բնույթ կրող՝ գյուղացիական գորեղ չարժում, յես, վորպեսզի գորքերը բոլշևիկական ագիտացիայից չվարակվեն, սահմանային պահպանությունը քաշեցի մինչև Մուկաչ: Դրանով յես ձեռք բերի այն, վոր վճռական պահին իմ տրամադրության տակ լինեն հուսալի՝ զինված ուժ:

Յերբ Լավոչնեում ապստամբություն ծագեց, յես կարգադրեցի պաշտոնաթող մայոր Իվան Բոժոչին ճամբա ընկնել Լավոչնե և հայտնել լինճ գործերի դրության մասին: Բոժոչի զեկուցումների հիման վրա յես կանոնավոր կերպով տեղեկացնում եյի լեհական գլխավորական հրամանատարությանը Կրակովում և Լվովում ապստամբների տեղափոխումների, ուժերի, գլխավորական և քաղաքական ղեկավարների մասին: Շնորհիվ իմ տեղեկությունների՝ լեհական իշխանությանը հաջողվեց ճնշել ապստամբությունը և փրկել գալիցիական ռազմաճակատը՝ նրան թիկունքից սպառնացող վտանգից:

Մերձկարպատյան Ռուսիա փոխած և Վոլոցի շրջակայքում ծագելիք ապստամբական վոհմակների մնացորդները յես հրամայեցի բռնել և հանձնեցի նրանց լեհ իշխանության: Վորքան լինճ

հայտնի չէ, ապստամբները հանձնվեցին լեհական դինվորական–դաշտային դատարանին:

Ցուցմունքի այլ բան չունեմ: Հուսով եմ, որ հանձնաժողովն իր վճռում կխոստովանի, որ Լավոչնեյի ապստամբության լիկվիդացիան, հետևաբար և լեհական ռազմաճակատի վերկուրյունը ամենից առաջ և գլխավորապես հետևանք եր իմ նախատեսող և յուռանդուն միջոցների գործադրության:

2·

Իվան Բոժոշի ցուցմունքների արձանագրությունը

*Ապրիլ կոչված հունդարական խորհրդային Հանրապետության կործանումից մի քանի ամիս հետո, Մերձկարպատյան Ռուսիայի հողի վրա նորից սկսվեց բոլշևիկ ագիտատորների գաղտնի գործունեյությունը: Իշխանությունը—մանավանդ դեներալ Պարին—այնքան վա՛տ եյին տեղյակ գործին, այնքան քիչ գիտեյին իրանց խնամքին հանձնված յերկիրը, որ վոչինչ չկարողացան անել՝ բոլշևիկական վտանգի առաջն առնելու համար: Ցես, ինչպես մի մարդ՝ ծնված այս կողմերում և պատանեկության առաջին տարիներից կռիվ մղած՝ իմ ժողովրդի շահերի համար, իմ պարտքը համարեցի դեմոկրատիայի պաշտպան կանգնել: Դենեբալ Պարիի հետ հարաբերության մեջ մտնելով և տեղեկացնելով նրան գործերի դրության մասին, ցես համոզեցի նրան, որ անհրաժեշտ և անհապաղ ստեղծել սոցիալ–դեմոկրատական բանվորական կուսակցություն: Իմ ծառայությունների համար, որոնք պետք և ունենային տեղեկացնող բնույթ, դենեբալն իր վրա առավ իմ կուսակցության վարչական ծախքերի ծածկելը: Այս տարվա վերաբերվելն և մարտին, չնորհիվ վոսովիկանապետ Ակուլիչանիի դեպի գործն ունեցած թեթևամիտ և անբարեխիղճ վերաբերմունքի, իմ կուսակցության ապարատի մեջ մուտք գործեցին հունդարացի բոլշևիկներ: Մտոր կեսրոյվ ի չարը գործ դնելով իմ վստահությունը և ոգտվելով կուսակցության ապարատից, վոզերից և հեղինակությունից, նրանք ապստամբեցրին բանվորներին, որ վերջիններս լեհական բանակի համար ռազմամթերքներ չտեղափոխեն: Ցերը յես՝ նպատակ ունենալով ռազմամթերքների տեղափոխման անխափանությունը՝ ուզեցի հեռացնել կուսակցության մեջ մտած բոլշևիկներին, իմ կուսակցությունը ճեղքվեց: Դենեբալ Պարին, վոխանակ իմ առաջարկությանը հետևելու և կուսակցական ճեղքվածք առաջ բերող բոլշևիկներին դինվորական–դաշտային դատարանի հանձնելու, սխալ տեղեկացրեց Պրագայի կառավարության և, հենվելով երբև թե այդ կառավարությունից ստացած կարդադրության վրա, վոչ միայն հանգուրժում եր, այլ և թուլատրում եր բոլշևիկների աշխատանքը: Ինքն ըստ ինքյան պարզ և, վոր դինվորական բևռների տեղափոխությունը քանդվեց, և լեհական բանակը ստիպված եր դիմել մանավոր մատակարարողների ծառայության, առաջին հերթին Անտալֆի ապրանքով մեկին, վորը լեհերին ռազմամթերքներ եր մատակարարում ամենաբարձր գներով: Անտալֆին սերտ մտերիմ եր գենեբալ Պարիի հետ, և վերջինս առաջարկեց նրան՝ մեծ քանակությունների գնող լեհ կազմակերպություններին:

Կուսակցական ճեղքվածք տեղի ունենալուց հետո՝ գենեբալ Պարին այնպես արավ, վոր իմ կուսակցության նյութական հետագա ոգնությունը կախված եր մեր աշխատակցությունից Ուկրաինայի գործակալ՝ բժիշկ Բեկեչի հետ: Ցես ստիպված եյի՝ ցույց տալու համար՝ համաձայնել Պարիի պայմաններին հետ—ճեղքվածքից հետո նյութական ոժանդակությունն իմ կուսակցության համար դարձավ գոյության հարց—և տեսնվեցի բժիշկ Բեկեչի հետ, վորն ինձ ծանոթացրեց դալիցիական ուկրաինցիների ազգայնամոլության ծրագրի հետ: Բեկեչին վստահացողների ծրագրերները հասցնում եյին այն կետին, վոր պետք և ստեղծել մեծ ուկրաինական պետություն ֆրանսիական հովանավորության տակ: Դենեբալ Պարիի և բժիշկ Բեկեչի հետ ունեցած իմ բանակցությունների հետևանքները յես հայտնեցի իմ մտերիմ՝ Բերեզասի դավառակալ Կլերլլովին: Մենք պայմանավորվեցինք նրա հետ, վոր յես ամեն մի պայմանի մեջ պետք և կապ պահպանեմ բժիշկ Բեկեչի հետ, մինչդեռ Բերեզասի դավառակալը կապ կհաստատե լեհական տերության Պրագայի ներկայացուցչի հետ և կտեղեկացնե նրան ուկրաինցի ազգայնականների ծրագրերների և գործողությունների մասին:

Հուլիսի սկզբին բժիշկ Բեկեչն ինձ հայտնեց, վոր ապստամբության սկզբնական նշանակված և սահմանակից Լավոչնե կայարանը: Ցերկու որից հետո յես իմացա, վոր գենեբալ Պարին քաշել և այնտեղից սահմանային պահպանությունը, վորպեսզի հնարավորություն տա ապստամբներին կազմակերպվելու, այլև նրա

համար, վորպեսզի Անտանֆիլի ուղարկած զենքերի մեծ քանակությունները կարողանան անարգել հասնել մինչև Լավոշնե: Անտանֆին՝ իր դեմ՝ զենք ևր մատակարարում վոչ թե միայն լեհերին, այլ և ուկրաինցիներին: Վորքան ինձ հայտնի յե՝ նա ֆրանսահան կրեդո—Շնայդեր զենքերի ֆիրմայի գործակալ ևր: Ապստամբությունից մի որ առաջ մենք բժիշկ Բեկեչի հետ մեկնեցինք Լավոշնե:

Ցերը Լավոշնեյում և նրա շրջակայքում գինված դյուզացիությունն իր ձեռքն առավ իշխանությունը, ապստամբները—բժիշկ Բեկեչի համար անսպասելի կերպով—փոխանակ ուկրաինական ազգային դրոշակի, պարզեցին կարմիր դրոշներ և իրանց բոլշևիկներ հայտարարեցին: Զեկավարությունը ևլավ Բեկեչի ձեռքերից և անցավ մի բանվորի ձեռքը՝ Լակատա ազգանունով, վորին Անտանֆին ուղարկել ևր Լավոշնե զենքերի մեծ՝ քանակությամբ: Հիմնվելով այդ տեսակետի վրա, վոր մենք բոլորս դաշնակիցներ ևնք բոլշևիկների դեմ, յես առաջարկեցի Բեկեչին ինձ հետ միասին գիմելու գեներալ Պարվինին, խնդրելով անհապաղ ոգնել մեզ՝ հունգար և ռումին զորքերի առաքմամբ: Բժիշկ Բեկեչը—վորքա՞ն մեծ ևր իմ զարմանքը—մերժեց իմ առաջարկությունը և՝ բացի դրանից՝ ուղարկեց գեներալ Պարվինին կեղծ զեկուցում, թե գործերն ընթանում են լավ նշանակված ծրագրի:

Ապստամբությունը ծավալվում էր սոսկալի արագությամբ, ապստամբած դյուզացիների բանակը մեծանում ևր կայծակի թափով: Վախ ևր ծագում, վոր ապստամբությունը կարող է ապստնալ լեհական գալիցիական ազգայնականներին, մի բան, վոր անկասկած կպատահեր, թե չիներ ծրագրված աչխատանքը Բեկեչի գլխավորած, վորը ժամանակին հայտնում ևր լեհական հրամանատարության ապստամբների ծրագիրների և ուժերի մասին:

Մնացածը դուք, պարոններ, գիտեք:

Իմ կարծիքով՝ ապստամբության համար քաղաքականապես պատասխանատու չեն գեներալ Պարվին և բժիշկ Բեկեչը, իսկ ապստամբությունը ժամանակին լիկվիդացիայի յենթարկելը՝ Բեկեչի գլխավորի և ձեր խոնարհ ծառայի արժանիքն է:

3.

Բժիշկ Բեկեչի ցուցմունքների արձանագրությունը

1919 թվի դեկտեմբերին Կոշեցե քաղաքի մի լրագրում յես տեսնում մի հոդված, վոր վերաբերում ևր չեխ–լեհական վեճերին Թեշենյենա լեռի վերաբերմամբ: Այդ հոդվածս լուսա տեսնելուց հետո ինձ իր մոտ կանչեց Կոշեցայի պրոպագանդայի պաշտոնական պետը և առաջարկեց ինձ, վոր իրան տեղեկություններ տամ գավիցիական ուկրաինական ազգային շարժման մասին: Ցերը յես տվի ինձանից պահանջված բոլոր տեղեկությունները—այն չափով, վորքան այդ թույլ ևր տալիս շարժման անելեգալ բնույթը—յես առաջս հանձնարարական նամակ՝ Կոշեցայի կորպուսի հրամանատարից—Մերձկարպատյան Ռուսիայի զինվորական դիկտատոր գեներալ Պարվինին: Միևնույն ժամանակ յես կապ հաստատեցի՝ նախկին գալիցիական ուկրաինական ժողովրդական հանրապետության նախագահ՝ Պետրուշևիչի հետ, և նրա համաձայնությամբ առաջարկեցի գեներալ Պարվինին իմ աջակցությունը: Պարվին մեծ հետաքրքրությամբ լսեց իմ զեկուցումը և խնդրեց կրկնել իմ առաջարկությունը գրավոր կերպով, վորը յես իսկույն արի: Ցերկու և կես ամիս հետո, մարտի վերջին, գեներալ Պարվին ինձ կանչեց իր մոտ և հայտնեց ինձ, վոր բոլոր միջոցներով պատրաստ է աշխատել՝ ստեղծելու Ֆրանսիայի հետ դաշնակից Մեծ ուկրաինական հանրապետություն: Նա իր վրա առավ վոչ թե միայն այն ձախքերը, վորոնք պետք է արվեյին Մերձկարպատյան Ռուսիայի հողի վրա ուկրաինական կոմիտե ստեղծելու համար, այլ և գալիցիայում կազմակերպվող ապստամբական բանակին զենք մատակարարելը—այն պայմանով, վոր զենք ձեռք բերելու բոլոր ծախքերը կծածկեն ապագա Ուկրաինական պետությունը: Շնորհիվ գեներալ միջնորդության յես ծանոթացա Անտանֆի ագենտնուսով վիեննացի մի գործարարատերի հետ, վորը յերկար բանակցություններից հետո ձեական պայման կապեց Ուկրաինայի Լվովի կոմիտեի յերկու անդամների հետ և փաստորեն գիմեց զենքեր հատցնելու գործին:

Ուկրաինայի ապագական հանձնաժողովը, վորն ընդունում էր զենքերը, չուսով ինձ հայտնեց, վոր Անտանֆին զենքեր և մատակարարում վոչ միայն մեզ, այլ և Մերձկարպատյան Ռուսիայի հոգի վրա աչխատող հունգարական իրրեգենտայի կոմիտեին, և վոր

այդ բանը կատարվում է Բերեզատակ զավառակալի անմիջական մասնակցությամբ:

Հունգարական և ուկրաինական կոմիտեների մեջ սուր անտագոնիզմ գոյություն ունի: Հունգարացիները ուզում էին վերցնել Չեխա-Սովակիայից Մերձկարպատյան Ռուսիան: Ցերեկ այդ բանը հաջողվի, Հունգարիան և Լեհաստանը հարևաններ կլինեն, մի բան, որը մեծ չափով կդյուրեղացնե Լեհաստանին և դրանով կվնասե ուկրաինական գործին: Այդ նկատառումներով չես անհրաժեշտ համարեցի հայտնել գեներալ Պարիին հունգարացիների կազմակերպչական աշխատանքի մասին: Իմ տեղեկությունների հիման վրա՝ հունգարական կոմիտեն Մունկաչի դղյակում կայացրած ղեկավար ժողովի ժամանակ ձերբակալվեց Պրոպագանդայի պաշտոնատան միջոցով: Շնորհիվ Բերեզատակ զավառակալի միջամտության, հունգարական կոմիտեն չուտով ազատ թողնվեց և նրա գործողությունները անպատիժ մնացին: Այս ձերբակալման միակ հետևանքը այն եղավ, որ այդ որվանից Բերեզատակի զորածակալը հրամայեց իր զաղտնի խուզարկուներին հետևել իմ ամեն մի քայլին: Գաղտնի խուզարկուները ոռճիկ էին ստանում՝ Ռուսինսկոյի հողի վրայի իրրեղենտայի՝ հունգարական կոմիտեի գլխավոր լիազոր Դանիել Չեկիից, Չեկին՝ կերկրլով զավառակալի քաղաքական նենգությունների բոլոր ծախքերն էր ծածկում:

Վոլոցկի ուղեկամուրջից պայթումի և սոցիալ-դեմոկրատական կուսակցության ճեղքվածքից հետո՝ չես, գեներալ Պարիի վորոշ արատահայտված ցանկության համեմատ, դրավեցի դեպի մեր աշխատանքն Իվան Բոժոչին, որը հաղորդեց մեզ բազմաթիվ, շատ գնահատելի տեղեկություններ հունգարա-լեհական աշխատակցության մասին: Ցերբ բոլշևիկները ուղղակի սպառնում էին Վարշավային և Լվովին և թվում էր, թե Լեհաստանը կանգնած է կատարյալ փլուզումի առաջ, գեներալ Պարին համարեց, որ բոպեն հարմար է՝ ստեղծելու ուկրաինական ժողովրդական դեմոկրատիկ հանրապետություն, վորպես բուֆեր Չեխո-Սլովակիայի և Լեհաստանի՝ միջև, վորին նա՝ վախից՝ արդեն բոլշևիկական էր համարում: Ցերբ Լավոչնեյի ապստամբության որը վորոշված էր, գեներալը կարգադրեց, որ լեհ հրամանատարությունը քաշի իր զորքերը մինչև Մունկաչ, իսկ Անտանտին Լավոչնեյին հասցրեց զնդացիրների մեծ քանակություն:

Իշխանությունը մենք խլեցինք առանց դժվարությունների, բայց ապստամբների մեջ մեծամասնությունը բոլշևիկ էր: Բոլշևիկները զինված էին միայն հեծելազորքի թեթև հրացաններով, և այդ պատճառով, չնայած նրանց թվական գերազանցության, գերակշռությունն եղի մեր կողմն էր: Գոնե՝ չես այդ կարծիքն ունեյի, այդ վոգով տեղեկացրի գեներալ Պարիին և վճռականն կերպով մերժեցի Իվան Բոժոչի առաջարկությունը, վորն ուզում էր դիմել հունգարացիներին՝ ոգնության խնդրելու զալիցյական բոլշևիկների դեմ:

Ցերբ չես հետո պատրաստվում եյի խլել իշխանությունը բոլշևիկների ձեռքից, պարզվեց, վոր մեր բոլոր զենքերը կատարելապես անպետք են. մաս-մաս արած զնդացիրները սարքել անկարելի չեր, մասերն իրար չեյին հարմարվում, իսկ ձեռքի ռումբերը լցված եյին ավազով:

Լավոչնեյի ապստամբության զեկավարությունը մնաց այդպիսով բոլշևիկ Լակատայի ձեռքերում, վորին յերբորդ որն ոգնության յեկավ Սվալյավայից Տիմկոն յերկու հարյուր լեհ դասալիքներով. սրանք զինված եյին ձեռքի ռումբերով:

Մնացածը ձեզ, պարոններ, հայտնի չե: Ցերբ սկսվեց լեհական հակահարձակումը, չես վախած չեմ հողի վրա, պատրաստվում եյի ծանուցանել գեներալ Պարիին պատահած բանի մասին, բայց, ինձ զորոդին չհասած, ձերբակալվեցի Պրոպագանդայի պաշտոնատան զործակալների կողմից:

Բողոքում եմ իմ ձերբակալման դեմ և մինչև այժմ չարունակվող բանտարկության դեմ: Իմ ամեն մի քայլը յեսա արել եմ չեմ իշխանության և գեներալ Պարիի գիտությամբ և համաձայնությամբ, ուստի ինձ կալանքում պահելու համար վոչ մի պատճառ ու հիմք չկա:

Իր զործունեության տասնյոթերորդ որը հանձնաժողովը կրկին լսեց գեներալ Պարիի յուցմունքները: Նրա յուցմունքներն այս անգամ չարձանագրվեցին:

Բժիշկ Բեկեչը նույնպես հարց ու փորձի յենթարկվեց յերկրորդ անգամ և նրա առաջին յուցմունքների արձանագրությունը լրացվեց այսպես:

Հանձնաժողովի հարցին՝ բժիշկ Բեկեչը վորոշակի հայտնեց, վոր քանի վոր պետք է ընտրել միայն յերկու հնարավորություններից մեկը—կամ Գալիցիան Լեհական հանրապետության մի մա-

ար կպատնա, կամ անխուսափելի կերպով կընկնի Խորհուրդների իշխանության տակ,— նա բոլոր ուժով կկռվի, մոբիլիզի հարյուր միավոր լեհատառնի ոգին:

Ի նկատի ունենալով, որ այս հարց ու փորձից հետո գործերի դրությունը բոլորովին պարզված էր, հանձնաժողովը կեղծ բանակցեց, որ անհրաժեշտություն չկա հարցաքննված անձերին կրկնա առ կրկնա կանչնեցնելու՝ նրանց ցուցմունքների մեջ կեղած հակասությունները պարզելու համար:

Հանձնաժողովն իր կեղրակացության մեջ հաստատեց, որ գեներալ Պարիի կարգադրություններն ինչպես քաղաքական, այնպես էլ զինվորական տեսակետից ժամանակին են կեղել և նպատակահարմար: Ի նկատի ունենալով, որ գեներալն իր առաջադրություններն հաջող կերպով կատար է ածել, նա հետագա աշխատանքներից ազատվում է և Փրանսիական զինվորական նախարարության տրամադրության տակ է դրվում:

Բերեզոսկի գավառակալը՝ ռուսահպատակ լինելով՝ հանրապետության մեջ պատասխանատու պաշտոններ վարելու իրավունք չունի: Նրա նախկին գործունեության համար հանձնաժողովն արտահայտում է իր կատարյալ յերախտագիտություններ:

Բժիշկ Բեկերեչը կալանավորությունից պետք է ազատվի, բայց պարտական է քանըշորս ժամվա ընթացքում հեռանալ Մերձկարպատյան Ռուսիայի հողից: Նրա հետագա ապրելատեղը պետք է որոշվի Չեխոսլովակիայի հանրապետության ներքին գործերի նախարարը:

Իման Լակատային հանձնել լեհական զինվորական դատարանին:

Հանձնաժողովի վճռին կցված է պատճառաբանություն՝ յոթանասուն յերկու ապաղրաքան եջ բռնող:

ՓՈԽԱՐԻՆՈՂՆԵՐԸ

Ցերեկ լուսամուտից նայես, առաջին բանը, որ ներկայանում է աչքերիդ՝ կալվինական յեկեղեցու աշտարակն է: Մեծ պատերազմի վերջին չարաչար յեկեղեցում հրդեհ ընկավ, այրվեց կտուրը և զանգը վայր տապալվեց: Այդպես էլ՝ այդ որվանից ժամանակ չգտան ծածքը նորոգելու և զանգը կախելու:

Սեկերեչը ժամերով կանգնած էր մնում՝ առանց չարժվելու՝ վանդակավոր լուսամուտի առաջ, չդադարելով կիսամեր յեկեղեցու վրա նայել: Կարգալ ու գրել արգելված էր նրան:

Նրան գրկվել էր ոչ միայն հարց ու փորձ արվել հոսպիտալատանը: Ընդհանրապես նա հեչտ պրծավ. քննության ժամանակ մարմնի ոչ մի վնասվածք չստացավ և ինվալիդ չդարձավ: Այժմ նա արդեն մի չարաթ նստած էր Բերեզոսկի բանտում՝ ջոկ սենյակում. այդ բանտը չատ-չատ հարմարեցրել էին ուսումնարանի չենքից:

Սեկերեչը տհաճարակ վատ էր տանում բանտարգելությունը, բայց նրան դեռ կրրեք այս ստանձան վատ չէր յեղել: Նա ոտոտպում էր գլխի պատումից, նա անդադար քնել էր ուզում, բայց կրրը պակում էր, քնել չէր կարողանում: Նա միշտ տատապում էր քաղցից, բայց կրրը ճաշին նա ածում էր իր մեջ զետնախնձորի ապուրը կամ յերեկոյան—սև սուրճը, որոի խառնումը սկսում էր տանջել նրան:

Մի անգամ նա իրան բռնեց այն պահին, կրրը ինքն իր հետ բարձր ձայնով խոսում էր: Նա ատոկ վախեցավ և վճռեց բժիշկ պահանջել: Բայց բանը գրան չհասավ: Մի չարաթ առանձին սենյակում անցընելուց հետո, մի նոր կալանավոր մացրին նրա մոտ: Այդ Լակատան էր: Ուրախությունից՝ Սեկերեչը մեկին մոռացավ իր բոլոր փորձանքները:

Լակատան չատ աննախանձելի դրության մեջ էր. հարց ու փորձի ժամանակ լեգեոներները չարաչար ծեծել էին նրան: Նրա ձի ականջը խրացել էր, գրկվել էր յերկու ատամներից և ձախ ձեռքը կապված էր: Աեենք՝ վերջինը ոչ թե հարցաքննության հետևանք էր, այլ հիշատակ Լավոչնեյի կռիվների:

Դեռս յեկավ, որ Սեկերեչը հիանալի խնամող է: Նա դիտությամբ հանվեցրեց և պատկերց Լակատային, բայց վորովհետև մահիճներն անկողնի պարագաներ չատ քիչ ունեյին, նա յերկու անկողնից մի անկողին կազմեց, իսկ ինքը պատկեց մերկ տախտակների վրա:

Չնայած իր ամբողջ անհամբերության, նա առաջին յերկու որը գրեթե վոչինչ չկարողացավ իմանալ Լակատայից: Այնպես վատ էր, որ նույն իսկ ուժ չուներ խոսելու: Յերրորդ որը նա մի քիչ յոմացավ: Առավոտյան նա մի ժամից ավելի նստեց մահճի վրա, իսկ յերեկը կանգնեց վոտքերի վրա: Սեկերեչի ձեռքի վրա հենվելով, նա մի կերպ հասավ լուսամուտին, որպեսզի նայի յեկեղեցու աշտարակի վրա:

— Ցեթե մենք ժամանակին սատանայինք ձեզանից ոգնութիյուն,—պատասխանեց նա Սեկերեչի հարցերին,—ամեն ինչ այլ կերպ կդառնար: Հինգ հարյուր մարդ բոլորովին հերիք եր մինչև-հենց Լվով հասնելու համար: Մենք՝ իհարկե, սխալ գործեցինք՝ ձեր վրա հուսալով. մենք պետք և միայն մեր սեփական ուժերի վրա հուսայինք... Մենք դիտեցինք, որ Բեկերեչն ու Բոժոչը...

— Պետք եր նրանց ձերբակալել: Ցե՞ որ մենք ձեզ հաղորդեցրինք մեր կարգադրութիյունը: Ագնիվ խոսք...

— Հաղորդեցի՛նք, հաղորդեցի՛նք... Եյ, ի՞նչ, որ հաղորդեցի՛ք: Մեզ կարգադրութիյուններ պետք չեյին, այլ ոգնութիյուն եր պետք: Ցես ել հաղորդեցի ձեզ, որ ոգնութիյան կարիք ունեմ: Իսկապես, չեմ կարողանում հասկանալ, թե դուք ի՛նչ եյիք մտածում... Մի քանի հարյուր մուժիկ, մի կերպ դինված, վորոնցից կեսը մոչ թե ինձ եր լսում, այլ Բեկեչի՞ն: Բոժոչը գրեթե աշկարա աշխատում եր մեր դեմ...

— Ցեթե դու հենց սկզբից նրան ձերբակալեյիր, նա մոչ աշկարա, մոչ ել գաղտնի չեր կարող աշխատել քո դեմ: Բեզ պահպանում եր վճռականութիյո՛ւն:

Լակատան նստած եր մահճի վրա, իսկ Սեկերեչը անկյունում անց ու դարձ եր անում, վեց քայլ՝ առաջ, վեց քայլ՝ հետ: Հիմա, յերբ նա խոսելու, վիճելու հնարավորութիյուն ստացավ, նրա դլխի ցավը բոլորովին չքացավ: Բայց Լակատային այդ վիճը ոգտակար չեր: Նա ուզում եր ճչալ, կռվել, ձեռքերն ու վոտքերը դործի դնել, վորպեսզի բոլորը բացատրե,—բայց նա ուժ չուներ նույնիսկ վեր կենալու, և նրա ձայնը հնչում եր թույլ ու բեկբեկ:

— Այդ ի՞նձ եր պահպանում վճռականութիյունը: Ի՞նձ: Բանից դուրս ե դալիս, որ յե՛ս եյի ճղճղում, սարսռաժ անում ոգնութիյուն ուղարկելու դործը: Այդ յե՛ս եմ ձեռքից բաց թողել վճռական րոպեն:

— Թող դու, միևնույնպես, այդ հիմար ոգնութիյունը: Ոգնութիյուն... Ոգնութիյունն ի՞նչ գործ ունի այստեղ: Ամեն մի ոգնութիյուն անոգուտ կլիներ, յերբ Բեկեչը, Բոժոչի հետ կարող եյին ազատ ագիտացիա անել: Ցեթե համարձակութիյուն ունենայիր Բեհեչի դեմ դուրս դալու, նրան ձերբակալելու և կախելու, այն ժամանակ դու դեռ կարող կլինեյիր մի բան ձեռք բերել:

— Հե՛չտ բան և Մունկաչից, «Ազատից», կախել մարդկանց:

Դու յերևի ծանոթ ես հեղափոխութիյանը հետ միայն լսումի, դրքերից...

Վեց քայլ՝ առաջ, վեց քայլ՝ հետ:

Իր զբաղված դրութիյան մեջ Սեկերեչը քայլերը մեծացրեց: Այժմ սենյակի մի ծայրից մյուսը միայն հինգ քայլ եր: Սեկերեչը կատաղութիյունից հրեց վոտքով մի դանդոլը:

— Ի՛նչ պետք և դատարկ խոսել: Ասա ուղղակի, որ մենք ամեն բանի վերաբերմամբ պատասխանատու յենք, ամեն բանում մեղավոր ենք: Մենք համբերեցինք Բոժոչին և Բեկեչին, մենք փաթաթել ենք նրանց ապստամբներին...

— Վեճում յես քեզ չեմ հաղթի,— ասաց Լակատան:— Բայց ինչ որ ճշմարիտ և, այն ճշմարիտ և: Վճռական րոպեին դուք մեզ ձգեցիք բախտի բերմունքին: Դուք խոստում եյիք, խոստում— ձեր բերնում լեզու կա՛— և ահա՝ յերբ պետք եր խոսքից գործի անցնել... Ե՛հ...

Սեկերեչն այս անգամ զսպեց իր ջղերը:

— Լսիր ինձ, Լակատա,— զսպված սկսեց նա:— Նախ քան մեզ մեղադրելը, դու պետք և մտնես մեր դրութիյան մեջ: Դու պետք և դիտենաս...

— Դիտեմ, դիտեմ,— կարեց նրա խոսքը Լակատան:— Դու՝ իհարկե, կկարողանաս ինձ ապացուցանել, որ յես ինքս խանգարեցի մեզ ոգնութիյուն ուղարկելու գործը: Առաջուց համաձայն եմ այն բոլորի հետ, ինչ որ պիտի ասես...

— Լակատա, յեկ լուրջ խոսենք...

— Լո՞ւրջ: Այդ պետք եր առա՛ջ լուրջ լինել, յերբ գործը խոսակցութիյունների մեջ չեր: Բոժոչ, Ակուլիչանի... Դու այնքան յերկար ժամանակ սոցիալ-դեմոկրատի դեր խաղացիր, որ՝ յերևի՝ իսկապես սոցիալ-դեմոկրատ դարձար...

— Վա՛հ, քեզ...

— Պա՛րտ ե: Բոժոչ, Ակուլիչանի և գրողը գիտե, ելի ով... Նրանց հետ ամե համձրաշխ եյիր, իսկ...

— Դո՛ւ...

Սեկերեչը սպառնաց Լակատային բռունցքով:

— Դո՛ւ... Իսկո՛ւյն լռիր...

Նա կծեց չրթունքը և կլանեց այն խոսքը, որ պատրաստ եր բերնից թռչելու: Հետո թիկունքը դարձրեց Լակատային և ամբողջ մի ժամ անչարժ կանգնած մնաց լուսամուտի առաջ:

Լակատան, դժվարությամբ վոտքերի վրա բարձրանալով, նետեց Սեկերեչի մահճի վրա նրա բարձն ու վերամակը:

Ցերկու որ անընդհատ վոչ մի խոսք չփրտտտանվեց: Բանտարկվածներն ուտում էին մի ափսեից, խմում մի բաժակից, ծխում մի պապիրոս, բայց վոչ մի խոսք չէին ատում իրար և նույն իսկ խուսափում էին հայացքներով իրար հանդիպելուց:

Ցերրորդ որը նրանք ատացան մի նոր ընկեր.

Պետրոս Կովաչին:

***

Պետրոսի գլուխը փաթաթված եր և ձախ աչքի տակ սևին եր տալիս մի մանուշակագույն նշան—վոտիկանական քննությունների հետքեր:

Լակատան և Սեկերեչը մի ժամտամանակ վազեցին նրան պչկելու: Սեկերեչը քիչ մնաց՝ լար ուրախությունից:

— Այո, ամեն բան այլ տեսակ կլիներ,—սկսեց պատմել Լակատան,—յեթե մենք հենց սկզբից հույսեր չդնեյինք ձեր ոգնության վրա: Մենք սպասեցինք ցերկու որ, ամբողջ յերկու որ կորցրինք, իսկ յերբ՝ վերջապես՝ ատացանք ոգնության նման մի բան—խե՛ղճ Տիմկո— այն ժամանակ արդեն ուշ եր:

— Հեղափոխական բանակի ուժը հարձակման մեջ է,— ատաց Սեկերեչը:

— Մենք ել հարձակվում եյինք: Հենց վոր յեկավ Տիմկոն, իսկույն սկսեցինք հարձակվել: Ե՛հ, Պետրոս, յեթե՛ դու տեսնեյիր: Ամեն մի մարդ, ամեն մի դիմելոր մեր մեջ իրան բըռնում եր հերոսի պես, ամեն մեկը ատաղի կուզեր կրակի ատաջին գծում լինել: Ինչպե՛ս եյինք մենք դնում...

Նրա դեմքը փայլում եր: Պետրոսը և Սեկերեչը լսում եյին, վախենալով մի խոսք փախցնել:

— Այդպիսի վոչ մի բան յես դեռ չեյի տեսել— և այնուամենայնիվ... Դու մեզ մատծիր. Պետրոս. դինվ ընկերը՝ բոլորի, պատառատուն չրեբով, մեզ ձեռքի ռումբերով հարձակման եյին դիմում լեհական զնդացիրների դեմ, ատես նրանց վ ա ա բ ձակում եյին վոչ թե զնդակներ, այլ սիտու: Ցեվ ինչպե՛ս եյին նրանց հենձում—ատրատիելի՛ բան ե՛ր: Ցեվ յերբ նրանք մոտեցան լեհերին այնքան, վոր կարող եյին ռումբեր ձգել,—վո՛չ մեկը

չպատչեց: Զինվորները հարձակվում եյին լեհերի վրա մերկ ձեռքերով, խփում եյին նրանց բռունցքներով, խածում եյին նրանց—բոլո՛րն ընկան... Խե՛ղճ Տիմկո...

Մի քանի րոպե անցավ լռության մեջ:

— Ինձ թվում է,— սկսեց Սեկերեչը,— վոր յեթե դուք ժամանակին և կարուկ կերպով սկսեյիք հարձակումը...

— Դու իրավունք չունես մեզ քննադատելու,— կամացուկ արտատանեց Լակատան:

— Ի–ի–ի՛նչ: Իրավո՞ւնք չունեմ...

— Լսենք, տղերք, խնդրեմ՛ել, ի՛նչ է:

Պետրոսը կարող եր ասել ինչ–վոր կուզեր, մյուսներն այլ ևս վոչինչ չեյին տեսնում և չեյին լսում:

— Ցունի՛ա: Վո՛չ մի իրավունք: Դուք մեզ մատնեցիք:

— Մե՞նք ձեզ մատնեցի՛նք:

— Դո՛ւք... Դո՛ւ...

Ցեթե Պետրոսը ժամանակին չմիջամտեր, Սեկերեչը բռունցքներով կհարձակվեր Լակատայի վրա: Պետրոսը կոպիտ կերպով հրեց Սեկերեչին մի կողմ, այնպես վոր նա թռավ դեպի պատը, իսկ Լակատային ձգեց մահճի վրա—նույնպես վո՛չ այնքան դժուշ, ինչպես պետք եր հիվանդի վերաբերմամբ:

— Ներեցարնի՛ր:

Լակատան յերեսը պատին դարձրեց, Սեկերեչն ել ընկավ մահճի վրա և գլուխը թաղեց բարձում:

— Պատկիր մոտս–տեղ կա,— կանչեց Սեկերեչը Պետրոսին, յերբ մթնեց:

— Իսկ յես քեզ համար տեղ պատրաստեցի ինձ մոտ,— հնչեց Լակատայի ձայնը:

— Ինչպե՛ս չեք ամաչում: Ատես յերկու խյնքո՛տ լինեք.— թռավ Պետրոսի բերանից:— Ատես յերկու տխմար, խյնքոտ ողա:

Պետրոսը պատկեց հատակի վրա:

Դեռ լավ եր, վոր նա վերարկու ուներ: Գիշերները սո՛ղ եյին:

***

Առավոտյան նրանց մոտ չնորհք բերեց մի նոր կենդանի–Գոտառեսմանը:

Ցերեկոյան Լակատայի յետևից յեկան յերկու ժանդարմ:

— Հավաքի՛ր երերդ:

— Ինչպե՞ս—ազատո՞ւմ եք:

Պատասխանն ակնհայտ էր, նրան չղթայեցին:

Պետրոսը և Գոտտեհմանը լուռ կանգնած էին Լակատայի մոտ: Սեկերեչը ադմկալի կերպով հառաչում էր:

— Հունգարիա՞, թե Լեհաստան:

Ժանդարմները չպատասխանեցին:

Նախ Լակատային դրկեց Պետրոսը, հետո՝ Գոտտեհմանը, ապա՝ Սեկերեչը:

Բոլորի աչքերն արցունքոտ էին:

***

Այդ տեղի ունեցավ յերեքշաբթի յերեկոյան:

Յորեքշաբթի առավոտուն Պետրոսն ու Գոտտեհմանը հայհոյում էին իրար ամենակեղտոտ խոսքերով: Սկսվեց այն բանից, վոր Գոտտեհմանը կասկածանք հայտնեց ռուսին դյուղացիների ռևկրաևնական ծաղում ունենալու մասին, և վեճը բարձրագույն կետին հասավ այն ժամանակ, յերբ Գոտտեհմանը հայտնեց, վոր յեթե կոալակցությունը դուրս չձգե յուրաքանչյուրին, ով մինչև այժմ քիչ թե շատ պատասխանատու գործ ե վարել, և աչկարա չնչավակե նրանց վորպես մատնիչների, հեղափոխության գործը կորած ե:

Հինգշաբթի յերեկոյան Գոտտեհմանի յետևից յեկան յերկու ժանդարմ:

— Հավաքի՛ր երերդ:

Ուրբաթ առավոտյան Պետրոսն ստացավ իրան բերված բաները:

Ոդապուխտ, յերչիկ, պանիր, մրգեր, մի ամբողջ քաղցր կարկանդակ և մի հարյուր պապիրոս: Կարկանդակի տակ պահված եր նամակ:

Մարիա Բոժոչից եր:

Բերեզատում բանտարկվածներին վատ էին սնում: Բերված բաները ընդունվում էին սակավ և անկանոն: Այնպիսի առատ և ընտիր բաներ, ինչպես այս անգամ Մարիան եր ուղարկել, դեռ նրանք չէին ստացել:

Պետրոսը քիչ մնաց թռչկոտեր ուրախությունից:

Մինչ Սեկերեչը քաղցր կարկանդակի հետ եր, նա ընկավ նամակի վրա: Բայց նամակը ստատիկ մոայլեց նրա ուրախությունը:

— Հըմ... Մի նայի՛ր, Իոսիֆ,—ասաց նա, մեկնելով Սեկերեչին նամակը՝ յերեք անգամ կարդալուց հետո:

— Իսկ դու մեջն ա՞յլ նամակ էլիր ստատում,—հարցրեց սա, վերադարձնելով նամակը:

— Պարզ բան է՝ ա՛յլ նամակ:

— Հիմա՛ր ես դու: Յես ամեն ժամանակ վորոշ կարծիք ունեյի Մարիայի մասին: Հիստերիկ աղջիկ է: Պարզ բան է:

— Կարող էիր ա՛յլ կերպ խոսել նրա մասին: Տեսնում ես, թե ինչպես է նա հոգ տանում մեր մասին: Կնշանակե՝ այնքան էլ «պարզ» չէ:

— Յեթե մեկը չի կամենում տեսնել իրականությունը, նրան վոչ մի բան պարզ չի լինի:

— Դու ուղղակի մազոտ և անարգար ես դառել:

— Դե՛, գնա՛ դու: Ճշմարտությունը քո աչքն է ծակում, ա՛յ թե ինչ:

Պետրոսը չպատասխանեց: Մինչև յերեկո սենյակում չէին խոսում:

Այդ ժամանակվա ընթացքում Պետրոսը կարդաց նամակը գոնե մի տասն անգամ:

«Սիրելի, սիրելի Պետրո՛ս,

Մեծ ցավ է ինձ համար, վոր հենց հիմա, յերբ յես կորցրի քոլոր իմ ունեցած սուրբ բաները, յես չեմ կարող տեսնել քեզ, խոսել քեզ հետ: Շարժում, հեղափոխությո՛ւն—կարծես հապա՛ր տարի առաջ եր այդ ամենը: Համաշխարհային հեղափոխությո՛ւն: Ինքը Լենինը ոպորտունիստ դարձավ և բոլշևիկիզմը «յերեխայական հիվանդությո՛ւն» կոչեց: Յերեխայական հիվանդությո՛ւն: Բոլորը, ինչի համար վոր մենք կռվում էինք, ինչով մենք ապրում էինք, յերեխայական հիվանդությո՛ւն է: Շատերն են մեռնում նրանից, բայց նրանք, վորոնք դիմանում են նրան, մեկ անգամ ընդ միշտ ապահովագրված են նրանից: Այո, այժմ յես արդեն Լենինին էլ չեմ հավատում: Յեվ յեթե նա ինքը հանդես գա հեղափոխականների դեմ, յես դարձյալ հեղափոխական կմնամ:

Տասն որից հետո յես Պրագա յեմ մեկնում: Պետք է սովորեմ: Այժմ յես այստեղ պետք չեմ: Այն, ինչ վոր մնացել էլ շարժումից՝ աշխատավարձի, պրոֆմիությունների և այլ մանր հարցեր են,

—չես դրանց համար չեմ: Ամենախելացի բանը, ինչ վոր ինձ մնում է, սպասման ժամանակը ուռուցով անցընելն է: Ցես հավատացած եմ, վոր դեռ կգա իմ—մեր—ժամանակը: Ինչ էլ վոր պատահի, չես հավատացած եմ, վոր հեղափոխությունը կհաղթանակե:

Բեզ, սիրելի, թանկագին Պետրոս, շատ մեծ վստահ և սպասնում: Զգուշ չեղիր: Բեսկեդին կարող ես վստահել կատարելապես: Նելոք չեղիր: Պրագայում ինձ փնտռիր քրոջս մոտ. Վենցելպլատց, № 12, բնակարան 3: Նելոք չեղիր, հավատդ մի կորցնիր—այն ժամանակ դեռ ամեն—ամեն ինչ կարող է լավ դառնալ:

Քո՝ ՄԱՐԻԱ»:

Հենց մինչև յերեկո սենյակում չէլին խոսում: Ճաշից հետո ամբողջ ժամանակ Սեկերեչը կանգնած մնաց լուսամուտի առաջ: Նա յերգում էր.

Եժա՛ն և քո արյունը, չքավո՛ր:
Կվաստակես պղնձե մի գրո՛շ—
Ցեվ ծախել նրան չես կարող.
Ցերկու հեթանոսների դեմ կռիվ—կռիվ արյուն
Հայրենիքիդ համար կթափես դուն...

— Ե՛հ,—դուս թռավ վերջապես նրա բերնից,— հերի՛ք և այս բոլոր անհեթեթությունը: Հեթանոսներ, հայրենիք.. Աղնիվ խոսք... Լավը, ուրա, լավ և սկսենք կոմինտերնի Ցերկրորդ համաժողովի վճիռների վրա աշխատել: Վաղը հենց առավոտից էլ սկսենք: Համաձա՞յն ես:

— Համաձայն եմ:

— Ո՞վ կարող է լինել այդ Բեսկիդը, դրողը նրան տանի.— ասաց Պետրոսը, յերբ նրանք յերկուսն էլ պառկեցին:

— Սառանա՞ն դիտե նրան: Գուցե՝ մի դատավոր է, թե չէ... Այո՛, ասենք՝ ի՞նչ կարիք ունենք դուրս պատռելու: Առանց այն էլ դանազան գործեր շատ ունենք: Այդ՝ Լենինի գրքույկը, վոր մենք առացանք, շա՛տ հետաքրքրական է: Ափսոս, վոր դուռուսերին չես հասկանում: Ցեվ առանձնապես ափսոս, վոր չես նրան յերեք ամիս առաջ չհարդացի... Աղնի՛վ խոսք...

***

Շաբաթ յերեկո սենյակ մտան չորս ժանդարմ:

— Հավաքեցի՛ք իրերդ:

Պաշտոնատանը դրադիրը կարդաց բանտարկյալներին յերկոք վճռորոշում.

— Ինն իչ... Դատախազական հսկում...

Պետրոսը բան չհասկացավ, բայց Սեկերեչը, առաջին վճռորոշումը լսելուց հետո, չընջաց նրան.

— Կազատե՞ն:

Առաջին վճռորոշմանն հաջորդեց յերկրորդը:

Սեկերեչը ակամա բացականչեց սարսափից:

Ցերկրորդ վճռորոշումն ասում էր. «Իրրև գոհացումն լեհական արքայազնության նախարարության դիմումին, վորով խնդրվում է՝ իրան հանձնել հունգարահպատակ Իոսիֆ Սեկերեչին և Պետրոս Կովաչին, անձերի, վորոնց փնտռում է լեհ դատարանը՝ մեղադրելով նրանց քրեական հանցանքների մեջ, Բերեգասի դատախազը վճռորոշում է. «ուղարկել նրանց յերկուսին Լեհաստան և հանձնել լեհ իշխանության ձեռքը»:

Նրանց դեպի յերկաթուղու կայարանն ուղեկցեցին յերկու պաշտնի խուզարկիչ: Գնան քայլ տարածության վրա առաջևից և յետևից քայլում էր մի-մի ժանդարմ: Կալանավորվածների հետ միասին վագոն նստան սկզբում միայն յերկու խուզարկիչները, իսկ գնացքը մեկնելուց մի քանի րոպե առաջ մտան ժանդարմները էլ: Կալանավորները չղթայված չէլին:

Ցերբ քայլում էին դեպի գնացքը, խուզարկիչները կիսաձայն խոսում էին իրանց մեջ, անվանելով միմյանց աղգանուններով: Նրանցից մեկին կոչում էին պարոն Գողելից, իսկ մյուսին—պարոն Բեսկիդ:

***

«Մունկաչի լրագիրը» հաղորդում էր.

Բոլշևիկները նորից սարքեցին արյունոտ բաղանիս: Արդեն մատնված անխուսափելի կործանման, այդ չարագործները դեռ ևս ցույց են տալիս կյանքի նշանները: Կիրակի առավոտյան ուղղափառ յեպիսկոպոս Կանթոռովիցը՝ բացօթյա՝ գոհացողական պաշտոնք էր կատարում կարմիր բանակի կործանման և վարչավարի մոտ քրիստոնեական դենքին հաղթանակ չնորհելու համար: Ի մեծ զայրույթ աղոթողների՝ արարողությունը խանգարեցին մի քանի սրիկաներ, վորոնք կանչ բարձրացրին և սկսեցին քար քաշել յեպիսկոպոսի վրա: Ժանդարմերիան և նրան ոգնության հասած

լեգեոներները կարճ ժամանակվա մէջ հաստատեցին կարգ, բայց ախտաժահնարանիվ մաղթանքը վերջացնել չյաջողվեց, վորովհետև նորին սրբազնութիւնը լուրջ վիրավորված եր մի քանի քարերից: Այս ցավալի դեպքի հետևանքով մի մարդ սպանված եր և քառասուն յերկուսը—վիրավորված եյին: Սրա մեղքն՝ ի հարկե՝ ամբողջապես ընկնում է բոլշևիկների վրա. լեգեոներները միայն իրանց պարտքը կատարեցին: 57 մարդ ձերբակալված է: Ցեղած անկարգութիւններն սկսողին՝ Պետիդե չենի բնակիչ Յուրկո Վնրխովին, վորին բանվորները կոչում են «մեկ աչքով Յուրկո», բանի չյաջողվեց: Ժանդարմական վարչութիւնը նշանակեց հինգ հազար կրոն նվեր այն մարդուն, ով ցույց կատ նրա բնակած տեղը:
Նորին սրբազնութիւնը մտավ բուժվելու Մունկաչի զինվորական հիվանդանոցը: Նրա դրութիւնը ծանր է, բայց կյանքին վտանգ չի սպառնում: Ամբողջութիւնս ցանկանում է նրան չուտափուլթ բժշկութիւն:

***

Առաջին համաղումարին մասնակցողներից պակասում եյին Սեկերեչը, Պետրոսը, Տիմկոն և Լակատոն: Նրանց տեղ կային քան նոր պատգամավոր: Ընդամենը՝ Մերձկարպատյան Ռուսիայի կոմունիստական կուսակցութիւնն յերկրորդ համաղումարին մասնակցում եյին յերեսունըհինգ պատգամավոր, տասնութը քանվոր և տասնյոթը հողագործ:
Պատգամավորները հավաքվել եյին, անտառի բացատում: Շուրջը՝ ձայն տալու տարածութիւնն ևս յին անում փորձված ընկերներ:
Իրրև նախապատրաստող ազդանշան պետք է ծառայեր լուրի ներկնակի կանչը:
Նիստը տևեց առավոտից մինչև յերեկո: Լուրի կանչը վոչ մի անգամ չլսվեց: Դուրս յեկավ, վոր Մոնդանը լավ կազմակերպող է: Պրոպագանդայի պաշտոնատունն այս անգամ մնաց առանց ավարի:
Դեղնած սաղարթի մեջին տեղ-տեղ յերևում եյին կարմիր և վառ-կանաչ տերևներ: Արոտը խոնավ եր, և յերբ մեկը նստում եր, խոտն նորից վեր եր թռչում: Համաղումարին մասնակցողներն ամբողջ որը կանգնած մնացին վոտքերի վրա:
Առաջինը խոսք առավ ծերունի Բոչկայը:

Նա չատ ծերացել եր, հզոր թիկունքը կորացել եր:
Նա խոսում եր ցած ձայնով, աչքերը գետնին ուղղած, վոչ մի անգամ չնայելով իր ունկնդիրներին:
Նա սկսեց «Մարքսից բերված ցիտատով»:
—«Նայիր հայելուն և կտեսնես դեմքդ» ասաց մեր մեծ ուսուցիչը, ծեր, բարի Մարքսը: Ցավ ինչ ենք մենք տեսնում հայելում:
Մենք տեսնում ենք մեր յեղբայրներին, վորոնք զղվելի կերպով վիճում են իրար հետ և խռովում: «Այդ քո՛ սխալն է, դո՛ւ չես հանցավոր, դո՛ւ չես մատնիչ»— մեղադրում ենք մենք իրար, ինչպես այն յեղբայրները Դրոչենից, վորոնք իրար վրա գնացին կացիններով, վիճելով, թե ո՞վ է հանցավոր՝ Իվանը, թե Ֆեդորը, վոր կարկուտը վոչնչացրեց ցանքսերը:
Ծերունին խոսեց այս անգամ չատ յերկար, խուլ ձայնով և թվում եր, թե նա աղոթք է կարդում: Արցունքները հոսում եյին նրա այտերով, յերբ նա խոսեց Տիմկոյի և Լավոչնեյի ապստամբութիւն այլ գոհերի մասին:
— Ցեղրայրական դերեզմանին մեկն ել ավելացավ: Մեր վչաի ծովում ածեցին ևս մի տակառ:
Մինչ ծերունին վողբում եր մեռելներին, Գոնդան անհամբերութիւնից անց ու դարձ եր անում: Ծերունուց հետո պետք է խոսեր նա: Վերջին ամիսները խիստ հետք եյին թողել նրա դեմքի վրա: Բերնի յերկու ծայրերին մի-մի խորունկ ծալքեր եյին դատել, և աչքերն ասես մթնել եյին: Բայց նրա թիկունքը չեր կորացել, նա իրան բռնում եր ավելի ուղիղ, կարծես նրա վողջ մարմինը ձգել եյին:
Հանդիսատ կանգնած եր նա, վոտքերը բացած, ձեռքերը դրպանները դրած և այնպես համառ եր նայում հավաքվածների դեմքերին, կարծես առաջին անգամն եր նրանց տեսնում:
— Լալու համար չենք յեկել այստեղ, ընկերներ, այլ խորհելու, թե ինչ ենք արել լա՛վ և ինչ—վա՛տ: Հավատարապես սովրենք և լավ, և վատ որինակներից: Իսկ սովրել պետք է շա՛տ քան, վորովհետև մեր առաջ ահագին աշխատանք կա: Պետք չե նվաել և արցունք թափել: Լավ հիշեցեք մի բան. մեզ չեն հաղթել: Այսոր մենք ավելի զորեղ ենք, քան թե կես տարի առաջ: Ցավ մենք ավելի զորեղ ենք արդեն միայն նրանով, վոր գիտենք հիմա թշնամու հետ հանաք անել չի կարելի, պետք է գիտնալ հաղթել նրան բաց կռվում:

Մոնղանը կանգնած էր՝ ձեռքերը կրծքին խաչած: Գոնդայի ամեն մի նախադասությունից հետո նա գլուխը շարժում էր հավանության ձևով: Համագումարի պատրաստության նա մասնակցեց Գոնդայի հետ միասին, գրեթե բոլոր հարցերն ամենամանրամասն կերպով նրանք միասին մշակեցին,— և այնուամենայնիվ նույնիսկ նրան զարմացրեց Գոնդայի ճառը: Իսկ մնացած լսողներն ինչպե՞ս զարմացած էլին: Ո՞ւր, ի՞րը, վորի՞ մոտ եր նա սովորել այդպես խոսել: Ընդամենը մի քանի ամիս առաջ նա դեռ աշխատում եր այտեղ՝ Պոլենայում, իրրև մեքենավար նեղագիծ երկաթուղու վրա— ո՞ւր կարողացավ նա այդպիսի իմաստություն ձեռք բերել:

Ամեն կողմից լսվում էլին հավանության բացականչություններ, և միայն յերբ Գոնդան սկսեց քննադատել Սեկերեչին, ներկա յեղողների մեջ սկսեց նկատվել վորոշ դժգոհություն:

— Յեթե Սեկերեչն այտեղ լիներ, դու ա՛յդ կերպով կխոսեյիր,— քիչ հետո՝ բացականչեց Մոչկայը:

— Այ, յես կխոսեյի վո՛չ այսպես—յես կասեյի ավելի խիստ, կարեց նրա խոսքը Գոնդան և անվրդով չարունակեց իր ճառը:

— Դե՛հ, մինե՛ կարելի՞ յե այդպես թքոտել հունգարական հեղափոխությունը և Լավոչնեյի գոհերին.— նորից, քիչ հետո, բացականչեց Բոչկայը:

Գոնդան մի պահ լռեց: Տիրեց խորին լռություն: Ոլգան՝ Տիմկոյի այրին, վոր մինչև այդ անշարժ կանգնած եր Մոնղանի կողքին, մոտեցավ Գոնդային: Նրա սև բոլորակներով չրջապատված աչքերն արցունքներից փայլում էլին:

— Հունգարական հեղափոխությունը,— նորից սկսեց Գոնդան,— կարիք չունի, վոր նրա սխալների մասին լռեն: Ընդհակառակը իր բոլոր սխալներին՝ նա մի մեծ գլուխ և համաչխարհային հեղափոխության պատմության մեջ: Լավոչնեյի ապստամբությունը մենք նրա համար անհրաժեշտ պատրաստեցինք, վոր չելինք վստահանում աչկարա խոստովանել մեր սխալները: Վախկոտություն կլիներ այդ լռությունը չարունակելը: Ցես չեմ ուզում վախկոտ լինել...

— Իսկ ո՞վ է վախկոտը: Դուք՝ յե՞ս: Դուք Լավոչնեյի ժեռաձները,—այտեղ ծերունին հայհոյեց անվայել խոսքերով:— Ֆեպ, յեղբայրիկս, դեռ մայրդ արգանդումն եր կրում, յերբ յես արդեն...

— Մեռելների յետեւ թաղնվել պետք չե՛,— հնչեց Ոլգայի ձայնը:

Ծերունին իր ականջներին չեր հավատում:

— Ինչո՞ւ յե ծերունին ընդհատում— բացականչությունները թափվեցին ամեն կողմերից:— Լեզուն պահել չդիտես: Վախենում է ճշմարտությունից:

Բոչկայը գլխից բռնեց: Անկարելի՛ յե այդ բանը: Նույնիսկ պատգամավորները՝ նրանք ել իր դեմ են...Նա անոգնական կերպով չուրջն եր նայում:

Գոնդան վստահ և հանդիստ չարունակում եր իր ճառը:

Հետո խոսք առավ մի ոտարերկրյա ընկեր՝ չեկ մորուքով և վանաչ ակնոցով: Նա խոսում եր գերմաներեն, իսկ Մոնդանը թարգմանում եր նրա խոսքերն ուկրաիներեն և հունգարերեն:

— Կոմունիստական Ինտերնացիոնալի յերկրորդ համաժողովը... Կոմինտերնի մեջ ընդունվելու պայմանները... Զեխոսլովակական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ճեղքվածքը... Զախի ճախանալը... Զեխոսլովակյան արդյունաբերող պրոլետարիատը... կազմակերպվել... սովորել... կազմակերպվել... սովորել. Ռուսինսկոյի չարժման արժանիքը... պատերազմի դեմ կամպանիա... զանցաուժյուններ կազմակերպչական աշխատանքում... յերկդիմի դիրք... սատանումները վճռական բոպեին... կազմակերպվել... սովորել... Լենինը... Մոսկվան... համաչխարհային հեղափոխության ճանապարհը...

Ոտարերկրյա ընկերը խոսում եր վոչ հասարակ լեզվով: Ցեվ վորքան ել աչխատում եր Մանդոնը նրա արտահայտածները պարզ դարձնել, բոլորը չկարողացան հետևել նրա մտքին: Սակայն նրա ճառը բոլորի սրտովն եր. բոլորն ել հավանացան նրանից, վոր ֆուսակցությունը միայն սխալներ չէ ունեցել, և վոր, չնայած սխալներին, կուսակցությունն ելի առաջ է գնում:

— Համաչխարհային հեղափոխություն...

Կենտրոնական Կոմիտեյի ընտրությունները հարթ անցան: Պենտկոմի քարտուղար ընտրեցին Գոնդային: Բոչկայը չընտրվեց կենտրոնական Կոմիտեյի մեջ— նա միայն յերեք ձայն ստացավ:

Ծանրության կենտրոնն անտարից գործարան տեղափոխվեց, գյուղից—քաղաք:

— Համաչխարհային հեղափոխություն...

***

Պոլինա դառնալու ճանապարհին Գոնդան թեվը ծերունուն թևին տվեց:

— Ուրեմն ինչպե՞ս պիտի լինի, ընկեր,— ասաց նրան:

— Դե, մի կերպ... Բանի դեռ կոմսի անտառներում վորսը չի սպառվել, քաղցած չենք մեռնի:

— Ձեռ դրա մասին չեմ ասում, ծերունի: Ձեռ կուսակցության մասին եմ ասում:

— Կուսակցությունն էլ մի կերպ կապրի:

— Իսկ դո՞ւք: Ինչո՞ւմ պետք է լինի ձեր աշխատանքը:

— Այն պիտի անեմ, ինչ վոր կուսակցությունն ինձ հանձնե: Ինձ վստահել կարող եք— գործ չանելուց չեմ դիրանա: Բայց ահա թե ինչ, եթե մեր խոսքը կուսակցության մասին է... Սխալ է, թե սխալ չէ այն, ինչ վոր մենք անում էյինք,—դրա մասին ես ել չեմ խոսի, բայց ելի այդ բան չի, վոր մեր այնպիսի ընկերներըը, ինչպես Սեկերեչն ու Պետրոս Կոմաչը, փառ՞ւմ են բանդում: Վազ թե ուշ նրանց կհանձնեն լեհ գահիճներին, ինչպես խեղճ Լակատային: Տիմկո, Լակատա... Առանց այն ել քի՞չ զոհեր ունենք: Սխալներ, սխալներ... Իսկ այն սխալ չի՞ լինի, եթե սրանք ել գահիճների ձեռքն ընկնեն: Ի՞նչ կասես:

Գոնդան մի քանի վայրկյան դանդաղեց պատասխան տալ:

Հետո՝ թեքվելով դեպի ծերունին՝ մի քանի խոսք չշնջաց նրա ականջին:

— Բա՛հ, մի՞թե,— ուրախությամբ բացականչեց ծերունին:—Ճիշտ ես ասում:

— Իհարկե, ճիշտ եմ ասում,— հանդարտ ասաց Գոնդան:

— Այսոր յերեկոյա՞ն.— հրճվում էր Բոչկայը:

— Այսոր յերեկոյան:

— Փա՛ռք քեզ, տե՛ր...

ՊԵՏՐՈՍ ԿՈՎԱՉՆ ԻՆՔՆ Է ՎԵՐՋԱՑՆՈՒՄ ԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ձերը յես կարդում եմ իմ՝ 1920 թվի անցքերին նվիրված դրքի ձեռագրերը, հաճախ մտածում եմ, վոր այդ պատմությունը չառաերին կարող է անհամանական թվալ—հենց նրա համար, վոր յես պարզ կերպով, առանց վորևե զարդարանքների պատմում եմ այն՝ ինչ վոր տեսել եմ,—այն անցքերի մասին՝ վորոնք կատարվեցին ուկրաինական փոքրիկ յերկրում՝ տեղված Լեհատանի, Ռումինիայի, Հունգարիայի և Չեխո-Սլովակիայի մեջ:

Այդ փոքրիկ յերկիրն այն ժամանակ կոչում էյին լուսամուտ դեպի Յեվրոպան: Այնտեղ կատարվող անցքերը, ինչպես հայելու մեջ, արտացոլում էյին ժամանակների փոփոխությունը, վոր տեղի ուներ լայն աշխարհում:

1920 թվականը:

Այդեն ինչ տատանվող եր և անորոշ:

Բանակի վերակացուն, վոր հսկում եր բանտարկվածին, յերբեք չդիտեր, արդյոք վաղը նրա կալանավորը յերկրի զեկավարներից մեկը չի՞ դառնա: Նա, ով կախաղաններ եր կանգնեցնում— այդ հետպատերազմյան դեմոկրատիայի միջադգային խորհրդանշանը,— յերբեք չէր կարող հավատացած լինել, վոր ինքը չի ճոճվի նրա վրա:

1920 թվին Լենինն արդեն դրոշ եր: Բայց այն, ինչ վոր դրված եր այդ դրոշի վրա, մենք միայն դեռ էյինք, միայն գլխի էյինք ընկնում, բայց չէի կարելի ասել, վոր մենք այդ դիտեյինք:

Դասակարգային կռվի վճռական շրջան...

Բուրժուական դեմոկրատիա— պրոլետարական դեմոկրատիա...

Բանվոր դասակարգի և գյուղացիության փոխհարաբերությունները:

Կուսակցության դերը:

Միայն հարևանցի կերպով էյինք մենք լսում այդ հարցերի մասին, բայց նրանք էլ, վորոնք մեր ուսուցիչներն էյին, իրանք դիտեյին միայն տարերքը:

Ձերը կարմիր դորքերը մտան Գալիցիա՝ կարպատներով ցնծում անցալ:

Այդեն մի մարդ հասկանում եր, թե ինչ նշանակություն կարող է ունենալ այդ պատերազմի յելքը, ամեն մարդ գլուխը խրեց քաղաքականության մեջ, ամեն մարդ կռվում եր, բայց միայն շատ քչերն իրանց պարզ հաչիվ էյին տալիս, թե պատանեչի վո՛ր կողմն են կանգնած իրանք: Մեր մերձավոր հարևանի մասին մենք չգիտեյինք, արդյոք ուղարկված չե՞ն նա ազգային կուսակցություններից մեկի կողմից, և հաճախ զաղանի խուզարկիչը, վորը մեզ ձերբակալում եր, հետո մեր բանակի մարդն եր դուրս գալիս:

«Ազատված» Մերձկարպատյան Ռուսիա...

Չեխ յեղբայրներ...

Իսկ ընդհանուր չեխոսլովակական պարմանները... Ձերբ 1921 թ. գարնանը ձերբակալեցին Մունկաչի զավառակալին թըղթաթղրատ կեղծելու համար, իսկ վոստիկանապետին տեղնուտեղը բռնեցին՝ ակնավաճառի խանութի կողպեքը կոտրելու ժամանակ, վոչ վոք չզարմացավ այդ պարոննների արարքներին, բայց բոլորին ապշեցրեց, վոր ելի՛ զբամ կեղծող զավառակալը և կողպեք կոտրող վոստիկանապետը բանտ են ընկել: Ժողովրդի մեծ մասին չեր յերևում այդ արդարադատության Թագուն կողմը. Ֆրանսիայի կողմնակից Չեխոսլովակական հանրապետության յերկու ասոցիանավորներն էլ ծառայում էին Հունգարիային, վորը Անգլիայի կողմնակից եր:

1920-ը...

Ցեթե մենք գիտնայինք այն ժամանակ, թե ինչպես պետք է կազմակերպել կուսակցությունը...

Ցեթե մենք գիտնայինք այն ժամանակ, թե ինչպես պետք է պատրաստել զինված ապստամբությունը...

Ցեթե մենք հասկանայինք այն ժամանակ, թե ինչ է լենինիզմը...

Ցեթե մենք ա՛յն ժամանակ բոլշևիկները լինեյինք...

***

Ամբողջ գնացքը խավարի մեջ եր սուզված, միայն տեղ-տեղ պլպլում էին մոմերի խղճուկ մնացորդները, ներսը՝ վագոնների տեղաններին կպցրած: Մենք հետներս ճրագ չունեյինք: Փոքրիկ, մութ կուպեյում այնքան նեղվածք եր, վոր յերկու ժանդարմները հազիվ կարողացան տեղավորվել իրանց հրացաններով և ավիններով: Նրանցից մեկը սայթաքեց, սասիկ գլորվեց ծունկը և թունդ խոսքով հայհոյեց: Ե՛լի՛ մեր գործանքին՝ մեզ չապտակեց նա:

Սեկերեչը կուչ յեկավ լուսամուտի մոտ՝ անկյունում: Ցես տեղավորվեցի հանդիպակաց անկյունում, դուռն մոտ: Բեսկիդը, իմ կողքին նստած, գլուխը կերպով գրուցում եր ժանդարմների հետ: Ներանք խոսում էյին չեխերեն, բայց ա՛հա՝ գնացքը չարժվելուց հետո մի քանի րոպե անցած, Բեսկիդը հանկարծ գարձավ իմ կողմը և, առանց այլևայլի բղավեց գերմաներեն.

— Ե՛յ, կովաչ, յեթե ուզում եք մի բան ասել, մի չչնչաք, այլ խոսեցեք, ինչպես խոսում են բոլոր մարդիկ:

— Ցե՞ս... Ի՞նչ...

— Ցես ձեզ չեմ մերժում, բայց չեմ սանում, յերբ մարդիկ չչնչում են: Պա՞րզ է: Դե՛հ, գնացե՛ք:

— Ո՞ւր:

— Առա՛ջնց խոսակցության: Հառա՛ջ...

Բեսկիդն ուղղակի դուրս հրեց ինձ կուպեյից, ինքը քայլեց իմ յետևից և դուռն ուժգին փակեց իր յետևից: Ինձ առջև հրելով, նա քշեց մինչև կորիդորի ծայրը և բացեց դուռը՝ դեպի դուրս:

Գաղ, խոնավ ոդի հոսանքը խփեց դեմքիս:

— Շուտ, չուտ,— կանչեց Բեսկիդը հենց ականջիս մոտ: Վոլորտի տեղում գնացքը դանդաղեցնում է ընթացքը— այնտեղ մենք պետք է վայր ցատկենք: Կհանդիպենք յերկաթուղու հսկման տանակ՝ №... ում: Դե՛հ, իջե՛ք ցածի աստիճանի վրա...

«Ուզում է սպանել փախչելուս րոպեին,—անցավ մտքովս:— Վոչ, վոչ...»:

Ցես ուժով փակեցի դուռը:

— Դուք կորցրել եք ձեր խե՛լքը:— կանչեց Բեսկիդը:— Կանգնեցե՛ք, յեթե ճամարտակե՛ք... Մի՛թե Մարիա Բոժոչի նամակը չի հասել...— բացականչեց նա, կարծես իրան հարց տալով:

Մարիա Բոժոչի նամակը...

Արդեն վերջին աստիճանի վրա կանգնած՝ յես հետ նայեցի.

— Իսկ Սեկերե՞չը:

— Յերկաթուղու հսկման տանակ՝ №...-ո՛ւմ է.— կանչեց Բեսկիդը:— Լսո՞ւմ եք, դանդաղեցնում են: Զդո՛ւշ...

Իմ վոտքերն աստիճանից բաժանվեցին— և յես կրծքով պատնեշեցի գետնին:

— Սատանա՛...

Գնացքը սլացավ, և պատյի յետևը՝ մի պահ փայլելով՝ ծածկվեցին յետևի յերկու կարմիր լապտերները:

Ցես փորձեցի վեր կենալ... Ձախ վոտքումս յես զգացի անհամատարած բութ ցավ:

«Կոտրված է,— վճռեցի յես և մի քանի րոպե անշարժ պատկած մնացի փոսում:— Սատանա՛ն տանի...»:

Սպառելով բոլոր անեծքներն ու վատաբանությունները, յես

յաց չեղա անզոր բարկությունից: Բայց այդ չերկար չտևեց: Կատաղությունը փոխվեց անսահման հոգնածության: Առաջին և չերեկ՝ վերջին անգամ իմ կյանքում ինձ տիրեց կատարյալ անհոգություն դեպի ամեն բան, ինչ վոր լինելու չե հետո: Ինձ համար ամեն ինչ կարևոր չեր, ամեն ինչ նշանակություն չուներ: Թող պահեն այստեղ, թող ղնդակահար անեն, ծեծելով մեռցնեն, կախեն,—բոլորը մեկ է:

Ցերկինքը ծածկված եր ամպերով: Շուրջը—խո՛ր մթություն: Սկսում եր թեթև անձրևել:

Ցես կծեցի շրթունքս— և վեր կացա:

— Դեհ, կինչանակի...

Ցես կաղում եյի, բայց վոտքս կոտրված չեր:

Սմեն մի քայլ ցավ եր պատճառում, բայց չես չարունակում եյի գնալ:

Ցեվ կես ժամ հետո, վոչ ավելի, չես դուռ չերկաթուղու հրակմանն տնակ՝ №...-ը:

***

Ցերևակայեցեք,— դիմավորեց ինձ Բեսկիղը:— Սեկերեչը չուզե՞ց ցատկել: Հիմա ժանդարմները նրան ծեծելով կսպանեն:

— Ներա համար, վոր չես փախա՞,— սարսափած ասի չես:

— Ցերե՛ք: Ներանք նրան չեն ներել, վոր չփախավ: Ներանցից ամեն մեկը պետք է սառնար հազարական կրոնա, չեթե չերկու կալանավորներն ել փախչեին: Այժմ, պարզ բան է, վոչինչ անել կարելի չե: Ինքյու կայարանում արդեն սպասում և կալանավորների եչալոնը, վորն ուղղվում է Կոչիցայից Լավոչնե և վորը պետք է չերկուսիդ ել իր հետ առներ: Ցեթե Սեկերեչին ճանապարհին ծեծելով չմեռցնեն, նրան, վոդջը մեկ է, կկախեն Լավոչնեյում: Ինչ անասուն է... Ախեղճ, հիանալի Սեկերեչ...

Բեսկիղը քննեց վոտքս:

— Կոտրված չե և նույն իսկ դուրս ընկած տեղ չկա,— վոքոչեց նա:— Բայց ելի ուռեցքը մեծ է: Մի-չերկու որ ձեզ պետք է անցընել պատված դրության մեջ:

Ցերկաթուղու պահապանն ինձ համար անկողին սարքեց և Բեսկիղը ճարպիկ կերպով դրեց վոտքիս պաղ կոմպրես:

— Դուք չերևի բժի՞շկ եյիք առաջ:

— Վոչ, իրավաբան:

Այն դնացքը, վորով Բեսկիղը պետք է չարունակեր ճանապարհը, մեկնում եր արշալույսին: Ամբողջ գիչերը մենք խոսեցինք անդադար:

Բեսկիղի իսկական անունն եր Դեղիդեր Ալդոր: Ցերկու տարի նա ուսումնասիրել եր իրավաբանություն, իսկ հետո նրան պինվոր եյին առել: Տասնչորսին ամիս մնացել եր իտալական ռազմաճակատում: Խորհրդային հանրապետության որերում աչխատել եր Բուդապեշտի խորհրդի VII ռայոնում, իսկ հետո մտել եր Կարմիր բանակի մեջ: Ջոկատամասի հրամանատար եր չեղել: Կռվել եր չեխերի հետ, կռվել եր ռումիններեի հետ: Սոլնոկի մոտ ռումիններըը նրան գերի եյին առել: Փախչելով՝ նա հինգամսյա թափառումներից հետո Ցուգոսլավիայի վրայով Վիեննա չեկավ: Նա ապրել եր Դրինցինդի բարակում, ջարդել եր վաչառեր, ավելի ուչ՝ ծախել եր փողոցներում լրագրիներ: Վիեննայից կուսակցությունն ուղարկեց նրան Սլովակիա: Վերջին կես տարին նա, կուսակցության հրամանով, գաղաքի խուզարկիչ եր Կոչիցե քաղաքում: Ցերկու չաբաթ առաջ Գոնդային հայդուկից՝ Մարիա Բոժոչի ոգնությամբ՝ տեղափոխել նրան և ելի չերկու նույնպիսի խուզարկիչների Կոչիցեյից Բերեզաս:

— Վաղ առավոտյան առաջ եմ չվում և վաղը չե մյուս որը Վիեննայում կլինեմ,—վերջացրեց նա իր ինքնակենսագրությունը:

Նա ինձ համարյա վոչինչ չկարողացավ պատմել այն անցքերի մասին, վորոնք տեղի եյին ունեցել իմ ձերբակալումից ի վեր:

Նա ծանոթ չեր վոչ Կոմինտերնի II համաժողովի վճիռների հետ, վոչ վորևե մանրամասնությունների հետ, վորոնք վերաբերվելին չեխոսլովակյան սոցիալ-դեմոկրատական կուսակցության պատակոման:

Նա չփոթված ժպտաց:

— Այդ հարցերով զբաղվելու համար իմ ժամանակը պակասում եր:

Ցեվ միայն այն ժամանակ նրա դժգույն դեմքին հայտնվեց կարմրություն և մուխ-կապույտ աչքերը վառվեցին, միայն այն ժամանակ նա մոռացավ իր չփոթմունքը, վոր այնպես հետ է մնացել ժամանակից, չերբ մենք խոսեցինք հունգարական խորհրդային հանրապետության մասին:

— Մայիսի յերկուսը... Կաչչո... Հարձակումն ռումինների դեմ... Սոլնոկի կամուրջը...

— Դեռ վո՛րքան պետք է տևի այս անիծյալ դաղթականությունը...—դառնությամբ թոռալ նրա բերանից:—Ուսանելին չարեցինք, ամիս արդեն չդիտես, թե ինչ սպասես, ինչի վրա հուսաս...

— Սովորել պետք է, ընկեր: Յերկար և շատ սովորել, վորպեսզի յերկրորդ անգամ ավելի լավ անեք:

— Այդ այդպես է... Բայց ի՞րը՝ վերջապես կգա այդ «յերկրորդ անգամը»: Մի տարուց ավելի է, վոր ապրում ենք իրրև վտարանդի: Ո՞վ կարող եր մոածել, վոր այդ բանը այդքա՞ն յերկար կտևե: Յեվ այժմ սկսվում է յերկրորդ տարին, վոչ թե «յերկրորդ անգա՛մը»:

Յես յերկա՛ր խոսեցի նրա հետ, աշխատեցի բացատրել նրան հեղափոխության ճանապարհները ու ետապները: Բեսկիզը լսում եր լարված:

— Այո, այո...—դլխով արավ նա.— բայց այնպես դժվար է սպասելը, յերբ հիշում ես, վոր արդեն մի անգամ իշխանությունը մեր ձեռքերում ունեցինք: Ի՞նչ ես սոխալված լինում տանել, յերբ մոածում ես, թե՝ գուցե՝ հենց այդ րոպեին դժբախտ Սեկերեչին կախաղան են բարձրացնում:

Յերբ սկսեց լուսանալ, մենք մտերմաբար մնաս բարև ասինք իրարու:

***

Ուռած վոտքս յերկու օրով անկողնին մեխեց ինձ:

Յերրորդ որը՝ արշալուսին՝ յես արդեն նստած եմ դնացքում: Մինչև Կոչիցե յես ճանապարհն անցա չորեչարժի վրա կոնդնած: Կոչիցեյում փոդով, վոր ինձ ուղարկել եր Գոնդան՝ Բեսկիզի միջոցով, յես գնեցի նոր զգեստ և յերկրորդ կարգի տոմսակ մինչև Բրատիսլավա:

Թղթերս, վոր նույնպես Բեսկիզն եր ինձ հանձնել, լիովին կարգին եյին: Կոչիցեյից մինչև Բրատիսլավա իմ թղթերը չորս անգամ ստուգեցին, բայց—ինչպես արդեն ասի—ներանք առաջնակարգ եյին: Յես նույն իսկ բաժակ ունեցի. մի եժանագին, գարտոնե պայուսակ, վորը յես լցրի լրագիրներով: Սրանն մարդ կարող եր համոզվել, վոր յես լուրջ, հաստատ մարդ եմ:

Հիանալի նոր վագոնի մաքուր կուպեյում՝ կաչվե բազմոցի վրա բազմել եր իմ միակ ուղեկիցը— առևտրական տան մի ներկայացուցիչ, ներս ընկած այտերով և սև, նոսր մազերով մի մարդ, համոզված դեմոկրատ և համոզված սիոնիստ: Նա, առանց լռելու, հերթով դովում եր այդ՝ մարդկության համար՝ փրկող յերկու սկզբունքները:

Յես սաստիկ ընկճված եյի:

Տիմկո: Լակատա: Գոտաեսման: Սեկերեչ:

— Դեմոկրատիա և սիոնիզմ...

Յես հաշվում եյի կիլոմետրները:

Հեռու, մի՛շտ ե՛լ հեռու եյի դնում խորհրդային սահմանից:

Արևելքից արևմուտք:

Առջևում վիեննան եր, սոցիալ-իստական դրախտը: Յես հետըհետե ավելի եյի մոտենում նրան, հետըհետե հեռանում եյի խորհրդային սահմանից:

— Յեվ վոր առանձնապես վեհ և սիոնիզմի գաղափարում... Ամեն մի րոպե յես ե՛լ հեռու յեմ խորհրդային սահմանից:

Յեվ ամենազզվելին այն եր, վոր ինչքան ավելի արևմուտք եյի դնում, այնքան ավելի՝ աշխարհի դեմքն այնպես եր, կարծես յերբեք պատերազմ չեղած չեր, յերբեք հեղափոխություն չեղած չեր:

Մեզ մոտ՝ Ռուսինսկո՛յում եմ... Իսկ այստեղ ամեն ինչ ընթանում է հին ճամբով:

Այն հարցը, վոր ինձ տանջում եր, այստես և դասավորվում իմ դիտակցության մեջ. ի՞նչպես պետք է հասկանալ, վոր ինչքան ավելի մոտիկ արդյունաբերական կենտրոնին, այնքան քիչ են հեղափոխության հետքերը: Յես դիտեմ, վոր չղթան կտրվում է այն տեղից, ուր նրա ամենաթույլ ողակն է: Բայց յես դիտեմ նույնպես, վոր պրոլետարական հեղափոխության դրոշը կրում է արդյունաբերական պրոլետարիատը... Ինչպե՞ս կարելի յե այդ:

Ինչո՞ւ Արևելքը և վոչ թե Արևմուտքը:

Մի՞թե բոլշևիզմը իսկապես միայն Արևելքի սոցիալիզմն է:

Յեվ մի՞թե Արևմուտքի պրոլետարիատը նորի՞ց վդին դնե կապիտալիզմի լուծը...

— Դեմոկրատիայի հարցը սերտ կերպով կապված է սիոնիզմի հարցի հետ, վորը դաղարել է ցնորք լինելուց և դարձել է դործնական լուրջ հարց...—հառնում եր ականջիս իմ ուղեկցի ճաքած ձայնը:

Աշնանային մռայլ յերեկո յեր, յերբ մեր առաջ պլպլացին Բրատիսլավայի առաջին կրակները: Սլովակիայի մայրաքաղաքի վերև յերկնակամարը ներկված եր կարմիր հրդեհացոլքով:

Այո, սա արդեն Ռուսինակո չե, սա արդյունաբերական մեծ քաղաք ե, վորը յերկինք ե ուղղում բազմահազար էլեկտրական լամպերների կրակները:

Արևմուտք:

Մեր գնացքը թռչում-մտնում ե կայարանը և կանգ ե առնում:

Յեվ ահա այն վայրկյանին, յերբ անիվները դադարում են պտտվել, անսպասելի կերպով՝ ասես մի ազդանշանով՝ ամբողջ կայարանը սուզվում ե խավարի մեջ, ապա և՝ ամբողջ քաղաքը՝ Սլովակիայի մայրաքաղաքը:

Անթափանց խավար:

Միայն վագոնների լուսամուտներից պերրոնի վրա յե ընկնում մի թույլ լույս, վորը լուսավորում ե չարքով կանգնած ժանդարմների սվիններըե:

Վախեցած կանչեր: Կնոջ հիստերիկական ճիչ: Սոսափյուն:

— Ի՞նչ պատահեց: Աստվա՜ծ իմ...

— Ոգնեցե՜ք, ոգնեցե՜ք...

— Վոստիկա՜ն... Վոստիկա՜ն...

— Բեռնակի՜ր...

— Տե՜ր իմ, աստվա՜ծ...

— Ոգնեցե՜ք: Ոգնեցե՜ք...

Վագոնների մոտ վայրենի խառնաշփոթություն ե: Ժանդարմները՝ հրացանի կոթերի հարվածներն առատորեն չտայլելով, կարգ են հաստատում:

— Անցագրերնե՜ր:

Ջեռքի լապտերիկներով լուսավորում են նախ դեմքերը, ապա թղթերը:

— Վոստիկա՜ն... Վոստիկա՜ն...

Անցնում ե բավականին ժամանակ՝ մինչև վոր ինձ հաջողվում ե՝ հրմտելով՝ յերկրի դռան հանել: Փողոցը սև ե, ինչպես ճյութ:

Ի՞նչ պատահեց: Ի՞նչ կարող եր այստեղ պատահել:

Անսպասելի կերպով մթության մեջ մեկը հայհոյվում ե վրաս և ինձ դրկում:

— Գնա՛ց:

— Գո՞տեաման: Դու... կենդանի՞ յես:

— Ա՛ստ յժմ— ասի: Միայն մի քիչ թթվեցի յերկար սպասելուց:

Յերեք րոպե մեջ չոլ ծրող անգամն եմ դուրս գալիս քեզ դիմավորելու: Ո՞ւր եյիր դու, դրողը քեզ տանի, այսքան յերկար ժամանակ զեզերում: Գյուլային ասելով՝ դու ամենառաջը յերկու որ առաջ այստեղ պետք ե լինեյիր:

— Գյուլային:

— Ա՛յո, Գյուլային: Նա յերեկ յերեկո մեկնեց Վիեննա: Յեվ կարո՞ղ ես յերևակայել— տյուրմա մասնակցեց Ռուսինակոյի համազոմարին: Այնտեղ խոսել և զերմաներեն: Այժմ յերևի Վիեննայումն ե, ուր քեզ ել են սպասում:

Ջարմանքից՝ յես դանդաղ եմ ուշքի գալիս և ելի մի անգամ դրկում եմ Գոտտեամանին:

— Ուրեմն դու կենդանի՞ յես, սիրելի յեղբայր:

— Հիմա՛ր հարց:— պատասխանում ե Գոտտեամանը զերազանցությամբ:— Դեհ, դնանք: Վերջապե՞ս դու այստեղ ես: Յերեսակայիր՝ Գյուլային ուզում եր ինձ համար ել փախուստ տարքել, բայց վորովհետև յես նրա ծրագիրները չգիտեյի, ուստի կանխեցի նրան և փախա իմ սեփական ուժերով,— պարզ բան ե՝ դրպանումս առանց մի կոպեկ ունենալու: Դեռ բախտ ունեցի, վոր... Ասենք, դրա մասին հետո: Դեհ, չո՞ւտ քայլենք: Ի՞նչ ե այդ, կաղո՞ւմ յես:

— Ճուտ ասա, թե ինչ ե այստեղ՝ Բրատիսլավում՝ կատարվում:

— Ընդհանուր գործադուլ ե: Քաղաքակա՞ն գործադուլ: Ղեկավարությունը մեր ձեռքումն ե: Հաստատո՞ւն տղերք են այստեղ՝ Բրատիսլավում: Յեվ առհասարակ... Բայց, ապասիր, ասեմ ամեն բան կարգով. ուտելիքը խիստ են վրանզելին— այս մեկ: Չեխական «ձախը» պատգամավորությունն ե ուղարկում Մոսկվա— այս յերկրորդ. Իտալիայում բանվորները գրավել են գործարանները— յերրորդ: Անգլիայում հանքի բանվորների գործադուլ ե— չորս: Ելի շատ բան կա, մնացածի մասին—տանը:

Մեզ կանգնեցնում և պահակախումբը՝ սվինները հրացանների

ծայրերին դրած՝ և պահանջում է մեր անցագիրները: Վերջին-ներս, ինքն լսած ինքյան պարզ է, որ վոչ մի կասկածի տեղիք չենք տալիս:

— Լսիր,— սկսում է Գոտեհամանը, յերբ ժանդարմները հեռանում են,— յես քեզ պետք է մի բան խոստովանեմ:

— Ե՞:

—Քեզ պետք է խոստովանեմ, վոր յես իսկական անասուն եմ,—կատարյալ համոզվածության յեղանակով ասում է Գոտեհամանը:—Յերևակայիր. վարչավայր մոտ կրած մեր պարտությունից հետո յես բանաում եմ— դեռ ավելի մեծ չափով —այստեղ գալուս ժամանակ կարծում էի, վոր այժմ արդեն ամեն ինչ վերջնականապես կորած է: Ա՛յ— անասո՛ւն: Բայց չէ՞ վոր իսկապես միայն ա՛յժմ է սկսվում իսկական բանտը: Զգիտեմ, ճիշտն ասած, թե ո՛ւմ խոսքերն են, բայց թող յես յերկյս անիծված լինեմ, յեթե իրավացի չէ այն մարդը, վոր ասել է. «Բայց դարձյալ պատվո՛վ է»: Պատվո՛վ է... Յեվ թեկուզ այդ սրիկաներն ամեն ինչ տակն ու վրա անեն—դարձյալ պատվո՛վ է:

ՎԵՐՋ ՅԵՐԿՐՈՐԴ ԳՐՔԻ

ՅԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՈԳՏԻՆ

Պյոտր Կովաչը Բերեզասի բանտից վախչելուց հետո, յերբ յեկավ Բրատիսլավա, սլովակյան մայրաքաղաքի բանվորները դոբծադուլ եյին հայտարարել: Յերեկով գործարանային ծխնելույզների գոլշ ծուխը չեր քաղաքում աշնանային յերկնքի ղժգույն կապտությունը, գիշերները ելեկտրականության պայծառ լույսը չեր ցրում վաղաժամ խտացած խավարը: Տարվում եր ընդհանուր գործադուլ:

Գործադուլն առաջացել եր շատ չնչին բանից· դա իրոք չնչին բան եր, համեմատությամբ այն դրության հետ, վոր Բրատիսլավայի բանվորները քաշում եյին դրանից առաջ: Բայց և այնպես այդ չնչին բանը...

Սակայն, ամեն ինչ հաջորդական կարգով: Ամենից առաջ պետք է պատմել «ոպերային պարահանդեսի» մասին:

Իհարկե, չեր կարելի այդ պարահանդեսն անվանել «ոպերային»,—Բրատիսլավայում յերբեք ոպերա չի յեղել: Բայց հայտնի չե, թե ինչու, ««ոպերային պարահանդես» անվանեցին բարեգործական այն յերեկոն, վոր կազմակերպել եյին սլովակյան մայրաքաղաքի քաղաքացիները պատերազմի հաշմանդամների ոգուին: Այդ յերեկույթի կազմակերպման նախաձեռնությունը պատկանում եր «Սլովակիայի գործերի տնօրեն մինիստր» չեխ պարոն Միչուրային: Մինիստրության չինովնիկները, բանակի սպաները և տեղային դրամական տուզերը վո՛չ մեկն այլակցեցին այդ ձեռնարկությանը, այլև իրենց յեռանդուն ջանքերով դերազանցեցին նորին դերազանցությանը: Հանրապետության չինովնիկները, վորոնք մոտիկ անցյալում ավստրիական, կայսերական կամ հունգարական արքայական չինովնիկներ եյին ու այն սպաները, վորոնք յերկու տարի առաջ պճնազարդ քայլում եյին կայսերական համազգեստներով, վոգևորությամբ ձեռնմուխ յեղան այն գործին, վոր կենդանացնում, հարություն եր տալիս «հին, յերանելի ժամանակներին»: Բանկիրները ու գործարանատերերը, վորոնք ստիպ-

ված էին յերկու տարվա ընթացքում թագցնել իրենց դիզած հարստութիւնը, կարող էին վերջապես անպատիժ կերպով ցույց տալ ամբողջ աշխարհին, թե ինչպիսի չահեկան ձեռնարկութիւն և պատերազմը:

Ամսագրո-հումորական արտաքին գործերի մինիստրութեան նախկին ռեֆերենտ—տոնակատարութեան գլխավոր կազմակերպիչը—դոքտոր Կոլարը, վճռեց ամուր հիմք դնել իր հանրապետական կարիերայի համար: Իսկ նա շատ լավ գիտեր, թե ինչպե՛ս պետք է գործել:

Դեկորներն իրենց չքեղութեամբ ու փայլով չէին զիջում նախկին կայսերական գահանիստ քաղաքի թատրոնների բեմական արդուզարդին: Մետաքս, թավիշ, արևագարձային բույսեր: Պարիզում պատվիրված պարահանդեսային զգեստները: Բրյուսելյան ժանյակները, հոյակապ փրակները, փայլուն համազգեստները: Վոսկին ու թանկագին քարերը շողշողում էին էլեկտրական լույսի ծովում: Հատուկ գնացքով Պրազայից արտիստներ յեկան:

Պատերազմի հաշմանդամների ոգին...

Դոքտոր Կոլարը նախկին արքայական ոթյակից դիտում էր հավաքված հասարակութիւնը: Նրա մեջ ցանկութիւն ծագեց՝ համբուրել ինքն իրեն:

«Հիրավի, կարելի յե...հիրավի, արժե դեռ ապրել նաև հանրապետական կարգերում»,—մտածում էր նախկին կայսերական և արքայական ռեֆերենտը:

Բեմը զարդարել էին չեխ-սլովակյան դրոշներով և դաշնակից Ֆրանսիական հանրապետութեան դրոշակներով: Յերկու ոթյակ հատկացրել էին Ֆրանսիացի սպաներին: Վերջիններից մեկը, հուսար գնդապետ, կռացած ոթյակի բարյերի վրա, դրուցում էր մի նիհարի ոգնականի՝ սոցիալ-դեմոկրատի հետ:

— Սքանչելի յե· Թովիչ յերեկույթ է·— լսվում էր ամեն կողմից:

Առաջինը հանդես յեկավ սլովակյան մի դերասան: Նա արտասանում էր հայրենասիրական վոտանավորներ: Նրան փոխարինեց պարիզյան մարմնեղ յերգչուհին: Վերջինս յերգում էր «փոքրիկ լեգեոնների մասին» յերգը: Փոքրիկ այն լեգեոնների մասին, որը Սիբերի ձյունապատ մերկ հարթութիւններում կռվում էր ցնցոտիներ հագած, կեղտոտ, արյունարբու բոլշևիկների դեմ: Փոքրիկ լեգեոնների մասին...

Ժանդարմական ռոտմիստրը մտավ այն ոթյակը, որտեղ կայազորի պետը զվարճանում էր յերկու յերիտասարդ սպաների և լանջաքաց յերեք տիկինների ընկերակցութեամբ: Ռոտմիստրն ինչ-որ բան չշուկով հայտնեց կայազորի պետին: Սա անմիջապես վոտի կանգնեց: Մի րոպեյից նա արդեն զրուցում էր հարևան ոթյակում մինիստր Միչուրայի և Ֆրանսիացի գնդապետի հետ: Դահլիճում սկսվեց փսփսուկ առաջանալ: Կայազորի պետը դուրս կանչեց պարտերից «Պրոպագանդի գրասենյակին» պետի տեղակալին և նրա հետ միասին դուրս գնաց միջանցք: Միչուրան Ֆրանսիացի գնդապետի հետ մնաց ոթյակում:

Յերկուսն էլ ժպտում էին և նրանց յերկուսի տեսքն էլ անվըրդով հանդիստ էր: Ամբողջ թատրոնը պետք է տեսնի, որ առանձին ոչինչ տեղի չի ունեցել, որ ամեն բան շատ կարգին է:

Մի րոպեյից ոթյակ վերադարձավ նաև կայազորի պետը: Այժմ նա էլ էր ժպտում, նա նույնպես անվրդով հանդիստ էր:

Ամեն բան շատ կարգին էր:

Այդ ժամանակ հաշմանդամները մոտեցան թատրոնի հրապարակին: Հաշմանդամներն էլ վճռեցին նույնպես զվարճանալ պարահանդեսում: Նրանք էլ պեղեցկանալու, փայլելու բան ունեին: Կաղ, կույր, սալաջարդ, դողդողջուն ձեռներով ու գլխով, բոլոր նրանք, որոնց այլանդակել ու հաշմել էր պատերազմը, նրանք բոլորը յեկել էին ցույց տալու իրենց խեղանդը և պարծենալու իրենց կեղտոտ լաթերով, վորոնցով պարզևատրել էր նրանց հաշտութիւնը:

Լուսյով վողողված բեմից յերգչուհին խոնջացած յերգում էր փոքրիկ լեգեոների մասին, իսկ թատրոնի կիսախավար հրապարակում, աչնան տաղտուկ բարակ անձրևի տակ, հերթապահ վոսկեհական սպան հնչուն ձայնով հրաման տվեց·

— Յրվեցե՛ք:

Հաշմանդամները չէին կատարում նրա հրամանը: Ցեվ նրանք, ովքեր զրկվեցին ձեռներից, պաշտպանելով միասնութիւնը, և նրանք, ովքեր հաշմանդամ դարձան, պայքարելով միասնութեան դեմ,—կայսրի զինվորներն ու Մասսարիկի լեգեոներները խոնվել էին, այժմ կազմում էին մի բանակ: Անթացուպեր, արհեստական վոտ ու ձեռներ, այլանդակված բռունցքներ փայլեցին ոդի մեջ, սպառնալով սենահատուկ սպային: Ցեվ բարձրաձայն անեծք—աղաղակները խլացրին դոռոզ, ինքնավստահ հրամանը՝

— Յրվեցեք!

Վերջին հինգ տարվա ընթացքում չեխերը, սլովակները և հունգարները շատ անգամ խեղել, հաշմանդամ են դարձրել իրար: Այժմ բազմաթիվ «վճռաւոր ճակատամարտների» այդ կենդանի հուշարձանները միավորվեցին, որ ուս-ուսի տված, գրոհի գնան հրավառված թատրոնի վրա, գրոհեն նրանց դեմ, ովքեր հինգ տարի միասին քշում էին նրանց իրար դեմ:

Սերբերում յերկու տարի բոլշեւիկների դեմ կռված լեգեոնները խռպոտ ձայնով բղավում էր, ճոճելով անթացուպերը:

— Լենին! Լենին!

— Ցեւ քաչվիը!.. Ցրվեցեք!..

— Լենին,—բղավում էր, վորպես պատասխան, հաշմանդամների բանակը:

Վոտիկանական շրջափակի դիծն ընդհատվեց, և անթացուպերն ու արհեստական վոտներն սկսեցին թըրըխթրըխկալ թատրոնի սանդուխքների վրա:

— Լենին! Լենին!

— Կրակ!

Գնդացիրը մի քանի րոպեյում մաքրեց հրապարակը: Պատերազմի հաշմանդամների ոգին կազմակերպված յերեկույթը նրանցից չատերին ընդմիշտ ազատեց տառապանքներից:

— Ո՛-ոխ!... Ո՛-ոխ!...

Սպանվածներին ու վիրավորներին արագ հավաքեցին, հեռացրին. մաղմղուն անձրևը լվաց, տարավ արյունը, և առավոտյան դեմ, յերբ վերջացավ պարահանդեսը, այդ վայրագության հետքն անգամ չկար:

«Հանրապետությունն աչալրջորեն պաշտպանում է իր քաղաքացիների ապահովությունն ու հանգիստը»:

Տեղական թերթերը տպեցին ընդարձակ հաշվետու-հոդվածներ պարահանդեսի մասին, ճոխ ծրագրի մասին, չքեղ արդուզարդի մասին և դուռ արդյունքի մասին, վոր կազմում էր յերկու հազար հարյուր յոթանասուն քրոն:

Ամեն բանի մասին գրեցին թերթերը, նրանք մոռացան հիշատակել միայն, վոր յերեկույթից ստացված յերկու հազար հարյուր յոթանասուն քրոնով կարելի յեր մի ամբողջ ընթացքում կերակրել, լավագույն դեպքում, հինգ հաշմանդամի, այն էլ միմիայն չորհացով: Թերթերը հիշատակություն չեյին անում նաև այն, վոր այդ հիշարժան յերեկույթին, տված հաշմանդամների թիվը պակասեց ատանուչորս մարդով:

Հանրապետության զեկավարները հոգացին, վոր հանրապետության տերրիտորիայում բոլոր թերթերը լռություն պահեն: Բայց հանրապետական ցենզուրայի իշխանությունը ավտորիտական թերթերի վրա չեր տարածվում: Առաջին հաղորդագրությունը բեզդրծական պարահանդեսի մասին յերեկոյան յեկավ Վիեննայում հրատարակվող «Ռոտե Ֆանե» լրագրում: Հետևյալ որը հանրապետական վոստիկանությունը ձերբակալեց Բրատիսլավայի կոմունական թերթի խմբագրին և անմիջապես ձգեց նրան ավտորիտական սահմանադիծ այն կողմ:

Հենց դա յեր այն չնչին բանը, վոր բանվորներին հիշեցնում եր հանրապետության կողմից նրանց չնորհված բարիքների մասին:

Մինչև վոր պրոֆմիությունների խորհուրդը գլխի ընկավ, թե պետք է թռուցիկ բաց թողնել՝ բանվորներին հանգստացնելու համար, գործարանների կեսը արդեն գործադուլ եր հայտարարել: Սոցիալ-դեմոկրատների թռուցիկի մեջ ասվում եր, վոր բոլշեւիկների պարտությունը Վարշավայի մոտ նոր եջ և բացում բանվորական չարժման պատմության մեջ:

Կարդալով այդ թռուցիկը, աչխատանքը թողին նաև այն գործարանները, վորոնք դեռ վարանում եյին:

Քաղաքը թաղված եր խավարի մեջ, յերբ Պյոտրն իջավ գնացքից: Յերկու ժամից հետո նորից բռնկեց լույսը. գործերը գրավեցին ելեկտրականությանը: Առաջվա պես ելի լույս չկար բանվորի Տանը, վորտեղ նիստ ուներ գործադուլային կոմիտեն:

— Պետք է հրատարակել կոչ՝ ուղղված զինվորներին,—առաջարկեց Պյոտրը, վորն իր գալուց անմիջապես հետո կոոպտեղակալի կարգով կցվեց գործադուլային կոմիտեին:

Առավոտյան դեմ կոչն արդեն տպագրված, պատրաստ եր: Գործերը գրավել եյին տպարանները, թուլլատրվում եր տպագրել միայն պրոֆխորհրդի կոչերը, ուղղված գործադուլի դեմ, ուստի, Պյոտրի կոչն տեխված եյին տալել ձեռքի զաղդյահի վրա: Այդ զաղդյահը վաղուց ի վեր ընկած եր բանվորի Տանը: Վոչ վոք չեր ոգտվում նրանից, բայց և վոչ վոք էլ չեր հեռացնում այն այնտեղից: Ցեվ ահա, վորպես հաշմանդամ, վորը յերկար ընդմիջումից հետո նորից զենք է վերցնում, զաղդյահը կրկին գործի անցավ: Գոտեմարտն ուրախ պատեցնում եր նրա բռնակը:

Ցերեկվա ժամը յերկուսին ժողով եր հրավիրված մինիստրության չենքի դիմացի հրապարակում: Թերթերը լույս չտեսան, և

դործադուլավորներին իմաց տվին լրատարների միջոցով: Յերեկվա ժամը մեկի մոտ, ամեն կողմից սկսեցին հավաքվել մարդիկ: Հրապարակն ողակեցին ժանդարմների կորդոնով, իսկ դրա յետևում դրին լեգեոներները՝ զնդացիրների հետ:

— Յետ քաշվիր! Յրվիր!

Գետափի կողմից ամբոխի վրա արշավեցին ձիավոր վոստիկանները:

Կանայք նետվում էին ձիերի վոտների տակ:

— Յետ! Յետ քաշվիր!

Վոստիկանների վրա քարեր չպրտվեցին: Մինիստրության շենքի դիմացի հրապարակում ճթճթաց առաջին զնդացիրը: Առաջին կրակում էին ողի մեջ:

— Յետ! Յետ!

Վոստիկանությունը և պրոֆխորհուրդն աշխատում էին ամենայն յեռանդով: Պրագա և Արևելյան Սլովակիա ուղարկված համբավատարներին իջեցրին գնացքից: Պրագայից հատուկ գնացքով ուղարկեցին լեգեոներները: Պրոֆխորհուրդը յուրաքանչյուր ժամ բաց եր թողնում նոր կոչեր:

«Մոսկվան ուկազներ այլևս չի դրի մեզ»:

«Ռուս բանվորներին մատնեցին չքավորության: Սլովակիայի բանվորները մատաղիր չեն իրենց ձեռքով դերեզման փորելու իրենց համար»:

Ելեկտրականացում և քաղաքային տրամվայում բանվորներին փոխարինեցին գինվորներով: Յերրորդ որն ապդարնակության մնաց առանց հացի:

«Պետք է դիմանալ,—հորդորում եր գործադուլային կոմիտեի լոզունգը,— մինչև մեզ ողնության կգան Պրագայի, Կլադնոյի, Ռայխինբերգի, Արևելյան Սլովակիայի և Մերձկարպատյան Ռուսիայի բանվորները»:

«Ձեզ հիմարացրին, ձեզ ստորաբար խաբեցին,—ասում եր Պրոֆխորհուրդը:— Ամենքը ձեզ Թողին բախտի քմահաճույքին: Ձեր դեմ է ամբողջ հանրապետությունը»:

«Մենք ընտրեցինք չափազանց հարմար ժամանակ,— զեկուցագրում եր Պրագա մինիստր Միչուրան: Մեր «Պրոպագանդի գրասենյակը»...

Կառավարություն սկսեց յեռանդով «կարդ հասատաել»: Սլովակիայի և Մերձկարպատյան Ռուսիայի պրոլետարիատը չեր կարդաղ վոչ մի ողնություն ցույց տալ գործադուլավորներին, իսկ չեխական պրոլետարիատը չհասկացավ, վոր կարիք կա իր ողնությանը: Բրատիսլավայի գործադուլը մնաց կղզիացած:

Վեց որ ևուղ գործադուլից հետո բոլոր գործարաններն իրար յետևից գործի անցան, առանց վորևե պայմանի: Յոթերորդ որվա առավոտյան դեմ, քաղաքը նորից ընդունեց իր սովորական տեսքը:

Նույն որը յերեկոյան, սկսվեցին ձերբակալությունները:

Գործադուլի վեցերորդ որը յերեկոյան կայացավ գործադուլային կոմիտեի նիստը: Կոմիտեի տասնումեկ անդամներից ժողովին ներկա չեր միայն հինգ մարդ: Թուսցիկների համար Թուղթ մատակարարող առևտրականը նույնիսկ նեղա չթողեց այն տպագրվելին, վոր յեկել եր ապրանքի:

Պրագայից ուղարկված ընկերը,—«մարքսիստական ձախ թևի» լիդերներից մեկը,—խորհուրդ եր տալիս անմիջապես դադարեցնել գործադուլը:

Պյոտրի առաջարկությամբ, հետևյալ որը հրավիրեցին գործարանային լիազորների ժողով: Բայց ժողովը չկայացավ, վոչովհետև միայն յերկու գործարան եր ուղարկել իր ներկայացուցիչներին: Յերեկոյան դեմ բանվորի Տան մեծ դահլիճում հավաքվեցին, վերջապես, ութ գործարանի քառասուն լիազորներ:

Ձերեք որ առաջ դահլիճը նեղ եր թվում: Այժմ հսկայական այդ դահլիճում սակավամարդ ժողովն ուներ չափազանց վողբալի տեսք:

— Ի՛նչ արած!

Գործադուլային կոմիտեի անունից խոսում եր Պյոտրը: Նա չեր պահանջում՝ շարունակել գործադուլը, բայց պնդում եր, վոր նահանջը կատարվի կազմակերպված կարգով:

Այս առաջարկի եությեան առթիվ արտահայտվեցին համարյա բոլոր ներկա յեղողները: Ամենքն էլ միաձայն հայտարարեցին. ուշ է! Բանվորները պարտության մեջ մեղադրում էին գործադուլային կոմիտեին: Գործարանատերերը հրաժարվում էին բանակցություններ վարելուց, իսկ պրոֆխորհուրդը մերժեց բանվորների խնդիրը, միջնորդելու մասին:

— Դիմեցեք Լենինին,—չարախնդությամբ ասում եր սոցիալդեմոկրատ պատգամավոր Վիտոլիսը:—Ձե՞ վոր դուք մեզ համարում եք խուլիգաններ:

Խորհրդակցությունը տևեց մինչև ուշ գիշեր, բայց վոչ մի վորոշման չհանգեց:

Ժողովից հետո Պյոտրը չգնաց այն բնակարանը, որը հատկացրել էր նրան գործադուլային կոմիտեն, այլ պառկեց քարտուղարության սենյակում դրված սեղանի վրա: Գոտեմանը ծածկեց նրան իր վերարկուով և ինքն էլ տեղավորվեց նրա կողքին: Զափազանց հոգնած, նրանք վոչ մի խոսք չփոխանակեցին իրար: Յերեք որ ու դիշեր նրանք աչք չէյին փակել և այժմ քնեցին, մեռածների պես:

Շրջապատելով բանվորի Տունը, վոստիկանությունը ներս խուժեց քարտուղարության սենյակը: Վոստիկանները գործի դրին իրենց բռունցքները, վորպեսզի մի կերպ կարողանան արթնացնել քնածներին: Գոտեմանը սրբելով իր արնոտած քիթը, գլխով սխուր նշան արավ Պյոտրին: Վոստիկանները վոչ հարցաքննեցին, վոչ էլ նույնիսկ փաստաթղթեր պահանջեցին,—նրանք ուղղակի տարան նրանց Պրեֆեկտուրայի չենը:

Այն խուցը, վորտեղ նստեցրին Պյոտրին ու Գոտեմանին ծայրեծայր լիքն էր կալանավորներով: Մեծամասնությունը բոլորովին անծանոթ մարդիկ էյին. այնտեղ կային և քաղաքական եմիգրանտներ, վորոնք վոչ մի կապ չունեյին գործադուլի հետ, և տարերկրացի բանվորներ, վորոնց վոստիկանությունը ձերբակալել էր «ի դեպս ամենայնի»:

Գոտեմանը դժվարությամբ տեղ գտավ իր համար հատակին: Պյոտրը տեղավորվեց նրա կողքին: Մի րոպեյից նրանք արդեն քնած էյին:

Առավոտյան ժամը վեցի մոտ, նրանց նորից արթնացրին վոստիկանները:

Աշնանային արևային սքանչելի առավոտ էր: Արևի պայծառ շողերի տակ դյուրահաճո տեսք ուներ նույնիսկ վոստիկանական վարչության սխուր դորշ բակը, ուր դուրս բերին ձերբակալվածներին: Բայց նրանց դրությունը «դյուրահաճո» չէր: Բակում կային ութսուն ձերբակալվածներ: Քնկոտ աչքեր, չածիլած դեմքեր, կեղտոտ, պատառոտված հագուստ: Իսկ նրանց չուրջը՝ կրկնակի թվով վոստիկաններ, գիրուկ և քնից կշտացած: Դարպասի մոտ դրված էր յերկու զնդացիր. մեկի բերանն ուղղված էր դեպի բակը, մյուսինը՝ դեպի փողոց: Բակն ամեն կողմից շրջապատված էր անանցք պարիսպով: Ձերբակալվածները չարվեցին՝ չորս-չորս իրար յետևից: Նրանց շրջապատեցին վոստիկանները: Ալ ու ձախ կողքից հետիոտն, իսկ առաջից ու յետևից ձիավոր:

Դարպասը բացվեց: Թափորը շարժվեց:

— Դրողը տանի, ո՞ւր են քշում մեզ, ի՞նչ ես կարծում,— հարցրեց Գոտեմանը Պյոտրին:

— Ով գիտե, դուցե, դատախազի մոտ: Բայց կարծեմ՝ վոչ: Զե՞ վոր մեզ դեռ նախապես կարզին չեն ծեծել...

— Ե՛յ, դու! Լեզուդ քիզ քաշիր!

Ցեվ վոստիկանի ուսինե մահակի հարվածը խլացրեց Պյոտրին:

— Սրիկաները մեզ տանում են Հունգարիա,—չշնջաց Գոտեմանը քիչ հետո:—Սրանց որը...

Առաջաչար վոստիկանները հասան Դանուբի կամուրջին: Զեն թեքվում վո՛չ աջ, վոչ ձախ: Ա՛յ, ահա կամուրջի վրա յեն նրանք: Զուգունե վիթխարի կամուրջ: Այն ափին չեխական յերկրամասի մի բարակ շերտ միայն, վորից այն կողմ... այն կողմ՝ Հունգարիան է:

— Ժամանակ է,— չշնջաց Գոտեմանը:— Ցեղբայր պատվական, մի քնիր, պետք է ծկվել:

Պյոտրը վոչինչ չպատասխանեց: Նա դողում էր, ասես՝ ջերմախտից: Նա գիտակցում էր, վոր պետք է մի բան անել: Բայց գլխին վոչինչ չէր գալիս, բացարձակապես վոչինչ: Շուրջը հսկատարած վոստիկանական կորդոն էր:

Ձերբակալվածները քայլում էյին, գլուխները քարշ:

Նրանք հասան կամուրջի մյուս ծայրը: Այստեղ չորս որ առաջ բանվորները ցրեցին վոստիկանական այն վոջբրիկ ջոկատը, վոր ուղեկցում էր Հունգարիային հանձնվելիք եմիգրանտներին: Այդ բանը հիշելով, Գոտեմանը ժպտաց: Բայց ժպիտն անմիջապես չքացավ, յերբ նա տեսավ, վոր այնտեղ, ուր չորս որ առաջ ինքը չքացավ, յերբ նա տեսավ, վոր այնտեղ, ուր չորս որ առաջ ինքը շարում էր կոմյերիտականներին, այժմ կանգնած է լեգեոներների ջոկատը:

Քառորդ ժամից նրանք հասան սահմանագծին: Տրանսպորտին ուղեկցում էյին հունգարական ժանդարմները, գլխարկների վրա տնկված աքաղաղի յերկար փետուրներ: Զեխերը ձերբակալվածներին հաշվով հանձնեցին հունգարներին: Թափորը կանգ առավ նրանից մի քանի րոպե, ապա յելի առաջ շարժվեց: Ցերկիրը հունգարական է, թե չեխական, միևնույն չե՞ մեզ համար: Տարբեր է միայն ժանդարմների տարազը:

Պյոտրը միտք արավ անցած տարվա դեպքերի մասին:

«Մի տարվա ընթացքում չես պատահեցի վորքան շատ ազնիվ ընկերների և վորքան սրիկաների: Ցավ վորքան սխալներ, վորքան հիմարություններ արինք մենք»!...

Մտքերը հեռու տարան Պյոտրին: Նա չնկատեց, վոր Գոռես-մանն իր կողքին չե այլևս:

Նա չես նայեց: Ընկերն այնտեղ ել չեր:

— Ի՞նչ ես ղլուխդ չարժում, չան վորդի, հը՞: Ուզո՞ւմ ես վախչել:

Պյոտրը քիչ մնաց ղլորվի գետին՝ հրացանի կոթով իր թիկունքին հասցրած սոսկալի հարվածից:

Քթից, բերանից դուրս ժայթքեց արյունը:

Նա վերադարձավ հայրենիք:

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Ֆելդֆեբելի հրամանով ձերբակալվածները կազմեցին մի ուղան:

Ֆելդֆեբելը, թիկնավետ, կարմրամորթի մի մուժիկ, կանգնեց չարքի դիմաց և վոլորելով չիկավուն բեխերը, սկսեց.

— Քանի դեռ այստեղ չնորհ չեն բերել պարոն սպաները, չես պետք ե խելք ու խրատ տամ ձեզ: Ցավ չեթե հետո պարոն սպանների ներկայությամբ ձեզնից մեկն ու մեկը կոպիտ պահվի երեն, նրան... ը՛մ, նրան չեմ նախանձի չես: Կասեմ կարճ ու կորուկ, չես չեյի ուզենա լինել նրա կաշվի մեջ, թեև վախկոտներից չեմ... Այսպես ուրեմն, առանց սար ու քար ընկնելու, առանց հեռվանց հեռու, կասեմ ուղղակի. այսօրվանից գլխներիցդ հանեք խոզային այն հիմարությունը, վոր ձեռք եք բերել անիծված չելակներից[1]): Հունգարական սրբազան հողը խոզերի համար չե: Ձեզնից ով բոլշևիկ ե կամ սրա նման ուրիշ սրիկա, Թող չերկու քայլ առաջ գա և ամեն բան պատմի, ինչպես խոստովանահորը: Թող խոստովանվի, չես նրա մոր... ինչպես սերտերի առաջ: Հասկացա՞ք: Իսկ ով խորամանկություն անի, բերանը ջուր առնի ու լռի,—նրան...

Ֆելդֆեբելն ընդհատեց ֆրազը և ձախ ձեռքով հուպ տալով իր վիզը, գլխով խիստ ազդու կերպով նշեց ակացիե մերկ ճյուղերը:

[1]) Արհամարհական անուն, վորով հունգարացի սպիտակ գվարդիականները կանչում են չեխերին:

— Այսպես ուրեմն,—բարձրացրեց նա ձայնը,—հանուն մեր հայրենիքի քրիստոնեական և ազգային վերածնության, պետք ե վոր յուրաքանչյուր շուն չան վորդի պատասխանատու լինի վոչ միայն իր համար, այլև հարևանի: Այսպես... Ցավ թող հույս չունենա, վոր մենք նման ենք այն չեխոսլովակներին, վորոնք մի բան դիտեն միայն—կլյոցկի լափել և կրունկները լիզել: Վո՛չ: Այդ պիտուն մենք ձեռաց խելքի կբերինք: Առանց յերկար ու բարակ քարոզի, ղինվորի պես: Այդ բանը ոդ արեք, ականջներիցդ քաշ տվեք, յեթե չեք ուզում, վոր կերածներդ քթերիցդ դուրս գա... Համա անասուններ եք դուք, հա՛,—չարունակեց նա թեթև պատզայից հետո:—Ազնիվ խո՛սք, անասուն եք: Արդյոք, ձեղնից մեկն ու մեկը հետաքրքրվում ե, թե ո՛վ ե ձեզ խրատողը: Ա՛յ, ասեմ. ձեզ հետ խոսում ե յոթ կոմիտատում[1]) հռչակված պարոն Ֆելդֆեբել Շիմակը: Հասկացա՞ք... Գուցե, դուք ուզում եք իմանալ, թե ինչո՞վ ե հռչակավոր պարոն Ֆելդֆեբել Շիմակը: Համեցեք, դրան ել կպատասխանեմ յես. նա հռչակավոր ե նրանով, վոր տաննել չի կարող վոչ կոմունիստներին, վո՛չ ջհուդներին, վո՛չ չեխոսլակներին, վոչ ել ոլախներին[2]): Այսպես:

Ֆելդֆեբելն ընդհատեց իր ճառը, մոտեցավ չարքին և բռունցքով խփեց չիկավուն հրեյա մի պատանու յերեսին, այնպես, վոր նրա քթից հորդեց արյունը:

— Քթիդ վրա դաղմա արա, սրիկա, և միշտ հիշիր, վոր այդ հռչակավոր պարոն Ֆելդֆեբել Շիմակը յես եմ:

— Ստոր!

Պյոտրը կանգած եր յերկար ուղղանի ձախ թևին. նրա քթից նույնպես դեռ հոսում եր արյունը՝ վոր ստացել եր հրացանի կոթի հարվածից: Նրա սիրտը խառնում եր, գլուխը պտտվում եր, նա հազիվ եր կանգնած վոտի վրա: Առանց հաչիվ տալու իրեն իր ապարքի հետևանքի մասին, նա բռունցքով սպառնաց Ֆելդֆեբելին ու բղավեց.

— Ստոր!

Մի չչուկ անցավ ձերբակալվածների չարքով:

Մի վայրկյանում Ֆելդֆեբելը հայտնվեց Պյոտրի դիմաց:

— Ի՞նչ ասիր դու: Ստո՞ր: Ո՞վ ե այստեղ ստորը, ասա: Գուցե յես եմ, պարոն Ֆելդֆեբել Շիմակս, հա՞:

[1]) Նահանգ:

[2]) Ռումինացիների արհամարհական անունը:

Զինվորի ծանր իր սապոգի ծայրով Ֆելդֆեբելն ամբողջ թափով խփեց Պյոտրի փորին: Պյոտրը որորվեց, իսկ յերկրորդ հարվածից հետո փռվեց գետնին:

— Աա՛, չան վ'որդի, ո՞վ ե ստորը!

Նա վոտներով կոխկրտում եր բերնի վրա ընկած Պյոտրին:

— Աա՛, չուն, չան վ'որդի, ասա՛...

Պյոտրի ուշքը գնաց:

Ուշքի գալով, Պյոտրը մի անգամից չկարողացավ հասկանալ, թե ի՛նչ եր կատարվել իր հետ: Նա չուռ յեկավ ու տեսավ իր վրա կռացած մի դեմք: Դեմքը ծանոթ եր թվում նրան, բայց նա չեր կարողանում հիշել, թե վորտեղ և ի՞րը ե տեսել նրան: Նա լսում եր իրեն ուղղված խոսքերը, սակայն չեր հասկանում նրանց իմաստը:

Ինչ վոր մի տեղ փողահարը հնչեցրեց այգանվադը:

Պյոտրը նորից ընկավ մոռացության մեջ: Յերբ նա արթնացավ յերկարատև ու խորունկ քնից՝ առանց յերազների, ցավը մեղմացավ: Բայց նա անկարող եր շարժելու իր վոտ ու ձեռը, վորոնք կարծես՝ վիեռացել եյին: Գլուխը ծանր եր ազաքարի պես, մաքերը հազիվ եյին շարժվում:

Բավական ժամանակ անցավ, մինչև նա կարողացավ հասկանալ իր հետ պատահածը: Նա գիտակցում եր, վոր ինքը գտնվում ե հունգարացի սպիտակների մոտ: Հիշեց, վոր իր խուցընկերին կանչում եր Բեսկիդ: Վոր այդ Բեսկիդը ծառայում եր չեխական սխրանկայում և ոգնեց Պյոտրին՝ փախչել բերեզասից: Նա ազոտ կերպով մտաբերում եր, վոր այն ժամանակ, գնացքում, Բեսկիդը ինչ վոր բան ասաց Մարիա Ռոժոչի մասին, բայց թե հատկապես ինչ ասաց, դա Պյոտրը հիշել չեր կարողանում, ինչքան ել վոր ջանք եր թափում: Համոզվելով, վերջապես, վոր ինքն անկարող ե հիշել, սիրտ արավ հարցնելու Բեսկիդից.

— Ի՞նչ ասիր դու:

— Ցես հարցնում եյի, վո՞ր տեղ ե ցավում:

— Մոռքը դրա մասին չե...—անհամբերությամբ ընդհատեց նրան Պյոտրը:

Բեսկիդն զգուշությամբ բարձրացրեց նրա գլուխը և թիթեղի գավաթը մոտեցրեց նրա շուրթերին: Պյոտրն ագահորեն խմեց ու նորից փակեց աչքերը: Բայց այլևս չկարողացավ քնել:

«Մարիա Ռոժոչ... Ա՛յս բոլորը դատարկ բան ե,— մտածեց նա:— Ռոժոչ, Սեկերեչ... Ա՛յս բոլորը խաղ ե մի՛այն—ո՛վ ում կխաբի. ո՛վ ումից ավելի խորամանկ դուրս կգա... Այլ կերպ դա չեր կարող վերջանալ: Պարզ ե: Նրանք միշտ ել կարող են մեզ մատի խաղալիք դարձնել»:

Կամաց-կամաց նրա մտքերն ընդունեցին այլ ուղղություն: Ուշքի եկած նրա առաջին աշխատանքի ընկերներին— Պոտոնդիին ու Պակշիին— հունգարական դատարանը դատապարտեց մահապատժի: Իսկ մի խումբ այն ընկերներին, վորոնց հետ նա աշխատում եր Մերձկարպատյան Ռուսիայում, չեխ լեգեոներները ձգետին Տիսսայի այն ափը, ինչպես իրեն՝ Դանուբի այս ափը: Հունգարական սահմանապահ սպաները նրանց ծեծեցին, կխտամահ արին, կոխկրտեցին իրենց կոշիկներով ու նրանց այրանզակված դիակները նետեցին Տիսսա գետը... «Իսկ ի՞նչ ե լինելու ինձ հետ... Ե՛խ, այսպես թե այնպես, մի՞թե մի՛ևնույն բանը չե»:

Խուցի պատերը չհղկած տախտակներից եր, հատակը՝ հողից: Խուցը պատուհաններ չուներ, բայց տախտակների միջև յեղած ճեղքերից ազատորեն ներս եր մտնում լույսը: Խուցը նման եր ավելի շուտ հավաքնի, քան մարդկային կացարանի:

— Քնած է՞ս,—յերկրորդ անգամ հարցրեց Բեսկիդը:

— Վո՛չ:

Բեսկիդը ծունկ չոքեց նրա մոտ ու չչնջաց ականջին.

— Լսիր, յես նրանց ասի, իբր չեխերն ինձ վռնդեցին այստեղ այն բանի պատճառով, վոր յես Սլովակիայում մղում եյի հունգարական պրոպագանդ: Ցես կեղծեցի իմ ազգանունը և ծննդավայրս: Դու ևս պետք ե կեղծես, հնարովի անուններ ասես ու լավ մտածես դրանք, վոր հետո չլինի վոր չմոռնես: Այժմ յես Իոհան Բոդյե յեմ, ծնված Կոշիցեյում: Մինչև տեղեկանքները կհավաքեն, իմ իզ ու թողը կկորչի: Հասկացա՞ր:

— Հասկացա:

— Մենք պետք ե չափազանց զգույշ լինենք: Ցերբ մեզ տեղափոխում եյին սահմանից այս կողմ, չորս կոմունիստի տեղն ու տվին սպանելին: Զգուշությո՛ւն, զգուշությո՛ւն, ամենից առաջ զգուշությո՛ւն:

— Ինչո՞ւ յես դու ասում «կոմունիստ», և վոչ թե «ընկեր»,— հանկարծ ընդհատեց նրան Պյոտրը:

— Լավ, թող «ընկեր» լինի,— ուսերը վեր քաշեց Բեսկիդը:— Իրար մեջ, իհարկե, մենք կարող ենք նրանց այդպես անվանել, բայց ավելի լավ ե՝ վարժվենք նրանց կոմունիստ կանչել: Ներ-

կայումս նման մի հատիկ սխալ խոսքի համար մարդ կարող է հանդերձյալ աշխարհ գնալ: Հերոս ձևանալու ժամանակ չէ: Ցեբրանելլի չե կենդանի չունը, քան մեռած հերոսը: Հասկացա՞ր: Մենք յերկուսս ել պետք է, առաջին հերթին, դուրս պրծնենք այստեղից և ընկնենք մի խուլ անկյուն՝ խաղաղ աշխատանքի համար: Միևնույն է, չի կարող այդպես յերկար չարունակվել: Ճիշտ չե՞ մխթե:

Պյոտրի սրտում կասկածները ծագեցին, նա յետ քաշվեց Բեսկիդից: Աչքերը փակեց և լռեց:

«Բեսկիդն ել դնաց նույն ուղիով,— մտածում եր նա:— Բեսկիդն ել, ինչպես մի տարի առաջ Անտալֆին, իր պլանները կազմում է չեխ-հունգարական հակասությունների հիման վրա: Գուցե նրա հաշիվը ճիշտ է. բայց գոնե չեխ լեգոներները և Խորտիկ սպաներն առում են իրար, սակայն նրանք ավելի ևս առում են մեզ... Իմպերիալիզմը կապիտալիզմի վերջին ետապն է... Ռուսական զորարշավը... Կարծեմ, յես տաքսիթյուն ունեմ»...

Քիչ հետո նա նորից քննց, բայց քունը հանդիստ չեր: Ցերը զարթնեց, խոր դիշերը եր: Նա սկսեց չոշափելով վորոնել Բեսկիդին: Բայց նա դուրս եր պրպտում ամբողջ խուցը (յերկարությունը յերեք մետր, իսկ լայնությունը՝ ավելի պակաս),— Բեսկիդի հետքն անգամ չկար: Հավաստիանալով, վոր ինքը մենակ է, Պյոտրը պառկեց հատակին: Փորձեց քնել, բայց, ըստ յերևույթին, քունն առել եր, բացի դրանից, սոված եր, աչքերը չեյին փակվում:

Լուսաբացին հարևան խուցում լսեց մի յերեխա, ապա տաքմարդու և կնոջ ձայներ սկսեցին կռվտել: Պյոտրը կանգնեց ու կամաց ծեծեց տախտակե պատը: Պատասխան չստացվեց, սակայն, խոսքակռիվը դադարեց: Առավոտ պես ճղում, բղավում եր յերեխան: Պյոտրը ելի մի քանի անգամ պատը ծեծեց, բայց վոչ վոք չարձագանքեց նրան:

«Դժվար չե այստեղից փախչելը,— վճռեց Պյոտրը, հետազոտելով շատ իրար կպցրած պատերն ու դուռը, վորը դրսից փակված չեր կողպեքով:— Միայն թե իմանամ՝ վորտեղ եմ գտնվում... Բեսկիդը, դրող տանի նրան, դուրս պրծավ այստեղից: Ինչո՞ւ նա վոչինչ չասաց ինձ»...

Անհայտացել եր ձևքի ժամացույցը, բայց Պյոտրն ուրախացավ, հավաստիանալով, վոր իրեն խուզարկել են հարևանցի: Նա

թղթեր չուներ իր մոտ, Կոշիցեյում ձևոք բերած կեղծ անցագիրը պայուսակի հետ մնացել եր Բրատիսլավայում: Բսակը վերցրել եյին այստեղ, բայց ժիլետի ալ գրպանում մնացել եյին չեխական բանկնոտներ՝ մեկը հիսունանոց քրոն և յերկուսը տասնոց:

«Դիշերը տախտակը կոտրել և»...

Լուսադեմին հարևան խուցից լսվեց բացվող դռան թխկոց, ինչ վոր բան չպրտեցին խուցը: Դուռը թրխկոցով փակվեց: Բանալին չրխկաց կողպեքի մեջ:

Մի րոպեյից հետո Պյոտրը լսեց ցած, աղեկտուր հառաչ: Նա կամաց թխկացրեց պատը: Հառաչը լռեց: Մի քանի վայրկյան տիրեց լռություն: Ցեվ հանկարծ խուցը լցվեց վայրենի, վոչ մարդկային վոռնոցով:

— Ո՞վ է այնտեղ,— բղավեց Պյոտրը և ամբողջ ուժով սկսեց թմբկահարել պատը: Ո՞վ ես դու: Ի՞նչ է պատահել քեզ...

Վոռնոցը հանկարծ դադարեց, և այժմ նորից լսվում եր մեկայն ցածր ընդհատվող հառաչանք: Մի քանի անգամ հրացանի կոթով խփեցին դռանը: Պյոտրը ականջը կպցրեց տախտակե պատին: Լսվեց ուժասած անքոց, ապա ամեն ինչ լռեց:

Պյոտրը նորից ծեծեց պատը.— պատասխան չկար: Փորձեց խոսել,— վոչ վոք չարձագանքեց նրան:

Նա դեմքի վրա ընկավ դետնին և, թեև չուրջը տիրում եր դերեզմանային անդորրություն, յերկու ձևքով ամուր փակեց ականջները:

Սրղեն կեսորից անց եր, յերբ խուցի դուռը բացվեց:

Պյոտրը ցնցվեց և չուռ յեկավ: Ներս մտավ մի զինվոր՝ ձևքին պնակ:

— Վո՞ղջ ես,— բղավեց նա, իր յետևից ծածկելով դուռը:

— Վողջ եմ:

— Ուտել ուզո՞ւմ ես:

— Ուզում եմ:

Ցեվ Պյոտրն սկսեց դանդաղ բարձրանալ: Զինվորի տխմար քնկոտ դեմքին արտացոլեց զարմանք:

— Վոսկորներդ վո՞ղջ են:

— Վողջ են...

— Համա պնդակազմ ես դու, հա՛: Այն ել պետք է ասել, վոր բախտդ բանեց. ֆելդֆեբել Շիմակը յերեկ չափից դուրս լափել կամ լակել եր, հայտնի չե, բայց մինչև հիմա ել լռզա-

բեթում ամբողջ թոքերով բղավում է: Ֆո հարևանի հետ,— գինվորը գլխով նշեց պատը,— նա կարողացավ հաչիմները վակել: Իսկ դու, այ տղա, բախտավոր ասպրի տակ ես ծնված:

— Վո՞րտեղ եմ յես,— հարցրեց Պյոտրը և, առանց պատասխանի սպասելու, մի ընդոմնված չե՞ կալանավորին հազ տալը:

Զինվորը պատասխանի փոխարեն մխայն թափահարեց ձեռքը, իսկ առաջին հարցին անորոշ պատասխանեց.

— Վո՛չ հեռու սահմանից:

Մինչ այդ, Պյոտրը կարողացավ զննել զինվորին: Ծաղկատար դեմքը և կապույտ աչքերը քիչ բան եյին պատահայտում: Դրա փոխարեն վոտները... Զինվորը հագել եր ծակ յերկարաճիտ կոշիկներ:

— Լսիր,— սկսեց Պյոտրը,— յես ունեմ չեխական ոսկի քրոն: Ի՞նչ կլինի, յեթե ինձ համար հազ ճարես:

— Կարելի յե,— գլխով արավ զինվորը և նայելով շուրջը, հո իրեն հետևող չկա, գողի պես գրամը խրեց թևի տակ:

— Կբերեմ: Այս րոպեյիս,— ասաց նա ու դիմեց դեպի յելքի դուռը:

Կանգնած արդեն դռան չեմքին, նա հանկարծ միտքը փոխեց, նորից ծածկեց դուռը և չչուխով ասաց.

— Յեթե ուսերիդ գլուխ ունես, մի յերազիր հազի մասին: Շիմակը հիվանդ է, այսոր հերթապահություն է անում պրապորշչիկ Գորկայը: Իսկ վաղը պրապորշչիկ Դինգհոֆերի հերթապահությունն է: Բացի դրանից, Շիմակը կարող է վաղն առողջանալ: Բախտդ կբերի, յեթե այսոր հերթը չհասնի քեզ: Գորկայը լավ մարդ է, այդ սրիկաների թայը չի: Յեթե յերբեմն հարվածում է, այդ անում է վոչ թե չարությունից, այլ սուրբ է տալիս իր պաշտոնին: Այդ ծառայության մեջ ուրիշ կերպ չի կարելի: Քեզ ասում եմ, լավ մարդ է: Յեվ յեթե գլխիդ մեջ գիրկ չե...

Զինվորը դուրս գնաց:

Պյոտրը ջղայնորեն սկսեց քայլել մի անկյունից մյուսը: Նա ապատում եր, հուսալով, վոր զինվորը յետ կգա: Նա դես ու դեն եր ընկնում խուցի մեջ: Յերեք քայլ առաջ, յերեք քայլ յետ:

Զինվորը յետ չեր գալիս: Նրա փոխարեն կես ժամից հայտնվեց եֆրեյտերը, կարճահասակ խարտյաշահեր մի տղա:

— Հը՞, վոնց է: Դեռ չե՞ս սատկել,— համարյա բարեկամաբար հարցրեց նա:— Այո՛, ինչպես յերևում է, Շիմակին սկսել է կակղել, նա առաջվա Շիմակը չե: Առաջ նա ալի-ասլան եր... Պատրաստվիր, սիրտ դնես հարցաքննության: Իրեր չունե՞ս:

— Վոչ: Զգեստը վերցրին բոլորը:

— Աչքը դուրս գա նրանց: Ամենքին պլոկում են: Վոչինչ, մի քիչ սպասիր, բոլորը յետ կառնենք վերադիրով... Անունդ ի՞նչ է:

— Ստեֆան Բալոգ:

— Բալո՞գ: Վո՞րտեղացի յես:

— Կոշիցեյից:

— Ա՛հ, Կոշիցեյի՞ց: Նրա համար եմ հարցնում, վոր ինձ էլ կանչում են Բալոգ: Մտածում եմ, հո ազգական չե՞նք: Վո՛չ, մեր ցեղը կեչկեմեթից է, իժակ պյուղից... Ի՛հ, լավ, գնանք!

Եֆրեյտերը չեչտակի նայեց Պյոտրին ու հանկարծ յետ ցատկեց, ասես՝ ոձը խայթեց նրան: Զինվորական չենք ու չնորհքը մեկեն անհայտացավ, և նա ձեռքերն իրար խփեց:

Պյոտր Կովա՞չ:

Պյոտրը չվարեց:

— Ջճանաչեցի՞ր,—չննջում եր եֆրեյտերը:— Ջե՛ վոր յես Դրիգորիյ Բալոգն եմ: Ջե՛ վոր միասին նստած եյինք Մունկաչում... Իսկ հիշո՞ւմ ես Գյուլային, վոր սովորեցնում եր մեզ: Իսկ որը-լեյտենանտ Շոմո՞դիին:

Պյոտրը հիշեց: Վո՞նց կարող եր չհիշել: Դրիգորիյ Բալոգ, այն մարդը, վոր 1918 թվի աշնանը համակենտրոնացման ճամբարում մատանեց բոլոր կոմունիստներին:

Պյոտրը կանգնել եր քարացած. պաղ քրտինքը թափվում եր նրա վրայից: Ցնծ հանկարծ, ինքն էլ չիմանալով թե ինչո՛ւ, բարձրաձայն քրքջաց:

— Դրիգորիյ, իմ կյանքը քո ձեռքին է: Ախր, ինչ ուզում ես: Սպանիր, կաչիս քերթիր...

— Սպանե՞լ: Ինչի՞ համար:

— Նրա համար, վոր դու սպիտակ ես, իսկ յես կարմիր:

— Սպիտակ, կարմիր... Բալոգը ուսը վեր քաշեց:— Դուք հող չամիք մեզ: Բայց սրանք էլ լա՛վ պատուհեր են: Հարկերով

թեղդեցին մեզ: Ժողովրդի ուռնը քանդեցին: Ոչնում, քաղցը աչքով նայում են մեզանից ներանց, ովքեր առանց այդ էլ ունևոր են: Ա՛յ, ահա, ինձ նորից հրեշտակի մորթի հագցրին: Սպանե՛լ, կամ քերթե՛լ... Վո՛չ, չես, չես այլևս վոչ վոքի կաշին չեմ քերթի: Հերիք է, բավական է: Իսկ չեթե դու էլ, բարեկամ, ընդունակ ես մտածելու, Գորկայը չի քերի քո կաշին: Գնանք, չե՛ր:

Շիկահեր պրապորշչիկ Գորկայը, վոր սկսել եր ճաղատանալ, հարցաքննությունը կատարում եր ամառանոցի վերանդայում: Նրա դիմաց հասարակ սախատակի սեղանի վրա դրված եր թանաքաման, գավաթ և հինգ չիչ գարեջուր, կողքին ընկած եր մի քանի ոդմա թուղթ:

— Նու, պատմիր, թե ինչե՛ր ես արել,— խոպոտ, հոգնած ձայնով դիմեց նա Պյոտրին:

Նա խմեց գավաթից, կանգնեց ու մոտեցավ Պյոտրին: Զանձրացող տեսքով, ասես՝ իր պաշտոնական պարտականությունն եր կատարում, պրապորշչիկը մի ապտակ հասցրեց նրան և նորից հանգիստ նստեց սեղանի առաջ, կարծես, վոչինչ չեր կատարվել:

— Պատմիր, թե ինչե՛ր ես արել,—կրկնեց նա:

Նեղ համազգեստը դժվարությամբ եր ծածկում նրա կարճ ու հաստ իրանը: Նրա դեմքն արեգես ճմռտված եր, կարծես թե նրան, և վոչ թե Պյոտրին էլին դուրս բերել խուցից:

— Նո՛ւ, ինչե՛ր ես արել,—հարցրեց նա յերրորդ անգամ:

Պյոտրն այս անգամ էլ վոչինչ չպատասխանեց, բայց նրա յուրաքանչյուր ձեռ տված կանգնած Գրիգորիյ Բալոգի համառ հազը հիշեցրեց նրան, փիչ առաջ տեղի ունեցած խոսակցության մասին: Հաղթահարելով յետ նայելու իր ցանկությունը, նա խոսեց այն մարդու վճռականությամբ, վորը պատրաստվում է նետվել սառը ջրի մեջ:

— Պարոն պրապորշչիկը բարեհաճում է իմանալ, իհարկե, թե ինչպիսի տանջանքներ են կրում հունգարացիք անիծված չեխերի յերեսից: Ուստի, յես կարծում էլի, թե դուք ինձ այստեղ այլ կերպ կընդունեիք: Կոշիցեյում յես կես տարի նստեցի միմիայն նրա համար, վոր հունգարացի էլի, և մարտի տասնուհինգին...

Պրապորշչիկը ձեռքի շարժումով ընդհատեց Պյոտրին:

— Կոշիցեյում,—կամաց հարցրեց նա:

— Ա՛յո՛, այնտեղ:

— Լա՞վ ես ճանաչում Կոշիցեն:

— Բավարը դիտեմ:

— Բանկո՞լեռան վրա յեղե՞լ ես:

— Մի անգամ յեղա:

— Այնտեղ աչունն այնպես է, ինչպես այստեղ,—հառաչեց Գորկայը և աչքերը բարձրացրեց կարմրավուն-մանիշակագույն խաղողի վողկի վրա, վոր պատել եր տերրասը:

— Պատահմամբ չե՞ս յեղել Ներքին Ռուտկայում,—չարունակեց նա հարցաքննությունը:

— Վո՛չ:

— Իսկ դիտե՞ս, թե վորտեղ է գտնվում նա:

— Կոշիցեյից վո՛չ հեռու,—յենթադրարար ասաց Պյոտրը:

— Ճիշտ է,—արձագանքեց պրապորշչիկը:—Այնտեղ պատերազմից առաջ յես ուսուցչությամբ եյի պարապում: Զեխեր... Անիծված չելակներ!

Ցեվ նա բռունցքն սպառնալից ցնցեց սահմանագծի ուղղությամբ: Նրա չեչոտ, մազերով պատած դեմքը լցվեց արյունով: Նա իրար յետևից դատարկեց յերկու գավաթ գարեջուր, վորից հետո մխայն մի վոքր հանգստացավ:

Նա կանգնեց սեղանի մոտ, ջլապինդ թեվերը խաչաձև դնելով կրծքին և կրծոտելով խուզած բեխերը, նայում եր այն կողմը, վորտեղ հեռվում պետք է լիներ Կոշիցեն:

Կոշիցե... Ներքին Ռուտկա... Զեխեր... Ցերը կարմիր բանակը դրավեց Կոշիցեն, նա մոլեգնորեն հայհոյում եր գավառանների: Կարմիրները հեռացան, յեկան չեխերը: Ցերը չեխերը եռանների: Կարմիրները հեռացան, յեկան չեխերը: Ցերը չեխերը եռանգուն պով արտաքսեցին նրան Հունգարիա, նա մտավ ազգային բանակի շարքերը: Ճիշտն ասած, աստիճանը բարձր չեր, վոչ էլ նախանձելի ոռճիկ, բայց մի պատճառ նա վերապահեց իրեն. յերբ սկսվի պատերազմը Հունգարիան իր նախկին սահմաններում վերականգնելու համար, նրան կուղարկեն հյուսիսային ֆրոնտ՝ չեխերի դեմ: Այդ արդեն անցել է տասնուչորս ամիս, իսկ պատերազմը մղվում է մխայն Ներքին Թշնամու դեմ: Այն էլ վոչ թե թնդանոթով ու գնդացիրներով, այլ կախաղաններով, ռևոլներ մահակներով և Ներքին Պատգամի դանակներով...

Մի գավաթ գարեջուրը նորից մի քանի րոպե վերադարձրեց ինքնատիրապետումը պրապորշչիկին:

— Իսկ իսկապես անունդ ինչ է,—հարցրեց նա Պյոտրին:

— Ստեֆան Բալոգ: Ծնվել եմ հազար ութ հարյուր իննսունութ թվին Բերեգսասում: Հայրս թամբագործ եր, սպանվեց հարյուր թվին Բերեգսասում:

զար լինն հարյուր տասնուվեց թվին, սեպտեմբերին, Դորերդոյի մոտ:

Պրապորշչիկը գլուխը ճոճեց ընկճված:

— Ախտո՛ս, ախտո՛ս, վոր դու չես յեղել Ներքին Մուտակոսմ,—հառաչեց նա:—Այս տղան վատաթղթեր ունի՛,—դիմեց նա եֆրեյտերին, վորը հալցաքննության ընթացքում կանգնած եր անշարժ և վոչ մի ծպտուն չհանեց:

— Թույլ տվեք՝ ղեկուցել. վողորմելին վոչինչ չունի: Զևրակները խլել են բոլորը:

— Դրամ ունե՞ս,—հարցրեց Դորկայը Պյոտրին:

— Ունեմ տաս քրոն:

— Ո՞ւր ես ուզում գնալ:

— Կուզեյի գնալ Պեչա,—այնտեղ դուցե վորևե աշխատանք ճարվի:

— Արձանագրություն պետք չե,—կարգադրեց Դորկայը,—Քաղ տուս ու փուս չքվի...

— Դրամը տուր ինձ,—ասաց Դրիդորիյ Բալոգը, յերբ նրանք հեռացան վերանդայից:—Ձես քեզ համար ձրի տոմս կճարեմ: Իսկ յերբ ձերոնք նորից իշխանության գլուխ կանցնեն, չմոռանաս, թե ով փրկեց կյանքդ:

Գիշերը Հյուսիսային կայարանից դիմեց դեպի Բուդապեշտ: Նա կտրեց-անցավ Բելլինյան հրապարակը, քայլերն ուղղելով դեպի Մարգարիտայի գրոսայգին: Բայց հանկարծ միտքը փոխեց, յետ դարձավ և Թերեզիայի գրոսայգու ճամ կողմով քայլեց Անդրաշիի պողոտայի ուղղությամբ:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ոկտոգոնյան հրապարակից Պյոտրը ծավեց դեպի ճամ և Անդրաշիի պողոտայով գնաց դեպի քաղաքային պարկը:

«Դա այն ուղին է, վորով լինն հարյուր տասնինն թվի հունվարին, մենք զորացրված դինվորների հետ գնում եյինք դեպի ամրոցը: Թե դա վեներվարի՞ն եր: Գրողը տանի, վոնց ամեն բան հեշտությամբ մոռացվում է: Բանվորական գնդերի ցույցը մայիսի յերեքին եր: Այժմ հոկտեմբեր ամիսն է... Ուրեմն այդ ոբից անցել է համարյա կես տարի: Ռումինացիների յելույթն ոգոստոսի չորսին թե հնգին եր... Ե՛հ...»:

Նա քայլում եր դանդաղ, գլուխը քաչ: Անցնելով վոստիկանական պահակների մոտով, նա արագացրեց քայլերը: Թող տես-

նեն, վոր ինքն չտապում է: Շտապում է տուն: Նշանակում է, ամեն բան կարգին է: Նա բնակարան ունի, գրանցված է, համաձայն բոլոր կանոնների: Միայն այսոր նա մի փոքր ուշացել է: Ամենամիամիտ մարդը պիտի հասկանա, վոր յերիտասարդների հետ դա հաճախ է պատահում:

Մի քանորի հուշարձանի մոտ նորից ծավեց դեպի ճամ: Անցավ Ֆերդինանդի կամուրջը: Հասավ խաչմերուկին, վորտեղ փողոցը կտրում-անցնում է Ույպեշտի տրամվայը: Տրամվայներն արդեն չեյին յերթևեկում: Դուցե, դեռ չեյին յերթևեկում: Պյոտրը կանգ առավ ու հենվելով տրամվայի սյունին, սկսեց հաշվել, թե տրյտեղից քանի կանգառ է մինչև Ույպեշտի քաղաքային Դուման: Մի անգամ նա հաշվեց տասնուամեկ, մյուս անգամ՝ ինն, յերրորդ անգամ՝ տասներկու:

«Ժամանակն ինչպիսի՛ արագությամբ է թռչում»: Դա միակ ճիշտ յեզրակացությունն եր նրա բոլոր հաշվարկումներից:

Հոգնած ու մտահոգ, նա նորից յետ դարձավ դեպի քաղաքը:

Ժամանակը թռչում է արագ, բայց թվում է, թե այդ գիշերը վերջ չունի: Պյոտրը մտքով մի յերեք անգամ անդրադարձավ իր ամբողջ կյանքը: Սակայն գիշերը չեր վերջանում: Նա կարողացավ նույնիսկ մոմասալ այն գիշաղնողը, վորի համաձայն, յերեք սխալ տասալեցին խորհրդային հունգարական հանրապետության. Կոմկուսի ցրումը, հյուսիսից հունգարական հաղթական կարը. միր բանակի յետ կանչումը և ամենագլխավորը սխալն այն եր, վոր հողը չավին գյուղացիներին: Կոմունիստներն իրենց ձեռքով կործանեցին Խորհրդային Հունգարիան:

Առավոտը տակավին չեր բացվում:

«Ռուսլենակո... սոցիալ-դեմոկրատներ... վոստիկանություն... Անակզրունքայնության հասնող թեթևամտություն...»:

Հոգնածությունը և հիշողությունների ծանրությունը Պյոտրի գլուխը խոնարհեցնում եյին ավելի ու ավելի ներքև:

Ցնթե դեռ շատ է մնացել մինչև այդպատց, նա կարող է քնել վոտի վրա:

Ցեվ դեմքով դառնալով դեպի արևելք, վորտեղ քաղաքային չենքերի վրա արդեն սկսել եր ցոլք տալ ծագող արևի արփիշողը, նա մտածեց.

«Այնտեղ գտնվում է Ռուսաստանը»:

Կարծես նա թեթևություն զգաց:

Աչնանային մեղմ, սքանչելի առավոտ եր: Բայց ժամը տասի մոտ յերկինքն ամպակալեց, և բարակ, տաղտուկ անձրևն սկսեց

մաղվել կոխկրտված մայթերի վրա: Մինչ այդ, Պյոտրը կարողացավ վոխանակել իր մոտ հրաչքով մնացած չեխական հիսուն քրոնանոց թղթադրամը և մանել մի վոքրիկ կաֆե: Նա չգիտեր, բե ի՛նչ կարելի է գնել հունգարական պենգեներով: Կաֆեյում պրեյկուրանտ չկար: Նա սոված եր, գայլի պես, բայց ցդուշության համար պատվիրեց ամենահամեստ կերստուները: Վճարման ժամանակ նրան ապատում եր հաճելի այուրպրիզ:

«Ըստ յերևույթին, կյանքն այստեղ ավելի էժան է, քան Չեխիայում»,—մտածեց նա և արագ գլխի ընկավ, վոր վորոշ խնայողության դեպքում՝ դրամը կբավի յերկու որ:

Մաղմղուն անճրևի տակ Պյոտրը գնում եր քաղաք:

Շուտով նրա հագուստը թրջվեց ու ծանրացավ, ինչպես անագ: Նա հագիվ եր չարժում վոտները: Կամա-ակամա, նա հրաժարվեց քայլերն արագացնելու մանյովրից, անցնելով պահակակետերի մոտից: Հանդիպելով բետլենյան «կուչմայով»[1] սպաներին, նա դանդաղեցնում եր քայլերը, գնելով նրանց: Անհեթեթ բան եր՝ տեսնել միջնադարյան այդ ասպետներին արդի յեվրոպական քաղաքի վողոցներում: Այդ ծիծաղելի ֆիգուրների հետ վոչ մի կերպ չեր կապվում պատկերացումը պարոն սպաների արյունոտ գաղանությունների մասին, վորոնց համբավը լցրել եր ժամանակից յեվրոպական քաղաքը: Մի տեսակ ծաղրածուներ...

Կես որվա մոտ նա գնում եր Ցուլլեյի վողոցով: Նրա դեմ-մաց մարշով գալիս եյին մի վաշտ զինվորներ: Կանգ առնելով, Պյոտրը զիտում եր նրանց յերթը: Գյուղացի տղերք եյին: Նրանք յերգում եյին.

Կատեյի նորին մեծություն
Նիկոլայ առաջին կայսեր,
Վոր հավետ կմնա կանգուն
Փառավոր, մեծ Հունգարիան մեր!

Ռազմական սաղավարտներ: Մանլիխերյան հրացաններ: Զինվորների յերկաքաշիտ կոշիկների ամուր դոփյուն վողոցի առլարկին: Հակահեղափոխության զինվորներ: Գյուղացի տղերք:

Նորից մոքով անցավ. «Հոդ չտվինք...»:

Ազգային բանակ:

Հունգարական «ազգային բանակ»: Դիկտատուրայի ժամանակ այդ բանակը նատած եր Սեկեդինում՝ ֆրանսիացիների թևի տակ: Կարմիր բանակի դեմ կռվելը տրված եր ռումինացի, չեխ ու ֆրանսիացի զինվորներին: Թռունորդիք չատ հեռու չգնացին նախապատերից:

1849 թվին հունգարացի պարոնները ռուս Նիկոլայ ցարի զինվորներին առաջանորդում եյին հունգարական հեղափոխական բանակի դեմ, վորպեսզի հաղթահարեն հունգարական բուրժուական հեղափոխությունը:

1919 թվին նրանց թռունորդիք ռումինական արքայական զինվորների և չեխական սոցիալ-դեմոկրատների բանակի ավիններն ուղղում եյին «մեղանչած» Բուդապեշտի դեմ, հունգարական հեղափոխական կարմիր բանակի դեմ, վորպեսզի ճնշեն հունգարական պրոլետարական հեղափոխությունը: Այն ժամանակ միայն, յերբ դրսից ռումինական, չեխական ու ֆրանսիական զորքերի հարվածի տակ և ներքուստ՝ սոցիալ-դեմոկրատիայի ճնշման ազդեցության տակ ընկճվեց հեղափոխությունը, գլխավոր հրամանատար Խորտին հայտարարեց.

— Մեղանչած Բուդապեշտը պետք է պատժվի:

Գլխավոր հրամանատարի հրապարակած հրամանները հրահանգում եյին. «Դիմադրություն ցույց տվողին զնդակահարել տեղն ու տեղը»:

... Զնդակահարել տեղն ու տեղը!
... Զնդակահարել տեղն ու տեղը!
... Զնդակահարել տեղն ու տեղը!

Նատած սպիտակ ձի, ավստրիական ծովակալի տարազով, Բուդապեշտ մտավ Նիկոլայ Խորտին՝ հունգարական ազգային բանակի գլխավոր հրամանատարը: Նրա ետնի վրա մնաց Անդրբանակի գլխավոր հրամանատարը: Նրա ետնի վրա մնաց Անդրդանուբը: Յերբ հեղափոխությունը ճնշվեց, և ռումինական զորքերը դուրս բերեցին Բուդապեշտը, Խորտին Անդրդանուբում մոլեգնությունն եր անում, զնդակահարելով ռումինացիների ձեռքից վախած բանվորներին ու գյուղացիներին: Իսկ առաջ, յերբ ընկավ միապետությունը, նա առանց մի հատիկ թնդանոթային հրազարկի հանձնեց սերբերին իր հրամանատարության տակ յեղած հունգարական ռազմական նավատորմը:

Նիկոլայ Խորտին ազգային հերոս է...

Կատեյի նորին մեծություն
Նիկոլայ առաջին կայսեր...

Պյոտրը դուրս եր սարսափից ու զզվանքից: Նա նախաճաշել ինչ-վոր զինետան և ելի գնաց, ինքն էլ չիմանալով, թե ուր:

[1]) Հին հունգարական ռազմական տեսակի գլխարկ:

մաղվել կոխկրտված մայթերի վրա: Մինչ այդ, Պյոտրը կարողացավ փոխանակել իր մոտ հրաչքով մնացած չեխական հիսուն քրոնանոց թղթադրամը և մանել մի փոքրիկ կաֆե: Նա չգիտեր, բե ի՛նչ կարելի է գնել հունգարական պենգեներով: Կաֆեյում պրեյսկուրանտ չկար: Նա սոված էր, գայլի պես, բայց ցգուշության համար պատվիրեց ամենահամեստ կերակուրները: Վճարման ժամանակ նրան ապատում էր հաճելի սյուրպրիզ:

«Ըստ երևույթին, կյանքն այստեղ ավելի էժան է, քան Չեխիայում»,—մտածեց նա և արագ գլխի ընկավ, որ վորոշ խնայողության դեպքում՝ դրամը կրավի երկու որ:

Մաղմղուն անձրևի տակ Պյոտրը գնում էր քաղաք:

Շուտով նրա հագուստը թրջվեց ու ծանրացավ, ինչպես անագ: Նա հագիվ էր չարժում վոտները: Կամա-ակամա, նա հրաժարվեց քայլերն արագացնելու մանյովրից, անցնելով պահակատեռերի մոտից: Հանդիպելով բետլենյան «կուչմայով»[1] սպաներին, նա դանդաղեցնում էր քայլերը, գննելով նրանց: Անհեթեթ բան էր՝ տեսնել միջնադարյան այդ ասպետներին արդի յեվրոպական քաղաքի փողոցներում: Այդ ծիծաղելի փիդուրների հետ վոչ մի կերպ չէր կապվում պատկերացումը պարոն սպանների արյունոտ դաղանությունների մասին, վորոնց համբավը լցրել էր ժամանակակից յեվրոպական քաղաքը: Մի տեսակ ծաղրածուներ...

Կես որվա մոտ նա գնում էր Յուլլեյի փողոցով: Նրա դեմ-մաց մարշով գալիս էին մի վաշտ զինվորներ: Կանգ առնելով, Պյոտրը զիտում էր նրանց յերթը: Դյուզացի տղերք էին: Նրանք յերգում էին.

Կասեյի նորին մեծություն
Նիկոլայ առաջին կայսեր,
Վոր հավետ կմնա կանգուն
Փառավոր, մեծ Հունգարիան մեր!

Ռազմական սպազավարտներ: Մանլիխերյան հրացաններ: Զինվորների յերկաբաճիճ կոչիկների ամուր դոփյուն փողոցի սալարկին: Հակահեղափոխության զինվորներ: Դյուզացի տղերք:

Նորից մոքով անցավ. «Հոդ չավինք...»:

Ազգային բանակ:

Հունգարական «ազգային բանակ»: Դիկտատուրայի ժամանակ այդ բանակը նստած էր Սեկեդինում՝ ֆրանսիացիների թևի տակ: Կարմիր բանակի դեմ կռվելը տրված էր ռումինացի, չեխ ու ֆրանսիացի զինվորներին: Թռունորդիք չատ հեռու չգնացին նախապատերից:

1849 թվին հունգարացի պարոնները ռուս Նիկոլայ ցարի զինվորներին առաջանորդում էին հունգարական հեղափոխական բանակի դեմ, վորպեսզի հաղթահարեն հունգարական բուրժուական հեղափոխությունը:

1919 թվին նրանց թռունորդիք ռումինական արքայական զինվորների և չեխական սոցիալ-դեմոկրատների բանակի ավիններն ուղղում էին «մեղանչած» բուդապեշտի դեմ, հունգարական հեղափոխական կարմիր բանակի դեմ, վորպեսզի ճնշեն հունգարական պրոլետարական հեղափոխությունը: Այն ժամանակ միայն, յերբ դրսից ռումինական, չեխական ու ֆրանսիական զորքերի հարվածի տակ և ներքուստ՝ սոցիալ-դեմոկրատիայի ճնշման ազդեցության տակ ընկճվեց հեղափոխությունը, գլխավոր հրամանատար Խորտին հայտարարեց.

— Մեղանչած բուդապեշտը պետք է պատժվի:

Գլխավոր հրամանատարի հրապարակած հրամանները հրահանգում էին. «Դիմադրություն ցույց տվողին գնդակահարել տեղն ու տեղը»:

... Գնդակահարել տեղն ու տեղը!
... Գնդակահարել տեղն ու տեղը!
... Գնդակահարել տեղն ու տեղը!

Նստած սպիտակ ձի, ավստրիական ծովակալի տարազով, բուդապեշտ մտավ Նիկոլայ Խորտին՝ հունգարական ազգային բանակի գլխավոր հրամանատարը: Նրա խղճի վրա մնաց Անդրդանուրը: Յերբ հեղափոխությունը ճնշվեց, և ռումինական զորքերը դրավեցին բուդապեշտը, Խորտին Անդրդանուրում մոլեգնություն էր անում, գնդակահարելով ռումինացիների ձեռքից վախած բանվորներին ու դյուզացիներին: Իսկ առաջ, յերբ ընկավ միապետությունը, նա առանց մի հատիկ թղթանոթային հրազարկի հանձնեց սերբերին իր հրամանատարության տակ յեղած հունգարական ռազմական նավատորմը:

Նիկոլայ Խորտին ազգային հերոս է...

Կասեյի նորին մեծություն
Նիկոլայ առաջին կայսեր...

Պյոտրը դողում էր սարսափից ու զզվանքից: Նա նախատաճեց ինչ-վոր զինեստան և ելի գնաց, ինքն էլ չիմանալով, թե ուր:

[1]) Հին հունգարական ռազմական տեսակի գլխարկ:

Նրա ուղեղը ծակում եր համառ մի մտաք. «Իսկ ի՞նչ է լինելու այսուհետև»:

Նա չգիտեր հուսալի վո՛չ մի հասցե: Հունգարիայում նրա բոլոր ընկերները կամ նստած եյին բանտերում, կամ ապրում եյին անլեգալ: Նա գիտեր, որ ավելի լավ է չհանդիպել նրանց, ովքեր աղատ եյին մնացել կալանքից: Ճաշը թանդ արժեր: Բայց յեթե նա նույնիսկ ունենար բավական դրամ, առանց փաստաթղթերի հնարավորություն չուներ գեթ մի որ դիշերելու այդ քաղաքում, որ բոլորովին ոտար եր արդեն նրա համար: Մի՞թե այսոր ևս նրան սպասում է անքուն դիշեր...

Տյոկելի պողոտայում Պյոտրը գնեց «Նեպսպավա»[1] թերթի համարը: Հասավ Ստեֆանիի պողոտային, նստեց նստարանի վրա և սկսեց կարդալ:

Զբոսանքի ժամը վերջացավ: Տոհմիկների կարետները ցրվեցին: Սարը քամուց ծառերի գեղին տերևներն անձրևի պես չաղվեցին գետին:

Պյոտրը թռուցիկ կերպով նայեց թերթի առաջին էջը: Կարգաց մի քանի տող: Շուռ տվեց լրագրի յերեսը: Շոտապ աչքի անցրեց յերկրորդ էջը: Ոտար անուններ: Խորթ չահեր: Խորթ տեն: Թերթը ծալեց, դրեց գրպանը:

«Պետք է մի բան ձեռնարկել: Այդպես կարող է քունս տանել»: Նա կանգնեց:

«Ի՞նչ կլինի, յեթե մոտենամ վորևե բանվորի,—անցավ նրա մտքից: Բայց խղճուկ ևեթ հրաժարվեց գրանից: Դատարկ բան! Յեթե նա մերոնցից է, ինձ կընդունի պրոլետարի տեղ: Յեթե ոտար է,—բանս պրծած է»:

Նա հագիվ եր չարժում վոտները: Տյոկելի պողոտան այս անգամ թվում եր նրան անվերջ: Մեջքը ցավում եր: Ֆելդֆեբել Շիմակի հարվածների տեղերը խիստ զգալ եյին տալիս իրենց:

«Այլևս ուժ չկա...»:

Նրան ծանոթ թվաց այն տունը, վորի առաջ կանգնեց նա: Այդպես է, վոր կա: Մետաղագործների Տունն է:

«Ինչ կպատահի, յեթե մի քիչ ննջեմ այստեղ: Ծայրահեղ դեպքում՝ կլինդչեն: Ուրիշ վոչինչ»:

— Ո՞ւր, ընկեր:

— Դատախոսության,—մեքենայաբար պատասխանեց Պյոտրը[1]:

[1]) «Ժողովրդի ձայն»—հունգարական սոցիալ-դեմոկրատական որգանը:

Նրա պատասխանը չատ ի դեպ եր:

— Յերկրագործության մո՞տ:

— Այո՛, այո՛:

— Յերկրորդ հարկ, համար յոթ տեղյակ:

Հինգ րոպեյից հետո, նստած աթոռին, Պյոտրը քնեց: Նա քնել եր, գլուխը հենած իր առջև աթոռի թիկնատեղին դրած թևերի վրա: Նա այնպես խորն եր քնել, վոր նրան չկարողացավ արթնացնել նոր մոտեցող ունկնդիրների բարձրաձայն խոսակցությունն անգամ: Ազմկալից յերևույթները վոչ մի ուշադրություն չեր դարձնում քնողի վրա: Միայն չհնել դատախուզին կամաց նկատեց:

— Ցնս դեռ վոչ մի խոսք չեմ ասել, իսկ ընկերներից մեկն արդեն քնեց: Յերբ Պյոտրը զարթնեց (չարժեցին նրա թևի տակի աթոռը), դատախոսությունը վերջանում եր: Դատախուզին — նիհար, չիկահեր, կապույտ աչքերով, ըստ յերևույթին՝ ուսանողուհի—լռեց, յերբ Պյոտրը զարթնեց ու վախեցած վեր թռավ տեղից: Առաջին մոմենտին նա մեկին դլխի չընկավ, թե վորտեղ է գտնվում ինքը, հետո նորից ծանրությամբ ընկավ իր տեղը: Աղջիկն անվրդով չարունակում եր իր դատախոսությունը:

Պյոտրը զժվարությամբ եր ըմբռնում իր լսած խոսքերի իմաստը: Բայց կամաց-կամաց նրա համար պարզվեց, վոր աղջիկը կաուցկու տեսակետով բացատրում է Մարքսի անտեսական ուսմունքը: Նա սկսեց ուշադրությամբ ականջ դնել: Նույնիսկ աչքերը փորեց աչքերը:

«Վո՛չ, յես չեմ զատանդում,—համոզում եր Պյոտրն ինքն իրեն:—Դա յերազ չէ: Բայց յես պատրաստ եմ դլխովս գրազ գալու, յեթե այդ աղջիկն ուսումնասիրած չե Լենինը և իր տեղեկությունները չի քաղել բոլշևիկյան բրոշյուրներից: Վո՞րտեղ եմ յես»:

Պատին Լասսալի դիմանկարն է: Դիմանկարի տակ պլակատ է.

«Պրոլետարիատն այն ժայռն է, վորի վրա պիտի կառուցվի ապագայի տաճարը»:

Փոքրիկ դահլիճում կային մոտ քսան ունկնդիրներ: Յերիտասարդ բանվորներ, բանվորուհիներ, մի քանի ուսանող: Նրանք նայում եյին Պյոտրին: Նա պակաս չեր հետաքրքրում նրանց, քան դեկուցող աղջիկը:

«Ինչո՞ւ յեն նրանք հայացքները սևեռել ինձ վրա: Ի՞նչ են ուզում ինձանից...»:

Դասախոսությունը վերջացավ:

Փոքրիկ սենյակը մի վայրկյանում դատարկվեց:

Ցերը Պյոտրը դուրս չեկավ վողոց, յերիտասարդությունն արդեն ցրվել եր: Գլխավոր մուտքի մոտ միայն դասախոսուհին դեռ զրուցում եր յերկու պատանիների հետ: Նրանցից մեկը շուռով հրաժեշտ տվեց: Մյուսն աղջկա հետ գնաց դեպի արամվայի կանգառը: Պյոտրը նրանց չհասկց մոտավ մլեհնուլն վագոնը, առանց պարզ հաշիվ տալու իրեն, թե ինչո՛ւ արավ այդ բանը: Նա նայեց աղջկա կողքին՝ աջ կողմից: Աղջիկն արմունկով անհասկանալի բոթեց իր ձախ հարևանին, ակահերը, անտաշ մի տղայի, տեսքով ուսանող: Ապա նա կարճատես աչքերով նշեց Պյոտրին:

— Ո՞ւր,—հարցրեց աղջիկը Պյոտրին:

Պյոտրը ձեռքի չարժումով ցույց տվեց առաջ, գնալու ուղղությամբ: Նա չգիտեր, թե ո՛ւր եր գնում արամվայը: Նա ուզում վերցրեց մինչև վերջին կայանը:

Տրամվայը կամուրջից անցավ դեպի Բուդայի կողմը: Սկսհեր ուսանողն իջավ յերկրորդ կանգառում: Աղջիկը մնաց: Հետևյալ կանգառին նա էս իջավ: Պյոտրը հետևեց նրան: Աղջիկը ջղայնորեն չուռ յեկավ և կկոցելով կարճատես աչքերը, զննող հայացքով չեշտակի նայեց Պյոտրի դեմքին, վորը լուսավորված եր արամվայի կանգառի լապտերով:

— Ներեցեք,—թոթովեց Պյոտրը:

— Ի՞նչ եք ուզում դուք ինձնից:

Աղջիկն այնպես ամուր սղմեց կրծքին պորտֆելը, ասես՝ վախենալով, վոր Պյոտրը կուզենա խլել այն:

— Ի՞նչ եք ուզում ինձնից:

— Դուցե, կհամաձայնվեք՝ մի փոքր հեռանանք այստեղից:

Աղջիկը զլխով համաձայնության չարժում արավ և արագ գնաց դեպի մոտիկ միջավողոցը: Պյոտրը դժվարությամբ եր հասնում նրան: Միջավողոցի անկյունում աղջիկը կանգ առավ:

— Ցես լսում եմ ձեզ:

Պյոտրը նայեց չուրջը: Փողոցը բաղմամարդ եր, բայց վոչ վոք ուշադրություն չեր դարձնում նրանց վրա: Ընդհատակ կտացած դեպի աղջկա ականջը, նա ասաց.

— Ցես կոմունիստ եմ: Զենթեն ինձ տեղաձգեցին Հունգարիա, առանց փաստաթղթերի, առանց դրամի: Սահմանագլխին ինձ ձեծեցին, կիսամահ արին: Ցերկու գիշեր չեմ քնել...

Ձենց առաջին խոսքերից հետո աղջիկը յետ քաշվեց, ասես՝ հարվածեցին նրան, մի քայլ հեռացավ Պյոտրից: Ապա ընդհատակ մոտեցավ նրան: Ցեվ մինչ Պյոտրը խոսում եր, աղջիկը ջղայնորեն կրծում եր ներքևի բարակ շրթունքը:

— Ինչո՞ւ յեք այդ բանն ասում ինձ: Ի՞նչ եք ուզում ինձնից,—չչուկով, բայց յեռանդագին, համարյա հրամայական ոճով, հարցրեց նա:

— Ցես յերկու գիշեր չեմ քնել,—կրկնեց Պյոտրը ցածր ձայնով:

Մի քանի վայրկյան աղջիկը կանգնած եր անշարժ, կկոցուն աչքերով չեշտակի նայելով Պյոտրի դեմքին: Ապա, առանց վոչ մի խոսք ասելու, յետ դնաց դեպի այն կողմ, դեպի Դանուբի վրայի կամուրջը, վորտեղից նրանք հենց նոր յեկան արամվայով: Պյոտրին թվաց, վոր աղջիկը գլխով արավ իրեն, իբրև թե՝ հետևիր ինձ:

Մլեհնուլն ե, Պյոտրն ուրիշ յելք չուներ, և նա հետևեց աղջկան: Վերջինս դնում եր արագ: Պյոտրն ստիպված եր համարյա վազել, վոր հասնի նրան: Գնալով հինգ րոպե, աղջիկը կանգ առավ լապտերի տակ, սպասելով Պյոտրին, վորը յետ եր մնացել նրանից մոտ տասն քայլով:

— Սպասեք ինձ այստեղ,—հրամայեց նա չչուկով:—Կարող եք պրոմնել այս լապտերից մինչև մյուսը: Տեսնո՞ւմ եք... Մինչև այնտեղ, վոչ ավելի հեռու: Այլապես մենք իրար կկորցնենք: Հասկացա՞ք: Կաշխատեմ շուտ վերադառնալ:

Ցերեսուն լինեն քայլ դեպի առաջ, յերեսուն լինեն քայլ դեպի յետ: «Կարծես, բանտային հսկայական խուցի մեջ լինի»,—մտածում եր Պյոտրը: Հուզմունքից քունը վախավ, գլուխը թարմացավ, բայց վոտները ծանր եյին, ասես՝ կոշիկների փոխարեն նրանց վրա յերկանաքարեր լինեյին:

Սուրում եյին տրամվայները, ավտոմոբիլները: Հետիոտները, վորքան էլ շտապում եյին, այնուամենայնիվ, կարողանում եյին մեկ աչքից, մեկ ճախից բոթել Պյոտրի կողերը: Վոչի՛նչ: Միայն թե մի անգամ, միմիայն մի անգամ նա կարողանար կուչտ քնել:

«Սակայն, վո՞րտեղ եմ յես»:

Նա կարդաց փողոցի անունը:

«Նիկոլայ Խորտիի պողոտա»:

«Նիկոլայ Խորաիի պողոտա... Հըմ... Գրողը տանի, ի՞նչ տեղ է այդ»:

Այդ գարշելի անունը հիշեցրեց նրան, որ բանը միայն կուշտ քնելը չէ:

«Միայն թե աղջիկը գլխիս ոյին չբերի... Խոստացավ չուտ վերադառնալ, բայց արդեն անցավ մի ժամ, գուցե, յերկու ժամ նրա գնալուց հետո... Իսկ յեթե խաբի...»:

Պյոտրը քիչ մնաց վախից ճչար, նկատելով, որ պոստապահ վոստիկանի աչքերը հառած են իր վրա: Նա բնազդաբար արագացրեց քայլերը, բայց խելոքն փոխեց մտադրությունը:

«Յեթե յես վերցնեմ այդպիսի տեմպեր, ստիպված կլինեմ ավելի շուտ-շուտ անցնել նրա մոտով»,—ակամա քմծիծաղեց Պյոտրը:

Վոստիկանը մի բան եր բացատրում ինչ-որ պառավի: Բայց Պյոտրին թվաց, որ երբ նա աչքի տակով նայում է իրեն:

Յերեսուն ինն քայլ դեպի առաջ: Յերեսուն ինն քայլ դեպի յետ: Բանտային հսկայական խուց:

Նա արագ իջավ մայթից և ձեռքը դնելով դռակին, դիմեց պոստապահ վոստիկանին.

— Բարի յեղեք՝ ասել, ժամի քանի՞ն է:

Վոստիկանը պատասխանի փոխարեն, ձեռքով նշեց ելեկտրական ժամացույցը, որ նրանից մի քանի քայլի վրա յեր:

— Ի՞նչ եք հրամայում,—դարձավ վոստիկանը մի ծերունի սպայի, որը տեղեկանք եր ուզում: Ըստ յերևույթին, նա մոռացավ Պյոտրի մասին:

— Տասից անց է քառորդ,—բարձրաձայն ասաց Պյոտրը:— Գրողը տանի... Աչքս չուր կտրեց:

Յերեսուն քայլ դեպի առաջ: Յերեսուն քայլ դեպի յետ:

«Ի՞նչ տխմարն եմ յես: Իսկ յեթե աղջիկը տեսավ, թե ինչպես յես խոսում եյի վոստիկանի հետ... Ի՞նչ կմտածի նա... Բը՛ռռռ... Յեթե նա չատ ուշանա...»:

Աղջիկը վերադարձավ վո՛չ մենակ: Նրան ուղեկցում եր նույն սևահեր ուսանողը: Առանց մի խոսք ասելու, նրանք բռնեցին Պյոտրի թևերից ու տարան մի մութ միջավոդոց:

— Ո՞վ եք դուք,—հարցրեց պատանին, յերբ նրանք հայտնվեցին խուլ տեղում:

— Յես արդեն ասացի:

— Վորևե փաստաթուղթ ունե՞ք:

— Վո՛չ:

— Պեչատում ո՞ւմ եք ճանաչում:

— Վոչ վոքի:

— Ի՞նչ եք մտադիր անելու այստեղ:

— Ամենից առաջ ուզում եմ կուշտ քնել:

— Դուք պնդում եք, որ կոմունի՞ստ եք:

— Այո՛, պնդում եմ:

— Հապա ինչո՞ւ չեք դիմում կոմունիստներին:

— Յեթե իմանայի, թե վո՞րտեղ կարող եմ գտնել նրանց:

— Այդ յես ել չգիտեմ: Բայց թերթերում գրում են, որ նրանք վիեննայումն են:

— Դա մի քիչ հեռու յե:

— Հա, իսկապես: Բայց... կոմունիստ առաջնորդներից ո՞ւմ եք ճանաչում:

— Համարյա բոլորին:

— Լանդլերի՞ն:

— Ճանաչում եմ:

— Իսկ նա ձեզ ճանաչո՞ւմ է:

— Ճանաչում է: Տարօրինակ հարցեր եք տալիս:

— Յես առաջին անգամ եմ խոսում կենդանի կոմունիստի հետ: Հա՛, վո՞նց է ձեր ազգանունը: Իհարկե, իսկականը:

Մի րոպե միտք անելուց հետո, Պյոտրը հայտնեց իր ազգանունը: Իսկականը:

— Լանդլերը ձեզ ճանաչում է ա՞յդ ազգանունով:

— Այո՛:

— Վերջին անգամ վորտե՞ղ եյիք աշխատում:

— Բրատիսլավայում: Դրանից առաջ նստած եյի Բերեգովոյի բանտում: Իսկ ե՛լ ավելի առաջ քարտուղար եյի Սոլվայի կազմակերպության մեջ:

— Բրատիսլավա... Բերեգովո... Սոլվա...— կրկնեց մի քանի անգամ պատանին: Նա ուզում եր լավ հիշել:

Պյոտրն իրեն շատ վատ եր զգում: Հարցաքննության ժամանակ նա մի քանի անգամ պատրաստ եր պատասխանել հանգուցյալ մոնով: Մնում է միայն մի բան, որ նրանք իրեն թողնեն փողոցում:

«Գնե՛լ: Գնե՛լ»...

Կիպ սղմված իրար, նրանց մոտով անցավ յերիտասարդ մի

դուդ: Տղամարդն ասաց ինչ-որ բան: Աղջիկը բարձրաձայն ծիծաղեց: Պյոտրն ակամա հայհոյեց:

— Կամա՛ց կամա՛ց,—սաստեց նրան աղջիկը:

Լուռ գնում էին նրանք թուլլ լուսավորված փողոցով: Կանգ առան խավարի մեջ թաղված միջափողոցի անկյունում:

Աղջիկը հրաժեշտ տվեց և անհայտացավ խավարի մեջ: Պյոտրը և իր ուղեկիցը յետ դարձան Նիկոլայ Մորաի պողոտայի ուղղությամբ: Պողոտային չհասած, նրանք ծռվեցին դեպի աջ, դեպի նեղ ծուռ մի միջափողոց:

— Նո՛ւ, հետո ի՞նչ,—հարցրեց Պյոտրը:

— Այս դիշեր, դուդե և վաղը, թվում է ինձ, յես կարող եմ տեղավորել ձեզ: Դա այն բոլորն է, ինչ կարող եմ անել: Մենք յերիտասարդ սոցիալ-դեմոկրատներ ենք: Մեզ չի թուլլատրը-վում... Իսկ յեթե նույնիսկ թուլլատրվեր, մենք չեյինք կարող ոգնել կոմունիստներին: Բայց այսօրվա համար յես կարող եմ տեղավորել ձեզ:

Նրանք անցան մի հին մեծ տան կիսախավար բակով: Ցետին տանդուխտներով բարձրացան հինգերորդ հարկը: Զանգահարեցին: Դուռը բացեց ցածրահասակ, հաստլիկ մի պառավ:

— Բարի յերեկո, մորաքուլր Սարո: Մահճակալ կճարվի ձեզ մոտ:

— Ներեցեք, համեցեք, պարոն Հոֆման: Դիշերվա համար եք ուզում, թե՞ ցերեկվա: Ներեցեք, ներս յեկեք:

Միջանցում կանդնած եր ծանր, թթու հոտ: Թեև անց եր կացրած ելեկտրականություն, բայց սեղանին ծխում եր կերոսինի լամպը:

— Կամա՛ց, աղունիկներս, կամա՛ց,—թշշաց նրանց վրա մորաքուլր Սարոն:—Խնդրեմ, չաղմկեք: Իմ կենդանիներից յերկուսը քնած են... Դիշերվա համար ձեզ անկողին և պե՞տք: Ուրախ եմ, ուրախ եմ ծառայելու: Համեցեք: Նովիկը—հացթուխ—չատ կարդին ու մաքրասեր մարդ է: Նա տանից դուրս է գնում յերեկոյան ճիշտ ժամի յոթին, իսկ վերադառնում է առավոտյան վեցի մոտ: Մի խոսքով՝ յոթից մինչև յոթ: Իմ անկողինը մաքուր է, լայն, ամեն պարոնի կարող եմ հանգիստ խղճով հանձնարարել: Սենյակում գիշերում են ընդամենը չորս հոգի: Աղջիկ բերել չի կարելի: Գիտեք ինչ, յես անառակություն տանել չեմ կարող: Մի խոսքով:

— Շատ լավ, մորաքուլր Սարո: Կարիք չկա, վոր դուք ինձ

բացատրեք, թե ո՛վ ունի Բուդայում ամենալավ անկողիններ: Մեզ մահճակալ և պետք այսօր և ելի մեկ կամ յերկու գիշեր:

— Այսօրվա, վաղվա և մյուս որվա համար...—մորաքուլր Սարոն հաշվեց մատների վրա:—Մի խոսքով, յերեք գիշերվա համա՞ր: Համաձայն եմ: Ինչ վերաբերում է գնին, պիտի ա-ռեմ...

— Ստացեք կանխավճար,—և Հոֆմանը դրամը խրեց պա-ռակի ափը:—Մնացածը վաղը: Փաստաթղթերը կստանաք մյուս որը: Գրանցման համար կարելի յե մի յերկու որ սպասել: Իմ բարեկամը հենց նոր է յեկել Կիչկեմետից, խակ բազաժը դեռ չի ստացվել: Բոլոր փաստաթղթերը մնացել են բազաժի մեջ: Ա-սենք, ձեզ քաջ հայտնի յե, մորաքուլր Սարո, վոր այն մարդիկ, վորոնց յես բերում եմ ձեզ մոտ...

— Գիտե՛մ, աղունիկս, գիտե՛մ: Դե ձեզ ել լավ հայտնի յե, պարոն Հոֆման, վոր յես միշտ ուրախ եմ ծառայելու ձեզ:

— Շնորհակալություն, մորաքուլր, Սարո, չնորհակալ եմ:

Նա ձեռքը մեկնեց մորաքուլր Սարոյին, հրաժեշտ տվեց Պյոտրին:

— Վաղը, յերեկոյան յոթին: Նույն տեղը, վորտեղ եյինք այսօր:

Մորաքուլր Սարոն իջեցրեց ծխացող լամպի պատուլդը:

— Կամա՛ց, սիրելիք, կամա՛ց... Շնորհեցեք ինձ ձեր ա-նունը,—դիմեց նա Պյոտրին:

— Ինձ կանչում են Սաեֆան Բալոգ,—պատասխանեց Պյոտրը:

— Նո՛ւ, թանկագին պարոն Բալոգ, հանեք կոշիկները, և յես կառաջնորդեմ ձեզ ննջարան: Ցերկու հոգի արդեն խոմփա-նում են, դուք կլինեք յերրորդը: Զորրորդը միշտ ուշ և տուն դալիս: Ինչպես յերևում է, քաջ և գալիս աղջիկների յետևից: Բայց, պիտի ասեմ, վոր նա չատ աղնիվ պարոն է: Ինքներդ կտես-նեք, պարոն Բալոգ:

Մի տեսակ թթու հոտ եր գալիս ննջարանից, ուր մտավ Պյոտրը վոտաբոբիկ, կոշիկները բռնած ձեռքին: Սենյակում կար յերկու յերկաթե մահճակալ. հատակին փռած եր յերկու ներքնակ: Պատուհանին դրված գիշերվա ճրագի լույսով կարելի յեր տեսնել, վոր մահճակալներն զբաղված եյին: Ասենք, մորաքուլր Սարոն ժամանակ չտվեց մեզ անելու: Նչելով յերկու մահճա-կալի միջև փռած ներքնակը, նա չննջաց.

— Ահա ձեր անկողինը,—պարոն Բալոգ:

Պյոտրը կոչիկները դրեց մահճակալներից մեկի տակ և պատրաստվում էր հանվել, բայց հանկարծ մի բան փոխեց։ Զարմանք ու ժամանակ ուշ ջանք կորցնել դրա վրա։ Ինչպես կար, հագուստով, նա ընկավ ներքնակին և գլխին քաշեց փետրալից վերմակը՝ ծաղկավոր յերեսով։

«Ա՛հա, թե ինչի՛ց է թթու հոտ գալիս»,—անցավ նրա մտքով։

Նա խկուն քնեց։ Թվում էր, թե նա նոր էր փակել աչքերը, յերբ մեկի անողոք ձեռքերը նշան դուրս բերին սքանչելի մոռացությունից։

Վարագույրների ճեղքերից սենյակ էր մտնում ադոտ թույլ լույս, որը դեռ անզոր էր հաղթահարելու դիշերաճրագի առկայծումը։ Մի նոր, սիրտ խառնող զարշելի հոտ կլանեց սենյակի թթված բույրը։

Պյոտրի վրա կռացավ ճաղատ, անորոշ տարիքի մի մարդ, խողանի պես կոշտ բեխերով։ Նա բոլորովին մերկ էր և թևի տակ բռնել էր զգեստը, որը խնամքով փաթաթել էր չապկի մեջ։

— Արդեն առավոտ է, ժամանակ է վեր կենալու, պարոն հարևան,—ասաց մերկ մարդը, յերբ խիստ ցնցումից Պյոտրը բացեց քնկոտ աչքերը։

— Նովիկ,— ներկայացավ անծանոթը, ձեռքը մեկնելով Պյոտրին։— Այսպես ուրեմն, յեթե թույլ կտաք... Առավոտները յես սառաիկ հոդնած եմ լինում։

Պյոտրը հագիվ հաղ վեր կացավ։

Նովիկին իր փաթաթած հագուստը դրեց բարձի տակ, վերարկուից ծաղկավոր վերմակը քաշեց գլխին, և Պյոտրը դեռ չէր ուղղել իր հոդերը, յերբ նա խամփեց։

Պյոտրը գնաց խոհանոց և ջրմուղի ծորակի տակ լվացվեց մինչև գոտին։ Նա դեռ էր իրեն ջարդված, քնահար։ Մարմինը ցնցվում էր պաղ ջրից։ Նա սրբվեց, չորացավ քաթանե լաթով, որ փոխարինում էր յերեսսրբիչին։ Այժմ նրա մարմինը վառվում էր հաճելի ինքնագգացումով։ Հոգնածությունն անցավ։

Մորաքույր Սարոն առաջարկեց նրան խողանակներ՝ հագուստի և կոշիկների համար։ Նա զբաղվեց իր տուալետով։ Նրա հետ միասին խոհանոցում հաղնվում էր հասակավոր ճաղատ մարդը։ Շտապ հաղնելով իր հնամաշ սև զգեստը, անծանոթը նախաճաշ խնդրեց մորաքույր Սարոյից։

— Իսկ դուք, պարոն Բալոդ, չեյի՞ք կամենա։

— Բարի յեղեք։

Մորաքույր Սարոն թեյ լցրեց կավե մեծ գավաթների մեջ և մարգարինը քսելով հացի յերկու մեծ կտորի վրա, դրեց անուշադրաց սեղանին։

— Յերեխ, դուք և պարոն Հոֆմանը վաղեմի բարեկամներ եք,—հարցրեց մորաքույր Սարոն։

Պյոտրն անորոշ կերպով հիշեց, վոր յերեկ յերեկոյան մորաքույր Սարոն այդ անունով էր կանչում սևահեր պատանուն։ Բայց թե ի՛նչ էր ասված մորաքրոջն իրենց ծանոթության մասին,—նա բացարձակապես վոչինչ չէր հիշում։

— Հը՛մ...—բռնչաց նա պատասխանի փոխարեն։

— Յես այդպես էլ կարծում էյի,—ուրախացավ պառավը, սերուցիը չարժելով գլուխը։—Պարոն Հոֆմանը բացառիկ ազնիվ ու լավ մարդ է։ Նրա բերած պարոնների հետ յերբեք վոչ մի թյուրիմացություն չի լինում՝ վո՛չ վճարի վերաբերմամբ, վո՛չ էլ գրանցման։ Նրա բարեկամները վախենալու բան չունեն։ Զե՛ վոր կան մարդիկ, վորոնք թաղնվում են վոստիկանությունից։

— Լավ յեղանակ է այսոր,—խոսքը փոխեց սև հագուստով հասակավոր մարդը։

— Ի՛նչ եք ասում, ի՛նչ եք ասում, ամբողջ գիշեր անձրև էր գալիս։ Հիմա յել մաղմղում է։

— Վոչի՛նչ, կանցնի,—հանգստացուցիչ տոնով ասաց նա։— Իմ ազգանունը Նիտրաի յե,—ներկայացավ նա Պյոտրին և ավելացրեց։—յեթե յերկինքն այդքան առատաձեռն է ջրի վերաբերմամբ, հի՛-հի-հի, ապա յես կարծում եմ, վոր մորաքույր Սարոն չի խնայի ինձ համար յելի մի գավաթ թեյ։ Հի՛-հի՛-հի՛...

Ազատվելով իր հինգորյա խողանից առաջին պատահած վարսավիրանոցում, Պյոտրը դիմեց քաղաք։

Ամպամած առավոտվա ադոտ լույսի մեջ նրան թվում էր, թե այն ժամանակամիջոցին, մինչ ինքը թափառում էր Ավազուխայում ու Զեխիայում, Բուդայի փողոցները, հենց քաղաքն անդամ ամբողջապես, կարծես՝ փոքրացել են։ Փոխվել էր տրամվայների ղույնը, ամբոխի արտաքին տեսքը։ Մարդիկ հագնված էյին վո՛չ վատ, քան Բրատիսլավայում կամ Վիեննայում, բայց սպիտակ տերորի քաղաքում Պյոտրին տարորինակ էր թվում արտաքուստ անփույթ և տոնական այդ ամբոխը։ Ճիշտ է, պահում էյին բավական թվով հոգնանիչ դեմքեր, բայց Պյոտրը դուր էր գտնում նրանց վրա տարօրինակ արտահայտություն կամ մահվան յերկյուղ։

Որն արդեն մթնում էր, երբ Պյոտրը մոտեցավ Տյոկելի պողոտային: Փոքրիկ կաֆեյում նա թողեց իր վերջին կոպեկները, և ժամի դեռ յոթը չկար, երբ նա կանգնեց մետաղագործների տան առաջ:

Վաղ մթնեց: Գաղի լապտերները վառել էին ժամը յոթից շատ առաջ: Շաղում էր բարակ անձրև: Ցետ ու առաջ քայլելով մետաղագործների Տան դիմաց, Պյոտրն անձնատուր լեղավ իր ծանր մտքերին: Կուսակցական աշխատանքների մեջ մարդ յերբեք մենակ չի մնում,—նա ունի ընկերներ: Բայց յեթե նա մեքենաբար դուրս յեկավ չարժումից... այդ դեպքում՝ ինչպես ասել: Ի՞նչ նպատակ ունի կյանքը, առանց ընկերների, առանց աշխատանքի: Ի՞նչպես ոտարացել է նրան այս քաղաքը: Կկարողանա՞ արդյոք մտնել նրա կյանքի մեջ...

Պյոտրը խորը հառաչեց: Կամքի ուժով նա ստիպեց իրեն՝ մտածել կողմնակի բանի մասին:

Ժամագործի պատուհանում ժամացույցը ցույց էր տալիս յոթից տաս րոպե անց:

Մետաղագործների Տան վեստիբյուլում նրան կանգնեցրեց մի յերիտասարդ:

Պյոտրին թվաց, վոր ինքը մի տեղ արդեն տեսել է այդ կարճահասակ չիկավուն պատանուն: Բայց հատկապես վորտեղ, չկարողացավ հիշել:

— Մենք պատահեցինք յերեկ յերեկոյան զեկուցցի ժամանակ: Ցես նստել էլի ձեր կողքին,—պատասխանեց անծանոթը Պյոտրի հարցական հայացքին:—Դուք կարիք չունեք բարձրանալու յոթերորդ սենյակը: Ավելի լավ է, դուրս գանք փողոց, այնտեղ խոսենք... Ձեզ համար ընկերները հավաքել են հարյուր յոթանասուն քրոն,—չարունակեց նա, յերբ նրանք հայտնվեցին փողոցում:—Չկարողացանք ավելի հավաքել: Մենք ինքներս էլ վոչինչ չունենք: Առայժմ գնացեք տուն: Մյուս որը յերեկոյան յեկեք կաշեգործների միությունը՝ Ներքին Լեռնայա փողոցում: Կսպասեմ ձեզ: Սենյակ՝ համար տասնումեկ: Ցեթե բնակարանի տիրուհին դրամ պահանջի, տվեք նրան քսան քրոն: Ցեթե վտանգներ ուղի, տվեք յերեսուն... Ցերևի, դուք հազուստ ու սպիտակեղեն էլ չունեք:

— Ինչ վոր կա, վրաս է:

— Այսպես: Կտեսնենք, մի բան կանենք: Զմոռանաք—մյուս

որը յերեկոյան, կաշեգործների միությունը, սենյակ՝ համար տասնումեկ: Մինչ այդ, վոչ վոքի հետ, բացարձակապես վոչ վոքի հետ մի՛ ծանոթանաք և մի՛ խոսեք: Կարդացեք, զրոսնեք, արեք, ինչ վոր կուզեք, միայն մի ծանոթացեք: Ցտեսություն:

Իննից քիչ անց, փետրալից ծաղկավոր վերմակը քաշելով դլխին, Պյոտրը քնեց և քնած եր ամուր, յերբ Նովիկը զարթեցրեց նրան:

Առավոտյան պաղ ջուր, թեյ, մարգարինով բուտերբրոդ, մորաքուլը Սարայի հարցուփորձ:

Փողոցում նա դնեց մի քանի թերթ և տեղավորվելով Դունայի դետափին դրած նստարանին, սկսեց կարդալ: Հոդնածությունն անցավ, դլուխը թարմ եր, բայց և այնպես նա լավ չեր հասկանում կարդացածը: Քաղաքագիտների ճառեր, ժուրնալիստների հոդվածներ: Շատ ու շատ բառեր զանազան թեմաների մասին: Սակայն, պարզ է, վոր նա չեր կարող դանել այն, ինչ հետաքրքրում եր նրան: Դրա մասին չեյին դրում: Անգամ տողերի մեջև չեր կարելի կարդալ, վոր այստեղ պատրաստվում է վերջին կռիվը հակահեղափոխության դեմ: Հայտարարություններ... Ինչպես առաջ, դրամ ունեցողը կարող է դնել այն բոլորը, ինչ վոր կցանկանա: Վոչ մի խոսք հացի, վոտնամանի, կաթի, դգեստի քարտերի մասին: Բնորոշ է, վոր թերթերը վայլում են վոչ միայն առաջարկների հայտարարություններով, այլ և աշխատանքի պահանջներով: Փակում ու բացում են խանութները: Մարդիկ ծնվում, մեռնում են, աշխատում են, դառնում են դործազուրկ, նորից աշխատանք են ստանում, ամուսնանում են, հաճախում են թատրոն, կարդում, սովորում են, պարապում են բարեդործությամբ, կռվտում են, հաչտվում, հիվանդանում են, առողջանում, սուլ են քաչում, դոդանում են, ազահաբար լափում,—մի խոսքով՝ անում են միևնույնը, ինչ և այն յերկրներում, վորտեղ նա անցուդարձ եր վերջին տարին: «Լիովին հասկանալի չե, թե ի՞նչ է կատարվում այստեղ,—մտածեց Պյոտրը,—բայց պարզ է մի բան. Հունդարիայում նույնպես մարդիկ ապրում են: Սակայն...»:

Նա հիշեց այն հոդվածը, վոր նորերս կարդացել եր Վիեննայում հրատարակվող կուսակցական մի թերթում: Հոդվածը նկարագրում եր կյանքի պայմանները Հունդարիայում: Նրա աչքերի առաջ պարզորեն պատկերացավ տողերի հետ տառաչարը.

«Ով ընդունում է խորտիկ բանկնոտները,
նա արժանի չէ դառնում և խորտիկ մահակին»

«... Ինչո՞ւ պետք է բանվորը հրաժարվի խորտիկ բանկնոտներից, յերբ նրանցով կարելի չէ դնել ամեն բան: Ցավ ի՞նչ կասի բերի իր և իր ընտանիքի ապրուստի համար այդ բանկնոտները, յերբ մենք կպահանջենք նրանից՝ չընդունել նույնիսկ այն քիչ բանը, վոր տալիս են նրան...»:

Պյոտրը աչքի յեր անցնում արդեն չորրորդ թերթը: Ամեն կողմից, կրքոտ դիսկուսիաներ մանր-մունր, դատարկ խնդիրների շուրջը: Մասխարություն: Բայց յեթե այդ խնդիրներն առաջ են բերում այդպիսի տաք վիճաբանութիւններ, ուրեմն, նրանց մեջ մի բան է թաղնված: Նոր խմբակցութիւններ, կուսակցութիւններ: Պատմական անունով ինչ-վոր մի կոմս, խոչոր կալվածատեր—մանր գյուղացիների կուսակցության անդամ: Նույնպես և Պեչի բանկի դիրեկտորներից մեկը: Ամենուր առաջին պլանի վրա յե մանր գյուղացիների կուսակցությունը: Կոմսեր, բանկիրներ, դե՛, իհարկե, և կուլակների վոհմակը: Նոր, անծանոթ անուններ: Հակահեղափոխությունը հրապարակ քաշեց նրան անհայտ վորքա՞ն մարդկանց:

Պյոտրը կարդում եր: Դատում. մտածում եր կարդացածի մասին: Ցավ նորից խորասուզվում եր թերթի մեջ:

Բանից դուրս է գալիս, վոր սպիտակ տերրորի յերկրում նույնպես ընթանում է կյանքը: Դա փաստ է: Բայց այդ կյանքն այնպես չէ, ինչպես Պյոտրը պատկերացնում է իրեն և ինչպես պատկերացնում է ընկերների մեծ մասն արտասահմանում: Իզեթե, մի տարի առաջ կյանքն այդպես էլ յեղել է: Սակայն, վո՛նց ամեն ինչ փոխվեց այն որից:

Կեսորին նա բարձրացավ ս. Գեյլերտի սարը: Այնտեղից յերևացող տեսարանը տարածվում եր մինչև Ուլպեչտ: Դանուբով լողում եյին չոգենավեր: Հոսանքի ուղղությամբ վերև՝ դեպի Վիեննա, ներքև՝ դեպի Սև ծովը:

«Անվիճելի յե, վոր չարունակվում է պայքարը չահագործողների ու չահագործվողների մեջև: Ցեթե պայքարը տարվում է վո՛չ այնպես, ինչպես սովոր եմ յես պատկերացնել այն, ուրեմն, տարվում է այլ կերպ: Այո՛: Իսկ յեթե պայքարը տարվում է այլ կերպ...»:

Մինչև այժմ Պյոտրի համար կոմունիստական կուսակցության ղինվորները Հունգարիայում այն ընկերներն եյին միայն, վորոնց ճանաչում եր, նաև նրանք, վորոնց նա թեև չեր ճանաչում, բայց նրանք էլ իր պես սկսել եյին մի նոր կռիվներում: Առաջին անգամ նա մտաբերեց, վոր պայքարը նոր ետապում հասցրեց, մեծացրեց նոր մարտիկներ, վորոնց չես ընթանում, կյանք կա: Չես զարմացնի այն մարդկանց, վորոնք գիտեն, թե ի՞նչպես կարելի չե և ի՞նչպես պետք է աշխատել այժմ, նոր պայմաններում:

«Մարդ պետք է սովորի, յեթե չի ուզում յետ մնալ,—ասաց ինքն իրեն Պյոտրը:—Ժամանակը դեռ չի անցել: Ցես քսան յերկու տարեկան եմ: Բայց թեկուզ լինեյի յոթանասուն յերկու տարեկան, զարձյալ չեյի կարչի միևնույն կեսին: Մի՞թե չեյի սկսի սովորել նոր ձևով ապրելու և աշխատելու յեղանակը...»:

Նա յերկար նայում եր Ուլպեչտի կողմը: Վացկի պողոտայի վրա մխում եյին գործարանների ծխնելույզները:

Կաշեգործների Տան № 11 սենյակը փակ եր: Սենյակը չբաժին վո՛չ ժամն ութին, վո՛չ իննին: Մինչև իննից կես անց, Պյոտրը յետ ու առաջ գնում-գալիս եր փողոցի մայթով: Հետո գնացել յետ ու առաջ գնում-գալիս եր փողոցի մայթով: Հետո գնաց տուն: Նա վոչ դրամ ուներ, վոչ էլ փաստաթղթեր, իսկ մորքուր Սաբոն արդեն յերկու անգամ խոսք եր բացել գրանցման մասին,—բայց չնայած դրան, նա չեր հուսահատվում: Գուցե, չնախատեսված ինչ-ինչ հանգամանքների պատճառով չկայացավ նշանակված հանդիպումը. սակայն, ինքը՝ Պյոտրը, առանց իմանալու, թե ինչու, վստահ եր, վոր ընկերները չեն լքի իրեն: Վստահ եր, վոր գտնվում է բարեկամների շրջանում, վորոնք անհայտ եյին նրան, բայց արդեն մոտիկ: Վոչ պակաս մոտիկ այն ընկերներից, վորոնց հետ նրան կապում եյին յերկար տարիները: Վստահ եր, վոր գտնվում է ընկերների մեջ, վորոնք Բուդապեշտում այժմ նույնպես տանն եյին, ինչպես ինքը՝ Պյոտրը տանն եր, ասենք թե Մերձկարպատյան Ռուսիայում: Այդ ընկերները նրան ներս կհաշեն աշխատանքի մեջ, Պյոտրը համոզված եր այդ բանում: Թե յե՛րբ և ինչպե՛ս, դա նրանք ավելի լավ գիտեն: Բայց վոր ներս կբաշեն,—դրանում կասկած չկար:

Այն տան առաջ, վորտեղ ապրում եր մորաքույր Սաբոն, նրան սպասում եր սևահեր Հոֆմանը:

— Գնանք ինձ հետ,—ասաց նա:—Այսոր ձերբակալվել է այն

ընկերը, վորի հետ դուք պետք է տեսնվեիք Լեռնային փողոցում: Ձեզ չեյի կարող դալ կաչեզործների մոտ, վճռեցի սպասել ձեզ այստեղ:

Նա թևանցուկ բռնեց Պյոտրին և դանդաղ քայլելով Նիկոլայ Խորտիի պողոտայի ուղղությամբ, ցած ձայնով ասաց.

— Վիեննայից ստացվել են ձեր թղթերը: Շերուկը ջերմ վողջույն և ուղարկում ձեզ: Նա ձեզ համար ուղարկել է հինդ հարյուր քրոն... Կամա՞ց, ընկեր, մենք փողոցում ենք:

Ցեթե Հոֆմանի տեղ լիներ Պյոտրիկը, Գոտեմանը կամ Սեկերիչը, Պյոտրը նրանց կպաչպչեր և կդրկեր այդպիսի հաղորդագրության համար: Բայց այդ սևահեր պատանին խոսում եր այնպիսի հանդիստ, համարյա սառցային տոնով, վոր անմիտ բան եր նրան դրկելը: Ճիշտ է, նա ամուր սղմեց Պյոտրի ձեռքը, և նրա ձայնը հնչեց սովորականից ավելի մեղմ, բայց և այնպես, անկարելի յեր նրան դրկելը,—նա այնպիսի մարդ չեր:

Պյոտրը զսպեց իր սրտի բուռն հույզը և ասաց նույնպես հանդիստ ու կամաց.

— Այժմ յես տանն եմ:

ՆՈՐ ՊԱՐԱԳԱ

Խոսում եր սևահեր Տոմպան: Իր խոսքերը նա ուղեդրում եր աջ ձեռքի սահիկ չարժումներով: Ձախը՝ դրած ուներ գրպանում: Պյոտրն այն տպավորությունն ստացավ, վոր ինչի մասին էլ խոսելու լիներ Տոմպան,—թվում եր, թե նա ուսուցանում է:

— Հարցն այն է, թե ինչի՞ համար և մարդ ընկնում: Ինչի համար իսկապես,—չեշտեց Տոմպան:—Մենք չարունակ պնդում ենք, վոր ռոմանտիկան տեղ չունի մեր ժամանակներում: Մինչդեռ, ինքներս յերբեմն ընկնում ենք ռոմանտիկայի մեջ: Հասկանում եք, ընկեր,—դիմեց նա Պյոտրին,—տրամվայի լիընթաց ժամանակ տղան թռավ մեր վագոնը, նետեց մի կապոց թռուցիկները և դուրս ցատկեց... Սայթաքեց: Ընկավ: Չկարողացավ մեկեն կանգնել, նրան ոդնեց վոստիկանը: Մինչ այս, մինչ այն, յեկավ-հասավ տրամվայի կոնդուկտորը, ձեռքին մի կապոց թռուցիկներ, վորոնց նմանը դուք հենց այժմ տեսաք. «Հրդեհեցեք յերկիրը բոլոր ծայրերից...»: Այժմյան որենքներով, դրա համար տրվում է վոչ պակաս, քան հինգ-վեց տարի: Իսկ ո՞ւմ և դա պետք: Ցեթե պատահմամբ այդպիսի արարքը պահվում է

հաջողությամբ, մեկնում է, վո՛չ մի ոգուտ դրանից: Իսկ հաճախ վերջանում է, ինչպես այս ընկերոջ հետ: Ե՛-ե՛խ...

Շիկահեր աղջիկը կկոցելով կարճատես աչքերը, դառնալով Պյոտրին, ասաց խորունկ թավ ձայնով.

— Ցերեկ չե, մյուս որը յերեկոյան կերանայում[1]) մեզ հաջողվեց գործարաններից մեկի պատի վրա յուղաներկով գրել հետևյալ կոչը. «Պորհրդային իշխանություն Ռուսաստանում,.. Սպիտակ տերրոր Հունգարիայում...»: Նու, մի խոսքով, դուք յերևակայո՞ւմ եք, թե մենք ինչ գրեցինք այնտեղ: Փոքրիկ Մարտոնը,—դուք նրան չուտով կտեսնեք,— ինչ վոր բան խառնեց ներկերին: Նրանք այնպես զիմացկուն եյին, վոր վոստիկանները մեծ դժվարությամբ քերեցին գրածը: Կերանայում ամենքը խոսում եյին միայն դրա մասին: Ա՛յ, ինչ ասել՝ հաջողություն:

— Այո՛,—թթու քմծիծաղեց Տոմպան:—Դա հաջողություն է, բայց դրա մեջ էլ գործնական վոչինչ չկա: Մեկ-յերկու որ կխոսեն մեր «տրյուկի» մասին—ուրիչ վոչինչ: Վո՛չ մի դրական հետևանք: Ահաբեկչական հղություն:

Նրանք նստած եյին Վերայի սենյակում: Գրասեղանի վրա կանաչ լուսամփոփով լամպ: Բաց գրապահարան: Ծալովի մահճակալ, յերեք աթոռ: Ցերկաթե փոքրիկ վառարան: Այսոր առաջին անգամ վառեցին այն:

Շիկահեր Վերա Սորին, ինչպես և Անդրեյ Տոմպան, ուսանում են համալսարանում: Նրանք յերկուսն էլ պատրաստվում են դառնալ միջնակարգ դպրոցների դասատու: Բարձրահասակ, չեկ, խաժաչյա տղային Վերան և Անդրեյը կանչում են Լացի: Նրա նուրբ դիմագծերին չեն ներդաշնակում հաստ, խափչիկի չուրթերը և կոչտ, բանվորական ձեռքերը:

— Վոչ վոք մեղավոր չե,—բարկացկոտ ասում է Լացին:— Շատ լավ գիտենք, վոր մեր աշխատանքից մեծ ոգուտ չկա, բայց և այնպես՝ մենք ենք խցկվում...

Անդրեյը կանգնած է անշարժ, գեմքով դարձած գեպի լամպը: Վերան համակրանքով չարժում է գլուխը:

— «Հրդեհեցեք յերկիրը բոլոր ծայրերից»,—տնազեց Անդրեյը, յերբ լռեց Լացին:—Հրաշալի՞ յե: Բայց ինչի՞ համար «հրդեհել»: Ինչպե՞ս «հրդեհել»: Ո՞վ պետք է «հրդեհի»: Ցերբ

[1]) Բուդապեշտի ռայոններից մեկը:

պատերազմի ժամանակ մենք ասում էինք դինվորներին. «Զդեք զենքը», կամ հետո, որինակ վերցնելով ռուսներից, սովորեցնում էինք նրանց՝ զենքը դարձնել իսկական թշնամու դեմ,—մեր խոսքերն իմաստ ունէին: Իսկ դա ի՞նչ է... Կարծես, մենք մեր յետևում ունենք մեծ փորձառություն, մինչդեռ, սոսկալի վատ ենք աշխատում: Բանից դուրս է գալիս, վոչինչ չենք սովորել: Չե՞ վոր պետք է հաշվի առնել, վոր դրությունն այժմ բոլորովին այլ է, իսկ մենք կիրառում ենք հնացած պրիոմները:

Նա դառը ժպտաց:

— Վոչ բոլորովին այդպես,— առարկեց Լացին, ձեռքով մոտազրաղ չփնելով ոսկեհատիկ բարձր ճակատը:—Վո՛չ բոլորովին այդպես,—կրկնեց նա ելի մի անգամ: Միայն յես, դժբախտաբար, չեմ կարողանում բավարար ճշտությամբ արտահայտել իմ միտքը: Այժմ, ինչպես և այն ժամանակ, մենք դործ ունենք քայքայման պրոցեսի հետ... Նու, ի՞նչպես ասեմ ավելի լավ... Իշխանությունը, վաստակած իշխանությունը, այժմ, ինչպես և այն ժամանակ, անցնում է բուրժուազիայի մի խմբակից մյուսին: Ուրիշ խոսքով...

— Միանդամայն ճիշտ է: Մոշոր կապիտալը, ավելի ճիշտ՝ ֆինանսական կապիտալը նորից անցել է իշխանության դլուխ: Թող նրբի ինձ ընկեր Կովաչը,—դիմեց Տոմպան Պյոտրին,—այնտեղ, ձեզ մոտ՝ Վիեննայում, դեռ չեն ըմբռնել այդ բանը. ուստի, հենց այդ պատճառով էլ ձեր տակտիկան սխալ է: Ձեզ մոլորեցնում է այն հանդամանքը, վոր բանկիրները և կոմսերը մտնում են մանր սեփականատերերի կոալիցիայի մեջ: Դրանից դուք հետևցնում եք, վոր մանր սեփականատերերը դրության տերն են: Այդ տեսակ բան չկա,—և նա ձեռքով խիստ չարժում արավ:—Մոշոր կապիտալը չատ հաջող կերպով արշավում է: Վերցրեք ֆինանսների մինիստրի յուրաքանչյուր ճառը: Վոմանք այդ պարոնին համարում են հանճար, վոմանք՝ խելագար: Իրոք, նա վո՛չ այս է, վո՛չ այն: Նա բանկիրների ճարպիկ դործակալ է: Հարկային ու վալյուտային իր քաղաքականությամբ նա արագ տեմպերով գնում է դեպի այն մոմենտը, յերբ բանկերը, դյուղացուն խեղդելուց հետո, կարող են թելադրել իրենց պայմանները դյուղին: Պետական իշխանությունը կայունացել է, ֆինանսական կապիտալը նորից իր ձեռքն առավ վարչության դեկը և իր լուծը դրեց ժողովրդի վղին: Ով չի ըմբռնել այդ բանը, նա չի կարող վարել ճիշտ քաղաքականություն:

— Կաց, կաց! Յերբ Անդրեյն սկսում է մի բան ապացուցել, նա միշտ ընկնում է ծայրահեղության մեջ: Դու, կարծես, բոլորովին մոռացար, վոր մոտիկ անցյալում, ընդամենը յերեք ամիս սրանից առաջ, յերբ ռուսները կանգնած էին Լվովի պատիս սրանից առաջ, յերբ ռուսները կանգնած էին Լվովի պատիսների տակ, և՛ հուչակավոր ազդային բանակը, և՛ վոստիկանությունը, և՛... յես կարծում եմ,—Վերան ժպտաց,—բացառությամբ սոցիալ-դեմոկրատների, ամբողջ յերկիրը տատանվեց: Գիտե՞ք արդյոք, Պյոտր, թե ինչ պատահեց: Բանակում վերակացուները պահանջում էին կալանավորներից հավատարիմ այն մասին, վոր նրանց հետ լավ էին վերաբերվում: Մանր բուրժուազիան... Յես պրոֆեսոր չեմ...—Վերան աչքով արավ Անդրեյին,—յես պրոֆեսոր չեմ, բայց յես համոզված եմ մի բանում. յերեք ամիս դեռ սրանից առաջ Թռուցիկների հետ պատահած այն «տրյուկը», վոր այժմ կործանեց խեղճ Լանտոչին, կարող եր... քիչ մնաց՝ ասեի—«չարժման մեջ դնել»,—դա արդեն, իհարկե, հիպերբոլա յե, չափազանցություն,—բայց ճիշտ կլինի, յեթե ասեմ՝ կարող եր ալեկոծել քաղաքը: Այն ժամանակ կլինի, յեթե ասեմ՝ կարող եր ալեկոծել քաղաքը: Այն ժամանակ ամենքը,—այդպես չե՞, ընկեր Տոմպա,—բացարձակապես ամենքը հավատացած էին, վոր ռեակցիան ժամանակավոր յերևույթ է, կարճ անցողիկ ետապ, և վոչ վոք չեր կասկածում, վոր որեցոր նորից ամեն բան մերը կլինի...

— Մենք ամենքս սխալվեցինք,—ընդհատեց նրան Անդրեյը:—Բայց դա չի նշանակում դեռ, վոր....

— Կաց,—տեղից վեր թռավ Վերան:—Յես չվերջացրի: Մոսքը դեռ պատկանում է ինձ... Այն ժամանակ դիսկուսիա յեր բացվել այն բանի մասին, թե ո՛վ ավելի վաղ կգա—ռուսնե՞րը, թե՞ մեր եմիդրանտների բանակը: Մենք մեղ պատկերացնում էինք միայն այս յերկու հնարավորությունը: Դա յերեք ամիս սրանից առաջ եր: Վարշավայի մոտ պարտություն կրեց վո՛չ միայն ռուսական բանակը, այլև ամբողջ աշխարհիս աշխատավորությունը: Այդ թվում նաև մենք, ընկեր Տոմպա: Պարտությունից հետո սիտուացիան փոխվեց, այնպես չե՞: Պետք եր վերսմբավորվել, իրազեկ լինել նոր դրությանը, մշակել նոր տակտիկա:

— Դու բծախնդիր ես, Վերա,—դանդաղ սկսեց Տոմպան,—բծախնդիր ես այն բանին, վոր յես քննադատում եմ, կամ, ինչ-

պես դու չես ասում, «անարդում եմ» մեր ընկերներին: Բանն այդ չէ: Իմ քննադատությամբ չես հետամուտ չեմ՝ տալու այս կամ այն ընկերների գնահատականը: Ցես ուզում եմ հաստատել, որ հարկավոր են նոր մեթոդներ:

— Մենք արդեն բազմիցս հաստատել ենք դա:

— Ճիշտ է: Բայց վորովհետև մեր տեսական դրույթներից մինչև այսոր մենք դեռ չենք հանել գործնական վոչ մի հետևություն...

Անդրեյը լռեց մի վայրկյան:

— Դա ճիշտ է,—խոսեց նրա փոխարեն Պյոտրը:—Վերջին յերեք ամսվա ընթացքում ամեն ինչ սաստիկ փոխվեց: Բայց և այնպես...

Այստեղ Պյոտրը պատմեց իր հանդիպումը Գրիգորիյ Բալոդի հետ:

— Մի ծաղկով գարուն չի գա,—առարկեց Անդրեյը:

Սկզբում Պյոտրը մեծ ուշադրությամբ ունկնդրում, լսում եր կրքոտ, յերբեմն խիստ բանավեճը: Բայց յերբ դիսկուսիան չափազանց ձգձգվեց, և ընկերներն սկսեցին մանել մանրամասնությունների մեջ, վոր այնքան էլ հասկանալի չէլին նրան, նա անձնատուր յեղավ իր խոհերին:

Նկատելով, վոր վեճը հոգնեցրեց Պյոտրին, Վերան փոխեց խոսակցության նյութը:

— Ցերկու ամիս առաջ մենք յերեքս, սոցիալ-դեմոկրատ ուսանողության դրոշի տակ, պայմանավորվեցինք ու գնացինք պրոֆմիությունների Խորհուրդ և առաջարկեցինք, թե ուզում ենք հանրամատչելի դիտական դասախոսություններ կարդալ դարվինիզմի, աստղաբաշխության, պատմության, յերկրաբանության ու մի շարք այլ թեմաների մասին, վորոնք մոտավորապես նույն «ուղղակի» առնչություն ունեն դասակարգային պայքարի հետ, ինչպես և դրանք: Մենք այնպիսի վստահություն ձեռք բերինք, վոր յերեք շարաթ առաջ մեզ թույլ տվին նույնիսկ հրամցնել մեր ունկնդիրներին Մարքսի եկոնոմիկան, իհարկե, ըստ Կաուցկու: Մենք մեր խմբակներն ունենք արդեն վեց միության մեջ:

— Ավելի ճիշտ կլինի ասել՝ խմբակիկները,—ընդհատեց նրան Անդրեյը:

— Այժմ հարցը կայանում է նրանում, թե ո՛վ ում կդաս-

դրծի. արդյոք՝ պրոֆմիությո՞ւնը մեզ, թե՞ մենք պրոֆմիությանը:

Պյոտրն սկսեց պատմել Մերձկարպատյան Ռուսիայում տիրող դրության մասին:

— Շատ ուսանելի, խրատական է,—հավատում եր Անդրեյը:—կարճ ասած, դուք ձգտում եյիք վոչ ավելի, վոչ պակաս, այն բանին, վոր կոմունիստական կուսակցությունը դեկավար կուսակցություն դառնա... կապիտալիստական պետության մեջ: Ավելի ճիշտ, դուք ուզում եյիք այնպես անել, վոր կոմկուսը լեգալիզացիայի յենթարկվեր և ունենար դեկավար կուսակցության իրավունքնե՞ր... Վատահ յեղեք, վոր մեզ մոտ այդպիսի սխալներ չեն պատահի:

— Ինձ թվում է, վոր մեր պրոֆեսորը չափազանց ինքնավստահ է:

— Այո՛, յես վստահ եմ:

— Ե՛խ, ի՞նչպես իմանալ, թե ի՛նչ են անում այժմ մեր ընկերները Ռուսաստանում,—խոսակցությունը փոխեց Լացին իր սիրած հավիտենական թեմայի մասին:

— Ղրիմը վերցնելուց հետո, հաղթանակը վերջնականապես և անվերադարձորեն մնաց նրանց:

— Նո՛ւ, յես կարծում եմ, վոր նրանք յերևի ուրիշ գործեր էլ կունենան,—քմծիծաղեց Անդրեյը:

— Գիտեք, տղերք,—չարունակեց Լացին, ձեռքի սովորական չարժումով չվելով ճակատը,—ամեն անգամ, յերբ մենք սկսում ենք խոսել աշխատանքների վերակառուցման մասին, ինձ թվում է, վոր շատ ավելի լավ կլիներ, յեթե մենք ուղղակի դիմեյինք Լենինին: Ամենից խոսք: Նա մի անգամից բաց կաներ բոլոր հանդույցները: Լուրջ եմ ասում, տղերք, յեկեք, գրենք Լենինին:

— Ամբողջ յերեկոն մենք դատապարտում եյինք մանկական ռոմանտիկան, իսկ վերջում՝ դու մեզ հրամցնում ես ամենատրամանկական մի պլան:

— Մի՞թե չի կարելի նույնիսկ հանաք անել,—ժպտաց Լացին:—Ցես ուրիշ բան կասեմ: Սա արդեն լուրջ է: Վաղ թե ուշ,—ա՛յ, կտեսնեք,—կոմինտերնը կմիջամտի մեր գործերին: Չո նրանք ձեռները ծալած չեն նայի, թե մենք այստեղ ինչպես ենք ջուրը.... քիչ մնաց ասեյի՝ արյունը... լցնում անհատակ տակառի մեջ:

— Իրոք վոր, դու ընկնում ես ծայրահեղության մեջ,—ծի-

ծաղեց Վերան։—Ընկերը Կովաչին կարող է թվալ, որ նա ընկել է թթու կաղամբով լի տակառի մեջ։

— Ընկերը Կովաչը չի յեկել մեզ մոտ դվարճության համար։

— Բայց և չի յեկել թթվելու համար։

Անդրեյը ձեռքը չարժեց այնպես, թե թողեք, հերիք է։

— Այս ընկերները բացառիկ մի հատկություն ունեն՝ ամեն բան տեսնել սև գույնով,—ասաց Վերան, դառնալով Պյոտրին։—Նրանք ամեն ջանք գործ են դնում, որ ուրիշներին էլ ամբողջ աշխարհը յերևա մռայլ։ Հավատացնում եմ ձեզ, ընկեր Պյոտր, դուք թթվելու վո՛չ մի հիմք չունեք։ Ձեր ճանապարհով Հունգարիա ընկած հարյուր մարդուց իննսուն իննը յերեք չեն կորչում ֆիզիկապես, կորչում են աշխատանքների համար։

— Դրա փոխարեն,—ասաց Պյոտրը լուրջ,—հարյուրերորդը դրանցից պարապավոր է աշխատել հարյուրի տեղակ։

— Ա՛յ, դա ճիշտ է, դրա դեմ վոչինչ չունեմ։ Դրա համար ձեզ կհյուրասիրեմ մի բաժակ թեյով։

Կես դիշերից անց էր, յերբ Լացին և Պյոտրը պատրաստվեցին դուրս գնալու։

— Լսիր, Լացի,—ասաց Վերան հրաժեշտի բոպեին,—արդյոք, չե՞ս ուզում ճանապարհին ջութակ նվագել։

— Հը՛մ... ի՛նչ արած, կարելի յե։

— Միայն թե սուրդինկայով,—ավելացրեց Անդրեյը, չեչաելով։

Մահճակալի տակից հանեցին Ֆուտլյարը։ Լացին դրեց այն իր թևի տակ։

— Հանդիստ յեղեք։ Գնացեք։

— Նկատի ունեցիր,—ասաց Լացին Պյոտրին, յերբ նրանք իջնում էին սանդուխաններով,—վոր «սլրոֆեսորը» և «մխանճնուհին»... դու ճիշտ նկատեցիր, վոր Վերան նման է մխանճնուհու.... կարճ ասած՝ Վերան և Անդրեյը մարդ ու կին են։ Հայտնի չե, թե ո՛վ ավելի կչարանա, յերբ այդ գործը բացվի. Վերայի հա՞յրը, թե՞ Անդրեյի մայրը։ Պետք է ասել, վոր նրանք յերկուսն էլ պատվական քաղաքացիներ են։ Բացի այդ, Վերայի հայրը հարուստ է և կանոնավոր ոգնում է աղջկան։ Դրամի մեծ մասը գործադրվում է այս յերաժշտության վրա,—նա ձեռքով խփեց Ֆուտլյարին։

— Ձերաժշտության վրա՞,—զարմացավ Պյոտրը։— Մի՞թե ջութակ նվագելն այդքան թանդ արժե։

— Ա՛յո՛, բավական... Բայց իմ կարծիքով, այդ բանն աբժանիք չե՝ վո՛չ դրամի, վո՛չ ռիսկի։

— Վոր այդպես է, ինչո՞ւ յես զբաղվում դրանով։

— Միայն քննադատությամբ մարդ հեռու չի գնա։ Ուստի, ստիպված ենք յուր գնալ հին միջոցներով, մինչև կմտածենք նորերը։

Մութ միջանցողներից մեկում Լացին բացեց Ֆուտլյարը։ Մեկ... Ցերկու... Ցեվ նրանք առաջ անցան, իրենց յետևում թողնելով պատին փակցրած թուղթիկը։

— Լսիր, դնա իմ յետևից քանի քայլ հեռավորության վրա։ Այդպես ավելի լավ է։

Ճանապարհին նրանք փակցրին մոտ քառասուն թուղթիկ։ Տանը՝ Պյոտրն ուզում եր կարդալ թուղթիկը, բայց Ֆուտլյարն արդեն դատարկ եր։

— Ինչի՞ մասին է խոսվում այնտեղ։

— Մենք հաղորդում ենք ռուս ընկերների Ղրիմում տարած հաղթանակի և այն հետևության մասին, վոր կարելի յե հանել դրանից։

Վաղ առավոտյան, Լացին դնալով աշխատանքի, զարթեցրեց Պյոտրին, վոր նրա հետ միասին քնած եր մինենույն մահճակալի վրա։

— Ցերթ մայրս հարցնի,—իսկ նա անպատճառ կհարցնի,—չմոռանաս ասել, վոր դու կաշեգործ Պավել Տիմարն ես և հենց նոր ես յեկել Յուգոսլավիայից։

Պյոտրը մրթմրթաց մի բան և նորից քնեց։ Ցերբ զարթնեց, արդեն տասից անց եր։ Դուլպայի մեջ դտավ ճմռտված տոմս։ Շտապով նայեց այն ու քրքջաց։

«Չմոռանաս, վոր դու կաշեգործ Պավել Տիմարն ես, հենց նոր վերադարձած Յուգոսլավիայից»։

Մորաքույր Կեմենը հյուրասիրեց նրան բաց սուրճով և մարգարինից պատրաստած բուտերբրոդով։

— Վո՞նց է կյանքը Յուգոսլավիայում,—հարցրեց նա, նախապես իրազեկ լինելով իր հյուրի ազգանվան և արհեստի մասին։

— Ծանր է։ Կարծես թե գործազրկությունը պակասում է, բայց աշխատավարձը վատ է. իսկ ապրուստը քանի գնում, ավելի թանգանում է։

— Ամբողջ աշխարհը, վոնց վոր մի քաղաք,—հառաչեց մորաքույր Կեմենը։

ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук

Բարձրահասակ, ալեխառն մազերով, թեթև կորացած, կանգնել էր նա խոհանոցի մաքուր լվացած սեղանի մոտ: Նա ձեռքին ուներ փոշի մաքրելու յերկար ավել, վորը բռնել էր այնպես, ինչպես տուբիսաը՝ ձեռնափայտը: Այդքան մեծ մարմնի համար չափազանց փոքր գլուխը, ծռված էր մի կողքի վրա: Պատուհանից ներս մտած արևի շողերը լուսավորում էին նրա թուչնային դժգույն դեմքը, ներս ընկած փոքրիկ աչքերով, չոքը բոլորակ սև ծիր: Նրա ճակատը, վորդու ճակատի պես, կրում էր իր վրա ոսկեհի հետքեր:

«Մի՞թե այդ էլ անցնում է ժառանգության դեմ»,—մտածեց Պյոտրը:

— Աչխատավարձը մեզ մոտ էլ վատ է: Բայց և այնպես, թեև լաթերի համար հերիք չի անում, սակայն, ուտելու բան ճարում ենք: Ասում են, այս տարի բերքը լավ եր: Պետք է հուսալ, վոր գները չուտով կրնկնեն: Ա՛խ, յեթե ձմեռ չլիներ... Զե՞ վոր ստիպված ենք նորից վաճել, իսկ ածուխը—ո՛յ,ո՛յ... Իսկ դուք, պարոն Տիմար, պիտի աչխատեք այնտե՞ղ, վորտեղ աչխատում է իմ լացին:

— Շատ հավանական է:

— Ի՛նչ կա վոր: Բարի ժամ: Վատ տեղ չէ: Ճիշտ է, կարող եր ավելի լավ լինել, բայց այստեղ գոնե գնահատում են մարդու աչխատանքը: Իմ հանգուցյալ ամուսինը միշտ ասում եր ինձ. «Մի ընկնիր ոռճկի յեռևից, բանը ոռճիկը չէ,—բանն այն է, վոր գնահատեն մարդուս»: Փոստատար եր իմ ամուսինը: Նրա մահից հետո յես նույնիսկ ստանում եմ փոքրիկ կենսաթոշակ: Ա՛յ, այնտեղ սենյակում քաչ է արած նրա դիմանկարը: Զեյի՞ք ցանկանա տեսնել:

Ժամանակից դեղնած տյուլե վարագույրները պարզարում էին պատուհանները: Սենյակի մեծ մասը բռնել եր սեղանը, վրան փռած հաստարակ թավշյա հին, մաշված սփռոց: Զորս աթոռ, փայտե յերկու մահճակալ: Պատին լացիի հոր դիմանկարը, վոր պատկերացնում եր հասակավոր, ջլապինդ, լայներես, հաստաչուրթ հանվեղի հետևակ զինվորի: Դիմանկարի վրա թիթեղապատ փայլուն քերովբե, ձեռքին դափնյա պսակ: Դիմանկարի տակ դույնը թողած վոսկյա մակագիր.

«Փառք ու պատիվ է՝ մեռնել հայրենիքի համար»:

Ավելի ներքև թանաքե մատիտով նչանառք. «Պխավե, 3 հոկտեմբերի 1918 թ.»:

Մորաքույր կեմենը խոր հառաչեց:

— Մի տղաս սպանվեց Կարպատներում, մյուսը՝ Սերբիայում, յերրորդը մինչև այսոր էլ տառապում է Սերբիում: Արդեն ամբողջ յերեք տարի յե, վոր նրանից վոչ մի լուր չկա: Աստված նրան պահի դեթ:

Ճաչից հետո Պյոտրը մի քիչ զբոսնեց: Առաջին որերի չփոթված դրությունն ու ցրվածությունն անցավ, բայց առանց այն էլ այդ ոտար քաղաքը դարձավ նրա համար է՛լ ավելի ահարկու: Բացարձակ անհեթեթություն կլիներ ծուղակն ընկել, յերբ նորից առեղծվեց աչխատելու հնարավորություն:

Մութն ընկնում եր, յերբ նա վերադարձավ տուն: Լույսը դեռ վառած չեր: Նա մոտեցավ պատուհանին:

Քառանկյունի փոքրիկ բակը, ամեն կողմից չրջապատված քառահարկ չենքով, նման եր ջրհորի: Ըստ յերևույթին, տունը շատ հին եր և վաղուց չեր նորոգված: Նույնիսկ մթնչաղի մեջ կարելի յեր նկատել թափված ծեփը: Վերահաս խավարի մեջ փոքրիկ լուսամուտները, թվում եր, թե ճուլվում են իրար հետ և կազմում մի ամբողջություն: Իսկ յերբ այս կամ այն պատուհանում լույս եր յերևում, մարդուս աչքերի առաջ միշտ գծագրվում եր միևնույն պատկերը: Հին կահույքը բնակարաններում մի ժամանակ յեղել եր վո՛չ միատեսակ, բայց յերկարամյա չքավորությունը դրել եր նրա վրա յուրահատուկ միատեսակ, տխրալհատ դրոշմ, վոր բնորոշ եր բանվորական բոլոր բնակարանների համար:

Բակում նվագեց չարմանկան: Շարմանչիկը չեր յերևում, բայց լավ լսվում եր ավստրիական ռազմական հին մարշը: Մորաքույր կեմենը լուսամուտը բացեց և նետեց անտեսանելի յերաժչին մի կտոր հաց, փաթաթած թղթի մեջ:

Ճաչի ընդմիջումին լացին տուն չեր գալիս. նա ճաչում եր գործարանին մոտիկ փոքրիկ ճաչարանում: Ցերեկոյան նա իր հետ բերեց մի հյուր: Դա լայնաթիկունք, թխադեմ բանվոր եր: Նրա չարժումները վճռական եյին: Նա ամուր սղմեց Պյոտրի ձեռքը: Նրա չագանակագույն բաց աչքերը զննողաբար կանգ առան Պյոտրի դեմքի վրա:

— Կարծես, մենք հին ծանոթներ ենք, կոլեգա Տիմար:

Պյոտրը վոչ մի կերպ չեր կարողանում հիչել դուրս ցցված այտոսկորներով այդ լայն դեմքը, այդ պայծառ բերանը՝ կարճ խուզված բեխերով:

— Մայրս դնաց հացի,—ասաց Լացին:

— Նու, այս դեպքում չես կարող եմ ձեզ հիշեցնել, կոլեգա Տիմար, թե մենք վորտեղ ենք պատահել իրար: Տասնինն թվին, սդոստոսին, այն նույն որը, յերբ ռումինացիք մտան Պեշտ, դուք ձեր ընկերների հետ դիշերում եյիք ինձ մոտ՝ Յուլլեյի փողոցում: Մենք հանդիպեցինք իրար, բուլվարում: Հիշո՞ւմ եք:

— Աչխարհը նեղ է,—հառաչեց Պյոտրը, սղմելով հյուրի ձեռքը:

— Աչխարհը նեղ չե, այլ մեր Ֆրոնտն է կարճ,—ուղղեց նրան հյուրը: Ի դեպ, թյուրիմացություններից խուսափելու համար, դիտցեք, վոր իմ անունն այժմ վոչ թե Վլադիսլավ Գուսակ է, այլ Իոհան Կիչ:

ԴԻՐՔԱՅԻՆ ՊԱՅՔԱՐ

Աչխատանք գտնելու նպատակով Պավել Տիմարը (մեր Պյոտրը) դնաց կոշկեղենի ֆաբրիկա: Բանվորների կարիք կար, ուստի, նրան պահեցին փորձելու համար: Ստանալով կոշկի ձևած յերեսները, կաղապարներ, բիզ և մի քանի ուրիշ գործիքներ, վորոնց ստույգ անունները չգիտեր, Տիմարը չփոթվեց: Պյոտրը հանաք համարեց Լացիի առաջարկը՝ մտնել այն ֆաբրիկան, վորտեղ աչխատում եր նա: Յերկար համոզելուց հետո, միայն նա համաձայնվեց: Նու, ինչ լինում է, լինի: Մինչև ձեռք չբերեմ մետաղագործի համապատասխան վկայականիր, գրողը տանի, թող դառնամ կաշեգործ:

— Հազիվ թե քեզնից լավ կոշկակար դուրս գա,—ասաց Լացին,—բայց յեթե նատես իմ կողքին, մի կերպ գլուխ կբերես: Արտադրությունը մեքենայացված է այն աստիճան, վոր բավական է ուսումնասիրել միայն մի մանրամաս: Վորակյալ բանվորի համար դա դժարկ բան է: Կարող ես համարձակ փորձել:

Թեև վոչ այնքան համարձակորեն, բայց և այնպես, Պավել Տիմարը ռիսկ արավ փորձել: Յեվ ահա, ա՛յ քեզ ոյին: Վերակացուն տվեց նրան այդ բոլոր բանները, իսկ դուռ բարեհաճեր պատրաստել փորձնական կոշկի զույգը:

Սեղանի շուրջը նատել եյին չորս հոգի: Տիմարից ալ՝ հասակավոր միրուքավոր մի տղամարդ, հոգնած դեմքով, ձախից՝ յերկարահասակ բարակ մի տղա, տարիքով մոտավորապես հա-

սակակից Պավլին, դիմացը՝ անորոշ տարիքի մի բանվոր, ձախ աչքին սև վարթաթան:

— Ընկեր, այդ դո՞ւք եք մեր բարեկամ կեմենի հետ միասին զինվոր յեղել,—հարցրեց Տիմարին միրուքավորը:

— Ա՛յո՛, յես եմ,—պատասխանեց Տիմարը:

— Ցես այդպես էլ կարծում եյի:

Ցեվ մինչ Տիմարն ուշքի կգար, նրա դեռ չսկսված աչխատանքը հայտնվեց հարևանի ձեռքին, իսկ իր առաջ դրված եր կաղապարի վրա քաշած մի զույգ կոշիկ:

— Դրանով դուք կարող եք մի փոքր զբաղվել,—չչնջաց նրա ականջին իր հարևանը:

Նրա ընկերները ձևացրին, իբր վոչինչ չտեսան ու չլսեցին:

Սենյակում կար մոտ յերեսուն բանվորական աչխատասեղան: Ցեվ յուրաքանչյուրի առաջ նատել եյին, կռացած, չորս մարդ: Հարևան սենյակից լսվում եր մեքենայի միալար աղմուկը: Վերակացուն անցնում եր մի սեղանից մյուսին, կաղալով: Տիմարն աչքի տակով հետևում եր նրան: Նա նկատեց, վոր վերակացուն բծախնդիր է ամեն դատարկ բանի համար. ցուցմունքներ է տալիս, ուղղում է, խոտանում, բայց մոտենալով հետևյալ բանվորին, այլևս չեր հետաքրքրվում իր կարգադրությունների կատարմամբ: Մոտեցավ նա Տիմարին, հայացքը ձգեց փորձնական կոշկի ձևած յերեսներին, և առաջ անցավ: Տիմարին թվաց, կարծես թե նա գլխով հավանության նշան արավ:

— Ծերունին այսոր շատ լավ տրամադրության մեջ է,—փսփսաց փարթաթավոր բանվորը:—Ցերեկ, յերեկ թունդ խմել է... Ցեթե գինու գինը մի փոքր ընկեր, մեր կյանքը բոլորովին տանելի կդառնար,—ավելացրեց նա կարճ պատուհանից հետո:

— Ցեթե ընկներ գինու, հացի, մսի գինը, յեթե բնակարանի վճարն իջեցնելին և մեր աչխատավարձի դրույքները բարձրացնելին, յեթե... յեթե... գժվե՞լ ես մի թե...—քրթմնջեց միրուքավորը:

— Որինակի համար, վերցնենք գինին: Համակենտրոնացման ճամբարում, յերբ ֆելդֆեբել Բիզիկը խմելու բան եր ուզում, մեզ,—յեթե հաշվի չառնենք կլոպը, վոջիլը, լուն և առնետը,—վոչինչ ու վոչ վոք չեր նեզացնում: Իսկ յեթե Բիզիկը խմած չեր լինում... հը՛մ, յեթե այն գիշեր բավարար քա-

նակութեամբ դէնի լինեը, գուցե, իմ յերկու աչքերն էլ վողջ եյին մնացել:

— Դուք յեկել եք Ցուդոսլավիայից, ընկեր,—դիմեց Տիմարին յերկարահասակ տղան:

— Այո՛, այնտեղից:

— Իսկ այնտեղ աշխատում եյիք ո՞յս արհեստով:

— Հա՛:

— Յես այդպես էլ կարծում եյի,—ասաց յերկարահասակը, գլուխը թաւի տալով: Յեվ հայացքը ձգելով վերակացվի վրա, վոր մեջքով կանգնած եր դեպի նրանց, նա արագ չարժումով փոխանակեց իր կաղապարը Տիմարինի հետ:

Աչք կապածը չփոթված չուռ յեկավ, ծերունին դժկամակութեամբ չարժեց գլուխը:

— Չպետք է չտապել: Յեթե մեր նոր ընկերն այդքան արագ պատրաստի կոշկի յերեսները, դրանով միայն կգցի գնահատականները: Պետք է դադույշ լինել, մտածել,—խրատական տոնով նկատեց նա:

— Բանն ի՞նչ է,—հարցրեց վերակացուն, լսելով ծերունու վերջին խոսքերը:

— Վոչի՛նչ, վոչի՛նչ: Ընկեր Շուլցը չի կարողանում ներել ինձ իմ ասած խոսքերը: Յես մի անգամ ասի. յեթե ռոճիկը հերիք չի անում թե՛ կերակրի, թե՛ խմիչքի համար, այդ դեպքում՝ յես խմիչքի կողմնակից եմ: Մարդ կա, վոր սիրում է փլավ, մարդ էլ կա՝ տապակած հավ:

Վերակացուն հեռացավ, առանց մի խոսք ասելու:

Տիմարը ճաշելու գնաց մոտակա դիմեռներից մեկը: Նրան տարավ այնտեղ ծերունի Շուլցը: Լացին ճաշում եր նրանց հետ միևնույն սեղանի չուրջը: Նա պատվիրեց միայն սուպ. յերկրորդ տեսակը նա բերել է իր հետ, փաթաթած լրագրի թղթի մեջ: Այդպես եր ճաշում կոշկեղենի ֆաբրիկայի բանվորների մեծ մասը:

— Փորձնական կոշկի զույգը կընդունվի,—ասաց ծերունի Շուլցը,—բայց ի՞նչ անել դրանից հետո: Կամաց-կամաց մեր ֆաբրիկայում մետաղագործներն ավելի կլինեն, քան կոշկակարները:

— Պետք է այնպես անել, վոր մենք յերեքով, Տելկեչի հետ, աշխատենք միևնույն սեղանի չուրջը: Կաշխատենք կոլեկտիվորեն: Տիմարին կստիպենք առայժմ մեխեր խփել:

— Կոլեկտիվորեն.... հը՛մ... ի՛նչ արած, կարելի յե փորձել: Բայց յես այն կարծիքին եմ, վոր ավելի լավ է, յեթե մետաղագործները տեղավորվեն պողպատաձուլական գործարաններում:

— Դա ճիշտ է, յեթե միայն մենք ունենայինք համապատասխան փաստաթղթեր,—հառաչեց Լացին:—Բայց դժբախտաբար, փաստաթղթեր չունենք: Սակայն, կարող է պատահել...

— Այդ մասին կխոսենք ավելի հարմար տեղ,—ընդհատեց նրան Շուլցը,—սրբելով սուպից թրջված սպիտակախառն մորուքը:

— Այստեղ վոչ վոք ուշադրություն չի դարձնում մեզ վրա: Իսկ յեթե նույնիսկ դարձնեն, միևնույն է, մեր խոսակցությունից վոչինչ չեն հասկանա...

— Զգուշությունը միշտ էլ լավ է: Յես ինքս եմ մեղավոր, վոր սկսեցի այդ խոսակցությունը: Նու, հերիք է: Վերջացնենք: Գլուխս կորել կտամ, յեթե այս դարեջուրը խարդախած չէ:

Անկյունում, սեղանից յերկու քայլի վրա, պատի ժամացույցը նվագեց Ռաղեցկու մարշը:

— Հը՛մ,—բռնչաց ծերունին, խորամանկորեն աչքով անելով Տիմարին:—Ամեն բան կարգին է,—և կորիճի պես ճակատին թեքեց խունացած կոտելոկը:

— Յես ձեզ կկանչեմ Տիմար, վոր արագ վարժվեմ այդ ազդանունին, իսկ դուք մի մոռանաք, վոր ինձ կանչում են Կիչ: Իոհան Կիչ: Արհեստով՝ դործազուրկ վարսավիր: Հը՛մ... Իսկ այժմ՝ դործի անցնենք:

Անդյալֆելդից փչում եր ուժեղ սառ քամի: Քաղաքային անտառի սառցապատ ծառերի մեջ քամին վոռնում եր ավելի ուժեղ: Ծառուղիներում համարյա մարդ չկար:

Ժամից ավելի յեր, ինչ Կիչը հրահանգում եր Տիմարին, բայց չարունակ ծագում եյին նորանոր հարցեր:

— Գնանք ինձ հետ մեր տուն, սոսկալի ցուրտ է,—ընդհատեց խոսակցությունն Իոհան Կիչը:—Յես ապրում եմ այստեղից մոտիկ, Ստեփանյան փողոցում: Հասցես հայտնի յե ընդամենը չորս ընկերոջ, դուք կլինեք հինգերորդը: Բացառիկ կարևոր դեպքերում միայն մտաբերեք այն: Գրել այդ հասցեն չի կարելի ևս առավել:

Կիչն ապրում եր Գարայի հրապարակում՝ քաղցրավենիք վա-

ճառողի մոտ: Մուտքը խոհանոցից: Հենց խոհանոցում էլ տեղավորվել էին բնակարանի տերերը՝ պառավ ամուսիններ:

Սեղանի վրա փռած էր թավշյա հին սփռոց, վրան դրած ճենապակյա վազա, մեջը փոշոտած արհեստական ծաղիկներ: Մալովի յերթի մահճակալ, ղզեստի պահարան, չորս աթոռ: Ահա այս սենյակի ամբողջ կարասին: Պատին վոսկեզոծ չրջանակի մեջ՝ կարլ Թագավորի դիմանկարը:

— Մեր բնակարանի տերերը,—Տիմարը ղլխով արավ խոհանոցի ուղղությամբ,—համոզված են, վոր յեթե այդ ապուշը,—նա նչեց նորին մեծությանը,—վոր յեթե այդ ապուշը վերադառնա, իսկույն կթագավորի անցած «բարի» ժամանակը: Քեռի Վասը ժամանակ առ ժամանակ որհնում է այս դիմանկարը:

Կիչը մահճակալի տակից հանեց գրամաֆոնը և դրեց մի ինչ վոր ոպերետային մեներգի դիքսը:

— Սովորաբար այդ բանը յես անում եմ միայն այն դեպքում, յերբ տպում եմ գրամեքենայի վրա: Բայց ավելորդ չե մի անգամ ևս դպալ տալ քեռի Վասյին, վոր յես պատկանում եմ ուրախ չքավորների թվին:

Ցեվ Կիչը նորից սկսեց իր բացատրությունները:

Նա քայլում եր յետ ու առաջ, ձեռները դրած պիջակի գրպանում: Ցեվ այդ յերկար, արմունկներում ծռված թևերը հիչեցնում եյին վագայի բռնակները:

Խոսում եր նա դանդաղ, չեչտելով այն բառերը, վորոնց առանձին արժեք եր տալիս: Բայց և այն ժամանակ, յերբ նա պատմում եր իր անհաջողությունների ու դժվարությունների մասին, նրա տոնն այնպես վճռական եր, վոր դժվար եր հավատալ, թե այդ մարդը կարող է ձախողություն ունենալ: Նա նայում եր իր խոսակցի յերեսին մանկական հետաքրքրությամբ: Ցեվ յեթե խոսակցությունը նրա սրտով եր, նա ծիծաղում եր, բերանը լայն բացելով և մերկացնելով յերկու շարք սպիտակ վիայլուն ատամները:

Մինչ Պյոտրը պատմում եր իր ձախորդությունների մասին Մերձկարպատյան Ռուսիայում, Կիչը սակավ եր ցույց տալիս իր սաղաթե ատամները: Ավելի հաճախ, նա որորում եր գլուխը և կրծոտում շուրթերը:

— Այո՛—ո... Գիտեք՝ ի՛նչ. յես պատմելու սիրահար չեմ, բայց այս անգամ բացառություն կանեմ: Աչխարհը փոքր է, ամենուր միևնույն յերեզներն են, բայց և այնպես մենք լավ չենք

ճանաչում աչխարհը: Ցես յերբեք չեմ յեղել Հարավային Ամերիկայում, սակայն գլխովս գրազ եմ գալիս, վոր այնտեղ ևս ավազակը կոկորդիլոսի արցունքները է թափում այն զոհերի համար, վորոնց կողոպտել են ուրիչ ավազակներ: Այդ տեսակետից վոչ մի տարբերություն չկա չեխերի ու հունգարացիների, սերբերի ու Հրո Ցերկրի բնակիչների միջև: Մի խոսքով... Գիտեք, վոր յես դեռ Պեչտումն եյի, յերբ այնտեղ մոտաս ռումինացիք: Տեսարանը տխուր եր: Ավելի ուրախ չդարձավ այն, յերբ Անդրղանուբը դրավեցին հունգարական նացիոնալիստները: Նրանց սպանները թերևս ավելի վատ են ռումինացիներից: Ավելի ճիչտ, Անդրղանուբում նրանք իրենց զգում եյին ավելի իրավատեր, քան ռումինացիք Պեչտում: Կողոպտում եյին, տանջում-ղկում, մարդկանց կախում եյին, առանց խղճի խայթի: Ընդունված կարծիք է, վոր նկարագրելով սպիտակ սերբորը, մենք խտացնում ենք գույները: Բայց անհնարին է չափազանցնել այն, ինչ անում եյին հունգարացի սպանները «աղատագրված» հունգարական յերկրամասում: Նույնիսկ դժվար է պատկերացնել իրեն այդ սարսափները:

Կիչը մի քանի րոպե լուռ քայլում եր սենյակում յետ ու առաջ: Նա ձեռները մեկ հանում եր գրպաններից, մեկ նորից դնում եր գրպանները և ընկճված չարժում եր գլուխը:

... Անդրղանուբում յես պահվում եյի իմ փոքր քրոջ մոտ և ժամանակին կարողացա վախչել Խորվատիա—Տալմատիա: Քրոջս սպիտակները սպանեցին: Նրան մեղադրում եյին, իբր նա թագցնում եր Սամուելին: Սպանեցին նաև նրա ամուսնուն: Նա հաչմանդամ-դինվոր եր: Խեղճը վոտից զրկվեց ռումինական ֆրոնտում, պաչտպանելով Թագավորին: Ցես չեմ խոսի մանրամասների մասին: Հունգարական սպիտակ սպանները... Մի խոսքով, յես ժամանակին փախա սերբերի մոտ: Ցեվ դնացի Պեչ: Այս քաղաքը թեև պատկանում է Հունգարիային, բայց մինչև այսոր էլ բռնազրավել են սերբերը: Ազգաբնակչությունն ընկավ դեմոկրատական կոմեդիայի թակարդը և այժմ ազաչում, պաղատում է սերբերին՝ չպարպել քաղաքը: Հունգարական սպիտակ սերբորից սարսափած, բանվորները դնում են իրենց սերբական դեմոկրատիայի պաչտպանության տակ: Նրանք իրավացի յեն, այդպես չէ՞: Ե՛հ, լավ: Մի խոսքով, յես յեկա Պեչ և անմիջապես աչխատանք ստացա: Բայց դեռ աչխատանքի չանցած, յես հիվանդացա վորովայնային տիֆով: Հիվանդանոցում պառկեցի

ութ չաբաթ: Հիվանդանոցից դուրս գալուց հետո, յես չճանաչեցի քաղաքը: Նա վողողված եր Հունգարիայից յեկած փախստականներով: Հունգարացիներին պաշտոններ եյին տալիս քաղաքային վարչության մեջ: Ցեվ սերբերը նրանց ընդունում եյին, իրոք, շատ լավ: Նրանց համար աշխատանքի պակասություն չկար: Բոլորովին ազատ կարելի յեր խոսել և գրել: Սերբերը նույնիսկ պահանջում եյին՝ ագիտացիա մղել հունգարական սպիտակ տերրորի դեմ:

Իհարկե, փախստականները հիացած եյին յերիտասարդ սերբական դեմոկրատիայից: Սոցիալ-դեմոկրատները հենց մեկեն սկսեցին խոսել «դեպի սոցիալիզմ տանող սերբական ուղիի» մասին, հակադրելով այդ ուղին «ռուսական ուղիին»: Կոմունիստներից շատերն այն ժամանակ ընկան այդ ծուղակը: Նրանց թվում նաև յես: Առողջանալուց հետո յես աշխատանք ստացա—վո՛չ իմ մասնագիտության վերաբերյալ—քաղաքային Դումայի քաղաքական բաժանմունքում: Փախստականներին տեղավորելուց բացի, իմ պարտավորությունները կայանում եյին գլխավորապես հանքափորների շրջանում աշխատելու մեջ: Ցես պետք և ագիտացիա մղեյի հունգարական սպիտակ տերրորի դեմ: Ցեվ յեթե յես դովասանական հիմներ չեյի յերգում սերբական դեմոկրատիային, ինչպես անում եյին շատերը, համենայն դեպս՝ ծառայում եյի նրան: Ցեվ սերբերը, վորոնք չահագրգռված եյին Պեչով ու հանքահորերով, վճարում եյին ինձ հարյուր տոկոսով: Ցես լավ եյի ապրում և կարող եյի փորս հաստացնել, յեթե չլիներ Վիդոր Մուկիչը:

Վիդոր Մուկիչ... Ընկեր Տիմար, հավիվ թե դուք, կամ ձեր հասակակիցներից մեկն ու մեկը լսած կաք այդ մարդու մասին: Նա պատկանում եր այն չրջանի հին դվարդիային, յերբ Բոկանին[1]) առաջին անգամ բանտարկվեց: Ցես չահել պատանի եյի, յերբ ծանոթացա Մուկիչի հետ: Ցերկու գիչեր միասար նա լուսավորում եր ինձ: Նա խոսում եր այնպես հետաքրքիր, վոր

[1]) Բոկանին հունգարական բանվորական չարժման ամենաականավոր դեմքերից մեկն եր: Պատերազմից առաջ յերկար տարիներ յեղել եր հունգարական սոցիալ-դեմոկրատ կուսակցության առաջնորդ: Հեղափոխության ժամանակ հարեց կոմունիստներին: Հեղափոխության պարտությունից հետո դատապարտվեց մահապատժի՝ կախաղանի միջոցով: Բանտից ազատվեց 1921 թ. Նորը

նրան կարելի յեր լսել լինքնամոռացությամբ: Նա գարբնի վորդի յեր՝ Սլովենիայից[1]): Ցերիտասարդ ժամանակ շրջել եր համարյա ամբողջ Ցեվրոպան: Գիչ ու միչ խոսում եր բոլոր լեզուներով: Ցեվրոպայում չկար հեղափոխական մի կազմակերպություն, վորից նա բան սովորած չլիներ: Նա գործ և ունեցել յեվրոպական բոլոր յերկրների վոստիկանության հետ: Ցերբ յես ծանոթացա նրա հետ, այդ վո՛չ բարձրահասակ, չոր մարդը Պեչի մի մհատաղործների կազմակերպության անդամ եր և իրեն անվանում եր յերբեմն անարխիստ, յերբեմն սինդիկալիստ, յերբեմն էլ սոսկ հակամիլտարիստ: Ինձ թվում է, վոր նա ուղղակի սերբական, ավելի ճիչտ՝ յուգոսլավական—նացիոնալիստ եր: դա բացահայտորեն յերևում եր նրա բոլոր, նույնիսկ ամենահեղափոխական, յելույթներում: Տասներկու թվին նրան եռապով աքսորեցին Սլովինիա (յես լավ հիչում եմ այդ դեպքը: Նա այն ժամանակ դնաց, հագած իմ տոնական անդրավարտիկը), և այն որից սկսած՝ յես վոչինչ չեյի լսել նրա մասին: Շատ ավելի ուշ, յես իմացա հենց նրանից, վոր տասնուչորս թվին, յերբ սկսվեց պատերազմը, նա անցավ Սերբիա և ամբողջ պատերազմի ընթացքում ծառայում եր սերբական բանակում: Ցերկու թե յերեք անդամ վիրավորվել եր: Հը՛մ... Նո՛ւ, հանկարծ մի անգամ, կիրակի առավոտյան, լինն հարյուր քսան թվի մարտին, լինձ մոտ յեկավ այդ Վիդոր Մուկիչը: Ցես դեռ պառկած եյի անկողնում (այն ժամանակ յես ունեյի հրաչալի կահավորված սենյակ՝ հյուրնալի մահճակալով): Մուկիչի կացությունը սոսկալի յեր: Նիհարած, կեղտոտ, ցնցոտիների մեջ, վոլիլներից տանջված, մարմինը քոռով պատած: Մենք չճանաչեցինք իրար: Ցերկար

[1]) Սլովենները Յուգոսլավիայի ազգություններից մեկն են: 1919 թվից առաջ Սլովենիան մտնում եր ավստրիական կայսրության կազմի մեջ: 1918 թվին նա մասամբ անցավ Յուգոսլավիային, մասամբ՝ Իտալիային: Յուգոսլավիայում իչխող «ազատատար—սերբերի» և «ազատագրված» սլովենների միջև գոյություն ունեն բազմաթիվ տնտեսական, քաղաքական և կուլտուրական հակասություններ:

հեղափոխության միջոցով՝ կալանավորներին փոխանակելու կարգով: Ներկայումս ապրում և Մոսկվայում և Համկոմակուսի (բ) ակտիվ անդամ է:

խոսակցությունից հետո միայն պարզվեց, որ մենք հին ծանոթներ ենք:

— Վո՞րտեղից,—հարցրի ես նրան:

— Փախա Հունգարիայից: Սպիտակ տերրորիստները...

— Հասկանալի չե, հասկանալի: Իսկ վո՞րտեղից իմացար իմ հասցեն:

— Ֆաղաքային վարչության մեջ:

— Հրաշալի՛:

Ցերբ նա հանեց իր լաթերը, որ լվացվի, ես տեսա նրա թիկունքը: Թիկունքը ջերտավոր եր, ինչպես վագե-ձիու մարմինը: Արդեն մի քանի ամիս եր, ինչ ես դրազվում եյի հունգարացի փախստականների գործերով: Ինձ ծանոթ եյին այդ ջերտերը—փայտի հարվածների հետքեր: Նրա կուրծքը նույնպես սպիացած եր—պապիրոսով այրած վիրատեղեր:

— Վո՞րտեղ ես յեղել:

— Հունգարիայում: Հետո կպատմեմ:

Այն ժամանակ լուրեր կային, որ Անտանտը պահանջում է՝ պարպել Պեչ քաղաքը: Սերբական յերիտասարդ դեմոկրատիան դրան պատասխանեց նրանով, որ ուժեղացրեց պրոպագանդը հունգարական սպիտակ տերրորի դեմ: Պետք եր սատիպել Պեչի և շրջակայքի հանքագործ բանվորներին՝ բողոքել քաղաքի պարպման դեմ, բողոքել Պեչը Խորտիի բանդիտներին հանձնելու դեմ: Մուկիչի գալու որը մեզ մոտ նշանակված եր բողոքի այդպիսի միտինգ: Ցես Մուկիչին հետո տարա միտինգի: Իմ յեղուլթից հետո նա չպլիկը հանեց ու մերկացրեց թիկունքը:

Վրդովմունքի բացականչություններ: Ողի մեջ բարձրացած հազարավոր բռունցքներ:

— Կորչեն հունգարական սպիտակ բանդիտները:

Ջանազան կողմերից լսվեցին թույլ կանչեր. «Կեցցե՛ Սերբիան»:

Ընթրիքից հետո ես և Մուկիչը զնացինք տուն: Նա պետք և գիշերը ինձ մոտ: Ցերբ մենք մտանք սենյակ, Մուկիչը կանգնեց պատից կախված մեծ հայելու առաջ,—իմ սենյակն այնքան չքեղ եր, որ նույնիսկ հայելիների պակասություն չկար,—մի խոսքով, նա կանգնեց հայելու առաջ և թքեց նրա մեջ: Կանգնել եր և թքում եր: Մոտ տասն անգամ:

— Բանն ի՞նչումն է, յեղբայր: Ի՞նչ է պատահել քեզ:

Վոչինչ չպատասխանելով, Մուկիչը շարունակում եր թքել:

— Դա ի՞նչ բան է: Ի՞նչ պատահեց: Ինչո՞վ է մեղավոր այդ հայելին:

— Ի՞նչ է, դու ուզում ես, որ յես թքեմ քե՞զ վրա,—պատասխանեց վերջապես իմ վաղեմի բարեկամը:

Ցես վարժվել եյի այն բանին, որ փախստականները սովորաբար դյուրաբորբոք և անհամբեր տզերք եյին, ուստի, վոչ մի դեպքում յերբեք չեյի կորցնում իմ սառնասրտությունը:

— Ցեղբայր պատվական, ուրեմն, դու պատրաստվում ես թքե՞լ ինձ վրա: Բայց ինչո՞ւ, հարցրի յես նրան բոլորովին հանդիստ:

Կկոցելով բորբոքված կոպերով իր կապույտ աչքերը, նա վոտից-գլուխ դիտեց ինձ և ձեռքով չփեց իր սպիտակող չեկ մազերի խղճուկ մնացորդները: Այդ չարժումը և կնճռոտած ճակատը ցույց եյին տալիս, որ նա լարված, միտք և անում: Դժվար չեր նրան հասկանալը. նա մտածում եր, արդյոք, արժե՞ առհասարակ ինձ պատասխանել, թե վոչ: Վճռեց, որ արժե:

— Նու, յեթե դու չատ ես ուզում իմանալ,—ասաց նա նչանակալից,—ուրեմն, դիտցիր. վախել եմ յես վո՛չ թե Հունգարիայից, այլ սերբական բանակից: Սերբերն ինձ ծեծեցին ու կիսամահ արին:

Մնացածը հեչա եր իմանալ նրանից:

Պատերազմից հետո նա ընկավ Սլովենիա, «ազատագրված» Սլովենիա: Յուգոսլավական բանակում նա ծառայել եր վորպես չտաբս-ֆելդֆեբել, ստացել եր չքանչաններ՝ յերկու սերբական և մի ֆրանսիական: Այժեն ինչ լավ կլիներ, յեթե սլովենյան բանվորները զործադուլ չանեյին, պահանջելով բարձրացնել աշխատավարձը հենց այն քաղաքում, վորտեղ գտնվում եր Մուկիչն իր զորամասի հետ: Գործարանատերը, ավստրիական հարուստ հրեա, պահանջեց, որ զորք ուղարկեն իրեն՝ ոգնության, և յերիտասարդ սերբական դեմոկրատիան կատարեց նրա խնդիրը:

Ի՛նչ մեղք եր գործել Մուկիչը,—դժվար եր հասկանալ նրա խոսքերից: Նա ավելի չատ հայհոյում եր, քան պատմում: Մի բան պարզ եր. հին ֆելդֆեբելին վոչ մի կերպ չեր կարող դուր գալ, որ «իսկական» թշնամին՝ ավստրիացին՝ ոգնություն և ստանում սերբական զորքերից ազատագրված յուգոսլավական բանվորների դեմ: Մուկիչը հիշեց, որ ինքն ել մի ժամանակ յեղել և սինդիկալիստ, անարխիստ, հակամիլիտարիստ, որ ամբողջ չորս տարի պատերազմել է, ավստրիական լծից Յուգոսլա-

վիան ազատագրելու համար: Կրկնում եմ, չես այնպես էլ չիմացա, թե բանն ինչո՞ւմն եր: Դիտեմ միայն, որ Մուկիչին իննընկերների հետ ձերբակալվել և վեց ամիս նստել եր ինչ-որ ապստամբության: Նրանցից յոթ հոգի մեռել եյին հարցաքննության ժամանակ գործադրված լկտիքներից, կենդանի մնացածներին, այդ թվում՝ նաև Մուկիչին, տեղափոխել եյին Բելգրադ, որտեղ նրանք պետք է պատասխանատվության յենթարկվեյին ռազմադաշտային դատարանի առաջ՝ «հայրենիքին դավաճանելու» համար: Ճանապարհին Մուկիչը փախել եր, թռչելով գնացքից և չորս չաբաթ տևող թափառումներից հետո, հասել եր Պեչ:

Հետևյալ որը Մուկիչը պետք է միտինգում նորից ցուցադրեր իր մեջքը: Բայց դրա փոխարեն, իմ ոգնությամբ, նա փախավ Ավստրիա: Յերկու չաբաթից հետո չես ևս Վիեննայում եյի, ընդմիշտ խզելով կապերս յերիտասարդ սերբական դեմոկրատիայի հետ:

Շուտով ինձ հաջողվեց կապվել կուսակցության հետ: Վիեննայում չես տորոնեցի Մուկիչին, բայց ապարդյուն: Հետո չես իմացա, որ խեղճը մեռել եր կարճատև հիվանդությունից հետո, այն նույն որը, յերբ նրան ընդունել եյին հիվանդանոց: Հը՛մ... Ահա Վիդոր Մուկիչի պատմությունը, որին կարելի չեր տալ այսպիսի վերնագիր. «Դեմոկրատիան սպիտակ սերբորի դեմ»: Ուսանելի չե, այնպես չե՞:

Այդ որից սկսած,—ահա արդեն վեց ամիս է, ինչ չես աշխատում եմ Պեչում,—վոչ մի գործ չեմ ունեցել դեմոկրատիայի հետ՝ վո՛չ սերբական, վո՛չ հունգարական, վո՛չ էլ նրանց, ո՛վ խոսում եր նրա մասին: Դրա համար չես ունեմ իմ պատճառները:

Պավել Տիմարը կոչկակարության մեջ առաջադիմում եր ավելի արագ, քան կուսակցական աշխատանքների մեջ: Նրա գլխով յերբեք չեր անցնի, որ իր հետ կարող է այդպիսի բան պատահել: Նա արդեն կարող եր կոչկի մեջ մեխեր խփել փակ աչքերով և նրա հագուստը հագեցած եր կաշվի հոտով այնպես, ինչպես մի ժամանակ յերկաթի ոքսիդի հոտով: Իսկ կուսակցական աշխատանքների հետ գործը տակավին գլուխ չեր գալիս: Հարճակումների և նահանջների ժամանակ, որվա ընթացքում, հարյուր կիլոմետր անցնող հուսարին, յերբ ձիուց իջեցնում են և նստեցնում են խրամատները, որտեղ չաբաթները գլորվում են իրար յետևից, առանց խոչոր միջադեպերի և չահել կամ տանուլ տալ կարելի չե հարյուր—յերկու հարյուր մետր տարածություն,—

այդ հուսարը սրտնեղությունից քիչ է մնում, որ ճաքի: «Ցերքեք չեյի կարծում, որ պատերազմը կարող է լինել այնքան ճանճալի»,—գանգատվում է այդ նույն հուսարը, վորսալով իր վրայի վոշիլները, վեց չաբաթ խրամատներում նստելուց հետո:

Այդ ճանճալի պատերազմի համար հենց՝ պետք են ամուր ջղեր:

Մի անգամ յերեկոյան, աշխատանքից հետո, Լացին ու Տիմարը, Շուլցի հրավերով, գնացին մոտակա պանդոկներից մեկը: Վորտեղ էլ որ նրանք լինում եյին Շուլցի հետ միասին, Տիմարը միշտ յերկյուղ եր կրում՝ չլինի թե ծերունին ուշադրություն հրավիրի իր վրա. նրա բարձր, դեղնավուն կոտելոկը վոչ մի կերպ չեր սազում կապույտ վերնաշապկին, առանց փողկապի: Ծերունին բնավ մեղք չուներ բաժանվելու իր խունացած գլխարկից:

— Պատրաստ է ինձ հետ միասին,—տեսնենք, ո՞վ ավելի կդիմանա:

Սպասավորը, հազած հին, հայտնի չե, թե վորտեղից վերցրած մաշված ֆրակ և սպորտի գունավոր չապիկ, դրեց սեղանի վրա չորս դավաթ գարեջուր: Զորրորդը պահանջված եր մի աչքանի Բոդի համար:

— Բրինդա գարնիրով,—պատվիրեց ծերունի Շուլցը, ձեռքի ծավոր չարժումով փետելով իր սպիտակախառն, կարճ խուզած միրուքը:

Վարպետորեն խառնելով բրինդան գարնիրի հետ, և վրան լցնելով մի քիչ գարեջուր, Շուլցը դիմեց Բոդին.

— Ահա արդեն յերեք ամիս է, ընկեր Բոդի, ինչ դու ազատվել ես Գայմաչկերից, իսկ գործարանից դուրս յես քեզ հանդիպում եմ առաջին անգամ: Իսկապես ասած, դու ի՞նչով ես զբաղված ազատ ժամանակդ:

Դեմքի թեթու արտահայտությամբ, հայացքը սևեռած մի կետի, նստել եր Բոդին, չներկած աթոռի ծայրին:

— Ի՞նչ եմ անում,—հարցրեց նա, ուսերը վեր քաշելով: Վոչի՛նչ: Առանձին վոչի՛նչ:

Մի կում գարեջուր խմելուց հետո, նորից կրկնեց:

— Ի՞նչ եմ անում: Լսում եմ կնոջս լացը:

— Հը՛մ...

Շուլցը մի վայրկյան դադարեցրեց ոպերացիան բրինդայի հետ:

— Իսկ ինչո՞ւ չե չալիս կինդ։

— Տարօրինակ կլիներ, յեթե նա լաց չլիներ,—պատասխանեց Բոոդին, գավաթը թխթխկացնելով սեղանին։—Ինչպե՞ս լաց չլինի նա, քանի վոր պատերազմից յես վերադարձա հաշմանդամ։ Տղաս (յես ունեմ յոթ տարեկան մի տղա) ծնվեց այն որը, յերբ մեռավ Բեբելը։ Բեբելի պատվին՝ մենք յերեխային անվանեցինք Սվդուսա։ Այսպես ահա, իմ Սվդուսաը... Պատերազմի բոլոր արհավիրքները նա տարավ, ասես՝ յերկաթից լիներ, իսկ հաշտությունը, այդ անիծված հաշտությունը, գետին անցնի այն, նա չկարողացավ տանել։ Հազում է, այն էլ վո՛նց։ Գարնանը, յերևի, մենք կկարդանք «Նեպսավա»-ի մեջ. «Նրան տարավ պրոլետարական հիվանդությունը»։ Դե՛, դուք ասեք, վո՛նց լաց չլինի կինս։

Ծերունի Շուլցը չարունակում եր իր մախինացիաները. ձեռքի վարժ չարժումներով բրինձն քսում եր հացին և յուրաքանչյուր գավաթի առաջ դնում՝ մի-մի բուտերբրոդ։

— Կերեք!

Բայց նա ինքը չեր ուտում։ Վերջացնելով աշխատանքը, նա իր կնճռոտ յերեսը դարձրեց դեպի Բոոդին և բարեսրտորեն ճոճելով գլուխը, հարցրեց.

— Քանի՞ տարի յե, վոր դու ճանաչում ես ինձ, ընկեր Բոոդի։

— Տասներկու... Վո՛չ, չուտով կլինի տասներեք տարի,—պատասխանեց Բոոդին, մի փոքր մտածելուց հետո։

— Տասներեք տարի,—կրկնեց Շուլցը։—Շատ ժամանակ է! Վորքան հիշում եմ, յե՛ս դրեցի քեզ մեռաղադրծների մխության անդամ, և իմ միջոցով առաջին անդամ դու բաժանորդագրվեցիր «Նեպսավա»-ին։

Բոոդին լուռ գլխով արավ։

— Այո՛,—չարունակեց Ծերունին։— տասներեք տարի սրանից առաջ... Մի խոսքով, մենք իրար լա՛վ ենք ճանաչում, ընկեր Բոոդի։

— Ինչի՞ համար և այս բոլորը, ընկեր Շուլց։

— Սպասիր, կիմանաս, ամեն բան կասեմ կարգով։ Դու ասում ես՝ կինդ լալի՞ս է։ Ի՞նչ խոսք, վոր դու ասում ես դուստ ճշմարտությունը. նա լալիս է։ Ի՞նչ ես կարծում, իսկ ի՞նչ է անում իմ կինը։ Ցերկու վորդիներս սպանվեցին Դոբերդոյի տակ։ Ցերրորդը վերադարձավ Սիբիրից հաշմանդամ՝ առանց ձեռքի։

Նա մեռավ լվանքներից՝ Զրինի փողոցում։ Աղջիկս... յես մեծացրի յերեք տղա և մի աղջիկ... աղջկաս վարակեց սիֆիլիսով ռոմինացի սպան։ Ուրեմն, ի՞նչ ես կարծում, ծիծաղո՞ւմ է իմ կինը։ Ես կարծիքով, յես էլ ուրիշ գործ չունե՞մ, բացի նրա լացը լսելուց։ Ցես ուրիշ պարտականություն չունե՞մ, հա՞։

Ծերունին խոսում եր մեղմաձայն։ Հարևան սեղանի չուրջը նստողները խիստ աղմկում էյին։ Ցերը ծերունուն թվում եր, վոր աղմուկը խլացնում է իր խոսքերը, նա կրկնում եր դրանք մեկ-յերկու անգամ. նրա ձայնը հնչում եր առաջվա պես մեղմ։

— Ընկերներ, ուտենք,—ասաց նա վերջում։

Բոոդին ձեռք չտվեց ուտելիքին։ Անշարժ, նա անմիտ հայացքը հառել եր գինով ներկված սփռոցին։ Ցերբ արդեն վոչ վոք չեր կարծում, վոր նա կխոսի, ասաց.

— Ցես պրոֆմիության անդամ եմ։ Ճշտությամբ վճարում եմ մուծանքները։ Ստանում եմ «Նեպսավա»։

Ծերունի Շուլցը նույնիսկ ձեռքով սրտնեղության չարժում արավ։

— Ահա թե ի՛նչ հիշեցի,—ասաց նա դրդռված, բայց և խոսուն լռեց։ Հետո չարունակեց, արդեն առանց վրդովմունքի.— Ընկեր Բոոդի, Բոկանին այսոր այլևս չի ճառում ընտրական իրավունքի մասին Տատաեբալում, այլ նստած է վաճառում, մահվան դատավճիռը դլխին կախ։ «Նեպսավան» նույնպես այն չե, ինչ առաջ եր։ Այնտեղ գրում են. «Թող հանցավորները պատժվեն»։ Ինքնին հարց է ծագում, թե ո՞վքեր են այդ հանցագործները, ընկեր Բոոդի։ Արդյոք, դո՞ւ, վոր յեղել ես դործարանի լիազոր։ Ցես՝ բանվորական խորհրդի նախկին անդամս։ Կամ իմ վորդի՞ն, վոր մի ձեռքով գնաց Ֆրանտ, պաշտպանելու պրոլետարական հայրենիքը։ Ահա թե ո՞ւմ համար և «Նեպսավան» պահանջում պատիժ, ընկեր Բոոդի։ Իսկ յես կասեմ քեզ, վոր մենք արդեն բավական պատժվել ենք, վոր ժամանակին խելքի չեկանք, ժամանակին չմտածեցինք, թե ինչպես պետք է մենք գործեյինք։ Գուցե, մինչև այսոր ել մենք ճիշտ չդիտենք, թե ի՛նչ պետք է անենք։ Մեզ սովորեցնում են կախաղաններով, հրացանի կոթով, ներքինացման դանակով։ Վաղ թե ուշ կսովորենք։ Բայց մի բան կարելի յե ճշտորեն ասել, ընկեր Բոոդի։ Քիչ է՝ միայն արտասվել ու նայել, թե ինչպես արտասվում են ուրիշները։ Այո՛, յեղբայր, քիչ է դա։

Բոդղին, կարծես պաշտպանվելով հարձակումից, մեկնեց յերկու ձեռքը՝ բաց արած մատներով:

— Վո՛չ, յես այլևս չեմ կարող դործել,—թոթովեց նա խրոպոտ ձայնով:

— Դու չես ուզում:

— Չեմ կարող,—կրկնեց Բոդղին:—Յես այլևս չեմ կարող մենակ թողնել կնոջս: Վո՛չ: Չեմ կարող տալ նաև յերկրորդ աչքս: Վո՛չ, վո՛չ: Չեմ կարող, չե՛մ:

Նա հանկարծ կանդնեց, կանչեց սպասավորին:

— Ստացեք:

Հրաժեշտ տալիս՝ Շուլցը յերկար թոթվում եր նրա ձեռքը:

— Նու, ընկեր Բոդղի, յեթե դու այլևս չես կարող կռվել, դու չպիտի բարկանաս նրանց վրա, ովքեր կարող են:

Բոդղին չփոթված ժպտաց:

— Ինչո՞ւ պիտի յես բարկանամ նրանց վրա, ընկեր Շուլց:

— Վախկո՞տ,—քրթմնջաց Լացին, յերբ նրանք մնացին յերեքով:—Վախկոտությունից դավաճանում ե մեր դործին, սրիկա՛:

— Դե՛, դե՛, զդուշչ,—հաշտեցուցիչ տոնով ասաց Ծերուկին:—Յեթե դու ուզում ես կուսակցություն ստեղծել մխիթարի հերոսներից... Բոդղին լավ տղա չե, յես ճանաչում եմ նրան: Կտեսնեք, վոր նրանից դեռ լավ մարտիկ դուրս կդա: Իր ժամանակին... Հապա, տղեք, կերեք—վերջացրեք մնացած բրինձին,—փոխեց նա խոսակցության նյութը,—յես ուտել չեմ ուզում, իսկ թողնել, ափսոս ե:

Անդրեյ Տոմպսան վեր եր կենում յոթից կես պակաս և ընդունում եր պաղ դուշ: Մարմինը սրբիչով լավ տրորելուց հետո, նա տասն րոպե պարապում եր մարմնամարզությամբ: Ով տեսել եր նրան հագնված, յերբեք չեր կարող կարծել, վոր այդ նիհար պատանին այդպիսի ուժեղ, մարզված մկաններ ունի: Ապրում եր նա մոր հետ, այրի մի կնի, վոր իր ապրուստի միջոցները հայթայթում ե փրանսերեն և անդլերեն լեզուների դասերով:

Տիկին Տոմպսան քաղաքային ինժեների կինն եր: Վերջին տարիներս մոր և վորդու հարաբերությունները յեթե բոլորովին չեյին սառել, համենայն դեպս՝ դառել եյին բավական պաշտոնական: Նրանք պատահում եյին առավոտյան նախաճաշի ժամանակ, փոխանակում եյին մի քանի քաղաքավարի խոսքեր և մինչև հետևյալ առավոտ այլևս չեյին տեսնում իրար:

Նախաճաշից հետո Անդրեյը գնում եր համալսարան: Նա պաշտոնավարում եր աուդիտորիաներից մեկում, վո՛չ այնքան դասախոսությունների, վորքան նրա համար, վոր յերևա մարդկանց աչքին: Ուսանողների լեզվով ասած, հաճախում եր «դնչացուցադրման կուրսը»: Դասախոսությունների ժամանակ նա կարդում եր թերթեր և կապույտ մատիտով ընդգծում եր ուշադրավ տեղերը:

Ժամը տասնումեկին նա դերմաններեն լեզվի դասեր եր տալիս իր կոլեգաներից մեկին: Տասներկուսից մինչև մեկը (դասերի համար ստացած դրամով) ինքը վերցնում եր ռուսաց լեզվի դասեր՝ նախկին ռազմագերուց: Ճաշից հետո, չորսից մինչև վեցը, պարապում եր յերեք դիմնազիստների հետ, վորոնք լեհ պոլղչտադցի հարուստ վաճառականի զավակներ եյին: Այդ աշխատանքը վարձատրվում եր վո՛չ այնքան առատաձեռնորեն, բայց Անդրեյը չեր խմում, չեր ծխում, հագնվում եր չափազանց համեստ, այնպես վոր ստացածը բավականանում եր նրա ապրուստի համար:

Այս խիստ կարգադրով, նա ապրում եր արդեն համարյա մի տարի, սկսած այն որից, յերբ վերադարձավ ռումինական գերությունից, ուր ընկել եր նա պատերազմի հենց սկզբին: Նրան համալսարան ընդունեցին առանց դժվարության: Ո՛չ մտքով կանցներ, վոր հայանի ազգանունով և յեկեղեցու տված ծննդական վկայականով այդ պատանին կարող եր լինել կարմիր դավաճան: Համալսարանում նա ծանոթացավ Վերայի հետ, վորը դիվտատուրայի տապալումից հետո առաջին կես տարվա ընթացքում ապրեց Վիեննայում և այնտեղից վերադարձավ, կապված կոմյերիտական կազմակերպությունների հետ:

Յերեկոյան ժամը վեցից հետո Անդրեյն ազատ եր:

Իր ազատ ժամանակը նա անց եր կացնում մեծ զգուշությամբ:

Յեթե գնում եր վորևե տեղ, անում եր խոշոր չրջապտույտ: Ամեն լուրջ դեպքերում ուղղությունը փոխում եր յերկու-յերեք անգամ: Տեսակցություններ նշանակում եր քաղաքի ամենահեռավոր մասերում: Սակայն, վերջին որերս նրա «ազատ» ժամանակի վրա ընկնում եյին այնքան գործեր, վոր նա ակամա պիտի հրաժարվեր այդ նախազգուշություններից:

Շաբաթական չորս անգամ Անդրեյը կարդում էր յերեկոյան դասախոսությունները: Մեկը կաշեգործների մոտ, մյուսը՝ մետաղագործների և յերկուսը՝ ուղղակի վոլոգոում: Յերկու ընկերոջ հետ թևանցուկ, գրոսանքի պատրվակի տակ, նա սովորեցնում էր նրանց:

«Դիկտատուրա, թե՞ դեմոկրատիա... Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի վերջին ետապ... Զախության մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ...»:

Նրա մի թևից բռնած, գնում էր Պյոտրը, մյուս թևից՝ Մարտոնը:

Մարտոնը վո՛չ բարձրահասակ խարտյաշ տղամարդ էր, մեծ կապույտ աչքերի մտահոգ արտահայտությամբ, վոր բնավ չէր կապվում նրա մանկական դեմքի հետ: Նրան կարելի յեր տեսնել ամեննուր, վորտեղ հայտնվում էին Անդրեյը և նրա ընկերները: Տիմարը նրան տեսել էր նույնիսկ Իոհան Կիչի հետ: Նա հազել էր չատ խոշոր կոշիկները, վորոնցից մեկի մեջ մեծ դյուրությամբ կարող էին տեղավորվել նրա վոքրիկ վոտները, առանց կոշտուկ չհանելու վտանգի:

«... Մանկական հիվանդություն...»:

— Ընկեր Տիմար, այս բոլորը ձեզ, անշուշտ վաղուց հայտնի յե, բայց և այնպես, ձեզ համար վնասակար չե մի քանի անգամ դրոսնել ինձ հետ, վոր սովորեք, թե ինչպե՛ս պետք է սովորեցնել ուրիշներին:

— Մինչ դուք խոսում էիք, ինձ ամբողջ ժամանակ թվում էր, թե Լենինն այդ գիրքը գրել է, նկատի ունենալով մեր սխալները:

— Բանն էլ հենց այդ է,—ծիծաղեց Անդրեյը:—Լենինը քննադատում է ոպանդինավցիներին նրանց ձախ թեքման համար այնպես, վոր հարավային աֆրիկացիք անգամ կարող են դրանից դաս վերցնել իրենց ալ թեքման համար:

Այդ յերեկո յերկար ընդմիջումից հետո դրոսատեղերում նորից վառվեցին էլեկտրական լապտերները:

Փոխանակ գնալու տուն՝ ընթրելու, Անդրեյը գնաց Վերայի մոտ:

— Դու հոգնե՞լ ես:

— Սատանան դիտե: Կարծես, հոգնած չեմ, ուղղակի տրամադրություն չունեմ: Արդեն յերրորդ որն է, վոր չեմ կարողանում կարդին քնել: Գրողը տանի,—ձգեց Անդրեյը, բռնադատելով իրեն: Նրա լեզուն դժվարությամբ էր արտասանում սըրտնեղության այդ խոսքերը:

— Տաքությունդ չափե՞լ ես:

— Թողˌ ի սեր աստծո:

Վերան զոռով ստիպեց նրան՝ դնել ջերմաչափը:

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես. յերեսուն ութ և յոթ: Դու տաքություն ունես: Դու պետք է անմիջապես պառկես:

Անդրեյը լուրջ բարկացավ:

— Գրո՛ղը տանի: Մի՞թե դա պետք է պատահեր ինձ հետ այժմ, յերբ այնքան գործեր ունեմ յես: Վաղը յերեկոյան կարևոր տեսակցություն է նշանակված:

— Մի կերպ յոլա կերթանք:

Վերան Անդրեյին տարավ տուն: Առավոտյան ժամն ութին մոտ, նա նորից յեկավ նրա բնակարանը: Դուռը բացեց տիկին Տոմպսան: Նա սաստիկ զարմացավ, լսելով, վոր մի աղջիկ այդքան վաղ հարցնում է իր վորդուն:

— Անդրեյը քնած է: Նա հիվանդ է:

— Գիտեմ: Ցերեկ յես առաջնորդեցի նրան դեպի տուն:

— Ի՞նչ եք կամենում, որիորդ:

— Ի՞նչ եմ կամենում: Ուզում եմ տեսնել նրան:

Տիկին Տոմպսան տարակուսանքով նայեց աղջկան: «Տեսքով կարծես բարոյական կին է: Բան չեմ հասկանում»,—մտածեց նա:

— Խնդրում կհարցնեմ Անդրեյին,—ասաց նա բարձրաձայն,—ինչպե՞ս է ձեր ազգանունը, որիորդ:

— Ո՞մ և ինչի՞ յեն պետք այս ձևականությունները,— և մինչ տիկին Տոմպսան կկարողանար վորևե բան մտածել, Վերան արդեն կանգնել էր Անդրեյի դռան մոտ:

— Այստե՞ղ,—հարցրեց նա և առանց սպասելու պատասխանի, ծեծեց դուռը:

Տիկին Տոմպսան տանից դուրս գնաց, չմտնելով հիվանդ վորդու մոտ: Նա սաստիկ չփոթված էր: Նա չգիտեր, թե ի՛նչ մտածի, չգիտեր, ի՛նչ անի, ի՛նչ ասի, յեթե նորից ստիպված լինի պատահելու այդ աղջկան:

Վերան տնորինում էր:

Ուղարկեց բժշկի յեւևից և դեղատուն, ճաշ պատվիրեց ճաշարանից, նամակներ գրեց,—Անդրեյին մնում էր միայն ստորագրել դրանք: Ցերեկոյան նա դուռը բացեց, յերբ զանգահարեց տիկին Տոմպսան:

— Լուրջ բան չկա,—ասաց նա։—Թեթև դրիպ է։

— Այո՛։ Շնորհակալություն,—կակազելով թոթովեց ափկին Տոմպսան։

Ներանք կանգնած էլին իրար կողքի՝ նախասենյակում, վոր լուսավորված եր թույլ լամպով։

Տիկին Տոմպսան հանեց գլխարկը և կանգնած հայելու առաջ, ուղղում և արծաթաթույր մազերը։

— Թույլ ավեք՝ հարցնել ձեզ, որիորդ, ինչո՞վ և իմ վորդին արժանացել այդպիսի անձնվեր ողնության ձեր կողմից։ Դուք կոլլեգանե՞ր եք։

— Ցես նրա կինն եմ,—կամաց ասաց Վերան։

Տիկին Տոմպսան յետ ցատկեց։

Լայն բացած աչքերի հայացքը նա հառեց այդ չիկահեր աղջկա վրա, վորի մեջ,—ի՞նչ կարող ես անել,—նույնիսկ մայրական աչքերը չզտան վոչինչ դատապարտելի։ Վերան հանդիստ դիմացավ նրա զննող հայացքին։

— Անդրեյի տաքսությունն այժմ բավական բարձր է. յերեսուն ութ և լինն,—ասաց նա։—Գիշերս յես կմնամ այստեղ։ Դուցե, տիկին, դուք բարի կլինեք և կտաք լինճ անկողնի համար վորևե բան... Ցես կպատկեմ հատակին։

— Հա—ա՛, իհարկե... Որիորդ, իսկ... իսկ ինչպես կհրամայեք՝ կանչել ձեզ։

— Ինձ կանչում են Վերա։

Անդրեյը պառկած մնաց անկողնում չորս որ։

Ցերեկոյան, ժամը յոթից կես անց, Տիմարը Վերայի խնդրանոք, զնաց Սաեֆանյան և Արեևայի պողոտաների անկյունում գտնված փոքրիկ հրուշակարանը։ Անդրեյը պայմանավորվել եր մեկի հետ հանդիպել այնտեղ։ Բայց նա հիվանդացավ, և Տիմարը պետք է փոխարիներ նրան։ Սակայն, ո՞ւմ հետ պիտի պատահեր նա։ Այնտեղ կպարզվի։ Վերան յերկու խոսքով բացատրեց նրան բանի եյությունը։

Կես ութի մոտերը Տիմարն սեղանին մոտեցավ ու նստեց բարձրահասակ, նիհար ակնոցավոր մի մարդ։

— Իմ աղգանունն է Դեմե,—ներկայացավ նա։

— Դուք, սիրելի յեղբայր, այժմ ավելորդ եք,—կոկելով իր կարճ խուզած խոպանե բեխերը, դիմեց Դեմեն Մարտոնին, վոր նրա հետ միասին յեկել եր կաֆե։

— Ցես միշտ ավելորդ եմ, յերբ բանը հասնում է հրուշակարանին,—ասաց Մարտոնը, ժպիտով մեղմելով իր խոսքերի դառնությունը։ Ցել դուրս գնաց։

Տիմարը վճարեց։ Ներանք գնացին Սաեֆանյան պողոտայով, Սաեֆանիի արճանի ուղղությամբ։ Այստեղ Սաեֆանյան պողոտայի վրա չենքեր են կառուցված միայն մի կողմում,—մյուս կողմից սկսվում է քաղաքային զբոսայգին։

— Դուցե, մենք անցնենք մյուս կողմը,—առաջարկեց Տիմարը, նշելով ծառերի մերկ սիլուետները, վորոնք ընդունում էլին ֆանտաստիկ ձևեր, թույլ լույսի մեջ անհուսորեն պայքարելով փողոցի լապտերների մուժի դեմ։

— Ցես բոլորովին հակառակ կարծիքի յեմ, յեղբայր իմ,—մերժեց նրա առաջարկը Դեմեն։—Ցես գերազասում եմ՝ քայլել այնտեղ, վորտեղ շատ մարդ կա. դա քիչ նկատելի յե և, հետևապես՝ ավելի անվտանգ է։ Կարևորագույն հրամանները յես միշտ տալիս եմ Անդրեյի և Ռակոցիի պողոտայի ամենաբազմամարդ տեղերում։ Բայց նայեք։ Այդ ծառերը... բո՛ռ... Ներանք, ահարկու թշնամու պես, իրենց ձեռները պարզում են դեպի լինճ։ Ա՛յ, տեսեք, այն ձեռքի բռունցքը, իսկ մյուսները չռել են իրենց մատները։ Ցոթ, լինն մատներ, բո՛ռ... վոմանց վրա կան մատանիներ։ Այո՛, մատանիներ... Զնկատեցի՞ք։

— Զեմ հասկանում,—ասաց Տիմարը,—թե ի՞նչ մատանիների մասին եք դուք ասում։

— Զեք հասնակում։ Ե՛, լավ, թողնենք այդ։ Ցուրաքանչյուր մարդ ունի իր յերևակայությունը։ Սակայն, դա կարևոր չէ։ Այժմ խոսքը դրա մասին չէ։ Ինչ վերաբերում է գործերին, գիտեք, վոր յես պատրաստ եմ ծառայելու ձեզ։

Տիմարն առանց յերկար ու բարակ դատողությունների հայտնեց, թե ինքն ուզում է ծանոթանալ այն կազմակերպությանը, վոր ներկայացնում է Դեմեն։ Ցեթե ամեն բան կարգին է, կազմակերպությունը կարելի յե ներգրավել աշխատանքների մեջ։

— Ի՞նչ բարեհաճեցիք ասել։

Տիմարը կրկնեց։

— Հա, հա, հա, յեղբայր սիրելի, մի՛ չտապիր։ Ինչպես յերևում է, այստեղ կա մի փոքրիկ... ի՞նչ փոքրիկ,—մի խոշոր թյուրիմացություն։ Իմ հասկանալով, բանակցությունների նպատակն է՝ ձեր մանր կազմակերպությունները մտցնել կուսակցության մեջ։ Այդպես չէ՞։

— Ի՞նչ հուսակցության մեջ,—զարմացավ իր հերթին Տիմարը:

— Մեր յերկրում կա մի կուսակցություն՝ հունգարական կոմունիստական կուսակցություն:

Տիմարը լռեց: Նա չգիտեր՝ ի՛նչ ասի, չէր հասկանում, թե ում հետ գործ ունի—խնկագործի՞, թե պրովոկատորի: Բայց չէ՞ վոր Վերան ասում էր, վոր գործը լուրջ է: Ցեվ դժվար թե Մարտոնը բերեր իր հետ պրովոկատորի: Դա անհնարին բան է: «Նու, լավ, կտեսնենք»,—մտածեց նա:

Սկզբում Տիմարն ուզում էր թողնել իր ուղեկցին և գնալ, պահվել անտառի մեջ առանց վորևե բացատրության, բայց այժմ նա միտքը փոխեց:

— Գիտեք՝ ի՛նչ կա,—չարունակեց Դեմեն,—յես անձամբ չեմ ճանաչում ձեզ, բայց ճանաչում եմ նրանց, ովքեր ձեզ ուղարկել են այստեղ: Յես առանձնապես լավ կարծիքի չեմ նրանց մասին, բայց և ուրիշ բան ել չեմ կարող ասել նրանց նկատմամբ: Ընդհանուր առմամբ, նրանք ազնիվ տղերք են, և յեթե նրանք ուղարկել են ձեզ, դա խոսում է հոգուստ այն բանի, վոր դուք ևս ընդհանրապես ազնիվ տղա յեք: Այդ պատճառով ել հենց յես ուզում եմ ձեզ տանել մեր խորհրդակցությանը, վոր ակավելու յե կես ժամից հետո: Ցեվ ավելի լավ է, վոր մինչ այդ մենք վոչ մի բանակցություն չսկսենք: Այն, ինչ դուք կտեսնեք ու կլսեք այնտեղ, յես համոզված եմ, մի անգամից կցրի ձեր բոլոր կասկածները: Համաձա՞յն եք:

Նրանք տրամվայով գնացին մի քանի կանգառներ, հետո գնացին վոտով՝ հակառակ ուղղությամբ: Այդ խաղը նրանք կրկնեցին մի քանի անգամ, մինչև վոր վերջապես նորից չհայտնվեցին նույն հրուշակարանի առաջ, վորտեղից դուրս եյին գնացել: Արդեն տասի մոտ եր:

— Ցես ապրում եմ այս տանը,—բացատրեց Դեմեն:— Այն բնակարանը, վորտեղ յես սենյակ եմ բռնել, պատկանում է իմ տատին: Տատս ինչպես իր ծաղումով, այնպես ել իր նյութական դրությամբ և աշխարհայացքով՝ մեր դասակարգային թշնամին է: Սակայն նա այն տատիճան անգիտակից է, վոր թեև գլխի յե ընկնում, թե ո՛վ եմ յես, բայց և այնպես տանում է ինձ: Իր ժամանակին յես առանձին «քուսի-քուսի» չեմ անի նրան:

Դեմեյի սենյակի յերկու պատուհանների վարագույրներն ել փակ եյին: Հատ գորգը խլացնում եր քայլերի աղմուկը: Սենյակում դրված եյին՝ գորգով պատած մի լայն, ցածր բազմոց, մեծ գրասեղան, գրքերի պահարան և տասը հատ քանդակած, ծանր աթոռներ: Վերջիններս չարված եյին գրասեղանի չուրջը, վորի վրա, գրքերի, ժուրնալների և թերթերի մեջև, բարձրանակով՝ լուսամփոփի փոխարեն: Լամպը լուսավորում եր միայն մի փոքրիկ չրջան՝ սեղանի մոտ, իսկ սենյակի մեծ մասը թաղված եր խավարի մեջ:

Քառորդ ժամվա ընթացքում հավաքվեցին մոտ տասը «յեղբայրներ»: Ներս յեկողներից վոչ վոք չեր բարևում:

— Մենք թողել ենք բուրժուական այդ նախապաշարմունքը,— բացատրեց Տիմարին Դեմեն:

Վերջինը, ի մեծ զարմանս Տիմարի, ներս մտավ Մարտոնը, վորը Դեմեյի տված նշանով՝ դուռը փակեց բանալիով:

Դեմեն նստեց բազկաթոռի մեջ՝ գրասեղանի առաջ. հյուրերը տեղավորվեցին աթոռների վրա, Մարտոնը և ակնոցավորը կուզ բլանդինը նստեցին բազմոցին:

«Սրանցից յերկուսն ուսանողներ են,—վորոշեց ինքն իրեն Տիմարը,— գուցե և ծառայողներ: Մնացածները բանվորներ են»:

— Կոմխաեյի անդամներից զատ, այստեղ ներկա յե ելի մի յեղբայր,—բարձրաձայն հայտարարեց Դեմեն:—Նա մի քանի կազմակերպությունների ներկայացուցիչ է, վորոնք իրենց անվանում են կոմունիստական, բայց մինչև այսօր դեռ չեն մտել հուսակցության մեջ: Որակարգի առաջին կետն է՝ քարտուղարության հաշվետվությունը հուսակցության և կոմինտերնի փոխհարաբերությունների մասին: Յերկրորդ կետը՝ ռազմական կազմակերպությունների զեկույցը: Վերջապես՝ ընթացիկ գործեր: Կա՞ն, արդյոք, ուրիշ առաջարկներ: Չկա՞ն այդպիսիները: Քարտուղարության առաջարկն ընդունված է միաձայն: Ցեղբայր Ցեվգենիյ,— դիմեց նա Մարտոնին,—դու արձանագրություն կկազմես:

Հուսակցության և Ինտերնացիոնալի փոխհարաբերության՝ ների մասին զեկուցեց ինքը՝ Դեմեն: Նա խոսում եր սահուն, հնչուն գեղեցիկ ձայնով, բայց չափազանց արագ: Աջ ձեռքով նա հենվում եր սեղանին, ձախով վոլորում եր բեխերը:

Ժողովը լսում եր նրան մեծ ուշադրությամբ: «Աստ՝ հրամանով են լսում»,—մտածեց Տիմարը: Ամենքը չարժում եյին

դլուխները՝ հռետորի ճառի տակին համաչափ: Մարտոնը մի-այն, նստած ծալապատիկ, անդադրում թմբկահարում եր մատ-ներով իր հսկայական կոշիկների ներբաններին և դողունի հա-յացքներ եր ձգում Տիմարի վրա: Տիմարը նստած եր անշարժ, ուշադրութեամբ հետևելով ճառող Դեմենին և նրա հլու ունկըն-դիրներին:

Դեմենն կատաղաբար հարձակվում եր Ցերբորդ Ինտերնացիո-նալի վրա՝ հունգարական կոմունիստական կուսակցութեանն ար-համարհաբար վերաբերվելու պատճառով: Բայց և միաժամանակ նա կարծես թե պաշտպանում եր նրան:

— Ցեղբայր Ալեքսանդրը,—ասաց նա, բարձրացնելով ձայ-նը,—իրավացի չեր, անվանելով Լենինին դավաճան: Քարտուղա-րութիւնը, մանրապնին քննութեան հիման վրա հաստատեց, որ Լենինը վո՛չ թե դավաճան է, այլ լավ իրազեկ չէ: Պատա-հում է,—չարունակեց նա ավելի ցած ձայնով,—պատահում է, որ յես էլ եմ սխալվում: Իսկ ինչո՞ւ չեր կարող սխալվել Լե-նինը: Ինդրեմ, հարցն այդպես չդնել—կամ նա, կամ մենք: Մեր պարտքն է՝ իրազեկուցել նրան: Չե՞ որ չի կարելի բացատրել նրա մեծ արժանիքները: Մենք պետք է հնարա-վորութիւն տանք նրան՝ ուղղելու իր սխալները: Այո՛, այո՛: Մեր պարտքն է՝ փրկել նրան հեղափոխութեան համար: Իհարկե, յեթե դա չհաջողվի մեզ...

Ցեվ Դեմենն արավ մի այնպիսի չարժում, կարծես՝ փայտը կոտրում և ձգում է հատակին:

Ունկնդիրները հավանութեան տրամադրութեամբ չարժում եյին գլուխները:

Տիմարը լսում եր բացարձակ տարակուսանքով: Նա հաս-կանալ չեր կարողանում, ո՛ւր է ընկել ինքը, խոսքը ի՛նչ հուն-գարական կոմկուսի մասին է, որի անունից հանդես է գալիս այդ ինքնավստահ հռետորը:

Մինչդեռ Դեմենն չարունակում եր իր ճառը.

— Այսպես ուրեմն, ահա թե ինչպես է դրութիւնը: Յես համարձակվում եմ դնալ ավելի առաջ: Քարտուղարութիւնը վորոշեց առայժմ կասկածի տակ չդնել հունգարական ամբողջ եմիգրացիան ու նրա հետ կապված մանր կազմակերպութիւն-ներն այստեղ՝ յերկրում: Յես լիահույս եմ, յեղբայրներից վոչ վոք ինձ չի համարի ոպորտունիստ, յեթե յես անեմ այսպիսի մի առաջարկ.—առայժմ հարց չբարձրացնել վո՛չ Կունին, վո՛չ

եվ Լանդլերին կուսակցութիւնից հեռացնելու մասին: Պետք է հնարավորութիւն տալ նրանց՝ պաշտպանվելու: Յես պիտի ա-սեմ ձեզ, վոր դա վոչ միայն իմ կարծիքն է, այլև յեղբայր Լե-դոտայի: Յես կարծում եմ, ձեզ համար դա բավական է: Վոր-պես պատասխան մեր պաշտոնագրի, Վիեննայից ուղարկել են մեզ մոտ այս յեղբորը, նրա անունը յես չեմ տա,—այստեղ Դե-մեն նչեց Տիմարին, և բոլոր ներկա յեղողները, ասես՝ հրամա-նով, գլուխները չուռ տվին նրա կողմը:—Նա յեկել է այստեղ, վոր արդարացնի իրեն և իր ընկերներին ու ցուցմունքներ ստա-նա հետագա վարքագծի համար,— վոգևորված ստում եր Դե-մեն:—Այն մեմորանդումը, վոր մենք պատրաստվում ենք ու-ղարկել Լենինին, յես առաջարկում եմ հետաձգել, մինչև կպար-զարկել Լենինին, յես առաջարկում եմ հետաձգել, մինչև կպար-զենք, թե ինչպե՛ս և ի՛նչ չափով եմիգրացիան ու նրա հետ կապ-ված մանր կազմակերպութիւնները Հունգարիայում ցանկանում են, և վոր չափով կարող են ուղղել իրենց սխալները ու գան-ցառութիւնները: Մտցնում եմ առաջարկութիւն. այդ հարցը պարզելու համար, ընտրել հատուկ հանձնաժողով... Ջեկուցու-մը վերջացավ,—ասաց նա, նստելով:—Սկսվում են վիճաբա-նութիւնները: Ցելույթների համար տրվում է յերեքական րոպե:

Սկսվեց դիսկուսիան: Սկզբում հանդիստ, իսկ հետո աստի-ճանաբար ավելի բորբոքվող կրքոտութեամբ: Դեմենն ստիպված եր բավական չանք թափել՝ կարգը պահպանելու համար: Տիմա-րըն ինչքան աչխատում եր, բայց չեր կարողանում հասկանալ, թե ի՛նչն է կազմում դիսկուսիայի էությունը, ի՛նչն եր պատ-ճառն այդ ատամնակրճատոցին և բռունցքներով կուրծք ծեծելուն: Ակնոցավոր բլոնդինը հարձակվում եր Բելա Կունի վրա, հոլո-վելով «դավաճան», «ավանտյուրիստ» բառերը: Նա խոսում եր վերջին-վոր զինված ապստամբութեան մասին, վորն իբրև թե ար-դեն պատրաստվել եր ամենայն մանրամասնութեամբ, բայց այդ «վախկոտ ավանտյուրիստը» վիժեցրեց այն: Վերջի վերջո նա առաջարկեց՝ կուսակցութիւնից հեռացնել Կունին և Լանդլերին:

Մի այլ ճառախոս, արտաքինով ուսանող, քննադատում եր Լեդոտային:

— Լեդոտային,—ասում եր նա,—տեսութեան բնագավառում, իհարկե, թույլ չի Լենինից: Իր աչխարհայացողութեամբ նա մինչև անգամ բարձր է Լենինից, բայց գործնական խնդիրնե-րում՝ թույլ է նրանից: Բավական և հիշատակել ապստամբու-թեան հետ կապված այն պատմութիւնը, յերբ նա չկարողացավ

խափանել Կունի և Լանդլերի դավաճանությունը: Կուզեք՝ անվանեք ինձ կրքոտ, աչառու, բայց և այնպես չես պետք է ասեմ, որ պրակտիկայի հարցերում Լեգոտայը հեղինակություն չէ ինձ համար: Պրակտիկ խնդիրներում մի Դեմեն արժե հարյուր Լեգոտաի:

— Անձնավորություններ չչոչափենք,—ընդհատեց նրան Դեմեն:

Այժմ խոսեցին միաժամանակ երկու հոգի: Դեմեն մեծ դըժվարությամբ վերականգնեց կարգը: Ցերը վերջապես կրքերը հանդարտվեցին, խորհրդակցությունը միաձայն ընդունեց Դեմեյի առաջարկը՝ վիճելի հարցերը քննելու համար, ընտրել ինն հոգուց մի հանձնաժողով:

— Ցես կարճ կկարեմ,—սկսեց իր ճառն ակնոցավոր բլոնդինը. նա ռազմական գործերի զեկուցող եր:—Թող իմ փոխարեն խոսեն թվերը:

Ճառն սկսելուց առաջ, նա իր դորչ պիջակի վրայից կապեց դինվորի դոտի: Նրա չարժումները վճռական եյին, սակայն նա խոսում եր յերգելով:

— Մենք ունենք բավական քանակությամբ մարդիկ: Կադրամ և հանդերձանքի գործը: Կիբանում յերեք հազար յերկու հարյուր մարդ, Զեպելեյում՝ չորս հազար հինգ հարյուր քառասուն, Կիչպեչաում՝ յերեք հազար հինգ հարյուր քսան, Երժիբեաֆալվում՝ յերկու հազար հարյուր հիսուն, իսկ մայրաքաղաքում՝ մոտ տասնուչորս հազար մարդ սպասում են հրամանի, որ նետվեն վողոց: Բայց յես չեմ ուզում այդպիսի հրաման տալ, մինչև իմ տրամադրության տակ չի լինի ծանր հրետանի և համապատասխան քանակությամբ սավառնակներ: Ցես չունեմ վո՛չ մի տանկ: Կասեմ ուղղակի, դորականի պես. ստեղծված դրության պատասխանատվությունն ընկնում է Լանդլերի և աճենից առաջ՝ Բելա Կունի վրա: Լենինն էլ առանց հանցանքի չէ այդ գործում: Զգիտեմ, ի՞նչ են անում այդ պարոններն իրենց ազատ ժամանակ, յեթե հոգ չեն տանում իմ բանակի հանդերձանքի մասին: Նրանք ինչի՞ վրա յեն գործադրում պրոլետարիատի տված դրամը:

Այստեղ Դեմեն կանգնեցրեց հռետորին.

— Այդ հարցերի քննությունը վերապահվում է հենց նոր ընտրած հանձնաժողովի իրավահասությանը:

— Ցես պնդում եմ մաքսիմալ հրապարակայնության վրա:

Թող մեր առաջ կանգնի Բելա Կունը և թող նա պատասխանի...

— Հանձնաժողով...

Մեծամասնությունը պատչպանեց Դեմեյին:

— Տասնամեկից պակաս ե կես,—հայտարարեց Դեմեն:— Բայց մենք ունենք ելի մի չտապ գործ: Ջոսքը պատկանում է յեղբայր Նովիկին:

Դա ցածրահասակ մի պատանի յեր, պեպենոտ դեմքով: Նշան հաղիվ կարելի յեր տալ տասնուվեց տարի:

— Ցես ընկա գարչելի դրության մեջ,—դանդատվում եր նա, համարյա արտասվելով:—Լեգոտաին հրամանով, յես մեր տպարանից տարա տուն յերկու և կես կիլո տառեր: Դրանք թափված են իմ բաց չեմոդանի մեջ: Լեգոտաին խոստացավ կողպեք, բայց մի՞թե կարելի յե հույս դնել նրա խոստումների վրա, նա նույնիսկ թախտարեց ձեռքով: Յեթե այդ տառերը պետք չեն, յես ուղղակի դեն կձգեմ, յես չեմ ուզում Լեգոտաին հիմարության, նրա խղճության պատճառով բանտ ընկնել:

— Ցես կարող եմ այդ տառերը վերցնել ինձ մոտ,—ասաց Մարտոնը:

Նրա առաջարկն ընդունվեց, և խորհրդակցությունը վերջացավ:

— Մեկ-մեկ,—կարգադրեց Դեմեն:

Ցրվեցին, առանց հրաժեշտի:

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք,—դիմեց Դեմեն Տիմարին, յերբ նրանք մենակ մնացին:—Վոչ վոք չի կարող ինձ մեղադրել աչառության կամ այն բանի մեջ, վոր յես վարում եմ անձնական քաղաքականություն: Ամենից առաջ՝ գործը: Լենինը՝ համաշխարհային հեղափոխության առաջնո՞րդ է. Կունը՝ հունգարական հեղափոխության առաջնո՞րդ է: Ծանր դեպք: Պետք է ունենալ լավ մարտոցություն... Բայց, դիտեք՝ ի՞նչ, առայժմ յես հաշվում եմ դրա հետ և կպաշտպանեմ Կունին, վորովհետև նրա հետ ավելի հեշտ է աշխատել, քան առանց նրան: Իսկ հետո... հետո պատմությունը կասի իր խոսքը,—վերջացրեց նա հանդիսավոր ու հաղթական և սկսեց հրաժեշտ տալ: Վաղը յերեքշաբթի ժամն ութին, հրուշակարանում: Հանձնաժողովը հավաքվելու յե իննի մոտ:

Մարտոնն սպասում եր Տիմարին բակի դռան մոտ: Նրանք լուռ գնացին Սաֆյանյան պողոտայով:

— Լսիր,—խոսեց Տիմարը, յերբ նրանք բավական հեռա-

ցել էլին Դեմելի տանից,—իսկապես ասած, ո՞ւմ են հիմարացնում այդ խելագարները՝ իրո՞ր, թե՞ մեզ:

— Ով ինչպես կհասկանա,—կամաց պատասխանեց Մարտոնը:—Դեմեն իրոք վոր խելագար է: Նա խելքը թոցրեց այն բանի հետևանքով, վոր իրեն չհաջողվեց դառնալ համաշխարհային հեղափոխության առաջնորդ: Նրան «կողոպտեցին» նաև հումքարական հեղափոխության գծով: «Կողոպտեցին»-ը նրա սեփական արտահայտությունն է: Նա ատում է Կունին: Դրա վրա նա ուղղակի խելագարվեց: Ցես չգիտեմ, արդյոք, խելագա՞ր է, թե դուցե ավելի վատ, ակնոցավոր այն գինվորականը: Նրա խոսքերն ապացույց են, վոր նա խելագար է, իսկ նրա վարմունքները խոսում են նրա կատարյալ աննորմալության մասին: Նա բացառապես զբաղված է նրանով, վոր ժամանակ առ ժամանակ խոշոր գումարներ է վերցնում Դեմելից, վորն իր հերթին չանտաժի է յենթարկում իր տատին:

— Իսկ այն թվե՞րը, վոր նա ներկայացրեց...

— Հեռախոսի համարներ,—քմծիծաղեց Մարտոնը:—Նա վո՛չ մի մարդ չունի... Ինձ ուղարկեց այստեղ Անդրեյը, վորին Դեմեն հանգիստ չի տալիս: Նա մեկ առաջարկում է ընդհանուր գործադուլ, մեկ՝ գինված ապստամբություն: Այս բոլոր վիթխարի պլանների նախաձեռնողն է նույն Լեգոտաին, վորի անունը հիշատակվում էր այսոր:

— Նու, իսկ ովքե՞ր են այդ տղերքը: Չե՞ վոր այնտեղ կային մոտ քսան յերևոյթային բանվորներ:

— Այո՛: Նրանք հավատում են անկեղծաբար: Նրանք ընկնում են յուրաքանչյուր խելագարի, յուրաքանչյուր սրիկայի թակարդը: Նրանք իրենց ամբողջ եյությամբ ուզում են մասնակցել հեղափոխական աշխատանքների և չգիտեն, թե ինչպե՛ս: Դու չես կարող յերևակայել, թե ի՛նչ է կատարվում այժմ մեր քաղաքում: Ինձ հայտնի է մի «կուսակցություն» կեբանայում: «Կուսակցությունն» ունի յոթ անդամ, նրանք չեն ուզում ընդունել ուրիշ վոչ վոքի: Այդ յոթ հոգին մշակել են «ամենաճիշտ» պլանը. թե ինչպե՛ս ճանապարհ բացել դեպի Խորհրդային Ռուսաստան՝ Ռումինիայի միջով: Նրանցից յերկուսն աշխատում են պարենի մեծ խանութում և սիստեմատիկաբար գողանում են պանիր, յերշիկ ու սարդինկաներ՝ «կուսակցության մատակարարման» համար: Ապագա կարմիր բանակի մատակարարման համար, արդեն պատրաստ է մոտ տասը կիլո պարեն:

— Աստ ինձ, Մարտոն, դու վո՞րտեղ ես աշխատում:

— Վո՛չ մի տեղ: Ցես գործազուրկ եմ,—պատասխանեց Մարտոնը համարյա չշուկով:—Ցես չունեմ որինավոր փաստաթղթեր: Ինձ վորոնում են իմ իսկական անունով:

— Հը՛մ... Հապա ինչո՞ւ ընկերները չեն ճարում քեզ համար վորևե հավատարմագիր:

Մարտոնը լուռ եր: Բայց յերբ Տիմարը համառորեն կրկնեց իր հարցը, նա պատասխանեց.

— Ժամանակ չունեն: Վաղուց են պատրաստվում այդ անելու, բայց ինչ-վոր բան միշտ խանգարում է: Կգա ինձնից ավելի նշանավոր կամ ինձնից ավելի պակաս ճարպիկ ընկեր, վորը վելի նշանավոր կամ ինձնից ավելի պակաս ճարպիկ ընկեր, վորը վոչ մի կերպ չի կարող գլուխ պահել առանց փաստաթղթի... Մինչդեռ, յես ապրում եմ նաև առանց փաստաթղթերի: Ցերևի, մի որ հերթը կհասնի և ինձ:

— Իսկ ի՞նչ միջոցներով ես դու ապրում:

— Ինքս էլ չգիտեմ:

— Այնուամենայնի՞վ:

— Ներիր, յես զբաղված եմ, չտապում եմ,—պատասխանեց Մարտոնը և առանց ավելացնելու մի խոսք անդամ, մենակ թողեց Տիմարին:

— Դրանից, յեղբայր... այդպիսի գործերից բան դուրս չի գա,—ասում եր Տիմարը Անդրեյին, վոր ուժասպառ եր յեղել յերեքորյա հիվանդությունից:

— Ցես էլ գիտեմ: Մի քանի չարաթ է, ինչ յես չեմ կարողանում կարդին քնել, ամբողջ ժամանակ մտածում իմ, թե ինչպես մենք պետք է յելք գտնենք:

Լսելով Տիմարի պատմածը Դեմելի հետ ունեցած հանդիպումի մասին, Կիչն ասաց.

— Դու պետք է ուրախ լինես, վոր ընկար խելագարների մեջ, և վոչ թե պրովոկատորների: Չե՞ վոր կարող եր և այդ պատահել: Մի անդամ ինձ ծանոթացրին մի մարդու հետ, վորը նույնպես իր տրամադրության տակ ուներ յերեսուն հազար գինված մարդ: Ցես յերջանիկ եյի, յերբ պարզվեց, վոր ամբողջ բանը հանգում եր նրանում, վոր յերեսուն հազար գինված մարդկանց այդ պետը, բնականաբար վարձը վճարելու դրամ չուներ... Դժբախտաբար, մեր գրությունն այնպես է, վոր մի ընկերոջը գալիս է մեկ ու կես պրովոկատոր: Արդյոք զարմանալի՞ յե դա: Վո՛չ: Մենք վո՛չ մի փորձառություն չունեյինք ընդհատակյա

աշխատանքի: Իսկ այժմ պայքարել սպիտակ տերրորի դեմ առանց ընդհատակի փորձառության... Իսկ ավանտյուրիստների և մտամոլորների ձայնն այսօր դեռ հնչում է մերից ավելի բարձր, բայց... վաղը դու ինձ պետք կլինես մի լուրջ գործի համար: Վաղը կիրակի չե: Ցեկ ինձ մոտ առավոտյան ժամի տասին:

— Լա՛վ: Կգամ: Բայց և այնպես, դու չպատասխանեցիր իմ հարցին:

— Կարծեմ դու հարցնում եյիր, թե ինչպե՞ս մենք կարող ենք մաքրել բանվորական չարժումը խեղաթյուրների այդ վոհմակից: Շատ պարզ ձևով. մենք պետք է ստեղծենք իսկական կուսակցություն:

Քաղաքային պուրակի «Կանաչ վորսորդ» մեծ ճաշարանը բոլորովին դատարկ է: Բակը լցված է ձյունով, և վո՛չ մի բան այնտեղ չի հիշեցնում վոչ ռամիկ դործադուլավորների չարաբկայանը, վո՛չ էլ բանվորական ուրախ յերեկույթների վայրը: Այնտեղ այլևս չի հոսում այն արյունը, վոր թափել եյին ժանդրամների, կամ իրենց սիրուհիների պատճառով կուված դինվորների սվինները: Ձյան բարակ շերտի տակից սևին է տալիս հողը: «Կանաչ վորսորդը» խորասուղված է քնի մեջ, ասես՝ մեռած է նա: Լավ տաքացրած, նույնիսկ չափից ավելի տաքացրած, խմիչքների բաժակածախի սենյակում բռնված է մի սեղան միայն, վորի առաջ նստել և միայնակ մի հյուր՝ թխադեմ մի պարոն, գլխին կոտելոկ:

Ցերբ ժամը տասնումեկի մոտ ներս մտան կիչն ու Տիմարը, ճաշարանի տերը, հաստլիկ Վելդյեչին, ընդառաջեց նրանց, ձեռքին բռնած «Նեպսավա» թերթը:

— Պարոններն ի՞նչ կհրամայեն:

Նա ինքը մատուցեց նրանց թեյ ռոմի հետ և նորից դրադվեց իր միայնակ հյուրով: Տիմարը և կիչը լուռ թեյ եյին խմում: Վելդյեչին համարյա բղավում եր, դրուցելով իր կլիենտի հետ:

— Պարոն վայս, յես արդեն հայտարարեցի սոցիալ-դեմոկրատական կուսակցության կոմիտեյում, վոր ինձ մոտ կարող է հանդիսա չնորհ բերել յուրաքանչյուր կարգին բանվոր, յուրաքանչյուր օրինավոր մարդ, վորի բոլոր դործերը կարգին են: «Կանաչ վորսորդը» կաֆե «կլուբ»[1]) չե: Այստեղ իրենց քեֆը չեն

[1]) Կաֆե «կլուբ»-ում սպիտակ տերրորիստները չտեսնված դաղանություն եյին արել խաղաղ այցելուների նկատմամբ:

խրբի անպատասխանատու այնպիսի տարրեր, վորոնք հրաժարվում են խաղաղ քաղաքացիներին: Ամենքին հայտնի յե, վոր իմ վորդի Ֆրանցը ծառայում է Պրոնաիի ջոկատում և կուսակցական կոմիտեն հանցանք դործած կլինի բանվորների չահերի հետ, յեթե հաչվի չառնի այդ նպատակավոր դրությունը: «Կանաչ վորսորդն» այլևս չեն կարող ոդտադործել, վորպես դործադուլավորների չտաբ-կայան: Հունգարիայում այլևս դործադուլներ չեն լինի: Կուսակցական կոմիտեն դիտե այդ՝ ինձնից վոչ վատ: Բայց յեթե ընկերները կուզենան հանդիստ խմել ու դրուցել, այդ դեպքում՝ չկա ավելի հուսալի տեղ, քան «Կանաչ վորսորդը»:

Տիմարն ու կիչը վաղուց խմել, վերջացրել եյին թեյը և յուրաքանչյուր րոպե նայում եյին ժամացույցին:

— Ձեն դա,—ասաց Տիմարը, յերբ սլաքը կանգնեց կես մեկի վրա:

— Նրանք պետք է դային տասնումեկի մոտ: Պարզ է, վոր չեն դա:

— Ստացեք:

— Վախենում եմ ,վոր անախորժ բան պատահած լինի,— ասաց Տիմարը, դնալով դեպի տրամվայը:

Ցերբ տրամվայը չարժվեց Ստեֆանյան պողոտայի ուղղությամբ, Տիմարը հանկարծ ճչաց, և յեթե կիչը չպահեր նրան, նա ցած կթռչեր վագոնից: Հերմինայի պողոտայով դնում եր Բեսկիդը՝ ուղևորվելով դեպի «Կանաչ վորսորդ» ռեստորանը: Նրա հետ միասին՝ անծանոթ մի յերիտասարդ:

— Առանց հիմարությունների,—քրթմնջաց կիչը բարկացած:—Այսպիսի մի սխալը կարող է առիթ դառնալ անհամար դժբախտությունների: Ի դեպ, վո՞րտեղից ես դու ճանաչում Լեդոտային:

— Լեդոտա՞ն,—զարմացավ Տիմարը:

— Մի՞թե նրա պատճառով չեր, վոր դու ուզում եյիր ցատկել տրամվայից:

— Վո՛չ: Ցես չեմ ճանաչում Լեդոտային: Ցերբեք տեսած չեմ նրան: Փողոցով անցնողն իմ հին ծանոթն եր:

ՍՊԻՏԱԿ ՄԱՀ

«Մեր բախտը բերեց, որ մենք ժամանակին փախանք «Կանաչ վորսորդ» ճաշարանից: Մինչ մենք այնտեղ նստել և սպասում էինք դավառեցի ընկերներին, չորս խուզարկու ագենտներ դիմավորեցին նրանց Արևելյան կայարանում: Ընկերներից մեկը,—ո՛վ կարող եր կարծել,—հենց առաջին ապտակից հետո խոստովանեց, որ նրան սպասում են «Կանաչ վորսորդ»-ում, և որ նրան սպասում է Իոհան Կիչը: Մյուս յերկուսը դիմանում են տակունորեն, բայց դրանով գործի եությունը չի փոխվում: Մի խոսքով, յես պետք է ծլկվեմ: Հույս ունեմ, մի չարթից կհաջողվի լնձ վերադառնալ ուրիչ ազգանունով, ուրիչ փաստաթղթերով: Յես կարողացա կարգի բերել մեր գործերը: Յերբ կարիք լինի, քո յետևից կուղարկեմ Մարտունին: Յատնությունն»:

Վերայի բնակարանում հավաքվել էին հինգ հոգի: Անդրեյը դեռ բոլորովին չեր ապավինել հիվանդությունից հետո: Նրա դեմքը դեղնել եր, աչքերը տենդորեն փայլում էին: Լացինն և Տիմարին բերել եր այստեղ Մարտունը: Հայտնի չեր, թե ի՛նչ պատճառներից դրդված, նա թողել, ատեցրել եր այնպիսի բեխեր, որ կարծես մի բանով կեղտոտել եր վերին պռոշը: Վերան առաջին անգամ կտրել եր մազերը և, նոր սանրվածքին անսովոր լինելու պատճառով, ամեն րոպե ձեռքը տանում եր դեպի ծոծրակը:

— Խոսքը վերաբերում է նրան,—սկսեց Անդրեյը,—որ մենք պետք է մեր պատասխանատվությամբ բաց թողնենք մի թռուցիկ: Մենք բոլորովին կորված ենք աշխարհից սկսած այն որից, յերբ հեռացավ Կիչը: Վոչ վոքի մասին վոչինչ չդիտենք. մեր մասին ել վոչ վոք հոդ չի տանում: Մենք ինքներս պետք է մի կերպ դուրս գանք այս դրությունից:

Անդրեյը բռունցքներով սղմեց քունքերը, կարծես՝ ուզում եր ճնշել գլուխը: Յերբ ցավում եր նրա գլուխը կամ վրդովում էին նրան անհաճո մտքերը, այդ չարժումը նա կիրառում եր, վորպես բժշկություն:

— Այդպես ուրեմն, ասում ես՝ մեր պատասխանատվության՞մբ,— հարցրեց Լացին:

— Գլխավորն այդ չե, տղերք,—նկատեց Վերան:—Մենք պետք է նոր հարցեր դնենք: Աչխատավարձ, բանվորական ժամանակ, բնակարանային քաղաքականություն, հարկեր,—ահա այն հարցերը, վոր պետք է դնենք մենք:

— Վո՛չ բոլորովին այդպես: Յեթե մինչև այժմ մենք պատրաստում էինք բացառապես խոշոր քաղաքականությամբ և մեր յուրաքանչյուր թռուցիկով նորից հայտարարում էինք համաշխարհային հեղափոխություն, դրանից բնավ չի հետևում, վոր մենք պիտի ընկնենք մի այլ ծայրահեղության մեջ: Յենթադրենք, մենք խոսքը վերաբերում է գործադրկությունը պակասեցնելուն: Մենք չպիտի լուության մատնենք, վոր դլխավոր պատճառներից մեկը՝ գործարանների տեղափոխումն է Սլովակիայից Հունգարիա, վորովհետև ձեռնտում բանուժն ավելի էժան է: Սոցիալ-դեմոկրատներն իրավացի չեն, գործադրկության նվազումը վերագրելով իբրև աչխատավարձի իջեցումը հիրավի նրանց ձեռքի գործն է: Մի խոսքով···

Անդրեյը խոսում եր սովորաբար այնպես, կարծես դասախոսություն եր կարդում: Ճառի սկզբում վեր եր կենում. խոսքը վերջացնելուց և լայնաթև չարժում անելուց հետո, նստում եր: Բայց այժմ նա չկարողացավ նստել, վորովհետև Տիմարն ընդհատեց նրան:

— Կաց, սպասիր: Յես այժմ յուրաքանչյուր յերկու կամ յերեք որը մի անգամ զարեջուր եմ խմում: Դա խոսում է վոչ միայն հոդուստ այն բանի, վոր յես գառնում եմ արբեցող, այլև այն, վոր յես լավ եմ աչխատում, վաստակում: Ուրիչ խոսքով··· Ուրիչ խոսքով, մենք պետք է ընդունենք, վոր արդյունաբերության վորոչ ճյուղեր, որինակ՝ կոչիկի արդյունաբերությունը, պաշտպանություն են գտնում բարձր մաքսի չնորհիվ: Այսպես թե այն այնպես, դա կատարվում է բանվոր դասակարդի մյուս խավերի հաչվին:

— Այո՛, այո՛,—դլխով համաձայնության նչան եր անում Լացին:—Դա այդպես է: Բայց յես վախում եմ, վոր մենք լինքներս խաբում ենք մեզ. մենք աչքաթող ենք անում, վոր բանվորների ճնշող մեծամասնությունը չի հասկանում այդ: Նրանք չահագրգռված են միայն, վոր աչխատանք ստանան:

Անդրեյը լավ եր կչռադատել իր մտքը, և առարկություններն իսկույն չչփոթեցրին նրան: Նա կարծես՝ ուրախ եր նույնիսկ այդ առարկությունների համար: Նա պատասխանում եր հանդիստ, առանց չտապելու.

— Մենք պետք է համաձայնենք, վոր ներկա կոնյունկտու-

բան՝ ժամանակավոր յերևույթ է: Յեթե չասենք՝ բոլշևյական: Շուտով վրա կհասնի ճղնաժամը, չատ ավելի դաժան, և կսկսվի գործազրկություն, վորի նմանը դեռ չի յեղել:

— Կաց,—նորից ընդհատեց նրան Տիմարը և նույնպես կանգնեց:

Նրանից հետո խոսեց Լացին:

Մարտոնը նույնպես ավեց մի քանի ռեպլիկ:

Դիսկուսիայի կարգը խախտվեց:

Նոր հնարավորություններ բացեց ապիտացիան, վոր մասաներին մղում եր դեպի վերջնական նպատակ: Վերայի հյուրերը միանգամից չդիտակցեցին այդ, բայց նրանք դգացին նոր խնդիրների կարևորությունը և կրքոտ վիճում եյին առաջիկա աշխատանքի ամենափոքրիկ մանրամասների մասին:

Անդրեյի դժգույն դեմքը կարմրեց:

Վերան լուռ լսում եր վիճաբանությունները: Յերբ նա թեքում եր գլուխը, մազերի փունջն ընկնում եր աչքերին: Հետո, կարծես՝ նրան ձանձրացրեց առարկությունները լսելը. նստեց դրասեղանի առաջ, մեջքով դեպի վիճաբանողները: Նրանք չրունակում եյին անդուլ վեճը: Յերեքը՝ է՛լ ավելի մեծ կրքոտությամբ: Անդրեյը՝ իր սովորական սառնասրտությամբ:

— Իսկ դու վոչինչ չունե՞ս ասելու,—դիմեց Անդրեյը Վերային:

Հարևան սենյակում ժամացույցը խփեց տասներկու:

— Լավ է, վոր չմոռացաք իմ դոյության մասին,—կատակեց Վերան:

Նա վեր կացավ, ժպտալով նայեց ընկերների հուզմունքից վայրկյան աչքերին, ապա լուրջ դեմք ընդունելով, դուրս, չափից ավելի լուրջ, աչքերը ցած դցեց:

«Իսկական մխանճնուհի»,—մտածեց Մարտոնը:

— Մինչ դուք վիճում եյիք այստեղ, յես կազմեցի թռուցիկը: Իհարկե, նախագիծ:

Յեթե Վերան հույս ունի եֆեկտի, սխալվում եր: Միայն Մարտոնը վեր թռավ տեղից: Մնացածները, ըստ յերևույթին, դա համարում եյին բնական բան:

— Լա՛վ,—ասաց Անդրեյը:—Կարդա: Միայն կամաց: Ֆո բնակարանի տերերը չուտով կվերադառնան:

Ցեվ հարկադրական ժպիտով ավելացրեց.—Դու, անչուչո, նրանց մոտ ես սովորել խաղալ, «դերասանություն» անել:

— Յես չատ ուրախ եմ, վոր իմ բնակարանի տերերը դերասաններ են. համենայն դեպս՝ մինչև կես գիշեր մենք մենակ ենք բնակարանում: Այսպես ուրեմն, լսեք:

Վերան կարդում եր ջղայնորեն: Նրա դեմքը կարմրել եր: Յերբ նա վերջացրեց, խոսք առավ Անդրեյը: Նա ջարդ ու փշուր արավ Վերայի նախագիծը, դատապարտելով այդ: Տիմարը հավանություն ավեց նախագծին, լրացնելով այն մի քանի գործնական ուղղումներով: Յերևում եր, վոր նա աշխատում է արտադրության մեջ: Լացին ու Մարտոնը պաշտպանեցին Վերային: Անդրեյը պաշտպանում եր իր տեսակետը, բայց քայլ առ քայլ ստիպված եր հանձնել իր դիրքերը: Ընդունեցին միայն նրա մի քանի ուղղումները:

Առավոտվա ժամը յերեքն եր, յերբ Տիմարը վերջապես դուրս գնաց:

Առավոտյան Տիմարը և Լացին, բոլորովին հոգնած, ջարդված, նստեցին իրենց աշխատանքի սեղանի առաջ: Տիմարը չրունակ տրորում եր աչքերը, աշխատելով վանել քունը:

Շուլցը դժկամակությամբ ճոճում եր գլուխը:

— Ինչո՞ւ եք, իմ՞նչ է:

— Ցենթադրենք,—համաձայնվեց Տիմարը:

— Բոդին նույնպես ձեզ հե՞տ եր:

— Ի՞նչ եք ասում, իմ՞նչ եք ասում:

— Սատանան տանի, հապա ո՞ւր կորավ նա:

Արտադրական պրոցեսից Տիմարը յուրացրել եր միայն մի քանի փոքրիկ մանրամասներ: Նա չգիտեր վոչ մի պրիոմ, բացի այն պրիոմից, վորից ոգտվում եր ինքը: Այժմ, յերբ Բոդինը—առաջին անգամ այն ժամանակամիջոցին, մինչ Տիմարն աշխատում եր ֆաբրիկայում—աշխատանքի չեկավ, իսկույն ծագեց դժվարություն: Բոդինի աշխատանքը բաժանեցին իրար մեջ Շուլցը և Լացին: Տիմարը, վոր բոլորից ամենաթույլն եր, ուշացրեց իր աշխատանքը: Նա սկսեց ջղայնանալ:

— Ավելի սառնասրտություն,—խրախուսում եր նրան Շուլցը:—Ցերբ մի բան չի հաջողվում, հենց այստեղ է, վոր պետք է ցույց տալ տոկունություն: Ցերբ ամեն ինչ կարգին է, ջղայնացիր, վորքան քեֆդ կտա... Յես աշակերտ եյի մի վարպետի մոտ, չվար եր Բուդայից, ազգանունը՝ Զեյդեն: Այդ ծերունին հաճախ ասում եր, վոր մարդս արևի մեծ կարիք չունի, վորովհետև նա լույս է տալիս ցերեկը, յերբ առանց այն էլ լույս է:

Ուրիշ բան է լուսինը. նա լուսավորում է գիշերը, յերբ մեծ է լույսի կարիքը: Մի խոսքով...

Ճաշից հետո տղերքն ղրոռնեցին, և տրամադրությունները բացվեց: Դրա փոխարեն, ծերունին մաղձոտել եր:

— Վոչինչ չեմ հասկանում: Ի՞նչ կարող եր պատահել Բոռդինն: Կարծես՝ Թրև չի գալիս աղջիկների յետևից: Դժվար թե հիվանդացած լինի: Մեզ նման մարդկանց հիվանդությունը չի կարող հեշտությամբ գետին տապալել... Չլինի թե յերեխային բան է պատահել:

Յերբ բանվորական որը վերջացավ, Լացին և Տիմարը չեչոտակի վազ տվին Վերայի մոտ: Մինչ Շուլցը, ըստ սովորության, թևքով մաքրում եր իր կոտելոկը և կոշիկները սրբում եր լաթի կտորով, վոր չարունակ կրում եր գրպանում,—նրանք արդեն հեռու եյին:

— Պարոն Շուլց! Թանկագին պարոն Շուլց! Յես ձեզ եմ սպասում: Ողնեցեք մեզ:

— Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել:

Առաջին րոպեին Շուլցը չճանաչեց Բոռդիի կնոջը: Փոքրիկ, չիկահեր մի կին, վրդովմունքից դողդողալով, կանգնած եր նրա դիմաց: Կնոջ դորշ աչքերի շուրջը կային սև շրջաններ, շուրթերը կապտել եյին, գլխակալի տակից խառնիխուռն դուրս եյին թափվել մազերի վինջերը:

— Բանն ի՞նչ է, ի՞նչ է պատահել:

— Իմ Իոսիֆը... Բոռդին... Այս գիշեր տարան նրան:

— Վոստիկանությո՞ւնը:

— Սպանները: Ջոկատի սպանները:

— Հը՞մ...

Կինը դողդոջուն մատներով սղմեց Շուլցի ձեռքը. նրա մարմինը ցնցվում եր լացից: Շուլցը մի կողմ տարավ անբախտ կնոջ դողացող ձեռքը:

— Գնանք: Պետք չէ ուշադրություն հրավիրել եր վրա:

— Գիշերս տարան: Ուղղակի անկողնուց հանեցին: Ամեն ինչ տակն ու վրա արին, քրքրեցին: Մեր աչքի առաջ ծեծեցին նրան: Հենց վոր լուսացավ, յես վազ տվի վոստիկանատուն, այնտեղից իրավաբանական կոնսուլտացիա, ապա նորից վոստիկանատուն... յերեխաս, իմ Գուստին, մենակ է տանը: Հիվանդ պառկած է: Վոչ վոք չի ուզում լսել ինձ: Աստվա՛ծ իմ: Ի՞նչ պիտի անենք մենք:

Հենց վոր մթնեց, Մարտոնը դրամեքենան բերեց Վերայի բնակարանը: Այդ մեքենան չափազանց զվարճալի բան եր: Առաջ նրա վրա տպում եյին վիմատպրային յեղանակով: Այժմ Մարտոնը նրան ձևափոխել եր այնպես, վոր նրա վրա կարելի յեր աշխատել տառերով: Շարվածքի արճճե տառերը պահվում եյին լուցկու տուփերի մեջ, դարսված սիդարների յերկու արկղներում:

— Մեզ մոտ ամեն բան այնպես է, ինչպես պետական տպարանում,—պարծենում եր Մարտոնը:

— Հիանալի յե: Սքանչելի,—ձեռները չփելով գովում եր Անդրեյը, առաջին անգամ դավաճանելով եր սովորական սառնասրտությանը:

Վերան մի անգամ ել չոռոպ աչքի անցկացրեց տեքստը: Մարտոնն սկսեց աշխատել: Բանից դուրս յեկավ, վոր պետական տպարանը, համենայն դեպս, սարքավորված է ավելի լավ: Մարտոնի տպարանում պակաս եյին մի քանի տառեր: Բայց Մարտոնի տպարանում չեր հուսալքվում: Պակաս եյին մանր տառերը, նա չարում եր մեծերը՝ գլխատառերը: Սակայն, դրանք հերիք չեյին, ուստի, մի տառով փոխարինում եր մյուսը, չուռ տալով այն գլխիվար: Վոչինչ, այնպես ել հասկանալի կլինի:

— Ընթերցողներին նույնիսկ առանձին բավականություն է պատճառում՝ դուշակել, թե ո՞ր տառն է պակաս,—մխիթարում եր իրեն Մարտոնը:

— Այդպիսի բավականությունից յես կզերադասեի հրաժարվել,—պաղ ջուր եր ածում նրա խանդավառության վրա Անդրեյը:

Կես գիշերվա մոտ, մեքենան վերջապես դուրս թողեց թռուցիկի առաջին տպագրված օրինակը:

— Հիանալի յե,—ուրախանում եր Մարտոնը:

«Արդեն անցել է տասնինն ամիս այն որից, յերբ հունգարացի պարոնների կողմից ղեկավարվող ռումինական բանակը բացի պարոնների կողմից ղեկավարվող ռումինական բանակը բացի պարոնների կողմից ղեկավարվող ռումինական բանակը ճնշեց սոցիալ-դեմոկրատների դավաճանությամբ թուլացած հունգարական առաջին Խորհրդային հանրապետությունը...»:

— Սքանչելի յե: Հրաշալի՛,—ցնծում եր Մարտոնը:

— Կամա՛ց, կամա՛ց,—նրա թևքից քաշեց Անդրեյը:—Կարծես բնակարանի տերերը վերադարձան:

Մոտ հազար օրինակ տպագրելուց հետո, Մարտոնը դադարեցրեց աշխատանքը և հավաքեց, դարսեց մեքենան:

— Կարծեմ, խոհեմութիւն չէ, գիշեր ժամանակ զբոսնել այդպիսի փաթեթի հետ,—ասաց նա։—Կարող են դողի տեղ ընդունել։ Առաւոտեան վաղ տալով կգամ սրա յետևից և կտանեմ Արևելեան կայարան։ Թվում է, թե իրերի պահպանութեան սենեակում վոչ վոք չի վերոնի այս կապոցը։

— Թող այստեղ նաև թռուցիկները,—հրամայեց Անդրեյը։—Դրանց բաշխումը կկատարեմ յետ ինքս։ Դռնապանին ավելի դրամ տուէք. դա կմեղմի նրա հետաքրքրութիւնը՝ թե ինչո՞ւ դուք այդպես չուտ-չուտ եք գալիս այստեղ։

Տղերքը հոգնած էին, բայց վոչ վոք չէր ուզում քնել։ Վոտով անցան դէպի Պեչոի կողմը, հասան Յելիզավետայի կամուրջին և այնտեղից, ամայի գետափով, դուրս եկան Շղթայաչէն կամուրջը։ Ձախ կողմում, նրանցից մի քանի մետր հեռաւորութեան վրա, մռայլ լուռ էր սառցապատ Դանուբը։ «Վունգարիա» և «Ռից» հիւրանոցների պատուհաններից ընկնում էր պայծառ լոյս, վոր լուսավորում էր սառցե դաշտի մի փոքրիկ տարածութիւնը։ Մյուս ափին աղօտ գծագրվում էին արքայական վերապրաց ապարանքի քոնտուրները, պատուհաններում յերևացող նվազ լոյսերով։ Շղթայաչէն կամրջի, Մարգարիտայի կամրջի և Ույպեշտի կողմից փչում էր բարակ քամի, վոր թվում էր զարմանալի տաք։

Մարտոնը լիակուրծ չունչ քաշեց։

— Գարնանային քամի,—ասաց նա։—Նախազգում եմ գարնան գալուստը։

— Բո դժբախտութիւնն էլ հենց դա յէ,—նկատեց Լացին,—վոր դու ճիշտ կես գիշերին նախազգում ես այդպրաց։

— Հրաշալի քաղաք է այդ Բուդապեշտը,—կանխեց սկսվող վեճը Տիմարը։

— Կլինի սքանչելի,—վոգևորված ասաց Մարտոնը։—Այսոր վոչ մի բանով չէր կարելի փչացնել նրա տրամադրութիւնը։

Առաւոտեան, աշխատանքներն սկսվելուց առաջ, ամբողջ Ֆաբրիկան գիտէր, վոր Բոդրինն տարել են Ջոկատի սպանները։

— Բրիտանացիք...[1])

— Պրոնաինները....

— Ռատենբուրգը...

[1]) «Բրիտանիա» հիւրանոցը՝ սպայական պատժիչ ջոկատների շտաբ-կայանը։

— Հեյայը...

Վոչ վոք հասատատ չգիտեր, թե ո՞վ էր տարել նրան։ Բայց մի բան պարզ էր՝ Ջոկատներից վորևե մեկը։ Գիշերով նրա յետեվից եկան չորս սպաներ, թուլ չտվին նույնիսկ հագնել։ Հենց վից յեկան և անմիջապես էլ տարան՝ մի տակ չապկի մեջ, վրան գցելով նրա ձմեռվա հնամաշ վերարկուն։

Նրա կինն ընկավ սպաների վոտները։ Նրանցից մեկը խփեց նրան կոշկով։

Ֆաբրիկայում աշխատանքը կարգին առաջ չէր գնում։ Ամենքը զբաղված էին Բոդրինով։ Ի՞նչ բան պետք է արած լիներ նրա համար։ Գրողը տանի, յերևի նա բոլշևիկ էր... Բեյա Կունի գործակալ... Գրագրութիւն ուներ Վիեննայի եմիգրանտների հետ... Բայց ինչ էլ լիներ, պետք էր ոգնել նրան։ Աչխատանքի հինգ ընկեր է։ Աչքի մեկը թողել է Գայմաչկերի ճամբարում... Սակայն, ինչպես ոգնել։ Պատժիչ ջոկատները քաշվող, ամաչող պատուղներ չէին։ Սոցիալ-դեմոկրատների կոնսուլտացիայի բյուրո՞ն։ Պետք չէն

Հաստատուն, ռազմական քայլերով, կարծես խրախուսելով իրեն, նա ճանապարհ ընկավ:

Իրավաբանական կոնսուլտացիայի դրասենյակում հերթապահության անող հատ, կարճահասակ, ճաղատանալ սկսող չիկավուն «ընկերը» ուշադրությամբ լսեց գործը: Սկզբում Շուլցից, հետո՝ համարյա միևնույն խոսքերով՝ Բարաբաշից: Լսում էր նա չափազանց ուշադիր: Ակնոցները հանեց և մի յերկու անգամ հոգատարությամբ թաշկինակով սրբեց: Թվում էր, թե նա ուզում է իր խոսակիցների հոգում կարդալ գործի էությունը, ճոճելով գլուխն ի նշան զարմանքի և դատապարտության ու իր կոմպլեկցիայի համար անսպասելի աչխուժությամբ բացականչեց՝ «Ե՛խ, ե՛խ, ե՛խ... Մ՛թթ...»: Յերբ նրանք լռեցին, նա, Ձեռքվելով աթոռին, գլուխը հենեց ձեռքին և նույնիսկ փակեց աչքերը, վորպեսզի ավելի լավ կենտրոնացնի իր մտքերը:

— Հը՛մ...—սկսեց նա բոպեական մտածմունքից հետո:— Հը՛մ... Կա յերկու յենթադրություն: Դա միանգամայն պարզ է: Կամ Ջոկատն իր ձեռքին ունի ապացույցներ, վոր ձերբակալված Բոոդլին իրոք կոմունիստ է, կամ այնպիսի ապացույցներ չկան: Վերջին դեպքում՝ նորից յերկու հնարավորություն կա. Բոոդլիի դեմ ապացույցներ չկան կամ այն պատճառով, վոր նա իրոք կոմունիստ է, կամ նա կոմունիստ է, բայց խնամքով թագցնում է իր կոմունիստական գործունեությունը: Գործն ավելի պարզ դարձնելու համար,—և ի սեր ձեզ, ընկերներ,— վերցնենք լավագույն դեպքը: Յենթադրենք, վորչափով վոր չկան ապացույցներ, Բոոդլին իրոք չի յեղել կոմունիստ: Ուրիշ խոսքով, մենք վերադառնում ենք յելակետին. կամ նրա դեմ կան ապացույցներ, կամ չկան...

Փաստաբանն իր ճառն ասելու ժամանակ մեկ նայում էր Շուլցի յերեսին, մեկ՝ Բարաբաշի: Խոսքը վերջացնելուց հետո՝ գլուխը նորից հենեց ձեռներին:

— Այո՛,—կարճ լռությունից հետո կրկին սկսեց նա:—Այո՛, ընկերներ, անկասկած է: Գոյություն ունեն միայն այս յերկու հնարավորությունները: Յեկեք վերլուծենք դրանք: Կշռադատենք բոլոր հեռանկարները և տեսնենք, թե ի՛նչ կարելի յե անել: Յենթադրենք, թե Ջոկատն իր ձեռքին ունի ապացույցներ, և Բոոդլին իրոք կոմունիստ է: Չխաբենք ինքներս մեզ. յեթե գործն այդպես է, ձերբակալվածի դրությունը ծանր է: Պարզ ասած՝ նրան ապառնում է մահացու վտանգ: Ջոկատները... այստեղ վաստա-

բանը նայեց չուրջը, թե արդյոք սենյակում ոտար մարդ չկա՞ և համոզվելով, վոր կողմնակի լսող չկա, վերջացրեց համարյա չշուկով.—Ջոկատները... Չե՞ վոր, ընկերներ, դուք չատ լավ գիտեք, թե ի՛նչ բան են Ջոկատները: Այդ դեպքում,—նա խորը հառաչեց,—այդ դեպքում՝ վոչ մի միտք չունի մեր միջամտությունը: Բոոդլին մենք չենք ոգնի, իսկ մեզ կանվանարկենք և կզրկվենք հետագայում գործելու հնարավորությունից, մինչդեռ, մենք կարող ենք ոգնել իսկապես անմեղ տեղը տուժող բանվորներին: Յերկրորդ դեպքում... Հուսանք, վոր մենք գործ ունենք այս յենթադրության հետ: Առաջին դեպքում մեր միջամտությունը կլիներ աննպատակ, իսկ յերկրորդ դեպքում՝ ուղղակի վնասակար: Դա կարող էր այնպիսի տպավորություն թողնել, վոր թեև ապացույցները չկան, բայց և այնպես՝ Բոոդլին կոմունիստ է: Վորովհետև յեթե նա անմեղ է, ուրեմն, վախենալու բան չունի: Նա վաղ չէր տա այստեղ՝ ոգնություն խնդրելու համար: Մեր միջամտությունը կարող էր ծառայել վորպես ապացույց Բոոդլիի հանցավորության: Բայց այդ բանին զուր կսպասեն պարոնները մեղնից: Մենք նրանց ապացույցներ չենք տա դժբախտության մեջ ընկած բանվորների դեմ: Վո՛չ: Նրանք դա չեն տեսնի մեղնից: Զուր կսպասեն:

— Ուրեմն, դուք վոչինչ չե՞ք ուզում անել,— հարցրեց վրդովված Շուլցը:

— Ինչպե՛ս կարող եք դուք այդպես խոսել: Մենք, իհարկե, կանենք մեղնից կախված ամեն ինչ: Բայց, հասկանալի յե, վոչ վոչ մի բան, վորը կարող է վնասել ձերբակալվածին, մանավանդ վոչ մի բան, վորը կարող է վարկաբեկել կուսակցությունը...

— Բաժանորդագրվիր «Նեպռավա»-յին,— կատաղած ասաց Շուլցը, յերբ նրանք իջնում էին սանդուխներից:

— Այդ բանը դո՞ւ յես ասում ինձ,—զարմացավ Բարաբաշը: Առանց դրան էլ, արդեն ութ տարի յե, վոր յես ստանում եմ «Նեպռավա»:

— Մ՛թթ... Նու, այն ժամանակ...

Յեվ ձերունի Շուլցը կոպիտ հայհոյեց. մի բան, վոր նրա հետ քիչ էր պատահում:

Մարտոնը վաղ առավոտյան գնաց Վերայի մոտ՝ մեքենայի յետևից: Սենյակն արդեն հավաքած, մաքրած էր: Թարմ հաց

մի ծայրին՝ Վերայի դիմաց, ընկավ այնպիսի խորին մտածողության մեջ, որ մոռացավ ձեռքին բռնած թեյի բաժակի մասին:

— Ինչի՞ մասին ես մտածում,—հարցրեց Վերան:

Մարտոնը ցնցվեց: Նրա դեմքը կաս-կարմրեց:

— Ի՞նչ... Ինչի՞ մասին եմ ես մտածում...

Նա ուներ անսովոր անճարակ տեսք:

Վերան բարձրաձայն ծիծաղեց:

— Ես մտածում եյի նրա մասին, թե ինչքան դեղեցիկ է կյանքը,—ասաց Մարտոնը կամաց:—Դու նույնիսկ չերևակայել չես կարող, վերա, թե որքան դեղեցիկ ե, հրաչալի:

Վերան հանկարծ լրջացավ:

— Թեյ խմիր, Մարտոն և կեր հաց ու մարգարին: Ուրիշ ոչնչով չեմ կարող հյուրասիրել քեզ:

Հենց այդ չերեկո Մարտոնը բռնվեց:

Վերայի բնակարանում թողած թռուցիկներից մոտ չերեք հարյուր օրինակ վերցրեց Լացին: Հիսուն հատ նա բաժանեց ֆաբրիկայում, մոտ հարյուր օրինակ հանձնեց մի ընկերոջ, որ կիշպեչից եր: Մնացածը «նատեցրեց հեծանիվի» վրա: Աչխատանքները վերջանալուց մի ժամ առաջ, նա պատրվակ բռնելով առաջնացավը, դուրս գնաց ֆաբրիկայից: Փողոցում նրան արդեն սպասում եր Մարտոնը՝ կանացի հին հեծանիվի հետ: Լացիի հեծանիվը նոր եր, շատ լավը, որ Անդրեյը վերցրել եր նրա համար վարձով:

Նրանք արագ սլացան Վացիի պողոտայով դեպի Ուլպեչա: Ուլպեչայի մաքսատան մոտ նրանք չուռ չեկան և ավելի դանդաղ տեմպով չեռ գնացին՝ դեպի Արևմտյան կայարանի կողմը: Անցնելով ֆաբրիկանների և գործարանների մոտով, նրանք նետեցին դարպասներից դուրս չեկող բանվորներին կապոցով թռուցիկները:

Լացին արդեն վերջացրել եր իր գործը: Մարտոնը դցում եր վերջին օրինակները: Հանկարծ չեռևի անիվի չրջանակը տրաքոցով ճաքեց: Մարտոնի բախտը չբերեց: Կատաստրոֆը պատահեց վոստիկանական պահակակետից վո՛չ հեռու: Պահակալ վոստիկանը տեսավ, թե ինչպես Մարտոնը ցրում եր վերջին թռուցիկները: Մարտոնը կարող եր փախչել: Մթնել եր: Նա կարող եր ազատ խուսնվել բանվորներին. պետք եր միայն դցել հեծանիվը: Բայց նա չուզեց այդ բանն անել և նրան բռնեցին հեծանիվի հետ:

Լացին արդեն հեռու չեր, չերբ նկատեց, որ Մարտոնը չեռ

մնաց: Նա իսկույն չեռ դարձավ և հասավ այն մոմենտին, չերբ վոստիկանը—ինչ-որ սպայի ոգնությամբ—կապում եր ամբողջ ուժով դիմադրող Մարտոնի թևերը: Նրա աչքերը, լցված կատաղության ու ցավի արցունքներով, մի վայրկյան հանդիպեցին Լացիի աչքերի հետ:

Լացին ուղիղ սլացավ Մարտոնի բնակարանը, իսկ ժամից հետո արդեն Վերայի մոտ եր՝ իր դժբախտ ընկերոջ աղքատիկ իրերի հետ: Կարտոնից չեմոդան, մի ղույդ վարտիկ, չերեք թաշկինակ, կարմիր դրոշի կտորներ և մի հատ տետր:

Տետրի առաջին չերեսին կարմիր թանաքով մակագրված եր.

«Պրոլետարներ բոլոր չերկրների, միացե՛ք»:

Յերկրորդ չերեսին փակցված եյին Տիբոր Սամուելիի և Ոատո Կորվեժի լուսանկարները: Տակը՝ դրած սև թանաքով.

«Պրոլետարիատը կառնի ձեր վրեժը»:

Յերրորդ չերեսին՝ վոտանավոր՝

«Բանտում, Մարգարիտայի բույլարում...»:

Յոթ էջ լցված եր «Կոմունիստական Մանիֆեստից» և «Պետության ու Հեղափոխության» չերկից հանած քաղվածքներով:

Մի էջը բռնում եր Լենինի և Բելա Կունի խոսակցությունն ուղիղ հեռագրաթելով: Ներքևում՝ դարձյալ կարմիր թանաքով դրված եր.

«21/III—1919»:

Մյուս չերեսին՝ Վերայի լուսանկարը:

Այստեղ Լացին ուզում եր մի բոպե կանգ առնել, բայց Վերան ջղայնորեն չուռ ավեց թերթը: Վերայի լուսանկարից հետո չերկու էջ մաքուր եր: Տետրի մնացած մասը լցված եր այն նամակների պատճեններով, որ անհայտ հեղինակներ ուղարկել եյին անհայտ հասցեներով:

1.

«Հասարակությունն ամենից ավելի հարցնում, հետաքրքրվում ե Ռուսաստանով: Մենք, նախկին դերիներս, հաղիվ հաղ կարողանում ենք պատասխանել: Ամենքը հարցնում են մեզ. ճի՞շտ ե, արդյոք, որ Լենինը հողը հանձնել ե դյուղացիներին:

Իսկ յերբ կխմանան, վոր այնտեղ կալվածատերերը չեն դարձել աթոռազրական կոմիսարները[1]), այլ ուրախ են յեղել՝ դեթ փրկելու իրենց սեփական կաշին... Ժողովուրդը վոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե ինչո՛ւ մերոնք չեն հետևել նրանց որինակին: Ձե՞ վոր հայտնի յե, վոր Բելա Կունը սովորել, աշակերտել է Լենինին: Այդ պատճառով, պետք է բոլոր թերթերում ապել· պետք է ուղղակի բաց կերպով խոստովանել, վոր առաջին անգամ այս գործերը մենք տարանք չատ վատ: Մյուս անգամ ավելի խելոք կլինենք: Թե ինչպե՛ս պետք է գործել, կսովորենք Լենինից»:

«Մեզ մոտ կատարվում է հողի տիրահռչակ բաժանումը: Հող տալիս են, իհարկե, բայց նրանց միայն, ովքեր առաջ էլ հող ունեյին: Իսկ աղքատները մնում են ելի աղքատ: Մեր գյուղում հող ստացան տասնումեկ «հերոսներ»: Դրանց թվում կար նաև մի այնպիսի հերոս, վորը պատերազմի ժամանակ նույնիսկ զինվոր չեր յեղել: Իսկ յերբ յեկավ Հեյաչն իր ջոկատի հետ, նա իր սեփական ձեռքով կախեց Սենտերկենին, վորը կարմիրների ժամանակ մեր գավառի դիրեկտորիայի անդամ եր: Դրա փոխարեն, Իոշկա Տելեկին չընկավ հերոսների թվի մեջ, չնայած վոր յերեք անգամ վիրավորվել եր պատերազմում և ստացել եր արծաթե չքանչան՝ քաջության համար: Լավ է դեռ, վոր ժանդարմները նրա մեջքը չջարդեցին, յերբ նա դեմ եր արտահայտվում հողի այդպիսի բաշխման: Մեր Նոտարը[2]), վորի մտքով անգամ չի անցնում, վոր մենք Լենինին կոմունակից ենք, սովորեցնում եր մեզ· «Մելքի յեկեք, տղերք: Մի՞թե միևնույն չե ձեզ համար, թե ո՛ւմ անունից եմ յես կատավարում ձեզ՝ արդյոք, նորին մեծության թագավորի՞, թե՞ Բելա Կունի: Ցե՛ւ այս, և՛ այն դեպքում դուք պետք է հնազանդվեք»: Դա իհարկե ճիշտ է: Մորհուրդների ժամանակ նա կանգնած եր իշխանության գլուխ, իսկ այժմ ամենից ավելի բարձրաձայն նա՛ յե հայհոյում Բելա Կունին: Իսկ չքավորներն ավելի ու ավելի ցանկություն են հայտնում,

[1]) Հունգարիայում Մորհրդային իշխանության ժամանակ սոցիալականացրած գործարանների և խոշոր կալվածքների գլուխն եյին անցել «աթոռազրական կոմիսարները»: Հաճախ կոմիսար եյին նշանակվում նախկին կալվածատերերը և նրանց կառավարիչները:

[2]) Պաշտոնատար անձ Հունգարական գյուղում:

վոր Կունը վերադառնա, թեև նրանք այն ժամանակ քաղցր կյանքով չեյին ապրում: Իսկ յերթե միայն նրանք համոզված լինեյին, վոր Հոզ կատանան...»:

«Նույնիսկ նրանք, ովքեր ամառս աշխատում եյին, արդեն ուտելու բան չունեն: Իսկ ովքեր ամառս գործազուրկ եյին, ասելած գիտե, թե ինչո՛վ են գլուխ պահում: Անցյալ կիրակի, պարոն կոմսը յեկեղեցում բարեւեց գյուղացիներից վոմանց՝ նույնիսկ սրմելով նրանց ձեռքը: Իսկ կենձն ամբիոնից սովորեցնում եր· «Հունգարացի ժողովուրդ, դիշեր ու ցերեկ մի մոռանար, վոր հունգարական ժողովրդի թագավորը գանվում է ոտար յերկրում և ապրում է չոր հացով»: Այն ժամանակ յեռևի նստարաններից մեկը բղավեց· «Վատ չեր լինի, յեթե մեզ ել մի քիչ բաժին հաներ»: Դրանից հետո կոմսը վեր թռավ տեղից, կատարը կարմիր՝ հնդկահավի կատարի պես, և վրդովված ճչաց· «Ամոթ, խայտառակություն: Նույնիսկ յեկեղեցումն ել պրպղվում են բոլշևիկմով»: Փորձում եր իմանալ, թե ով վիրավորեց թագավորին: Բայց ինչքան մոլեգնում եյին կոմսը և կանչվ

Յերեկոյան Շուլցը վորոնելով Գեորգի Սաբոյին, մտավ կաշեգործների պրոֆմիությունն: Սաբոն գտնվում եր միության քարտուղարի սենյակում: Փակ դռնից լսվում եր նրա խռպոտ ձայնը, սովորականից ավելի բարձր: Նա դուրս յեկավ կամարիը: Զայրույթով թրխկացրեց դուռն իր յետևից:

— Ծերունի Շուլց! Հարազատ իմ յեղբայր! Հենց ՝քո մասին եյի մտածում: Աղնիվ խոսք: Դու պետք ես ինձ:

Սաբոն քառասունին մոտ, բարձրահասակ, թեթև կզամբիք մարդ եր, նեղս ընկած կրծքով: Նրա դեմքի դույնը հիվանդոտ ե. կարելի յեր կարծել, վոր նա տառապում է յերիկամունքների կամ ստամոքսի հիվանդությամբ: Իրապես, նա յերկաթե մարդ ե և հիվանդությունների մասին դիտե միայն լսելով: Նրա ձայնը խռպոտվել եր վատ ծխախոտից, վորից դեղնել եյին նրա մատները, վորոնք միշտ պատրաստ եյին պապիրոսներ:

— Գնանք, յեղբայր: Ձերևի դու ճանաչում եյիր... Նու, ինչպե՞ս կարող ես չճանաչել Իոսիֆ Բոոդինին: Վոստիկանությունը պնդում եր, վոր նա ինքնասպանություն ե գործել: Փաստ է, վոր նրան գտել են սառցի վրա, Դանուբի յերեսին, Ցելիզավետայի կամրջի տակ՝ Բուդայի գետափնին: Ձեռները կապած մեջքին, աչքերը հանած... Ինքնասպանությո՞ւն: Նախ՝ նա հանել ե իր աչքերը: Հետո՝ գնդակով ծակել ե իր ճակատը: Ապա՝ ձեռները կապելով մեջքին, նետվել ե կամրջից ցած... Ցավ այդ սրիկան... Ինչո՞ւմն ե բանը, ընկեր Շուլց: Ի՞նչ պատահեց քեզ: Խմիր մի բաժակ ջուր...

Կաշեգործների մոտ ունեցած զրույցից հետո, յերբ Անդրեյը,—յերեկոյան ժամը տասնումեկի մոտ,—յեկավ Վերայի բնակարանը, նրանք յերեքով դեռ նայում եյին Մարտոնի տետրը: Առանց վո՛չ մի խոսքի, նրանք նորից ու նորից թերթում եյին այդ տարօրինակ տետրը: Լացին մի յերկու խոսքով պատմեց Անդրեյին յեղածի մասին: Անդրեյը լսեց նրան, վոչ մի խոսք չասաց, այլ կծում եր միայն իր շուրթերը և մատներով թմրկահարում սեղանը:

— Ո՞ւմ մոտ ե մեր մեքենան պահ տալու անդորրագիրը,— հարցրեց նա, հենց վոր լռեց Լացին:

— Դա այն բոլո՞րն ե, ինչ կարող ես դու ասել,—համարյա թշնամաբար դուրս թռավ Վերայի բերնից:

— Այն, ինչ յես ուզում եմ ասել, ավելի լավ ե, վոր դրեմ: Դա ավելի ոգուտ կբերի, քան լացը:

— Դու մարդ չես,—վրդովվեց Վերան:

Վեճը կանխելու համար, միջամտեց Տիմարը: Նրա համակրանքը Վերայի կողմն եր: Բայց նա հասկանում եր, վոր Անդրեյն իրավացի յե:

— Իսկապես, Վերա, Անդրեյն իրավացի յե: Մենք պետք ե գործենք, և վոչ թե լաց լինենք:

— Ո՞ւմ մոտ ե անդորրագիրը,—կրկնեց իր հարցն Անդրեյը:

— Կարծես, մնացել ե Մարտոնի մոտ,—չխոթված պատասխանեց Լացին:

— Ախո՛ռ: Վերա՛, նստիր գրամեքենայի առաջ: Դիր այնքան որինակ թուղթ, ինչքան մեքենան կվերցնի: Ցես խոստացար Շուլցին՝ առավոտյան դեմ ֆարբրիկա հասցնել հարյուր որինակ թռուցիկ: Բոոդիի առթիվ: Այդ սրիկաներն սպանել են խեղճին: Ցես չեյի ճանաչում նրան, բայց Շուլցն ասում ե, վոր նա պատնիվ բանվոր եր, թեև կոմունիստ չեր: Մանրամասների մասին կպատմեմ հետո:

— Նու, իսկ Մարտո՞նը: Նրա մասին դու վոչինչ չե՞ս ասի,—չեր հանդստանում Վերան, դողալով հուզմունքից:

— Բոոդիի մասին գործն ավելի շատ ե: Նույնիսկ՝ ավելի կարևոր,—հանդիստ պատասխանեց Անդրեյը:—Գուցե, մեզ հաջողվի վոտքի հանել բանվորներին: Բոոդին աշխատում եր ֆաբրիկայում: Իսկ մեր խեղճ Մարտոնը չեր աշխատում: Գործի բրիկայում: Իսկ մեր խեղճ Մարտոնը չեր աշխատում: Գործի ամբողջ եյությունը դա յե, Վերա՛:

Վերան նստեց գրամեքենայի առաջ: Անդրեյի խոսքերը յեթե չհանդստացրին նրան, համենայն դեպս՝ համոզեցին:

— Վաղն առավոտյան վաստարան կգտնենք Մարտոնի համար,— նորից խոսեց Անդրեյը, վերջացնելով թելադրությունը:—Նա համարյա յերեխա յե: Ցեթե մեծ աղմուկ չհանենք, նը:—Նա համարյա յերեխա յե: Ցեթե մեծ աղմուկ չհանենք, նը՝ գուցե, կհաջողվի առանց առանձին դժվարությունների ազատել նրան Զրնիի փողոցից:

— Այդ յերեխայից ժամանակով տոկուն մարտիկ դուրս կգա, —ասաց Տիմարը:

Հետևյալ առավոտ, բանվորներն աշխատանքի գալիս, ամեն տեղ գտան չաղ տված թռուցիկներ հանդերձարանում, արտաքնոցում, բանվորական սեղանների մոտ:

«Ոստենբուրգի հոչակավոր ջոկատը ձերբակալել և տանջելով սպանել ե մեր ընկեր բանվոր՝ Իոսիֆ Բոոդին: Ընկեր Բոոդին

անցյալում յերկար ամիսների ընթացքում բանտարկված և յեղել սպիտակ բանդիտների ձեռքով՝ Գայմաչկերում, վորտեղից վերադարձավ հաչմանդամ: Բոդրի թաղումը տեղի կունենա այսոր, յերեկոյան ժամը չորսին: Վոսկիկանությունն արդելել է բանվորների ներկայացուցիչների մասնակցությունը թաղմանը»:

Աստրագրություն չկար:

Թռուցիկն ակտիվ գործողություններ կոչ չեր անում, բայց ֆաբրիկայում դեռ յերբեք այդքան շատ չեր խոսվել կոմունիստական կուսակցության մասին, ինչպես այսոր: Ցեվ բանվորները դեռ յերբեք այնպես միաբան, միասիրտ պատրաստակամություն չեյին հայտնել վորևե բան անելու: Անպատճառ մի բան անել, նախաձեռնել: Բայց ի՛նչ իսկապես:

Բանվորական սեղանների մոտ աշխույժ զրուցում եյին: Գրգռված, հուզված, նրանք յերբեմն նույնիսկ մոռանում եյին, վոր չափազանց բարձր են խոսում:

Առանձնանոցները լեփ-լեցուն եյին: Այնտեղ խոսում եյին ապատ ու լիաձայն:

Ճաշի ընդմիջումի ժամանակ կազմվեցին խմբակներ: Քննարկում, վիճում, դատում եյին:

Պանդոկում Բարաբաշը պատահեց Սարոյին: Նա իբրև թե աշխատանք եր փնտռում: Նստելով Բարաբաշի սեղանի առաջ, նա ամբողջ ժամանակ խոսակցում եր բանվորների հետ, վորոնք խմբվել եյին հարևան սեղանների շուրջը:

Յերեկորական ժամացույցի սլաքը չորսի վրա յեր, յերբ աշխատանքը վերջացավ ֆաբրիկայում: Դա տեղի ունեցավ վո՛չ ըստ հրամանի: Բանվորները ցած դրին գործիքները վո՛չ միաժամանակ: Սկզբում աշխատանքը դադարեցրեց յերկու սեղան: Հետո ելի յերկուսը: Ապա մի ամբողջ ցեխ: Նրա յետևից մի ուրիշը: Ցեվ այսպես՝ ամբողջ ֆաբրիկան:

Ժամացույցը խփեց չորս, յերբ միջանցքում գանվող վերահսկիչը, զարմացած հանկարծ տիրող լռությունից, վազեց ցեխ: Նա պատրաստվում եր ամբողջ կրծքով չունչ առնել, վոր հյութեղ հայհոյի, յերբ հայացքն ընկավ ամենամոտ կանգնած բանվորի գեմքին, ապա յերկրորդի, յերրորդի յերեսին... Հայհոյանքը սառեց նրա շուրթերին, գլուխը պոռւյտ յեկավ: Մի վայրկյան նա ուղղակի քարացավ: Հետևյալ վայրկյանին նա գնդակի

պես դուրս թռավ շենքից: Թրխկոցով փակելով իր յետևից դուռը, նա թեթևացած չունչ քաշեց ու վազեց դրասենյակ:

Բարաբաշը նրա յետևից խորը հառաչեց. «Ա՛խ, յեթե յես լինեյի նրա տեղը»,—նախանձով անցավ նրա մտքով:

Նա վերջինը ցած դրեց գործիքը, ձեռքը չհեռացնելով նրանից, պատրաստ, ամեն րոպե շարունակելու աշխատանքը: Յեթե վախ չունենար, նա ցույց կտար, թե ի՛նչ ասել և գործադրել առանց պրոֆխուքթյան թուլլտվուքթյան: Նա ցույց կտար, թե ի՛նչ բան և սոցիալ-դեմոկրատների կարգապահուքթյունը: Բայց վա՛խը, այդ անիծված վա՛խը... Նրա առաջն առած չեր կպչում:

— Մի մոռանաք սպիտակ տերրորի զոհերի մասին,—բղավեց հնչուն մի ձայն:

Դրան վորպես պատասխան, հնչեց ընդհանուր դղրդյուն: Չեր կարելի հասկանալ բառերը:

— Կեցցե՛ն ռուս ընկերները:

Նորից նույն դղրդյունը:

Գործադուլ-ցույցը տևեց տասը րոպե:

Յերբ դիրեկտորի ոգնականը, դրասենյակի յերեք պաշտոնյաների ուղեկցուքթյամբ ներս մտավ ցեխ, ամեն բան արդեն վերջացել եր: Բանվորները շարունակում եյին աշխատել, ասես՝ վոչինչ չեր պատահել:

Աշխատանքների վերջում՝ առանձնանոցներում լվացվելու և հագնվելու ժամանակ՝ լեզուները բացվեցին: Մեկի կարծիքով, տասը րոպե տևող գործադուլը բավական չեր: Մյուսները դա համարում եյին չափազանց խիզախ յելույթ:

— Առանց պրոֆխուքթյան դիտուքթյան ու թուլլտվուքթյա՛ն,—մարմաջում եր Բարաբաշը:—Դա կոկատավորների պրովոկացիան է: Ցես բնավ չեյի զարմանա...

Նա ամբողջ մարմնով դողում եր հուզմունքից:

Ֆաբրիկայի դռների առաջ կանգ առավ մի հզոր ավտոմոբիլ:

Նրա մեջ նստած եյին սպաներ:

Ցորթ սպա:

Ութերորդը՝ չոֆերն եր:

Հենց վոր առաջին բանվորները յերևացին դարբասում, յորթ սպաների գլուխները, կարծես՝ հրամանով, չուռ յեկան դեպի նրանց կողմը:

Չորս դեմք ածիլված, յերկու բեխավոր, մեկը միրուքավոր: Կապույտ, դորշ, սև աչքեր: Փայլուն, սպիտակ և նիկոտինից դեղնած՝ ատամներ: Բայց և այնպես, այս բոլոր յոթ դեմքերը մի բան էին: Սպայական յոթ ռեխներ:

Բեռլենյան փափախ: Կոունկի փետուրներ: Ատրճանակներ: Դաշույններ: Մարակներ:

Յոթ դեմքեր՝ ձիգ յեկած չարախինդ արտահայտությամբ:

Ատրճանակները, դաշույնները, մարակները փայլում էին չարախինդ հեգնանքից: Սպիտակ ատամները հաղթական ցնծում է:

Առաջին չարքերը նահանջում են:

Յետևից գալիս—մոտենում են նոր խմբեր:

Հարյուր, յերկու հարյուր, չորս հարյուր...

Ութ հարյուր վոտների դոփյուն:

Սպաները ծիծաղում են:

Նրանց սպատնում են չորս հարյուր բանվորների լուրջ դեմքերը:

Այստեղ սպաներ են, այնտեղ՝ բանվորներ:

— Սրիկաներ!

— Սպասեք!

— Ինչպե՞ս եք համարձակվում:

Ծիծաղը թուլանում է, մեռնում:

Ավտոմոբիլը չարժվեց: Զրվեց տեսողությունից:

Լարվածությունն անցավ: Բանվորները խումբ-խումբ քննարկում են դրությունը: Վճռանք կտրծում են, վոր իրենց արածը չնչին բան էր, մյուսները՝ թե շատ մեծ բան էր:

— Նրանց բախտը բերեց, վոր ժամանակին փախան: Ինչ կլիներ, յեթե մերոնք չզսպեին իրենց... Ցերը միտք եմ անում դրա մասին, նույնիսկ սարսափում եմ ինքս իմ մտքից,—ասաց Բարաբաշը:

Մարտոնը մեռավ:

Վոստիկանությունը հաղորդեց, իբր ձերբակալված Մարտոն Ենգելը մեռավ «յերիկամունքների հնացած հիվանդությունից»:

Այդ հաղորդագրությունն առաջին անգամ տպվեց յերեկոյան թերթերից մեկում: Տխմարը կարդաց այն փողոցում, Շուլցի մոտ գնալիս: Սփրռնած չրթունքներով, դողդողալով նա մտավ ծերունի ընկերոջ բնակարանը: Կոչկեղենի ֆաբրիկայի հինգ բանվորներ, վորոնց նա տեսավ այնտեղ, արդեն կարդացել էին այդ լուրը: Բայց նրանցից մեկն էր միայն անձամբ ճանաչում Մարտոնին: Այս մեկ ու կես տարվա ընթացքում սպիտակ տերրորը խլել էր այնքան շատ ընկերների կյանք, վոր մի մահն այլևս չէր կարող տպավորություն թողնել: Խոսակցությունը շուտով փոխվեց ուրիշ թեմաների շուրջը: Տխմարը միայն մնաց մտադրած, հիշելով Մարտոնին:

Շուլցի բնակարանում, վոր բաղկացած էր մի սենյակից և խոհանոցից, տեղի ուներ բուռն խորհրդակցություն:

— Ինքնին հասկանալի յե, վոր յես չեմ վախենում. բայց պետք չե պրովոկացիայի յենթարկել վտանգը: Ցես ուզում եմ իմանալ, թե ո՛ւմ հետ գործ ունեմ,—տաքացավ Շուլցը:

— Կուսակցությունը պահանջում է, վոր յուրաքանչյուր բջիջ բաղկացած լինի զանազան արհեստների բանվորներից,—պնդում էր Լացին:—Այդպիսով՝ կստացվի ավելի շատ տեսակներ:

— Բայց նրանց համար դժվար կլինի համաձայնության գալ իրար հետ: Ոտար տարրերը կարող են հեշտությամբ խցկվել նրանց մեջ:

Լացին չդիմեց:

Տխմարը պաշտպանում էր Շուլցին և քիչ մնաց, վոր կռվի Լացիի հետ: Դրա փոխարեն, նա կարծում էր, թե խորհրդակցությանը պետք է հրավիրել վորոշ մարդկանց նաև ուրիշ բջիջներից, վորպեսզի կարելի լինի ընդգրկել ըստ կարելույն՝ ավելի շատ կազմակերպություններ:

— Այդ բանում դու իրավացի չես,—առարկում էր Ծերուկը:—Խելոք բան է մտածված, վոր բջիջները կապված են ուղղանին:—Խելոք բան է մտածված, վոր բջիջները կապված են ուղղակի վիճենալի, և վոչ թե տեղական կազմակերպությունների հետ: Այստեղ կարելի յե հեշտությամբ ծուղակն ընկնել, կարելի յե հեշտությամբ ստիպել մեզ՝ բացել մեր լեզվի փականքը: Ինչ վերաբերում է Վիճենալին, պետք է ասել, վոր Զրինիի փողոցի ձեռները դեռ չափազանց կարճ են դրա համար: Վո՛չ: Վո՛չ: Պետք է զգույշ լինել:

— Յեթե մենք վճռենք վորևե բան անել, հարևան բջիջը դրա մասին կիմանա միայն յերկու շաբաթից հետո:

Տխմարը մնում էր իր կարծիքին:

— Ներեցեք, ընկերներ,—ասում էր Շուլցը,—վոչնչով չեմ կարող հյուրասիրել ձեզ: Վերջին դրամը տվի կնոջս, թող մի յերեկո անցկացնի կինոյում:

— Վոչի՛նչ, ընկեր Շուլց: Մենք յեկել ենք ձեզ մոտ վոչ թե հյուրասիրության համար, այլ աշխատանքի:

— Դե՛, լավ: Գործի անցնենք, յեղբայրներ:

Ստեղծվեց բջիջ—մենշևույն ֆաբրիկայի բանվորների առաջին բջիջը: Քննարկում եյին առաջիկա խնդիրները: Բջիջի քարտուղար ընտրվեց Տիմարը: Լացին պետք է գնար Վիեննա՝ կենտրոնի հետ կապվելու համար: Առաջ այդ կապը պահպանվում եր ընկեր Կիչի միջոցով, բայց ահա արդեն յերեք շաբաթ եր, ինչ անհետ կորել եր նա:

— Ցրվեցեք մեկ-մեկ, ընկերներ: Ցեվ գդուչչ յեղեք: Հարեվան սենյակում ապրում է «Նեյպոստա»-յի աշխատակիցը: Կամա՛ց, ընկերներ:

Լացին չգնաց աշխատանքի, և Տիմարն ստիպված եր քայլ առ քայլ ընդլայնել իր պրոֆեսիոնալ դիտելիքները: Շուլցը տվորեցնում եր նրան:

— Լավ բան է,—ասում եր նա:—Հիմնովին ուսումնասիրել արհեստը՝ շատ կարևոր է նույնիսկ ֆաղաքական հայեցակետից: Մեզ մոտ՝ ֆաբրիկայում գնահատում են միայն նրանց, ովքեր աշխատանքի մեջ ևս կարողանում են իրենց պաշտպանել:

Ցերեկոյան Վերան լուրջ կռվեց Անդրեյի հետ՝ Տիմարի ներկայությամբ:

— Բոդրիի սպանության դեմ վորպես բողոքի նշան, մենք անցկացրինք գործադուլ-ցույց: Բայց չե՞ վոր Բոդրին նույնիսկ կոմունիստ չեր: Իսկ խեղճ Մարտոնը գնաց անհետ, ասես՝ բնավ դոյություն չեր ունեցել: Մինչդեռ, նա մեր ամենալավ, ամենաանձնվեր ընկերն եր: Խոզուբյուն է:

Վերայի աչքերը լցվեցին արցունքներով: Ձեր կարելի հասկանալ՝ արդյոք՝ ցավի՞ց եր, թե՞ անզոր զայրույթից:

— Խոզուբյուն է:

— Ի՞նչ բացատրել քեզ, յեթե դու չես կարող կամ չես ուզում հասկանալ ամենահասարակ բաները: Բոդրիին ամենքը ճանաչում եյին ֆաբրիկայում: Մարտոնին՝ միայն մենք: Նա կապված չեր վո՛չ մի արտադրության հետ: Դա մի ավելորդ անգամ ապացուցում է ձեռնարկի, խոշոր ձեռնարկի նշանակությունը: Մենք Մարտոնի հիշատակը կհարգենք ամենից առաջ նրանով, վոր կոգտագործենք այդ դժբախտ դեպքը մեր չարժման համար:

Սովորականի հակառակ, Անդրեյը խոսում եր, մանր գալով սենյակում, ձեռները դրած մեջքին:

— Ցես կրկնում եմ, վոր Մարտոնի մահից մենք պետք է հանենք խրատական դաս...

Վերան յերկու ձեռքով փակեց ականջները:

— Լռի՛ր! Չեմ կարող!

— Ի՞նչ չես կարող:

Անդրեյը կանղնեց աղջկա դիմաց:

— Ի՞նչ չես կարող:

— Չեմ կարող տանել քեզ:

Անդրեյը յետ թռավ: Նա աշխատում եր ժպտալ, բայց բըռնադրական ժպիտին փոխարինեց տխրությունը:

Մի քանի վայրկյանից նա տիրապետեց իրեն:

— Դու չափազանց ջղային են, Վերա,—ասաց նա կամաց:—Դա հասկանալի յե: Բարի յեղիր, նստիր գրամեքենայի առաջ, սկսենք աշխատել: Աշխատանքը կհանգստացնի քեզ: Տուր ձեռքդ!

Լացին վերադարձավ հինգ որից հետո վատ տրամադրությամբ: Նա բերեց տխուր նորություն:

Եմիգրանտների մեջ պառակտում կա: Ընկերներն իրար մեջ են ուտում: Տեղի ունեն մեծ դժտություններ:

— Կարգին պատմիր, թե բանն ինչո՞ւմն է,—անհամբեր հարցրեց Տիմարը:

— Աղնիվ խոսք, ինքս էլ բան չեմ հասկանում: Վո՛չ մի կերպ չհաջողվեց իմանալ: Գուցե, դու ավելին կարողանաս իմանալ: Ցե՞ վոր դու ևս պիտի գնաս Վիեննա, այդ բանը պահանջում է ձերուկը:

— Ինչո՞ւ:

— Զգիտեմ:

Կիչի վերաբերմամբ Լացին իմացել եր, վոր նա յեղել եր Վիեննայում, բայց արդեն յերկու շաբաթ եր, ինչ հեռացել եր այնտեղից: Նա վաղուց պետք է լիներ Պեշտում: Նրա փոխարեն, ժամանակավորապես, հարկավոր է կոնտակտ հաստատել կաշեգործ Սարոյի հետ:

— Մինչ այդ, մենք ինքներս էլ կարող եյինք մտածել և իրագործել,—ասաց գժգոհությամբ Շուլցը:

Կայարանում Տիմարը տեսավ Բեսկիդին: Նրան թվաց, վոր Բեսկիդը նայեց նույն գնացքը, ինչ գնացք վոր նստեց ինքը: Տիմարը նրան վորոնում եր գնացքում, բայց ապարդյուն: Վիեննայում, կայարանում Բեսկիդը նորից ընկավ նրա աչքին, սակայն խոսուն ևեթ կորավ ամբոխի մեջ:

Այն հանձնարարագիրը, որ Պյոտրն ստացավ մեկնելուց առաջ կեմենից՝ Վիեննայի համար, դուրս չեկավ շատ հաջող: Հիշյալ ընկերը տանն եր ու ապատում եր Պյոտրին:

— Այստեղ, Վիեննայում դուք նորից պետք է կրեք ձեր կովալ ազգանունը,—ասաց Կոչան Պյոտրին:—Ձեր այժմյան ազգանունը չպիտի հայտնի դառնա: Այս է այն բոլորը, որ հանձնարարված է ինձ՝ հաղորդելու ձեզ: Մնացած բոլոր բաների մասին կխոսեք Իոհանի և Ծերուկի հետ: Իսկ հիմա չես կառաջնորդեմ ձեզ դիչերելու: Ճանապարհին կընթրենք: Վաղն առավոտյան կգամ ձեր չեանից:

Փոքրիկ ռեստորանում՝ ընթրիքի միջոցին Պյոտրը դգուշությամբ մի քանի հարց տվեց կուսակցական գործերի մասին: Կոչան կամ չեր հասկանում, կամ չեր ուզում հասկանալ: Ցեվ չնայած որ նրա լեզուն նույնքան չարժական եր, ինչպես և նրա ձեռները, ինչպես հենց նա ինքն ամբողջովին, այդ փոքրիկ նիհար մարդը,—բայց և այնպես նա մոչ մի խոսք չասաց կուսակցական գործերի մասին:

— Վերջին անգամ դուք ե՞րբ եք չեղել Վիեննայում,—հարցրեց նա Պյոտրին:

— Մի տարուց ավելի չե:

— Ե՛հ, այն որվանից շատ ջուր է չեկել, անցել: Ընդամենը չերեք ամիս է, ինչ չես ապրում եմ այստեղ: Ցերկու ամիս աշխատում եյի Ռումինիայում, հետո այստեղ մի տարի նստեցի բանտում: Մի խոսքով, տանինեն Թվին Վիեննան ծանոթ չեր ինձ: Բայց ընկերները հրաչքներ են պատմում այն ժամանակների մասին: Այժմ այստեղ ել դեմոկրատիան մեծ հարգանք չի վայելում: Այժմ, ինչպես ասում է ձեր Ծերուկը, չես կարող անպատիժ ապտակել վճռական վոստիկաններին: Պետք է ասեմ ձեզ,—յերեև հավատանք Ծերուկին,—յերեք մեկն ու մեկը Վիեննայի փողոցներում ապտակով հյուրասիրեր վորևե վոստիկանի, վերջինս, ճիշտ է՝ մի փոքր չվոթված, բայց անպայման շատ քաղաքավարի կհարցներ. «Մի՞թե դուք չգիտեք, պարոն, վոր հանրապետության որենքներով արդելվում է կոպիտ վերաբերվել պետական պաշտոնյաներին»: Ծերուկն, իհարկե, այդ անեկդոտը պատմում է շատ ավելի հետաքրքիր ձևով, քան յես: Բայց ներկայումս Վիեննայի վոստիկանները բնավ յերբեք այդպես սիրալիր չեն,—դա հայտնի յե ինձ:

— Հավանորեն, տասնինեն Թվին ևս իրերի իսկական դրությունն այնպես չեր, ինչպես պատմում են նրա մասին,— նկատեց Պյոտրը:

— Իսկ ի՞նչ է անում Ծերուկը:

— «Ներքաղում ենք սոցիալիզմի մեջ» լոզունգի փոխարեն, այժմ Ավստրիայում շատ գործնական է՝ «ներքաղում ենք միապետության մեջ» լոզունգը: Վերջին լոզունգն, անշուշտ, ավելի ռեալ է առաջինից:

— Հետաքրքրական է,— մրթմրթաց Պյոտրը:— Սակայն, ճիշտն ասած, ինձ համար ավելի հաճելի յե իմանալ, թե ի՛նչ է կատարվում հունգարական կոմկուսի մեջ: Մեզ մոտ լուրեր են տարածված, վոր դոյություն ունեն ներքին տարաձայնություններ...

— Այդ մասին ձեզ կպատմի Ծերուկը,—ընդհատեց նրան Կոչան:—Ռուսական գործերի մասին բան գիտե՞ք:

— Քիչ, շատ քիչ բան: Ցեվ այն, ինչ գիտեմ, լավ չեմ հասկանում: Ավելի ճիշտ, բոլորովին չեմ հասկանում: Մեր ընկերները չղայնանում են շատ...

— Չղայնանո՞ւմ են: Նրանք ուղղակի խելագարներ են: Մինչդեռ, խնդիրը պարզ է: Այն, ինչ կատարվում եր այնտեղ մինչև այժմ, ըստ եյության, ռազմական կոմունիզմ եր: Դա հասկանալի յե: Քաղաքացիական պատերազմը վերջացել է. ռազմական կոմունիզմն այլևս պետք չե: Դա ևս հասկանալի յե: Դրանից հետո կարելի յեր և պետք եր սպասել, վոր Կոմինտերնը կվերախի իր տակտիկան: Ցես, իհարկե, հետևում յեմ Լևվինին[1]) արդարացնելու մտքից,—գիտե՞ք, դա այն գերմանացին է, վոր խիստ հարձակվում եր ռուս ընկերների վրա՝ նրանց գերմանաչափ հարգավորում եր ռուս ընկերների վրա՝ նրանց գերմանա-

[1]) Պաուլ Լևվին, 1920—21 Թվի գերմանական կոմկուսի առաջնորդներից մեկը, 1921 թ. մարտին Մերլին Գերմանիայում բանվորական անհաջող ապստամբությունից հետո դավաճանեց հեղափոխությանը: Նա մեղադրում է Կոմինտերնին այդ ապստամբությունը կազմակերպելու մեջ և կոմկուսի դեմ հարուցեց տամբություն կամպանիա: Նրան հեռացրին կոմկուսից: Հետագայում կոմկուսից հալանության գտավ Կոմինտերնի յերրորդ կոնգրեսի որոշումը հալանության գտավ կոմինտերնի յերրորդ կոնգրեսի որոշումը: Դրանից հետո նա մտավ ս.-դ. կուսակցության մեջ: 1930 Թվին ինքնասպանություն գործեց:

կան գործերին «միջամտելու» պատճառով: Նրան հեռացրին կուսակցությունից: Ցես դա լիովին համարում եմ ճիշտ: Բայց գիտեք ինչ· չի կարելի չմոռանալ այն փաստի մասին, որ մի ամբողջ շարք գերմանացի կոմունիստներ, իսկական ու նախկին, հարձակվում են ռուսների վրա, ատիպված են հարձակվել այն բանի վրա, ինչին եյապես վոչ թե ռուսների գործն է, այլ նրանց յեվրոպական դեսպանների: Իսկ նա, ով օրինակ է վերցնում ռուսներից և ընդօրինակում է Ռուսաստանի բանվոր դասակարգի չարժման ձևերը, դեռ հպիվ հազ կարվելով դյուղացիությունից, ով մոռացում է դրանք առանց փոփոխության տեղափոխել յեվրոպական հողի մեջ, կիրառել ռուսական բանվորական մեթոդները Ցեվրոպայում, որը, չնայած իր փտելուն, դեռ շրջունակում է լինել կուլտուրական,—նա, սիրելիդ իմ, իսկական ավանտյուրիստ է: Դա Բելա Կունն է իր արբանյակներով: Այո... Գիտե՞ք ինչ, մենք յերկար ժամանակ լռում եյին, բայց հերիք է: Մենք պետք է ասենք... Մենք վերջապես պետք է բղավենք· Ցեվրոպան ձեզ համար Թուրքեստան չե: Վո՛չ: Ցեվրոպան՝ Ցեվրոպա յե:

Կոչան պապիրոսը վառեց և մի րոպե լռեց: Նրա հյուծված, նիհար դեմքը կենդանացավ:

— Մի խոսքով...—սկսեց նա նորից: Նրա հայացքն· ընկավ Պյոտրի վրա, և նա կրկին լռեց:

Պյոտրը նստած եր լուռ, կծելով շուրթերը, և միայն ուժգին ընչաուությունը մատնում եր նրա վրդովմունքը:

— Ստացեք,—բղավեց Կոչան:

— Ինչո՞ւ չեք վերջացնում, ընկեր, քանի վոր սկսեցիք:

— Մենք պետք է չասպենք: Շմիդտները, վորոնց մոտ դուք պիտի գիշերեք, կարող են քնել:

— Ցես կուզենայի...

Պյոտրն այնպես ել չվերջացրեց խոսքը, չասաց, թե իսկապես ի՛նչ եր ուզում ինքը: Բայց յերբ Կոչան վճարեց, այնուամենայնիվ՝ հարցրեց նրան.

— Ընկեր, ուրեմն, ձեր կարծիքով, իրավացի՞ յե Լեվիին կուսակցությունից հեռացնելը: Ա՛յ, դա հրաշալի յե: Այդ դեպքում՝ ինձ համար անհասկանալի յե հետևյալը· չեթե դուք դեմ եք Լեվիին, հապա ինչպե՞ս կարող եք քարոզել նրա դաղափարները:

— Ի՞նչ եք ասում, վո՞րտեղից վերցրիք: Այդպես բան չկա:

Ցես ասում եյի ընդհանուր դրության մասին, չեյի անում վորևե հետևություն: Ցես ուզում եյի միայն ծանոթացնել ձեզ այն խնդիրներին, վորոնց շուրջն այժմ սկսվում է դիսկուսիա: Ուրիշ վոչի՛նչ: Ավելին յես ասել չեյի կարող թեկուզ այն պատճառով, վոր ինքս ել այնքան իրազեկ չեմ գործերին:

— Այսպե՛ս, այսպե՛ս...—մտազբաղ ձգեց Պյոտրը:

Գրինցինգ ատնող տրամվայի վագոնի մեջ նրանք յերկուսն ել լուռ եյին:

Պյոտրը պետք է գիշերեր Շմիդտների մոտ, վորոնք ապրում եյին խաղաղ միջնավաղոգում՝ միահարկ փոքրիկ ատն մեջ: Նրանք բանել եյին մի սենյակ, խոհանոցի հետ:

Շմիդտը գործազուրկ եր: Նրա կինը վաստակում եր կար անելով: Կարի մեքենան դրված եր խոհանոցում՝ պատուհանի վրա:

Հենց վոր Կոչան հեռացավ, Շմիդտի կինը, փոքրիկ, գեր, խարտյաշ մի կին, կապույտ աչքերով, առաջնորդեց Պյոտրին այն սենյակը, վորտեղ պետք է նա քներ:

— Ահա ձեր անկողինը, ընկեր, իսկ մյուս մահճակալին քնում է մի ուրիշ ընկեր: Նա վերադառնում է ուշ գիշերին:

— Շա՞տ եք հոգնել, ընկեր: Թե՞ կամենում եք մի քիչ զրուցել,—ասաց Շմիդտը, մտնելով սենյակ, ձեռքին վաթսթած քարտեզ:

Մի տարի յեր, ինչ Շմիդտը վերադարձել եր Իտալիայից, վորտեղ նա անցկացրեց համարյա չորս տարի՝ ռազմագերության մեջ:

— Մարդիկ գնում են Իտալիա, վոր բժշկվեն Թոքախտից, իսկ յես իմ Թոքախտը բերի այնտեղից,—ասում եր նա սովորաբար, չվոխտալից ժպիտով:

Այդ չվոխտալից, մի տեսակ ներողություն խնդրող ժպիտը տպավորվել եր ընդմիշտ նրա շուրթերի շուրջը ճիշտ այն որից, յերբ նրա գլխին պայթեց յերկու դժբախտություն· հիվանդությունը և դործազրկությունը: Ցերեխաներից,—մեկը յերեք տարեկան եր, մյուսը՝ մի տարեկան վեց ամսական,—մեռան համարյա միաժամանակ, յերբ նրանց հայրը գնաց պաշտպանելու հայրենիքը: Ինն հարյուր տասնյոթ թվի նոյեմբերին:

— Չի կարելի ասել, վոր նրանք մեռան սովից· բայց վատ սնունդը և, վորպես դրա հետևանք, ընդհանուր թուլությունը

մեծապես նպաստել են հիվանդության,—ասաց բժիշկը, հաստատելով մահը:

Կինը համաձայն պատերազմի հենց առաջին որից աշխատում էր ճերմակեղենի ֆաբրիկայում: Ֆաբրիկան, որ սպասարկում էր բանակը, պատերազմական դրության մեջ էր: Բնական է, նակտությունների ժամանակ ֆաբրիկան կանգ առավ: Պարեսը,—դատական նախկին կապիտան,—գնաց զորձադուլային չտարակուսանը և սպառնում էր զործադուլավորներին.—յեթե նրանք խոսքն զործի չանցնեն, բոլոր տպամարզ-բանվորներին անմիջապես մոբիլիզացիայի կենթարկեն և կուղարկեն իսալական ֆրոնտ: Մեկը, արդուկով թե հավանգով վիրեց կապիտանի զլուխը, Նա այլևս առիթ չունեցավ սպառնալու: Առանց վոչ վոքի վոչ մի խոսք ասելու, Շմիդտի կինը գնաց դինվորական կոմիսարիատ և իր վրա վերցրեց կապիտանի սպանության: Հունվարից մինչև նոյեմբեր նա նստեց դինվորական բանտում՝ մենավոր խցի մեջ: Բանը չհասավ դատի: Հեղափոխությունն ազատեց նրան: Այն որից սկսած՝ նա ապրում է սուս ու փուս և անընդհատ աշխատում: Իհարկե, ճերմակեղենն կարկատելով մարդս հեռու չի գնա: Սակայն եղին՝ սենյակը վարձով տալ,—սենյակը վերցրեց կոմունան՝ զրկից յեկող ընկերների համար: Ինչ կինը հույս ուներ, որ սենյակից ստացված վարձը կարող է բարելավել դրության վերազարձած իր ամուսնու անունը: Բայց մարդս յենթադրում է... Զրկից յեկած ընկերները կարող են ոգնության: Վոմանք հիվանդ են. մյուսների ծանր վերքերը հաղիվ են ապաքինվել: Սենյակի վարձով գնում եղին թեյ, սուրճ և այլ մթերքներ: Լավ է, յեթե դեռ բավականանում ես...

Շմիդտի չազանակագույն աչքերի շուրջը կա կապույտ ծիր: Նրա հագի փիդուրը ծռվել է: Տառապանքներն ու չքավորությունը վոչ մի հետք չեն թողել նրա կնոջ վրա: Ապրելով կիսաքաղց, նա այսուհանդերձ՝ չեր նիհարում, և նրա կապույտ աչքերը չեյին խոսում անքուն գիշերների մասին, որ անց եր կացնում նա, վորբալով իր վաղամեռ յերեխաներին: Բանակից դուրս գալուց հետո, նա միանգամ ընդմիշտ զաղարեց քաղաքականությամբ հետաքրքրվելուց: Այնինչ, Շմիդտը, զրկից յեկող ընկերների ազդեցության տակ, չուտով հեռացավ սոցիալ-դեմոկրատների կուսակցությունից և դարձավ կոմունիստ:

— Չը՛, ի՞նչ կասեք, ընկեր: Հոգնա՞ծ եք, թե՞ կուզենաք մի քիչ պրուցել:

— Զրուցե՛նք,—համաձայնվեց Պյոտրը:

— Յերեկ միայն յես չատ չեմ ձանձրացնի ձեզ...

Շմիդտը բացեց իր բերած քարտեզը կլեյոնկայով ծածկած սեղանի վրա:

— Այստեղ կան մի շարք բաներ, վոր յես չեմ հասկանում:

Պյոտրի առաջ դրված եր Ռուսաստանի քարտեզը:

— Այս կանաչ բծերը,—սկսեց Շմիդտը, նշելով այն տեղերը, վորոնք քարտեզի վրա նշանակված եյին կանաչ գույնով,—այն տերիտորիաներն են, վորտեղ Խորհրդային իշխանությունը կոնցեսիաներ է տալիս ոտարերկրյա կապիտալիստներին: Թև ի՛նչ բան է կոնցեսիան, այժմ արդեն յես հասկանում եմ: Բայց...

Շմիդտի կինը թեյ բերեց, և ստիպված եյին քարտեզը ծալել, վերցնել սեղանի վրայից:

— Շաքար չունենք,—ասաց Ֆրաու Շմիդտը չփոթալից այն ժպիտով, վոր կար և ամուսնու դեմքին:—Մենք թեյը խմում ենք սախարինով:

— Այն ընկերը,—չարունակեց Շմիդտը, խմելով թեյը,—վոր այժմ ապրում է մեզ մոտ, լուրջ մարդ է և չատ բան գիտե: Նա կարող է պատասխանել ամեն հարցի՝ առանց մի րոպե տատանվելու: Բայց դժբախտաբար նա այնպես վատ է խոսում գերմաներեն, վոր նրանից խելք ու իրատ սովորել հեչա բան չի:

— Ուշանում է յեվրոպական հեղափոխությունը,—ասաց Պյոտրը:—Դա վատ է: Ռուս ընկերներն ստիպված են մենակ սկսելու վերակառուցումը: Դա դյուրին գործ չի լինի, սակայն, նրանք գլուխ կբերեն այդ: Ինձ հաղատաելը հեչա բան է, իսկ կարողանալ անել այն, ինչ արել են նրանք...

— Ընկեր, դուք հո ինձ չեք համարում նրանցից մեկը... Վո՛չ, վո՛չ, վո՛չ:

Այժմ Շմիդտը չեր ժպտում: Նրա դեմքը լուրջ եր:

— Վո՛չ, վո՛չ,—կրկնում եր նա, որորելով գլուխը:—Յես հավակնություն չունեմ՝ Յեվրոպա բացելու:

Թեյից հետո Պյոտրը պառկեց և յերկար ժամանակ չեր կարողանում քնել: Ննջելուց հետո քնեց այնպես ամուր, վոր նույնիսկ չլսեց իր կենակցի գալուստը: Նա հանվեց, առանց վառելու լույսը:

Առավոտյան, յերբ Պյոտրը զարթնեց, նրա հարևանը դեռ քնած եր, գլուխը դրած վերմակի տակ և բարձրաձայն խոմփում եր: Նրա չորերն անկանոն չաղ եր տված ամեն տեղ:

Խոհանոցում տիրում էր լռություն: Տյուրե վարպետությունով ծածկված պատուհաններից լսվում էին տրամվայի հեռավոր զնգոցները: Փողոցով անցավ բեռնատար ավտոմոբիլ: անհետ դողաց, ցնցվեց:

Պյոտրը վեր կացավ, և առանց հագնվելու, մոտեցավ պատուհանին: Հետաքրքրությամբ նա նայեց Գրինգինգյան խաղաղ փողոցին: Նրա մաքերը տենդահար թռչում էին դես ու դեն: Եմիգրացիա... Վիեննա... Հունգարիա... Կուսակցություն... «Ո՞վ ո՛ւմ»... Կոնցեսիաներ... Այժմ, յերբ նա նորից հայտնվեց Վիեննայում, նրա ուղեղի մեջ զարթնեցին կիսով չափ արդեն մոռացված մի շարք դեմքեր: «Ինչե՞ր ասես տեղի չունեցան այս մեկ ու կես տարվա ընթացքում: Իսկ մենք զբաղված ենք նրանով, որ հայհոյում ենք ամբողջ աշխարհը, հայհոյում ենք մեզ և ամենից ավելի նրանց, որոնց հետ միասին աշխատում ենք: Ամբողջ ժամանակ միայն դանդաղում ենք, որ գործերն առաջ են դնում կրկյակ քայլերով: Այն ժամանակ միայն, յերբ վերադառնում ենք հին տեղերը, սկսում ենք հասկանալ, թե ինչքան շատ բան է փոխվել այդ ժամանակամիջոցին... Յերբ յես առաջին անգամ Վիեննայում էյի, Յուդենիչը կանգնած էր Պետրոգրադի տակ: Սիրիրը դոնդում է Կոլչակի ձեռքին»:

Հանկարծ յերկու ուժեղ ձեռքեր բռնեցին Պյոտրին յետևից, այնպես ամուր և այնպես չէշտակի, որ Պյոտրը չկարողացավ մոռածել ինքնապաշտպանության մասին: Անսպասելիությունից նա առաջ ընկավ, բայց հետևյալ վայրկյանին, աչ ձեռքով հենվելով պատին, որ չընկնի, ձախով ուժգին հարվածեց իր վրա հարձակվողի փորը:

— Թանկագին, սիրելի յեղբայր իմ,—կարողացավ միայն բղավել նա և հարվածի անակնկալությունից, բայց Թողեց Պյոտրին:

Պյոտրը չուռ յեկավ:

Ներա դիմաց, միայն վարտիկով, առանց չապկի, վոտաբոբիկ, չածխված, ծիծաղելով ու արտասվելով, կանգնած էր Գոտեմանը:

Նա արտասվում էր, վորպես փոքրիկ յերեխա:

Գոտեմանը կարծես խելագար էր: Նա հագնվում և անդադրում չաղակրատում. բայց Պյոտրը չկարողացավ լսել նրանից վոչ մի խելոք խոսք: Պարզ էր մի բան. Գոտեմանը Պյոտրին համարում էր կորած մարդ:

— Ճիշտ ե, Գյուլային ասում էր, վոր դու վողջ ես, բայց յես համոզված էյի, վոր նա ստում է: Յեթե նրա ասածը ճիշտ լիներ, նա պիտի իմանար, թե վո՛րտեղ ես գտնվում դու: Մինչդեռ, այդ հարցին նա չէր կարողանում պատասխանել: Ուրեմն, պարզ էր, վոր ստում էր:

— Այժմ տեսնո՞ւմ ես, վոր նա ճիշտ էր ասում,—ծիծաղում էր Պյոտրը:

— Պաշտպանիր, պաշտպանիր նրան! Յես վո՛չ մի կերպ չէյի սպասի քեզնից այդ բանը:

— Թեև դու խելագար ես,—կատակեց Պյոտրը,—բայց և այնպես հազիր կոչիկներդ:

Բնակարանի տերերը տանից արդեն դուրս էյին գնացել, սակայն Գոտեմանն ուներ իր բանալին: Ներանք դուրս գնացին:

Գարնանային արևը դեռ չէր կարողացել չորացնել գիշերվա անձրևի հետքերը: Գրինգինգյան ծառուղու ծառերը, թվում էր, թե մարդուս աչքի առաջ հագնվում են թարմ, բաց-կանաչ հյութեղ սաղարթ: Խոսակցելով, նրանք բարձրանում էյին կեղբերդ, և մեծ քաղաքի աղմուկը հեռվից հասնում էր նրանց: Հասնելով լեռան համարյա կատարին, նրանք հաճույքով դիտում էյին կաթնատունը, վորի տերրասից տեսարան էր բացվում քաղաքի վրա:

— Նորից մխում են Ֆարբրիկանների ծխնելույզները:

— Ասում են, այժմ Վիեննայում գործազուրկները յերկու հարյուր հազարից ավելի չեն,—ասաց Գոտեմանը:—Բայց ծխատոր և հացը դեռ ծախում են քարտերով: Հայն էլ թխում են՝ առաջվա պես՝ սատանան դիտե ինչ գիր ու գիբրիլից: Յեվ դա, կարծես, այն բոլորն է, վոր մնացել է հին դեմոկրատիայից:

... Յես կարծում եմ,—ասաց Գոտեմանը մտազրաղ,—յես կարծում եմ, լավ է նախ և առաջ սկսել այն մոմենտից, յերբ յես ու դու հայտնվեցինք հունգարա-չեխական սահմանագլխին: Հը՞մ... Յեվրը լինճ համար պարզ դարձավ, վոր չեխերը հանաք չեն անում և վոր չուռով մենք կընկնենք հունգարացիների ձեռքը, իսկ նրանք, լինքդ էլ դիտես, ավելի պակաս համակիր են կատակների,—յես ծածուկ բոթեցի քո կողը: Գուցե, կհիշե՞ս: Յես ուզում էյի քեզ հասկացնել, թե ժամանակ է ծլկվելու: Դու այն ժամանակ կարծես՝ վոչինչ չնկատեցիր: Դու ուշադրության չդարձրիր իմ յերկրորդ, արդեն ավելի հիմնավոր բոթոցի վրա: Ի՞նչ էր մնում ինձ անելու: Դրությունը թույլ չէր տալիս՝ վոչ

յերկար ու բարակ խոսակցություններ, ո՛չ էլ խորամիտ դատողություններ: Պետք է խոստովանվեմ, որ առաջին անգամ չեր, վախում եմ, որ վերջին անգամ էլ չեր, յես վճռեցի դործել առանց կշռադատելու: Յես դեռ հաչիվ չէյի տալիս ինձ իմ դատավորության մասին: Պարզ եր մի բան.—պետք եր փախչել: Բայց ինչպե՞ս: Յես ինքս էլ դեռ չդիտեյի: Նու, ի՞նչպես ավելի ճշդրիտ պատկերեմ քեզ, որ նմանողության որինակ լինի ապագայի համար: Մի խոսքով հասանք մենք սահմանագլխին... Դանդ առանք: Գարշելի ուղեկցորդներն սկսեցին մեզ հաչվել՝ հունգարացիներին հանձնելուց առաջ: «Կա՛»,—վճռեցի յես: Հաչվում եր ընդամենը մի մարդ՝ չեխ: Բայց չէ՞ որ կալանավորների թիվը պետք է հետաքրքրեր նաև մյուս կողմին: Հաչիվ պիտի աներ և մեկ ուրիշը: Յես կանգնած էյի Ֆելդֆեբելի դիմաց՝ մի քայլի վրա: Յեվ մինչ յես հաչիվ կատյի ինձ, թե ի՛նչ եմ անում՝ հայտնվեցի արդեն նրա թիկունքին: Յեվ նրա յետևից յես էլ էյի հաչվում կալանավորներին: Ստուգում էյի, արդյոք, ճի՞շտ է հաչվում նա: Յես հաչվում էյի մատներով, շրթունքներս մունջ էյին: Յես չէյի համարձակվում և չէյի կարող արտասանել մի խոսք անգամ: Հունգարացիները պիտի կարծեյին, որ յես հաչվում եմ չեխերի համար, չեխերը՝ որ յես ստուգում եմ նրանց հաչիվը հունգարացիների համար: Ամենից ճիշտ, նրանցից յուրաքանչյուրը գոհ եր, որ հակառակորդը ներկայացված և վաղորմելի, չէլազ, ինչպիսին յես էյի: Պետք է խոստովանել,—իմ տրյուկը խելագարություն եր, և յեթե դրանից կախված լիներ համաչխարհային հեղափոխության բախտը, միևնույն է,—յես յերկրորդ անգամ չէյի կարող կիրառել այն: Այդպիսի գործը կարող է հաջողվել մի անգամ միայն... Յերբ չեխ Ֆելդֆեբելը վերջացրեց հաչիվը և բղավեց վերջին թիվը, թե վորն է ճիշտ,—չեմ հիշում այն,—յես հավանության նշանով չարժեցի գլուխս:

Բայց դա բոլորը չեր: Ամենաժիվաբը դեռ առաջս եր: Կալանավորներին հանձնելով հունգարացիներին, չեխերը դիմեցին դեպի մի կողմ, հունգարացիք՝ մյուս: Սահմանագծին մնաց միայն պահակը. յերկու զինվոր՝ չեխ և հունգար: Մնացի նաև յես և վոչ մի կերպ չէյի կարող կցվել՝ վո՛չ հունգարական, վո՛չ էլ չեխական պահակին, բայց և այնպես՝ ուզում էյի ապրել: Ա՛յ, տես, թե վո՛նց էյի կանգնել յես,—և վոտները լայն բացած ու ձեռքերը դրած գրպանները, Գոտեմարտն ակնառու կերպով պատկերեց ընկերոջը, թե ինչպե՛ս եր կանգնել ինքն այն ժամանակ:—

Այսպես էյի կանգնել յես: Յեվ հանկարծ իմ միտքը լուսավառեց մի գաղափար: Յես հավաքեցի չալվարիս գրպանում յեղած ծխախոտը և հանգիստ սկսեցի փաթաթել, պապիրոս չինել: Պատրաստի պապիրոսը յես առաջարկեցի իմ մոտ կանգնած չեխ զինվորին: Նա գլխով բացասական նշան արավ, թե իբր ծխելու իրավունք չունեմ, կանգնած եմ պոստում: Յես էլ ձեռքս թափահարեցի, թե կարող ես համարձակ ծխել: Յեվ ինչպես մի մարդ, որ արավ, վերջացրեց իր գործը, յես գնացի դեպի Բրատիսլավա: Յես գնում էյի ժանդարմական ջոկատի յետևից՝ հետևում քայլ հեռավորության վրա: Յես հասկանում էյի. յեթե այդ անիծված ժանդարմներից մեկն ու մեկը յես նայեր,—յես կորած էյի: Նրանցից վոչ վոք յես չնայեց: Ինձ հաջողվեց պատկել խճուղուն զուգահեռ՝ առվի մեջ: Կես որից հետո յես արդեն տանն էյի, Բրատիսլավայում ունեցած իմ բնակարանում:

Բայց դրանով դեռ չվերջացան իմ տառապանքները:

Այն որերին չեխ ժանդարմները, բառիս իսկական իմաստով, վորսում էյին հունգարացի եմիգրանտներին: Նրանք տասնյակներով բռնում էյին այն ընկերներին, վորոնք փորձում էյին փախչել Վիեննա կամ Պրագա: Իսկ քեզ հայտնի յե նրանց վիճակը, ովքեր բռնվում էյին:

Յես հաչիվ էյի անում, որ յեթե չերթամ դեպի Պրագայի կամ Վիեննայի կողմը, այլ գնամ Ավստրիայից հակառակ ուղղությամբ, կարող եմ խուսափել Բրատիսլավայի ժանդարմներից: Սոցիալ-դեմոկրատական թերթը ձեռքիս,—դա հենց այն րոպեն եր, վորտեղ սրիկա սոցիալ-դեմոկրատ Ռոսանին,—հիշո՞ւմ ես, հենց այն պարոնը, վոր Հունգարիայում արդարադատության ժողկոմ եր... Ե՛հ, մի խոսքով, յես նստեցի այն գնացքը, վոր գնալու յեր դեպի Մերձկարպատյան Ռուսիա: Յեվ մինչ վոր, վոր գնալու յեր դեպի Մերձկարպատյան Ռուսիա: Յեվ մինչ ժանդարմները նայում էյին գնացքը, յես կարդում էյի հիշյալ սրիկայի առաջնորդող հոդվածը՝ «Մոսկվայի մայրամուտը» վերնագրով՝ Բրատիսլավյան գործադուլի մասին: Մյուս որը յես արդեն գտնվում էյի Ուշգորոդում: Կայարանից ուղղակի դիմեցի Գոնդայի բնակարանը: Նա տանն եր:

— Դու խելագարվե՞լ ես, ի՛նչ է,—բացականչեց նա:

— Ե՛հ, դիսկուսիա չբացինք դրա մասին:

Գոնդան կատաղեց, մոլեգնեց, հետո սկսեց ծիծաղել: Մի-ծաղում եր և չարանում, բայց և այնպես՝ հետևյալ որը ճարեց

ինչ-որ փաստաթղթեր, վորոնցով չես կարող եյի գնալ Սլատինայում:

Սլատինայում չես առաջին անգամ եյի: Այնտեղ վոչ վոք չեր ճանաչում ինձ: Գոնդան ավել եր ինձ հրաշալի հանձնարարություններ: Ընկերները տեղավորեցին ինձ աշխատելու ադահանքերում: Դու, Պյոտր, կարծեմ յեղել ես ադահանքերում: Բայց դու այնտեղ չես աշխատել: Ցես ընկա Լյուդվիգյան հանքահորը: Այնտեղ մինչև այսոր ել աշխատում են պրիմիտիվ այն ձևերով, ինչպես Ադամի ժամանակներում: Մարդ ծնկաչոք նստում ե ուղղակի աղի վրա: Նրա տակին, նրա վրա, նրա չուրջը՝ ամենուր աղ ե: Մարդ նստում ե ծնկաչոք և կացնանման մի զործիքով խփում, սեպը մացնում ե ադաքարի մեջ, այդ գործողությունը կրկնելով չորս կողմից և այնպես խորն ե մացնում սեպը, վոր վերջապես պոկ ե գալիս ադաքարը: Զգիտեմ, արդյոք, բավարար չափով պարզ ե՞մ բացատրում, թե՞ վոչ. բայց մի բան անպայման պարզ ե ու հասկանալի. այդ աշխատանքին անսովոր մարդը հենց առաջին հինգ րոպեյից հետո կսկսի նզովել աստծուն, իսկ տասը րոպեյից հետո հանում ե նույնիսկ չապիկը: Քրտինքը թափվում եր իմ վրայից՝ անձրևաջրի պես: Ցերկու և կես ամսվա ընթացքում,—չես այնտեղ աշխատեցի յերկու ամիս ու կես,—չես այնպես լղարեցի, վոր դարձա կաշեպատ կմախք: Բայց ընդհանուր առմամբ, վատ չեյի զգում ինձ: Ցես ապրում եյի Դուդաչ հյուանի մոտ: Ցես դիտեմ, դու ծանոթ ես նրան,—նա հաճախ հիշում եր քեզ: Ապրում եյի յես, վորպես լիովին կարգին մարդ: Ջեխերեն եյի սովորում մի աղջկա մոտ, ծխախոտի խանութի տիրոջ աղջկա մոտ: Խոստովանում եմ, ավելի չուտ աղջիկն եր յուրացնում հունգարերեն լեզուն, քան յես՝ չեխերենը: Զգիտեմ, ինչով կվերջանար այս պատմությունը, յեթե չսկսվեր դեկտեմբերյան գործադուլը:

Ինչպես դիտես, դեկտեմբերյան գործադուլն սկսվեց այն բանի հետևանքով, վոր չեխական սոցիալ-դեմոկրատները ժանդարմների սվիններով ոգնությամբ գրավեցին Պրագայի ժողովրդական տունը: Գործադուլ հայտարարեց Պրագան, հետո Բրյունն ու Ռայխենբերգը: Կամաց-կամաց գործադուլն ընդգրկեց ամբողջ յերկիրը:

Այստեղ, յեղբայր սիրելի, յես սովորեցի քիչ ու միչ բան: Ջե՞ վոր հայտնի յե քեզ, վոր կուսակցությունը քայքայվեց Մերձկաբպատյան Ռուսիայում, յերբ մեզ բռնեցին, այսինքն՝ Լավոչնեյից հետո: Վոմանց ազատեցին, վոմանց նստեցրին, վոմանց աքսորեցին, վոմանք ել իրենք հեռացան չարժումից... Գոնդը յերեք ամսվա ընթացքում նորից վերականգնեց կուսակցությունը: Նա ճառարանել չեր սիրում այնքան յերկար, ինչպես մենք: Ջեր գնում դավառակալի մոտ: Ջեր գրում խորհրդաստ հոդվածներ: Ազհատարակ խելքին դուռ չեր տալիս, բայց կուսակցությունը վերակազմում եր: Այո՛: Սլատինայում նույնպես գործերը հաջող եյին գնում:

Գործադուլի յերրորդ որն իմ նախաձեռնությամբ գումարվեց փոքրիկ ժողով՝ Տիսայի ափին: Գիտես, այն տեղում Տիսան այնքան նեղ ե, վոր կարելի յե մի ափից թքել մյուսը:

Հակադիր ափին Ռումինիան ե: Ցերը մեր փչողական որկեսորը նվագեց «Ինտերնացիոնալ», մյուս ափին՝ Սեգեհամբարյում, հավաքվեց վոչ պակաս ժողովուրդ, քան մեզ մոտ: Ցես խոսեցի կարճ—զեկուցողը յես եյի: Ցեվ վորպեսզի ցույց տանք նրանց, մյուս ափին յեղողներին, վոր մենք միայն սրախոսությամբ չենք զբաղվում...

Այն հրապարակում, վորտեղ մեր ժողովուրդն եր գումարվում, գտնվում եր իմ հոր «սիրուհու» ծխախոտի խանութը: Ցերկու յերիտասարդներ վայրկենապես հանեցին նրա դռները, և սիգարետները, պապիրոսները, նամականիշները մի րոպեյում բաժանվեցին, վոր պետք ե բաժանել վորևե հարստի ունեցվածքը: Առանց յերկար մտածելու, մենք վճռեցինք ուղղել մեր սխալը և ներս խուժեցինք ալյուրի մեծ պահեստներից մեկը: Պահեստն արագ դատարկվեց: Հակադիր ափին գտնվող հանդիսատեսների բերնի ջուրը գնում եր նախանձից: Ռումինական զինվորները հրացանի կոթերով դժվարությամբ ցրեցին նրանց:

Նույն որը, յերեկոյան Սլատինա յեկան զրահապատ յերկու ավտոմոբիլ և մի վաշտ լեգեոներներ: Իմ «սիրուհու» հոր առաջնորդությամբ նրանք խուզարկեցին բոլոր տները: Սրբիկաները ինձ եյին փնտռում: Սոխլված եյի փախչել: Ճանապարհին, վոր Սլատինայից տանում եր դեպի Բուչկոյում յեղած յերկաթածուխային գործարանը, յես թաղնվեցի մի փայտահատի տանը: Փայտահատը, սրիտակահեր ծերունի ռումին, վոր վոչ մի խոսք չգիտեր հունգարերեն, ամբողջ որը ծնկաչոք նստած եր աղիքներ հանում և, յեթե չեմ սխալվում, աղոթում եր աստծուն, ոգնություն խնդրելով գործադուլավորների համար: Բայց, գուցե կարող ե պատահել, նա աղոթում եր բոլորովին այլ բանի համար:

Նրա կինը խոսում եր հունգարերեն: Նրան հենց՝ մի յերկու րոպից հետո յես ուղարկեցի Դուդաչի մոտ: Դուդաչը յեկավ ինձ մոտ: Նրանից իմացա, վոր Ռոժոչը և նրա քույրը՝ քո նախկին սերը, գայլերի բաժին դառնա նա,—դանվում են Սլատինայում: Ռոժոչը նույնպես ժողով գումարեց մեր ժողովի տեղում՝ Տիսսայի ափին: Միայն այս անգամ գինվորները ցրեցին մարդկանց, վոր յեկել եյին՝ լսելու մեր հռետորին: Խոսում եր, իհարկե, Ռոժոչը: Նա հին յերգ եր յերգում: Սկզբում հայհոյում եր Լենինին, ապա Խորտիին, հետո նորից բոլշևիկներին, վորոնք իբրև թե ամենքն էլ մինչև վերջինը Խորտիի գործակալներ են: «Պարզ ու բացահայտ է,—ասում եր նա,—վոր գործադուլը կազմակերպել են Խորտիի գործակալները»: Ամբոխից մեկը բղավեց՝ հո նա չի՞ կարծում, վոր չեխ բանվորները Պրաղայում նույնպես ծառայում են Խորտիին: Լեգեոներները ձերբակալեցին այդ ռեպլիկը ավող ընկերոջը, իսկ վորովհետև մերոնք սկսեցին բղավել մեկը՝ «կեցցե Լենինը»՝ մյուսը՝ հայհոյում եր հանրապետությունը,—ուստի, ժողովը ցրեցին: Մյուս ափին ևս ստիպված եյին ամբոխը ցրել հրացանների կոթերով:

Իսկապես ասած, Դուդաչը յեկել եր ավչ ինձ մոտ: Նա գնաց Բոչկո, վոր նախապատրաստի գործարանային բանվորներին՝ «ըստ արժանույն ընդունելու» Ռոժոչին: Այդ անդրամը չբավականացավ Սլատինայով, նա պատրաստվում եր ժողով գումարել նաև Բոչկոյում: Պատրաստվում եր...

Այստեղ Գոտեմանը պահ մի լռեց:

— Իսկ Մարիա Ռոժոչը նույնպե՞ս ագիտացիա յեր մղում գործադուլավորների դեմ,—հարցրեց Պյոտրը:

Գոտեմանը գլխով դրական շարժում արավ:

— Քիչ մնաց, մոռանայի, նրանց հետ յեկել եր և որիորդի փեսացուն՝ ժանդարմական ոտամխարը: Այո՛, այո՛: Շեկ, պեպենոտ ժանդարմական ոտամխարը: Այսպես, Պյոտր, այսպես... Ե՛, լավ: Անցնենք առաջ... Այսպես ահա, այդ նույն Ռոժոչը պատրաստվում եր խոսել նաև Բոչկոյում, բայց ճանապարհին դժբախտություն պատահեց նրա հետ: Սլատինայի և Բոչկոյի մեջև, ճանապարհին, նրա մեքենան յենթարկվեց հրաձգության: Արդեն մութ եր,—դեկտեմբերին որը շուտ է մթնում,—վոչ վոք չտեսավ, թե կրակողն ո՛վ եր: Նույնիսկ չեր կարելի վորոշել, թե վոր կողմից եր հրազարկը: Հանցագործին մինչև այսոր էլ փնտռում են, բայց ապարդյուն:

— Ռոժոչին սպանեցի՞ն:

— Դժբախտաբար, չհաջողվեց,— թոթովեց Գոտեմանը ախուր:—Վիրավորել եյին ձախ ձեռքը: Ցես...

— Ո՞վ է մահափորձ կատարողը:

... Հենց նույն գիշեր,—չարունակեց Գոտեմանը, անուշադիր թողնելով Պյոտրի հարցը,—հենց նույն գիշեր յես վտանեցս գցեցի ուսիս և լեռներով հետիոտ յետ դարձա Ուշգորոդ...

— Ազնիվ խոսք, մեծ բավականություն չե ճանապարհորդել Կարպատներում ձմեռ ժամանակ, խորը ձյան մեջ, առանց ճանապարհների, վոտով ու խուսափելով բնակչություն ունեցող վայրերից: Ցես մերթ լալիս եյի, մերթ հայհոյում: Ճանապարհին անցկացրի յերեք որ ու գիշեր: Ցերկու անգամ գիշերեցի ծածկի տակ. մի գիշեր՝ ուսին փայտահատի մոտ, մյուս անդամ՝ վորսորդական դատարկ անոթում: Մոտ այնտեղ, դուռը կոտրելուց հետո, վորովհետև սրինգները վաճել եյին այն: Փայտածղծի մոտ ուտելու բան չկար—նա ուներ յոթ յերեխա: Դրա փոխարեն, վորսորդական անոթում կուչտ-կուճուռ ճարպ կերա,—իհարկե, զուր եր հաց վնտռելը,—այնպես վոր աստամոքսս խանդարվեց մի չարթով: Ցերբ հետևյալ առավոտյան նորից չարունակեցի ճանապարհս, քիչ մնաց ընկնեյի վարագի ճանկը: Սահալած եյի ամբողջ որ նստած մնալ ծառի վրա: Սաստիկ բուք եր: Ինքս էլ չեմ հասկանում, թե վո՞նց չսառեցի: Կեսորին, լինձնից վոչ հեռու, խճուղիով անցավ ժանդարմների պարեկը. տանում եյին չղթայակապ բանվորների:

Ցերբ մթնեց,—ինչպես ասի, կարպատներում ձմեռն որը շուտ է մթնում,—ծառից իջա և գնացի արևմտյան ուղղությամբ: Հետևյալ որը յես Ուշգորոդում եյի:

Ցես սաստիկ մրսեցի: Այս անգամ ևս ուղղակի գնացի Գոնդայի մոտ և քիչ մնաց, վոր ծուլակն ընկնեյի: Ժանդարմները ձերբակալել եյին Գոնդային իմ յեկած որը: Նա մինչև այժմ նստած է բերդասում:

Զգիտեմ, դու հիշո՞ւմ ես փոքրիկ Նայմանին... Այո՛, այո՛, այն կակաղին, վոր աշխատում եր կարտոնի ֆաբրիկայում: Նրա մոտ յես ապրեցի, լավ չեմ հիշում այժմ, չորս թե հինգ որ: Փոքրիկ Նայմանը.— համարձակ տղա և լավ ընկեր է: Նա ցանկություն հայտնեց՝ իմ գործով գնալ Մունկաչ՝ Մոնդյակի մոտ: Բայց, իհարկե, զուր գնաց նա: Մոնդյակը ձերբակալվել եր:

Այդ որերն ևս վորոշ բաներ սովորեցրին ինձ: Հիշո՞ւմ ես,

թե ինչպես պարծենում էինք մենք, որ ավելի խորամանկ յեղանք ժանդարմներից ու մեր ընկերներից վոմանց տեղավորեցինք վոստիկանության մեջ: Մենք այն ժամանակ հիմարացրինք վո՛չ թե վոստիկանությանը, այլ ինքներս մեզ: Կարճ ասած, մենք ապուշներ էինք: Լավոչնեյից հետո զտեցին մեր ընկերներից նրանց, որոնց տեղավորել էինք վոստիկանական վարչության մեջ: Վոստիկանությունը շատ լավ դիտեր, թե ո՛ւմ պետք է զտել: Իսկ նրանք, ովքեր մնացին... Յերևակայեր, թե ինչպես պիտի չնորհակալ լիներ մեզնից այն բանվորը, որի մոտ յեկան յերկու ալդպիսի «ընկերներ», նրա յերեսին հասցրին մի քանի ապտակ, ապա հեզնանքով ասին. «Նու, սիրելի «ընկեր», դնանք դեպի կառավարիչա»[1]):

Բոլշևիկին ձերբակալեցին յերկու ալդպիսի «ընկերներ»: Մերուկին քշում էին վոտով Պոլենայից մինչև Մունկաչա, թևերը կապած մեջքին և դցած յերկու ուղեկցորդ ժանդարմների մեջ: Ալդ սրիկաները... Նայմանը ճանաչում էր նրանցից մեկին,— մեկը՝ ալսպես կոչված՝ Շտեֆանչիկ, Մունկաչից: Ամբողջ ճանապարհին նրանք ծաղրում էին նրան, անվանելով Մերուկին «ընկեր»: Իսկ յերբ նա թքեց նրանցից մեկի աչքի մեջ, նրան ծեծեցին: Ծեծեցին այնպես, որ նա թքեց իր չորս առամը... Ե՛խ, մի անգամ էլ, միայն մի անգամ ևս...

— Ի՞նչ կհրամայիք,—հարցրեց սպասավորուհին, որը մոտեցավ սեղանին, լսելով Գոտեմանի բացականչությունը:

— Նայմանը դժվարությամբ հավաքեց ճանապարհի համար անհրաժեշտ դրամը, և յես բարեհաջող հասա Կոչիցե,—չարունակեց Գոտեմանը՝ արդեն հանդիստ տոնով:—Կոչիցեյից ինձ ուղարկեցին Պրագա, այնտեղից Բրյուննն: Այստեղ յես ընկա ծուդակը: Ինձ մատնեցին սև ակնոցներս: Բրյուննում յես նստեցի ութ չարաթ: Չորս չարաթ յես նստեցի իր ձեռնարկատիրոջ դրամները վատնած մի կնկերի հետ, որի միջոցով ինձ հաջողվեց կապ հաստատել Բրյուննի ընկերների հետ: Նրանք միջնորդեցին, որ ինձ արտաքսեն վոչ թե Հունգարիա, այլ այստեղ... Ահա իմ ամբողջ պատմությունը: Յերկու չարաթից ավելի յե, ինչ յես այստեղ եմ: Բայց դեռ աշխատանք չկա: Սատանան գիտե նրանց: Միշտ կերակրում են «վաղը», «մյուս որը» խոստումներով: Այո՛... Ե՛հ, այժմ հերթը քոնն է, Պյոտր:

— Լսիր... Յես, հըմ... Վորքա՜ն անախորժ է դա,—կմկմաց Պյոտրը, խփելով ձեռքը ճակատին:—Այժմ միայն հիշեցի, որ յես պետք է տանն սպասեմ Կոչային, վորպեսզի նրա հետ դնանք Իոհանի մոտ:

— Մեծ բան չե Կոչան: Իսկ Իոհանի մոտ յես ինքս կարող եմ առաջնորդել քեզ: Գնանք վոտով: Ճանապարհին կպատմես քո մասին: Մենք հանդիստ կարող ենք վոտով գնալ: Ջենք ուշանա: Իոհանը յուրաքանչյուր որ նստում է իր գրասենյակում մինչև ժամի չորսը:

Իոհանը գրասենյակում չեր: Ոտտո-կրինգի փողոցում գտնվող նրա բնակարանը, վորտեղ նա ընդունում եր աշխատանքի յեկող և գնացող ընկերներին, փակ եր, պատուհանների վարագույրները ծածկած:

— Բան չեմ հասկանում: Հիմա դեռ յերկուսից անց է կես: գնանք Մերուկի մոտ,— առաջարկեց Գոտեմանը:

Մերուկին նույնպես տանը չգտանք:

Այն գրասենյակի առաջ, վորտեղ սովորաբար աշխատում եր Լանգլերը, հավաքվել էին մի խումբ եմիգրանտներ: Նրանք հուզված ու բարձրաձայն վիճում էին:

— Կհանձնի: Անպայման կհանձնի: Այս բոլորն առաջուց պայմանավորված է:

— Նա հո հիմար չի, վոր հանձնի: Նա ինքն ուզում է լինել թագավոր:

— Կարևորն այն չե, թե ինչ է ուզում նա: Կարևորն այն է, թե ինչ է ուզում Անտանտը:

— Փոքր Անտանտը...

— Խորտիին...

— Սոցիալ-դեմոկրատները...

— Բանակը...

Եմիգրանտներն այլևս ցնցոտիներ հագած չէին, ինչպես տանինն թվին: Ամենքն էլ պորտֆելներ ունեին: Դա թողնում եր համապզեսած տպավորություն: Յուրաքանչյուրը ձեռքին ուներ մի կապոց ճմռուված թերթեր: Կարմրած դեմքերով, յեռանդուն ժեստիկուլացիայով, նրանք աշխատում էին իրենց բզավոցով խլացնել իրար:

Մի բան է պատահել,—սլայծառ դեմքով բացականչեց Գոտեմանը: Ուռռա՛: Կարևոր բան է պատահել:

«Հարսբուրգյան պուտչ Հունգարիայում»:

[1]) Հատուկ կառք նախկին Ավստրիայում, վորով տանում էին ձերբակալվածներին: Թարգմ.

«Նախկին կայսր կարլը Շոպրոնայում»:

Վիքիսարի տառերով դրված այս բառերն ընկան Գոտեմանի աչքին՝ այն թերթի առաջին յերեսին, վոր նա խլեց իր մոտ հանդնած ընկերներից մեկի ձեռքից:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

— Վա՛ա՛ա՛չա... կաց!.. Աղաա!.. Ընկերները, կարծում եմ, այսօրվա համար հերիք է,—ասաց այժմ արդեն ավելի աշխատասիրիկ տոնով հրամանատարը, վոր հագել եր դորչ կոստյում և չաղանակազույն լայնեղր գլխարկ, ձեռին փայտ, պորտֆելը թևի տակ:

Շարքերը խախտվեցին: Անզեն, աշխարհիկ դեմսո հագած դինվորները ծխեցին, բայց չարքերից դուրս չեկան:

— Ընկեր Գեմերի,—դիմեց հրամանատարին դինվորներից մեկը՝ յուրկայով,—դիշերս վո՞րտեղ ենք տեղավորվելու:

— Դիշերս, ընկերներ, մենք ցրվելու չենք մեր տները,—պատասխանեց հրամանատարը և հետևելով իր դինվորների որինակին, նույնպես ծխեց:—Ձեմ կարծում, թե մենք հարկավոր լինենք այս դիշեր, իսկ յեթե հարկավոր էլ դալու լինենք, հավաքի տեղը հայտնի յե: Տաղնապի դեպքում՝ ուղղակի դնացեք այնտեղ: Այնտեղ կատանաք դենք: Ով ատրճանակ ունի, թող վերցնի հետը: Մենք տալիս ենք միայն հրացանները: Այսպես ուրեմն, վա՛ա՛ա՛չա... ցըը—վիը!

Այդ մոմենտին դաշտում յերևաց մի ուրիչ վաշտ, վոր նման եր առաջինին, ինչպես ջրի յերկու կաթիլը իրար: Այդ վաշտի հրամանատարն եր Կոշան, նույնպես դինված պորտֆելով ու փայտով:

— Կովաչ,—ձայնեց նա Գյոտրին, վոր խոսում եր Գեմերիի հետ: Սպասեք ինձ, յես չուտով կազատվեմ:

— Իմ կարծիքով,—ասում եր Գեմերին,—նույնիսկ մեզ մոտ պուտչ սարքելու փորձի դեպքում՝ սոցիալ-դեմոկրատներն անպայման դենք կվերցնեն, յեթե վոչ պաշտոնապես ի դեմս կուսակցության, համենայն դեպս՝ սոցիալ-դեմոկրատ բանվորների ձեռքով: Բայց ինչքան էլ մենք հավատանք սոցիալ-դեմոկրատ բանվորների կռվելու պատրաստակամությանը, այնուամենայնիվ մենք պիտի պատրաստ լինենք, վոր համենայն դեպս առաջին մոմենտին կարող ենք մնալ մենակ:

— Ցըը—վիը!—հրամայեց Կոշան և մի քանի վայրկյանից հետո արդեն կանդնած եր Գյոտրի մոտ:

Մինչև տրամվայի վերջին կանդառը պետք եր վոտով դնալ մոտ տասը րոպե, իսկ այնտեղից մինչև քաղաքի կենտրոնը դեռ ելի համարյա մի ժամվա ճանապարհ եր տրամվայով:

Կոշան և Գյոտրը նստեցին կցված վադոն: Այնտեղ կարելի յեր ծխել: Վադոնում չուտով աշխույժ դիսկուսիա սկսվեց ռազմական վարժությունից վերադարձող ընկերների և տրամվայի ավտոբուսի մի քանի կոնդուկտորների միջև, վորոնք վերջին կանդառից դնում եյին քաղաք:

— Դա պուտչ չե,—բարձրաձայն բացատրում եր կարմրաքիթ ծերունի մի կոնդուկտոր:—Դա պուտչ չե, այլ ուղղակի թատրոն: Նույնիսկ կինո: Լավ են համաձայնել, սրիկանե՛ր: Շատ լավ են հասկանում իրար: Կարլը խաղալիք հրացանով նշան և բռնում Վորտիին, վերջինս իշխանությունը կտա նրան, և նրանք միասին կերթան Վիեննա: Այդ ժամանակամիջոցին մեր պարոններն ամեն բան կպատրաստեն, կարդուկեն իրենց ֆրակները և իրար մեջ կվճռեն, թե նրանցից ո՛վ առաջինը կլինի կայսրի ձեռքերը:

— Իսկ սոցիալ-դեմոկրատնե՞րը,— հարցրեց Կոշան:—Ձե՞ վոր Վիեննան սոցիալ-դեմոկրատական կարմիր քաղաք է:

Կարմրաքիթն ափսոսանքով նայեց Կոշային:

— Դուք, յերիտասարդ, հավանորեն ոտարերկրացի յեք: Ձեզ հայտնի չե, վոր սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ այժմ վեճ կա այն մասին, թե ո՛վ մոմ բռնի կարլի առաջ՝ Ռեննե՞րը, թե՞ Բաուերը:

— Դուցե, դա ճիշտ է,— համաձայնեց Կոշան,— բայց սոցիալ-դեմոկրատ բանվորները... Վիեննայում կա յերեք հարյուր հիսուն հազար բանվոր:

— Բայց նրանց... Հետո նրանք կխմացնեն նրանց, իրրև թե դա միակ ճիշտ, միակ հնարավոր սոցիալ-դեմոկրատական քաղաքականությունն է...

— Ինչե՛ր եք ասում,—ընդհատեց նրան լայներես յերիտասարդ մի կոնդուկտոր:—Հանդիստ յեղեք կարմիր Վիեննայի համար: Յեթե հարկավոր լինի, մենք յերկու որում կատեղծենք այնպիսի բանակ...

— Բանն էլ հենց այն է, վոր հարկավոր չի լինի,—քմծի-

ծաղեց Ծերունին։—Մինչև այսօր կարիք չի լինի և այժմ։ Ձեռ մերոնց լավ եմ ճանաչում։

Ծերունուն մեկին պատասխանեցին չորս թե հինգ հոգի։ Վոմանք նույնիսկ բարձրացրին ձայները։ Հետո հանկարծ ամենքն էլ լռեցին։ Տրամվայը հասավ ու անցավ ցուցարարներից։

Կարմիր դրոշներով։ Ամեն չարքի մեջ չորս մարդ։ Մարտական կարգով չարժվում էր յերքը՝ մոտ հինգ հարյուր բանվորներ։

— Կոմունիստներ են!

— Ավտարխյալ կոմունիստներ!

Տրամվայի պատուհաններից մի քանի մարդիկ դլխարկներով վոդջունում էին ցուցարարներին։

— Ցեթե մեծ լիներ այդպիսիների թիվը, մեզ մոտ ամեն բան ուրիշ կերպ առաջ կերթար,—խոսեց նորից կարմրաքիթ կոնդուկտորը։

— Դուք, ընկեր, կոմունի՞ստ եք,—դիմեց նրան Պյոտրը։

— Ի՞նչ կոմունիստ եմ յես,—նույնիսկ վիրավորվեց Ծերունին։

— Ցեթե դուք սպասելիք լինճ ասավոտյան, ինչպես պատմեցավորվել էիք, այժմ արդեն դուք կլինեիք Հունդարիայում,—ասաց Կոշան, իջնելով տրամվայից։

Ցեվ նրանք նորից դնացին, թևանցուկ։

— Լանդլերի հրամանով, մենք փնտռում էինք ձեզ ամեն տեղ։ Ցեվ վոչ մի տեղ չդտանք։ Ի՞նչ պետք եր անել։ Ձեր փոխարեն դնաց ուրիշը։ Այժմ ձեզ հետ ուզում է խոսել Սեկերեչը։

— Սեկերե՞չը։

— Դու իրավացի յես, Պյոտր։ Ազնիվ խոսք՝ իրավացի յես։ Մենք հասատակաչի չենք, մեզ քյար չի անի նույնիսկ կացինը։

— Իսկ վո՞նց է առողջությունդ։

— Հը՛մ... Լավի բանտում յես սաստիկ հազում էի։ Մոսկվայում առողջացա։ Իսկ այժմ, հը՛մ... առողջությամբ պարծենալ չեմ կարող, թեև դանգատվելու յել բան չունեմ։ Հիվանդ չեմ զդում ինձ։ Ցեկ, բվիտանանք։ Յես վոտով կառաջնորդեմ քեզ մինչև Գրինցինդ։ Ճանապարհին սրտանց կխոսենք։

Փողոցները լիքն էին մարդկանցով։ Կազմակերպված ցույց չկար, բայց մայթերի վրա իրար խոնված՝ զրոսնում էին տասնյակ հազարավոր բանվորներ։ Վոչ վոք չեր կանչել նրանց։ Նրանք յեկել էին իրենց նախաձեռնությամբ, վոր քաղաքը չմոռանար իրենց գոյության մասին։

Շիկալապատերները և բազմապիսի հարյուրավոր էլեկտրական ռեկլամներ վողողում էին փողոցները համարյա վառ արևի լույսով։ Փողոցներով սլանում էին ավտոմոբիլները, հեշտությամբ հասնելով և անցնելով լեփ-լեցուն տրամվայներից։

— Ձեմ կարծում, վոր այս բոլորից մի բան դուրս դա։ Մեծ ազմուկ վոչնչից։ Բացատրիր ինձ, խնդրեմ, թե ինչին է պետք Հունդարական բուրժուազիային, թագավորը։ Թագավորը, այն էլ Հաբսբուրդների տանից,—չե՞ վոր դա կառաջացնի արտաքին հարաբերությունների տանից։ Զեխիա, Յուգոսլավիա, Ռումինիա... Ցերկրի ներսում էլ նրանից ավելի չահ չկա, քան այս բթագլուխ նավաստուց։ Կայսրի կարիք չունի մանավանդ ավտարխիական բուրժուազիան։ Կայսրը բուրժուազիային ավելի սիրաչահել չեր կարող, քան սոցիալ-դեմոկրատները։ Իսկ մի բուռն Հունդարացի այն կոմսերը, վորոնք մինչև այսօր դեռ չեն հասկացել տարրական մի ճշմարտություն, թե հազարավոր դեսայտնիների տերերն անդամ կարող են լինել «մանր անտեսատերեր»... Ա՛յ, կտեսնես, վոր մեր Կարլը չուտով կվերադառնա իր Զիտայի մոտ։ Բայց ինձ թվում է, մենք պատրաստվում էինք խոսելու բոլորովին այլ նյութի մասին։

— Տեսա՞ր Գոռեմանին։ Ա՞ոսեցի՞ր հետը։ Մերձկարպատյան Ռուսիա... Լավոչնե... Ե՛հ, համա բաներ արինք մենք, հա՛։ Յես չեյի հասկանում, թե ինչո՛ւ մեզ այդպես հեշտությամբ հազթահարեցին։ Իսկ այժմ չեմ կարողանում հասկանալ, թե ինչո՛ւ չեխերն այդքան յերկար ժամանակ հանդուրժում էին մեր փոկոսները։ Յես գիտեմ, Պյոտր, վոր ամենախիստ ինքնաքննադատությունը չի կարող ուղղել մեր կատարած սխալները։ Բայց և այնպես, յեթե մենք անխնա մերկացնենք մեր կատարած հիմարությունները, յեթե մենք առանց քաշվելու խոստովանեյինք, վոր մեր «խորամանկությունը» մենք հաճախ հասցնում էինք անկզրունքայնության,—բայց և այնպես մենք մեծապես կշահեյինք։ Յես այժմ զրաղված եմ հենց այդ ինքնաքննադատությամբ։ Համենայն դեպս՝ դա շատ ավելի ազնիվ բան է, քան այն, ինչ անում են այժմ Հունդարացի շատ ընկերներ։ Զուզենալով խոստովանել, վոր հեղափոխությունը տապալվեց մեր սեփական սխալների հետևանքով, նրանք ստեղծում են ամեն տեսակ տեսություններ։ Ազնիվ խոսք, ինձ հայտնի չեն տասից վո՛չ պակաս

այնպիսի «տեսություններ»: Ցավ ինչեր ասես, որ չեն հերյուրել նրանք: Իբրև թե հունդարական հեղափոխությունը հենց սկզբից «գատապարտված ե չեզել», իբր դա չեզել ե «ավանտյուրա» և այլն, և այլն: Ցեթե դու դեռ չդիտես, չես իրավեկ կանեմ քեզ· դոյությոն ունի նույնիսկ «եսիկական» հայեցակետ: Ցավ չեթե դու համաձակվում ես մտածել այլ կերպ, դու սոսկ արատած ես, սրիկա, ավանտյուրիստ: Ցավ այն սիկինները, որոնք դեռ չերեկ հետաքրքրվում եյին բացառապես կոմունիկացիայով, այսոր քարոզում են եսիկա՝ հենց այդ վոճով: Ազնիվ խոսք... Ասենք, չես ինքս ել վոնց որ պատավ կին, չաղակրատում եմ, բայց չեմ ասում այն, ինչ պետք ե: Կարճ ասած, դու ցած թռար գնացքից, իսկ չես՝ վոչ... Բեսկիղին դու հավատացիր, իսկ չես՝ վոչ... Ի մեջի այլոց, այսոր առավոտյան չես պատահեցի Բեսկիղին Իոհանի մոտ: Նրանից լսացա, որ դու վիեննայում ես:

— Բեսկիղն Իոհանի մո՞տ:

— Ցեթե չեմ սխալվում, նա արդեն գնաց տուն: Թյո՛ւ, սատանան տանի, մենք նորից չեղվեցինք մեր թեմայից: Ազնիվ խոսք...

...Ե՛հ, կարճ ասած, չես մնացի: Ցավ Զապելյում ժանդարմներն ինձ հանձնեցին լեգեոներներին, որոնք չես եյին տանում Գալիցիայից վախած մոտ ութսուն ուկրայինացիների: Այստեղ միայն չես հասկացա, թե ինչպիսի հիմարություն արի: Վո՛չ մի սատանա չեր հետաքրքրվում քեզնով, իմ մասին նույնպես չեյին հարցնի: Թեկուզ գլուխս պատերին տայի, բայց արդեն ուշ եր: Շղթայակապեցին ինձ լավոչնիկացի մի դյուզացու տղայի հետ:

... Լեհացիները արդեն սպասում եյին մեզ: Զորսին տեղն ու տեղն սպանեցին: Մեզանից վոչ վոք հանձնելու մոմենտին չդատավեց ծեծից: Ցերը վերջացավ այդ աշխատանքը, սպաներից մեկը պահանջեց քեզ: Ինքնին հասկանալի չե, որ քեզ գետ եյին վորոնում: Մինչդեռ, ինձ լա՛վ կերցրին: Ինձ առանձնացրին և չղթայակապ հացրին Լվով:

Լվովում ռազմական բանտում չես նստած եյի միայնակ: Փաստաբան չունեյի: Բայց առանց փաստաբանի յել՝ չես չուտով հասկացա, որ ինձնից ուզում են ստեղծել խոշոր քաղաքական պրոցեսի գլխավոր Ֆիգուր:

Ինձ չերես առ չերես արին այնպիսի մարդկանց հետ, որոնց չես իմ կյանքումս տեսած չեյի, և նրանք ամենքն ել ճանաչեցին ինձ: Իրար յետևից, համարձակ և ուղղակի նայելով աչքերիս մեջ, նրանք պնդում եյին, որ հունիսին չես չեղել եմ Լվովում: Ցես ապրելիս եմ չեղել նրանցից մեկի բնակարանում, մյուսի մոտ ճաշելիս եմ չեղել, յերրորդի մոտ գրամ եմ փոխառել և այլն... Մի պատավ պռունկ կին խոստովանեց, որ մի անգամ գիշերել եմ իր մոտ, և քննիչը մտցրեց արձանագրության մեջ, իբր այդ տիկինը սովորություն ե ունեցել ինձ կանչել «իմ թանկագին պուպսիկ»: Մի խոսքով, պրոցեսը պատրաստեր հիմնավորապես: Ցերես առ չերես անելու փաստը ցույց տվեց ինձ, որ պրոցեսի նպատակն ե՝ վարկաբեկել ուկրայինական չարժումը Գալիցիայում: Ապացուցել, որ ուկրայինացի նացիոնալիստները դրամ և հայթայթում Մոսկվան:

Վատ չե մտածած, չե՞: Ազնիվ խոսք, լեհացիները հրաշալի ռեժիսորներ են: Պայքարի պրոցեսում նրանք լարեցին մեր դեմ ուկրայինացի նացիոնալիստներին: Այժմ, հաղթանակից հետո, ուզում են նրանց մեջքը կոտրել այն հանգամանքով, իբր նրանք չեղել են մեր դաշնակիցները: Ցես հարկավոր եյի հենց այս կոդեմիայի համար:

«Ցերես առ չերես անելու» այդ կոմեդիան չարունակվեց մոտ չերեք չաբաթ: Ապա մի քանի որով հանգիստ թողին ինձ: Անտանելի դրություն եր: Հաղում եյի: Սիրտս կարզին չեր աշխատում: Ինձ վրդովում եյին ռուսինական դործերը: Դու գիտես, որ դժվարությամբ եմ տանում բանտային կյանքը: Իմ խուցը չեյին տաքացնում: Ցես մատնված եյի սովի: Մի խոսքով՝ կատարյալ վայ՛լք, չերջանկություն՛...

Մի անգամ առավոտյան ինձ նորից տարան հարցաքննության: Կանգնած քննիչի առաջ, չես սպասում եյի հերթական վկային, որն ուղղակի նայելով աչքերիս մեջ, կասի, իբր չես զնդակահարել եմ Հռոմի պապին.... Ժանգոտած չերեսսրիչով: Բայց վկան չեկավ: Քննիչը,—բարձրահասակ, վոսկրակազմ, լավ ածվլված ծերունի սպա,—քրքրում եր թղթերը: Հետո անակնկալ կանգնեց և ձայն տվեց ինձ.

— Իոսիֆ Սեկերեչ, ուզո՞ւմ եք գնալ Խորհրդային Ռուսաստան:

Ցես կարծում եյի, նա հանաք ե անում: Լուռ եյի: Քննիչը դրքությունները դցեց սեղանին և խաղալով մոնոկլի հետ, մի անդամ ել կրկնեց իր հարցը: «Ա՛յ, սատկես դու»,—մտքումս ասի

յես և անկեղծաբար հայտնեցի նրան իմ կարծիքը՝ թե՛ Լեհաստանի, թե՛ Խորհրդային Ռուսաստանի մասին:

Քննիչը հանգիստ և անվրդով լսեց իմ ճառը: Աչքերը հառեց ինձ վրա այնպիսի անտարբերությամբ, կարծես՝ խոսքը յեղանակի մասին եր:

— Յեթե յես ճիշտ հասկացա ձեզ, դուք ուզում եք գնալ Մոսկվա՞,—կամաց հարցրեց նա, յերբ հազը բռնեց և յես ակամա լռեցի:—Լա՛վ: Սառրագրեք այս դիմումը: Սպասեք! Ցես այն կթարգմանեմ ձեզ համար զերմաներեն:

Դիմումի մեջ, վորը նա մոտեցրեց ինձ, ասված եր, վոր յես համաձայն եմ ընդմիշտ գնալու Խորհրդային Ռուսաստան:

Սառրագրելով այդ թուղթը, յես համոզված եյի, վոր ինձ հետ զարշելի խաղ են խաղում:

— Դե՛հ,—ասաց քննիչը, ծծանով չորացնելով իմ ստորագրությունը,—դա վերջացրինք: Դուք կերթաք ձեր ընկերների մոտ: Բարի ճանապարհ: Իսկ ինչ վերաբերում է այն բանին,—չարունակեց նա թեթև պատզայից հետո,—ինչ դուք ճառեցիք Լեհաստանի հանրապետության մասին,—դրա համար դուք կարող եյիք ստանալ մի քանի տարի, յեթե միայն լեհական հանրապետությունը հաշվի առներ ձեր և ձեզ նման պարոնների կարծիքը: Բայց հանգիստ յեղեք. մենք լուրջ բան չենք համարում ձեզ: Ցես ձեզ կպատժեմ միայն նրա համար, վոր դուք համարձակվեցիք իմ ներկայությամբ խոսել առանց թույլտվության: Դրա համար յերկու որ կնստեք կարցեր, և վերջ բանից:

Ցերկու որ և յերկու գիշեր յես անցկացրի մութ կարցերում: Աղնիվ խոսք... Սովորաբար, կարցերում անցուցած յուրաքանչյուր ժամ թվում է ամրողջ որ, իսկ ինձ րոպեն թվում եր տարի: Արդյոք Մոսկվա՞ յե ատաում, թե՞ դա սրիկաների հերթական ատրուքյուն է: Արդյոք, Մոսկվա՞, թե, լեհացի պարոնների բանտ: Ծաղրո՞ւմ եր ինձ այդ սրիկան, թե՞... Իսկ ծաղրում եր, հապա ինչո՞ւ... Գլուխս եյին գալիս հազար ու մի յենթադրություններ, և նրանցից յուրաքանչյուրը թվում եր հավանական, նույնիսկ միակ հավանականը: Իսկ յեթե՞ դա ծաղրանք չեր... Ցես դրա համար ել գտա հազար ու մի պատասխան: Այն յերկու որվա ընթացքում, յեթե յես չխելագարվեցի, ուրեմն՝ դու իրավացի յես, Պյոտր, աղնիվ խոսք, իրավացի յես: Մենք իրոք վոր հատատակուն յենք, կացինն ել քյար չի անում մեզ:

Ցերը վերջացավ իմ պատժի ժամկետը, ինձ կալանդեցին և ուղարկեցին Վարշավա, վորտեղից քանի ուրիշ ընկերների հետ տարան ռուսական սահմանապիծը. Մինսկ—Մոսկվա:

Մինչև այժմ Սեկերեչը խոսում եր իր համար անսովոր չոր տոնով: Գուցե, դա բացատրվում եր նրանով, վոր ամբոխով լեցուն վագոնները,—վորտեղ նրանք համարյա բառնգքների ոգնությամբ եյին ճանապարհ բացում իրենց համար,—վոչ մի տեսակետից հարմար չեյին հոգեորական ամբիոնի համար: Բայց այժմ նրանք գնում եյին խաղաղ վագոններով: Գուցե, այս իսկ պատճառով, գուցե, ուրիշ պատճառով:

Սեկերեչը կանգ առավ:

— Ռուսաստա՞ն,—ասաց նա բարձրաձայն:—Պյոտր, Խորհրդային Ռուսաստա՞ն:

Նրանք կանգնել եյին վոսկերչի խանութի լուսավորված պատուհանի առաջ: Պյոտրը պարզ տեսնում եր Սեկերեչի նիհար դժգույն դեմքը, սև չրջանակներ աչքերի տակ: Նրա աչքերը վառվում եյին:

— Ռուսաստա՞ն,—մի անգամ ել կրկնեց Սեկերեչը՝ ավելի կամաց:—Գնանք, Պյոտր: Տեսնողը կասի, վոր մենք պատրաստվում ենք կողոպտել այս խանութը:

Իսկապես, վոսկերիչն արդեն կանգնել եր նրանց յետևում:

... Պյոտր, ռուսական հարթավայրն այնքան մեծ է, լայնածիր, վոր... Նո՛ւ, ինչպե՛ս ասեմ քեզ... քամին ուժ չի տալիս նենա անցնելու նրա մի ծայրից մյուսը,—ասում եր Սեկերեչն առաջվա չոր տոնով, կարծես՝ մաթեմատիկական խնդիր եր բացատրում:—Քամին կհոգնի... (հոգնելն ի՞նչ է վոր), աղնիվ խոսք, նա կքնի, կծերանա, կատակի ավելի չուտ, քան կկարողանա այդ հարթավայրի մի ափից հասնել մյուսին: Այնտեղ կան ամեն բան. յերկաթ, պղինձ, քարածուխ, նավթ, բամբակ, հաց և մարդիկ: Ցեվ վոր ամենագլխավորն է՝ այնտեղ կա կոմունիստական մի կուսակցություն, վորի նմանը դեռ վոչ վոք չի տեսել ուրիշ և վոչ մի տեղ...

... Հա՛, պատմությունս չարունակելուց առաջ յես պիտի հարցնեմ քեզ. ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ լեհացիք արտաքսեցին ինձ Ռուսաստան: Դա յես իմացա Մոսկվայում: Ֆրանսիացիները բողոքեցին այն պրոցեսի ցուցադրման դեմ, վորտեղ յես պիտի լինեյի գլխավոր հերոսներից մեկը: Նրանք վախենալու պատճառ ունեյին: Ցե՞ վոր ինչքան ել վարպետորեն ցուցադրվեր այդ պրոցեսը, այնուամենայնիվ, պատահարար կարող եր պարզ

վել, վոր աղնիվ ֆրանսիական հանրապետությունը միաժամանակ ֆինանսապես ոժանդակում եր իրար հետ բզկտվող յերկու բանակներին՝ լեհացի և ուկրայինական նացիոնալիստներին: Այդպե՞ս ե կյանքը, Պյոտր: Զևսերն ինձ հանձնեցին լեհացիներին, ծածկելով մեզ մատնող ուկրայինացիների հանցանքը: Լեհացիք ինձ հանձնեցին Մորհուրդներին, խնայելով ֆրանսիացիների շահերը: Դրա փոխարեն լեհացիներն ստացան մի վագոն դեր ու զենք: Ավելի ճիշտ՝ դա զենք չեր, այլ սրբեր եյին: Զե՞ս հասկանում: Սրբեր ստացան: Սուրբ Իոհաննին, Պետրոսին, Նիկոլային և, ստատան դիտե, թե ելի ո՛ւմ: Այսինքն՝ նրանց վոսկորները: Մորհուրդներն ուղարկեցին մի վագոն կաթոլիկ սրբերի վոսկորներ, նրանց հրաշագործների ղեսատները և այլ նվիրական հնություններ: Հանաք չեմ անում, աղնիվ խոսք: Այդ գիրելի փոխարեն լեհացիք մեզ հանձնեցին ռուսներին: Կենդանի կոմունիստներին մեռած սրբերի փոխարեն: Ցեվ յերկու կողմերն ել գոհ մնացին:

Այդպես, ահա՝ Մոսկվա: Այնտեղ յես իմացա, թե ի՛նչ բան ե կուսակցությունը: Աղնիվ խոսք: Ցես չեմ ուզում մտնել մանրամասների մեջ: Բանը շատ պարզ ե: Կուսակցությունը վորոշում ե, թե այսինչ խնդիրը պետք ե անցկացնել, և անց ե կացվում: Թե այս բանը պետք ե վոչնչացնել, և վոչնչացվում ե: Ա՛խ, Պյոտր, յեթե այն ժամանակ մենք ունենայինք կուսակցություն: Աղնիվ խոսք, մենք չեյինք կործանվի: Ցեվ յեթե մենք ունենանք կուսակցություն, այնպիսի կուսակցություն, ինչպիսին ունեն ռուսները,— թքիր յերեսիս, յեթե նույն ինքն աստված կարողանա վակել հաղթական յերկրորդ Մորհրդային Հունգարիայի ճանապարհը:

Սեկերեչը ճանապարհ եր դնում Պյոտրին: Պյոտրը՝ Սեկերեչին: Ցերկու ժամվա ղբոսանք: Հետո նորից Սեկերեչը ճանապարհ եր դնում Պյոտրին, Պյոտրը՝ Սեկերեչին: Այդպես նրանք լուսացրին դիշերը:

Առաջին լրագրավաճառից գնած թերթից նրանք իմացան, վոր Կարլ Հաբսբուրգը թողել ե Հունգարիան:

— Ջահրաղանց արագ, չուտ փախավ,— ասաց Սեկերեչը:— Ջեմ ուզում մարգարե լինել, բայց ինձ թվում ե, այսպես թե այնպես, մենք բախտ կունենանք պատահելու այդ թզուկին:

ԾՈՒՂԱԿՈՒՄ

Չկա ավելի լավ մոմենտ, քան այն, յերբ գնացքը մեկնում ե, և սահմանը մաքսատան չինովնիկների, սահմանապահների ու լրտեսների հետ միասին մնում ե քո յետևում: Պյոտրին հաջողվեց սահմանն անցնել առանց բարդությունների: Կեղծ անցագիրը դրպանում, նա հարմար տեղավորվեց կաչվե բազմոցի յերկրորդ կարգի վագոնի կուպեյում և մի անգամ ել մտքում վերհուշեց իր բոլոր քաչածները Վլիննայում ու նորից մտածեց իր առաջ դրված խնդիրների մասին:

«Նոր գլուխ կուսակցության կյանքի մեջ,—միտք եր անում Պյոտրը:—Կուսակցությունը պայքարում ե այժմ, վոր ղառնա իսկական կուսակցություն,—հնչում ե տարօրինակ, բայց և այնպես՝ դա այդպես ե: Պարզ ե մի բան. սխալները ուղղելու առաջին պայմանն ե՝ գիտակցել և ընդունել այդ սխալները: Սա՛ջին պայմանն ե՝ գիտակցել և ընդունել այդ սխալները: Սակայն, ցավն այն ե, վոր յուրաքանչյուրը հակամիտ ե ընդունելու մյայն ուրիշների կատարած սխալները: Մենք ամենքս մարդկանք... հըմ... մարդ... ի՛նչ հիմարն եմ յես: Ցավը դա չե: Ցավը, դժբախտությունը, այն ել լուրջ դժբախտությունն այն ե, վոր կուսակցության մեջ կազմվում են խմբակներ, ֆրակցիաներ: Վորքան կուզեն, թող համոզեն ինձ, վոր դա պետք ե, այդպես ե հարկավոր,—դուցե և յես սխալվում եմ, բայց յես ավելի ու ավելի յեմ համոզվում, վոր այս բոլորը շատ վատ ե:

Պյոտրը տխրեց: Սակայն, մի վայրկյան միայն:

— Պետք ե վերացնել այն, ինչը վատ ե: Ցեվ մենք կվերացնենք այն,—հաստատապես ասաց նա ինքն իրեն: Ցեվ... Վո՛չ. Հունգարական կուսակցության բախտը յերկյուղ չի ազդում ինձ:

Պյոտրից բացի, կուպեյում կար ելի մի մարդ: Դա ճաղատ գլխով մի չեկ պարոն եր: Ուսերը լայն, հսկայական ձեռներով: Նրա դեմքի արտահայտությունը՝ անողնական ու վախկոտ, չեր ներդաշնակում նրա հզոր, հաղթ մարմնին: Նա բերնին ուներ սիգար և կրծում եր այն, ինչպես յերևիան կոնֆետը: Ուսումնասիրում եր այն, ինչպես յերևիան կոնֆետը: Ուսումնասիրում եր այն, վոր նա անտառապահ ե, առաջին անգամ ե յեղել Վլիննայում, իսկ Պեշտը յերբեք չի տեսել իր կյանքում: Գնում ե Սլովակիայից Հունգարիա:

— Ցերևակայեցեք, պարոն, յես վոչ մի ծանոթ չունեմ Հունգարիայում: Վերջին տասներկու տարվա ընթացքում յես անգամ վոտս դուրս չեմ դրել: Նույնիսկ Փրոնտ չեմ գնացել դրա

պատճառով: Իսկ այժմ,—ի՞նչ կասեք դուք,—վանդեցին ինձ, և այժմ բարեհաճեցեք նոր աշխատանք, գործ գտնել: Ցեթե յես մարդկանց ճանաչելի այնպես, ինչպես ճանաչում եմ ծառերը...

Պյոտրը հիացած չէր այդ ծանոթությունից: Նա կզերազանսեր՝ մենակ մնալ, իր մտքերի հետ: Բայց յեթե այդ անբախտի լեզուն քոր է գալիս... Պյոտրն սոխլված եր մի քանի ընդհանուր հարցեր տալ նրան անտառաբուծության մասին: Իսկ Զեխոսլովակիայից արտաքսված անտառապահն անընդհատ չատախոսում եր:

— Անտառները... ա՛խ, պարոն: Անտառներին կարելի յե վստահել: Ցուրաքանչյուր ծառ բնավորություն է: Ով ճանաչում է, գիտե անտառը, նա կարող է ճիշտ հաշվել.—յեթե այսոր ծառն ունի այսպիսի հաստություն ու բարձրություն, մի տարուց հետո նա կդառնա այսքան ու այսքան: Նրա տերևները, նրա պտուղը բղխում են նրա բնությունից: Նրանք միշտ այնպես, ինչպես սպասում ես, վոր պիտի լինեն: Ծառը յերբեք՝ չի խարում: Կրկնում եմ՝ ծառը բնավորություն է, խարակտեր: Ցես չեմ կարող յերևակայել լորենի, վորը վճռելով, թե լորենիներին բախտը չի բերում, ձևանա, իբր ինքը կաղնի յե: Այդպես չեն մարդիկ: Այսոր նա մաջառ է, վաղը՝ սլովակ: Այսոր կարմիր է, վաղը՝ սպիտակ, մյուս որը՝ դոլավոր: Ցես սոսկում եմ, յերբ մտածում եմ, վոր պիտի ապրեմ մարդկանց մեջ:

Անծանոթը հետաքրքրվեց Պեշտի բնակարանային պայմաններով, հյուրանոցներում սենյակների արժեքներով, Պյոտրի անձնական գործերով: Մի խոսքով, թեմայի պակասություն չեր զգացվում: Ի դեպ, ճանապարհորդությունն առանձնապես յերկար չտևեց

Գնացքից իջնելով, նրանք մխաին դիմեցին դեպի յելքի դուռը: Կայարանի դռան մոտ նրանց դիմավորեցին յերկու պարոն՝ կոռեկտներով ու հատ ձեռնափայտերով: Շեկ անտառապահը բարեկամաբար վողջունեց նրանց և դլխով նշեց Պյոտրին:

Անծանոթներից մեկի ձեռքը հայտնվեց Պյոտրի ուսին:

— Որենքի անունով...

Մոտակա վոստիկանական վարչամասում Պյոտրին չղթայեցին և վերարկուն գցեցին վրան այնպես, վոր չղթաները չերևան: Նստեցին ավտոմոբիլ: Ցևվ հասարակությունից վոչ վոք վոչինչ նկատեց:

— Դեպի դլխավոր վոստիկանական վարչություն:

— Պարոն Կովաչը բոլորովին մեղավոր չե, վոր դուք, պարոններ, յերեկ գուբ՝ սպասել եք նրան,—ասաց «անտառապահը», դիմելով Պյոտրի ձախ կողմում նստած լրտեսներին:—Նա պատրաստ եր մեկնելու, բայց Ծերուկը...—կարծեմ, ձեզ հայտնի յե, վոր դա ընկեր Լանդլերի մականունն է... Ծերուկը նրան պահեց մի որով: Դրա համար նա ուներ իր նկատառումները,—այնպես չե՞, պարոն Կովաչ:

Պյոտրը չպատասխանեց: Կատաղությունից սիրթնած, նստում եր նա իր ուղեկցի դեմքին: Անհետ չքացավ նրա յերեսից անոգնականության արտահայտությունը: Նա նենգամտորեն ժպտում եր:

— Նստեք, պարոն Կովաչ: Այստեղ ահա, իմ դիմաց: Այդպես: Հրաշալի:

Վոստիկանական սպան ձեռքի չարժումով արձակեց լրտեսներին և ձեռքը հենած գրասեղանին, յերկար զննում եր Պյոտրին:

— Ըստ լուսանկարների և նկարագրության, յես ձեզ պատկերացնում եյի ավելի հասակավոր: Ցես սպասում եյի հանդիպել տարիքավոր մարդու: Փորձը ցույց է տալիս, վոր ապրումները, մանավանդ ծանր ապրումները, չուտ են ծերացնում մարդուն: Սակայն, բացառությունները հաստատում են այդ բնական որենքը: Ըստ յերևույթին, ձեր որգանիզմը չատ ուժեղ է:

Սպան ուներ նեղ դեմք և չազանակագույն սիրալիր աչքեր: Միայն չափազանց լայն կղակը խախտում եր նուրբ դիմագծերի ներդաշնակությունը: Նրա ձայնը հնչում եր հաճելի տեմբրով: Նա յերիտասարդ եր, հազիվ թե յերեսուն տարեկանից ավելի:

— Ե՛, պարոն Կովաչ,—սկսեց նա նորից փոքր պաուզայից հետո,—յեկեք՝ գործի անցնենք: Նախ և առաջ վերջացնենք ձեվականությունները: Ցեթե թույլ կտաք, կլրացնենք անկետան: Ձեր ազգանո՞ւնը:

Ցևվ վորովհետև Պյոտրը լուռ եր, սպան ինքն եր պատասխանում իր սեփական հարցերին:

— Պյոտր Կովաչ:

— Ձեր ծննդյան տարին ու տե՞ղը:

— Հաղար ութ հարյուր իննսուն ութ թիվ: Վաչարշնամին Գյուղ:

Ցևվ յերբ անձնական տվյալներն այդպես որիդինալ ձևով վորոշվեցին, նա ժպիտով դիմեց Պյոտրին:

— Ցեթե դուք կարծում եք, պարոն Կովաչ, վոր յես ձա-

նաչում եմ ձեզ, սխալվում եք: Ցես գիտեմ շատ բան, բայց վո՛չ բոլորը: Վոչ մի կարիք չկա աչքակապուկ խաղալու: Ցես անկեղծարար կասեմ ձեզ, թե ի՛նչ գիտեմ և ի՛նչ եմ ուզում իմանալ ձեզնից: Ցեկնեք, դուք ժամանակ չկորցնենք: Ձեր Ծերուկը,— յես նկատի ունեմ ընկեր Լանդլերին,—սովորեցնում է, վոր դուք պիտի բացատրեք միայն այն, ինչը մենք չենք կարող ապացուցել: Այդպես չե՞: Իսկապես նա ձեզ սովորեցնում է այդպիսի իմաստություն: Դուք յերևակայել չեք կարող, պարոն Կովաչ, թե վորքան իրավացի յե ձեր Ծերուկը: Հիրավի, ի՞նչ կարիք կա դուք աշխատանք թափելու: Որինակ՝ հո դուք չեք սկսի բացատրել, վոր փականագործ եք, Պյոտր Կովաչ: Իսկ յեթե կամենայիք բացատրել, մենք ուղղակի ցույց կտայինք ձեր մատնելի արատը,—դակտիլոսկոպիան՝ մատնահանումն անսխալական է: Դուք չեք կարող բացատրել նույնպես, վոր մատնահանել եք ինն հարյուր տասնութ թվի գործադուլին: Մեզ քաջ հայտնի յեն նաև ձեր արարքները Ժորհրդային իշխանության ժամանակ. նմանապես ձեր քաղաքագործությունները Մերձկարպատյան Ռուսիայում: Մենք գիտենք նույնպես, վոր դուք գտնվում եք Հունգարիայում ինն հարյուր քսան թվի հոկտեմբերից: Մեզ հայտնի յե, թե վո՛րտեղ եյիք ապրում, վո՛րտեղ աշխատում և ո՛ւմ հետ կապեր ունեյիք: Բայց մենք չգիտենք Բուդապեշտի ձեր ընկերների վերջին հասցեն, չգիտենք, թե ուր պիտի գնայիք կայարանից: Ցեղեկացնեք, այդ թեթևամիտ լրտեսը, վոր ուղեկցում եր ձեզ Վիեննայից մինչև Գեչա,— յես նկատի ունեմ պարոն անտառապահին,— փոխանակ ձեզ առաջնորդելու մինչև ձեր բնակավայրը կամ ուղղակի հետևելու ձեզ,ժամանակից առաջ ձերբակալեց ձեզ: Դրանով նա ավելորդ աշխատանք ստեղծեց ինձ համար և ավելորդ անախորժություն ձեզ համար: Կարծում եմ, այդպիսի փոքրիկ սխալներ կարող են պատահել բոլոր յերկրների վարժեքանության հետ...Ի մեջի այլոց, ինձ հետաքրքրում է ձեր կարծիքը· վո՞ր վարսիկանությունն է ավելի լավ— ավստրիակա՞նը, չեխակա՞նը, թե՞ հունգարականը:

Պյոտրը նստել եր անշարժ, առաջ թեքված, դլուխը ներս քաշած ուսերի մեջ: Նա այնպես եր տարվել իր մտքերով, վոր սպասական այդ քաղցր ճառի կեսից ավելին դեպ ականջի յետև: Նա հասկանում եր, վոր չուտով արև չի ծագի իր համար, վոր կան ծանր օրեր, դուցե և ծանր տարիներ: Կամ դուցե... ո՛վ է իմանում: Ծերուկը դանդաղում եր, վոր ձերբակալվածները

հաճախ չեն դիմանում տանջանքներին և վոստիկանության դեպքում հաջողվում է լկանքներով իմանալ շատ բան այն բոլորից, վորը պետք է պահվեր խիստ գաղտնի: Տանջանքների և լկանքների սարսափը, նորից ապրելու յերկյուղը կարող է նրանել ստիպել՝ բացել իր լեզուն: Այդ միտքն այնպես վախեցրեց Պյոտրին, վոր նա ցնցումնահար սղմելով շուրթերը, չեր պատասխանում նույնիսկ այն հարցերին, վորոնք վոչ մի կապ չունեին կուսակցական կոնսպիրացիայի հետ:

«Միայն թե բավարար ուժեղ լինեմ»,—ներչնչում եր նա ինքն իրեն:

Սպան դդալով, վոր դուր են չոզոքորթ ճառն ու խոսքերը, լռեց: Կանգնեց և մի քանի րոպե լուռ քայլում եր յետ ու առաջ: Ապա մոտենալով ձերբակալվածին, ձեռքը դրեց նրա ուսին:

— Ցես խղճում եմ ձեզ, Պյոտր Կովաչ:

Ձերբակալվածն ուսի կորուկ մի չարժումով դեն նետեց սպայի ձեռքը:

Նա րարձրաձայն ծիծաղեց: Նա ծիծաղում եր անկեղծ և ուրախ: Այդ ծիծաղից մի դող անցավ Պյոտրի մեջքով:

«Միայն թե կարողանամ իմ մեջ գտնել բավական ուժ»:

Սպան սղմեց էլեկտրական զանգի կոճակը և ժեստով ինչ–վոր հրամայեց բուլդոգադեմ լրտեսին, վոր ներս յեկավ: Նա հետևրամայեց բուլդոգադեմ լրտեսին, վոր ներս յեկավ: Նա հետևցավ ու մի քանի րոպեյից վերադարձավ վերայի հետ: Պյոտրը չուռ յեկավ և թռավ տեղից: Սպան նորից ծիծաղեց բարձրաձայն:

Վերան մահու չափ դժգույն եր:

Նա կանգնել եր կորամեջ, ձեռքերն անոզնական, կախ ղցած: Լայնաթիկունք լրտեսի կողքին նա նման եր ծեծված յերեխայի: Նրա աչքերը տենդայնորեն փայլում եյին, կարծես՝ մի քանի որ նա չեր քնել:

— Հը՛, ինչո՞ւ չեք բարևում իրար, ընկերներ,—հարցրեց սպան, նորից նստելով դրասեղանի առաջ:—Ննդրեմ, չքաշվեք:

Լռություն:

— Հը՞:

Լռություն:

— Վո՛նց և, որիորդ: Ի՞նչ կասեք այժմ: Ցեթե յես լինեյի ձեր տեղը, պարտք կհամարեյի նախազգուշացնել ընկեր Կովաչին, թե մենք ինչպիսի սքանչելի միջոցներ ունենք փակ բերաններին դեմ: Հը՛, ի՞նչ եք լռել:

— Կապիտան,—անսպասելի հաստատուն ձայնով ասաց Վերան,—դուք, ըստ յերևույթին, չեք ճանաչում կոմունիստներին: Ձեզ ընդունում եմ, որ հունդարական վոստիկանությունը կիրառում է դաղանային խոստության լկանքներ, բայց և այնպես, դուք մի իջոցներ չունեք, որոնց ոգնությամբ կարողանաք ստիպել կոմունիստներին՝ մատնելու իրենց գործը: Դուք չունեք այդպիսի միջոցներ:

— Հը՛մ... Շատ հետաքրքիր՛ յե:

Սպան կծեց չրթունքները:

— Հետաքրքիր՛ յե,—կրկնեց նա:—Ձեզ ել իմ հերթին պետք ե ասեմ, որ դուք, որիորդ, չեք ճանաչում հունդարական սրբազան վոստիկանությունը:

Սպան աչքով արավ լրտեսին, և նա ձեռքի մի դուխցով պոկեց, հանեց Վերայի յուբկան:

— Սրիկա՛:

Պյոտրը հարձակվեց բուլդոգադեմ լրտեսի վրա, չնկատելով յերկու ուրիշ լրտեսների, որոնք ներս եյին մտել դաղտնի դռնից և կանդնած եյին նրա յետևը:

Սպան նշան արավ այդ յերկուսին:

Հարցաքննության իններորդ որը, նստած վոստիկանական սպայի դիմաց, Պյոտրի սիրտը հանկարծ խառնեց, և դրանից հետո յերկու ամբողջ որ նրան տանջում եր փսխոցը: Նրա ստամոքսը բոլորովին դատարկ եր. յետ տալիս՝ թափվում եր միայն կանաչավուն լորձունք, բայց սիրտ խառնելը չեր դադարում: Մարմինն այրվում եր տաքության մեջ:

Տասնումեկերորդ որը, յերբ Պյոտրը կզացած նստել եր նույն կապիտանի դիմաց, սպան հոդատանջ ճոճում եր դլուխը.

— Վատ են ձեր գործերը, ընկեր Կովաչ: Ձեզ կարծես առաջվա պես կերակրում են հում մրգերով, հա՞: Վորպիսի հանցագործություն: Այս րոպեիս կպատվիրեմ ձեզ համար մի դավաթ սև սուրճ և մի ռյումկա կոնյակ:

«Ձեմ խմի. վո՛չ»,— վճռեց Պյոտրը:

Հարցաքննության տասնումեկ որվա ընթացքում վոչ մի րոպե նրան հանգիստ չեր տալիս վախը, վոր ապրելու բնաղդային ցանկությունը կարող և ավելի ուժեղ դուրս դալ կոմունիստական գիտակցությունից: Ցերբ սիդարով այրում եյին նրա կուրծքը, յերբ զոռով, բացած բերնի մեջ լցնում եյին թքամանի սպրունակած աղտոտությունը, նրան թվում եր, վոր այլևս չի դիմանա: Ցեվ այդ հնարավոր թուլության սարսափից, նա կծոտում, արնոտում եր իր շուրթերը:

Բուլդոդադեմ լրտեսը, վոր հարցաքննության ժամանակ կրճտում եր նիկոտինից դեղնած, ամուր ատամները, ասես՝ հարձակման պատրաստվող դայլ լիներ, այժմ կանդնել եր Պյոտրի մոտ և առաջարկում եր նրան սև սուրճ:

— Մեջը կոնյակ լցրեք,—կարդադրեց կապիտանը:

«Ձեմ խմի. վո՛չ»,—վճռեց մի անդամ ել Պյոտրը:

Բայց յերբ բաժակը դիպավ նրա արնոտած բերնին, նա խմեց: Ցեվ կոնյակով սուրճը նրան թվաց զարմանալի համեղ, ավելի համեղ այն բոլորից, ինչ իր կյանքում յերբևիցե նա կեսավելի համեղ այն բոլորից, ինչ իր կյանքում յերբևիցե նա կերել կամ խմել եր: Նրա ճակատին յերևացին քրտինքի կաթիլներ: Նա դողում եր ամբողջ մարմնով:

«Միայն թե ուժերս չսպառվե՛ն»:

— Նու, պարոն Կովաչ, հուսամ, բարի կլինեք այժմ և մի քանի կարճ բացատրություններ կտաք մեզ, այնպես չե՞:

Պյոտրը յետ դցեց դլուխը, հայացքը հառեց առաստաղին և մնաց լուռ:

— Այդպիսի սրիկան արժանի չե ներողամտության,—ասաց բուլդոդադեմ լրտեսը:

Պյոտրը կորցրեց գիտակցությունը:

Ուշքի գալով, նա յերկար ժամանակ չեր հասկանում, թե վո՛րտեղ ե գտնվում ինքը: Չեր հասկանում, թե ի՛նչ ե կատարվում իր հետ. արդյոք, կանդնա՞ծ ե, նստած թե՞ պառկած ե ինքը: Նրա դլուխը ճիշտ գտնվում եր առաստաղից կախած՝ կաթնագույն ապակիյով լամպի տակ: Իր ծվատված մեջքին, նա դդում եր պարանի այրող կծիծաղը: Կարծես նա ճոճվում եր կախված դրության: Մարմինը նվում եր. ձեռները կապված եյին մի բանից՝ գլխավերևում:

Գինու հոտ, ծխախոտի մուխ:

Այն մոմենտից, յերբ նա զարթնեց, և մինչև այն մոմենտը, յերբ նա հասկացավ, թե վո՛րտեղ ե գտնվում ինքը և ի՛նչ ե պատահում իրեն, թվում եր, վոր անցավ աներևակայելի շատ ժամանակ: Ձեռքի դաստակներով նա կախված եր բարձակից: Սեղանի չուրջը գտնվում եր նրա վոտի թաթերի դծի վրա: Սեղանի չուրջը թուղթ եյին խաղում: Ցերեք հոդի:

Գինու հոտ, ծխախոտի մուխ:

«Ա՛խ, մեկայն թե ուժերս չսպառվե՛ն... Վո՛չ, ես այլևս չեմ պիտանա: Իսկ եթե ասեմ... վորևե չնչին բան... Ուժ պետք է պահել դատի համար: Ուժ... Դատ... Մահապատիժ... Կրպակնե՛ր՝ կեցցե՛ Լենինը... Կեցցե՛ հունգարական յերկրորդ խորհրդային հանրապետությունը... Լենին... Մոսկվա... Բելա Կուն...»:

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ...

Բուլղոգաղեմը ցած դրեց խաղաթղթերը:

— Ներեցեք,—դիմեց նա իր պարանոյորներին և ուժեղ ձեռքով արձակեց, իջեցրեց Պյոտրին բարձակից:

Պյոտրը գլորվեց, ընկավ պաղ հատակին:

Բուլղոգաղեմը նորից նստեց սեղանի առաջ և չարունակեց խաղը, վոր ընդհատվել եր Պյոտրի ճղոցով: Նա հավաքեց տարած գրամը, խմեց մի բաժակ գինի՝ հանքային ջրով խառն և կռացավ Պյոտրի վրա:

— Ցավո՞ւմ է, պարոն Կովաչ:

Պյոտրը, ասես քարացած, նստել եր գործած բազկաթոռի մեջ, կապանքներից ազատված ձեռները դրած սեղանին:

— Հը՛, պարոն Կովաչ, փորձեցե՞ք: Այդպես ավելի լավ է: Ձես չատ խոսելու սիրահար չեմ, բայց վոր մի բան ասի՝ կարող եք հավատալ ինձ: Ուորհուդ եմ տալիս՝ բացել լեզվիդ կապերը, թե չե՝ յես կատակներ չեմ սիրում: Հասկացա՞ք: Ոյինրազությունը թողեք... Ձես ինքս չեմի ուզենա...

Պյոտրի գլուխը յետ ընկավ: Նա փակեց աչքերը: Մարմինը դողում եր:

— Հը՛, վո՞նց է:

Բուլղոգաղեմը լցրեց կես բաժակ գինի, հետո խառնեց հանքային ջուր և մոտեցրեց Պյոտրի շրթունքներին:

— Հուսամ, չես ասի, վոր յես վատ մարդ եմ: Հե՛, հե՛, Նու, խմիր:

Ուժեղ ձեռքով յետ գցեց Պյոտրի գլուխը և բաժակը դատարկեց նրա բերնի մեջ: Պյոտրը փակեց աչքերը, վախեցած ցնցեց գլուխը և թքեց արյունոտ լորձունքի հետ խառն գինին բուլղոգաղեմի լրտեսի յերեսին:

— Սպասի՛ր, չան տղա:

Բուլղոգաղեմը կրճտացնում եր ատամները:

Ա.ռավոտյան Պյոտրին տեղափոխեցին բանտային հիվանդանոց:

Սափրված յեղան կոշիկները կտրել, հանել ուռած վոտները, չափիկն զգուշությամբ հանել, կտրատելով այն, վոր չքերքրվեն չորացած վերքերը:

Պյոտրը վոչինչ չեր զգում: Անզիտակից պառկած եր նա յերկաթե մահճակալի վրա:

Ցերը ներս մտավ Պոյտեկը, Պյոտրն իսկույն հասկացավ, վոր ամեն ամեն կարգին է: Պոյտեկը ժպտում եր: Ժպտաց նաև Պյոտրը:

Պոյտեկը ցույց տվեց իր բերանը, ավելի չուտ՝ այն տեղը վորտեղ պիտի լիներ բերանը: Նրա յերեսի վրա բերան չկար: Նրա կերպարանքն ավելի չուտ նման եր հնգաթև աստղի, քան մարդկային դեմքի: Ցեվ այդ «աստղը» ժպտում եր Պյոտրին մեկայն աչքերով:

Ժպտում եր նաև Պյոտրը:

«Նա այստեղ է, յերևի, անլեզալ կերպով»,—մտածեց Պյոտրը և ուզեց խոսել, բայց չկարողացավ: Նա ևս բերան չուներ: Նա ձեռներով փնտռում եր բերանը, բայց ապարդյուն: Բերանը կորել եր:

Պոյտեկը բարձրաձայն ծիծաղում եր: Բարձրաձայն ծիծաղում եր և Պյոտրը:

Ծիծաղից ցնցվում եր նրա մարմինը, գլխի մեջ կանգնած եր կարմիր մուժ: Այդ մուժի միջից հեռվից նա նկատում, ճանաչում եր Պոյտեկին՝ «խորհրդային աստղը»: Ծիծաղում եր: Նա ծիծաղում եր բարձրաձայն:

Դիմուքյան քույրը սրսկեց Պյոտրին մորֆիլի ուժեղ դողա, բայց նրա խելառ քրքիջը դեռ յերկար ժամանակ ատրճակ եր ազդում իր հարևան հիվանդներին:

Ծիծաղող բերնի վերջից ծորում եր արյունը:

Անցավ լինի որ: Պյոտրն ինքն ուշքի յեկավ, վոր հանձին հարևան մահճակալին պառկած՝ ուռած դեմքով միրուքավոր մարդու, նա ճանաչեց Անդրեյին:

— Դու հասկանո՞ւմ ես իմ ասածը,—չչմռկով հարցրեց Անդրեյը:

Պյոտրը դրականաբար շարժեց գլուխը:

— Դու ճանաչո՞ւմ ես իմ վոմն Բեսկիդի:

Պյոտրը նորից արավ գլխի նույն շարժումը:

— Նա՛ յես մատնել մեզ: Բեսկիդ՝ նա և՛ Լեզոտաի:

Պյոտրը դուր է փորձում հիշել, թե վո՛րտեղ է լսել Լեդատաի ազգանունը:

Մյուս որն Անդրեյին տարան հիվանդանոցից:

Պյոտրը մնաց այնտեղ ելի քան և յերկու որ:

ԴԵՄ ԱՌ ԴԵՄ

Արևի թույլ շողերը թափանցելով պատուհանների դունավոր ապակիների միջից, վոսկեթույր վառվում են լավ մաքրած պատառ սվիննելի վրա:

Մեղադրյալ և ժամապահ: Մեղադրյալ և ժամապահ:

Անդրեյը դժգույն է: Աչքերի տակ մութ շրջագծեր: Գլուխը կախ է գցած: Նա նստած է/մտաղրաղ: Աչքերը դատավորների դեմքի վրայով հառած են անորոշ հեռուն:

Վերայի դեմքը վառվում է ուշադրուն: Նրա կկոցած աչքերը հուզումնալից փնտռում են մեկին: Նրա հայացքը հարյուր անգամ թռչելով-անցնելով հասարակության վրայից, անփոփոխաբար կանգ է առնում վաստաբանների նստարանի վրա: Պաշտպանները ջոկում, դասավորում են թղթերը, նորից ու նորից վերախմբավորելով գործերը:

Լացին նստել է, ձեռները խաչած կրծքին, գլուխը քարշ: Նա սաստիկ նիհարել է: Աչքերի կոպերը կպչում են իրար· կարծես՝ քնում է նա: Ժամանակ առ ժամանակ ցնցվում է և զարմացած նայում չուրջը:

Պյոտր Կովաչն արդեն ապաքինվել է հարցաքննությունից հետո: Նրա հայացքը պարզ է ու հաստատուն և դեմքի դժգունությունը միայն մատնում է նրա յերկարատև հիվանդության մասին: Արտաքուստ նա բոլորովին հանգիստ է: Նա, ինչպես և վերան, դիտում է հասարակությունը: Լրտեսները, մի քանի վաստաբանները, Լացիի մայրը...

Առաջին րոպեին նա կարծեց, վոր սխալվում է ինքը: Պատահական նմանություն: Լարված ջղերի խաղ:

Նեղազեմ, չիկավուն, պեպենոտ մարդու հայացքը խաչաղակվեց նրա հայացքի հետ:

Զարմանալի նմանություն:

Պեպենոտը դեմքը չուռ է տալիս: Ուղղում է փողկապը և ջղայնորեն ձիգ է տալիս ոձիքը:

«Դա նա չե,—վճռում՝ է Պյոտրը:—Անկասկած՝ նա չե: Չի կարող պատահել...»:

Իհարկե, Սեկերեչը հասկացավ, թե ինչո՛ւ Պյոտրի դժգույն դեմքը կաս-կարմրեց: Ցավ նրա մունջ հարցին նա պատասխանեց, նայելով Արդարադատության դիցուհուն, վոր կանգնած եր դատարանի նախագահի յետևում՝ աչքերը կապած: Նա չուռ յեկավ դեպի դիցուհու անդրին և գլխով արավ նրան, կարծես՝ ուզում եր ասել·

— Այո՛, այո՛: Սա չե՛ս եմ: Դու չես սխալվում: Ցես այստեղ եմ, քեզ հետ եմ: Ցես տեսնում ու լսում եմ քեզ: Այո՛, այո՛: Կուսակցությունն արթուն է, նա ամեն բան տեսնում ու լսում է: Կուսակցությունն այստեղ է, քեզ հետ: Այո՛, այո՛:

Նայելով կույր դիցուհուն, Սեկերեչը գլխով եր անում:

Խորը հառաչելով, Պյոտրը նայեց դատախազին: Նա բազմել եր այնպիսի արժանապատվությամբ, վորին կարող եր նախանձել ամեն դիցուհի: Պյոտրը ժպտաց ակամա և քարշ գցեց գլուխը: Կուսակցությունը գոյություն ունի, աշխատում է: Այդ մամենտից դատավարությունը կորցրեց նրա համար իր սարսափելի նշանակությունը: Այդ պարոնները չեն կարող վճռել նրա բախտը: Ինչ վճիռ էլ վոր հանեն նրանք, նրանց դատավճիռը կունենա միայն ժամանակավոր նշանակություն: Կուսակցությունն ապրում է, կուսակցությունն աշխատում է: Այս պրոցեսի իսկական նշանակությունն է՝ ոգտագործել պրոցեսը, դատավարությունն ագիտացիայի համար: «Հը՛մ... Մենք պետք է ագիտացիա մղենք, ագիտացիա մղենք այստեղ, շրջապատված սվիններով, ամբողջ հասարակության առաջ, դեմ առ դեմ դանդաղ նստած դատակարգային թշնամուն...»:

Մեղադրական ակտը կարդալուց հետո, խոսք տրվեց Անդրեյին:

Նա խոսում եր հանգիստ, համեմելով իր ճառը համապատասխան չարժումներով, կանգնած դատարանի առաջ, ինչպես ուսուցիչը՝ աշակերտների դիմաց:

— Ցես կփորձեմ՝ բացատրել ձեզ մեր չարժման էությունը... Դասակարգերի պայքարը... Միջազգային իմպերիալիզմը... Խորհրդային Ռուսաստանը՝ ամբողջ աշխարհի աշխատավորների իսկական հայրենիքը...

Բարձրաթիկունք բազկաթոռի մեջ բազմած նախագահը չլսեր լու յե տալիս Անդրեյի խոսքերը: Նա հոգնած է, նա ձանձրացել

է: Կոմունիստական բազմաթիվ դատավարություններից հետո, այս պրոցեսն այլևս սենսացիա չէ, և ամենախիստ դատավճիռն անգամ՝ կախաղանը՝ չի կարող ծառայել նրա համար վորպես կարչերայի սանդուխա, ինչպես լինում էր 1919 թվին: Այո՛, այդ պրոցեսը միայն ավելորդ դլխացավանք է, ապարդյուն աշխատանք: Այո՛:

Նախագահը համարյա քնած է: Բայց «Վորհրդային Ռուսաստան» խոսքերը խփում են նրա ջղերին, և նա մատիտով թմբկահարում է սեղանը:

— Պատմեք այն մասին, ինչ անձնապես վերաբերում է ձեզ: Մի կրկնեք տափակ, վատ սերտած, ընդհանուր ֆրազներ: Դուք այստեղ դիվնատանը չեք:

— Ձեզ խոսում եմ հենց այն մասին, թե ինչ եյի անում յես և ինչո՛ւ պետք է աշխատեյի այսպես, վոչ այլ կերպ,—անվրդով սառնասրտությամբ յետ է մղում Անդրեյը դատավորի ջղային հարձակումը:— Խնդրեմ, չխանգարեմ:

— Դա անպատկառություն է,—վրդովվում է դատավորը:— Ձեզ զրկում եմ ձեզ խոսքից: Նստեք: Դատապարտում եմ ձեզ մի-որյա կարցերի: Նստեցեք:

Անդրեյը ձևանում է զարմացած:

— Ինչպե՞ս հասկանալ ձեր վարմունքը: Դուք հո չե՞ք պատրաստվում դատելու մեզ մի գործի համար, վորի եությունը ծանոթ չէ ձեզ,—հեգնանքով հարցնում է նա:

Դատարանի նախագահը, կատաղությունից կարմրած, բղավում է.

— Նստե՛ք: Անմիջապես նստե՛ք:

— Լսեք,—չի նահանջում Անդրեյը:

Նախագահի ոված նշանով, յերկու ժամապահ պինվորներ ատիպում են նրան նստել: Մեղադրյալները բարձրաձայն բողոքում են: Հասարակությունը ջղայնանում է: Փաստաբաններն իրար յետևից խոսք են խնդրում: Նախագահն սպառնում է, վոր կդատարկի դահլիճը, մեղադրյալներին խոստանում է տուգանք. կարցեր:

Անցնում է քառորդ ժամ, մինչև վոր վերջապես վորոշ չափով վերականգնում է կարգը:

Խոսքը տրվում է Վերային:

Նա կանգնած է դատավորների դեմ՝ ինչպես պայքարի պատրաստ բոքսյոր: Ձախ ձեռքը բռունցք արած, նա բռնել է առաջը, կարծես՝ պաշտպանվում է, աջով թափահարում է: Ցերը նրա յերկարած մազերն ընկնում են ճակատին, նա նրանց յետ է գցում բարկացած:

— Ռուսական պրոլետարիատի հաղթանակը... Պրոլետարական դիկտատուրան է այն, ինչը վոչ մի բոպե չպիտի մոռանան...

— Խոսեք այն մասին, թե ինչե՛ր եք արել դուք:

— Լա՛վ: Ուրեմն, յես կխոսեմ այն մասին, թե ինչպիսի՛ խնդիրներ առաջադրեց ռուսական պրոլետարիատի հաղթանակը հունդարական բանվոր դասակարդին և չքավոր դյուղացիությանը: Պրոլետարիատի դիկտատուրան, բանվորների ու չքավոր դյուղացիների յեղբայրական աշխատակցությունը, հողի հեղափոխական դրավումը և ազգային հարցի լուծումը...

Սեկերեչը, վոր Բուդապեշտ եր յեկել դատավարությունից մի չաբաթ առաջ, չմնաց դահլիճում մինչև նիստի վերջը: Ցերը նախագահը խոսքից զրկեց Վերային,—իսկ դա այնքան ել հեշտ բան չեր. Վերան չարունակում եր խոսել և այն ժամանակ, յերբ նրան զոռով նստացրին, վորից հետո մյուս ատիպեցին նրան լռել, դուրս տանելով դահլիճից. դա իր հերթին ազմկալից բողոքի ատիթ տվեց մեղադրյալներին,—Սեկերեչն սպասեց, մինչև նորից տիրեց լռություն և ձեռքով ծածկելով հորանջուն բերանը, ծուլորեն կանդնեց և դանդաղ, վոչ իրեն հատուկ քայլերով. դուրս յեկավ միջանցք:

Միջանցքում նա պատահեց ծանոթի:

— Բարի յեր, պարոն Շոնկոլ,—վողջունեց նրան Սեկերեչը:

— Բարև ձեզ, դոկտոր Գելլեր,—պատասխանեց նա:

Նրանք մյուսին հեռացան դատարանի չենքից և Մարկոյի փողոցով դիմեցին դեպի վիլհելմ կայսրի պողոտան:

— Անտոլոր չարժում կա այսոր,—նկատեց Շոնկոլը:

— Այո՛, յես... տարօրինակ է, բայց այդպես է. յերբ նրանք աշխարհիկ զգեստով են, չափազանց ավելի հեշտ է նրանց ճանաչելը, քան յերբ նրանք իրենց տարազով են:

Գելլերը և Շոնկոլը մտան Զեյմանի կաֆեն, վոր մի-մի քարաժակ սուրճ խմեն: Կաֆեն համարյա դատարկ եր: Բաց պատուհանից կարելի յեր դիտել հետ ու առաջ գրոսնող հատուկ հանդերից կարելի յեր դիտել հետ ու առաջ գրոսնող հատուկ տեսակի այն մարդկանց, վորոնց ավելի հեշտ է ճանաչել աշխարհիկ զգեստի մեջ, քան իրենց տարազով:

Գելլերը և Շոնկոլը նստեցին պատուհանի մոտ դրած սեղան-ներից մեկի առաջ:

— Հուսամ, դուք որ ու դիշեր աղոթում եք չեխ սահմանա-պահների արևչատուԹյան համար,—քմծիծաղեց Գելլերը:—Ցեթե նրանք չբռնեին ձեզ ու վեց չաբԹով չնստացնեին, ապնիվ խոսք, դուք այժմ կլինեյիք այնտեղ՝ մեղադրյալների նստարանի վրա:

— Շատ հավանական է: Իոհան Կիչին նրանք վորոնում են մինչև այսոր:

— Ո՞վ է այդ Լեգոտաի կոչվածը, դրո՞ղը տանի:

— Մի՞Թե ձեզ համար բավական չէ՞ այն, վոր նա վոսոխ-կանական լրտես է:

— Վո՛չ: Մենք պետք է նրանից նախազգուշացնենք Վիեն-նայում յեղած մեր ընկերներին:

— Ցես արդեն համապատասխան տեղեկուԹյուն տվել եմ, նրա բնորոշ նշանների հետ:

— Ցեթե նրա մասին մենք ավելի վոչինչ չգիտենք... Ինչ վերաբերում է ցույցին, յես կարծում եմ, ավելի լավ է այն հետաձգել դատավճիռը հայտարարելու որվան: Տղերքը շատ լավ են պահում իրենց: Ապնիվ խոսք... Ցես կուզենայի ներկա գտնվել Պյոտրի հարցաքննուԹյանը, բայց նա չափից ավելի անզգուշաբար եր նայում ինձ: Չափազանց հիմար բան կատացվեր, յեթե թակարդ ընկնեյի այդ ձևով:

— Այո՛, յես այլևս չեմ գնա այնտեղ: ԿուսակցուԹյունն իրավունք կունենար հանդիմանելու մեզ, յեթե մենք մեր «հերոսուԹյամբ» վտանգեյինք նրա աշխատանքները: Առանց դրան էլ մեր վիչտը մեծ է: Ինչ վերաբերում է ցույցին, պիտի ասեմ, քանի վոր մենք բաց Թողինք այսորվա որը, այժմ խոսք կարող է լինել միայն դատավճիռը հայտարարելու որվա մասին: Մեր մեղադրյալ ընկերներից յուրաքանչյուրը կստանա ութ-տասը տարի: Դժվար Թե պրծնեն ավելի եժան:

— Թղթի վրա, իհարկե, վոչ: Իսկ իրապես... յեթե Մոսկվան կարողանա կատարել մեր ընկերների փոխանակուԹյունը, իսկ բոլոր տվյալները խոսում են հօգուտ դրա հաջողուԹյան,— ապա մի տարուց վոչ ուշ մենք Պյոտրից լուր կստանանք այնտեղից:

— Վերջին մեր տեսակցուԹյան ժամանակ յես պատմում եյի նրան Մոսկվայի մասին: Այժմ, յերբ մենք նորից հանդիպենք, Մոսկվայի մասին նա կպատմի ինձ: Ապնիվ խոսք...

— Առայժմ խոսքը ցույցի մասին է: Մի խոսքով, դատավճիռը հայտարարելու որը: Իսկ այսոր յե՞րբ: Ցոթի՞ն:

— Ութին: Սովորական տեղում:

— Լա՛վ: Հիմա գնանք:

— Գնանք: Ցես առաջ կերթամ: Սպացեք:

Սեկերեչը վճարեց և դիմեց դեպի յելքի դուռը: Զախ ձեռքին նա բռնել եր ծղնոտե չքեղ գլխարկը, աջում՝ ձեռնոցները ու ձեռնափայտը: Նա արդեն մոտեցել եր դռանը, բայց դռանը: Արհեստական այդու յերեք մետր տարածուԹյունը միայն բաժանում եյին նրան այդ տեղով անցնող հասարակուԹյունից, յերբ հանկարծ քիչ մնաց, վոր նա բղավի անակնկալից: Ներանից մի քանի քայլի վրա անցավ մի ընկեր, վորին կնուսակցուԹյունը դուր վորոնում եր մի քանի ամիսների ընԹացքում: Նա անցավ կաֆեյի մոտով, առանց նկատելու Սեկերեչին:

«Ինչպե՛ս խոսեմ յես նրա հետ, դրողը տանի, վոր նա ուբախուԹյունից չմատնի իրեն»:

Նա դեռ այդ բանը չեր մտածել, յերբ Շոնկոլը հայտնվեց նրա մոտ:

— Ցես գտանք, դոքտոր: Մի րոպեյով... Ցես մոռացա մի բան: Գնանք, ա՛յ, այնտեղ, քիչ հեռու այստեղից:

— Ցես պատահեցի մի ծանոԹի,—ասաց Գելլերը,—անհրաժեշտ է, վոր յես հանդիպեմ նրան:

— Կանաչ կոստյումո՞վ ու պանամա գլխարկո՞վ:

— Այո՛: Դուք ճանաչո՞ւմ եք նրան:

— Ճանաչում եմ: Դե՛, գնանք: Մի սոխպեք՝ խնդրել ձեզ:

Գելլերը դեռ յերբեք Շոնկոլին չեր տեսել այդպես զրգռված:

— Ապնիվ խոսք, վոչինչ չեմ հասկանում,—քրթմնջաց նա, բայց և այնպես համաձայնվեց:

Նրանք նստեցին կաֆեյի խորքում:

— Ի՞նչ կա:

Շոնկոլ-Իոհան Կիչը չեր շտապում սկսելու խոսակցուԹյունը: Ցերևում եր, վոր նա մորիլիզացիայի յե յենԹարկում իր բոլոր ուժերը, վորպեսզի պահպանի իր արտաքին հանգստուԹյունը:

— Ի՞նչ կա,—չտապում եր Գելլերը:—Իմ ժամանակը սուղ է:

— Այսպես ահա,—խոսեց վերջապես Շոնկոլը:—Այժմ դուք կարիք չունեք նկարագրուԹյան: Դուք ձեր աչքերով տեսաք Լեդոտային:

— Լեզոտաի՞ն: Դուք նկատի ունեք կանաչ կոստյումով մարդո՞ւն: Սխալվում եք: Դա Լեզոտաին չէ, այլ Բեսկիդն է:

— Գուցե նա ձեզ հայտնի չի այդ ազգանունով, բայց փաստ է, որ մեր տղերքը բռնվեցին նրա չնորհիվ միայն: Ցեվ այդ արիկան դնում է հիմա վայելելու իր աշխատանքի պտուղը:

Շոնկոլի դեմքը կապ-կարմրեց, ձեռները սկսվեցին բռունցք դարձան:

— Ցեթե միայն հայոդվեր...

Թե ի՛նչ պիտի հայոդվեր,—նա չասաց: Ցերկար ժամանակ նա նստել եր անշարժ և մատներով թմբկահարում եր սեղանը:

Լուռ եր նաև Գելլերը:

— Մենք արժանի չենք շատ խիստ հանդիմանության այն պատճառով, որ այսոր առավոտյան գնացինք այնտեղ: Ազնիվ խոսք, դա անպատասխանատու «հերոսություն» է: Մենք դեռ շատ բան պիտի սովորենք, Շոնկոլ, չափազանց շատ բան:

Միջանցքը հեղեղված եր փաստաթղթերով, նրանց ոդնականներով ու դրասենյակային պաշտոնյաներով. ամենքի թևի տակ անպայման պորտֆել: Դրանց մեծ մասը գործով եյին այստեղ, բայց և այնպես միջանցքը հիշեցնում եր Կորսո[1]), լեփ-լեցուն պարապ, թրև չկոդ հասարակության համար:

Պատուհաններից մեկի վրա դրված եր մի գամբյուդ, լի՝ վեպչենայով ու ճարպով պատրաստած բուտերբրոդներով: Բուտերբրոդները ծախում եր աղքատ հաղնված մի պառավ: Նրա դիմաց կանգնեց փաստաբանի յերիտասարդ ոդնականը: Պառավն ե՛լ ավելի կռացավ: Ցերիտասարդը հանեց անդրավարտիկի դրպանից մանր դրամ, հաշվեց, կարմրեց, ինչ-որ բան մրթմրթաց, չուռ չկոպ և արագ անհայտացավ ամբոխի մեջ:

Մյուս պատուհանի մոտ, հենված նրա դրանդիին, կանգնել եր վերթխաբի հատակով մի կին, կապույտ աչքերով, սպիտակով մազերով և ոսկեխի հետքեր կրող ճակատով: Կինն աչքերը հառել եր բակին, չորս կողմից ողակված դատարանի շենքի պատերով: Առաջին յերկու հարկերի պատուհանների կաթնագույն ապակիները փայլում եյին արևի շողերի տակ, իսկ յերրորդ հարկի չափազանց փոքր պատուհանների շրջանակների մեջ յերեվում եյին յերկաթե վանդակները միայն: Կնոջ հայացքը սևեռած եր այդ պատուհաններին: Խորը հառաչելով, նա մեջքով չուռ յեկավ դեպի պատուհանը: Աչքերը լցվեցին արցունքներով: Նա հուսահատությամբ սրտրեց ձեռները, րդդե ձեռնոցների մեջ:

Փոքրիկ, նիհար մի կին, հագնված պարզ, բայց ճաշակով, դնեց վեպչենայով բուտերբրոդ: Ապա նա մոտեցավ այն լուսամուտին, որի մոտ կանգնած եր արտասուալից աչքերով կինը: Ձեռնոցները հանելիս՝ նիհար կինն անզգուշաբար բռնեց լացամած կնոջը:

— Ներեցեք:

— Խնդրեմ:

Կանայք նայեցին իրար, և նրանցից յուրաքանչյուրը մյուսի դեմքին կարդաց անքուն դիշերների, դառն արցունքների հետքերը: Նրանք ակամա մոտեցան իրար և խուսն նորից հեռացան: Նրանցից յուրաքանչյուրը մյուսից առավ եր համար ինչ-որ նրբին բույր: Բարձրահասակ կինը յետ քաշվեց, զգալով անուրախության բույրը

մեր յերեխաներին: Յես որ ու դիշեր աղոթում եմ աստծուն, վոր նա պատժի նրանց:

Լացելի մայրը հետո յերբեք չեր կարողանում պարզել, բացատրել իրեն, թե ինչպես պատահեց այդ:

Աբյանը խփեց նրա գլուխը, և նա ամբողջ թափով խփեց Անդրեյի մոր յերեսին: Յեվ մինչ կհավաքվեյին մարդիկ, վիրավորված տիկին Տոմպան ծլկվեց, չքվեց, խուսափելով սկանդալից:

Ամբողջ դահլիճը վոտքի վրա յե:

— Նորին մեծություն թագավորի անունով... Տասնուհինգ տարի տաժանակիր աշխատանք... Տասնուհինգ տարի տաժանակիր աշխատանք... Տասնուհինգ տարի... Տասնուհինգ տարի... Տասնուհինգ տարի... Ութ տարի... Ութ տարի...

Դահլիճում վառում են էլեկտրականությունը:

Ժամապահ զինվորների սվինները փայլփլում են:

Անդրեյը կանգնած է, մի փոքր կռացած առաջ: Նրա դեմքին սառել է զարմանքի արտահայտություն, կարծես՝ նա ուզում եր հարցնել. ինչպե՞ս կարող են մարդիկ հանել մինչ այնպիսի պատժություն:

Բայց յերբ վերջապես համոզվում է, վոր ինքը սխալ չի լսել, նրան համակում է թուլություն և անհաղթելի քնկոտություն:

Վերան սրմռում, տրորում է ձեռները: Շուրթերն ամուր հուպ են տրված: Նա զայրույթից կրճտում է ատամները:

Լացին չափազանց հոգնած է: Նա մատղաշ նայում եր դիմացը, չխում է ճակատը:

Նախագահը կարդում է, կարդում և, կարդում...

Պյոտրը չի լսում նախագահին: Գլուխը ներս քաշած ուսերի մեջ, աչքերը փակած, ձախ ձեռքը լայնափողի պես դրած ականջին, նա լարում է իր բոլոր ուժերը, վոր ավելի լավ լսի, ավելի լավ հասկանա փողոցից լսվող աղմուկը: Նրան թվում է, իբրև թե...

Պյոտրի դեմքը հանկարծ կարմրում է, աչքերը փայլում են բախտավորությունից:

Փողոցում ուժեղանում է աղմուկը:

— Լենին...

Նախագահը կարուկ յետ է դցում գլուխը, բայց չի ընդհատում ընթերցումը: Այժմ արդեն պարզ է դահլիճում յեղողների համար. փողոցում ցույց է:

— Լենին! Լենին!!

— Կեցցե համաշխարհային հեղափոխությունը!—բղավում է Պյոտրը:

Բոլոր մեղադրյալները ձայնակցում են նրան: Դահլիճը լցված է բացականչությունների դղրդոցով:

Բավական ժամանակ անցնելուց հետո, յերբ նախագահը դժվարությամբ վերականգնում է կարգը, դատապարտվածները տանուհինգ տարի տաժանակրանքից զատ՝ ստանում են նաև յերկու-յերեք որով կարցեր:

Առավոտյան թերթերը հաղորդեցին, վոր մի քանի յերիտասարդ խուլիգաններ ցույց կազմակերպեցին դատարանի շենքի առաջ: Վոստիկանությունը ձերբակալեց քառասուն վեց ցուցաբարների:

«Հարգելի ընկեր Սեկերեշ!

Ինչպես տեսնում եք, ինձ հայտնի յե ձեր հասցեն և ձեր անլեգալ ազգանունը: Յեթե ձեզ հետաքրքրում է, դեպքը բերելիս՝ յես կպատմեմ ձեզ, թե ինչպես իմացա այդ: Դատավճիռը հայտարարելու որը յես տեսա ձեզ Վիլհելմ կայսրի պողոտայում: Թեև դուք չատ վարպետորեն փոխել եյիք ձեր արտաքինը, այնուամենայնիվ՝ յես ճանաչեցի ձեզ: Յեվ յեթե իսկապես յես պրովոկատոր լինեյի, ինչպես պնդում են վոմանք թերեւսամտորեն և անամոթաբար, դուք, հարգելի ընկեր Սեկերեշ, վաղուց նստած կլինեյիք Զրինիի վողոցում: Բայց, ինչպես տեսնում եք, իմ մասին տարածած լուրերը հանդիսանում են ստոր ամբաստանություն կամ, լավագույն դեպքում, սխալ: Յես դավաճան չեմ, յես պրովոկատոր չեմ,—յես՝ դասակարգային պայքարի զոհ եմ, յես՝ հեղափոխության զոհ եմ: Յես չատ լավ գիտեմ, վոր ձեր ժամանակը թանգ է, վոր ձեզ գլխովին զրաղեցնում է համաշխարհային հեղափոխության նախապատրաստման գործը, բայց և այնպես՝ յես համարձակվում եմ խլել ձեզանից այդ թանկագին ժամանակը, վոր խնդրեմ ձեզ՝ ոգնեցեք ինձ, ընկեր Սեկերեշ!

Ինչպես հայտնի յե ձեզ, յես աշխատում եյի Սլովակիայում, պրոպագանդի գրասենյակում: Կուսակցության հանձնարարությամբ, կուսակցության համար: Շատ բան եմ արել յես կուսակցության համար: Հալոդեցնելով Պյոտր Կովաչի փախուստը (յես պատրաստվում եյի ոգնել նաև ձեզ), յես ինքս եյ ստիպ-

ված յեղա փախչել: Բրատիսլավայի գործադուլի ժամանակ, յերբ յես վորձում եյի վոտով անցնել, հասնել Մոսկվա, ինձ բռնեցին չեխերը: Բայց վորովհետև ինձ մոտ փաստաթղթեր չկատան, յես ասեցի, իբրև թե փախել եմ Հունգարիայից: Ինձ տեղափոխեցին Հունգարիա: Ինձ հաջողվեց փախչել հունգարացի սահմանապահ զինվորների ձեռքից: Յես նրանց խաբեցի, առարկելով, իբր թե չեխերն ինձ գցեցին սահմանից այս կողմ այն պատճառով, վոր յես Սլովակիայում պրոպագանդ եյի տանում Հունգարիայի ոգուտին: Այդպիսով՝ յես ընկա Բուդապեշտ: Բուդապեշտում յես չունեյի վոչ մի հենակետ, նեցուկ, և անկասկած կկորչեյի յես, առանց ոգուտ բերելու համաշխարհային հեղափոխությանը, յեթե բախտն ինձ հանդիպել չտար իմ վաղեմի բարեկամներից մեկի՝ Յեվգենիյ Դեմեյի հետ: Դեմեն մի մարդ է, վոր տառապում է տարորինակություններով ու մեծամտությամբ: Բայց նա լավ ընկեր է, իսկական հեղափոխական և հիանալի կազմակերպիչ: Շատ լավ գիտե Մարքսի ուսմունքը: Նրան պակասում է միայն կապը Մոսկվայի հետ: Շարժումը, վոր գլխավորում է նա, չի ստանում վո՛չ նյութական, վո՛չ բարոյական աջակցություն: Յես վոչ վոքի չեմ մեղադրում, բայց չեմ կարող լռել, չեմ կարող չասել, վոր այդ ցավալի և չափազանց վնասակար մեկուսացման պատճառը Լանդլերն ու Բելա Կունն են:

Նրանք կանգնեցին Դեմեյի և Լենինի միջև:

Այդպես եր դրությունը, յերբ ապրիլին, գալով Վիեննա, յես իմացա Իոհանից, նախ՝ վոր Դեմեյի մասին բացասական ինֆորմացիա եյին տալիս Վերան և Անդրեյը, յերկրորդ՝ վոր Հունգարիայի կոմունիստական կուսակցության մեջ տեղի ունի ֆրակցիոն պայքար և վոր յերկու ֆրակցիաների չանսերը մոտավորապես նույնն են:

Ինձ համար մեկն պարզ դարձավ, թե ինչ պետք է անել:

Առաջին՝ անվնասակար դարձնել Անդրեյին ու Վերային:

Յերկրորդ՝ անհրաժեշտ է թուլացնել ֆրակցիաներից մեկը (կամ՝ վոր համաղոր է դրան՝ ապահովել նրանցից մեկի հաղթանակը), վորովհետև պայքարի պրոցեսում՝ հավասար չանսերի պայմաններում, ֆրակցիաները ջլատում են իրար, և նրանցից վոչ մեկը չի կարող պայքարել բուրժուազիայի դեմ:

Վորոշմանը հետևում է գործողությունը: Իսկական հեղափոխականը յերբեք չի վարանում. հեղափոխությունը ծաղկեփունջ չե:

Շախմատի տախտակից հեռացնելով Անդրեյին ու Վերային, մի անգամից յես վճռեցի յերկու խնդիր.—թող հիմա նրանք փորձեն ինտրիգներ սարքել Դեմեյի դեմ: Նրանց տապալմամբ թուլացավ այն ֆրակցիան, վորը պետք է վոչնչացներ հոդուտ չարժման, վորովհետև նա հանդիսանում եր Մոսկվայի վոսկով այլասերված կորրուպցիայի[1]) ջերմոց:

Ինձ հետ կրկնվեց նույն պատմությունը, ինչ հռոմեյացի Կորիոլանի հետ (վորին Շեքսպիրը նվիրել է մի ամբողջ դրամա): Յես, ինչպես և նա, փրկեցի իմ հայրենիքը (իմ հայրենիքը կոմունիստական կուսակցությունն է), բայց ինքս ել կորա: Դեմեն վճռել է, ինչպես իմացա սրանից մի չարաթ առաջ, տևական ժամանակով հեռանալ ակտիվ աշխատանքից: Նա գնում է Բրյուսն, վորտեղ ծառայելու յե իր քեռու մահուղի ֆաբրիկայում, վորպես պրակտիկանտ: Իսկ Վիեննայի ընկերները, չնայած իմ մանրամասն բացատրություններին,—յես թաղմիցս գրել եմ նրանց,—վոխանակ պաշտպանելու իմ տեսակետը, բամբասում, անրատատանում են ինձ, մի բան, վոր յերբեք չեյի սպասել նրանցից:

Դա անարդարություն է և վոչ միայն իմ վերաբերմամբ, այլև չարժման նկատմամբ: Շարժումը կարիք ունի ինձ նման մարդկանց:

Յես դիմում եմ ձեզ, ընկեր Սեկերեչ,—ուղղեք, խնդրում եմ ձեզ, այդ անարդարությունը:

Փոխանակ գալու անձամբ, դրում եմ ձեզ, վորովհետև վախենում եմ՝ հանկարծ ձեզ մի բան պատահի ինձ հետ պատահելուց հետո, և դա նոր առիթ ծառայի ամբաստանական կամպանիայի իմ դեմ:

Բարի յեղեք, դրեք գլխավոր պոչտամտ, ց'պահանջ «կարմիր մեխակ»: Միամիտ յեղեք. ձեր նամակը կընկնի հուսալի ձեռք: Ինչ ել պատասխանելու լինեք ինձ, յես միշտ կմնամ ձեր հավատարիմ ընկերը:

Հեղափոխական վողջույնով՝
Ջեր անկեղծ ընկեր Բեսկիդ-Լեգոտսկի»:

Դատավճիռը հայտարարելուց հետո դատապարտվածներին

---

[1]) Ջուտ չահագիտական նպատակով աշխատել վորևե իշխանության ոգին: Թաե. թարգմ.

այլևս չտարան Հավաքի բանտը: Դիչները նրանք անցկացրին դատարանի շենքում:

Պյոտրը և Անդրեյն ընկան մթնոլորտային խուցը: Խուցը յերկու մարդու համար եր: Վերջին կես տարվա ընթացքում նրանք առաջին անգամ կարող եյին ազատ խոսել իրար հետ: Բանտային հիվանդանոցից Պյոտրին դուրս դրելուց հետո, մինչև դատի հիվանդանոցից Պյոտրին դուրս դրելուց հետո, մինչև դատի օրը, պահում եյին ընկերներից խիստ առանձնացրած: Նա նըստած եր յերկու զրպանահատների հետ: Նրանք յեռանդով աշխատում եյին նրան իրազեկ անել իրենց «արվեստին»: Յեվ յերբ Պյոտրը վոչ մի հետաքրքրություն ցույց չտվեց նրանց արհեստի վերաբերմամբ, նրանք սրտանց վիրավորվեցին: Այդ ժամանակամիջոցին Պյոտրն ստիպված եր զրուցել միայն քննիչի և փաստաբանի հետ: Քննիչն ավելի հոգ եր տանում առաջիկա դատավճիռը հիմնաբանելու մասին, քան փաստաբանը պաշտպանությունը պատճառաբանելու մասին:

Դատի վերջին որն Անդրեյը սաստիկ հոգնել եր, հազիվ եր բացում աչքերը: Դատավճիռը հայտարարելիս՝ նա լարեց իր բոլոր ուժերը, վոր կանգնած չքնի: Բայց հենց վոր խուցի դուռը փակվեց նրա յետևից, հուզմունքը, վոր նա այնպիսի դժվարությամբ զսպում եր, պոռթկաց, դարձավ յերկար մի ճառ, հետն էլ ձեռքերի անտուղր, համարձակ և արագ շարժումներ: Այս ճառը, վորով նա մերկացնում եր սպիտակների դատարանի դասակարգային բնույթը, պատռում և սպիտակ պարոնների դիմակը, վորոնք 1849 թվին իրենց ժողովրդի դեմ հանեցին ռուս կոզակներին, իսկ 1919 թվին՝ ռումինական դինվորներին, վորոնք հանուն թագավորի...

Պյոտրը հասկացավ, թե ի՛նչ և կատարվում Անդրեյի հետ: Վոչինչով ոգնել չեր կարող նրան: Չամենայն դեպս՝ պետք չեր խանգարել նրան: Նա ձգվեց տախտակամածի վրա և աչքերը հառեց առաստաղին, թեև հետաքրքրական վոչինչ չկար այնտեղ: Անդրեյի հակառակ, նա դժում եր իրեն բարոյապես ջարդված: Բայց գլուխը դործում եր պարզ ու պայծառ:

Դատավարության առաջին որը մեծ թեթևություն բերեց նրա սրտին: Սեկերեչը Պեչատումն և: Ցույցը՝ ապացույց և, վոր աճում և չարժումը: Ահա թե ի՛նչը լավ կլիներ աշխատել: Բայց, իհարկե... Փաստաբանն ասում եր, իբր նորից պատրաստվում և կալանավորների փոխանակություն Ռուսաստանի հետ: Պյոտրն այն ժամանակ կարևորություն չտվեց փաստաբանի խոսքերին:

Ինչպե՞ս նա ափսոսում և այժմ, վոր մանրամասնորեն հարց ու փորձ չարավ նրան: Բայց չոտով նա հնարավորություն կունենա իմանալու դա:

«Ե՛հ, ինչ լինելու յե, թող լինի»,—ընդհատեց Պյոտրն իր մտքերի յերկար շղթան, ծալապատիկ նստելով տախտակամածին:

Անդրեյը, վոր յետ ու առաջ ման եր գալիս խուցում, կանգնեց Պյոտրի առաջ:

— Ինչի՞ մասին ես մտածում, Պյոտր:

— Վոչ մի բանի մասին:

— Վո՞նց թե վոչ մի բանի մասին:

— Ե՛հ, հենց այնպես...

— Ի՞նչ կասես դու փախչելու մասին:

— Դա լավ յելք կլիներ,—պատասխանեց Պյոտրը:—Բայց դա հեչա բան չե:

— Մի՞թե չի կարելի վոչինչ անել:

— Տեսնենք...

Մենյակը լուսավորվում եր առաստաղի մոտ յեղած լուսամուտով: Թույլ լույսը ներս եր գալիս փողոցից: Պյոտրը չեր կարող լավ տեսնել Անդրեյի դեմքը, նա լսում եր միայն նրա թախծոտ խորունկ թատանչները:

— Վոչի՛նչ, Անդրեյ, չենք մեռնի այստեղ: Ռուս ընկերները նստած են յեղել յերկար տարիներ:

— Դու մի անգամ արդեն փախել ես, չե՞, Պյոտր:

— Այո՛, բայց դա վաղուց եր: Անցողիկ այն ժամանակ դրությունը կայուն չեր Զևեխայում: Սեկերեչը մեկ-մեկ կատակում եր, թե այն ժամանակ նույնիսկ մահն անցողիկ կացություն եր, թե այն ժամանակ հեշտ եր ամեն ինչ անելը: Այժմ, ինչպես միայն: Այն ժամանակ հեշտ եր ամեն ինչ անելը: Այժմ, ինչպես յերևում և, պետք և կուտակենք մեր ամբողջ համբերությունը:

— Հապա մեր չարժո՞ւմը, Պյոտր: Ի՞նչ կլինի մեր չարժման հետ,—աղիողորմ հառաչեց Անդրեյը:

— Շարժո՞ւմը: Շարժումը կամք: Իհարկե, կլինեն նաև վիժումներ: Բայց կամաց-կամաց ամեն բան կարգի կգա, կուղղվի, կմտնի իր հունի մեջ: Մենք անընդհատ կերպով կապված ենք չարժման հետ,— առանց նրան, մենք չենք պատկերացնում մեզ: Բայց չարժումը կարող և առաջ գնալ առանց մեզ: Կգա ժամանակ, դրությունը կփոխվի, մենք նորից կդժվենք աշխատանքի: Չին ընկերներից քչերը մնացած կլինեն: Բայց յեթե վոչ վոք էլ նրանցից մնացած չլինի, այնուամենայնիվ՝ մենք մեզ կզդանք

ինչպես մեր տանը, չեթե միայն չերբևիցե... Իսկ առայժմ, Անդրեյ, համբերություն:

Անդրեյը նորից խորը հառաչեց և սղմեց Պյոտրի ձեռքը:

— Դու իրավացի չես, չեղբայր: Շնորհակալություն: Իսկապես ասած, դու վոչինչ նոր բան չասիր: Այնպիսի բան, վոր ինքնին չենթադրվելիս չլիներ: Ցավն այն է, վոր դժվար րոպեներն մարդս զգալուում է հասկանալ նույնիսկ հասարակ բանները: Շնորհակալություն, չեղբայր:

Անդրեյը խոսեց Վերայի մասին, և նորից նա նման զարճավ ուսուցչի, վոր խոսում է իր աշակերտների դիմաց:

Պյոտրը վախտում եր հարցնել Անդրեյին, թե արդյոք թեթևություն զգաց նա իրենց խոսակցությունից: Նա ինքը սաստիկ տխրեց: Իրեն պաշարող մտքերից ազատվելու նպատակով, նա ուզում եր խոսակցությունը փոխել, կապել այն Սեկերեչի հետ: Ինչ մնաց, վոր նա բերնից թռցներ, թե դատարանում տեսավ Սեկերեչին: Բայց միտք արավ, վճռեց վոչինչ չասել:

Առավոտյան, չերբ պահակները չեկան Պյոտրի չեռևից, նա չեր կարող չենթադրել, վոր իրեն տեղափոխում են այդտեղից և վոր կանցնեն չերկար տարիներ, վորից հետո միայն նա կպատահի Անդրեյին: Նա դուրս գնաց, առանց հրաժեշտ տալու:

Ճաշից հետո Անդրեյին ևս տեղափոխեցին Հավաքի բանտը: Այնտեղ նա ընկավ Լացիի հետ միևնույն խուցը:

Պյոտրի մտածների արտատպումը բաղմաթիվ անգամ լուսանկարելուց հետո, նրան տարան ներքև, այն դարպասի մոտ, վոր նայում է Սահմանադրության փողոցին:

Դատարանի շենքի դլխավոր մուտքից մինչև ավտոմոբիլն ութ-տաս քայլ է: Մի վայրկյան Պյոտրը հայտնվեց փողոցում: Փողոցում...

Նրան ձերբակալեցին դարնանը: Ձերը նա դուրս չեկավ բանտային հիվանդանոցից, արդեն ամառ եր: Իսկ այժմ արդեն դեղնել են ծառերի տերևները:

Ութ-տաս քայլ: Թևերին կապանքներ: Շրջապատված զինված պահակներով: Այսուամենայնիվ, Պյոտրին այդ ճանապարհը թվաց հրաչալի: Նույնիսկ գլուխը պտույտ չեկավ այն փողոցի ոդից, վորով չերեկ անցնում եյին նրա ցուցարար ընկերները:

Ավտոմոբիլը չարժվեց:

Ժամապահներից մեկը նստեց շոֆերի կողքին: Մյուսը Պյոտրի հետ՝ ավտոմոբիլի մեջ: Ցերրորդը՝ արտաքին դռան նստարանին: Ցերը դուռը փակվեց, դրսից չեր կարելի տեսնել, թե ո՛վ է նստած մեքենայի մեջ: Ավտոմոբիլից նույնպես վոչինչ չեր չերևում:

— Ո՞ւր,—հարցրեց Պյոտրը ժամապահին:

Ժամապահը, նիհար, հասակավոր մի մարդ, թռչնի իր գլուխը ներս քաշելով ուսերի մեջ, ձևացավ, իբրև թե չլսեց հարցը:

— Ո՞ւր,—կրկնեց Պյոտրը:

Պատասխան չկար: Ժամապահի տափակ ճակատին փայլեցին քրտնքի կաթիլները:

Ավտոմոբիլը սլանում եր:

— Ուր՞ վերջապես, գրողը տանի:

Լավում եյին տրամվայների զնգոցները, ավտոմոբիլների չչահկները—քաղաքի հազարաձայն աղմուկը: Ցեվ այս բոլորը չեր պատասխանում այն հարցին, վորը տվյալ րոպեյին հետաքրքրում եր Պյոտրին ամեն բանից ավելի:

— Գրողը տանի, միայն թե իմանայի:

Ցերկարաչունչ չկար:

«Ճաշի ընդմիջում վորևե գործարանում»,— վճռեց Պյոտրը:

Նոր չկար: Ցերրորդը, չորրորդը, տասներորդը...

Մեկը բարակ, սուր, մյուսը՝ բարկացկոտ, մռնչուն:

Սկզբում չչահկները խիստ տարբերվում եյին իրարից: Շուտով նրանք ձուլվեցին միմյանց հետ, դարձան խլացուցիչ, բայց հասկանալի մի ղղրդյուն, վորը խլացնում ու կլանում եր քաղաքի խլացուցիչ ու վոչինչ չասող աղմուկը:

Գործարանների լեզուն հասկանալի չեր Պյոտրին: Նա սփրթնեց, կարմրեց: Նա այժմ արդեն գիտեր, թե վո՛րտեղ են իրենք և ո՛ւր են գնում. վագի պողոտայով դեպի Ուլյանկա: Պյոտրը գտնվում եր գործարանային չչահկների պաշտպանության տակ:

Ուլյանկա...

Ուլյանկա: Այն քաղաքը, վորտեղ Պյոտրն աշխատում եր պրոլետարական հեղափոխության ժամանակ, այն քաղաքը, վորտեղ նա այլևս վոտք չեր դրել՝ ավելի քան չերկու տարի, ուր տեղ նա այլևս վոտք չեր դրել՝ ավելի քան չերկու տարի, ուր չարունակ ձգտում եր նա, նույնիսկ չերազով նա հաճախ տեսնում եր իրեն այնտեղ, բանվորական գինված չոկատների հետ, և ուր այժմ տանում եյին նրան՝ ձերբակալված, չղթայակապ:

— Գնաք և ուժերս հավաքեմ,—չչնջաց Պյոտրը, մեկեն հաս-

ինչպես մեր տանը, չեթե միայն չերբևիցե... Իսկ առայժմ, Անդրեյ, համբերություն:

Անդրեյը նորից խորը հառաչեց և սղմեց Պյոտրի ձեռքը:

— Դու իրավացի չես, չեղբայր: Շնորհակալություն: Իսկապես ասած, դու վոչինչ նոր բան չասիր: Այնպիսի բան, վոր ինքնին չենթադրվելիս չլիներ: Ցավն այն է, վոր դժվար րոպեներն մարդս զգալուում է հասկանալ նույնիսկ հասարակ բանները: Շնորհակալություն, չեղբայր:

Անդրեյը խոսեց Վերայի մասին, և նորից նա նման զարճավ ուսուցչի, վոր խոսում է իր աշակերտների դիմաց:

Պյոտրը փափագում էր հարցնել Անդրեյին, թե արդյոք թեթևություն զգո՞ց նա իրենց խոսակցությունից: Նա ինքը սաստիկ տխրեց: Իրեն պաշարող մտքերից աղատվելու նպատակով, նա ուզում էր խոսակցությունը փոխել, կապել այն Սեկերեչի հետ: Ինչ մնաց, վոր նա բերնից թռցրեց, թե գտնարանում տեսալ Սեկերեչին: Բայց մեռք արալ, վճռեց վոչինչ չասել:

Առավոտյան, չերբ պահակները չեկան Պյոտրի չեւևից, նա չէր կարող չենթադրել, վոր իրեն տեղափոխում են այդտեղից և վոր կանցնեն չերկար տարիներ, վորից հետո միայն նա կպատահի Անդրեյին: Նա դուրս գնաց, առանց հրաժեշտ տալու:

Ճաշից հետո Անդրեյին ևս տեղափոխեցին Հավաքի բանտը: Այնտեղ նա ընկավ Լացիի հետ միևնույն խուցը:

Պյոտրի մտանների արտասպումը բազմաթիվ անգամ լուսանկարելուց հետո, նրան տարան ներքև, այն դարպասի մոտ, վոր նայում է Սահմանադրության փողոցին:

Դատարանի շենքի գլխավոր մուտքից մինչև ավտոմոբիլն ութ-տաս քայլ է: Մի վայրկյան Պյոտրը հայտնվեց փողոցում: Փողոցում...

Նրան ձերբակալեցին գարնանը: Ձերբ նա դուրս չեկավ բանտային հիվանդանոցից, արդեն ամառ էր: Իսկ այժմ արդեն դեղնել են ծառերի տերևները:

Ութ-տաս քայլ: Թևերին կապանքներ: Շրջապատված զինված պահակներով: Այսուամենայնիվ, Պյոտրին այդ ճանապարհը թվաց հրաշալի: Նույնիսկ գլուխը պտույտ չեկավ այն փողոցի ողից, վորով չերեկ անցնում էին նրա ցուցարար ընկերները:

Ավտոմոբիլը չարժվեց:

Ժամապահներից մեկը նստեց շոֆերի կողքին: Մյուսը Պյոտրի հետ՝ ավտոմոբիլի մեջ: Ցերրորդը՝ արտաքին դռան նստարանին: Ցերբ դուռը փակվեց, դրսից չեր կարելի տեսնել, թե ո՛վ և նստած մեքենայի մեջ: Ավտոմոբիլից նույնպես վոչինչ չեր չերևում:

— Ո՞ւր,—հարցրեց Պյոտրը ժամապահին:

Ժամապահը, նիհար, հասակավոր մի մարդ, թռչնի իր գլուխը ներս քաշելով ուսերի մեջ, ձևացավ, իբրև թե չլսեց հարցը:

— Ո՞ւր,—կրկնեց Պյոտրը:

Պատասխան չկար: Ժամապահի տափակ ճակատին փայլեցին քրտնքի կաթիլներ:

Ավտոմոբիլը սլանում էր:

— Ուր վերջապես, գրողը տանի:

Լավում էին տրամվայների զնգոցները, ավտոմոբիլների չչակները—քաղաքի հազարաձայն աղմուկը: Ցեվ այս բոլորը չեր պատասխանում այն հարցին, վորը ավյալ րոպեին հետաքրքրում էր Պյոտրին ամեն բանից ավելի:

— Գրողը տանի, միայն թե խմանայի:

Ցերկարաչունչ չչակ:

«Ճաշի ընդմիջում վորևե դործարանում»,— վճռեց Պյոտրը:

Նոր չչակ: Ցերրորդը, չորրորդը, տասներորդը...

Մեկը բարակ, սուր, մյուսը՝ բարկացկոտ, մռնչուն:

Սկզբում չչակները խիստ տարբերվում էին իրարից: Շուտով նրանք ճուլվեցին միմյանց հետ, դարճան խլացուցիչ, բայց հասկանալի մի դղրդյուն, վորը խլացնում ու կլանում էր քաղաքի խլացուցիչ ու վոչինչ չասող աղմուկը:

Գործարանների լեզուն հասկանալի չեր Պյոտրին: Նա սփրթնեց, կարմրեց: Նա այժմ արդեն գիտեր, թե վո՛րտեղ են իրենք և ո՛ւր են գնում. վագի պողոտայով դեպի Ուլպեչա: Պյոտրը գտնվում էր գործարանային չչակների պաշտպանության տակ:

Ուլպեչա...

Ուլպեչա: Այն քաղաքը, վորտեղ Պյոտրն աշխատում էր պրոլետարական հեղափոխության ժամանակ, այն քաղաքը, վորտեղ նա այլևս վոտք չեր դրել՝ ավելի քան չերկու տարի, ուր չարունակ ձգտում էր նա, նույնիսկ չերազով նա հաճախ տեսնում էր իրեն այնտեղ, բանվորական զինված ջոկատների հետ, և ուր այժմ տանում էին նրան՝ ձերբակալված, չղթայակապ:

— Գետք է ուժերս հավաքեմ,—չչնջաց Պյոտրը, մեկեն հաս-

կանալով, թե ի՛նչ է սպասում իրեն: Ուզում են ծիծաղել իր վրա, նվաստացնել իրեն, տանջել և կոտրել իրեն հենց այնտեղ, որտեղ նա պրոլետարական իշխանության հայտնի դինվոր եր: Բուրժուազիան ուզում է հաղթանակով:

— Պետք է ուժերս հավաքեմ:

Ավտոմոբիլը կանգ առավ Ուլպեչի վոստիկանության չենքի առաջ: Պյոտրին սպասում էին: Մուտքի դռան մոտ կանգնել էին ութ վոստիկաններ: Բանտային պահակը նրան հանձնեց վոստիկանությանը՝ առաջին հարկի սենյակներից մեկում:

— Ձեզ կարդին պահեք,—հրաժեշտ տվեց Պյոտրին այն ժամապահը, որ նստած եր նրա հետ ավտոմոբիլի մեջ:

Վոստիկանական յերիտասարդ սպան առաջարկեց լցնել հարցաթուղթը: Լուսանկարեցին: Հանեցին մատների արտատպումը: Ցեվ նախապես հեռախոսով կատարված խոսակցությունից հետո միայն հրաման տրվեց յերկու վոստիկանների՝ տանել Պյոտրին յերկրորդ հարկ՝ վոստիկանապետի մոտ:

«Ճիշտ այն սենյակը,—անցավ Պյոտրի ուղեղով,—որտեղ նիստեր եր ունենում հեղափոխական տասյանը՝ հակահեղափոխական խռովությունը Մաուտների դործարանում ճնշելուց հետո...»:

Վոստիկանապետը նստած եր դրասեղանի առաջ: Նրա մոտ՝ աջից ու ձախից նստել էին տաս-տասներկու ինչ-որ պարոններ: Պյոտրի հայացքը սահեց-անցավ նրանց դեմքերի վրայով: Նա չեր կարող լավ դիտել նրանցից յուրաքանչյուրին առանձին: Նրանք թվում էին նրան որպես մի կերպարանք: Այդ պարոնները, նիհար թե հաստ, սևահեր թե չիկահեր, ճաշակով թե անճաշակ հագնված, յերիտասարդ թե պառավ,—ձուլվել էին իրար հետ, կազմում էին մի կերպարանք և դա կերպարանքն եր այն թշնամու, որ կախաղան և բարձրացնում, բանտ և նռատեղ նում:

«Պետք է ուժեղ լինել»,—ներչնչում եր իրեն Պյոտրը· աներկյուղ նայելով նրանց գլուխների վրայով դեպի անորոշ հեռուն:

— Հե՛-հե՛-հե՛: Մի՞թե սա այն հերոսն է: Հը՛մ: Ցես սպասում էի ավելի լավին:

— Նա մի փոքր փոխվել է այն ուրից, յերբ դնաց-հեռացավ մեր քաղաքից,—ասաց մյուս պարոնը, հեղնական ժպիտով:

— «Ամեն ինչ այժմ պատկանում է մեզ»,—այնպես չե՞, ընկեր:

— Մենք պայքարում ենք համաչխարհային հեղափոխության համար, յեթե չեմ սխալվում, հոմ: Հե՛-հե՛-հե՛...

— Ո՛, հունդարացի վորքա՛ն լավ հայրենասերների սպանել են այդ սրիկաները: Ցերը մարդ մտածում է դրա մասին, կորչում է կատակելու ամեն տրամադրություն:

— Հանդիստ յեղեք: Շուտով նա ևս տրամադրություն չի ունենա վո՛չ մեկին կատակելու, այլև ապրելու,—ասաց վոստիկանապետը:

Ամբողջապես համակված սիդարի ծխով, սենյակում մի րոպե տիրեց լռություն:

Պյոտրը մտածեց, վոր լավ կլիներ, յեթե ինքն ասեր մի քանի կարճ, պարզ ու վո՛չ յերկդիմի խոսք իր անձնվիրության մասին պրոլետարական հեղափոխությանը, բայց խելոք թողեց այդ միտքը:

Շահատակել այս ավազակախմբի, այս բանդայի առա՞ջ: Վո՛չ: Նա սրմեց շրթունքները և մնաց լուռ:

— Արդյոք, չե՞ք ուզում նորից սոցիալիստականացնել կանանց, հա՞:

Պյոտրը բարձրացրեց գլուխը: Լռանհատվոր մի կին, վորին մինչ այդ նա նույնիսկ չեր նկատել, նայում եր նրա վրա արհամարհանքով, շրթունքների անկյունները կախ գցած: Կնոջ չեկ մազերը, ձայնը, նրա ամբողջ կերպարանքը զարթեցրին Պյոտրի մեջ ազոտ մի հիշողություն: Նա չեր կարողանում հիշել, թե վո՛րտեղից է ճանաչում այդ կնոջը և, յերևի, ապարդյուն կլինեին նրա պրպտումները՝ կատարել իր մտքի աշխարհում, յեթե կինն ուղղություն ցույց չտար նրան:

— Հը՛մ, յե՞րբ եք մտադիր ներս խուժելու իմ բնակարանը:

«Ա՛հա, դա այն լերը քաջն է, վորի մոտ յես ապրում եյի,—հիշեց Պյոտրը:—Այժմ յես հասկանում եմ, թե ինչո՛ւ նա այդպես բարկացած է»:

Պյոտրը ժպտաց և պատասխանի վոխարեն, մեջքով շուռ յեկավ դեպի կինը:

— Ջանեռված կոպտություն՛,—վրդովվեց կինը:

— Պարոն վոստիկանապետ, դուք...—կմկմաց պարոններից մեկը:

— Ցես համամիտ եմ ձեզ, պարոն քաղաքապետ: Դուրս տարեք ձերբակալվածին,—կարգադրեց վոստիկանապետը:

Պյոտրին նստեցրին նկուղ: Նկուղը խորը չէր, և յերկաթա-
կապ փոքրիկ պատուհանը ցած առաստաղի տակ՝ գտնվում էր
բակի մակերևույթին հավասար գծի վրա:

Բարձրանալով տախտակամածի վրա, Պյոտրը տեսնում էր
բակի մի մասը միայն:

Արդեն մթնել էր, յերը վերջապես ճաչ բերին. մի ափսե
ուտել էր և մի կտոր սև հաց:

— Ժամանակ է քնելու,—խորհուրդ տվեց վոստիկանը, վոր
սպասում էր, մինչև Պյոտրը վերջացնի ճաշը:

Ժամապահի ձայնը հնչեց անսովոր բարեկամաբար:

— Ի՞նչ լավ կլիներ մի պապիրոս ծխել քնելուց առաջ,—
սերտ արավ Պյոտրը, կասկած չունենալով, վոր խնդրում է ան-
տեղի, իզուր:

— Վտանգավոր է,— պատասխանեց վոստիկանը:— Յեթե
տեսնեն, ձեր բանը վատ կլինի, ել չեմ ասում իմ մասին:

Նկուղում մութ էր, Պյոտրը հազիվ էր նշմարում ժամա-
պահի դեմքը, բայց նրա պատասխանի մեջ զգաց ներողության
պես մի բան: Այս բոլորը հատկանշական էր Ուլպեչի վոստի-
կանների համար:

— Վո՞նց կարող են տեսնել նրանք,— հարցրեց Պյոտրը:

— Ծխի հոտը կմատնի...

— Յես կերդվեմ, վոր ծխում, ծուխ էր անում իմ վոտը:

— Հե՛-հե՛... Վոչի՛նչ, համա լեզու ունեք, հա՛: Յեվ դու,
և քո ընկերները: Յես ճանաչում եմ ձեզ: Բայց յեթե քո պատ-
ճառով լինէ...

Վոստիկանը հանեց դրպանից յերկու պապիրոս: Նույնիսկ
լուցկի վառեց, կպցրեց:

— Յեթե մարդ իմանար, թե ի՛նչ է սպասում իրեն,—հա-
ռաչեց նա, դուրս գնալիս:—Բայց հիմա լինէ պես չքավոր մար-
դիկ վոչ մի կերպ չեն կարող վստահ լինել, թե ի՛նչ կպատահի
իրենց հետ վաղը:

«Ի՞նչ է նշանակում՝ լինէ պես չքավոր մարդիկ: Գուցե դես
մի բան է պատահել: Շուտով կլինի վեց ամիս, ինչ նստած եմ
յես: Յերբ լինէ ձերբակալեցին, Գերմանիայում նոր էին ճնշել
մարտ ամսի ապստամբությունը: Բայց ո՞վ գիտե, թե այս վեց
ամսվա ընթացքում... Կամ գուցե Իտալիայում... Հը՛մ... Վա՛տ
չէ: Վոչ մի վոստիկան կալանավորին չի հյուրասիրի պապիրո-
սով, ուրեմն, մի բան կա... Գուցե, ռուսները...»:

Նա առաջին պապիրոսից վառեց յերկրորդը և յերբ ծխեց,

վերջացրեց այդ ել, Պյոտրը համարյա վստահ էր, վոր տեղի յե
ունեցել մի կարևոր բան. պրոլետարիատը մեծ հաղթանակ է
տարել մի տեղ: «Իհարկե, վատ չէր լինի իմանալ, թե վո՞րտեղ:
Յե՞րբ: Յեվ ի՞նչպես: Անտանելի դրություն է՝ գիտակցել, վոր
մենք հաղթել ենք, և չիմանալ, թե վո՛րտեղ ու յե՛րբ: Բայց չե՞
վոր հաղթանակի հետևանքը կլինի այն, վոր և մեզ մոտ...»:

Յերբ բոլորովին մթնեց, նա զգաց, վոր այլևս տանել չի
կարող այդ տանջալից անհայտությունը: Նա փորձեց բարձրա-
ձայն կանչել ժամապահին: Պատասխան չստացվեց: Այն ժամա-
նակ նա սկսեց բռունցքով ծեծել դուռը: Ջեռները ծեծկվեցին,
ցավեցին, բայց պատասխան չստացվեց:

Հոգնած և հուսահատված, Պյոտրը կանդնեց պատուհանի ա-
ռաջ ու յերկար ժամանակ նայում էր յերկնքի այն փոքրիկ կտո-
րին, վոր յերևում էր յերկաթե վանդակի միջից:

Յերկինքը դանդաղ ծածկվում էր ամպերով:

Կես գիշերվա մոտ սկսվեց անձրև, աշնանային բարակ,
տխուր անձրև:

Առավոտյան Պյոտրն սպասում էր, վոր իրեն կտանեն հար-
ցաքննության: Բայց չտարան: Նրան նախաճաշ բերող վոստի-
կանը նույնպես բարեսիրտ էր, ինչպես յերեկվա վոստիկանը:
Յանկանալով փորձել, թե մինչև ո՛ւր կհասնի այդ բարեսրտու-
թյունը, Պյոտրը նորից պապիրոս խնդրեց: Վոստիկանը չվրդով-
վեց կալանավորի հանդգնությունից, այլ քաղաքավարի մերժեց
նրա խնդիրը: Իրոք թե ինքը ծխող չէ և պապիրոս չունի:

— Յեթե ամբողջ պապիրոս չունես, կրավականանամ կխա-
տով, թեկուզ մի պղտունց ծխախոտով:

— Յեթե ունենայի,—հավատացեք, վոր կտայի:

Քանի չորս ժամվա ընթացքում պատահելով յերկրորդ սե-
բալիր վոստիկանը, Պյոտրը վերջնականապես համոզվեց, վոր
ինքը յերեկ ճիշտ է դատել. կամ կարևոր մի բան արդեն կատար-
վել է, կամ կատարվում է:

Ամբողջ մի ժամ նա փորձում էր կապ հաստատել հարևան
խցերի կալանավորների հետ: Թխթխկացնում էր բոլոր պատերը,
բայց ապարդյուն: Տանջված, նա ընկավ տախտակամածին:
Դուռը ճռնչաց:

«Սկսվում է»,—մտածեց Պյոտրը:

Նա սխալվեց: Բերին ներս նոր ձերբակալվածների:

Բավական դնձլոտած յերկու յերիտասարդներ նուրբ քաղա-

քավարութեամբ վողջունեցին նրան: Ներանցից մեկը, փոքրը, հագած ուներ աղյուսակավոր չալվար և պիջակ: Մյուսը, բարձրահասակը, հագել էր հին անալի մուշտակ, ամառային բացդույն գլխարկ և ղեղին կոշիկներ:

— Շերեկ,—ներկայացավ աղյուսակավոր չալվարով յերիտասարդը և քաղաքավարի գլուխ տվեց:

— Պելեկ,—մռայլ ասաց բարձրահասակը:

— Կովաչ,—պատասխանեց Պյոտրը:

— Քաղաքակա՞ն կալանավոր եք:

— Այո՛:

— Հաջողութիւնը դժբախտութեան մեջ է,—ասաց Շերեկը,—վոր մենք այստեղ պատահեցինք իսկական ջենտլմենի: Մենք նույնպես համարյա քաղաքական կալանավորներ ենք:

— Ցերևակայեցեք ձեզ! Մենք ազատ ըրոսնեցինք ընդամենը քսան չորս ժամ: Հակառակի պես՝ ընկանք հենց այդ խելագար որերին... Աւենք, չա՞տ տարիներով դատապարտեցին ձեզ:

— Ի՞նչ նորութիւն կա քաղաքում:

— Շուտով կպարզվի: Այսոր կամ վաղն անպայման կպարզվի:

— Ե՛հ, միևնույն դիրքին է,—թղճաց մյուսը:

Նրա մերուքն այնպես յերկարել եր, վոր յերևում էլին միայն աչքերը:

— Աստված վկա, միևնույն դիրքին է: Մի՞թե միևնույն չէ, թե ո՞վ կհաղթի: Ինձ դա այնպես քիչ է հետաքրքրում, ինչպես այն, թե ո՞ւմ է պատկանում անկյունի այն մեծ տունը: Ցես հարատատ դիտեմ, վոր տունն իմը չէ, և այնտեղ յերբեք բնակարան չեմ ստանա: Միևնույն դիրքին է:

— Ի սեր աստծո, ասեք, ի՞նչ է պատահել, ի՞նչ:

— Մի՞թե մենք չասինք: Այսոր կամ վաղը կպարզվի:

— Ի՞նչը կպարզվի: Ի՞նչ է պատահել:

Շերեկը միայն վեր քաշեց ուսերը: Համբերութիւնից դուրս գալով, Պյոտրը բռնեց ժպտացող մարդու ուսերից և ուժգին ցնցեց նրան:

— Ասա, թե չե կխեղդեմ: Ի՞նչ է պատահել:

— Դե՛, դե՛, դե՛: Գուցե դուք պատրաստվում եք ծառայել վորպես լրտե՞ս:

Մարդը հեշտութեամբ ազատվեց Պյոտրի ձեռներից, և նրա պեպենոտ դեմքը փայլեց ժպիտից:

— Ցերբեք չեյի կարծի, վոր դուք այդպես բարկացկոտ եք, պարոն Կովաչ: Ավելի լավ է, դուք վանկ-վանկ բացատրեք, թե իսկապես դուք ի՞նչ եք ուզում իմանալ:

— Ե՛հ, թող խորամանկութիւնը,—բղավեց նրա վրա Պելեկը:—Իսկ ձեզ ի՞նչ է հայտնի,—դիմեց նա Պյոտրին:

— Ինչի՞ մասին եք խոսում,—համարյա ազերսեց Պյոտրը:

— Ուրեմն, դուք վոչինչ չգիտե՞ք: Լա՛վ: Ահա թե ինչ: Թագավոր Կարլը, Զիտայի ամուսինը, սավառնակով թռել է Հունգարիա և այժմ իր զորքերով չարժվում է Պեշտի վրա՝ Խորաիի դեմ:

— Ի՞նչ եք ասում:

— Այո՛ այո՛: Զիտան նրա հետ է: Կին՝ չալվարով: Նաև Ոստենբուրգի ամբողջ ջոկատը, նույնպես Շոպրոնի կայազորը: Պեշտի պինվորները չեն ուզում կռվել, ուստի, Խորտին ուսանողներին և հավաքել թագավորի դեմ:

— Հետո՞,—չտապեցնում եր Պյոտրը, չնչահեղձ:

— Շուտով կպարզվի: Լուրեր են տարածված, իբր Զեխո-Սլովակիան, Յուգոսլավիան և Ռումինիան զորակոչ են անում: Ցեվ այդպիսի մոմենտի, մենք պետք է նստենք նկուղում: Վորպիսի խոզութիւն: Աչխատանքի համար անփոխարինելի մոմենտ...

— Իսկ բանվորնե՞րը:

Պելեկը պատասխանի փոխարեն մի այն ուսերը վեր քաշեց:

Նա սկսեց պատմել Պյոտրին քաղաքական դեպքերի մասին, իսկ ճարպիկ Շերեկը բարձրացավ պատուհանի վրա և սկսեց ուսումնասիրել յերկաթե վանդակը:

— Աղնիվ խոսք, վանդակը չինված է յուղից,—մրթմրթաց նա:— Պետք է միայն սպասել, մինչև մթնի:

Պյոտրը թափեց նրանց վրա հազարավոր հարցերի տարափ, բայց ավելի բան չիմացավ նրանցից: Նրանք վոչինչ չգիտեյին թագավորական պուտչի մասին: Սակայն, նրանք յերկար ու բարակ խոսում էլին, թե ինչ հիմար բան է բանտ ընկնել ինչ-վոր դատարկ քսակի համար:

— Թողնեք ձեր այդ հիմար հարցուփորձը: Իմ ինչի՞ն է պետք, թե ո՞վ թագավոր կլինի այս ապուշ յերկրում, վորտեղ մարդուս ձերբակալում ու նստեցնում են դատարկ, բոլորովին դատարկ քսակի համար:

— Լա՛վ, մի՛ ծղրտա,—մխիթարում եր նրան Պելեկը:—Լա-

ցով բան չի չինվի: Ավելի լավ է՝ հետազոտիր, տես, թե ի՛նչ է կատարվում այնտեղ, բակում:

Հենց վոր սկսեց մթնել, պատուհանը հանկարծ ցնցվեց թընդանոթի վորոտից: Նրանք կպան պատին՝ լուսամուտի տակ, ազահ աչքերը սևեռած յերկնքի փոքրիկ կտորին, ասես՝ այնտեղ գրված լիներ յերկրի բախտը:

Ցերը մթնեց, նորից լսվեցին թնդանոթի վորոտացները:

— Ռմբակոծում են քաղաքը,—ասաց Շերեկը չչուկով, վորի կարիքը բնավ չեր զգացվում:

Պելևկը դողում եր:

— Ինչ անմիտ բան,—պատասխանեց նա նույնպես չչուկով:

Պյոտրը բարձրացավ պատուհանը:

Շերեկը ճիշտ եր ասում, յերկաթե վանդակը դատարկ բան եր:

Բակում մարդ չկար:

Մի անկյունում միայն՝ պատին հենած հրացանը ցույց եր տալիս, վոր քիչ առաջ այստեղ մեկը պահակ եր յեղել:

Թռչե՞լ, անցնե՞լ ցանկապատից: Դա իսկապես մանկական խաղ է:

Փողոցում վոչ վոք չկար: Թվում եր, թե անցավ մի վայրկյան:

Բայց յերբ Պյոտրը յետ նայեց, փոքրիկ Շերեկն արդեն հեծած, նստած եր ցանկապատին:

Հասկացավ. գործը չահած, պրծած է:

Մինչև այժմ նա բոլորովին հանգիստ եր, հիմա նրա սիրտը բարախում եր մոլեգնաբար, ճակատին յերևաց պաղ քրտինք:

«Ի՞նչ, յեթե վոր վերջին մոմենտին...»:

Մի քանի րոպեից հետո նա արդեն կանգնած եր քաղաքային խորհրդի շենքի առաջ, վորի պատուհանները լուսավորված եյին:

Պյոտրին թվում եր, վոր հեռվից, Բուդայի կողմից, լսվում եյին հրազարկերի ձայներ:

Փողոցն ամայի յեր:

Պյոտրի թեթև զգեստը բնավ չեր համապատասխանում աշնանային ցուրտ յեղանակին: Նա ոձիքը բարձրացրեց և մեծ քայլերով գնաց դեպի Դանուբը:

Խանութները փակ եյին, բնակարանների լուսամուտների վարագույրները ծածկած: Փողոցի խաչմերուկում խոնված ամբոխը նայում եր յերկնքին: Առկայծող աստղերի մեջ մարդիկ յերեվակայում եյին սավառնակների կրակները: Դրանից այն կողմ փողոցը դատարկ եր:

Պեշտի կողմից դալիս եր տրամվայը: Մարդիկ կախվել են աստիճաններից:

«Ցեթե չլինեյին չիկալատաբները... Արա՛գ, ավելի ա-րա՛գ...»:

Գանցի գործարանի մոտ, չուռ գալով, անցնելով անկյունը, Պյոտրը վազի պողոտայով գնաց Պեշտի ուղղությամբ: Նա դանդաղեցրեց քայլերը: Փողոցի յերկու կողմում վիթխարի մուրճ շենքերի և գործարանների ու ֆաբրիկանների ծխնելույզների յերկար շարք: Հեռու, շատ հեռու լույսերի ծովում վառվում եր Պեշտը:

«Դա արդեն ապատություն է: Այսինքն՝ աշխատանք է: Պարքար է,—ուղղեց իրեն Պյոտրը:— Ամենակարևոր մոմենտը: Գուցե...»:

Նրա ուղեղն աշխատում եր անդադրում:

«Գործադուլ... Զենք... Ապստամբություն...»:

Պյոտրը չեր կարողանում տիրապետել իրեն: Նա վազեց: Հասնելով Արևմտյան կայարանին, նա հանկարծ հիշեց, վոր չգիտե, թե ո՛ւր գնա:

Վոտները հազիվ եյին շարժվում: Նա հևում եր:

Կայարանի ժամացույցը ցույց եր տալիս ութից կես պակաս:

ԿԱՐԼ ՀԱԲՍԲՈՒՐԳԸ ՅԵՎ ՊՅՈՏՐ ԿՈՎԱՉԸ ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻՑ

Տատանման մի րոպե, և նա արագ գնաց, ինչպես եր դրան լիովին վստահ մարդ: Մինչդեռ, նա տակավին չեր վճռել, թե յերկու հնարավորություններից վո՛րն ընտրի. վոչ մեկը դրանցից չեր ժպտում նրան: Վերջիվերջո նա կանգ առավ կախված չեզոքների պրոֆխուլթյան վրա: Մետաղագործների մխիթարնը հեռու յեր: Ուիկոտ եր ավյալ պայմաններում փողոցում մնալը: Բուլվարներում դեռ կարելի յեր մի կերպ մնալ, այնտեղ անցուդարձորդները չատ և վոստիկաններն ու ջոկատայինները՝ համեմատաբար քիչ: Մի քանի փողոցներում պատկերը բոլորովին այլ է: Փոքրիկ փողոցներն ավելի վտանգավոր են, այնտեղ վրիպ-

տում են Մորաիի լակեյները: Ցերեկ հոգուց բաղկացած պարեկները հիշեցնում էին Պյոտրին դիվիտատուրայի անկման որերը:

Ներքին Լեոնայա փողոցը, հակառակ սպասածի, ավելի բազմամարդ եր: Փողոցը լուսավորվում եր լապտերներով, վառած մեջ ընդ մեջ: Հաղվագյուտ տներում միայն լույս կար: Նույնիսկ կիսախավարի մեջ Պյոտրը տեսավ, որ սխալվել է. Ներքին Լեոնայա փողոցը նույնպես չի զնչում խաղաղ կյանքով: Անկյունից վոչ հեռու քանի չափ, մի խումբ մարդիկ բռնել են համարյա ամբողջ փողոցը: Ներանց բարձրաձայն և դղրդված վիճից Պյոտրը հասկացավ, որ նրանք գալիս են հենց այնտեղից, ուր Պյոտրը պատրաստվում եր գնալ,—այսինքն՝ կաչեզործների պրոֆխուԹյուն: ԶգուշուԹյան համար Պյոտրը պահվեց մոտակա դարպասի տակ:

— Դե՛, լավ,—նրա ականջին հասավ մեկի ձայնը:—Ցես չեմ առարկի, եԹե նա խոսեր, նու, ասենք, սպազարուծուԹյան մասին, կլոպնները վոչնչացնելու մասին: Առաջինը չատ հաճելի զրաղմունք է, յերկրորդը՝ ոգտակար: Բայց խոսել աստղաբաշխուԹյան մասին, աստղալից յերկնքի մասին,—դա յես չեյի սպասում նույնիսկ նրանից:

— Կոլեգա Կինդե, դուք, ինչպես միշտ, աչառու յեք, յերբ խոսքը վերաբերում է պրոֆխուԹյանը և սոցիալ-դեմոկրատ կուսակցուԹյանը: Ցեվ, ինչպես միշտ, դուք իրավացի չեք: Դուք, բացահայտ է, վոչ մի զաղափար չունեք, Թե ի՛նչ նշանակուԹյուն ունի աստղաբաշխուԹյունը գյուղատնտեսուԹյան համար, ես առավել՝ նավագնացուԹյան համար: ԱստղաբաշխուԹյունը...

— ՆավագնացուԹյան մասին ավելի լավ է չխոսեք, կոլեգա,—ընդհատեց նրան Կինդեն,—ԹԷ չե՝ կարելի յե կարծել, որ դուք մտահոգված եք Մորտիի բարօրուԹյամբ...

— Ցերը վերկի, ազատ ինձ: Հեչ մտքովս էլ չի անցել:

— Հավատում եմ, հավատում: Բայց դեռևս ի՛նչ, կգտնվեն մարդիկ, որ ձեր խոսքերին հենց այդպիսի իմաստ կտան: Ցեվ վո՞րտեղից ձեր խելքին փչեց՝ զբաղվել այդպիսի դռեհիկ բանով, յերբ կարելի յեր այդ ժամանակամիջոցում պարապել ավելի արդիական դասախոսուԹյամբ: Թնդանոթները վորոտում են վոչ ԹԷ աստղազարդ յերկնքում, այլ Բուդայի պարիսպների տակ:

— Մենք ի՛նչ գործ ունենք այդ թնդանոթների հետ, կոլեգա: Մի՞ԹԷ մեզ համար մ՛ենուչն չե: ԹԷ ո՞վ կհաղԹի,—հեղնանքով հայտնեց նրան խոսակիցը:

Պյոտրը չկարողացավ տեսնել նրա դեմքը, նա կանդնած եր սավերի մեջ:

— Վո՛չ, միևնույնը չե,—տաքացավ Կինդեն:—Կարելի յե անտարբեր լինել այն բանի նկատմամբ, ԹԷ ո՛վ և նստել վրիս. բայց յերբ տուրուդմբոց և բարձրանում, ԹԷ ով պիտի նստի վրիս, յես ապուշի պես ձեռներս չեմ ծալի ու անտարբեր նայի, ԹԷ ո՛վ կհաղԹի, այլ ինքս կծեվիմ նրանց:

— Ճիշտ է: Իսկ ով ձեռքդ կբռնի, նա օրիկա յե,—պաշտպանեց Կինդելին մի խոզուտ ձայն:

— Արդյոք, դուք չի՞ք կարծում, կոլեգա Կինդե,—անվրդով, առաջվա ծաղրական տոնով չարունակեց աստղաբաշխուԹյան պաշտպանը,—արդյոք, դուք չի՞ք կարծում, որ ժամանակը հարմար և պրոլետարիատի դիկտատուրա հայտարարելու համար:

— Այդ յերբվանի՞ց դուք զարձել եք այդպես ռադիկալ: Զեղ չի՞ հետաքրքրում այն բոլորը, ինչ դիկտատուրա չե: Բայց մի՞ ԹԷ դատարկ բան և, որինակ՝ բացել բանտերը: Կամ զենք մի՞ ԹԷ դատարկ բան և, որ ինակ՝ բացել բանտերը: Կամ զենք ձեռք բերելը: Մի՞ԹԷ կարևոր բան չե՝ դումարել հասարակական ժողով, վորպեսզի բանվորը բացահայտորեն համոզվի, որ մենք չատ ենք: Կամ ազատ կերպով վիճել քաղաքական ու տնտեսական դրության մասին, խոսել Ռուսաստանի մասին: Դա նույնպես դատարկ բան և ձեզ համար, հա՞: Առանց դիկտատուրայի նույնպես կգտնվեն այնպիսի բաներ, վորոնց համար արժե կռվել: ՑեԹե կամենալու լինենք նույնիսկ ձեր տեսակետի վրա, պետք է ընդունել, որ այդ «մանր-մունր» բաները ճանապարհ են բացում դիկտատուրայի համար: Ի դեպ, յես չգիտեյի, ԹԷ միակ բանը, որի հետ դուք հաշտվում եք, դիկտատուրան և:

— Իմ վոչ մի խոսքով, կոլեգա, յես իրավունք չտվի ձեզ՝ մեղադրելու ինձ այդ բանի մեջ: Ցես պնդում եմ ճիշտ դրա հակառակը: Վո՛չ ժամանակը, վո՛չ հանգամանքները...

— ՎոստիկանուԹյունը! Ջոկատայինները!

Մի վայրկյանում ցրվեց մարդկանց այդ խումբը: Փողոցի մեջտեղում կանգնած եր ընդամենը հինգ մարդ:

— Վո՞րտեղ են նրանք,—չչուկով հարցրեց Կինդեն, գլուխը ներս քաշելով ուսերի մեջ, կարծես՝ նա ուղում եր ավելի պակաս նկատելի լինել մոտեցող թշնամու համար:

— Վոչ վոք չի գալիս: Հա՛, հա՛, հա՛: Ցես ուզում եյի վերջ դնել այդ հիմար վեճին,—թավահնչուն ասաց նույն խըռպոտ ձայնը:

Պյոտրին ծանոթ թվաց նա: Պյոտրը դուրս յեկավ դարպասի տակից և ուղիղ գնաց դեպի այդ մարդիկ:

— Կամա՛ց, կամա՛ց,—թշշաց Պյոտրի վրա կենդրեն, ջլապինդ, լայնաթիկունք և, ինչպես Պյոտրը նկատեց, չիկահեր, պեպենոտ դեմքով մի յերիտասարդ, իրենից մի յերեք տարով մեծ:—Կամա՛ց, կամա՛ց, ո՞ւր այդպես զառը ու զոռով:

Փախուստի հաջողությունը պինու պես խփեց Պյոտրի գլուխը, իսկ այդ րոպեին լսած վեճը վերջնականապես չշմեգրին նրան: Պյոտրին միանգամայն բնական եր թվում, վոր աերբորից չնչահեղձ քաղաքում ընկերները հենց այդպես կդիմավորեն իրեն փողոցում՝ բարձրաձայն վողջույններով:

— Ցես փախա Ուլպեչոի բանտից,—ասաց նա այնպես հասարակ, սովորական կերպով, կարծես՝ հայտնում եր, վոր վերադառնում է արտաժամյա աշխատանքից:

— Նա հարբա՞ծ է, ի՞նչ է, թե...

Գրպանի ելեկտրական լապտերի լույսը մի վայրկյան սոդաց, անցավ Պյոտրի յերեսի վրայով:

— Տե՛ր իմ, բացականչեց նույն խռպոտ ձայնը:— Չի կարող պատահել:

— Ի՞նչ է, կամերադ Սարո: Հուսամ...

— Մի՛ կատակիր, Կենդե,—խոսիվ ընդհատեց նրան Սարոն:—Վերարկուդ հանիր և տուր ընկերոջը:

— Ի՞նչ խելառություն,—դիմեց Սարոն Պյոտրին:—Դե՛հ, գնանք:

Հասկանալով, վոր Սարոն հանաք չի անում, Կենդեն անտրտունջ հանեց իր վերարկուն և տվեց Սարոյին: Վերարկուն Պյոտրի համար և՛ լայն եր, և՛ կարճ, սակայն, այսպես թե այնպես, ծածկում եր նրա ամառային կեղտոտ զգեստը:

— Յոեսություն, կոլեգաններ: Մնա և դու, Կենդե: Իսկ հիմա՝ չո՛ւտ, և Սարոն թևանցուկ բռնեց Պյոտրին:

— Դուք վո՞րտեղ կորցրիք ձեր առողջ բանականությունը,—հարցրեց Սարոն, յերբ նրանք արդեն գնում եյին բուլվարով:—Կացեք, տեսնենք, հո չե՞ն հետևում մեզ... Վո՛չ: Ցերևում է, Կենդեյին հաջողվեց պահել տղերքին: Ինչպես համարձակվեցիք դուք յերևալ այստեղ, վորտեղ չպիկնեերն ավելի յեն, քան րնկերները: Մանավանդ այսօր: Կատարյալ խելագարություն: Ցեվ բացերայ դեռ հաղորդում եք, թե... Մի՞թե կարելի յե այդպես:

— Ցես տեսա, վոր նրանք չվախան...

— Յաչն այն է, վոր նրանք հաճախ վոչ մի հիմք չունեն վախենալու վոստիկանությունից: Եթե մարդ փախուստի չի դիմում, դա ամեն դեպքում չի նշանակում դեռ, վոր նա համաձակ է, անվախ:

— Հը՛մ... Դրա մասին յես չմտածեցի:

— Ցերևում է, դուք ավելի բախտավոր եք, քան վողջամիտ:

— Կարող է պատահել:

— Դիտեք, կոպտությունը հատուկ չե իմ բնավորությանը, բայց իմ վրա ունեցած զայրույթս թափեցի ձեր դլխին: Ցես ինքս այսօր դնացի պրոֆմիություն, հակառակ յեղած արգելքին: Ցեվ իրավացի կլինեն ընկերները, յեթե լավ գլուխն ինձ: Այսօր Բուդապեշտում չի կարելի այդպես աշխատել: Այդ չորս «կոլեգաններին» յես լավ եմ ճանաչում: Նրանք համակրում են մեզ: Բայց և այնպես... Մեր ժամանակներում մարդս կարող է յերաշխավորել ինքն իր համար միայն, այն էլ... Բայց ինչո՞ւ լուռ եք: Ցեթե ազմուկ չբարձրացնենք, այստեղ վոչ վոք ուշադրություն չի դարձնի մեզ վրա: Ասեք ինձ, թե ինչպես հաջողվեց ձեզ...

— Հաջողվեց,—կամաց պատասխանեց Պյոտրը:—Ցես ավելի բախտավոր եյի, քան վողջամիտ:

Հին մեծ սենյակում, լուսավորված կերոսինի լամպով, մառախուղ եր ծխախոտի թանձր ծխից: Ցերկար, հնամաշ պլիսե սփռոցով պատած սեղանի չուրջը նստել եյին տասը մարդ: Ձերմակեղենի լվացքի գոլորշին խոհանոցից խուժեց այնտեղ, հենց վոր ներս մտավ Պյոտրը: Բայց չուտով այդ գոլորշին հալվեց ծխախոտի կծու հոտի մեջ, խառնված սուրճի թունդ հոտի հետ:

— Պյոտր?!

Սեկերեչը գլուխը կորցրեց ուրախությունից: Աչքերի տեղ դատ փայլը դժգունեց մի վայրկյան: Փիչ մնաց՝ արտասվեր: Բայց դա րոպեական թուլություն եր միայն:

— Դու ի՞նչպես յեկար այստեղ, Կոլաչ,—համարյա խիստ տոնով հարցրեց նա:

— Փախա, յեղբայրս:

— Ցեվ ուղղակի այստե՞ղ: Ցես հարցնում եմ՝ դու ի՞նչպես աշատեղ յեկար:

Պյոտրը չհասկացավ հարցը: Սեկերեչի տոնը չվոխեցրեց նրան: Նա անոդնական նայեց Սաբոյին: Վերջինս դեռ հևում եր դիք սանդուխքով բարձրանալուց հետո:

— Ընկեր Կովաչին յե՛ս բերի այստեղ: Պատահեցի նրան փողոցում:

— Փողոցո՞ւմ,—չեչոով հարցրեց Սեկերեչը: Պարզ եր, վոր նա կասկածում եր:

— Ներքին Լեռնայա փողոցում,— չվոխված վինթինթած Սաբոն:

— Ահա թե ի՛նչպես: Ուրեմն, այնուամենայնիվ դու գնացիր Լեռնայա փողո՞ց:

— Ցնթե չզնայի, ընկեր Կովաչն արդեն նստած կլիներ Զրնեի փողոցում:

— Մի՞թե դու նախատեսել եյիր այդ, ի՞նչ ե:

— Դե՛, լավ, ե՛: Ախոռնա, հանձին քո, կորչում ե լավ քընելիչ: Ե՛, ի՞նչ կա վոր: Ե՛, յես գնացի այնտեղ: Դե՛, խոստովանում եմ, վոր սխալվեցի: Զե՞ վոր հիմա բանն այդ չե: Ընկեր Կովաչը Ուլպեչոի վոստիկանությունից փախել և ընդամենը մի քանի ժամ առանից առաջ: Ցեվ ահա նա այստեղ: Ցես բերի նրան այստեղ:

— Դիտես ի՞նչ, տղա...—Ծերունի Շուլցը գլուխն որորեց և այնպես ուժեղ խփեց Պյոտրի ուսին, կարծես փորձում եր իր ուժը:—Դե՛, լսիր...

Մնացած ընկերներին Պյոտրը տեսնում եր առաջին անգամ: Ամենքն էլ զործարանային բանվորներ եյին: Այն բարձրահասակը, յերևի, վորմնադիր ե: Իսկ նա ահա, վոր իր վիթխարի թաթը դրեց Սեկերեչի ուսին, հաղթաթիկունք, չեկ,—հավանորեն մեռադարձ ե, նրանից յերկաթի ոքսիդի հոտ ե փչում:

— Սպասիր: Մենք չտապ զործ ունենք: Սաբոյի հետ մենք հետո կխոսենք: Բայց ի՞նչ պիտի անենք մենք այս ընկերոջը: Մենք չենք կարող նրան թողնել այստեղ:

— Մի՞թե յես խանգարում եմ ձեզ՝ քննարկելու ձեր զործերը,—վիրավորված առնով հարցրեց Պյոտրը չեկ մեռադարձին:—Կարծեմ, յես արժանի չեմ վստահության:

— Անկասկած,—անվրդով համաձայնեց նա:—Անկասկած և

նաև այն, վոր վոչ վոք ձեզ չի հրավիրել այս նիստին, և դուք այժմ այստեղ բոլորովին ավելորդ եք:

Վիթխարի մարդու խոսքերի խստությունը մեղմանում եր նրա բարի, համարյա մանկական ժպիտով: Ժպիտը պայծառություն եր տալիս նրա լայն, դուրս ցցված այտոսկորներով դեմքին: Պյոտրն ուզում եր պատասխանել կոպտությամբ, բայց այդ ժպիտը զինաթափ եր անում նրան: «Իհարկե, ըստ եյության, նա իրավացի յե»,—մտածեց Պյոտրը:

— Ուրեմն, ի՞նչ պիտի անեմ յես, ընկեր: Մի տեղ, մի դործի հետ յես պիտի կապվե՞մ, թե՞ վոչ:

— Հանգիստ յեղեք: Ձեզ չենք թողնի փողոցում:

Սեկերեչը բռնեց Պյոտրի ձեռքը և բացելով պատառոններով քողարկված դուռը, ներս բռթեց նրան ինչ-վոր մութ խուց:

— Ցես չեմ կարող այս րոպեիս լամպ տալ քեզ: Կհանվես մթության մեջ: Անկյունում դրված ե բազմոց: Կուչ քնիր, վաղը կխոսենք:

Պյոտրը հագնված՝ ընկավ բազմոցին: Նա զդում եր, վոր սաստիկ հոգնած ե, բայց քնել չեր կարողանում: Շարան-չարան դալիս, անցնում եյին իրար հակադիր զանազան մտքեր: Մտքերի պես փոփոխական եր և նրա տրամադրությունը. մերթ հարի պես փոփոխական եր և նրա տրամադրությունը. մերթ՝ անմակում եր նրան անզուսպ ձիծաղի ցանկություն, մերթ՝ անբացատրելի կատաղություն: Փակ դռնից նրա ականջին եր հասնում Սեկերեչի սուր և Շուլցի հավասար, հանդիստ ձայնը, Սաբոյի խոպոտ բասը: Սարոն դրդռված բացատրում և մի բան: Խոսում եյին ամենքը միաժամանակ: Բայց Թավ բասը ծածկում, խլացնում եր ամենքին:

Դուռը բացվեց: Ներս մտավ Շուլցը:

— Խմիր մի բաժակ սուրճ, տղա: Դու մի՛ նեղանար մեզնից՝ քեզ ցույց տված ընդունելության համար: Խոստովանիր, հիրավի, աննկարելի հիմարություն և արել Սարոն, վոր քեզ վերհիրավի, աննկարելի հիմարություն և արել Սարոն, վոր քեզ վերցրել, բերել և այստեղ: Մենք ամենքս ուրախ ենք, վոր դու այստեղ ես, բայց բերել քեզ ուղղակի այստեղ... Նու, հուսանք, վոր ամեն ինչ լավ կվերջանա:

Թունդ, տաք, անուշարույր սուրճը Պյոտրի վրա ազդեց այնպես հաճելի, ինչպես դոզ, թարմացնող վաննան:

Մինչ խմում եր Պյոտրը, Շուլցը խոսում եր միայնակ: Բայց այսոր այլևս վոչինչ չեր պատկում Պյոտրի գլխի մեջ: Ցերը Շուլցը բերեց նրա համար յերկրորդ դավաթը, Պյոտրը պիտի լսեր

իր բոլոր ուժերը, որ գնի մի բան հասկանա իր ընկերոջ հոգեմտավոր ճառից:

— Դու հո դիտես,—ասում էր Շուլցը,—թե ինչպես մենք Անդրեյի հետ չարչարվում, գլուխ էյինք մաղում, որ կազմակերպվենք գործարաններում: Բայց ամբողջ կուսակցությունը կազմել բացառապես գործարանային այդ խմբակներից, մեմիայն նրանցից... Հո չի կարելի ջրի հետ միասին վաննայից դուրս շպրտացնել նաև յերեխային... Ցես վախում եմ, որ մենք վարվում ենք հենց այդպես: Շատ եմ վախում...

«Այժմ արդեն յես բնավ քնել չեմ կարող»,—մտածեց Պյոտրը: Ցեվ իսկույն քնեց:

Առավոտյան Պյոտրի մոտ յեկավ չեկ մեռադագործը: Բերեց նրա համար լվացվելու ջուր և նախաճաշ: Ժամը կանուխ էր: Պյոտրը սիրով կքներ ելի մի ժամ: Բայց յեկողը կանդնել էր վերաբերությով: Պյոտրը թռավ, կանդնեց:

Ծուցը լուսամուտ չուներ: Կիսաբաց դռնից ներս էր ընկել ազոտ լույս:

— Ի՞նչ նորություն, ընկեր:

— Ինձ կանչում են Ալեքսանդր Տերեչ,— պատասխանեց նա:—Ցես չեյի զարթեցնի ձեզ, բայց յես պետք է գնամ: Ինձնից բացի, բնակարանում վոչ վոք չկա: Դուք այն սենյակը դուրս գալ չեք կարող: Ցերեկով վարագույրները բաց են: Այստեղ էլ վոչ մի բանի ձեռք մի տաք:

Պյոտրը լուռ լսում և հրահանգը, գլխով հավանության չարժում և անում: Նրա բերանը լիքն է:

— Ե՛, իսկ հետո ի՞նչ,—հարցնում է նա, վերջացնելով նախաճաշը:

— Ցերեկ հոգնած եք, քնեք: Ցես գնում եմ աշխատանքի:

Տերեչը գնաց, վոչ մի խոսքով չհանդարկելով, թե իսկապես ի՛նչ աշխատանքի յե գնում ինքը:

Պատված բազմոցին, Պյոտրը դիտում էր կիսախավար խուցը: Սեղան, պահարան՝ կողպեքով փակված, բազմոց, վորի վրա ճգվել է ինքը,—ահա ամբողջ կարասին:

Հարևան սենյակից,—կիսաբաց դռնից,—յերևում է միայն սոճի վայրից հասարակ սեղանի մի ափը միայն: Սեղանը սեղան է, հազարավոր ուրիշ սեղանների պես, բայց և այնպես...

Պյոտրը պարզ պատկերացնում էր իրեն յերեկվա պատկերը:

Պլիսե սփռոցով ծածկված յերկար սեղան: Սուրճի գավաթներ: Դրանցից մեկը չուռ է յեկել, և թափված սուրճն իր հետքն է թողել կարմիր թավշի վրա: Թխթեղյա յերկու մոմնաման, լեփ-լեցուն պապիրոսի կրճոններով: Կրճոնները, մոխիր ափսեների մեջ:

Սեղանի չուրջն լինեն, գուցե՝ տասը մարդ (յերբեմն մարդ այդպես հաշվում է հարվածների թիվը, յերբ ժամացույց արդեն խփել է): «Այո՛, տասը,— վճռեց նա:—Սեղանի չուրջը նստած էր հինգ տասը մարդ»: Սեղանի այն ափին, վոր այժմ յերևում է Պյոտրին, նստած էյին, պինդ սղմված իրար, Սեկերնչը և Շուլցը: Սեկերնչի առաջ դրված էյին գրքեր, տետրեր, մի թերթ դրոտած թուղթ և աշխարհագրության քարտեզ: Սեկերնչի չափված յերեսը չաղացել է: Շուլցի յերեսում Տերեչն է: Ցեթե մարդ մոտենա նրան, կզգա, վոր նրանից գալիս է յերկաթի ոգի՝ գործարանի հոտ: Մնացածները... Պյոտրը պարզ պատկերացրեց նրանց իրեն: Մեկը բարձրահասակ է, յերևի՝ վորմնադիր: Մյուսը՝ ճաղատ, կուզիկ-կաշեգործ է: Ցերբորդը, ակնոցավորը, կամ գերձակ է, կամ խանութի ծառայող: Գուցե և մանր չինովնիկ:

«Ճաղատն անպայման կաշեգործ է»,—մտքի մեջ կրկնեց նա այնպիսի վստահությամբ, ասես՝ դա հայտնի յե նրան պաշտոնական փաստաթղթից:

Պյոտրը փորձում է ազատվել այդ մտքերից: Նա փորձում է հիշել վիճաբանությունները Վերայի սենյակում: Բայց, տարօրինակ բան. յերեկվա պատկերները, վոր այնպես հարևանցիորեն անցան նրա առաջից, մթագնեցին ու վանեցին վաղուց ի վեր նրան մտահոգ դեմքերը: Մարատնի համակրելի փիղուրը նրան թվում է աննշան Տերեչի հզոր իրանի կողքին:

«Դատա՛րկ բան,—մտածում է Պյոտրը:—Ի՞նչ գործ ունի այստեղ հասակը»:

Նա թռչում, նստում է: Նորից պառկում է:

— Դատա՛րկ բան: Դատա՛րկ բան,—կրկնում է նա:—Դատա՛րկ բան:

Նա կշտամբում է ինքն իրեն: Բայց դա չի օգնում: Մարատն: Վերա: Անդրեյ: Ցեվ նրա հիշողության մեջ խոհուն վերականգնում է տպարանային մեքենան՝ առանց տառերի: Տերեչն իր սպեցիֆիկ հոտով և յերեկվա ամբողջ կամպանիան, վոր այնքան խստիվ ընդունեց Պյոտրին, հիշեցնում էր նրան գործարանային ծինովնիկների մասին:

— Է՛հ–է՛հ...

Նա ձեռքերով չփոում է աչքերը, ասես՝ վանում է ինչ–որ տեսիլ:

— Է՛–է՛հ...

Փակում է աչքերը: «Զմռսածել վոչնչի մասին»:

— Վոչնչի մասին, վոչ մի բանի մասին, վոչ մի բանի...— կրկնում է նա:

Մեքենայաբար արտասանում է բառեր, իսկ մտքերն զբաղված են արքայական պուտչով: Տերեչը վոչ մի խոսք չասաց յուրակվա կովի հետևանքների մասին: Արդյոք յերկրից դո՞ւրս է վռնդված Թագավորը հենց այն մարդկանց կողմից, վորոնք ընդամենը մի քանի որ առաջ դատապարտեցին Պյոտրին «հանուն նորին մեծության», թե՞ Թագավորը հաղթեց և արդեն մտել է Բուդապեշտ:

Պյոտրը չուներ պահում, ականջ է դնում: Իզուր: Վոչ թնդանոթների վոռնոց, վոչ գնդացրերի ծլկլոց: Վոչինչ: Բակում նվագում է չարմանկան: Լուռ է ամեն ինչ...

Նրան զարթեցրեց Սեկերեշը:

Պյոտրը տրորեց աչքերը և իսկույն հիշեց յերեկվա պատկերը: Սեկերեշի դեմքն իսկապես չաղացել է:

— Դու հաստացել ես, Իոշկա:

— Զարմանալի չէ,—պատասխանեց Սեկերեշը:—Ջե՞ վոր յես այնքան շատ գործ ունեմ: Նորին մեծությանն ելի խուիկ ավին: Այդ Թագավորի բախտը չի բերում: Նրա գործերը մեր գործերից ավելի լավ չեն: Տարբերությունն այն է միայն, վոր նա իր ժամանացությամբ կորցրեց մի որ, իսկ մենք մեր խոսքակռվով՝ յերկու օր: Նրան հաղիվ թե հաջողվի՝ ուղղել իր զանցառությունը, իսկ մեզ համար նույնիսկ զանցառությունը դաս է միայն: Ջի կարելի այլևս աշխատել այնպես, ինչպես մենք ենք աշխատում: Սակայն, այժմ քեզ ամեն բանից ավելի պիտի հետաքրքրի քո սեփական վիճակը:

— Սխալվում ես: Ինձ հետաքրքրում է ամենից առաջ՝ կուսակցության վիճակը: Կուսակցության դրությունը...

— Կուսակցությա՞ն: Մեծազդրդ հայտարարություն: Այո՛: Ջափազանց մեծազդրդ:

Սեկերեշի դեմքը ձիզ յեղավ ստիպողական մի ժպտից: Ջքացավ դոհունակության արտահայտությունը:

— Կուսակցության դրությունն այնպես է, վոր առայժմ

մենք գուսակցություն չունենք: Ջկա, չի լինի և չի պարտք լինել, մինչև մենք ինքներս չվերստակցենք այդ դրությունը: Աղնիվ խոսք: Բանի եյությունն այդպես է հենց: Ջե՞ս հասկանում: Իսկ փաստերը խոսում են բավական վորոշակի: Դժբախտաբար, նույնիսկ չափազանց վորոշակի: Պեշտի մոտ կռիվ է: Ցեվ յեթե յես ուզում եմ կապվել Ուլպեշտի կամ Կիշպեշտի կազմակերպության հետ, Ուլպեշտ գնալ չեմ կարող: Իսկ յեթե նույնիսկ կարողանայի գնալ, միևնույն է, յես չեյի իմանա, թե ո՛ւմ պետք է դիմել: Ցեվ ահա յես պետք է նամակ գրեմ Վիեննա և դուշեմ՝ նամակս կհասնի՞ Ուլպեշտ, թե՞ չի հասնի: Իսկ յեթե հասնի, դա կզգաստի վոչ շուտ, քան յերկու–յերեք շարաթ անց: Ցեվ դուցե ավելի լավ կլինի, յեթե չհասնի: Վորովհետև, մինչև իմ տեղեկությունները կհասնեն Ուլպեշտի ընկերներին, նրանք այնքան կկորցնեն իրենց իմաստը, վոր նրանց կարող է թվալ, իբր հին–պատմական հետազոտությամբ եմ զբաղվում յես: Ցեվ ընկերներն իրավունք կունենան լսի թափելու իմ ինտելիգենտական հմար գլխին: Այսինքն՝ թե ժամանակ է գտել ինչով պատռելու: Աղնիվ խոսք: Լավ միտք արա, Պյոտր: Բուդայի մոտ հրաձգություն է: Ցերկու հազար բանվորներ մի կողմից, և դրանից մի քիչ ավելի խղճուկ ուսանողներ՝ մյուս կողմից: Ցեվ ոպերետային այդ զորքերը վճռում են յերկրի բախտը: Ցեվ գիտե՞ս այժմ արդեն կամ դեռ չի գրված այսպես, կամ ոեմ, հարցն այժմ արդեն կամ դեռ չի գրված այսպես, կամ ոեմ, հարցն այժմ արդեն կամ դեռ չի գրված այսպես, կամ նրանք, կամ մենք: Հարցը պատռում է այն բանի շուրջը, թե նրանցից ո՞վ: Այսուհանդերձ, մենք պետք է միջամտենք այդ գործին: Սոցիալ–դեմոկրատներն ուղղակի վախեցան, իսկ մենք անվերջ պատրաստվում ու պատրաստվում ենք: Միակ ժեստը, վոր մենք արինք այդ իրարանցման մեջ, դա մանիֆեստն է՝ կարլ Թագավորի ատորագրությամբ: Ընկերը Գյուլայը Թագավորի նունից ազատեց ազգային բանակի սպաներին Խորտիին տված յերդումից: Հրաշալի յե, այնպես չե: Աղնիվ խոսք... Ցավալի յե: Մինչդեռ կարելի յեր շատ լավ աշխատել այստեղ, Պյոտր: Աղնիվ խոսք... Ձեր գաղտավարությունը մեծ դեր խաղաց: Թեև պետք է խոստովանել, վոր յերբ իմացան ձեր լկանքների մասին, չարժման հետ իրենց կապը խզեցին համարյա նույնքան մարդիկ, վորքան մարդիկ, ընդհակառակը, մտան նրա մեջ: Ջերբակալությունից առաջ ձեր կատարած աշխատանքը, այսինքն՝ քո, Շուլցի, Անդրեյի աշխատանքը, ֆաբրիկաներում կազմակերպելու ձեր պլանը՝ հիանալի յեր: Մենք կիրառում ենք

այն կյանքի մեջ: Հեղափոխության պարտությունից հետո մենք առաջին անգամ այժմ միայն իրոք կանգնած ենք հաստատուն հողի վրա. մեր աշխատանքն ընդդրկել է մի քանի խոշոր ձեռնարկներ և առաջ է գնում լիընթաց... Ցեթե մենք ինքներս չփչացնենք մեր գործը: Ցես բնավ յերբեք միամիտ մարդ չեմ, բայց ամենազգաստ հաշիվն անգամ ասում է հոգուտ... Ե՛հ, լավ, չտարվենք պլաններով: Առանց դրան էլ յես վախում եմ, վաղը հրապարակ կգա մի նոր տեսություն, որի համաձայն, անբարոյական կհայտարարվի վոչ միայն հարգանքը հումգրական պրոլետարիատի հեղափոխական տրադիցիաների հանդեպ, այլև հավատը նրա ապագայի վերաբերմամբ:

— Ո՞վ, ո՞վ և այդպիսի ապուշ բաներ խոսում: Վոչ վոք:

— Ի՞նչ, դու կարծում ես, վոր դա յես հնարեցի՞: Կան փսլնքոտները, վորոնք ուրիշ բան ու գործ չունեն, բացի դիկտատուրայի հիշողությունը խայտառակելուց: Ցեվ դա դալիս է,—լավ գիտեը,—մեր սեփական շարքերից: Ով ընդունակ է պաշտպանելու մեր հեղափոխության տրադիցիաները, փսլնքոտները նրան անվանում են ավանտյուրիստ: Սկսում են անցյալից, վերջացնում են ապազայով: Կարծում եմ, այժմ՝ ամեն բան պարզ է քեզ համար:

— Դու զիտակցաբար թանձրացնում ես դույները, Իոշկա: Հանցանք չէ՝ քննադատել հեղափոխության սխալները: Ըստ իս, դա նույնիսկ մեր պարտքն է:

Սեկերեչն ուշադիր նայեց Պյոտրին:

— Ծանր որեր են սպասում քեզ, յեղբայր,—ասաց նա կամաց:

Ժամանակն անցնում էր սրտամաշ դանդաղությամբ: Վերջապես յեկավ Տերեշը, ավեց նրան մի կտոր յերշիկ ու հաց, մի քանի թերթեր և անմիջապես գնաց, ծածկելով իր յետևից դուռը:

Պյոտրը մոմի լույսով կարդաց հաշվետվությունները Բուդապեշտի ճակատամարտի մասին: Թագավորական զորքերի մի-ջուկը կազմում էր Ոստենբուրգի ջոկատը, վոր այնպիսի աղմուկ հանեց ամբողջ յերկրում՝ սպիտակ տերրորի առաջին ամիսներին: Զինված թշնամու հետ ընդհարվելու մոմենտին այդ ջոկատը ցույց ավեց իրեն այնքան վախկոտ, վորքան աներկյուղ էր հանձնարարել իրեն անզեն ու չղթայակապ բանվորների դեմ

պայքարելիս: Մինչդեռ, նրա հակառակորդներն էլ վոչինչ բան էլին, վորպես ռազմիկներ. չտապ զինավորված ուսանողներ և իրար հետ «մրցող» ջոկատների սպաներ: Ոստենբուրգյանները հույս էլին դրել ավելի շուտ թագավորի անձնավորության համայքի վրա, քան իրենց զենքի ուժի: Ցեվ յերբ պարզվեց, վոր թագավորի յերևան գալը չդադարեց սպասվող հրաշքը, նրանք թիկունք դարձրին: Հաղթողները յերկար ժամանակ չէլին վըստահում հավատալ իրենց հաղթությանը: Նրանք սիրտ չարին հետապնդելու փախչողներին: Բանը վերջացավ նրանով, վոր նրանք հեռվից ամբակոծում էլին թագավորական գնացքը:

Հարևան սենյակում լսվեցին ձայներ: Ցերկու տղամարդու, մի կնոջ ձայն: Խոսում էլին այնպես բարձր, վոր Պյոտրը կարող եր լսել առանձին խոսքեր. գնահատական, գործավարձային աշխատանք, աշխատավարձ, աշխատավարձ, աշխատավարձ...

Սենյակ մտավ Տերեշը: Պահարանից հանեց լինչ-վոր թղթեր և դուրս գնաց, բաց թողնելով իր հետևից դուռը: Մի վայրկյան Պյոտրը կարողացավ անսնել կոլորադլուխ մոտ քառասուն տարեկան մի տղամարդ, սև բեխերով: Նա նստել եր սեղանի առաջ, կռացած մի թերթ թղթի վրա: Թացելով մատիտը, նա մի բան գրեց թերթի անկյունին: Բարձրահասակ, չահել ուժեղ կինը դլխի վրայով նայում եր փաստաթուղթը: Կինը գրեց ձեռքը ընկերոջ ուսին: Ցեվ կարճ մատներով այդ լայն ձեռքն ամուր եր, ինչպես յերկաթ, վորով նա աշխատում եր:

Ցերը ընթրիքի ժամանակ յեկավ Սեկերեչը, Պյոտրն անակնկալ ասաց նրան.

— Լսի՛ր, Իոշկա, արդյոք չի՞ կարելի այնպես անել, վոր յես մնամ այստեղ: Անչուշտ, մարդկանց կարիքն այստեղ ավելի մեծ է, քան Վիեննայումծ

— Մանավանդ այնպիսի մարդկանց, վորոնց փնտռում է վոստիկանությունը և վորոնց շատ լավ ճանաչում է: Դու ուզում ես ամենքիս յենթարկել վտանգի՞: Այդպես չի՞:

— Ուրեմն, յես պիտի հեռանամ այստեղից:

— Ի՞նչ պատահեց քեզ, Պյոտր: Այսոր առավոտյան քո մըտքով անգամ չեր անցնում...

Պյոտրը լուռ եր: Ցեվ ի՞նչ կարող եր ասել նա: Սեկերեչը կծաղրեր նրան, յեթե նա ակնարկեր այն բանի մասին, վոր Տերեշից գործարանի հոտ և փչում. մինչդեռ, Մարսոնից պաֆրեչից գործարանի հոտ եր գալիս:

Սեկերեչը բերել էր յերեկոյան թերթերը.

— Ահա՛, կարդա,— և նա մատով նշեց այն սյունակը, վորտեղ տպված էր Բուդայի տակ ապանվածների ցանկը:

—«Դեպիպերիյ Ալդար, ուսանող-յուրիստ»,—կարդաց Պյոտրը Սեկերեչի մատնանշած ազդանունը:

— Գիտե՞ս, ո՛վ է դա:

— Կարծես մի տեղ լսած կամ այդ ազդանունը, բայց խոկապես վո՛րտեղ, չեմ հիշում:

— Յերևի, դու նրան ճանաչում եյիր Լեզոտաի կամ Բեսկիդ ազդանունով: Ա՛յո՛, այո՛: Ընկեր Բեսկիդը մեռավ հերոսական մահով, կռվելով հայրենիքի համար՝ նորին մեծություն թագավորի դրոշի տակ:

Սեկերեչը ծիծաղում էր, բայց այդ ծիծաղից չուրախացավ նրա դեմքը, ընդհակառակը՝ մթագնեց:

Յերբ հրաժեշտի ժամին Սեկերեչը սղմեց նրա ձեռքը, արցունքներով լցվեցին Պյոտր Կովաչի, կոմունիստի, պատահարներ շատ տեսած մարդու աչքերը: Նա ախորժում էր վոչ բնավ յերբեք նրա համար, վոր պետք և բաժանվի Սեկերեչից: Նա վաղուց սովոր էր ժամանակ առ ժամանակ ընկերներից անջատվելու անհրաժեշտության, վոր հետո նորից հանդիպի նրանց համաշխարհային հեղափոխության մի այլ ֆրոնտում: Դա սովորական բան էր: Բայց Սեկերեչի հետ ունեցած խոսակցությունից հետո,—դրույցը կարճ էր, նրանք միասին անցուցին ընդամենը յերկու ժամ,—համոզմունք դարձավ նրա համար այն, ինչը յերեկ նախազգացում էր միայն: Շարժման մեջ կատարվելու յեն մեծ փոփոխություններ, մասամբ արդեն կատարվել են նրանք: Նա սուտդ չդիտեր, թե ինչո՛ւմն են կայանում այդ փոփոխությունները: Զեխո-Սլովակիայից վերադառնալուց հետո, յերբ վագի պողոտայում նա տեսավ դործարանային ծխնելույզները, նրան իսկույն հասկանալի դարձավ, թե բանն ի՛նչումն է: Բայց այժմ նա զգում էր միայն, վոր դժվար և Տերեչին պատկերացնել կանացի հեծանիվի վրա՝ թռուցիկներ ցրվելիս, ինչպես դժվար կլիներ ոգտագործել Մարտոնին՝ աշխատավարձի պատճառով հայտարարված գործադուլի համար:

Կուսակցական գործերի մասին Սեկերեչից լսածը Պյոտրը դեռ լիովին չէր ըմբռնում, մարսում, բայց նա բնազդաբար հասկանում էր, վոր այս բոլոր փոփոխները նշանակում են շարժման նոր ժամաշրջան, նոր ետապ, նոր փուլ: Նոր քայլ, վոր տրամաբանորեն և որդանապես կապված է նախընթացի հետ: Նա տեսել էր և այն մարդկանց, վորոնք այդ նոր ետապում զգում են իրենց այնպես, կարծես իրենց տանը լինեն: Այո՛, այս բոլորը շատ լավ է: Այս բոլորը պետք և հանդուրժելի և վոգևորի: Բայց ահա այն, վոր ինքն այժմ չէր կարող մատնանշել այդ աշխատանքին, համակված ֆարբրիկայի հոտով, վորովհետև չափազանց շատ էր աշխատել առաջ,—անարդարություն էր: «Անարդարություն! Բայց ո՛ւմ կողմից: Շարժման արմատները գտնվում են ֆարբրիկաներում և գործարաններում: Դա ճիշտ է: Դա պետք և հենց այդպես էլ լինի: Հարց և ծագում. կարելի՞ յե արդյոք ինձ աշխատանք տալ գործարանում, սակայն այնպես, վոր վտանգի չենթարկվեն ընկերները: Վո՛չ, չի կարելի: Կարելի՞ յե արդի չենթարկվեն ընկերները: Փակած մի խավար, մութ դրոք ոգտագործել ինձ գործարանում: Անկասկածելի բան և, անշուշտ՝ կարելի յե: Այսուամենայնիվ, սարսափելի բան և, վոր յես պետք և հեռանամ հենց այդ մոմենտին...»:

Պյոտրի սիրտը նվում էր այնպես, ասես՝ գանակ եյին խրել նրա մեջ: Նա համարյա ատելությամբ էր մտածում Վիեննայի մասին, ուր պիտի փախչեր նա այժմ: Նա վախի զգացումով էր մտածում այժմ այն միջավայրի մասին, վորտեղ նա պիտի ապրեր, խորթ եյին թվում նրան այն ընկերները, վորոնց հետ պիտի աշխատեր: Ցեխ գաղնուբյան ու նախանձի զգացումով էր բաժանվում նա այն ընկերներից, վորոնք կարող են աշխատել այստեղ:

Նա չնկատեց, թե ինչքան ժամանակ անցավ Սեկերեչի հետ հրաժեշտի րոպեից մինչ այն րոպեն, յերբ գուռը ծեծեց Տերեչը: Նա չէր նկատել նույնպես, վոր մոմը վառվել, հանգել էր: Նոր մոմ վառեց և բազմոցի վրա գցեց մի հին չեմոդան:

— Այստեղ կա ամեն բան, վոր հարկավոր և ձեզ. կոստյում, ընթրամակեղեն, կոշիկներ: Ահա ձեզ անցագիր և դրամ: Բնակարանից դուրս կերթաք առանց իրերի: Իսկ գիշեր այս կտորով անց,—տեսնեք, չկորցնեք այն,—կայարանում՝ իրեր պահելու սենյակում կտանաք ձեր չեմոդանը: Նրա մեջ, բացի հին ճերմակեղենից, ուրիշ բան չի լինի: Դա յել տեսքի համար միայն: Հո չի կարելի տեղ գնալ առանց իրերի: Անկեղծարար ասած, չի կարելի տեղ գնալ առանց իրերի: Անկեղծարար ասած, յես ուրախ կլինեյի, յեթե դուք արդեն չոգիացած լինեյիք այստեղից: Մենք ապրում ենք ծանր օրեր: Այսօր խուզարկություն

և յեղել կենդանի մոռ,—հիշո՞ւմ եք այն մարդուն, վոր վերարկու տվեց ձեզ: Ոչինչ չեն դաել, բայց և այնպես նրան տարել են Զրինեի փողոց: Ահա ձեզ ձեր անցագիրը:

Պյոտրը վերցրեց անցագիրը և դրեց գրպանը, առանց նույնիսկ նայելու այդ փաստաթուղթը: Տերեչը զարմանքով մոխիկ արավ նրան, բայց բան չասաց:

— Գնացքը մեկնում է վաղն առավոտյան, տասից կես անց... Արևմտյան կայարանից,—ասաց նա բոլշեվիկյան պատուզայից հետո:—Ահա ձեզ դրամ, ընկեր:

— Շնորհակալություն,— պատասխանեց Պյոտրը:— Ձե՞րը պետք է գնամ յես:

Տերեչը նորից զարմացական նայեց նրան:

— Առավոտյան ժամը տասից կես անց, Արևմտյան կայարանից,—ասաց նա:—Վաղն այս ժամանակ դուք կլինեք Վիեննայում, ընկեր Կովաչ: Այնտեղ վերջապես, ինչպես վոր պետք է, լավ կհանգստանաք:

— Ձես կդերադասեյի՝ աշխատել,—ջղայնորեն ասաց Պյոտրը, մեջքը դեմ տված պատին և հայացքը սևեռած Տերեչին:

Նա նստած եր բազմոցին և խաղում եր աթոռի վրա դրած մոմի հետ:

— Վիեննայում աշխատանք կլինի,—ասաց նա կամաց:

— Գիտեմ: Բայց ինձ ավելի քաշում է հունգարական շարժումը,— համառորեն, համարյա թշնամաբար պատասխանեց Պյոտրը:

Տերեչը զարմանքով նայեց իր հյուրին:

— Հունգարական շարժո՞ւմը,—չեչաելով հարցրեց նա:— Լավ: Դուք ավելի հակում ունեք աշխատելու հունգարակա՞ն շարժման պրոցեսում,—կրկնեց նա իր հարցը:—Հիանալի! Ձեր ցանկությունն ինձ հիշեցրեց մի թանկագին ընկերոջ, վորից յես շատ բան սովորեցի: Նա սպանվեց Տիսսայի ափին՝ դիկտատուրայի անկման որը: Նրա ազգանունն եր Դեմչենկո: Բանվոր՝ Խարկովից: Նա գերի յեր ընկեր Հունգարիայում դեռ տասնուչորս թվին: Ձես ու նա ծառայում եյինք կարմիր բանակում՝ մի վաշտում: Վաշտը բաղկացած եր գյուղացիներից, և մեր տղերքը ծիծաղում եյին Դեմչենկոյի վրա՝ նրա հունգարական վատ արտասանության համար: Նա վոչ մի ուշադրություն չեր դարձնում այդ ծաղրանքներին: Թող վորքան ուզում են՝ ծիծաղեն, միայն թե լսեն: Ցավ մենք, մեզ համար աննկատելի ձևով, նրա

հետ անցանք մի ամբողջ դպրոց: Այսպես ահա, ընկեր Կովաչ, մի բոլշ համբերություն! Դա վերաբերում է ձեզ: Հիշյալ Դեմչենկոն շատ անգամ ասպացուցում եր մեզ, վոր Տիսսայի ափին կռվելով ռումինացիների հետ, նա, իսկապես ասած, պաշտպանում է Խարկովը՝ Վոլգայի ափին կանգնած ռուս սպիտակ գվարդիականներից: Այն ժամանակ դա մեզ թվում եր ծիծաղելի: Բայց յեմ կարծում եմ, ընկեր Կովաչ, դուք լիովին համաձայն եք ընկեր Դեմչենկոյի հետ, վոր իր հայրենի քաղաքը պաշտպանում եր Տիսսայի մոտ:

Տերեչը խոսում եր պարզ, հասարակ, բայց համոզեցուցիչ:

— Ասեք ինձ, ընկեր Տերեչ,—խոսեց վերջապես Պյոտրը,— դուք ճանաչո՞ւմ եյիք ընկեր Պոյտեկինին: Դանիել Պոյտեկին:

— Այդ ազգանունը լսել եմ, բայց անձամբ չեմ պատահել իրեն:

— Ափսո՛ս:

— Ափսո՛ս,—համաձայնվեց նրա հետ Տերեչը:

Առավոտյան արագընթաց գնացքով Պյոտրը մեկնեց Բուդապեշտից և յերեկոյան արդեն Ավստրիայի մայրաքաղաքումն եր:

Թագավորական պուտչի և հարևան պետությունների մոբիլիզացիայի հետևանքով առաջացած իրարանցումը, զգալիորեն թեթևացրին սահմանն անցնելու դործը: Թվում է պարադոքս, բայց առանձնապես խիստ կոնտրոլն ազնում եր այն մարդկանց դործին, ովքեր ուզում եյին ծլկվել: Բազմաթիվ ջոկատներ վրոնում եյին ամենաբազմապիսի «ուղորդներին»: Անհնարին եր այդ աշխատանքի մեջ մացնել այն սիստեմը, վոր սահմանվել եր կոնտրլեղացրած ապիտակ տերորի յերկամյա ռեժիմով:

Պյոտրը գնում եր ֆիումեյական անցագրով: Այն որերին դա դեռ հազվադյուտ յերևույթ եր: Իտալիայի և Յուգոսլավիայի դիվանագիտական պատերազմը Ֆիումեյի համար՝ «պատմական» մեծ Հունգարիայի այդ մեկ ծովային նավահանգստի համար՝ դանվում եր իր ամենաուաք ստադիայում: Տվյալ սիտուացիայի պայմաններում դրանից ավելի լավ անցագրի մասին Պյոտրը յերազել անգամ չեր կարող: Նա կարող եր շատ ազատ խոսել հունգարներեն, բայց և այնպես համարվում եր ոտարերկրացի՝ «ոտար պետության» հպատակ, վոր վոչ մի առնչություն չեր ունեցել թագավորական պուտչի հետ:

Պյոտրը գնում եր յերկրորդ կարդով: Նրանից բացի, նոր

նորոգած կուպեյի վարձամ կաշվե բազմոցի վրա նստել եյին հաստակազմոր մի պարոն և սևազգեստ տղմոր ջահել մի տիկին:

Հաստակազմոր պարոնը, ինչպես յերևում եր, խոսքի սիրահար եր:

— Դուք, տիկին, յեթե չեմ սխալվում, տղմո՞ր եք,—դիմեց նա իր ուղեկցուհուն:

Տիկինը գլխով արավ դրական չարժում:

— Յերեխա՞դ, թե՞ ամուսին:

— Վորդիս:

— Սարսափելի յե,—կարեկցությամբ հառաչեց հաստա պարոնը և քիթը մաքրեց հսկայական ձյունանման սպիտակ թաշկինակով:—Կատաստրոֆա՞, թե՞ հիվանդություն:

— Հայրենիքի համար,—պատասխանեց սևազգեստ տիկինը, թաշկինակը մոտեցնելով աչքերին:

— Սոսկալի հարված,—կարեկցաբար արձագանքեց պարոնը:—Իսկ վո՞ր կողմում, ի՞նչ բանակում, յեթե թույլ կտաք հարցնել:—Թաղավորակա՞ն, թե՞ ազգային զորամասերում:

— Որինական թագավորի զորքերում,—պատասխանեց տիկինն անսպասելի խիստ ձայնով:

— Ճիշտ է: Զարհուրանց ճիշտ,—խրախուսեց պարոնը:—Թագավորին մատնել, տալ թշնամու ձեռքը?! Գերի թագավորին հանձնել անգլիական զրահանավին?! Ցեխ կծիծաղելի այն մարդու յերեսին, ով յեթե համարձակվեր օրանից դեռ մի քանի որ առաջ պնդել, թե այդ վարմունքին ընդունակ և հունդարական ազգը, վոր միշտ հռչակված եր հավատարմությամբ հանդեպ թագավորի: Իսկ այժմ... մենք պիտի ամաչենք, ամաչենք,—ասում եր նա, ուղղակի դիմելով Պյոտրին: Իր թագավորին, որինական թագավորին...

Փոքրիկ կայարաններից մեկում յերկու ժանդարմներ տարան ցնցոտիներ հագած յերեք գյուղացու: Նրանք անցան գնացքի մոտով: Մի գյուղացի դժվարությամբ եր քարշ տալիս վոտները:

— Ցերևի, մխալետականներ են, մոնտրխիտներ,—ասաց ակնոցավոր պարոնը:—Այժմ ամբողջ յերկրում բռնում են, ձերբակալում թագավորին հավատարիմ մարդկանց:

Նայելով այդ դժբախտներին, վորոնք դժվարությամբ եյին քայլում հաստակազմոր, դիրուկ ժանդարմների առջևից. Պյոտրի

մեջ բուռն ցանկություն առաջ յեկավ՝ հիմարացնել իր հարևանին:

— Այն կողը վոչ այլ վոք ե, յեթե վոչ ինքը՝ կոմս Անդրասին,—ասաց նա կես ձայնով:

Հաստ պարոնը նայեց Պյոտրին զարմանքով: Կարծես՝ նա ուզում եր բացել բերանը, բայց չասաց վոչ մի խոսք:

Պյոտրը հասկացավ, վոր ինքն արավ աննկերելի հիմարություն: Հենց վոր գնացքը չարժվեց, նա գնաց վագոն-ռեստորան և մինչև սահմանն այլևս չվերադարձավ կուպե:

Սահմանագլխին փաստաթղթերի ստուգումն անցավ Պյոտրի համար բարեհաջող: Մինչդեռ, ակնոցավոր պարոնը ձերբակալվեց:

Նրա չեմոդանն ուներ կրկնակի հատակ: Նա մաքսանենգ վալյուտա յեր տանում Ավստրիա:

Ավստրիա! Ավստրիական ազատ հանրապետության ազատ յերկիր! Գնացքը մոտենում և կարմիր վիեննային:

— Ձեյի՞ք կամենա ավստրիական դրամ: Հունգարական մենդեն փոխանակում եմ ավստրիական քրոնի...

Այս խոսքերով վողջունեց Պյոտրին ավստրիական առաջին կոնդուկտորը: Ցեվ մինչև նրանք կհասնեյին Վիեննային, Պյոտրին արին տասից վոչ պակաս այդպիսի առաջարկություն: Գնացքում այլևս վոչ վոք չեր խոսում թագավորական պուտչի և նրա հետևանքների մասին, ամենքի խոսակցության որյեկտը վալյուտան եր, վալյուտայի արժեքնի կորագիծը:

— Ավստրիական քրոնն ընկնում է:

— Դոլլար, ֆունտ, ֆրանկ, լեյ, դինար, գլոտիյ! Դոլլար, դոլլար, դոլլար, դոլլար!...

— Դոլլար, դոլլար, դոլլար!... Թխթխկացնում եյին գնացքի անիվները:

ԳՈՒՄԱՐ

Ծանր, թանձր նոյեմբերյան մառախուղն անթափանցելի պատ պես կտրեց յերևկոյան քաղաքի բազմահազար բազմագույն կրակների ճանապարհը. վիեննայի փողոցների ելեկտրական լապտերների հրեղեն աչքերն անկարող են հաղթահարելու անագեղ այդ խոնավ պատնեշը: Թափընթաց լուսարձակը միայն կարողացավ կտրել, ուղի բացել իր համար: Ծավարն ակոսող այդ տաք

Նապալից լույսի խուրձի մեջ ընկնում էին մի վայրկյան՝ մեկ այստեղ, մեկ այնտեղ հղմտահալած ամպեր և իսկույն նորից սուզվում, չքանում էին խավարի ծովում:

Մառախուղն իջնում, տարածվում է: Ոդը հագեցած է խոնավությամբ: Փողոցի լապտերների և ավտոմոբիլների հրավառ աչքերն առկայծում են, ասես՝ կաթնագույն ապակիների միջից:

Վիեննա: Արևելյան կայսրան:

Ավտոմոբիլ ավտոմոբիլի յետևից: Նոր հորինված-քներով մեքենաներ՝ ամերիկյան, ֆրանսիական, իտալական:

Բացգույն մահուդից ճմեռային վերարկուներ՝ անսովոր մեծ, մորթե ոճիքներով:

«Ինչպես զուգվել է Վիեննան»,—մտածում է Պյոտրը:

Հյուսիսային քամի:

Նրանք, ո՛վքեր ստիպված են ման գալու առանց վերարկուների,—իսկ այդպիսիները շատ են,—կուչ յեկել, կպել են չեն-քերի պատերին:

Քամին պայքարում է մառախուղի դեմ:

«Դեռ կես տարի սրանից առաջ Վիեննայում չկային ցնցոտիներ հագած այնքան մարդիկ»,—մտածում է Պյոտրը:

Նա գնում է յերեկոյան թերթ:

«Կարլ Հաբսբուրգը՝ անգլիական գրահանավի գերի···»:

«Ավստրիական էրոնը շարունակում է ընկնել···»:

Քամին ուժեղանում է: Ասես՝ մարդուս յերեսին խփում են սառցե լաթով: Ելեկտրական ռեկլամները կարում, մանում են մառախուղի ճեղքված-քների մեջ:

Պյոտրը վոտով գնում, անցնում է Մարիահելֆեյով:

Հենց վոր նա վոտք է դնում այդ քաղաքի քարերի վրա, նրան համակում է մի ուժեղ հուզմունք: Ի՞նչ է կատարվում Վիեննայում: Ի՞նչ դրության մեջ է ավստրիական չարժումը, հունգարական եմիգրացիան: Մի մագնիս թողեց, արձակեց նրան, անմիջապես ձգեց, քաշեց մյուսը:

Վիեննա! Վիեննա:

Շքեղ խանութի լուսամուտ ցուցափեղկի առաջ նա նայում է թերթը:

«···Ոտտո Բաուերի ֆինանսական պլանը: Սոցիալ-դեմոկրատական առաջնորդը մտցնում է մի նախագիծ, վորը կարող է լուծել ստեղծված դրությունը»:

«··· Սկլոկա հունգարական կոմունիստների չարքերում: Փոթորիկ՝ մի բաժակ պղտոր ջրի մեջ»···

Պյոտրը թերթը ճմլտում, կոխում է գրպանը և վոչ մի ուշադրություն չդարձնելով մառախուղի, քամու, ավտոմոբիլների ու տրամվայների վրա, համարյա վազելով չտապում է «Պրոլետար» կոմունիստական ժուրնալի խմբագրատուն:

— Կովաչ! Մի՞թե այդ դուք եք: Կովաչ, սիրելի բարեկամ! Ա՛յ, հիանալի բան! Ա՛յ, սքանչելի բան! Ցավ ինչքան ի դեպ! Անսահման ուրախ եմ ձեզ տեսնելուս համար:

Պյոտրն առաջ էլ բազմիցս պատահում էր նիհար, նրբաղեմ, դորշաչյա, լոչականջ այդ յերիտասարդին, վորն այժմ այդպես սիրալիր ընդունում է նրան «Պրոլետար» ժուրնալի խմբագրատանը: Բայց նրա ազգանունը չգիտե: Իսկ այն բանից հետո, յերբ նա գրկեց Կովաչին, անվանելով նրան «սիրելի Պյոտր», անհարմար էր հարցնել· «ինչպե՞ս է ձեր անունը»:

— Նստի՛ր, սիրելի Պյոտր, և պատմիր, թե ո՛ւմ կամ ի՛նչ հանգամանքի յենք պարտական մենք այսքան անակնկալ և այդ իսկ պատճառով՝ մեր այդքան մեծ բախտով:

— Ցես հենց նոր յեկա,—պատասխանեց չչմած Պյոտրը և գրպանից հանելով թերթը, դրեց չիլհահեր պատանու առաջ:—Բացատրիր, թե ի՞նչ է նշանակում այս:

Շիլհահերի աչքն ընկավ այն հաղորդագրության վրա, վոր այնպես վրդովել, հուզել էր Պյոտրին: Նա կարդում էր, ջղայնորեն կրծելով վարի շրթունքը, ձեռքով ուղղելով մազերի գեղեցիկ սանրվածքը:

— Ա՛յո՛, դա այդպես է, սիրելիս,—ասաց նա, չտապ կարդալով հոդվածը:—Բանն իսկապես վոր այդպես է: Առնետները հեռացան չոգենավից: Այդպես է բնության որենքը,—այստեղ նա ժպտաց:—Դու պետք է գիտենաս, վոր ընկղմվող չոգենավից առնետները դուրս գալիս, թափվում են ջուրը: Բայց տվյալ առնետները դուրս գալիս, թափվում են ջուրը: Բայց տվյալ դեպքում կատարվել է փոքրիկ թյուրիմացություն: Ջրասույզ նավն իջնում էր ջրի տակ, իսկ առնետները վախեցած, լրը նավը խորտակվում է, թափվեցին ջուրը: Հա-հա-հա! Թափվեցին ջուրը··· Ե՛հ, սատանան նրանց հետ: Նավը կբարձրանա ջրի յերեսին, քիչ առնետներ կլինեն նրա վրա: Կորուստը մեծ չէ, այնպես չէ՞:

— Թող կատակը, ընկեր! Ցավ լուրջ խոսենք,—ընդհատեց

նրան Պյոտրը՝ վոչ այնքան բարեկամաբար։—Ի՞նչ է կատարվում կուսակցության մեջ։ Ո՞ւմ հետ կարող եմ չես խոսել։

— Առայժմ դուք խոսում եք ինձ հետ,—նեղացավ չիկահերը։—Ինչպես արդեն ասի քեզ, կուսակցության մեջ տիրում է ճղնաժամ։ Գլխովին փախուստ։ Մոչոր դեմքերից չատերը՝ նախկին ձախ սոցիալ-դեմոկրատներ՝ հեռացան կուսակցությունից։ Վոչ մի իսկական կոմունիստ չի մղրա նրանց կորուստը։ Ես առհասարակ չեմ հասկանում, ինչպե՞ս կարելի չեր կարծել, որ հաստատորի մեկը, ինչպիսին է Լանդլերը, կարող է լինել լավ կոմունիստ։

— Սհա թե ի՞նչ։

Պյոտրն այլևս չեր լսում չիկահերին։ Իսկ նա չարունակում եր չաղակրատել։ Պյոտրը նայում եր պատին փակցրած քարտեզը՝ Խորհրդային Ռուսաստանի քարտեզը։ Մտածում, դուշակում եր, թե ի՛նչ կարող եյին նշանակել նրա վրա գծած բաց-կանաչագույն այդ մեծ բծերը։ Քարտեզի վրա կախվել եյին կեղտոտ-դեղին պատատոների պատառոտուն ծվենները։

— Կուսակցական ղեկավարներից չես ո՞ւմ հետ կարող եմ խոսել,—համառաբար կրկնեց Պյոտրը։

— Առաջնորդներից բացի, դու ուրիշ վոչ վոքի հետ չե՞ս ուզում զբաղվել, հա՞։ Ե՞հ, ինչ արած. լավ։ Կարող ես խոսել Գայդոչի հետ։

— Վո՞րտեղ և ե՞րբ։

— Վաղը, առավոտյան տասին։ Այստեղ՝ խմբագրատունը։

— Շնորհակալություն։

Փողոցում միայն Պյոտրը հիշեց, որ չգիտե վոչ մի հասցե և դիչերելու տեղ չունի։ Չեր ուզում վերադառնալ խմբագրատուն։ Նա վորոշեց գնալ «Կորկ քաղաքի բյուրզերմեյստերի անվան» ճաշարանը, ուր կես տարի առաջ յեռանդով հաճախում եյին եմիգրանտները։ Պաշտոնապես ճաշարանը հայտնի չեր ուրիշ անունով։ Հունգարացի եմիգրանտները ճաշարանին տվել եյին այդ մականունը վո՛չ այնքան հարդանքի զգացումից՝ հանդեպ հռչակավոր իրլանդացի նացիոնալիստի, վորը մեռել եր, ինչպես հայտնի չե, վաթսունորյա հացադուլից հյուծված,—վորքան այն պատճառով, որ այդ հերոսի վախճանը չափազանց նշանակալից կերպով բնորոշում եր ճաշարանի խոհանոցի վոքակը։

Ցինիկ այս հանաքի տակ չար դիտավորություն չկար։ Վոչ վոքի մտքով չեր անցնում վիրավորելու իր պատում մահացած իրլանդացուն։ Ցուրաքանչյուր մարդ ուղղակի ուզում եր այս կամ այն ձևով ատիպել, վոր թեկուզ մի փոքր բարձրավեյին իր սնունդը։ Դժբախտաբար, այդ միամիտ փորձը դրական վոչ մի արդյունք չտվեց։ «Կորկի բյուրզերմեյստերը» պատկանում եր բազմաթիվ այն ճաշարանների թվին, վորոնք կազմակերպված եյին բարեգործական միջոցներով։ Այդ ճաշարանների հաշվի ճարպակալում եյին կազմակերպիչ-կապալառուները և նրանց նման ուրիչ չատերը, բայց ավա՛ղ, ամենևին հոգատարությամբ ճարպակալելուց զգուշանում եյին նրանք, վորոնց մասին իրրև թե մտածում եր այդ բարեգործությունը։ «Կորկի բյուրզերմեյստերը»-ը լիովին արդարացնում եր իր մականունը։

Ալլո! Կովաչ! Այդ դո՞ւ չես, յեղբայր, թե՞ քո վոգին։ Չե՞ վոր դու պետք է նստած լինես Հավաքի բանտում, Պյոտր։

Պյոտրը չսխալվեց. նա «Կորկի բյուրզերմեյստերում» պատահեց ծանոթների։ Միանգամից յերեքին։ Ձիշտ է, ապգանունով նա ճանաչում եր միայն մեկին՝ ժամադործ Շիմոնին։ Մյուսը, բարձրահասակ մի յերիտասարդ, ձվաձև գլխով ու պրոֆեսորի տեսքով, հայտնի չեր Պյոտրին, վորչափով սա տեսնում եր, թե ինչպես նա պատսպ եր գալիս Արվաթի չուրջը։ Նա չկարողացավ հիշել, թե վո՛րտեղ է պատահել չիկահեր աղջկան, բայց վերջինիս կերպարանքը զարմանալի ծանոթ եր թվում նրան։ Յերեքն էլ նստած եյին մի սեղանի առաջ։ Ազատվեց մի տեղ, Պյոտրը նստեց նրանց մոտ։

— Այսպես ուրեմն, ի՞նչ համարել քեզ. արդյոք կենդանի մա՞րդ, թե տեսիլ, ուրվական։

— Համարիր թեկուզ ուրվական, բայց թող միայն, վոր կարգին ճաշեմ։

— Այժմ ահա չես վերջնականապես ճանաչում եմ քեզ։ Բանն այն չէ, վոր դու սիրում ես ուտել և ուտել համեղ,—այդ հատկությունը համամարդկային է, այսպես ասած՝ վերդասահատկությունը կարգային յերևույթ, այո՛... Ճանաչում եմ քեզ մանկական այն նախկնությունից, անսահման այն ոպտիմիզմից, վորով դու հույս ունես կարգին ճաշել «Կորկի բյուրզերմեյստերում»։

«Կորկի բյուրզերմեյստերը» զետեղված եր յերեք պատուհանով մի մեծ սենյակում։ Դրված եյին այնտեղ քսան փոքրիկ սեղաններ։ Ցուրաքանչյուր սեղանի չուրջը՝ չորս աթոռ։ Սպասավորում եյին հաճախորդներին չորս կելներչաներ, վորոնք խու-

սանավոտ եյին նեղ միջանցքներով, վո՛չ առանց ռիսկի: Ցերկու գաղեղջյուրների աղոտ լույսը պայքարում եր խավարի դեմ (բավական) թույլ կերպով:

Մինչ Պյոտրը սուզ եր ուտում, ակնոցավոր յերիտասարդը, —նրան ընկերները կանչում եյին Գոմաննայ,—անլռելի ճըրթ-ճըրթում եր, լայնորեն չարժկտելով իր չափազանց յերկար թեվերով:

— Կուրո՞ւց, թե լարանց[1]),—դիմեց նա Պյոտրին, ընդհատելով իր դասախոսությունը «Կորկի բյուրդերմեյստերի» խոհարարական արվեստի սկզբունքների մասին:

— Ցես չեմ հասկանում ձեր հարցը,—և իսկույն գլխի ընկավ, վոր Գոմաննայը, հավանորեն, ուզում ե պարզել իր դիրքը կուսակցական պատակառումների մեջ:—Այստեղ դրա մասին խոսելու տեղը չե,—անակնկալ վերջացրեց նա:

Գոմաննայը չզլացավ նշելու Պյոտրի անհետևողականությունը:

— Հարցը չե՞ս հասկանում, բայց գիտես, վոր չարժե այստեղ խոսել այդ տեսակ բանների մասին: Տրամաբանական ե, այնպես չե՞... Ի՞նչ կասեք դուք, Լենկե,—հեգնաժպիտ հարցրեց նա բլոնդինկային: Ցեվ դիմելով Պյոտրին, ավելացրեց:— Մենք գաղտնի դիվանագիտություն չենք խաղում: Մենք գաղտնապահության հիմք, պատճառ չունենք:

Գոմաննայը թաչկինակով սրտրեց ակնոցները: Փորձարկող հայացքով նայեց Պյոտրին: Իսկ Պյոտրը հանկարծ հասկացավ, թե ինչո՛ւ իր հարևանուհին թվաց իրեն ծանոթ: Նա նման եր Վերային: Դեմքի չրջագիծը, ճիշտ ե, մի փոքր ավելի կլոր եր, բայց աչքերը, բերանը, մազերը... Պյոտրը հարցրեց, հո պատահմամբ աղդականներ չե՞ն նրանք:

— Աղդակա՞ն: Վո՛չ: Բայց յես ու Վերան մոտ ենք, քան աղդակցությունը: Մենք ընկերներ ենք,—պատասխանեց աղջիկը ժպտալով:

— Բայց դրանով չի բացատրվում նմանությունը:

[1]) Հունգարիայում աղդային-ազատագրական պատերազմների և ապստամբությունների ժամանակ, 17-րդ և 18-րդ դարերում, «կուրուց» եյին կոչվում այդ ապստամբություններին մասնակցողները, «լարանց»՝ ոտարերկրյա հաբսբուրգյան տիրապետության կողմնակիցները:

— Իսկ ինչո՞ւ չե,—միջամտեց Գոմաննայը: Մի՞թե մեր աշխարհայեցողությունը նախորոշելու առանձնաշնորհը դու տակավին վերագրում ես բացառապես արտաքին աշխարհին: Ցեվ հնարավոր չես համարում, վոր մեր, իմ աշխարհայեցողությունն իր հերթին ազդում ե արտաքին աշխարհի վրա, նույնիսկ իմ անձական մարմնի վրա: Դու ամբողջապես դեռ համակված ես հին նախապաշարումներով: Այո՛, այո՛, իմ ներքին աշխարհն ազդում ե իմ արտաքինի վրա և համապատասխան կերպով ձևավորում ե այն: Այդպիսով՝ վոդով իրար մոտիկ յերկու անձնավորության արտաքին տեսքի մեջ վաղ թե ուշ յերևան ե գալիս նմանություն:

— Պորֆել, որինակ՝ ակնոցները...—կատակեց աղջիկը:

— Կատակներով այդպիսի հարցերից չես ազատվի, սիրելի Լենկե,—չափազանցրած լուրջ տոնով ասաց Գոմաննայը:—Իսկ ինչ վերաբերում ե գործի եյությանը, պիտի գիտենաք, վոր կրկին սկսվել ե լուրջ զոտում կուսակցության մեջ: Գաղափարախոսական զոտում և բարոյական զոտում, յեթե կարելի յե այդպես արտահայտվել: Որըվատելի լեզվով կարելի յե դրությունը քնորոշել, վորպես ֆեյերֆեբեյլական կոչկի տապալում գահից:

— Լա՛վ, լա՛վ: Այդ մասին կխոսենք ավելի հարմար տեղ:

— Ի՞նչ ե յեղել քեզ, կովաչ: Մի՞թե, յես չգիտեմ, թե ինչի՛ մասին կարելի յե և ինչի՛ մասին չի կարելի խոսել: Մի անդամայն ազատ կարելի յե խոսել նրա մասին, վոր մենք հեղափոխական չարժումից դուրս դեցինք Բելա Կունին: Մենք, հունգարացի կոմունիստներս, այժմ կրկին անդամ խաղում ենք մի դեր, վոր համաշխարհային պատմական նշանակություն ունի: Առաջին անգամ՝ մեր դիկտատուրայի դեպքը: Այն ժամանակ մենք ցույց տվինք, թե ինչպես չպիտի վարվեն կոմունիստները: Այժմ մենք որինակ ենք տալիս, թե ինչպե՛ս պետք ե դեպ կուսակցության մեջ կիչելի բանականությունը և բարոյականությունը,—պաֆոսով վերջացրեց իր ճառը Գոմաննայը:

— Ե՛յ դուք, կամա՛ց: Քիչ մնաց՝ ձեռքից վայր գցեիք մատուցարանը,— կարգի հրավիրեց նրան կելներչան:

Իրար մոտիկ չարած, բոլոր սեղանները զբաղված են: Ցերեկույան այդ ժամերին այստեղ ճաշողները կերակուրն ուտում են վո՛չ նվիրադործության հանդիսավորությամբ: Նրանք համարյա ճոլեղնությամբ լափում են իրենց ճաշը, չմոռանալով, չնայած

վոր չտապում են, հացի այն փշրանքների մասին, վոր խնամքով հավաքում են ափի մեջ և զգուշությամբ գցում բերաններդ: Շուտ! Շուտ! Շուտ! Բանի դեռ մեկը նստած է, մյուսն արդեն կանգնած է նրա յետևում, սպասելով իր հերթին: Շտապեցնում են նույնպես Պյոտրին ու նրա ընկերներին: Բայց ապարդյուն. նրանց սեղանին սպասարկող կլևներշան մի ինչ-վոր տեղ գնաց, կորավ:

— Բանականություն և բարոյականություն!—վոգևորված բացականչում է Գոմոննայը:

— Կարճ ասած, «Պրոլետար» ժուրնալը, կուսհրատարակչությունը, կուսակցական ապարատը գտնվում են քեզ մոտիկ ընկերների նեղ շրջանի ձեռքին:

— Կուսակցական ապարատը, մամուլը լոկ արտաքին տարբերություններ են, սերելիդ իմ Կովաչ: Մեր ձեռքին է ամենահյականը՝ կուսակցության գաղափարախոսական ամբողջականությունը և բարոյական մաքրությունը:

— Դու կատակո՞ւմ ես:

— Բնավ յերբեք:

— Այդ դեպքում՝ դու հիմար բաներ ես ասում:

— Կովաչ, մի՞թե, իսկապես դու չես կարող բարձրանալ բարոյական այն բարձրության վրա...

Այս անգամ հիրավի Գոմոննային հաջողվեց դուրս գցել մատուցարանը կլևներշայի ձեռքից: Ութ ափսե սուպը թափվեց հարևան սեղանի շուրջը նստողների վրա:

— Ա՛յ, բոբենու բաժին դառնաք...

— Իմ միակ զգեստը...

— Ձո ձեռքը...

— Լավ ե դեռ, վոր սուպը թափվեց ընկերների վրա,—անվրդով մխիթարում եր իրեն Գոմոննայը:

Բայց այդպիսի «մխիթարանքը» վոչինչ չեր տալիս ընկերների սրտին: Ցավ յերթե Գոմոննայը գլխի չընկներ ու ժամանակին չհիշեցներ, թե կոմունխառներին վայել չե սարքել հրապարակական սկանդալ,—նա անխուսափելիորեն կճաշակեր ծանր ապտակների համը:

Հաջողվեց, մի կերպ հանդստացնել տուժողներին: Իսկ յերբ Պյոտրը վճարեց պատճառած վնասները, կարելի յեր նույնիսկ անարգել դուրս պրծնել այնտեղից:

Մատսախուղը ցրելուց հետո, քամին իր ուժը փորձում եր

անցորդների վրա: Մայթերի թաց փայլը, ինչպես լինում է անձրևից հետո, պահպանում եր մատսախուղի վերջին հետքերը:

— Ջեզ մոտ կճարվի՞...—հարցրեց Պյոտրին Գոմոննայը:

— Կճարվի:

— Այդ դեպքում՝ գնանք «Ռուլ» կաֆեն:

— Գնա՛նք:

Մի քանի րոպեից չորս ընկերները նստած եյին «Բետհովենի» կաֆեյում:

Առաջներում էլ Պյոտրը բազմիցս անգամ յեղել եր այդ կաֆեյում, բայց այժմ ամեն բան այստեղ խորթ եր թվում նրան: Ըստ յերևույթին, բախտը ժպտացել եր «Բետհովենին»: Առաջ այստեղ բավականանում եյին բուտերբրոդներով, խմում եյին թեյ, սուրճ: Այժմ՝ ֆազան, խավյար, տոկայան գինի, շամպայն և այլն... Հապա հասարակությո՛ւնը: Ցերեկոյան տուալետներ, սպորտի հագուստները փայլում եյին չքեղությամբ: Ցավը, չնայած վոր այստեղ վոչ մի բան չեր հիշեցնում Ուլպեչի վոստիկանության խորհրդատուի գրասենյակը, այսուամենայնիվ՝ Պյոտրը նայելով շուրջը, նորից վերապրեց բոլորովին միևնույն զգացումը: Նա չնկատեց անհատական վոչ մի գեմք: Մարդկանց յերեսներին, փիդուրներին, կաֆեյի ազմուկի մեջ, առհասարակ՝ ամեն բանի վրա դրոշմված եր նույն ատելի կնիքը՝ դասակարգային ֆշնամու կնիքը:

— Ինչո՞ւ մենք յեկանք այստեղ:

— Գարշելի տեղ է,— համաձայնեց Գոմոննայը:— Բայց քանի վոր գտնվում ենք այստեղ, արդյոք չմտմտո՞նք մի-մի գավաթ սուրճ: Իսկ վորպեսզի մեր ծախսած դրամը զուր չկորչի, յեկ հանգիստ զրուցենք: Մեր ինֆորմացիան ոգտակար կլինի քեզ համար: Այդպիսով, մենք կարդարացնենք այստեղ կորցրած մեր ժամանակը: Վերջիվերջո մենք պիտի ճանաչենք մեր դասակարգային ֆշնամուն, չե՞: Նայիր չուրջդ: Ամենքն էլ սպեկուլյանտ-վալյուտչիկներ են: Առավոտյան գնում, յերեկոյան ծախում են: Նրանց ամբողջ «գնչեֆտը» սովորաբար այդ յերկու խոսակցությունն է հետախոսով: Թվում է, թե բոլորը դա յե՛ն... Մինչդեռ, նայիր, տես, վո՛նց են ապրում նրանք: Փարթամ կյանքից կատաղում են: Լսելու բան է նրանց խոսակցությունը: Պատերազմում հարստացած միլիոնատերերը, զզվելի յերևույթ են ներկայացնում իրենցից: Բայց այս նորերն ավելի վատթար

են: Հին հարուստները, այսպես թե այնպես, յուրահատուկ ձեվով, իրենց մեջ կրում էին վորոշ կուլտուրա...

— Մ՛ի, ձեռք քաշիր այդ կուլտուրայից,—ընդհատեց նրան Շիմոնը: Ձեռք վերցրու!

— Ինչո՞ւ: Ինչ-վոր ճիշտ է, ճիշտ է: Չո չի՛ կարելի աչք փակել: Այո՛, այո՛, հին բուրժուազիան ուներ և ունի իր կուլտուրան: Առանց յուրացնելու այդ բանը, մենք չենք հասնի ամբողջականության:

— Ձենք հասնի, ինչո՞ւ վոր,—հարցրեց Պյոտրը, վորի ջղերն այնպես դրգռված էին իրեն թշնամի այդ պարագայից, վոր նա չէր կարողանում կենտրոնանալ խոսակցության վրա:

— Ամբողջականության,—համարյա հաղթական հանդիսավորությամբ արտասանեց Գոմոննայը:— Ամբողջականության: Ամբողջականության տեսությունը, սիրելիդ իմ Կովաչ, նվիրեց միջազգային բանվորական չարժման Ուլյանին, հենց այն Ուլյանին, վորը զարգացրեց Լենինի ուսմունքը տարածության մասնակի տևողության մեջ: Ուլյանին Լենինի հետ միասին առաջ է դնում, կանգնած ինտերնացիոնալի գլուխը: Ցես անում եմ՝ «Լենինի հետ միասին», վորովհետև, թեև վորպես մտածող Ուլյանին ավելի բարձր և ավելի որիգինալ է Լենինից, բայց գործնական աշխատանքի մեջ նա ցածր է Լենինից: Այդպիսով, մեկը հավասարակշռում է մյուսով, և նրանք յերկուսն էլ մոտավորապես համարժեք մեծություններ են: Ահա, հենց այդ Ուլյանին է, վոր գտել է ամբողջականության տեսությունը:

— Այդպես... այդպես... Բայց այսուհանդերձ, ի՞նչ բան է «ամբողջականության տեսությունը»:

— Համբերություն! Ամեն ինչ իր կարգով: Ինչպես հայտնի յե, Մարքսը կարողացավ ապացուցել կապիտալիզմի անկանխությունը միայն էկոնոմիկայի բնագավառում: Մյուս բնագավառներում, մանավանդ փիլիսոփայության մեջ, նա արել է միայն առաջին քայլերը: Ե՛ր, Լենինն առհասարակ բան չի հասկանում փիլիսոփայություններից: Այդպիսով, Ուլյանին ավարտեց այն, ինչ սկսել էին Մարքսն ու Լենինը: Ամբողջականության իր տեսությամբ նա ապացուցեց, վոր վոչ միայն անտեսական զարգացումը, այլև սոցիալական դիտությունների և ժողովուրդների բարոյական աչխարհայեցողությունների զարգացման ուղին տանում են դեպի կապիտալիզմի անկանխություն՝ դեպի սոցիալիզմի հաղթանակ: Մարքսից ու Լենինից հետո այն անձը, ո՛ւմ մեջ

մնացել է վորևե կասկած, յուրացնելով ամբողջականության տեսությունը, նա վերջնականապես կդիմի իր դիրքերը: Այո՛, այո՛, Կովաչ: Դա Բելա Կունի կոչիկը չե, վորը յերբեք հրապուրիչ չի դառնա ինձ համար՝ վրան Մոսկվայի ցեխի չիթեր ունենալու պատճառով:

— Ցես Ֆրակցիոն պայքարի յեմ մտել Գյուլայի հետ,— միջամտեց խոսակցությանը Շիմոնը,—բայց այն, ինչ ասաց այստեղ Գոմոննայը... փաստերն ապացուցում են, վոր Ուլյանի խառնափչոր տեսությունները...

— Ավելի վատ փաստերի համար,—ընդհատում է Գոմոննայը:— Ավելի վատ փաստերի համար,—կրկնում է նա հաղթական տեսքով և այնպես յեռանդագին, վոր փոքրիկ Շիմոնն իսկույն լռում է և գլխի անբավական ճոճումով միայն արտահայտում է իր անհամաձայնությունը Գոմոննայի հետ:

Բայց վերջինիս բնավ չէր չխոթեցնում այդ բանը:

— Ցեթե վորևե փաստ, սիրելիդ իմ Շիմոն, հակասում է Ուլյանի տեսությանը, այդ փաստը դժոխքում չունի ինձ համար: Ուլյանն ասում է. Գայդոչի աչխարհայեցողությունը՝ համար սարակաց տան կելների աչխարհայեցողություն է: Ցեվ դրանից հետո թող ամբողջ աչխարհն ապացուցի, վոր Գայդոչը մետաղագործ է,—ինձ համար դժոխքում չունի այդ փաստը: Ինձ համար Գայդոչը միանգամ ընդմիշտ կմնա հասարակաց տան կելներ: Կամ վերցնենք մի այլ որինակ. Ուլյանն պնդում է, վոր Հունգարիայում չկա և չի կարող լինել կոմունիստական չարժում, մինչև հրապարակից չվտարվեն Բելա Կունը և նրա արժույթ, թող մյուս որը պոռթկի դինված ապստամբություն,— ծաղրում, թող մյուս որը պոռթկի դինված ապստամբություն,— մի՛ևնույն է, այն ժամանակ էլ չես անխոտոր կպնդեմ՝ Հունգարիայում չկա կոմունիստական չարժում:

Պեչից հետո բերած անպետք չեմ ողանը ձեռքին, յերեկոյան ժամը տասի մոտ, մենակ կանգնել է Պյոտրը «Բետհովենի» կաֆեյի առաջ: Տարակուսանքի մի րոպե, և նա նստում է Գրինցինգ գնացող տրամվայի վագոնը:

Պյոտրը վճռեց գնալ Շմիդտների մոտ: Հայտնի չէ, թե ինչո՛ւ, բայց նա հավատացած եր, վոր այնտեղ վոչինչ չի փոխվել և մնացել է այնպես, ինչպես կես տարի առաջ եր, յերբ յերբեք որ նա անցկացրեց նրանց մոտ՝ թաղավորական պուտչի որերին:

Նա սխալվեց: Այս կես տարվա ընթացքում կյանքը չէր մոռացել և Շմիդտներին: Արդեն չորս շաբաթ է, ինչ Շմիդտն աշխատում է մեքենաշինական գործարանում՝ Ռատակրինդում և նա ունի սոցիալ-դեմոկրատիայի դիրքը վերադառնալու ուժ շաբաթյա ստաժ: Նա հուսահատությամբ է նայում Ռուսաստանում տեղի ունեցող դեպքերի վրա, վորոնք մի ժամանակ այնպես հուզում էին նրան: Նա հիասթափված է: Նա կարծում է, վոր Լենինը գնում է ծուռ ճանապարհով: Ցերկրից դուրս քշել ռուս կապիտալիստներին, վոր նրանց տեղը դնեն ռուսների՞ն: Ի՞նչ բան է դա: Մի՞թե դեպի սոցիալիզմ տանող ճանապարհն այդպես է: Չէ՞ վոր պարզ է, վոր կոնցեսիոներների մոտ բանվորներին ամեն բան կմատակարարվի շատ ավելի լավ, քան խորհրդային ձեռնարկներում: Ցերկրի տեր՝ բանվորի բերնի թուքը կերթա նախանձից:

Մի՞թե դա հակահեղափոխական պրոպագանդ չէ: Այո՛... Կոմունիստական կուսակցությունն իր սեփական ձեռներով հակահեղափոխություն է պատրաստում, և խորհուրդների որերը հաշված են: Ո՞վ ո՛ւմ հարցին, պատմությունը տալիս է վո՛չ այն պատասխանը, վոր սպասում էր Լենինը: Լենին... Ցերբեք նա, Շմիդտը, չէր կարծի, վոր Լենինի ճանապարհն այդպես կլինի: Իսկ յեթե գործի դրությունն այդպես է, յեթե բոլշևիկների փորձը վերջացավ անհանգստությամբ և չորսամյա պայքարից հետո ռուս բանվորներին վիճակվում է հունգարական պրոլետարիատի բախտը, վորը չի կարող պատահել Ամերիկայում կամ Գերմանիայում, վորովհետև այնտեղ հեղափոխության նվաճումները պաշտպանվում, և ճիշտ են պաշտպանվում, սոցիալ-դեմոկրատների կողմից,—յեթե այդ այդպես է, ապա հարյուր անդամ պետք է աջակցել նրանց, ովքեր միշտ նախազգուշացնում են մեզ բոլշևիկյան ավանտյուրայից, ո՛վքեր մեզ նշում էին ուղիղ դեմոկրատական ուղի: Բոլոր ուժերով պետք է աջակցել սոցիալ-դեմոկրատներին:

Շմիդտը մտավ կուսակցության մեջ, յերդվում էր Ռատո Բաուերի անունով և, զարմանալի պատահականություն, չորս շաբաթ անց նա ստացավ աշխատանք, ու շատ լավ աշխատանք:

Շմիդտի կինը պարզապես լսում էր մարդու քաղաքական իմաստասիրությունը և յերեկոները բարեխղճությամբ նըստում էր նրա հետ Միջհրդային Ռուսաստանի քարտեզի առաջ:

Իմանալով կատարված «զարգի» մասին, Ֆրաու Շմիդտը

դադարեց խոսել նրա հետ: Ռոթենբուրգ չըջափակումից հետո,—հացողության յերես չէր դարձնում Շմիդտից,—նա ընդհակառակը, ջերմ ուշադրություն էր դարձնում նրան: Կինը կողքին, չորս որ պահած մնաց խիստ տաքության մեջ: Կինը խնամում էր մարդուն, վոչ մի խոսք չասելով ցավոտ թեմայի մասին:

Շմիդտը յերանության մեջ էր:

Հինգերորդ որը, ինչքան էլ նա հուզ էր տալիս ջերմաչափը թևի տակ, անդիմակը չէր բարձրանում: Նա տխրեց:

— Ժամանակ է վեր կենալու: Պահած կմնաս, ավելի կքոչանաս:

Շմիդտը հուսահատորեն հառաչեց:

— Միայն թե դու չբարկանաս ինձ վրա:

— Ցես չեմ բարկանում,— թոթովեց կինը:

Յեվ Ֆրաու Շմիդտը, վոր բանից դուրս գալուց հետո բոլորովին կտրվեց շարժումից ու վոչ մի մասնակցություն ցույց չէր տալիս նրան, այժմ ինքը դնաց կուսակցական կոմիտե և խնդրեց իրեն ներգրավել աշխատանքների մեջ:

Գրինդինգյան կազմակերպությունը մեծ չէ: Շատ և փոքրիկ: Մի քանի տասնյակ անդամներ: Գլխավորապես՝ ամիդրանտրիկ: Մի քանի ուսանյակ անդամներ: Գլխավորապես՝ ամիդրանտներ: Փոքրիկ, չիկահեր, հաստլիկ կինը զարմանալի յեռանդով ու գործնական մեծ ներքաղաքությամբ գործի անցավ: Ջորս շաբաթ անց՝ կազմակերպությունն ածեց տասնումեկ նոր անդամներով, իսկ յերբ, յերկու շաբաթ հետո, ագիտացիայի կամպանիով, իսկ յերբ, յերկու շաբաթ հետո, ագիտացիայի կամպանիով, մասամբ կանայք:

Սկսեցին ուսուցումը: Շմիդտի կինն այժմ տուն էր բերում դրքեր, ժուրնալներ: Կարդում էր: Սովորում էր: Թողնց կարելը, մինիմումի հասցրեց տնտեսությունը: Գլխովին տարվեց կուսակցական աշխատանքներով:

Շմիդտը, վոր հիվանդության ու գործազրկության տարիներին հաչտվել էր այն մտքի հետ, թե ինքը լիարժեք մարդ չէ, այժմ զլուխը բարձրացրեց: Դե՛, լհարկե, չե՞ վոր նա այժմ ընտանիքի կերակրողն է:

Առաջին ստացքի հետ վերադառնալով տուն, նա զինվեց մատիտով ու թղթով: Նա ճիշտ բաշխեց իր բերած գրամը, հաշվի առնելով ծախսի բոլոր այն հոդվածները, վոր սովորական են լուրջ բանվորի բյուջեյի մեջ: Պլանի մեջ նախատեսվում էր նաև կինո հաճախելը:

Մի շաբաթ, ամեն բան դնում եր չատ կարգին: Տեղի չունեցավ մեկայն կինո հաճախելը,— Ֆրաու Շմիդտը բոլոր յերեկոներն զբաղված եր:

Յերկրորդ շաբթին բացահայտ դարձավ, վոր Շմիդտի ֆինանսական պլանը վոչնչով ավելի ռեալ չե Ոտտո Բաուերի ֆինանսական պլանից: Յեվ թեև Շմիդտի պլանի մեջ չկային ֆանտաստիկ այնպիսի հոդվածներ, ինչպիսին կային Բաուերի մոտ, օրինակ՝ բուրժուազիային հարկելն արտակարգ տուրքերով, այնուամենայնիվ՝ տապալվեց նրա պլանը:

Բարդություններն սկսվեցին յերկրորդ շաբթի չորեքշաբթի օրից, յերբ Շմիդտն ընթրիքի համար ստացավ վո՛չ թե պլանով նախատեսված հորթի վոտներ, այլ մի կտոր հաց՝ մարգարինի հետ: Նա լուռ, «անհարթությունը» բացատրելով կնոջ խիստ զբաղված լինելով: Բայց յերբ հետևյալ օրն ել նրա ընթրիքը սահմանափակվեց հաց ու մարգարինով, խեղճն այլևս չհամբերեց.

— Համաձայն մեր պլանի...—սկսեց նա:

— Դրամը հերիք չարավ:

— Այսինքն՝ վո՞նց հերիք չարավ:

— Զգիտեմ, վո՛րտեղ, ի՛նչ աշխարհում ես ապրում դու, վոր մինչև այսոր իրազեկ չես Վիեննայի դեպքերին: Այսոր ճաշը կրկնակի թանգ արժե, քան մի շաբաթ առաջ: Քրոնն ընկնում է յուրաքանչյուր ժամ:

Այո՛, դա այդպես է: Վոր քրոնն ընկնում է, Շմիդտը գիտե: Նա հասկանում է. քրոնի արժեքի կատաստրոֆիկ անկումը խախտում է պետական բյուջեյի հավասարակշիռը և սպառնում է հեղափոխության ուրվականով: Ոտտո Բաուերի խոսքերից նա գիտեր, վոր քրոնի արժեքի անկումը կարելի չե կանգնեցնել միայն բուրժուազիայի վրա անողոք հարկեր դնելով: Բայց նա չգիտեր, նա նույնիսկ չեր կարողանում պատկերացնել իրեն, վոր Ցյուրիխը հանկարծ կարող է միջամտել իր սեփական աննդի գործին: Գործարանում նա արդեն լսել եր, վոր վայրուտայի անկումն անդրադառնում է հեղափոխության նվաճումների վրա, բայց նա կարծում եր, վոր Ոտտո Բաուերի պլանը... Ոտտո Բաուերի պլանը...

Հետագա շաբաթվա համար բյուջեյի պլան կազմելով, նա նկատի ունեցավ քրոնի անկումը: Այդ պլանը չատ ավելի համեստ եր առաջինից, դրա փոխարեն, նոր պլանն ավելի ռեալ եր: Այժմ քրոնն ավելի ռեալ եր, բայց և այնպես՝ բավարար ռեալ չեր: Այժմ քրոնն այլևս չեր ընկնում, այլ ուղղակի հալվում եր մարդկանց ձեռքի մեջ: Ռեստորաններում, կաֆեներում չամպայնը հոսում եր ջրի պես: Գիշերային կաբարեներում փրակավոր պարոնները պարում եյին մերկ կանանց հետ: Մետաքսե սպիտակեղեն հագած պոռնիկ կանանց, վճարում եյին վոսկով: Սակայն աշխատավարձը, վոր բանվորներն ստանում եյին չաբաթ օրերը՝ ճաշից հետո, յերկուշաբթի առավոտյան այլևս վոչինչ չարժեր: Յեթե մարդ յերկուշաբթի առավոտյան ուզում եր գնել մի փունջ լյարդ, իր ունեցած դրամով այսոր կարող եր գնել մի փունջ կարտոֆիլ:

— Թուղթն ուիսոս է,— քմծիծաղում եր Ֆրաու Շմիդտը, յերբ նրա մարդը նորից վերցնում եր մատիտը:

— Ափսո՞ս է,— հեղորեն համաձայնում եր: Ի՞նչ կլինի այսուհետև: Ի՞նչ կլինի:

— Ցես չատապում եմ: Պիտի գնամ: Մենք ապիտացիա յենք տանում տներում:

Մի քանի որից հետո Շմիդտները, վոր հազվադյուտ դեպքերում եյին դիմում լմբարդի ոգնությանը նույնիսկ դրծաքերում եյին դիմում լմբարդի ոգնությանը նույնիսկ դրծաղրկության ժամանակ,—ստիպված եյին գրավ դնել իրենց ճերմակեղենը՝ մինչև վերջին կտորը:

Նրանց վերջին իրը հայտնվեց լմբարդում հենց այն որը, յերբ Պյոտրը վճռեց այցելել Շմիդտ ամուսիններին:

Պյոտրը զարթեցրեց նրանց ժամը տասնումեկին: Շմիդտները սերտելիր ընդունելին անսպասելի հյուրին: Նստած սախարիտնով թեյի սեղանի շուրջը, նրանք զրուցում եյին մինչև ուշ գիշեր: Պյոտրը պատմեց նրանց իր քաչած տառապանքների մասին: Պյոտրը պատմեց նրանց իր քաչած տառապանքների մասին վոստիկանության մեջ, պատմեց դատի մասին, իր փախուստի մասին:

Պյոտրի համար մի կերպ անկողին պատրաստեցին ամենայն վերարկուներից:

Առավոտյան Պյոտրը գնաց «Պրոլետար» ժուռնալի խմբագրատուն: Գայդոշի հետ զրույցը տևեց յերեք ժամ:

Գայդոշը սաստիկ փոխվել եր: Անցել եր լինն տարի այն ուրից, յերբ նա Պյոտրին տարավ արհեստանոց և կանգնեցրեց վիթխարի չոգեշարժի առաջ, վորի յեռանի անիվը կոտրված եր: Այդ տարիների գառնությունները համարյա չեյին աղդել Գայդոշի դեմքի վրա: Բայց դրա փոխարեն, Պյոտրի համար ավելի դաժան դեմքի վրա:

դունեղ կերպով աչքի էին ընկնում վերջին վեց ամսվա դեպքերի ախուր հետքերը:

Գայդոչն կարծես յերևատասարդացել եր,—այդպես եր առաջին տպավորությունը:

Բայց ուշադիր նայելուց հետո, Պյոտրը տեսավ, որ նա նիհարել է, բերնի չուրջը նկատվում էին խորն ակոսներ, կղակը սրվել եր:

Աչքերն առաջվանն էին: Ցեվ այժմ Գայդոչը նայում եր Պյոտրին այնպես, ինչպես լինն տարի առաջ, յերբ քեռու խնդիրքին՝ տեղավորել արհեստանոցում յերեխային՝ բանտում մեռած մարդու վորդուն,—նա պատասխանեց.

— Կաշխատեմ,—և կոլտուկավոր ձեռքով չոյեց յերեխայի դլուխը:

— Տեսնո՞ւմ ես, տղա,—ասաց նա,—քանի դեռ մենք չենք հիմնվում արտադրական պրոլետարիատի վրա, մեր աշխատանքը խաղ է միայն: Մենք պետք է բացեբաց դործենք նաև չքավոր դյուղացիության ու բատրակների հետ: Արվաին ասում է. մեր սխալները չէլին, վոր տապալեցին պրոլետարական հեղափոխությունը Հունդարիայում,—նա դատապարտված եր տապալման իր դոյության հենց առաջին մոմենտից: Իսկ դա, տղա, նշանակում է, վոր այժմ կարիք էլ չկա միասիրտ հայտարարելու, թե մեր ծրագիրն է հողի հեղափոխականորեն բռնագրավումը, թե կարիք չկա վորոշակի պատասխանելու հունդարական կոմունիստական կուսակցության չինարարությանը վերաբերող հարցին: Կուսակցության հետ կապված խնդիրներում վորքան էլ առարկելու լինենք Սեկերեչի խիստ դրությին, այնուամենայնիվ՝ նա իրավացի յեր: Մենք այդ չէլինք ուղում, բայց դուրս յեկավ այդպես: Իհարկե, դա պատահականություն չէ: Քանի վոր արդեն կազմակերպվեց Ֆրակցիա և սկսվեց պայքարը մեր դծի դեմ, մենք կոմունիստներ չէլինք լինի, յեթե խուսափելինք պայքարից: Վո՛չ, մենք այդ բանը չարինք: Ընդհակառակը, յերբ սկսեցին քարեր նետել մեզ վրա, մենք պատասխանեցինք քարերի տարափով, նկատի ունենալով կուսակցության շահերը:

Նախ քան Պյոտրին բաց թողնելը, Գայդոչը նրան աշխատանք առաջարկեց կուսակցական ապարատի մեջ:

— Արդյոք քեզ հայտնի՞ յե, վոր Գյուլայը և նրա ընկերները հրաժարվեցին աշխատելուց: Այդ պատճառով, այժմ մենք մեծ դժվարություններ ունենք: Գրագետները քիչ են մեր մեջ:

— Ինչո՞ւ առաջարկն ընդունելուց առաջ, յես կուզենայի խոսել Գյուլայի հետ:

— Ինչպես կուզես,—պատասխանեց Գայդոչը դրդռված:

Ցերեկվա ժամը յերկուսին, ինչպես պայմանավորվել էլին յերեկ, Պյոտրը պատահեց Շիմոնին «Բեռհովենն» կաֆեյի մոտ: Նրանք միասին գնացին Գյուլայի մոտ: Ճանապարհին վո՛չ մի նրանք միասին գնացին Գյուլայի մոտ: Ճանապարհին վո՛չ մի խոսք չեղավ Ֆրակցիոն պայքարի մասին: Շիմոնը հիշեց ռումինական Ֆրոնտի մասին, վորտեղ նրանք մի ժամանակ աշխատել էլին միասին: Ճիշտ է, աշխատել էլին ընդամենը մի քանի որ, բայց Պյոտրը հիշում եր, վոր լավ եր աշխատում Շիմոնը:

— Գրողը տանի ինձ, դավակս, յեթե յես հավատացած չէլի, վոր դու կփախչես,—բացականչեց Գյուլայը, տեսնելով Պյոտրին:—Վախում եմ, վոր մոտիկից ծանոթանալով մեր դործերին, դու նորից փախչես բանտ: Վորևե մեկի հետ տեսնվե՞լ ես:

— Գայդոչի:

Գյուլայի դեմքը մթագնեց: Նա հինդ մատով ջղայնորեն յեռ դցեց մազերը: Պյոտրը նկատեց, վոր Գյուլայը ճաղատացել եր ճակատի կողմից, և մազերը կիսով չափ արդեն արծաթաջրվել էլին: Նրա աչքերը, վորոնց մեջ և՛ ուրախության, և՛ վշտի բոցեր էլին: Նրա աչքերը, վորոնց մեջ և՛ ուրախության, և՛ վշտի բոցերին միշտ վայրում եր մի ժպիտ, այժմ համարյա թշնամաբար նայում էլին անորոշ մի կետի՝ Պյոտրի գլխի վրայով: Բայց այդ թշնամական հայացքը չեր վերաբերում Պյոտրին: Գյուլայը հայացքը դցեց Պյոտրի վրա, և նրա աչքերը նորից ժպտացին:

— Պյոտր, մենք իրար վաղո՞ւց ենք ճանաչում:

— Ցոթ տարի:

— Այդ յոթ տարիները մեզ համար անցել են պայքարի մեջ, այնպես չե:

— Այո՛, պայքարի մեջ:

— Ցես հիշեցի անցյալի մասին վոչ պարծենկոտություններից: Այս բոլորը դատարկ բաներ են: Մենք կատարել ենք մեր պարտքը և ուրիշ վոչինչ: Դու գիտես, վոր անցյալը կապում է ինձ Գայդոչի հետ: Մենք նրա հետ միասին աշխատել ենք յերեսուն տարի կողք-կողքի: Մեր ձեռքի տակից դուրս են յեկել բազմաթիվ լավ ընկերներ: Ցեթե հիշողություններ չի դաղտնում ինձ, քեզ էլ Գայդոչն եր ուղարկել ինձ մոտ:

— Այո՛, մի ժամանակ աշխատանքի միջոցին աչքիս մեջ բան ընկավ...

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես: Իսկ այժմ, Պյոտր, յես պետք է խոստովանեմ, որ Գայդոչը չարդարացրեց իմ հույսերը: Նա վատ ընկեր է: Նա պատրաստ է՝ ավելի շուտ դառնալ համաձայնողական, չեղվել բոլշևիկյան դծից, միայն թե չպայքարել: Մի բնդհատիր ինձ, Պյոտր: Մի՛ խանգարիր: Նախ լսիր, հետո կարող ես առարկել: Ինչի՞ մասին է խոսքը: Համաչխարհային հեղափոխությունը հետաձգված է: Սխալ մի՛ հասկացիր ինձ,—համաշխարհային հեղափոխության հարցը չի հանված որակարդից և չի կարող հանվել: Բայց մենք սխալվեցինք ժամանակի նկատմամբ: Մենք պետք է մեր ղրույթը կապենք ավելի տեսական պրոցեսի հետ, քան յենթադրում էինք: Բայց վորչափով հայտնի չե, վոր վաղը ղրոհի չենք դիմելու,—բնականաբար, հարց է ծագում, վորո՞նք են մեր այժմյան պարտավորությունները: Պրոպագանդ մղե՞լ, քարոզել հոգի հեղափոխական բռնագրավո՞ւմ: Վո՞նց չե: Կամ դուցե կուսակցական բոլոր կազմակերպությունները կապել իրար հե՞տ: Տե՛ր մի սրտացե: Դա դուտ ավանտյուրիզմ է: Հունգարական պրոլետարիատը չի ունեցել ընդհատակում այնպիսի փորձ, ինչպիսին ունեցել են ռուսները: Չի ունեցել և չի կարող ունենալ: Մեզ մոտ ցարիզմ չի յեղել: Թուլլ տալ տարբեր խմբակների, վոր մինչև այսոր առանձնացած են յեղել իրարից, անմիջականորեն կապվել միմյանց հետ,—նշանակում է՝ հնարավորություն տալ վոստիկանությանը՝ մի խմբակի տապալման գնդքում չանթել մնկեն ամբողջ կուսակցությունը: Ցեթե յես չիմանայի, վոր այդ բանի նախաձեռնողը Սեկերեչն է, կպնդեի, վոր դա վոստիկանական պրովոկացիա յե: Ֆո ընկերները վո՞նց չեն հասկանում կամ չեն ուզում հասկանալ (Գյուլայը նույնիսկ կրճտեց առամները), վոր Արվաիի հանճարեղ պլանը ապահովում է մեր բջիջների համար խմբակցային կազմակերպության բոլոր առավելությունները: Միաժամանակ այդ պլանն ապահովագրում է նրանց, անխուսափելի այն վտանգներից, վորոնք կապված են խոշոր կազմակերպության հետ: Մեր սկզբունքն այսպես է. յուրաքանչյուր խմբակի մեջ այս կամ այն ձեռնարկը կարող է ներկայացվել միայն մի բանվորով: Այն ամենը, վոր այդ բնագավառում արել են Անդրեյն ու Վերան, արժան է հակառակ մեր հրահանգների: Մեր սխեմի մեջ յուրաքանչյուր առանձին կազմակերպություն կարող է ոգտագործել մի քանի ֆաբրիկանների բանվորների վորձը, բայց մի խմբակի տապալման դեպքում կազմակերպությունն իր

ամբողջությամբ ապահովված է տապալումից: Իսկ Սեկերեչի գլխին փչել է՝ կազմակերպել բանվորներին ըստ ձեռնարկների, կապելով իրար հետ գործարանային բոլոր բջիջները: Ով քարոզում է այդպիսի բաներ...

Գյուլայը չվերջացրեց խոսքը: Նա ձեռքը սրտնեղությամբ թափահարեց ու լռեց:

Ճաշից հետո յեղած ամբողջ ժամանակը Պյոտրն անցկացրեց Գյուլայի մոտ: Գուպարը տաք եր: Կուսակցության կազմակերպման հարցերում Պյոտրը համաձայն չեր Գյուլային:

Պյոտրը հիմնվում եր իր անձնական փորձի վրա: Գյուլայը հրապարակ եր քաշում փաստարկները: Հիմնվում եր վորոշ ընկերների փորձի վրա, վորոնց Պյոտրը չեր ճանաչում և վորոնց աչխատանքի պայմանները հայտնի չեյին նրան:

Գյուլայը վիճում եր շատ հաջող: Այդ վիճաբանությունից, այդ գուպարից յուրաքանչյուրը քիչ ոգտակար հետևություններ չհանեց, բայց նրանցից վոչ մեկին չհաջողվեց համոզել իր հակառակորդին:

— Դու աչխատանք ես վերցրել Գայդոչի՞ մոտ:

— Առայժմ վոչ: Բայց կարծում եմ, վոր կվերցնեմ:

— Իսկ յես կարծում եմ, վոր չես վերցնի: Դու չափազանց ազնիվ ես, դու չես կարող այդ բանն անել, Պյոտր: Դու յերբեք աղնիվ ես, դու չես կարող այդ բանն անել, Պյոտր: Դու չես յեղել ոպորտունիստ: Յես հավատացած եմ, մոտ որերս դու նորից կգաս ինձ մոտ և կասես՝ Գյուլա, դու միանգամայն իրավացի յես: Յեկ աչխատենք միասին:

«Կորկի բյուրղերմեյստերում» Պյոտրը չպատահեց վոչ մի ծանոթի: Շտապ ճաշեց: Յելքի դռան մոտ դեմ առ դեմ պատահեց Լենկեյին:

— Դեպի «Կո՞րկ»:

— Վո՛չ, դեպի «Կեղտաուն»:

— Դա յել ի՞նչ բան է:

— Մի՞թե չգիտեք: Դա սրճարան է, վորին հավանել է մեր բանվոր յերիտասարդությունը: Այստեղ, մոտիկ է:

«Կեղտաունը», ինչպես և «Կորկը», լիովին համապատասխանում եր իր մականունին:

Սանդուխքից իջնելով վեց աստիճան, մարդ մտնում է կիսախավար մի չենք: Միակ կեղտոտ լուսամուտի վերին ապակիների միջից դժվարությամբ կարելի յե տեսնել անցորդների վոտքերը:

Վեց փոքրիկ սեղաններ, առանց սփռոցների: Վաղուց չսպիտակացրած պատերից քաշ են արված դեղնած պլակատներ, որոնք պատմում են կայսրության անկման որերի մասին:

— Համա տեղ եք ընտրել, հա՛:

— Այստեղ չկան վալյուտչիկներ:

Պյոտրը նայեց չորս կողմը:

— Իսկապես, չկան այստեղ:

— Միայն մի բաժակ թեյ,—պատվիրեց Լենկեն:

— Ինձ նույնպես:

— Ուրեմն, դո՞ւք եք ընթրում եք դատարկ թեյով:

Պատասխանի փոխարեն Պյոտրը պատվիրեց մարգարիտով բուտերբրոդ:

— Այն որից, երբ չես այստեղ եմ՝ վիճենայում,—ասաց Լենկեն,—չես ունեմ յերկու ցանկություն: Առաջին· ուսումնասիրել մարքսիզմի հիմունքները: Յերկրորդ՝ դեթ մի անգամ լավ, կուշտ ուտել: Յեվ ուտել համեղ բան, որինակ՝ վիճենայական չնիցել:

— Վաղո՞ւց ե, ինչ վիճենայում եք:

— Շուտով կլինի յերեք ամիս: Այն որից, երբ ձերբակալեցին իմ յեղբորը: Դուք, անշուշտ, ճանաչում եյիք նրան: Եմելբիխ Վայդա:

— Եմելբիխ Վայդա՞... Վո՛չ, չեմ ճանաչում

— Ձե՞ք ճանաչում: Ա՛, քեզ տարօրինակ բան,—զարմացավ Լենկեն:—Կալոչան փոքրիկ քաղաք ե: Նա նույնպես աշխատում եր այնտեղ դիկտատուրայի ժամանակ:

— Բայց չես յերբեք չեմ յեղել Կալոչայում:

— Ձե՞ք յեղել Կալոչայում: Վոչինչ չեմ հասկանում:

— Ի՞նչ զարմանալի բան կա դրանում:

— Ինձ ասին, վոր դիկտատուրայի ժամանակ դուք յեղել եք լողաղպրոցի քաղաքական կոմիսար Կալոչայում:

— Ի–ի՞նչ:

Անզուսպ ուրախության զգացումը համակեց Պյոտրին: Նա քրքջաց բարձրաձայն, սրտանց, ասես՝ դոյություն չուներ վոչ մի Ֆրակցիոն պայքար: Սակայն, Լենկեն սաստիկ չվարեց, չվոթվեց: Նրա դեմքը բոցավառվեց, կապ–կարմրեց: Յեվ չնայած Պյոտրի թախանձանքներին, նա վոչ մի կերպ չհամաձայնեց կրկնել Պյոտրին այնպես զվարճացնող խոսքերը:

Բայց հետաքրքրությունն ավելի զորեղ եր, քան չվարումը: Յեվ Լենկեն նորից հարցրեց·

— Ուրեմն՝ ճի՞շտ չե, վոր հեղափոխությունից առաջ դուք յեղել եք լող տալու հրահանգիչ:

— Ինչ ճիշտ ե, ճիշտ ե,—լուրջ տոնով ասաց Պյոտրը:— Բայց ասեք, այդ ո՞վ ե այդպես լավ ինֆորմացիա տվել ձեզ իմ մասին:

— Գոմոննայը:

— Այո՛, այո՛, ճիշտ ե դա,— մեքենաբար համաձայնեց Պյոտրը և իր տրամադրության հանկարծակի փոփոխումը ծածկելու համար սկսեց հարցուփորձ անել Լենկեյից՝ նրա անձնական կյանքի, նրա հոր մասին:

Լենկեյի հայրը յերկաթուղային մեքենավար եր: Դիկտատուրայի անկումից հետո Ոսաենբուրգի ջոկատը կախեց ծերուս

դուք կասկած անգամ չունենք: Ցնս ցույց կտամ ձեզ պարոն կապրալ Գայդոշի բանականությունը:

— Ջեմ հասկանում,—ասաց Լենկևն:

— Համբերություն:

Մինչև Գոմոննայը դռան մոտից կհասներ նրանց սեղանին, Պյոտրը կարողացավ չշուխով ասել աղջկան, որ նա այսոր մի խոսք չասի «լոզապրոցի» և նրա «հրահանգիչ» լինելու մասին: Լենկևն գլխով համաձայնության շարժում արավ: Բայց անպատճառ մարդպես չպիտի լինել, հասկանալու համար, թե ո՛րպիսի անհամբերությամբ աղջիկն ուզում եր խոսել հենց այդ թեմայի մասին: Աղջկա ուշադրությունն այդ նյութից հեռացնելու նպատակով, Պյոտրը պահանջեց թերթ: Տվին յերեկոյան հրատարակությունը, որից նա իմացավ, որ քրոնը չարունակում է ընկնել:

— Նո՛ւ, յերե ձեզ հետաքրքրում է...

Գոմոննայը գրպանից հանեց մի տետր:

«Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք»,—սկսեց նա:— Դա, թուլլ տվեք պնդացնելու ձեզ,—նա արավ այնպիսի ժեստ, որով կրկեսի լարախաղացները չնորհակալություն են հայտնում ծափահարությունների համար,—դա, թուլլ տվեք պնդացնելու, քաղվածք է Մարքս-Ենգելսից: «Պրոլետարիատը կարող է կորցնել միայն իր շղթաները, իսկ շահել՝ ամբողջ աշխարհը»: Դա՛ ևս այնտեղից է: Ահա ելի մի քաղվածք· «Սոցիալիզմը՝ խորհրդային իշխանություն է՝ պլյուս ելեկտրիֆիկացիա»: Դա արդեն Լենինից է: Աբժե՛, արդյոք, չարունակել, վոդորմած պարոն և վոդորմած տերուհի: Հունգարական կուսակցության ապագա յենթասպան կդրե իր տետրի մեջ մոտ հիսուն այդպիսի գերիմաստություններ և ապրում է դրանով: Ցնթե վիճակվի նրան այս կամ այն հարցի առթիվ դիրք բռնել, նա կբերքրի իր տետրը, և ահա պատրաստ է նրա որթոդոքսալ-մարքսիստական հայեցակետը: Այժմ, յերբ մենք խլել ենք նրանից այս տետրը, վոր վոխարինում է նրա համար իր՝ սեփական մտքերին, մեր բարեկամի բանը վրուսա է: Կպարզվի, վոր այդ «մեծ առաջնորդը» իրապես մեծ ավանակ է:

— Թուլլ տվեք...

Պյոտրը թերթեց տետրը, վորի մեջ անճոռնի խոշոր տառերով գրված եյին Մարքս-Ենգելսի և Լենինի մտքերը: Պյոտրը հիշեց Մարտոնի տետրը և նա պարզ պատկերացրեց իրեն այն

բանվորին, վոր կոշտացած, անվարժ ձեռքով լցնում եր այս թերթերը: Նա վակեց տետրը: Նայեց Գոմոննային: Մոլի ցասումը յեռում եր նրա կծծքի տակ: Նա հազիվ իրեն պահեց և քիչ մնաց, վոր բռունցքով հարվածեր Գոմոննայի ինքնաբավական ժպտուն դնչին:

— Լսե՛ք,—ասաց նա զսպած գայրույթից դողդողուն ձայնով:—Լսե՛ք դուք, պարոն Գոմոննայ,—յես իմ կյանքում դեռ չեմ պատահել ձեղնից ավելի ցինիկ սրիկայի: Ցնվ դուք համարձակվում եք անվանել ձեզ կոմունի՞ստ: Անդադար: Դուրս այստեղից:

— Ինչ!? Ի՞նչ պատահեց: Ինչ ես ասում դու?!

— Դուրս այստեղից, քանի դեռ վողջ եք:

— Բայց, Պյոտր...—Լենկևն իր ձեռքը դրեց Պյոտրի ուսին:

Գոմոննայը կանգնեց: Նրա դեմքը դունատվել եր: Շրթունքները դողում եյին: Նա հասավ ատղուխքին և չուռ յեկավ: Մի քանի վայրկյան նա լուռ նայում եր Պյոտրին: Դանդաղ կոճկում եր վերարկուի կոճակները: Դանդաղ հագնում եր ձեռնոցները:

— Ահա՛ թե ինչ...—թշշաց նա ատամների միջից, բռնած դռան բռնակից:—Ահա թե ինչպիսի բաներ... Այժմ համենայն դեպս՝ յես գիտեմ, թե վորտեղից և ղրամը, վոր դուք վատնում եք «Բետհովենն» կաֆեյում: Ցնվ դուրս գնաց:

Պյոտրը կարողացավ իրեն պահել և չվազել նրա յետևից:

— Վո՞րտեղ եք ապրում դուք,—համարյա հանդիսա տոնով հարցրեց նա Լենկեյին:

Լենկևն դողում եր, նրա աչքերը լցված եյին արցունքներով:

— Գրինցինգում,—չշնջաց նա, յերբ Պյոտրը կրկնեց իր հարցը:—Համար քառասուն յերեք հեղակում:

— Հեղակո՞մ: Գեղեցիկ: Ցնս նույնպես ապրում եմ այնտեղից մոտիկ: Ցնս կուղեկցեմ ձեզ:

— Հիանալի: Գնանք վոտով:

— Ջի՞ք հոդնի:

— Ցնս միշտ գնում եմ վոտով: Մոտ մի ժամվա ճանապարհ է:

Նրանք դուրս յեկան կաֆեյից:

Մինչ նրանք նստած եյին «կեղտատանը», բարակ անձրև յեկավ: Նա միայն լվաց փողոցները: Ամպերը ցրվեցին: Փչում եր քեռև, համարյա գարնանային զեփյուռ:

Լենկեն և Պյոտրը բավական ժամանակ գնում էլին լուռ: Նրանցից յուրաքանչյուրը խորասուզված էր իր մտքերի մեջ: Նրանք արդեն հեռացել էլին քաղաքի կենտրոնից և գտնվում էլին Գյուբաելի մոտ, երբ Լենկեն առաջինը խոսեց.

— Գիտեք, Պյոտր, դժվար է ապրել եմիգրացիայի մեջ:

— Գիտեմ: Դուք չհոգնեցի՞ք:

— Մի քիչ:

Պյոտրը թևանցուկ բռնեց աղջկան:

Այդպես լուռ հասան նրանք Գրինցինդ:

Նրանք արդեն մոտենում էլին հեղափոխների:

— Ցերկու տարի առաջ,—ասաց Պյոտրը,—այն ժամանակ, յես առաջին անգամ էլի հեռանում յերկրից,—յես էլ էլի ապրում այստեղ: Այն որվանից յես առիթ չեմ ունեցել լինելու քաղաքում յերեքերորդ հեղափոխում:

— Մտեք: Հիշեք անցյալը:

Պյոտրը, հայտնի չէ, թե ինչո՛ւ, հույս ուներ, թե Լենկեն ապրում է նույն սենյակում, վորտեղ մի ժամանակ ապրում եր Դրագան: Բայց նա սխալվեց: Լենկեն ապրում եր հեղափի հյուսիսային Փլիգելում:

Հետևյալ որը հետաքրքրական ժամանակ Պյոտրը վողոջում պատահմամբ հանդիպեց Գյուլային: Ցերկու ժամ նրանք թափառում էլին վարար անձրևի տակ: Վեճով տարված, նրանք չնկատեցին, վոր վոտից–գլուխ թրջված են: Պյոտրը խոսք արավ Գոմոննայի մասին:

— Գոմոննայ... Գոմոննայ... կաց! Արդյոք, դա այն հեռադրասյունը չե՞, ձվաձև գանդով: Փիլիսոփա, յեթե չեմ սխալվում:

— Հենց նա յե, վոր կա:

— Ցես ճանաչում եմ նրան: Բայց պատասխանատու չեմ նրա համար: Կուսակցության հետ վոչ մի կապ չունի: Եմիգրանտ է: Բայց թե ի՛նչն է ստիպել նրան հեռանալ յերկրից, հայտնի յե միայն իրեն: Ցեթե, իհարկե, նա ինքը գիտե այդ: Կրկնում եմ, նա վոչ մի առնչություն չունի կուսակցության հետ: Իսկ մեր Փրակցիայի ենթադրությամբ է դարձել այն հասարակ պատճառով, յերևի, վոր անցյալում նա ինչ–վոր կապ է ունեցել Արվաների հետ այն ժամանակ, յերբ նա տեննիսի չեմպիոն եր համարվում մի բան: Ցեթե յուրաքանչյուր մանր ժուլիկի պատճառով դուռ պիտի արամադրություն փչացնես, այդ դեպքում՝ իրոք ավելի լավ է, վոր յես դառնամ բանտ:

Պյոտրը յերեկոն անցկացրեց Լենկեյի մոտ: Նա տուն վերադարձավ չատ ուշ: Տանը նրան հյուր եր սպասում՝ Գոտեմանը:

— Վոր դուռ փախար, դա այդպես էլ պիտի լիներ: Բայց ի՞նչպես կարողացար այդքան յերկար դիմանալ Խորտիի աղ ու հացին:

— Կարծում ես, ինձ հարցնո՞ւմ էլին, յեղբայր պատվական:

— Չի կարող պատահել:

— Իսկ դուռ ի՞նչով ես զբաղվում:

— Ավելի լավ բան չդտնելով, ծառայում եմ վորպես խոհարար:

— Խոհարա՞ր: Մի՞թե դուռ պատրաստել գիտես:

— Պատրաստել՝ վո՛չ: Բայց ամաններ լվանալ կարողանում եմ: Ե՛հ, աշխատանք է, ելի՛: Ցեվ, ինչպես տեսնում ես... եմ: Ե՛հ, աշխատանք է, ելի՛: Ցեվ, ինչպես տեսնում ես...

Գոտեմանը նչեց սեղանը, վորի վրա դրված եր ճարպի յերկու կտոր, խոզի գլխի վոսկոր և այլ հրաչալիքներ:

— ... Ինչպես տեսնում ես...

— Իսկ ի՞նչ կասես դուռ Ֆրակցիոն պայքարի առթիվ,— հարցրեց Պյոտրը, խժռելով խորտիկները:

— Կեր, բարեկամ, կեր,—հյուրասիրում եր Գոտեմանը:

— Իսկ դուռ ի՞նչ կասես Յյուրիխի մասին,—մի րոպե անց՝ հարցրեց Գոտեմանն իր հերթին:—Հիշիր, Պյոտր: Հայհոյիր ինձ սոցիալ–դեմոկրատ բառով, յեթե մի ամսից հետո վիեննայի փողոցներում արյուն չթափվի: Ցես արդեն տնտղել եմ խոհանոցի մեծ դանակը: Հարմար գենք է: Ուզո՞ւմ ես, մեկը կարող եմ նվիրել քեզ:

ՑԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է...

Ֆրանց Գայդուն յեկավ տասնումեկին, ժողովը բացվելուց մի ժամ չուտ, առաջիններից մեկը:

Առանց չտապալելու, նեղ սանդուխքով իջավ նա դահլիճ: Դահլիճը դատարկ եր: Ելեկտրական մի լամպ միայն թույլ լույսով լուսավորում եր բիլիարդի յերեք սեղանը, կաղ աթոռների յերկար շարքը բեմի չուրջը, վոր առաջ եր քաշած դահլիճի մեջ-

տեղը: Բեմի վրա՝ կանաչ մահուդով ծածկած մի սեղան, յերկու աթոռ:

Գայդուն նայեց ժամացույցին և մտքում հայհոյեց: Նա դիմեց դեպի յելքի դուռը: Սանդուխքով բարձրանալիս՝ հանդիպեց Գոդոչիին:

— Բարև:

— Բարև:

Ցեվ բաժանվեցին, հեռացան իրարից: Գայդուի մտքով անդամ չանցավ՝ ասել Գոդոչիին, վոր դահլիճում դեռ վոչ վոք չկա:

Ներքևում, կաֆեյում, կիրակնօրյա սովորական այցելուներ: Հավաքվել էլին, վոր մի քիչ նստեն, աչքի անցնեն թերթերը, քան թե նախաճաշեն:

Գայդուն նստեց սեղանի առաջ: Թեյ պատվիրեց՝ ռոմի կրկնակի բաժնով: Մի րոպե անց՝ Գոդոչիին բռնեց հարևան սեղանը և նույնպես պատվիրեց թեյ՝ ռոմի կրկնակի բաժնով: Սպասելով պատվիրած թեյին, նրանք զննում էլին իրար: Վո՛չ թշնամաբար, վո՛չ: Ավելի շուտ՝ ծաղրանքով: Կարծես, նրանցից յուրաքանչյուրը մտածում էր. «Ե՛, բարեկամս, մինչև կոկորդդ դու թաղվել, խրվել ես...»:

Համարյա տասը տարի նրանք միասին աշխատել էլին Ցեպելի դործարանում:

«Մի ամբողջ լիճ կկազմեր այն դարեջուրը, վոր մենք խմեցինք միասին, մինչև մեզ հաջողվեց մեր տղերքին քշել դեպի պրոֆմիութիւնները»,—մտածում էր Գայդուն:

Սակայն միասեղ աշխատանքի յերկար տարիների ընթացքում միայն դարեջուրը չէր, վոր թափվել էր, հոսել:

Ինն հարյուր տասնուհինգ թվի ապրիլ ամսին նրանք միասին ներկա էլին դաղտնի այն ժողովին, վորը սոցիալ-դեմոկրատական կուսակցութեյան թիկունքում քննարկում էր դործադուլի հնարավորութեյունները և վորոշեց պատրաստել քաղաքական դործադուլ:

Հազար լինն հարյուր տասնուվեց թիվը: Հազար լինն հարյուր տասնյոթը: Հազար լինն հարյուր տասնութը:

Գայդուն ղեկավարներից մեկն էր այն դործադուլի, վոր հայտարարվեց Բրեստի հաշտութեյան բանակցութեյունների ուրեբին: Նրան ձերբակալեցին: Շուտով էլ ազատեցին: Ցերեք շաբաթ անց՝ վերցրին բանակ և ուղարկեցին իտալական ֆրոնտ:

Մի ամիս անց, Գոդոչիին սպասնում էր ռազմադաշտային դատարան: Ցեվ մինչև կատաստրոֆը, նա նստած էր Մարգարիտայի բուլվարում դանված բանտում:

Կազմակերպվեց կոմունիստական կուսակցութեյուն: Գոդոչիին քշեցին դործարանից: Գայդուն ձերբակալվեց:

Հազար լինն հարյուր տասնինն թիվ: Մարտի քսան մեկը:

Գայդուն դնաց ռումինական ֆրոնտ: Գոդոչին՝ յերկու շաբաթով ավելի ուշ՝ չեխերի դեմ: Նահանջի ժամանակ պատահեցին իրար Գեչառում: Փախան միասին: Անցան ավստրիական սահմանը: Մեկ ու կես ամսից հետո Գայդուն նորից դործի յեր: Ռումինիա: Տրանսիլվանիա: Գործադուլ: Սիգուրանցա[1]): Հարցաքննութեյուն: Լլկանքներ ջրով ու հրով: Տասնուհինգ տարի տաժակրանք: Փախուստ: Սլովակիա: Վիեննա:

Գոդոչը նրանց մեջ էր, ովքեր վերադարձան տուն, վոր ողջնեն Ռատա Կորվինին՝ փախչելու: Ցերկու ընկերոջ բռնեցին և տանջելով սպանեցին: Գոդոչին հաջողվեց փախչել Ցուգոսլավիա: Վեց ամիս նա աշխատեց Գեչ քաղաքում: Ցեվ ահա նա Վիեննայում է:

Ներս մտավ Շիմոնը: Նստեց Գոդոչի մոտ: Նա վերջացնում էր ռոմով թեյի յերրորդ բաժակը: Նրա դեմքը կարմրել էր: Նա նստած էր անշարժ և ուղիղ, ինչպես զինվորը կանգնում է դորահանդեսի ժամանակ:

— Քիչ հետո,—ասում է Շիմոնը մոտ վազող կելներին:

Քիչ հետո՝ նշանակում է. «Ցես կուշա եմ: Այժմ չեմ ուզում վո՛չ ուտել, վո՛չ խմել: Քիչ հետո մոտեցեք և պատվեր ստացեք»:

— Դու աշխատանք չունե՞ս,—հարցնում է Շիմոնը Գոդոչիին:

Շիմոնը դլխով դրական շարժում է անում:

— Թեյ ռոմով,—պատվիրում է Գոդոչիին:

— Ասանց ռոմի:

— Ինչո՞ւ առանց ռոմի: Իմը կրավականացնի,—ասում է Գոդոչիին, ձեռքը խփելով շալվարի դրպանին:

— Ցես հակասալկահոլիստ եմ,—ժպտում է Շիմոնը:

Գոդոչին չարժում է ձեռքն արհամարհալից:

---

[1]) Ռումինական ոխրանկա: Ծան. թարգմ.:

Լենկեն և Պյոտրը բավական ժամանակ գնում եյին լուռ: Նրանցից յուրաքանչյուրը խորասուզված եր իր մտքերի մեջ: Նրանք արդեն հեռացել եյին քաղաքի կենտրոնից և գտնվում եյին Գյուբահելի մոտ, յերբ Լենկեն առաջինը խոսեց.

— Գիտեք, Պյոտր, դժվար է ապրել եմիգրացիայի մեջ:

— Գիտեմ: Դուք չհոգնեցի՞ք:

— Մի քիչ:

Պյոտրը թևանցուկ բռնեց աղջկան:

Այդպես լուռ հասան նրանք Գրինցինգ:

Նրանք արդեն մոտենում եյին հեղակներին:

— Ցերկու տարի առաջ,—ասաց Պյոտրը,—այն ժամանակ յես առաջին անգամ եյի հեռանում յերկրից,—յես էլ եյի ապրում այստեղ: Այն որվանից յես առիթ չեմ ունեցել լինելու քառասուն յերեքերորդ հեղակում:

— Մտեք: Հիշեք անցյալը:

Պյոտրը, հայտնի չէ, թե ինչո՛ւ, հուզ ուներ, թե Լենկեն ապրում է նույն սենյակում, վորտեղ մի ժամանակ ապրում եր Դրագան: Բայց նա սխալվեց: Լենկեն ապրում եր հեղակի հյուսիսային Փլիզելում:

Հետևյալ որը հետաքրքրական ժամանակ Պյոտրը փողոցում պատահմամբ հանդիպեց Գյուլային: Ցերկու ժամ նրանք թափառում եյին վարար անձրևի տակ: Վեճով տարված, նրանք չնկատեցին, վոր վոտից-գլուխ թրջված են: Պյոտրը խոսք արավ Գոմոննայի մասին:

— Գոմոննայ... Գոմոննայ... Կաց! Արդյոք, դա այն հետաքրքրասյունը չե՞, ձվածև գանգով: Փիլիսոփա, յեթե չեմ սխալվում:

— Հենց նա յե, վոր կա:

— Ցես ճանաչում եմ նրան: Բայց պատասխանատու չեմ նրա համար: Կուսակցության հետ վոչ մի կապ չունի: Եմիգրանտ է: Բայց թե ի՛նչն է ստիպել նրան հեռանալ յերկրից, հայտնի յե միայն իրեն: Ցեթե, իհարկե, նա լինքը գիտե այդ: Կրկնում եմ, նա վոչ մի առնչություն չունի կուսակցության հետ: Իսկ մեր Փրակցիայի ենտուզիաստ է դարձել այն հասարակ պատճառով, յերևի, վոր անցյալում նա ինչ-վոր կապ է ունեցել Արվաների հետ այն ժամանակ, յերբ նա տեննիսի չեմպիոն եր կամ որա պես մի բան: Ցեթե յուրաքանչյուր մանր ժուլիկի պատճառով դուս պիտի արամադրություն վիշացնես, այդ դեպքում՝ իրոք ավելի լավ է, վոր յես դառնաս բանտ:

Պյոտրը յերեկոն անցկացրեց Լենկեյի մոտ: Նա տուն վերադարձավ շատ ուշ: Տանը նրան հյուր եր սպասում՝ Գոտեմանը:

— Վոր դուս փախար, դա այդպես էլ պիտի լիներ: Բայց ի՞նչպես կարողացար այդքան յերկար դիմանալ Խորտիի աղ ու հացին:

— Կարծում ես, ինձ հարցնո՞ւմ եյին, յեղբայր պահապան:

— Չի կարող պատահել:

— Իսկ դուս ի՞նչով ես զբաղվում:

— Ավելի լավ բան չգտնելով, ծառայում եմ վորպես խոհարար:

— Խոհարա՞ր: Մի՞թե դուս պատրաստել գիտես:

— Պատրաստել՝ վո՛չ: Բայց ամաններ լվանալ կարողանում եմ: Ե՛հ, աշխատանք է, ելի՛: Ցեվ, ինչպես տեսնում ես...

Գոտեմանը նչեց սեղանը, վորի վրա դրված եր ճարպի յերկու կտոր, խողի գլխի վոսկոր և այլ հրաչալիքներ:

— ... Ինչպես տեսնում ես...

— Իսկ ի՞նչ կասես դուս Ֆրակցիոն պայքարի առթիվ,—հարցրեց Պյոտրը, խժռելով խորթիկները:

— Կեր, բարեկամ, կեր,—հյուրասիրում եր Գոտեմանը:

— Իսկ դուս ի՞նչ կասես Յուրիևի մասին,—մի րոպե անց՝ հարցրեց Գոտեմանն իր հերթին:—Հիշեր, Պյոտր: Հայհոյեր ինձ սոցիալ-դեմոկրատ բառով, յեթե մի ամսից հետո Վիեննայի փողոցներում արյուն չթափվի: Ցես արդեն անտղել եմ խոհանոցի մեծ դանակը: Հարմար գենք է: Ուզո՞ւմ ես, մեկը կարող եմ նվիրել քեզ:

ՑԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է...

Ֆրանց Գայդուն յեկավ տատնումեկվին, ժողովը բացվելուց մի ժամ շուտ, առաջիններից մեկը:

Առանց շտապելու, նեղ սանդուխքով լքվավ նա դահլիճ: Դահլիճը դատարկ եր: Ելեկտրական մի լամպ միայն թույլ լուսավորում եր բիլիարդի յերեք սեղանը, կաղ աթոռների յերկար շարքը բեմի շուրջը, վոր առաջ եր քաշած դահլիճի մեջ-

տեղը: Բեմի վրա՝ կանաչ մահուդով ծածկած մի սեղան, յերկու աթոռ:

Գայդուն նայեց ժամացույցին և մոքում հայհոյեց: Նա դիմեց դեպի յելքի դուռը: Սանդուխքով բարձրանալիս՝ հանդիպեց Գոդոչիլին:

— Բարև:

— Բարև:

Ցեվ բաժանվեցին, հեռացան իրարից: Գայդուի մոքով անդամ չանցավ՝ ասել Գոդոչին, վոր դահլիճում դեռ վոչ վոք չկա:

Ներքևում, կաֆեյում, կիբակնորյա առավոտյան այցելուներ: Համաքվել եյին, վոր մի քիչ նստեն, աչքի անցնեն թերթերը, քան թե նախաճաշեն:

Գայդուն նստեց սեղանի առաջ: Թեյ պատվիրեց՝ ռոմի կրկնակի բաժնով: Մի րոպե անց՝ Գոդոչին բաներ հարևան սեղանը և նույնպես պատվիրեց թեյ՝ ռոմի կրկնակի բաժնով: Սպասելով պատվիրած թեյին, նրանք զննում եյին իրար: Վո՛չ թշնամաբար, վո՛չ: Ավելի չուտ՝ ծաղրանքով: Կարծես, նրանցից յուրաքանչյուրը մտածում եր. «Ե՛, բարեկամս, մինչև կոկորդդու թաղվել, խրվել ես...»:

Համարյա տասը տարի նրանք միասին աշխատել եյին Զեպելի գործարանում:

«Մի ամբողջ լեռ կկազմեր այն գարեջուրը, վոր մենք խմեցինք միասին, մինչև մեզ հաջողվեց մեր տղերքին քշել դեպի պրոֆմիությունները»,—մտածում եր Գայդուն:

Սակայն միասեղ աշխատանքի յերկար տարիների ընթացքում միայն գարեջուրը չեր, վոր թափվել եր, հոսել:

Ինն հարյուր տասնուհինգ թվի ապրիլ ամսին նրանք միասին ներկա եյին դպանի այն ժողովին, վորը սոցիալ-դեմոկրատական կուսակցության թիֆլունքում քննարկում եր գործադուլի հնարավորությունները և վորոշեց պատրաստել քաղաքական գործադուլ:

Հազար ինն հարյուր տասնուվեց թվիը: Հազար ինն հարյուր տասնյոթը: Հազար ինն հարյուր տասնութը:

Գայդուն ղեկավարներից մեկն եր այն գործադուլի, վոր հայտարարվեց Բրեստի հաշտության բանակցությունների որերին: Նրան ձերբակալեցին: Շուտով էլ ազատեցին: Ցերեկը չաթաթ անց՝ վերցրին բանակ և ուղարկեցին իտալական ֆրոնտ:

Մի ամիս անց, Գոդոչիլին սպասնում եր ռազմաղաշտային դատարան: Ցեվ մինչև կատաստրոֆը, նա նստած եր Մարզաբիտալի բուլվարում գտնված բանտում:

Կազմակերպվեց կոմունիստական կուսակցություն: Գոդոչիլին քշեցին գործարանից: Գայդուն ձերբակալվեց:

Հազար ինն հարյուր տասնինն թիվ: Մարտի քսան մեկը:

Գայդուն գնաց ռումինական ֆրոնտ: Գոդոչին՝ յերկու շաբաթով ավելի ուշ՝ չեխերի դեմ: Նահանջի ժամանակ պատահեցին իրար Պեշտում: Փախան միասին: Անցան ավստրիական սահմանը: Մեկ ու կես ամսից հետո Գայդուն նորից գործի յեր: Ռումինիա: Տրանսիլվանիա: Գործադուլ: Սիգուրանցա[1]): Հարցաքննություն: Լվիվանքներ ջրով ու հրով:

Տասնուհինգ տարի տաժակրանք: Փախուստ: Սլովակիա: Վիեննա:

Գոդոչը նրանց մեջ եր, ովքեր վերադարձան տուն, վոր ողջունեն Ոտտո Կորվինին՝ փախչելու: Յերկու ընկերոջ բռնեցին և ուղարկեցին Գոդոչին հաջողվեց փախչել Յուգոսլավիա: Գոդոչին հաջողվեց փախչել Յուգոսլավիա: Վեց ամիս նա աշխատեց Պեչ քաղաքում: Ցեվ ահա նա վիեննայում է:

Ներս մտավ Շիմոնը: Նստեց Գոդոչի մոտ: Նա վերջացնում եր ռոմով թեյի յերրորդ բաժակը: Նրա դեմքը կարմրել եր: Նա նստած եր անշարժ և ուղիղ, ինչպես պինվորը կանգնում է զորահանդեսի ժամանակ:

— Քիչ հետո,—ասում է Շիմոնը մոտ վազող կեղևերին:

Քիչ հետո՝ նշանակում է. «Ցես կուշա եմ: Այժմ չեմ ուզում վո՛չ ուտել, վո՛չ խմել: Քիչ հետո մոտեցեք և պատվեր ստացեք»:

— Դու աշխատանք չունե՞ս,—հարցնում է Շիմոնը Գոդոչիլին:

Շիմոնը դլխով դրական շարժում է անում:

— Թեյ ռոմով,—պատվիրում է Գոդոչին:

— Ամանց ռոմի:

— Ինչո՞ւ ստանց ռոմի: Իմը կրամպականացնի,—ասում է Գոդոչին, ձեռքը խփելով չալմարի գրպանին:

— Ցես հակապակահոլիստ եմ,—ծիծաղում է Շիմոնը:

Գոդոչին չարժում է ձեռքն արհամարհալից:

---

[1]) Ռումինական ոխրանկա: Ծան. թարգմ.:

Գայդուի մոտ նստեց Շյուտեն: Կատաստրոյի ապստամբության հերոսը: Նրան մխանում է կեչեն, վորը նոր է վերադարձել Ռուսաստանից: Քաղաքացիական պատերազմի ամբողջ յերեք տարին նա անցկացրեց արևելյան ֆրոնտում: Վո՛չ Շյուտեն, վո՛չ կեչեն չեն բարևում Գոդոչին:

— Այսոր այս... կեչների հոգին դուրս կգա,— ասում է Գոդոչին Շիմոնին դիտմամբ բարձրաձայն, վոր լսեն հարևան սեղանի առաջ նստողները:

Բայց նրանք ուրիշ բանով են զբաղված: Կեչեն ձեռքին բռնած ունի մոսկովյան «Պրավդա» թերթը: Նա բացատրում է ինչ-վոր բան: Շյուտեն քրքջում է: Գայդուն դյմով հավանության չարժում է անում: Նրա կապույտ աչքերը փայլում են հիացքից:

— Մոտեցիր, սիրելիս, մոտեցիր,—վողջունում է նա ներս յեկող Ֆյուրեդելին, պատպեցի կոչկակարին, վորը Շիոֆոկում, Նորաբի դյուղավոր շուրջ-կայանում յեղած ութորյա հարցաքննությունից հետո խլացավ յերկու ականջով: Նրա ձախ վոտի ծունկը չեր ծալվում:—Կարծես, այսոր լիկվիդացիայի յենք յենթարկվում, հա՞, յեղբայր:

— Աքսորում են նրան Մադեյրա կղզին,— բացատրում է Ֆյուրեդելին:— Ինչ հետո,— յերես է դարձնում նա կեչներից:

Գոդոչին մոտեցավ Մանդոկին, նախկին ուսուցիչ Միչկոլցում: Նա մի բան է բացատրում, ցույց տալով նամակը: Գոդոչիի դեմքը մթագնում է:

Կաֆեն այժմ լցված է եմիգրանտներով:

— Ինչ հետո...

— Ինչ հետո...

Ցերը մտնում է Պյոտրը, Գոտեմանը բարձրաձայն վողջունում է նրան.

— Այստեղ! Այստեղ! Ցես վաղուց եմ սպասում քեզ:

Շիմոնն ագահաբար վոչնչացնում է այն ուտելիքների մնացորդները, վոր բերել եր Գոտեմանը: Նա կարծես իր դեմքը թաղել է այդ ճարպոտած լրագրի թղթի մեջ:

— Սոված ես, Պյոտր:

— Վո՛չ շատ:

— Մի բան կեր: Մեզ սպասում է յերկարատև ժողով:

— Ժողովում կլինի Կոմինտերնի ներկայացուցիչը,—հաղորդում է նորությունը Շիմոնը:

— Ո՞ւմ է ուղարկել Կոմինտերնը:

— Ջոջերից մեկին,—յենթադրում է Գոտեմանը:—Նու, դա արդեն Գյուլայի և ընկերության հախից կգա, ինչպես վոր պետք է: Վաղուց ժամանակ է:

— Դու կարծո՞ւմ ես,— կասկածում է Շիմոնը:

— Ցես դիտեմ,—ասում է Գոտեմանը:

— Ուրեմն՝ դո՞ւ... Ցեվ յես ընդունեցի քեզնից այդ...

Շիմոնը մեկնում է Գոտեմանին ճարպոտ թուղթը: Նա չի վերցնում: Բայց տեսնելով, վոր թղթի մեջ վոչինչ չկա, վերցնում: Բայց տեսնելով, վոր թղթի մեջ վոչինչ չկա, վերցնում է և պղտում է վիր ու պիրելի գամբյուղը: Շիմոնը հեռանում է:

— Գնանք ներքև, Պյոտր:

Ներքև տանող դռան մոտ յերկու ֆրակցիաների լիազորները պահանջում են լեգիտիմացիա: Պյոտրի բանը վատ է: Նա չունի վոչ մի վավերաթուղթ:

— Ցես չեմ ճանաչում այդ ընկերոջը,—ասում է հերթապահ՝ բարձրահասակ խարտյաշ մազերով յերիտասարդ մի բանվոր:

— Կարող ես թողնել,—բղավում է մոտիկ կանգնած Գյուլայը:

Այն ժամանակ միջամտում է պահակը:

— Ձեր ազգանո՞ւնը, ընկեր: Ինչպե՞ս: Պյոտր Կովա՞չ:

— Դա այն Կովաչը չէ՞,—կոպիտ ձայնով միջամտում է մի ուրիշ:

— Դա այն Կովաչը չէ՞,—կոպիտ ձայնով միջամտում է մի ուրիշ, վոր նման է ֆելդֆեբելի:—Նա նստած է Հավաքի բանկին, վոր նման է ֆելդֆեբելի:—Նա նստած է Հավաքի բանկին, վոր նման է ֆելդֆեբելի՝ միջամտում:

Վերջապես մեծ դժվարությամբ «վավերացնում են» Պյոտրին:

Դահլիճը հետզհետե լցվում է: Բոլոր լամպերը վառ են: Հավաքվում են խմբերով: Փսփսում են: Տեղ-տեղ վիճում են բարձրաձայն:

— Դուք տեսնում եք միայն անհաջողությունները: Մեր նվաճումների հանդեպ դուք աչք եք փակում կամ ուղղակի բացատում եք դրանց դոյությունը: Մինչդեռ, նվաճումները քիչ չեն:

— Հողի հեղափոխական բռնապրավո՞ւմ: Վո՞ւնց չէ: Լսել ենք այդ յերգը:

— Դիալեկտիկա... Շնորհակալություն! Դիալեկտիկան դուք

հասկանում եք այսպես. յոթն նպատակը դանվում է ձախ կողմում, ուրեմն՝ նրան պիտի մոտենալ աջից: Շնորհակալություն!

— Իսկ ձեր դիալեկտիկան այն է, որ դուք յերբիք չեք կատարում ձեր խոստացածը: Վոչի՛նչ, լավ բան է դա...

Վիեննայի հունգարական եմիգրացիա... Հունգարական առաջին խորհրդային հանրապետության մասնակցող հեղափոխականներ: Նրա ապստամբ ահռած մարտիկներ: Յերկրորդ խորհրդային Հունգարիայի համար մղվող պայքարի պիոներները...

Յերը Կունը և Լանդլերը—պարտությունից անմիջապես հետո—ավստրիական դեմոկրատիայի համակենտրոնացման ճամբարից սկսեցին նորից ստեղծել կոմունիստական բանակ, Վիեննայի եմիգրացիան կազմեց այդ բանակի առաջին վաշտը: Այդ վաշտն իր շարքերից ջոկում էր խիզախներից ամենախիզախին, ուղարկում էր նրանց Հունգարիա, որպեսզի նորից պայքար սկսի մոլեգնող սպիտակ աերրորի ամենավտանգավոր վայրերում: Ամեն կազմից զալիս, հավաքվում էին այստեղ ջարդված բանակի մնացորդները: Այստեղ փախստականներին կազմակերպում, նրանցից պատրաստում էին նոր մարտիկներ: Այստեղ տաղտնավորվեց հետևյալ պլանը՝ ոգտագործել ժառանգ-յերկրների դեմոկրատիան և կոմունիստական կազմակերպությունների ցանցով պատել սպիտակ Հունգարիան, դրսից դեկավարելով պայքարը: Այդ որից սկսած ժառանգ-յերկրների դեմոկրատիան հանեց իր դիմակը,—սիգուրանցան, պրոպագանդի դրասենյակը, որտեղից իբրեց զաղրադործության չեն դիզում Զրինեի փողոցին: Ժառանգ-յերկրների պրոլետարիատը պայքարում է իր հարստահարիչների դեմ: Հունգարիայում նորից յեռում է աշխատանքը: Սպանվածներին փոխարինեցին նոր ռազմիկներ: Դրությունը Վիեննայում, այդ քաղաքի նշանակությունը, վիեննական եմիգրացիայի խնդիրներն այսոր այլևս այն չեն, ինչ եյին յերկու տարի առաջ: Հունգարական հպարտավոր կարմիր բանակայիններ, որ անցել են քաղաքացիական պատերազմի բոցերի միջից, նետում են իրենց տարազը և վերադառնում Հունգարիա, զոհելով ռուսական հեղափոխության փորձով: Այնտեղ նրանք պատգներ եյին քաղում, հնձում եյին, այստեղ նրանք զեռ պետք է վարեն հողը: Այն, որ պետական եր յերկու տարի առաջ, այսոր դարձել է անպետք: Այն, որ փայլուն զենք եր այն ժամանակ, այսոր՝ ժանգոտ յերկաթ է: Վիեննայի եմիգրացիայի զինանոցներում կգտնվեն բավական անպետք իրեր, որոնք պիտանի չեյին նույնիսկ յերկու տարի առաջ: Նա, ով վախենում է ընդունել իր սխալները, ով վախենում է դնել իր գործողությունները քննադատության խաչաձև կրակի տակ, նա իր հին սխալների վրա ավելացնում է նորերը: «Վո՛չ, մեր սխալները չեն, որ կործանեցին Խորհրդային Հունգարիան,—հենց սկզբից նա ձնվել եր մեռած...»:

Առաջին վաշտի շարքերը քայքայվեցին: Պոկվել են չոգեմեքենայի փոկերը: Անիվները զեռ պտտվում են իներցիայով՝ մեկը՝ դեպի աջ, մյուսը՝ դեպի ձախ: Մխիթար. Հիմնական անիվը, կր՝ դեպի աջ, չնչում է, Թորում եներգիա: Մոռենում է մեքենավարը: Ա՛յ, ահա մոռեցավ նա: Բացեց գործիքներով լեցուն արկղը: Պետք է նորոգել մեքենան: Աչխատանքի համար պիտանի անիվներին պետք է տալ ճիշտ ընթացք: Անպետքները՝ հեռացնել:

— Ժողովին ներկա չե կոմինտերնի ներկայացուցիչը: Կամ պիտի լինի Բելաբերնը, կամ՝ Ռադեկը:

Ժողովը բացեց Գուսակ-կիչը, տասներկուսից հինգ րոպե անց: Նա հրավիրեց ընկերներին՝ չխախտել «ապագայի հույսերով լի և մեծ անցյալով հպարտ Հունգարական կուսակցության» վայել «հանդիսան ու կարգը»:

Ժամի մեկն է: Յերկուսը: Յերեքը: Չորսը: Հինգը:

Հոսող հոսողի յեռևից: Փաստարկ փաստարկի յեռևից: Հունգարական հեղափոխության նախապատրաստության յուրաքանչյուր փոքրիկ մանրամասն, հարյուր յերեսուն յերեքրյա դիվանագիտության և նրա պարտության յուրաքանչյուր չնչին միջադեպ, վերջին յերկու տարվա աչխատանքը յուրաքանչյուրը Ֆրոնդեպ, յուրաքանչյուր յելույթի մանրամասնություններն անցում են ունկնդիրների առջևից: Յուրաքանչյուր հոսող լուսանում է վրան եվ վերջին տարիների պատմությունից: Յուրաքանչյուրը կենդանացնում է մոռացված վրան միջադեպ: Յեվ յուրաքանչյուր միջադեպ հնչում է վորպես փաստարկ՝ այս կամ այն կողմի համար: Փաստարկ փաստարկի դեմ: Սկզբում վիճաբանության բնույթը զեռ կրում է իր վրա եմիգրանտական կաֆեների թունավորված մթնոլորտի դրոշմը: Բայց քննարկվող հարցերի կարևորությունը չի հանդուրժում թեթևամիտ տոն: Կուսակցության նչանակությունը... Հողային հարցը... Կուսակցությունը...

Ժամի յոթն է: Ութը: Իննը: Տասը:

Դահլիճը լցված է ծխախոտի ծխով, որ նման է փողոցա-

յին մառախուղի: Հոգնած դեմքեր: Կրքերը դեռ չեն իջել, բայց մարմինները խոնջացել են: Արդեն դժվար է հետևել հռետորների ճառերին: Այստեղ, այնտեղ զրուցում են կես ձայնով:

Տասնումեկն է:

— Ուշադրություն, ընկերներ!

Կիչը բռունցքով թմբկահարում է սեղանը:

— Ընկերներ, լռություն! Փակեք դռները! Ժողում եմ, վոչ վոք չհեռանա իր տեղից: Խոսքը տրվում է կոմունիստական Ինտերնացիոնալի ներկայացուցչին:

Հետին շարքերում չեն լսում Կիչի խոսքերը: Բայց տեսնում են, վոր առաջին շարքերում կանգնում են: Մի քանի վայրկյանից հետո ամբողջ դահլիճը վոտի վրա չէ: Լռություն: Բեմի վրա Գուսակ-Կիչի կողքին կանգնած է Գոնդան: Գոնդան կոմինտերնի ներկայացուցիչն է: Այն նույն Գոնդան, վորը դեռ մեկ ու կես տարի առաջ մեքենավար էր Սոլվա—Պոլենա նեղածիր երկաթուղու վրա և թագցնում էր ընկերներից, վոր իր աչքերը կարմիր են դիչերվա ընթերցանությունից:

Գոնդան կանգնել է, վոտները լայն բացած: Ձեռները դրել պանում: Գլուխը ճղած առաջ: Նրա համարձակ աչքերը սահում, անցնում են մի դեմքից դեպի մյուսը:

— Ընկերներ!..

Ժողովը վերջացավ դիչերվա ժամը մեկից կես անց:

Վաղ առավոտյան Պյոտրին զարթեցրեց այն յերիտասարդ բանվորը, վորը յերեկ չէր ուզում ներս թողնել նրան ժողովի դահլիճը:

— Շուտ! Շուտ!

Տասը րոպեից նրանք արդեն նստած էին տրամվայի մեջ: Կես ժամից Պյոտրը Գոնդայի մոտ էր: Գոնդան իջևանել էր ավըտրիական իր ընկերներից մեկի բնակարանում: Ամբողջ առավոտը Պյոտրը և Գոնդան միասին անցկացրին: Գոնդան մանրամասնորեն հարցնում էր Պյոտրին ամեն բանի մասին: Առանձնապես հետաքրքրում էր նրան վոչ թե կյանքն եմիգրացիայի մեջ, այլ այն, ի՛նչ Պյոտրը տեսել, լսել և քաչել էր Հունգարիայում: Գոնդան վոչինչ զրի չէր առնում: Առանձնապես կարևոր տեղեկություններ նա ստիպում էր կրկնել:

— Դառնությունները չատ ես քաչել դու, Պյոտր:

— Ե՛, իսկ վո՞նց են ձեր գործերը:.

— Ցեթե յես կարողանայի այնպես լավ պատմել, ինչպես

դու, դարձյալ չեյի կարող պատմել բոլորը: Այժմ մի տարվա ընթացքում ամեն ինչ փոխվում է: Հիշո՞ւմ ես,—վո՛նց կարող ես չհիշել,—այն ժողովը, վոր դու դումարեցիր հանգուցյալ Լակատոյայի հետ: Յերբ մենք հավաքվեցինք Մունկաչի դղյակում... Դա կոմունիստական առաջին կոնգրեսն էր Չեխո-Սլովակիայում: Այն որից անցել է մեկ ու կես տարի: Իսկ այժմ յես ուզում եմ այստեղ չեխո-սլովակյան կոմունիստական կուսակցության առաջին կոնգրեսից: Ցեթե դու կարողանայիր լինել այնտե՛ղ, Պյոտր:

Գոնդայի հանդիստ դեմքը կարմրեց: Նա գրգռված, հուզված էր: Խոսում է կոնգրեսի քաղաքական նշանակության մասին, պատվիրակների մասին: Պատմում էր հաստլիկ, զգուշ մարդու մասին, տաքգլուխ և կատածամիտ մարդու մասին, կոչտուկավոր ձեռներով մարդու մասին, հուսինյան տրադիցիաներն իր մեջ կրողի և տեսարանի մասին... Նա սուր աչք ուներ, նա չատ լավ նկատում էր մարդկանց բնորոշ գծերն ու թերությունները: Բայց նա եմիգրանտ չէր: Նա նկատում էր վոչ միմիայն թերություններ: Նա սիրում և հարգում էր իր ընկերներին, չնայած նրանց թերություններին: Նա ընկերաբար ծիծաղում էր նրանց վրա և ուրախանում էր իր սեփական յումորի համար, սրատեսին ու բարձրաճաշն ծիծաղելով:

Բայց յերբ խոսք արին դավաճանների մասին, Գոնդան խոժոռվեց և դարձավ խոսքի ժլատ: Նրա աչքերը վայրկենեցին, ինչպես հրկած պղպատ: Բերանի շուրջը յեղած խորշոմներն ավելի ակնբախ դարձան:

— Ե՛, ուրիչ ել ի՞նչ պատմեմ քեզ: Մերձկարպատյան Ռուսիա... Ա՛խ, ցեթե դու տեսնեյիր այդ մոբիլիզացիան, Պյոտր: Քարտուղարության մոտ յեկան յերկու դյուզաչիներ: «Բարի որ»:—«Բարև ձեզ, ընկերներ: Ի՞նչ գործով»:—«Մենք յեկանք մոբիլիզացիայի համար»:— «Ընկերներ, մոբիլիզացիա անողը մենք չենք, ընկերներ, այլ չեխական կառավարությունն է»:— «Գիտենք այդ, գիտենք: Դրա համար ել յեկանք: Զե՞ վոր մեզ կենքի կանչողը վո՛չ Լենինն է, վո՛չ ել Բելա Կունը... Հիմա ի՞նչ անենք մենք: Գնա՞նք, թե՞ չլսելու տանք»: Սկզբում յեկան յերկուսը, հետո ելի յերկուսը: Հետո գալիս էին արդեն խմբերով: Յերևակայիր քեզ մեր դրությունը: Մերձկարպատյան Ռուսիայի աշխատավորները հարցնում են մեզ. ինչպե՞ս անել: Գնա՞լ, արդյոք, մոբիլիզացիայի, թե՞ վոչ: Իսկ մենք նստել ենք ա-

վանակների պես: Կապ չկա՝ վո՛չ Պրագայի, վո՛չ Վիեննայի հետ: Վոսթիկանությունը կազմակերպվել է մեզնից հարյուր անգամ ավելի լավ: Նա կարում, փակում է մեր բոլոր ճանապարհները: Մենք ամեն ինչ իմանում ենք գրաքննության յենթարկված թերթերից մեկայն. «Կարլը զորքերով շարժվում է Բուդապեշտի վրա...»: «Փոքր Անատոլը ռազմավորում է...»: Ե՛հ, ի՞նչ պետք է անելինք: Բայց յերևում է, որ չես ու դու անցել ենք միևնույն ղպրոցը: Մենք էլ քեզ պես վարժվեցինք: Մենք ասինք. «Տղերք, դենք վերցրեք և սպասեք մեր կարգադրությունների»: Նրանք չնորհակալություն հայտնեցին մեզ մեր տված խորհրդի համար... Մորելիզացիայի յերկրորդ որը չես պետք է գնայի Պրագա՝ կոնգրեսի: Ճանապարհը հայտնի չ քեզ: Տեղ-տեղ ճանապարհն անցնում է հունգարական սահմանագծից չատ մոտիկ: Յերևում են չեխ ժանդարմները՝ տափակ կեպիներով—կողք-կողքի իրենց հունգարացի կոլեգաների հետ՝ աքաղաղի փետուրներով: Ահա թե յե՛րբ եր հետաքրքիր՝ դիտել սահմանը: Ցես տեսա տանկեր, որոնց նմանը յերազում էլ չեյի տեսած պատերազմի ժամանակ: Կարծես՝ մորելիզացիայի յեն յենթարկվել վո՛չ թե մարդիկ, այլ մեքենաները: Մարդիկ նույնպես քիչ չեյին, բայց նրանք կորչում եյին մեքենաների արանքում: Չեխական մորելիզացիան անց եր կացվում չատ ավելի ահռելի կերպով, քան ավստրո—հունգարականը տասնուչորս թվին: Ցես նկատի ունեմ տեխնիկական սարքավորումը: Բայց մի բան պակասում եր: Չկար այն մասսան, որը պատերազմի հայտարարումն ընդունեց «կեցցե» բացականչություններով: Չեխական զինվորներին վոչ վոք չեր նվիրում պսակներ և չոկոլադ: Վոչ վոք ծաղիկ չեր շաղում նրանց վրա: Ուրախ, խրոմադաղեմ չեյին զինվորները: Ձիչա և մի բան, որ նրանք գնում եյին յերզելով: Բայց «ընկած-յելած» յուրաքանչյուր կարող եր նրանց յերգի միջից պարզ լսել ֆելդֆեբելի սպառնալից գոչը. «Յերգեցեք, չան տղերք, թե չե՝ յես կթափեմ ձեր աղիքները: Յերգեցեք ուրախ, ձեր մոր...»: Դիտե՞ս, Պյոտր, ինձ թվում է, որ զինվորներն սկսում են հասկանալ: Նրանք դեռ լիովին չեն հասկացել, թե ինչի՛ համար կարող եյին պետք գալ հրացանները, բայց մի բան պարզ է նրանց, որ յեթե նրանց վրա կրակեն, նրանք էլ կրակով կպատասխանեն: Բայց յես ասում եմ, որ յեթե պնդեյի, որ չտեսա ուրախ, վոգևորված զինվորների: Պրագայի արվարձաններից մեկում յես ականատես

եյի, թե պահեստի զինվորները, որ մորելիզացիայից հետո գնում եյին իրենց վաշտերը, կանչում եյին՝ «կեցցե Լենինը և Մորհրդային Ռուսաստանը»: Հենց դրանք եյին լավ տրամադրության: Նրանք «կարմիր դրոշը» յերգում եյին այնպիսի խանդավառությամբ, որ վողոցը դողում եր: Դա կոնգրեսի խակական բացումն եր: Այո՛... Ե՛հ, ուրիշ էլ ի՞նչ պատմեմ քեզ: Մերձկարպատյան Ռուսիա... Փակվում են գործարանները, ֆաբրիկանները: Չեխերին հարկավոր է գաղութ, որ չունի իր սեփական արդյունաբերությունը: Ամբողջ յերկրում թագավորում է «ալան-թալանը»: Այո՛...

— Հա, քիչ մնաց մոռանայի: Մորելիզացիայի հենց առաջին որն Իվան Ռոժոչին գտան իր կաբինետում սպանված, գլխին գնդակի վերք:

— Ինքնասպանությո՞ւն:

— Պաշտոնապես՝ այո: Իսկ իրապես... Գնդակը ծոծրակից մտել, աչքից դուրս եր յեկել: Դեռ վոչ մի ինքնասպան այդպիսի ճարպիկ ինքնասպանություն գործած չի յեղել: Իմ կարծիքով, դա սրոպագանդի գրասենյակի արած չարագործությունն է: Լուրեր են պտտվում, իբր Ռոժոչի մասը խառն է յեղել թագավորական պուտչի մեջ: Դա նման է նրան...

Գոնդան խուսափեց հունգարական կուսակցական գործերի մասին խոսակցությունից. թվում եր, նա չլսելու տվեց Պյոտրի խոսքերը, թե պատրաստվում է վաղը գնալ Գայդոչի մոտ և աշխատանք խնդրել:

Կայարանում մեկայն, գնացք նստելուց առաջ, Գոնդան ասաց մի քանի խոսք, որ կարելի յեր հասկանալ վորպես անուղղակի ցուցմունք:

— Ցերը Արվաին խոսում է,—իսկ յերեկվա ժողովից առաջ յես ամբողջ յերեք ժամ զրուցում եյի նրա հետ,—մի խոսքով՝ յերբ յես լսում եմ Արվաիին, ակամա հիշում եմ Դավիդ Կորնին: Նույնիսկ իրենց արտաքին տեսքով նրանք նման են իրար: Կորնը նույնպես վիթխարի ու հաստլիկ մարդ եր, ինչպես Արվաին և նույնիսկ մի բրուքն էլ թողնում եր ճիշտ և ճիշտ նրա պես: Հը՛մ... Դավիդ Կորնը,—թող քեզ չվրդովի այն հանգամանքը, որ դու չես ճանաչում նրան,—քաղաքական մեծություններից չեր: Նա հասարակ պանդոկապետի վորդի յե Սոլվայից: Ցես ու նա միասին հաճախում եյինք պյուղական ղպրոց: Ղպրոցը վերջացնելուց հետո Դավթին ուղարկեցին քաղաք՝ սովորելու: Ցես մնա-

ցի՝ սագերը արածացնելու: Հետո դարձա վայտահատ: Ցերը չի-նում էլին նեղածիր յերկաթուղին, յես աշխատում էլի այնտեղ: Հետագայում, ինչպես հայտնի յե քեզ, յես դարձա մեքենա-վար: Ցես համարյա սկսել էլի ընտելանալ այդ արհեստին: Ցեվ ահա մի անգամ ամառվա արձակուրդներին, Դավիթը յեկավ տուն: Հին ընկերական ղաղցումից դրդված, յես համարյա ամեն-որ չոգեշարժով տանում էլի Պոլենա: Նա սկրաբանում եր այն տեղ մի ինչ-որ աղջկա հետ: Մի անգամ ճանապարհին նրա դլխին փչեց՝ բացատրել ինձ չոգեմեքենայի եյությունը, ո-րով նա շարժվում է: Ցեվ նա բացատրեց: Ցես իմացա, թե ին-չո՛ւ յեն անիվները շարժվում: Իմացա, թե ինչո՛ւ անիվները շարժվում են այսպես, և վո՛չ թե այլ կերպ: Ինչո՛ւ չոգեշարժը դնում է առաջ, և վոչ թե յետ: Իմացա, թե ինչո՛ւ չոգեշարժն է իր յետևից քաշում վագոնները, և վո՛չ թե հակառակը: Մի խոսքով՝ Դավթից սովորեցի ոգտակար շատ բան, թեև նրա բա-ցատրությունները լավ չէլի հասկանում, ինչպես և նա լավ չդի-տեր չոգեշարժային դործը: Բայց նա խոսում եր այնպես խելա-ցի և այնպես չխոթեցրեց մտքերս, վոր յես վախում էլի ձեռք տալ մեքենային: Նա հասցրեց ինձ հուսահատության և յեթե նա մի անգամ էլ կրկներ իր դասախոսությունը, յես կդցելի իմ չոգեմեքենան և կփախչելի նորից անտառ: Ցերեք որից հետո հետո յես նորից չոգեքարշով տարա Դավթին Պոլենա և նա կրկին սկսեց խոսել չոգեշարժ մեքենաների մասին: Իմ բախտից, պո-լենացի աղջկա պատճառով Դավիթը կռվեց մի մոնտյորի հետ: Այդ ընդհարման հետևանքով խեղճը մոտ յերկու շաբաթ ստիպ-ված յեղավ անկողին ընկնել: Այդ յերկու շաբաթվա ընթացքում Դավիթը հիասթափվեց հիշյալ աղջկանից, սառեց նաև դեպի ինձ: Սորվացի մի ինժեներ,—բնավ վո՛չ այնպես խելոք, ինչ-պես Դավիթն եր,— կես ժամվա մեջ ինձ հաշտեցրեց չոգեշար-ժի հետ: Ցեվ ինչպես գիտես, ինձնից դուրս յեկավ վոչ վատ մեքենավար: Հետագայում Դավիթը դարձավ բանկի դիրեկտորի պես մի բան: Ցես բոլորովին մոռացա նրա մասին: Բայց հենց վոր յես լսում եմ Արվաին, իսկույն հիշում եմ Դավթին: Ամ-բողջականություն... Հրմ... Ոպորտունիստ Ենգելս... Հրմ... Ցերիտասարդ Մարքսը Ցերունի Մարքսի դեմ... Ասա ինձ, Պյոտր, չի՞ կարելի, արդյոք, Արվաին նշանել պոլենացի վորևէ աղջկա հետ:

Հետևյալ որը, վաղ առավոտյան, Պյոտրը դնաց Դայդուչի մոտ:

— Մենք սովամահ կլինենք, ընկեր: Մենք կսատկենք, յեթե այդպես նատենք՝ ձեռները ծալած: Կսատկենք!

— Մի՛ հուզվեք, ընկեր: Մարդս այդպես չուտ չի սատկում: Պատերազմի ժամանակ մենք ավելի խիստ եյինք քաղցում:

— Այո՛, բայց այն ժամանակ խժռելու բան չկար: Իսկ այժմ խանութները սրաքվում են իրենց մեջ կուտակված մթերքներից: Չկա միայն դնելու դրամ:

— Բանից դուրս ե գալիս, ընկեր, վոր դուք գանգատվում եք վոչ թե սովից, այլ խանութների լիքը լինելուց: Դուրս ե գալիս, վոր կայսրի համար կարելի յե քաղցել, իսկ հանրապե-տության համար չի՞ կարելի: Պրոֆմիության զեկավարությունը չատ լավ հաշվառում է դրությունը: Կարվի այն ամենը, ինչ հնարավոր ե: Հանգիստ յեղեք: Ընկեր Բաուերի պլանը, վոր լուծում է տնտեսական պրոբլեմները, անշուշտ, հայտնի յե ա-մենքիդ: Հը՛, ի՞նչ կասեք: Կարելի՞ յե, արդյոք, յերևակայել դրանից ավելի հանճարեղ բան:

— Բայց մենք կսատկենք քաղցից, ընկեր:

— Դա լսեցինք, ընկեր: Ցեկեք՝ լուրջ խոսենք: Պետք է լա-րել համբերությունը: Հեղափոխական նավաշինները չկորցնելու նպատակով, կարելի յե և մի քիչ համբերել:

— Ցեթե միայն հույս ունենայինք, վոր դրությունը կբա-րելավվի, թեկուզ վոչ այնքան չուտ... կյանքը, սակայն, որ-ավուր դառնում է ավելի ու ավելի ծանր...

— Ավելի ծա՞նր: Իսկ ի՞նչ կասեիք դուք, ընկեր, յեթե հան-կարծ հայտնվեիք Հունդարիայում, Խորտիի սահեցած դրախ-տում: Կամ, ասենք, Խորհրդային Ռուսաստանում: Ի՞նչ յերդ կերգեիք այն ժամանակ, հրմ: Դա ձեղ համար կարմիր Վիեն-նան չե:

Վաղ առավոտվանից քաղաքի մեջ սկսեցին բերնե-բերան անցնել սարսրլնակ լուրեր: Ասում եյին, իբր Վիեներ-Նայչտադ-տի փաբրիկանների բանվորները գործը թողած, չարժվում են Վիեննայի վրա: Ցերևում հազար մեռտազործներ: Լուրերն աճում եյին: Բառաստան հազար: Հիսուն հազար: Թամբ տասներ-կուսի մոտ չչուկով խոսում եյին հարյուր հազարի մասին: Ոս-տաբրինդ, Ֆլորիսդորֆ... Ցերկու հարյուր հազար բանվորներ:

ցի՝ սագերը արածացնելու: Հետո դարձա փայտահատ: Ցերը չի-
նում էլին ներածիր յերկաթուղին, յես աշխատում էլի այնտեղ:
Հետագայում, ինչպես հայտնի յե քեզ, յես դարձա մեքենա-
վար: Ցես համարյա սկսել էլի ընտելանալ այդ արհեստին: Ցեվ
ահա մի անդամ ամառվա արձակուրդներին, Դավիթը յեկավ
տուն: Հին ընկերական զգացումից դրդված, յես համարյա ամեն
որ չոգեշարժով տանում էլի Պոլենա: Նա սիրաբանում եր այն
տեղ մի ինչ-որ աղջկա հետ: Մի անգամ ճանապարհին նրա
դլխին փչեց՝ բացատրել ինձ չոգեմեքենայի եյությունը, վո-
րով նա շարժվում է: Ցեվ նա բացատրեց: Ցես իմացա, թե ին-
չո՛ւ յեն անիվները շարժվում: Իմացա, թե ինչո՛ւ անիվները
շարժվում են այսպես, և վո՛չ թե այլ կերպ: Ինչո՛ւ չոգեշարժը
գնում է առաջ, և վոչ թե յետ: Իմացա, թե ինչո՛ւ չոգեշարժն
է իր յետևից քաշում վագոնները, և վո՛չ թե հակառակը: Մի
խոսքով՝ Դավթից սովորեցի ոգտակար շատ բան, թեև նրա բա-
ցատրությունները լավ չեյի հասկանում, ինչպես և նա լավ չգի-
տեր չոգեշարժային գործը: Բայց նա խոսում եր այնպես խելա-
յի և այնպես չխոթեցրեց մտքերս, որ յես վախում էլի ձեռ
տալ մեքենային: Նա հատցրեց ինձ հուսահատության և յերեք նա
մի անգամ էլ կրկներ իր դասախոսությունը, յես կգնեյի իմ
չոգեմեքենան և կվախչեյի նորից անտառ: Ցերեք որից հետո
հետո յես նորից չոգեքարշով տարա Դավթին Պոլենա և նա կրկին
սկսեց խոսել չոգեշարժ մեքենաների մասին: Իմ բախտից, պո-
լենացի աղջկա պատճառով Դավիթը կռվեց մի մոնտյորի հետ:
Այդ ընդհարման հետևանքով խեղճը մոտ յերկու շաբաթ ստիպ-
ված յեղավ անկողին ընկնել: Այդ յերկու շաբաթվա ընթացքում
Դավիթը հիասթափվեց հիշյալ աղջկանից, սառեց նաև դեպի
ինձ: Սովացի մի ինժեներ,—ընդավ վո՛չ այնպես խելոք, ինչ-
պես Դավիթն եր,— կես ժամվա մեջ ինձ հաշտեցրեց չոգեշար-
ժի հետ: Ցեվ ինչպես պիտես, ինձնից դուրս յեկավ վոչ վատ
մեքենավար: Հետագայում Դավիթը դարձավ բանկի դիրեկտորի
պես մի բան: Ցես բոլորովին մոռացա նրա մասին: Բայց հենց
վոր յես լսում եմ Արվաին, իսկույն հիշում եմ Դավթին: Մի-
րոզականություն... Հըմ... Ոպորտունիստ ենգելս... Հըմ...
Ցերիտասարդ Մարքսը Ցերունի Մարքսի դեմ... Ասա ինձ,
Պյոտր, չի՞ կարելի, արդյոք, Արվաին նշանել պոլենացի վորևէ
աղջկա հետ:

Հետևյալ որը, վաղ առավոտյան, Պյոտրը գնաց Գալդոչի
մոտ:

— Մենք սովամահ կլինենք, ընկեր: Մենք կատակենք, յեթե
այդպես նատենք՝ ձեռներս ծալած: Կատակենք!

— Մի՛ հուզվեք, ընկեր: Մարդս այդպես շուտ չի սատկում:
Պատերազմի ժամանակ մենք ավելի խիստ եյինք քաղցում:

— Այո՛, բայց այն ժամանակ խժռելու բան չկար: Իսկ այժմ
խանութները տրաքվում են իրենց մեջ կուտակված մթերքներից:
Չկա միայն գնելու դրամ:

— Բանից դուրս ե գալիս, ընկեր, վոր դուք գանգատվում
եք վոչ թե սովից, այլ խանութների լիքը լինելուց: Դուրս ե
գալիս, վոր կայսրի համար կարելի յե քաղցել, իսկ հանրապե-
տության համար չի՞ կարելի: Պրոֆմիության պեկավարությունը
շատ լավ հաշվառում ե դրությունը: Կարվի այն ամենը, ինչ
հնարավոր ե: Հանգիստ յեղեք: Ընկեր Բաուերի պլանը, վոր
լուծում ե տնտեսական պրոբլեմները, անշուշտ, հայտնի յե ա-
մենքիդ: Հը՛, ի՞նչ կասեք: Կարելի՞ յե, արդյոք, յերևակայել
դրանից ավելի հանճարեղ բան:

— Բայց մենք կատակենք քաղցից, ընկեր:

— Դա լսեցինք, ընկեր: Ցեկեք՝ լուրջ խոսենք: Պետք ե լա-
րել համբերությունը: Հեղափոխական նվաճումները չհօրցնելու
նպատակով, կարելի յե և մի քիչ համբերել:

— Ցեթե մեզ հույս ունենայինք, վոր դրությունը կբա-
րելավվի, թեկուզ վոչ այնքան շուտ... կյանքը, սակայն, որ-
ավուր դառնում ե ավելի ու ավելի ծանր...

— Ավելի ծա՞նր: Իսկ ի՞նչ կասեիք դուք, ընկեր, յեթե հան-
կարծ հայտնվեիք Հունգարիայում, Խորտիի սահմանած դրախ-
տում: Կամ, ասենք, Խորհրդային Ռուսաստանում: Ի՞նչ յերդ
կերգեիք այն ժամանակ, հըմ: Դա ձեզ համար կարմիր Վիեն-
նան չե:

Վաղ առավոտյանից քաղաքի մեջ սկսեցին բերնե-բերան
անցնել սարսրինակ լուրեր: Ասում եյին, իբր Վիեներ-Նայշտադ-
տի ֆաբրիկանների բանվորները գործը թողած, շարժվում են
Վիեննայի վրա: Ցերևում հազար մեռադագործներ: Լուրերն
աճում եյին: Բառասուն հազար: Հիսուն հազար: Ժամը տասներ-
կուսի մոտ չչուկով խոսում եյին հարյուր հազարի մասին: Ոա-
տաքրինգ, Ֆլորիսդորֆ... Ցերկու հարյուր հազար բանվորներ:

Կարմիր դրոշներով... Սև դրոշներով... Դրոշների վրա դաղեր: Գանգերի բերաններին դաշույններ...

Սարսափելի հեքիաթներ! Չե՞ վոր նրանք վո՛չ ռուսներ են, վո՛չ ել հունգարներ: Մեր բանվորները կղզոպարիչներ չեն: Նրանք ուրախ են, վոր թույլ են տալիս նրանց ապրել:

— Աստմ են, սոսկալի աղքատություն է:

— Մեծ բան չե: Հո նոր չպիտի՛ վարժվեն աղքատության: Մեծ փորձառություն ունեն: Մի՞թե սով չեր պատերազմի ժամանակ,—վոչի՛նչ, դիմացան: Ավստրիացի բանվորը շատ լավ կարողանում է քաղցել: Ինդրեմ, կարդացեք «Աբրեյտեր Ցեյթունգ» թերթը, և ականջ չեք կախի ամեն տեսակ լուրերի:

— Իսկ Վիեննե–Նայշտա՞դտը...

— Վախենալու բան դատաք! Պրոֆմիության դեկավարներից մեկը, վորի համար մոտ որերս յես կնքեցի մի քանի փոքրիկ գործարքներ,—կարճ՝ այդ «ընկերն» ինձ հավաստիացրեց, վոր սոցիալ–դեմոկրատ կուսակցությունն ուղարկել է Վիեննե–Նայշտադտ մի քանի վողջամիտ մարդկանց: Նրանք հեչության մատնված կազատվեն կոմունիստներից: Տագնապի վոչ մի պատճառ! Ցյուրիխյան վերջին արժեգրները գիտե՞ք:

— Անկում տասնումեկ կետով:

— Մ՛յ, տեսնո՞ւմ եք: Յես կարող եմ հանգստացնել ձեզ: Ցեթե ավստրիացի բանվորները հազար անգամ դլուխ կոնձի տան, մրևնույն է, սարսափելի բան չի պատահի: Մեր մեջ ասած՝ հունգարական քրոնը նույնպես մոտ որերս կդլորվի դեպի ցած: Գլխովս յերաշխավորում եմ տասնից իսկությունը: Արդեն մի չարաթ է, վոր յես զբաղված եմ քրոններ ծախելով մարդ: Հը՛, վոնց է, ի՛նչ կասեք: Իսկ դա սկիզբն է յերկանց: Ցեվ պետք է տեմ ձեզ, միանդամայն կոնֆիդենցիալ կերպով, լուրջ մարդիկ կարծում են, վոր դերմանական մարկը... Դերմանացի խոշոր ֆինանսիստներն ոգտվում են ստեղծված դրությունից: Ինքդ դատիր, վայ, յեթե դերմանական մարկը... Այդ դեպքում, ըստ իս, Թող կործանվի ամբողջ Ավստրիան: Գերմանիա՛: Գերմանական մարկ... Բայց յեթե, հակառակ առողջ բանականության, ավստրիացի բանվորներն այսուամենայնիվ՝ կսկսեն վորևե բան,—ի՞նչ կարող են անել մեզ: Կնստենք ավտոմոբիլ և մի քանի որ կանցկացնենք Սեմմերինգում: Կամ ակվակուբսիա կսարքենք դեպի Բեռլին՝ հետախուզության համար: Ի՞նչ կասեք դուք այդ մասին, հը՛: Բեռլին—դա սքանչելի դաղաբ է, այնպես չե՞: Իսկ առայժմ դնանք «Հարսբուրդ» կաֆեն և խմենք մի–մի դավաթ շամպայն:

— Առավոտները յես չեմ խմում:

— Պետք է սովորել:

Շատ առևտրականներ, վորոնք վաղ առավոտյան վաճել են յիրենց խանութները, կես որվա մոտ նորից բաց արին:

Քաղաքում հանդիստ է: Քամի չկա: Ողը տաք է: Արևի յերեսը ծածկող թեթև ամպերը համարյա դիպչում են չենքերի կտուրներին:

Առաջին մարդասյունները մոտեցան, հասան բուլվարին մի յերկուսի մոտ: Փողոց դուրս յեկան բանվորական բլուզներով, ուղղակի դաղդյահների մոտից: Հաղուստները չփոխեցին, չլվացվեցին: Կողքի փողոցներով նրանք դալիս, կուտակվում եյին քաղաքի կենտրոնը՝ դեպի պարոնների քաղաքը: Առանց դրոշների, առանց յերաժշտության, առանց յերդեցողության: Շատ–չատ: Տասնյակ հազարներ: Հարյուր հազարներ:

Նրանց հաստատուն քայլերի տակ դղդում է գետինը, ինչպես յերկրաշարժից առաջ:

— Շուտ! Շուտ! Շուտ!

Ալդերի պողոտայով, Մարիահելֆի վրայով առաջավոր ջոկատները ճգվում, դալիս են դեպի բուլվարը: Ռեստորանների լուսամուտների ջարդված հայելի–ապակիներ, վոսկեբյական խաղնուքների ցեխում կոխկրտած թանգարժեք իրեր—ահա նրանց անցած ուղու հետքերը:

Գրոհի թափից մեկ այստեղ, մեկ այնտեղ պոկվում, գետին են գլորվում դռները: Հարյուրավոր ձեռքեր չաղ են տալիս փողոցներում չքեղ կտորներ՝ թավիշ, մետաքս, ժանյակների տուփեր, վոսկի, արծաթ, զոհարներ... Ցեվ հազարավոր վոտներ կոխկրտում են թանգարժեք իրերը:

— Շուտ! Շուտ! Շուտ!

Շաչյունահև քարերը թռչում են դեպի հայելի–ապակիները: Վոտների դոփյունը խլացնում է ջարդվող ապակիների զնգոցը: Կոտրված սեղաններն ընկած են, վոտներով դեպի վեր:

Փողոցի մեջտեղում՝ ջարդված ամանեղենի փշրանքներ: Յատուկ նալից կոխկրտում են նպարեղենի խանութների ընտիր առևտրելիքները: Վոտնամանները թրջվել, ուռչել են չամպայնից և վոկու դինուց, վոր վտակների պես հոսում է փողոցներից:

Կանայք! Նրանց դեմքերին դրոշմված են պատերազմի ագետները և աշխարհի չքավորությունը: Հյուծված, ժամանակից առաջ պառաված: Աչքերը ենդորեն վառվում են: Աչքերի տակ սև շրջանակներ: Լուրջ դեմքերով, կարծես դատ են անում, կոխկրտում են նրանք իրենց անմատչելի, խանութների թանգարժեք հարստությունները:

— Լիզա, Լիզա! Գիտե՞ս, թե ի՛նչ ես կոխկրտում:

— Գեթ մի անգամ, միայն մի անգամ վիճակվեր ինձ այսպես պարել այդ բարիքը լափողների ճարպոտ շլինքներին: Այս խողերի պատճառով մարդուս քչեցին Դոբերդո:

— Վերցրու, ա՛յ, են տուփը:

— Չհամարձակվիս ձեռք տալ, Թերեզա: Վտաններով: Միայն վոտներով: Նեակը ագրեի մեջ... Յեթե յերբևիցե.—

— Շուտ! Շուտ! Շուտ!

Տանյակ փողոցներով չարժվում են մատաղները, լցնելով բուլվարը:

Շենքերը նույնն են, բայց բուլվարի կերպարանքը փոխվել է, կարծես՝ այն ծածկել են հսկայական սև գոտով:

Փողոցը դղրդում է: Տները ցնցվում են:

Սև ալիքը գլորվում, հոսում է դեպի ռազմական մինիստրությունը: Ահա կանգ առան: Ահա նորից չարժվեցին: Շենքերը թեւաշարում են պահանջված ուժերը.

— Շուտ! Շուտ! Շուտ!

Մարդկային ալիքը հարվածում, ջլատում է փողոցային չարժումը: կանգնեցին արամվայները: Ժամանակին փախչել չկարողացած ավտոմոբիլները մնացել են իրենց տեղերում, բղխված:

— Կորչի Զայսելի կառավարությունը:

— Մա՛հ նրան...

Սմեն ինչ աուզում, խլանում է յերկրաչարժի դղրդյունի ժխորում:

Լայն դեմքով ու մեծ կրծքով մի կին կապում է իր գլխի վառ-կարմիր թաշկինակը պարլամենտի շենքի վրա ցցված գրոչի վայրից: Թնդում է.

— Կեցցե!! Կեցցե!!

— Պարլամենտի առաջ...

— Ոտտո Բաուերը ճառում եր այս պատչգամբից և «ուռա» եր բղավում Ֆորվրտային Ռուսաստանին:

— Կոմունիստներ!..

— Կառավարությունը հրաժարական է տալիս...

Շուտ! Շուտ!! Շուտ!!!

Առաջին մարդասյունը մոտեցավ ռազմական մինիստրության, և առանց կանգ առնելու, չարժվում է առաջ: Մի քանի մարդիկ բարձրացան Ռադեցկու հուշարձանի վրա և այնտեղից վոգջունում են ամբոխին:

Յերկարահասակ մի յերիտասարդ բարձրանում, նստում է հուշարձանի լոտոգի ձին: Նա նստում է Ռադեցկու գավակին, հուսալով՝ զվարճություն պատճառել ամբոխին: Իզո՛ւր: Վոչ վոք չի ծիծաղում: Ամբոխն առաջ է չարժվում:

Շուտ! Շուտ!! Շուտ!!!

Առաջ! կատաղի համառությամբ լցված, գնում են մասսաները գլխահակ: Զայրույթը յերբեմն թուլանում է, տեղի տալով ինչ-վոր մեծ թախծի և անհուսալիության առաջ: Յեթե մի վորևիցե մեկը կարեր նրանց ճանապարհը, նրանք վոտներով կտրոբելին նրան, կսպանելին: Յեթե կառավարությունը նրանց դեմ հաներ պինված ուժեր, նրանք կթափելին պինվորների աղիքները: Յեթե մեկը ցույց տար, թե վո՛րտեղ է նրանց անտեսանելի թշնամին, նրանք մերկ ձեռներով կխեղդեյին այդ թշնամուն: Բայց թշնամին պահվել եր: Զեն յերևում նաև առաջնորդները: Ամբոխի մեջ կորան յեղած մի բուռն կոմունիստները: Ամենամեծ բանը, վոր հաջողվում է կոմունիստներին, դա այն է, վոր տեղ-տեղ հուսահատությունը փոխում, վերածում են զարծողության: Բայց նրանք անկարող են ղեկավարելու ամբողջ ամբոխը: Սոցիալ-դեմոկրատ կուսակցությունն աչալուրջ հսկում է, վոր «կարգի լուրջ խախտման դեպքեր չպատահեն»:

Առաջավոր ջոկատները հոգնեցին: Բայց յեւեի ջոկատները չարունակում են առաջ մղել նրանց:

Շուտ! Շուտ!! Շուտ!!!

«Գրանտ-ոտելի» պատուհաններից փողոց են նետվում ծանր հայելիները, հախճապակյա վազոնները, վոսկեզոծ կահ-կարասի:

Դուրս ցցված այտոսկորներով չեզաչյա մի բանվոր մագլցում, բարձրանում է գազ լապտերի վրա և այնտեղից բղավում է ինչ-վոր բան: Լարվածությունից արյունը խփում է յերեսը: Բայց նրա ձայնը խլանում, կորչում է ընդհանուր թնդյունի, դղրդոցի մեջ, և այն ձեռքը, վորը նշում եր Շվարցինբերգի հրապարակը, ցած է ընկնում:

Ցուցարարների հազարավոր ամբոխները բուլվարի մութից ծավում են, փոխում են իրենց յերթի ուղղությունը: Նրանք գնում են Ջարդուրուրդ անելու կերանների պողոտան:

«Շեվարցենբերգի Կազինո»-յի կազնյա ծանր դռները վայր են ընկնում թնդանոթի վորոտով: Վնասիրուլի վենետիկյան հայելիների փշրանքները թափվում են առաջին հարթերում գնացողների վրա:

Յերկրորդ հարկի հսկայական դահլիճում չհնված են հնդկական վիզվամները (խրճիթները) դեղին մետաքսից: Տաղավարների մետաքսը ծվեն-ծվեն է լինում: Մի վիզվամի մեջ դրկախառնված քնել են կիսամերկ յերկու կին: Նրանց զարթեցնում է վարդենի քրքիջը: Նրանք նորից փակում են տարահուսալից իրենց աչքերը, կարծես՝ ուզում են ապաուել ծանր մղձավանջից: Նրանց նետում են փողոց, հանձնելով ձեռքից-ձեռք:

Ամբոխը սղմում, հուպ է տալիս այնպիսի ուժով, վորն ընդունակ է քանդելու յերկաթ-բետոնե պատվարը: Բայց առաջին հարթերում մարդիկ հոդնած են: Ռազմական մինիստրությունից այն կողմ, սկսում են դանդաղեցնել քայլերը: Տեղատոքի հուշարձանի մոտ հարթերն սկսում են նոսրանալ: Ո՞ւր գնալ հետո: Ի՞նչ միտք ունի:

— Ժամը քանի՞ն է:

— Հնգից կես անց:

— Ուշ է: Յես պետք է չտապեմ հիվանդանոցային դրամարկղ: Իմ հուրրան հիվանդ է: Զորրորդ որն է, ինչ պառկած է, բայց բժիշկը դեռ չկա ու չկա: Յես խոստացա կնոջս...

— Յես պետք է գնամ լամբարդ՝ տոկոսներ վճարելու...

— Ձանապարհն ավելի կարճ է Բելվեդերի վրայով:

— Այնտեղ անցնել չի լինի, այնտեղից գալիս ու գալիս են դեռ:

Դեպի տուն!

Դեպի տուն, դեպի ցուրտ բնակարան, վորտեղ սպասում են սոված յերեխաները և հուսահատված կինը: Սպասում են, իրենք էլ չիմանալով, թե ինչի՛: Չե՞ վոր նրանց չատ լավ հայտնի յե, վոր սպասելու բան չունեն:

Դեպի տուն!

Իսկ վաղը նորից գործարան: Այնտեղ կգա «ավազ ընկերներից» մեկը և կասի կարճ ճառ.

«Ընկերներ! Ահա թե ո՛ւր է տանում այն ուղին, վոր նշում

են անպատասխանատու ավանտյուրիստները: Այժմ դուք ինքներդ հասկանում եք, թե ինչո՛ւ պետք է ամեն կերպ աշխատել ֆաբրիկաներից և գործարաններից հեռացնել այսպես կոչված՝ կոմունիստներին, վորոնց տասնյակներով գտնում են մեզ մոտ Լեհաստանը և Հունգարիան: Դուք պատժված եք ձեր միության աշխատավարձը կորցնելով: Վատիկանությունը ձերբակալել է ձեր ընկերներից ավելի քան չորս հարյուր մարդ, և հավանորեն Ավստրիայից կարտաքսվեն հարյուրավոր ուսաբերկրացի բանվորներ: Ահա յերեկվա ցույցի արդյունքները: Բայց ամենագլխավորն այն է, վոր ձեր յելույթը վատնում ու անհամեմատ դժվարացնում է ընկեր Բաուերի ֆինանսական պլանի իրագործումը: Ինչպես կարող ենք մենք պահանջել նոր զոհաբերություններ, դրամական նոր զոհաբերություններ այն բուրժուազիայից, վորը յերեկ կրեց այնպիսի ծանր վնասներ...»:

Ահա թե ի՛նչ է խոստանում գալիք որը: Ասենք, մյուսներն էլ վոչինչ լավ բան չեն խոստանում:

Հարյուր հազարներ՝ այն հարյուր հազարները, վորոնք կանգնած եյին Դորերդոյի մոտ, Իզոնզոյի ափին, Ալբանիայի ճահճուտներում, Կարպատներում: Այն հարյուր հազարները, վորոնք մչատպես կռվում են ուժեղ թշնամու դեմ՝ մի կտոր չոր հացի համար: Այն նույն հերոսները, վորոնց հայրենիքն անփոխարեն դիմավորում է չնորհակալության դղրդումով, և վորոնց՝ տանն սպասում են սոված կանայք: Հարյուր հազարանոց ամբոխը բախանվում է ինդիվիդուամների, և յուրաքանչյուրը նրանցից հառաչում է իր սեփական դժբախտությունից, իսկ դժբախտություն՝ վորքան ուզեք:

Այլևս չի լսվում առաջնամուղ կանչը՝

Շուտ! Շուտ! Շուտ!

Առանց դրան էլ կգանք, կհասնենք իր ժամանակին...

Գլուխները կախ են ընկած, բայց ձեռքերը բռունցք են կապել:

Վա՛յ նրան, ում գլխին կիջնի այդ բռունցքը:

Բուլվարներում թափառում են առանձին փոքրիկ խմբեր մնացյալ: Շրջակայքի փողոցները լի յեն դրանցով: Մարդիկ ցրվում են իրենց տները:

Վառում են փողոցի լապտերները: Ռազմական լուսարձակները լուսավորում են յերկինքը: Դատարկված խանութների

ջարդված պատուհաններում տեղ-տեղ վառվում են ջարդից ապաված լամպերը, ինչպես վոսկի ատամները մեռածի բերնում:

Ժամը վեցի մոտ սկսում է մաղել բարակ անձրև:

— Ժամանակ է տուն գնալու:

Դեպի տուն!

Այժմ հրապարակ է գալիս վոսաիկանությունը:

Կես որվա մոտ վոսաիկաններըը չքվեցին, ասես՝ գետինը կլանեց նրանց: Այժմ նրանք դուրս թափվեցին, կարծես՝ յերկիրը թքեց, դուրս նետեց նրանց:

Կերանների պողոտայում ձիավոր վոսաիկաններըը չրջապատում էլին մայթերի վրա: Շվարցինբերգի հրապարակում նրանք, —սուսերամերկ,—վրա յեն պրծնում կապինոյի և Հուչարճանի մոտ (վորից հրապարակն ստացել է իր անունը) պրոմոդներին, փակելով կապինոյում մնացածների ուղին: Ցուցարարները փորձում են ոդնել ծուղակն ընկած իրենց ընկերներին: Նրանք աչխատում են՝ իրենց հերթին՝ կոթել վոսաիկանների ճանապարհը: Սակայն վոսաիկաններըը հանաքներ չեն սիրում: Նրանք սրերով ճանապարհ են բացում իրենց համար:

Մի ինչ-վոր բանվորուհի հառաչելով ստալվում է գետին: Լենկեն կռանում է, վոր բարձրացնի նրան: Թրի հարվածը չըչմեչնում է Լենկեյին: Նա որորվում է, բայց չի ընկնում: Նա ուղղվում է և վայրենի ձիչով հարձակվում վոսաիկանի վրա: Նա յերկունդները խրում է վոսաիկանի յերեսի մեջ: Վոսաիկանը ոգնության է կանչում: Նրա կոլեգը բարձրացնում է թուրը: Հանկարծ՝ փորին դիպած ուժեղ մի հարված վայր է գլորում նրան,—Գոռեմանը կանխեց վոսաիկանին:

— Այստեղ! Այստեղ, ընկերներ,—բղավում է Շմիդտը, աչ ու ձախ հարվածելով քանդակած աթոռի ծանր վոտով:

Վոսաիկաններըը նահանջում են բանվորների ճնչման տակ:

— Այստեղ, ընկերներ! Այստեղ! Խփեք նրանց!..

Աթոռի վոտը դուրս է պրծնում ձեռքից: Վայր է գլորվում գլխարկը: Աչքերը ներկում է դեմքը:

Պյոտրը բռնում է ընկերոջը:

Կապինոյի յերկրորդ հարկի պատուհաններից հախճապակե ամանեղենը թափվում է վոսաիկանների գլխին:

— Ցես կարծում եմ, մենք մինչև Բեռլին հասնելը կանգ չենք առնի,—ասում է Լենկեն:

— Մինչև Բեռլի՞ն: Մենք կարող եյինք հասնել Նյու-Յորք, նույնիսկ ավելի հեռուն: Ուր ասես! Թող ինձ հայհոյեն սոցիալ-դեմոկրատ բառով, յեթե մենք կանգ առնեյինք Բեկուզ մի բոպեյով՝ մինչև չհասնեյինք սոցիալիզմին, միայն թե իմանայինք... միայն թե... միայն թե մեկը դեկավարեր մեզ...

— Կուսակցության գերն է,—ասում է Պյոտրը: Նա Շմիդտին տանում է համարյա ուսերի վրա:

Գոռեմանը ձեռքի կեպոտա թաշկինակը գնում է իր ուռած աչքին: Կատազությունից գեռ ուշքի չեկած Լենկեն, չոչափում է գլխի «կեղտանատուցը», վորին կպել են թաց մազերը: Շմիդտը քայլում է հարբածի պես:

— Թևանոցով արա նրան մյուս կողմից:

Գոռեմանը խոսում է անդադար: Մեկ հայհոյում է, մեկ պլաններ է կազմում:

— Վիեննա! Ահա ձեզ և Վիեննան, հուչակավոր, ուրախ Վիեննան! Իսկ ինչե՞ր են լինելու, յերբ չարժվեն Պրագան ու Բեռլինը: Ամենքը միաժամանակ ... Չո՞: Ինչե՞ր կլինեն, յեթե իսկապես վոր... Կապրենք մինչ այդ որը, ընկեր Շմիդտ! Այդ որն էլ կտեսնենք!

Շմիդտը չի պատասխանում: Նա գիտակցությունը կորցրել է: Առավոտյան նա ուշքի յեկավ: Նա դժգույն եր, ինչպես քաթանի կտոր գլխին: Նա կարծես՝ արյունաքամ է յեղել: Պառկել է անշարժ: Ձեռքերը մարակի պես կախված են մահճակալից:

— Ելի մի բան պատմեք ինձ, ընկեր Կովաչ:

Պյոտրը չգիտե, թե ինչի՛ մասին պատմի նրան: Արդեն մի ժամ է, ինչ Շմիդտի կինը դուրս է գնացել տանից: Իսկ Պյոտրը դեռ նստած է հիվանդի մոտ, վորի վրա, վերմակի փոխարեն, գցված է վերարկուն:

— Ինչի՛ մասին պատմել, ընկեր Շմիդտ:

— Միևնույն է,—չչնչում է հիվանդը:

— Գիտե՞ք, Մոսկվան...—Պյոտրը հանկարծ հիշեց. Մոսկվան կփոխանակի!—Մոսկվան կազատի հունգարական կոմունիստներին, վորոնք նստած են բանտերում այն որից, յերբ ընկավ դիկտատուրան: Կոմունիստներին կփոխանակեն ռազմագերի սպաների հետ:

Շմիդտը չի հասկանում:

Պյոտրը բացատրում է նրան:

— Մեզ ամենքիս կփոխանակեն,—մրթմրթում է Շմիդտը, նորից կորցնելով գիտակցությունը,—մեզ ամենքիս, ամենքիս...

Ցուցարարների հազարավոր ամբոխները բուլվարի մոտից ծռվում են, փոխում են իրենց յերթի ուղղությունը: Նրանք գնում են Ջարդուբուրդ անելու կերտների պողոտան:

«Շվարցենբերգի Կաղինո»—յի կաղնյա ծանր դռները վայր են ընկնում թնդանոթի վորոտով: Վենտիրուլի վենետիկյան հայելիների փշրանքները թափվում են առաջին չարքերում գնացողների վրա:

Յերկրորդ հարկի հսկայական դահլիճում չինված են հնդկական վիգվամները (խրճիթները) դևղին մետաքսից: Տաղավարների մետաքսը ծվեն-ծվեն է լինում: Մի վիգվամի մեջ դրկախառնված քնել են կիսամերկ յերկու կին: Նրանց զարթեցնում է վարդենի քրքիջը: Նրանք նորից փակում են տարակուսալից իրենց աչքերը, կարծես՝ ուզում են ազատվել ծանր մղձավանջից: Նրանց նեռում են փողոց, հանձնելով ձեռքից—ձեռք:

Ամբոխը ազմում, հուպ է տալիս այնպիսի ուժով, վորն ընդունակ է քանդելու յերկաթ-բետոնե պատվարը: Բայց առաջին չարքերում մարդիկ հոդնած են: Ռազմական մինիստրությունից այն կողմ, սկսում են դանդաղեցնել քայլերը: Տեղեռոֆի հուշարձանի մոտ չարքերն սկսում են նոսրանալ: Ո՞ւր գնալ հետո: Ի՞նչ մխոք ունի:

— Ժամը քանի՞ն է:

— Հնգից կես անց:

— Ուշ է: Յես պետք է չտապեմ հիվանդանոցային դրամարկղ: Իմ կուրսը հիվանդ է: Զորրորդ որն է, ինչ պառկած է, բայց բժիշկը դեռ չկա ու չկա: Յես խոստացա կնոջս...

— Յես պետք է գնամ լոմբարդ՝ տոկոսներ վճարելու...

— Ճանապարհն ավելի կարճ է Բելվեդերի վրայով:

— Այնտեղ անցնել չի լինի, այնտեղից գալիս ու գալիս են դեռ:

Դեպի տուն!

Դեպի տուն, դեպի ցուրտ բնակարան, վորտեղ սպասում են սոված յերեխաները և հուսահատված կինը: Սպասում են, իրենք էլ չիմանալով, թե ինչի՛: Զի՞ վոր նրանց շատ լավ հայտնի չե, վոր սպասելու բան չունեն:

Դեպի տուն!

Իսկ վաղը նորից գործարան: Այնտեղ կգա «ավազ ընկերներից» մեկը և կասի կարճ ճառ.

«Ընկերներ! Ահա թե ո՛ւր է տանում այն ուղին, վոր նշում

են անպատասխանատու ավանտյուրիստները: Այժմ դուք ինքներդ հասկանում եք, թե ինչո՛ւ պետք է ամեն կերպ աշխատել ֆարրիկաներից և գործարաններից հեռացնել այսպես կոչված՝ կոմունիստներին, վորոնց տասնյակներով գցում են մեզ մոտ Լեհաստանը և Հունգարիան: Դուք պատժված եք ձեր միության աշխատավարձը կորցնելով: Վատիկանությունը ձերբակալել է ձեր ընկերներից ավելի քան չորս հարյուր մարդ, և հավանորեն Ավստրիայից կարատաքսվեն հարյուրավոր ռատաբերկրացի բանվորներ: Ահա յերեկվա ցույցի արդյունքները: Բայց ամենազըլխավորն այն է, վոր ձեր յելույթը վատնգում ու անհամեմատ դժվարացնում է ընկեր Բաուերի ֆինանսական պլանի իրագործումը: Ինչպես կարող ենք մենք պահանջել նոր զոհաբերություններ, դրամական նոր զոհաբերություններ այն բուրժուազիայից, վորը յերեկ կրեց այնպիսի ծանր վնասներ...»:

Ահա թե ի՛նչ է խոստանում գալիք որը: Ասենք, մյուսներն էլ վոչինչ լավ բան չեն խոստանում:

Հարյուր հազարներ՝ այն հարյուր հազարները, վորոնք կանգնած եյին Դոբերդոյի մոտ, Իզոնզոյի ափին, Ալբանիայի ճահճուտներում, Կարպատներում: Այն հարյուր հազարները, վորոնք մշտապես կռվում են ուժեղ թշնամու դեմ՝ մի կտոր չոր հացի համար: Այն նույն հերոսները, վորոնց հայրենիքն անփոխարինելի դիմավորում է չնորհակալության ղեպագումով, և վորոնց՝ տանն սպասում են սոված կանայք: Հարյուր հազարանոց ամբոխը բաժանվում է ինդիվիդուումների, և յուրաքանչյուրը նրանցից հառաչում է իր սեփական դժբախտության, խակ դժբախտությունն՝ վորքան ուզեք:

Այլևս չի լսվում առաջնամուղ կանչը՝

Շուտ! Շուտ! Շուտ!

Առանց դրան էլ կգանք, կհասնենք իր ժամանակին...

Գլուխները կախ են ընկած, բայց ձեռքերը բռունցք են կապել:

Վա՛յ նրան, ում դլխին կիջնի այդ բռունցքը:

Բուլվարներում թափառում են առանձին փոքրիկ խմբեր մի քանի: Շրջակայքի փողոցները լի չեն դրանցով: Մարդիկ ցըրվում են իրենց տները:

Վառում են փողոցի լապտերները: Ռազմական լուսարձակները լուսավորում են յերկինքը: Դատարկված խանութների

ջարդված պատուհաններում տեղ-տեղ վառվում են ջարդից ազատված լամպերը, ինչպես վոսկի ատամները մեռածի բերնում:

Ժամը վեցի մոտ սկսում է մաղել բարակ անձրև:

— Ժամանակ է տուն գնալու:

Դեպի տուն!

Այժմ հրապարակ է գալիս վոսոխականությունը:

Կես որվա մոտ վոսոխականները չքվեցին, ասես՝ գետինը կլանեց նրանց: Այժմ նրանք դուրս թափվեցին, կարծես՝ յերկիրը թքեց, դուրս նետեց նրանց:

Կերտների պողոտայում ձիավոր վոսոխականները չրջապատում եյին մայթերի վրա: Շվարցինբերգի հրապարակում նրանք, —սուսերամերկ,—վրա յեն պրծնում կապինոյի և Հուչարծանի մոտ (վորից հրապարակն ստացել է իր անունը) դրոնոդներին, փակելով կապինոյում մնացածների ուղին: Ձուցարարները փորձում են ոգնել ծուզակն ընկած իրենց ընկերներին: Նրանք աշխատում են՝ իրենց հերթին՝ կորել վոսոխականների ճանապարհը: Սակայն վոսոխականները հանաքներ չեն սիրում: Նրանք սրերով ճանապարհ են բացում իրենց համար:

Մի ինչ-վոր բանվորուհի հառաչելով ասպալվում է գետին: Լենկեն կռանում է, վոր բարձրացնի նրան: Թրի հարվածը չշշմեցնում է Լենկեյին: Նա որորվում է, բայց չի ընկնում: Նա ուղղվում է և վայրենի ճիչով հարձակվում վոսոխականի վրա: Նա յեղունգները խրում է վոսոխականի յերեսի մեջ: Վոսոխականը ոգնության է կանչում: Նրա կոլեգը բարձրացնում է թուրը: Հանկարծ՝ փորին դիպած ուժեղ մի հարված վայր է գլորում նրան,—Գոտեմանը կանխեց վոսոխականին:

— Այստեղ! Այստեղ, ընկերներ,—բղավում է Շմիդտը, աջ ու ձախ հարվածելով քանդակած աթոռի ծանր վոտով:

Վոսոխականները նահանջում են բանվորների ճնշման տակ:

— Այստեղ, ընկերներ! Այստեղ! Թափեք նրանց!..

Աթոռի վոտը դուրս է պրծնում ձեռքից: Վայր է գլորվում գլխարկը: Աչքերը նեղկում են դեմքը:

Պյոտրը բռնում է ընկերոջը:

Կապինոյի յերկրորդ հարկի պատուհաններից հախճապակե ամանեղենը թափվում է վոսոխականների գլխին:

— Ձես կարծում եմ, մենք մինչև Բեռլին հասնելը կանգ չենք առնի,—ասում է Լենկեն:

— Մինչև Բեռլի՞ն: Մենք կարող եյինք հասնել Նյու-Յորք, նույնիսկ ավելի հեռուն: Ուր ասես! Թող ինձ հայհոյեն սոցիալ-դեմոկրատ բառով, յեթե մենք կանգ առնեյինք Թեկուզ մի րոպեյով՝ մինչև չհասնեյինք սոցիալիզմին, միայն թե իմանայինք... միայն թե... միայն թե մենք զեկավարեր մեզ...

— Կուսակցության գերն է,—ասում է Պյոտրը: Նա Շմիդտին տանում է համարյա ուսերի վրա:

Գոտեմանը ձեռքի կեղտոտ թաշկինակը դնում է իր ուռած աչքին: Կատաղությունից դեռ ուշքի չեկած Լենկեն, չոչափում է գլխի «կեղտանատուները», վորին կպել են թաց մազերը: Շմիդտը քայլում է հարբածի պես:

— Թեանցուկ արա նրան մյուս կողմից:

Գոտեմանը խոսում է անդադար: Մեկ հայհոյում է, մեկ պլաններ է կազմում:

— Վիեննա! Ահա ձեզ և Վիեննան, հուչակավոր, ուրախ Վիեննան! Իսկ ինչո՞ր են լինելու, յերբ չարժվեն Պրագան ու Բեռլինը: Ամենքը միաժամանակ ... Հը՞: Ինչո՞ր կլինեն, յեթե խնդապես վոր... Կապրենք մինչ այդ որը, ընկեր Շմիդտ! Այդ որն ել կտեսնենք!

Շմիդտը չի պատասխանում: Նա գիտակցությունը կորցրել է:

Առավոտյան նա ուշքի յեկավ: Նա դժգույն եր, ինչպես քաթանի կտոր գլխին: Նա կարծես՝ արյունաքամ է յեղել: Պառկել է անշարժ: Ձեռքերը մարտկի պես կախված են մահճակալից:

— Ելի մի բան պատմեք ինձ, ընկեր Կովաչ:

Պյոտրը չգիտե, թե ինչի՛ մասին պատմի նրան: Արդեն մի ժամ է, ինչ Շմիդտի կինը դուրս է գնացել տանից: Իսկ Պյոտրը դեռ նստած է հիվանդի մոտ, վորի վրա, վերմակի փոխարեն, գցված է վերարկու:

— Ինչի՞ մասին պատմել, ընկեր Շմիդտ:

— Միևնույն է,—չշնչում է հիվանդը:

— Գիտե՞ք, Մոսկվան...—Պյոտրը հանկարծ հիշեց. Մոսկվան կվոխանակի!—Մոսկվան կապած հունգարական կոմունիստներին, վորոնք նստած են բանտերում այն որից, յերբ ընկավ գիկտատուրան: Կոմունիստներին կվոխանակեն ռամմագեբի սպանների հետ:

Շմիդտը չի հասկանում:

Պյոտրը բացատրում է նրան:

— Մեզ ամենքիս կվոխանակեն,—մրթմրթում է Շմիդտը, նորից կորցնելով գիտակցությունը,—մեզ ամենքիս, ամենքիս...

Նրա աչքերը հառած են առաստաղին: Նա դժվարությամբ է շնչում:

Պյոտրին ծանոթ է այդպիսի շնչառությունը, ծանոթ է գեմքի անագե գույնը:

Կես ժամ անց՝ նա ընդմիշտ փակում է Շմիդտի աչքերը:

Տրամվայում,—Պյոտրը գնում էր քաղաք,—նստել էին յերկու վոստիկաններ, խցված յերկու պրոլետար կանանց միջև: Վոստիկանները լուռ էին: Լուռ էին նաև կանայք: Աստում էին աչքերը: Հաղթամարմին վոստիկանների դիմաց նստել էր մի կին, փաթաթված չոլանդական շալի մեջ: Ատելությունից վառ նրա հայացքը սևեռված էր վոստիկաններից մեկի դեմքին: Վոստիկանը յերեսը չուռ տվեց: Բայց, կարծես՝ յենթակա մտքերի ճգողական ուժին, չուռ յեկավ նորից և նայեց կնոջ նիհար, խոշորմած դեմքին, աչքերի շուրջը մութ շրջանակներ: Վոստիկանը կանգնեց: Նրա հայացքն ընկավ մի ուրիշ դեմքի, լացակումած աչքերը պատրաստ էին դուրս թռչելու իրենց խոռոչներից և խրվել վոստիկանի դիրուկ դեմքի մեջ:

Վոստիկանները դուրս յեկան վագոնի սրահը: Հետևյալ կանգառին նրանք իջան:

Ամբաղդատանը Պյոտրը պատահեց Գայդոչին: Աչխատեցին մոտ մի ժամ: Ապա միասին դուրս յեկան փողոց: Գայդոչին կանչեցին վոստիկանատուն: Պյոտրն չտապում էր տպարան: Ճանապարհը կրճատելու նպատակով՝ նրանք կտրեցին—անցան կերտոնների պողոտան:

Ջարդված ցուցափեղկերի ապակիների փշուրները կոխկրտում են լայնաքիթ կոշիկներով, զանգվածաններով և լաքե փոքրիկ տուֆլիներով՝ վոտները: Ծանոթներում կատարվում է տնեղային աչխատանք: Բերում էին նոր ապրանքների հակեր:

Վոստիկանությունը պահպանում էր ջարդված ցուցափեղկերը:

Բայց գույն վերարկուներով և մորթե հսկա ոձիքներով պարոնները և բարձրահաս ճլվլացող տիկինները՝ վառ կարմիր ներկած շրթերով, ականջներին՝ ընկուզի մեծության ադամանդներով տիկինները սիզարներ ու պապիրոսներ էին ծխում վոստիկաններին, ազմում էին նրանց ձեռքը և բարեկամաբար խոսում նրանց ուսերին:

Պարտությունը չէր սպանել Գայդոչի աչխուժ տրամադրությունը:

Վո՛չ այնպիսի հիացմունքով, ինչպես Գոտեմանը, բայց նրա նման նա էլ անհողդողդ հավատով էր խոսում ապագայի մասին: Յերեկվա որվա դասերի մասին: Յերեկվա որը մերկացրեց սոցիալ-դեմոկրատներին և փորձով ցույց տվեց, վոր հակայական նշանակություն ունի, թե ո՞վ է ղեկավարում բանվորներին՝ սոցիալ-դեմոկրատիա՞ն, թե՞ կոմունիստները:

— Ա՛խ, յեթե գոյություն չունենար սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը,—հառաչում է Պյոտրը:

— Բայց նա գոյություն ունի,—կրքոտ ասում է Գայդոչը:—Նա գոյություն ունի,—համարյա բղավում է Գայդոչը:—Յեվ մենք պետք է հաչվի առնենք այդ հանգամանքը: Նա գոյություն ունի, ուստի, պայքարը կլինի տևական ու դժվար:

Նրանք բաժանվեցին Գրաբենի փողոցի անկյունում, վորտեղ սբ. Ստեֆանի յեկեղեցու գմբեթական աչտարակներն ասվեր են զգում կորսոյի վրա:

Պյոտրը կանգ առավ մի րոպե:

— Յերկարատև ու դժվար պայքար... Յերկարատև ու դժվար...—կրկնեց նա:

Կորսո փողոցը հեղեղող ամբոխը համարյա հուզ տվեց, սըզմեց Պյոտրին պատին: Ռուսակցության թեման յերեկվա գործադուլը չէր: Տիկիններն ու պարոնները, վոր ճեմում էին լուսամուտների կոտրտված ապակիների վրայով, ամայացած ցուցափեղկերի մեջին, չաղակրատում էին Ցյուրիխի մասին, հունգարական քրոնի մասին, գերմանական մարկի մասին, նոր ավտոմոբիլների մասին, դրոսանավերի և թանկարժեք իրերի մասին: Փողոցը զնգում էր ուրախ ծիծաղից, վխենա վերապրածող ավտոմոբիլների հաղթական չչակներից:

— Պայքարը կլինի յերկարատև ու դժվար,—կրկնում էր Պյոտրը, զանգազ դիմելով դեպի տպարանը:—Այո՛, նա կլինի յերկարատև ու դժվար: Բայց մենք կհասցնենք այն իր հաղթական վախճանին!

ՎԵՊԸ ՎԵՐՋԱՑԱՎ
ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ՀՀ Ազգային գրադարան
NL0389637

74.069

ԳԻՆԸ 5 ՌՈՒԲ.

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

БЕЛА ИЛЛЕШ

ТИССА ГОРИТ

Госиздат ССР Армении, Эривань, 1934

894.511
Г-33